



ԺՈՒՌՆԱԼԻԱՏԻԿԱ. ԻՆՉ. ԻՆՉՊԵՍ. ԻՆՉՈՒ.

ԲՆԱԳՐԵՐ

Կազմեց Այդին Մորիկյանը

- Եր.: «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ» հ/կ, 2006.-  
420 էջ

---

«Ժուռնալիստիկա. ինչ. ինչպես. ինչու. բնագրեր» ժողովածուն  
տրամաբանական շարունակությունն ու լրացումն է Այդին  
Մորիկյանի նախորդ գրքի: Այսուեղ ժուռնալիստիկան  
ներկայացված է բնագրերով եւ ժուռնալիստիկայի մասին խոսում  
են բնագրերը, որոնց հիմնական նասը հայերեն հրատարակվում է  
առաջին անգամ:

Գիրքն օգտակար կլիմի ոչ միայն ուսանողների, այլև  
դասախոսների ու լրագրողների համար:

Գիրքը հրատարակվում է Երևանի մամուլի ակումբի՝  
«Աջակցություն ազատ ու որակյալ լրագրությանը և  
ԶԼՄ-ների կողմնորոշումը դեպի հրատապ խնդիրներ»  
ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության ինստիտուտի  
ֆինանսական աջակցությամբ:

Թարգմանչներ՝ Այդին Մորիկյան, Մեսրոպ Ջարությունյան  
Խմբագիրներ՝ Մեսրոպ Ջարությունյան, Այդին Մորիկյան  
Սրբագրիչ՝ Գոհար Յովսեփյան  
Համակարգչային ձեւավորումը եւ էջադրումը՝ Նարա Մենդելյանի  
Ծրագրի ղեկավար՝ Բորիս Նավասարդյան



# ԷԶԱՍԻԾ

|  |           |   |            |
|--|-----------|---|------------|
| <b>ՆԱԽ Ա ԲԱՏ</b><br>Թե ինչու հենց այսպես   | <b>7</b>  | <b>Ալեքսանդր Համիլտոն,</b><br><b>Զոն Ջեյ, Ջեյմս Մեդիսոն</b><br><b>ՊՈՒԲԼԻՇՈՒՄ</b><br><b>ՆԱՄԱԿՆԵՐԻՑ</b> | <b>76</b>  |
| <b>ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.</b><br><b>ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱԿՏԻԿԱ.</b><br>Բնագրեր   | <b>11</b> | <b>Ժան Պոլ Մարատ</b><br>ԲՆԾԱ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ   | <b>105</b> |
| <b>ԼԵԽԱՆ ՔԱՐՈՉԸ</b>  | <b>13</b> | <b>Նապոլեոն Բոնապարտ</b><br>ԿԵՍԱՐԻ ՄԱՅԸ   | <b>117</b> |
| <b>ՄՈՎՍԵՆ ԽՈՐԵՆԱԳԻ</b><br>ՈՂԲ ...  | <b>23</b> | <b>Գյոթե</b><br><ԽՈՐՃՐԱՎԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>ՎԵՐԻՆԻ ՄԱՍԻՆ>  | <b>126</b> |
| <b>ԼԵՆՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ</b><br>ԳՐԱՌՈՒՄՆԵՐ   | <b>28</b> | <b>Դայնրիխ Դայնե</b><br>ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ<br>ՄԱՍԻՆ   | <b>131</b> |
| <b>ՈՒՍՏԱԿԱՆ Առաջին</b><br>ՄՊԱԳԻՐ՝ «ԹԱՊՇՎՎՑԻՇՈՒ»<br>ԹԵՐԹԻԳ  | <b>32</b> | <b>Զեյմս Ֆենիմոր Կուլպեր</b><br>ԱՄԵՐԻԿԱՆ<br>ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԸ  | <b>134</b> |
| <b>Միխայիլ Լոնոնոսով</b><br>ԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ...   | <b>36</b> | <b>Կնուտ Համսուն</b><br>ԺԱՄԱՆԱԿԱԿԱՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ<br>ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ                                 | <b>142</b> |
| <b>Զոն Միլտոն</b><br>ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ<br>ՄԱՍԻՆ   | <b>40</b> | <b>Մարկ Տիկեն</b><br>ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԽՄԲԱԳՐԵՑԻ<br>ԳՅՈՒՂԱՏՏԵՍԱԿԱՆ<br>ԹԵՐԹԸ                                | <b>156</b> |
| <b>Զոգեֆ Աղիսոն</b><br>«SPECTATOR»<br>ՀԱՆԴԵՍԻՑ   | <b>55</b> | <b>Էմիլ Զոլա</b><br>ՀՐԱԺԵՇՏ   | <b>164</b> |
| <b>ՈՒԽԱՐԴ Սթիլ</b><br>ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵԼԿԻՐԿԻ՝<br>ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԱԾ<br>ՆԱՎԱՍՈՒ ԶԱՐՄԱՍԱԼԻ<br>ԱՐԿԱԾՆԵՐԻ<br>ԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ | <b>62</b> | <b>Ֆյորդր Դոստուլակի</b><br>ՆԱԽԱՎԱՆ...  | <b>167</b> |
| <b>Զոնաբան Սվիֆթ</b><br>ՄԱԾՈՒՄՆԵՐ ՑԱԽԱՎԵԼԻ<br>ԿՈԹԻ ՄԱՍԻՆ   | <b>66</b> | <b>Կոնստանտին Ակսակով</b><br>ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՐՉ   | <b>171</b> |
| <b>Թոնան Պեյն</b><br>ՈՂՁԱԽՈՐՈՒԹՅՈՒՆ  | <b>68</b> | <b>Միխայիլ Կատկով</b><br>«ՄՈՍԿՈՎՅԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ»<br>ԱՌԱՋՆՈՐՈՂՈՒՆԵՐԻՑ                                    | <b>173</b> |

|  |            |   |            |
|--|------------|---|------------|
| <b>Օսկար Ուայլի</b><br>ճաշեր ԵՎ ճԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ   | <b>178</b> | <b>Ուիլյամ Ֆոլքներ</b><br>ՆՈԹ «OXFORD EAGLE»<br>ԹԵՐԹՈՒՄ               | <b>248</b> |
| «ԱՅԴ ՄՆՏԱՆԵԼԻ ՀԱՅԵՐԸ»  | 181        | «ԱՎԵԼԻ ՀԵՌՈՒ»՝<br>ԷԺԵՆ ԻՌՆԵՍԿՈՅԻ ՀԵՏ                                  | 249        |
| <b>ԺԵՐԱՐ ՔԵ ՆԵՐՎԱԼ</b><br>ԼՐԱԳՐԱՅԻՆ «ԽԱՅՅԵՐԻ»<br>ՃԵՄԱՐԻԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ                                  | 200        | <b>Գարրել Գարսիա Մարկես</b><br>Մարիո Վարդաս Լիոնա<br>ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ... | 258        |
| <b>Վահան Տերյան</b><br>ԼԵՎ ՏՈԼՏՈՅՅԻ ԹԱՂՈՒՄԸ  | 207        | <b>Գյունտեր Վալրաֆ</b><br>ՍԵՆՍԱՑԻԱՅԻ ԾՆՈՒՆԴ...                        | 276        |
| <b>Հովհաննես Թուլմանյան</b><br>ԴԱՌՆԱՑԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ<br>ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆ ՈՒ<br>ՄԱՍՈՒԸԸ<br>ՔԱՂԱՔՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 209        | <b>Վահրամ Փափազյան</b><br>ԻՄ ՇԵՔՍՊԻՐԸ                                 | 305        |
| ԵՎ ՄԵՆՔ  | 214        | <b>Դրանտ Մաթեոսյան</b><br>ԹԱՓԱՆՑԻԿ ՕՐ                                 | 310        |
| <b>ՄԱՍՈՒԸԸ ԵՎ ԵՍ</b><br>Ֆյոդոր Իվանովիչ<br>Շայապինի կարծիքը  | 216        | <b>Անատոլի Ագրանովսկի</b><br><ՆՈԹԱՏԵՏՐԵՐԻՑ>                           | 320        |
| <b>Միխայիլ Բուլգակով</b><br>ԴՐԱԽՏ ՏԱՏՈՐ ՍԱՄԴՈՒՂՔԸ  | 220        | ԴՈԿՏՈՐ ՖՅՈԴՈՐ ՇԵՐՅՈՒՄ<br>ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ                           | 331        |
| Ալբերտ Էյնշտեյն<br>ՈՍԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ   | 222        | <b>Սասունիկ Թորոսյան</b><br>ԱՓՍԱՐՈՒՏԻԿ                                | 346        |
| <b>Եղիշե Զարենց</b><br>ՕՐԱԳՐԱՅԻՆ<br>ԳՐԱՌՈՒՄՆԵՐ   | 224        | <b>Դարուկի Մուրակամի</b><br>ԶԱԶԱՅԻՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻՑ                     | 365        |
| <b>Իյա Իլֆ, Եվգենի Պետրով</b><br>ԼՐԱԳՐՈՂ ՕԾԵՅՆԻԿՈՎԸ  | 229        | <b>Գարրիել Գարսիա Մարկես</b><br>Աշխարհի լավագույն<br>մասնագիտությունը | 370        |
| <b>Էռնեստ Ջեմինգսոն</b><br>ՄԱԵՍՏՐՈՆ ՀԱՐՑԵՐ Է ՏԱԼԻՆ   | 234        | <b>ՀԱՎԵԼՎԱԾ</b><br>Մտքեր նաև<br>նախընթացի մասին                       | 381        |
| Անտուան դը Մենտ<br>Էքզուպերի<br>ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐՈՇ<br>ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ                                   | 244        |   |            |



ՆԱԽ Ա ԲԱՆ  
ԹԵ ինչու հենց այսպես



**Ա**շխարհիկ ցանկացած ԿԱՌՈՒՅՑ՝ ոգեղեն, մտավոր, նյութական, ՍԿԻԶԲ-Եթրից մեկն ունի իր հիմքում. Եգիպտականը, բարելոնյանը կամ Քռոմինը:

Առաջինը ցնող է, անհասկանալի ու մինչև վերջ չբացահյտված, և ոչ միայն իր ստեղծնան ժամանակի, այլև մեր օրերի համար էլ. Երկրորդը՝ ինչ-որ մեծ բանի հանկարծահաս փլուզում է խորհրդանշում և այն էլ այն ճակատագրական պահին, երբ թվում է, թե՝ ահա-ահա. Երրորդը՝ հանդարտ, գիտակցված և հավասարակշիր վեհություն է մարմնավորում թե ստեղծնան, թե ընթացքի, և թե, առավելևս, ապագայի համար:

Ժուռնալիստիկան, որպես աշխարհիկ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ ամենաընդգրկունը, «անցել է» այս երեք փուլերն էլ. նախակիզբը շատ նման է Եգիպտական բուրգերի հայտնությանը՝ անապատում, Երկրորդ սկիզբը՝ Բարելոնն է հիշեցնում, իսկ Երրորդը՝ Քռոմը. հանդարտ, Վերընթաց, թելադրող...

Ու ոչ մի պատահականություն էլ չկա. ինչպես որ պատահական չէր, որ ՔԱՂԱՔԻ կառուցումը սկսվեց Պալատինուս, այլ ոչ թե Ավենտինուս բլրից, որ հենց այնտեղից երևացին թռչունները, որ...

Ինչպես կասեր Ոիչարդ Բախը՝ բոլոր մարդիկ, բոլոր իրադարձությունները, որ եղել, լինում կամ լինելու են՝ ի հայտ են գալիս սոսկ այն պատճառով, որ մենք ենք նրանց կոչում կյանք:

«Ժուռնալիստիկա... Բնագրեր» ժողովածուն նախորդ՝ «Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու» գործի տրամաբանական շարունակությունն է, նրա անհրաժեշտ լրացումը, որը, սակայն, անբողջացում չէ, որ ապահովում է: Անբողջացման համար պարտադիր է նաև համարժեք Երրորդ բաղադրիչը՝ ՈՒՍՈՒՑԻՉԸ, որի երևակայությամբ, խորամտությամբ և նրանտությամբ է պայմանավորվելու նաև այնքան անհրաժեշտն ու կարևորը՝ ԱՐԴՅՈՒՆՔԸ, որը ժուռնալիստի դեպքում վեր է գուտ անձնական հաջողության մակարդակից...

Ներկայացվող նյութերի ընտրության սկզբունքը եղել է մեկը՝ բազմագործառնությունը. հայտնի անուն, ուշադրության արժանի և չհնացող թեմա, դասական մոտեցում ժանրին կամ դրա սկզբունքների ճշգրտում, պատմական ժամանակաշրջանի արտացոլում, առնչակցություն՝ հոգևոր, մտավոր,

գաղափարական բարձր արժեքների, նորի բացահայտում, և, անպայմանորեն, վարպետության դաս: Եվ այս ամենը՝ հնարիավորինս մեկտեղված: Ու սա է նաև պատճառը, որ գիրքը մասնատված չէ բաժինների՝ «Պատմություն», «Տեսություն», «Պրակտիկա»... **Արժանի պրակտիկան է, որ պատմություն է դառնում, լավագույնը՝ նաև տեսություն:**

Հիմնականում նշված չեն տարեթվերը, չկան կենսագրականներ, ծանոթագրություններ: Որովհետև դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է շարադրել, զրորինակ, Ենշտենի, Գյորեի, Փափազյանի կենսագրությունները մեկ-երկու տողով... Կամ ի՞նչ է տալու պարզ թվարկումը... Ինչի՞...

Սուվորովը կգտնի տարեթվերն էլ, մնացածն էլ, բացահայտման արժանի շերտերն էլ: Ավելին. հենց այդ որոնումների ճանապարհին իր համար նորանոր գյուտեր կանի, որոնք ոչ միայն հայտնության հանկարծահաս բերկրանք կպատճառն, այլև իմացության տևական հածովը:

Այստեղ ևս կարևորվում է ՈՒՍՈՒՑՉԻ դերը, որի հիմնական գործը **սովորել սովորեցնելը** պետք է լինի: Որ հետո ԱՇՎԿԵՐ-ՏԸ արդեն ինքը գլխի ընկնի, որ, եթե, օրինակ, այսօր «Նոր Զելանդիա» կա, ուրեմն՝ կա կամ էլ, գոնե, եղել է նաև «հինը», ու փնտրի ու գտնի...

Ու նաև. են, որ, ենթադրենք, վայրենի աբորիգենները կերել են Կուկին, կարելի է Վիսոնկու երգից էլ «հասկանալ», բայց շատ ավելի կարևոր է, թե ով է եղել նա, երբ և ինչու է այդ չարաղետ դեպքը պատահել...

...Կահրամ Փափազյանի «Շետադարձ հայացք»-ի ավարտը՝ «Ծնթերցողին» ուղղված, ՈՒՍՈՒՑՉԻ խոսք է: Յոզատար, սրտացավ, իմաստուն ՈՒՍՈՒՑՉԻ, ովքեր այս գրքում, ԱՌԱՋԻՆԻ շնորհիիվ՝ բնականաբար, շատ են. «Մինչև այստեղ ես բերի քեզ, հարազատ ընթերցող, սրանից դենք նեղ մի արահետ է բացվում ճամփիս, ուր տեղ չի լինի երկուսիս համար...»

Մնա երջանիկ, և զավակմերիդ, որոնց օրինեցի, երբեմն պատմիր, թե այսպիսի մի մարդ եղավ մեզանում... եկավ ու անցավ»:

Մնացյալը՝ գործում: Ու՝ այլ գործերում ևս: Եվ ոչ միայն:

## ԱՅՂԻՆ ՍՈՐԻԿՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱԿՏԻԿԱ.  
*Բնագրեր*



# ԼԵՌԱՆ ՔԱՐՈՉԸ

Յիսուսը, տեսնելով ժողովողի բազմությունը, բարձրացավ լեռան վրա և նստեց այնտեղ. նրա աշակերտները հավաքվեցին նրա շուրջը, և նա սկսեց ուսուցանել նրանց՝ ասելով.

## Երանիմեր (Ղկ 6.20-23)

- Երանի՝ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

Երանի՝ սգավորներին, որովհետև նրանք Աստծուց մխիթարություն պիտի գտնեն:

Երանի՝ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:

Երանի՝ նրանց, որոնք արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագենան:

Երանի՝ ողորմածներին, որովհետև նրանք Աստծուց ողորմություն պիտի գտնեն:

Երանի՝ նրանց, որոնք սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:

Երանի՝ նրանց, որոնք խաղաղության հաստատման համար են աշխատում, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:

Երանի՝ նրանց, որոնք հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

Երանի՝ ձեզ, երբ մարդիկ ձեզ նախատեն ու հալածեն, կան ստելով՝ ձեր մասին ամեն տեսակ զրապարտություն անեն իմ հետևորդը լինելու համար:

Ցնծացեք և ուրախացեք, որովհետև մեծ է ձեր վարձատրությունը երկնքում: Յիշեցեք, որ նույն ձևով հալածանքի ենթարկվեցին նաև ձեզնից առաջ ապրած մարզարեները:

## **Երկրի աղը և աշխարհի լույսը (Մր 4.21, 9.50, Ղկ 8.16, 11.33, 14.34-35)**

- Դուք եք Երկրի աղը: Սակայն եթե Երկրի աղը իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն: Այլս ոչ մի բանի չի ծառա- յի, այլ դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի:

Դուք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կա- ռուցված, չի կարող թաքնվել: Ոչ ոք ճրագը վառելով կաթսա- յի տակ չի պահում, այլ այն դուռը է աշտանակի վրա, որպես- զի լույս տա տան մեջ գտնվողներին: Այդպես էլ թող ձեր լույ- սը շողա մարդկանց առջև, որպեսզի նրանք տեսնեն ձեր բա- րի գործերը և փառավիրեն ձեր Հորը, որ Երկնքում է:

### **Օրենքի ճշմարիտ ուսուցումը**

- Մի՛ կարծեք, թե ես եկա Մովսեսի Օրենքը կամ մարգարե- ների ուսուցումները ջնջելու. չեկա ջնջելու, այլ լրացնելու: Յաստատ իմացեք, որ ամբողջ Օրենքն ու բոլոր մարգարեու- թյունները կետ առ կետ պիտի իրականանան առանց դրանցից մի բառ իսկ դուրս մնալու, մինչև որ գա այն օրը, երբ կանցնեն այս Երկինքն ու Երկիրը: Ով որ ամենակորք պատվիրանն իսկ զանց անի և ուրիշներին էլ այդպես սովորեցնի, Երկնքի արքա- յության մեջ նա հետինը պիտի համարվի: Իսկ ով որ գործադ- րի պատվիրանները և ուսուցանի դրանք, Երկնքի արքայու- թյան մեջ նա մեծ պիտի լինի: Ասում եմ ձեզ, եթե Աստծու պատ- վիրանների նկատմամբ ձեր հավատարմությունը փարիսեցի- ների և Օրենքի ուսուցիչների ունեցած հավատարմությունից ավելին չլինի, Երկնքի արքայությունը չեք մտնի:

### **Ուսուցում բարկության մասին (Ղկ 12.57-59)**

- Լսել եք, թե ինչ է ասվել անցյալում. «Մի՛ սպանիր, որով- հետև ով սպանում է, պիտի դատապարտվի»: Իսկ ես ձեզ ասում եմ. ով որ առանց պատճառի բարկանա իր եղբոր վրա,

պիտի հանձնվի դատարանի: Ով որ իր եղբորը հիմար կոչի, ատյան պիտի բերվի, և ով որ իր եղբորն անմիտ կոչի, պիտի դատապարտվի դժոխքի կրակին: Եթե զոհասեղանի վրա քո ընծան Աստծուն մատուցելու ժամանակ հիշես, թե եղբայրդ վշտացել է քեզնից, քո ընծան զոհասեղանի առաջ թող, գնա նախ հաշտվի՞ր եղբորդ հետ և ապա եկ, քո ընծան մատուցի՞ր Աստծուն:

Երբ մեկը ինչ-որ խնդիր ունենա քեզ հետ և դատի տա քեզ, սկզբից համաձայնության եկ նրա հետ՝ դեռևս դատարան չընկած, այլապես նա քեզ դատավորին կիանձնի, դատավորն էլ ուստիկանին, և դու բանտ կնետվես: Յամոզված եղիր, որ բանտից դուրս չես գա, մինչև չվճարես տուգանքիդ վերջին դահեկանը:

### **Ուսուցում շնությամ մասին** **(Մտ 18.8-9, Սր 9.42-47)**

- Լսել եք, թե ինչ է ասվել. «Մի՛ շնանա»: Իսկ ես ասում եմ ձեզ, թե ով որ ցանկությամբ նայի որևէ կնոջ, արդեն իսկ իր սրտուն շնություն արած կլինի նրա հետ: Եթե քո աջ աչքը գայթակղեցնում է քեզ, հանիի և դեն զցիր այն, որովհետև նախընտրելի է, որ քո անդամներից մեկը կորցնես, քան թե քո ամբողջ մարմնով դժոխք նետվես: Եթե քո աջ ձեռքը գայթակղեցնում է քեզ, կտրիի և դեն զցիր այն, որովհետև նախընտրելի է, որ քո անդամներից մեկը կորցնես, քան թե քո ամբողջ մարմնով դժոխք նետվես:

### **Ուսուցում ապահարզանի մասին** **(Մտ 19.7-9, Սր 10.4-12, Ղկ 16.18)**

- Ասվել է նաև. «Ով որ արձակի իր կնոջը, թող նրան արձակման թուղթ տա»: Իսկ ես ձեզ ասում եմ. նա, ով իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, ի՞նքը պատճառ կդառնա, որ նա շնանա: Նույնպես շնություն արած կլինի նա, ով ամուսնանում է արձակված կնոջ հետ:

## **Ուսուցում Երդման մասին**

- Լսել եք նաև, թե ինչ է ասվել անցյալում. «Երդմնազանց մի լինիր, այլ կատարի՛ր այն, ինչ երդվել էիր Տիրոջը»: Իսկ ես ձեզ ասում եմ. -Բնավ մի երդվեք, ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստծու գահն է, ո՛չ երկրի վրա, որովհետև նրա ոտքի պատվանդանն է, ո՛չ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Թագավորի՝ Աստծու քաղաքն է, և ո՛չ էլ քո գլխով երդվիր, որովհետև չես կարող մի մազ անգամ սպիտակ կամ սև դարձնել: Պարզապես ձեր այն թող այո լինի և ոչը՝ ոչ: Դրանից ավելին չարից է գալիս:

## **Ուսուցում Վրեժի մասին**

**(Ղկ 6.29-30)**

- Լսել եք, թե ինչ է ասվել. «Աչքի փոխարեն աչք պիտի հատուցես, ատամի փոխարեն՝ ատամ»: Իսկ ես ձեզ ասում եմ. - Մի՛ հակառակվիր քեզ չարիք անողին: Եթե մեկը քո աջ երեսին ապտակ տա, մյուս երեսդ էլ դարձրու նրան: Եվ եթե մեկը ուզի քեզ դատի կանչել շապիկդ առնելու համար, բաճկո՞նդ էլ տուր նրան: Եթե մեկը քեզ բռնադատի մեկ մղոն ճանապարհ միասին գնալ իր բեռը տանելու համար, նրա հետ երկո՞ւ մղոն էլ գնա: Եթե մեկը մի բան խնդրի քեզնից, տո՞ւր, և եթե մեկը մի բան փոխ առնել ուզի քեզնից, երես մի դարձրու:

## **Սիրել թշնամիներին**

**(Ղկ 6.27-28, 32-36)**

- Լսել եք արդարեւ, թե ինչ է ասվել. «Սիրի՛ր ընկերոջդ և ատի՛ր թշնամուր»: Իսկ ես ձեզ ասում եմ. -Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրինեցե՛ք ձեզ անհօղողներին, բարություն արեք ձեզ ատողներին և աղոթեցե՛ք նրանց համար, ովքեր չարչարում ու հալածում են ձեզ: Այդպիսով դուք ձեր երկնավոր Հոր որդիները պիտի դառնաք, որովհետև նա իր արեգակը ծագեցնում է թե՛ չարերի և թե՛ բարիների վրա, և անձրև է տեղաց-

նուն թե՝ արդարների և թե՝ մեղավորների վրա: Եթե ձեզ սիրող-ներին սիրեք միայն, Աստծուց ի՞նչ վարձատրություն կարող եք սպասել: Չէ՞ որ մաքսավորներն էլ նույնն են անում: Նմանապես, եթե միայն ձեր ազգակիցների հետ բարեկամություն անեք, հեթանոսներից ավելի ի՞նչ բան արած կլինեք: Չէ՞ որ նրանք էլ նույնն են անում: Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ:

### **Ուսուցում ողորմության մասին**

- Զգույշ եղեք, Աստծու հանդեպ ձեր պարտավորությունները մարդկանց ներկայությամբ մի՛ կատարեք ի ցույց նրանց, որովհետև այդ դեպքում վարձատրություն չեք ստանա ձեր երկնավոր Հորից:

Երբ ցանկանաս ողորմություն անել, փող ու թնբուկով մի՛ արա դա՝ մարդկանց ուշադրությունը գրավելու համար, ինչպես անում են կեղծավորները ժողովարաններում և հրապարակներում՝ մարդկանցից փառավորվելու ակնկալությամբ: Վստահ եղեք, դա՝ է միայն նրանց վարձատրությունը: Ընդհակառակը, երբ դու ողորմություն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջ ձեռքը: Այսպիսով քո ողորմությունը ծածուկ արած կլինես, և քո Հայրը, որ անտեսանելի է և տեսնում է կատարածդ, քեզ կվարձատրի հայտնապես:

### **Ուսուցում աղոթքի մասին (Ղկ 11.2-4)**

- Նմանապես, երբ դու աղոթես, չլինե՞ս կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում կանգնած աղոթել, որպեսզի մարդիկ տեսնեն իրենց աղոթելը: Վստահ եղեք, դա՝ է միայն նրանց վարձատրությունը: Այլ երբ դու աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՞ր դուռը և ծածուկ աղոթիր քո երկնավոր Հորը: Եվ քո Հայրը, որ անտեսանելի է և տեսնում է կատարածդ, քեզ կհատուցի հայտնապես:

Աղոթք անելիս մի՛ շատախոսեք հեթանոսների նման, որոնք կարծում են, որ եթե երկար աղոթեն, լսելի կլինեն: Արդ, նրանց չնմանվե՛ք, որովհետև ձեր Յայրը գիտի, թե ինչ է ձեզ պետք, նույնիսկ երբ դեռ բան չեք խնդրել նրանից: Ուրեմն՝ այսպես աղոթեցեք. -

*Յայր մեր երկնավոր,  
թող սրբարանվի քո անունը:  
Թող գա՛ քո արքայությունը,  
թող կատարվի՛ քո կամքը,  
ինչպես որ երկնքում,  
այնպես էլ երկրի վրա:  
Ամենօրյա մեր հացը  
այսօր ևս տուր մեզ:  
Ներիի մեր հանցանքները,  
ինչպես որ մենք ենք ներում  
նրանց, որոնք մեր դեմ  
նույնպես հանցանք են գործել:  
Եվ թույլ մի՛ տուր,  
որ ընկնենք փորձության մեջ,  
այլ ազատիի մեզ չարից.  
Քանզի քոնն են միշտ  
արքայությունը, զորությունը և փառքը. ամեն:*

Այո՛, եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Յայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Յայրն էլ ձեզ չի ների ձեր հանցանքները:

### *Ուսուցում ծոմապահության մասին*

- Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ եղեք կեղծավորների նման, որոնք կախում են իրենց երեսը, որպեսզի մարդկանց ցույց տան, թե ծոմ են պահում: Վստահ եղեք, միայն դա՛ է նրանց վարձատրությունը: Ընդհակառակը, երբ դու ծոմ պա-

հես, օժի՞ր քո գլուխը և լվա՛ քո երեսը, որպեսզի մարդիկ չտեսնեն, թե ծոմ ես պահում, այլ միայն քո Հայրը, որ անտեսանելի է. և քո Հայրը, որ տեսնում է կատարածդ, քեզ կվարձատրի հայտնապես:

### **Գանձ Երկնքում (Ղկ. 12.33-34)**

- Ձեզ համար հարստություն մի՛ դիզեք Երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգը փշացնում են, կամ գողերը, ձեր պատը քանդելով, ներս են մտնում և գողանում այն: Այլ ձեր հարստությունը Երկնքում դիզեցեք, որտեղ ցեցն ու ժանգը չեն կարող փշացնել այն, և ոչ էլ գողերը կարող են ձեր պատը քանդելով ներս մտնել և գողանալ. որովհետև որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը:

### **Հավատի ճրագը (Ղկ 11.34-36)**

- Աչքն է մարմնի ճրագը. Եթե քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը վատառողջ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա որքան ավելի մթին է այդ խավարը:

### **Աստված և աշխարհիկ մտահոգությունները (Ղկ 16.13, 12.22-31)**

- Մարդ չի կարող Երկու տիրոջ ծառայել, որովհետև կամ մեկին կսիրի և մյուսին կատի, կամ մեկին կմեծարի և մյուսին կարհամարհի: Նույնպես և դուք չեք կարող ծառայել Աստծուն այնքան ժամանակ, քանի դեռ ծառայում եք դրամին: Յետևաբար, մի՛ մտահոգվեք ձեր կյանքի համար, թե ի՞նչ պիտի ուտեք կամ ի՞նչ պիտի խմեք, ոչ էլ մտահոգվեք ձեր նարմնի համար, թե ի՞նչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքն ավելի կարևոր է, քան կերակուրը, և մարմինն ավելի կարևոր է, քան հագուստը:

Նայեցեք Երկնքի թռչուններին. ոչ սերմանում են, ոչ հնձուն և ոչ էլ շտեմարանների մեջ ամբարում, և սակայն ձեր Երկնավոր Հայրը կերակրում է նրանց: Չէ՞ որ դուք Աստծու աչքին թռչուններից գերազանց եք: Մտահոգվելը մեկ կանգունով կավելացն՝ ձեր հասակը: Կամ հագուստի համար ինչո՞ւ եք մտահոգվում: Օրինակ Վերցրեք վայրի շուշաններից և տեսեք, թե ինչպես են աճում . ոչ աշխատում են, ոչ հյուսում: Հավատացեք, որ Սողոմոնն իսկ, իր ամբողջ փառքի մեջ, չկարողացավ նրանցից մեկի նման գեղեցիկ հագնվել: Ուրեմն, եքեւ Աստված այդպես գեղեցիկ հագնում է դաշտի միջի խոտին, որ այսօր կա և վաղը հնոց է նետվում, նրանցից շատ ավելի լավ չի հագնելու ձեզ, թերահավատներ: Յետևաբար, մի՛ մտահոգվեք ու ասեք. «Ի՞նչ պիտի ուտենք կամ ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնենք»: Այդ մտահոգությունները հատուկ են հեթանոսներին, քանի որ ձեր Երկնավոր Հայրը գիտե արդեն, որ ունեք այդ բոլորի կարիքը: Դուք նախ խնդրեք, որ Աստծու արքայությունը գա, աշխատեք կատարել նրա կամքը, և Աստված այդ բոլորը ավելիով կտա ձեզ:

Ինչո՞ւ ուրեմն մտահոգվել վաղվա մասին: Վաղվա մտահոգությունը վաղվան բռնեք: Յուրաքանչյուր օրվա նեղությունը ինքնին բավարար է:

### **Զդատել ուրիշներին (Ղկ 6.37-38, 41-42)**

-Մի՛ դատեք ուրիշներին, որպեսզի Աստված էլ ձեզ չդատի. որովհետև ինչ սկզբունքով որ դատեք ուրիշներին, Աստված նրանով է դատելու ձեզ, և ինչ չափանիշ որ գործածեք, նույնը Աստված գործադրելու է ձեզ դատելու համար: Ինչո՞ւ ես տեսմուն եղբորդ աչքի մեջ եղած շյուղը և չես անդրադանում, որ աչքի մեջ գերան կա: Կամ ինչպե՞ս ես քո եղբորն ասում. «Թոնի որ հանեմ աչքի միջի շյուղը», այն դեպքում, երբ քո աչքի մեջ գերան ունես: Կեղծավոր, նախ հանիր քո աչքից գերանը, որ կարողանաս հստակ տեսնել և ապա՛ մի-այն հանել եղբորդ աչքի շյուղը:

Որևէ սրբություն շներին մի՛ տվեք, ձեր մարգարիտներն էլ խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի չլինի թե դրանք կոխտեն և դաշնալով ձեզ վրա հարձակվեն:

### **Խնդրել և փնտրել** **(Ղկ 11.9-13)**

- Խնդրեցե՛ք Աստօնուց, և նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնե՛ք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ. որովհետև խնդրողը պիտի ստանա, փնտրողը պիտի գտնի, և բախողի առջև պիտի բացվի դուռը: Ձեր մեջ կա՞ մի հայր, որի որդին եթե հաց ուզի, նա քար տա նրան, կամ ծուկ խնդրի, և նա օձ տա նրան: Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք ձեր զավակներին բարի պարզեներ տալ, ապա ձեր երկնավոր Յայրը որքան ավելի լավ պարզեներ կտա նրանց, որոնք դիմում են իրեն:

Այն, ինչ ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնը դուք արեք նրանց. այս սկզբունքն իր մեջ անփոփում է Օրենքն ու մարգարեների ուսուցումները:

### **Նեղ դուռը** **(Ղկ 13.24)**

- Մտե՛ք նեղ դոնով, քանի որ կորստյան տանող դուռը լայն է, և ճանապարհը՝ ընդարձակ, և շատ են նրանք, որ մտնում են դրանով: Մինչեւ դեպի կյանք տանող դուռը նեղ է, և ճանապարհը՝ դժվարին, և քչերն են միայն, որ գտնում են այն:

### **Ծառը և նրա պտուղը** **(Մտ 12.33, Ղկ 6.43-44)**

- Զգուշացե՛ք սուստ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարի կերպարանքով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց գործերից կճանաչեք նրանց: Մի՞թե փշից խաղող կքաղեն կամ տատակից՝ թուզ: Լավ ծառը լավ պտուղ է տալիս, իսկ վատ ծառը՝ վատ պտուղ: Լավ ծառը չի կարող

Վատ պտուղ տալ, և ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ: Այն ծառը, որ լավ պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում: Ուրեմն՝ իրենց պտուղից կճանաչեք նրանց:

### **Թշմարիտ աշակերտները (Ղկ 13.25-27)**

- Չկարծեք, թե ով որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն է մտնելու. այլ մտնելու է միայն նա, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է: Երբ այն օրը գա, շատերն ինձ պիտի ասեն. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ քո անունով փոխանցեցինք Աստծու պատգամները, քո անունով չար ոգիներ դուրս հանեցինք և քո անունով բազում հրաշքներ գործեցինք»: Այն ժամանակ ես նրանց պիտի հայտարարեմ. «Զեզ բնա՛վ չեմ ճանաչում. հեռացե՛ք ինձանից դուք բոլորդ, որ չարիք էիք գործում»:

### **Ժայռի վրա շինել տունը (Մր 1.22, Ղկ 4.32, 6.47-49)**

- Ուրեմն, ով որ լսում է իմ այս խոսքերը և գործադրում է դրանք, կնմանվի այն իմաստուն մարդուն, որն իր տունը շինում է ժայռի վրա. անձրևները գալիս են, գետերը՝ հորդում, հողմերը փչում և զարկում են այդ տանը, բայց տունը չի կործանվում, որովհետև ժայռի վրա է հաստատված: Իսկ ով որ լսում է իմ այս խոսքերը, բայց չի գործադրում դրանք, կնմանվի այն իիմար մարդուն, որ իր տունը շինում է ավագի վրա. անձրևները գալիս են, գետերը՝ հորդում, հողմերը փչում և զարկում են այդ տանը, և տունը կործանվում է: Եվ ի՞նչ ահավոր է լինում այդ տան կործանումը:

Երբ Յիսուսը վերջացրեց այս խոսքերը, ժողովուրդը հիանում էր նրա ուսուցմամբ, որովհետև ուսուցանում էր հեղինակությամբ և ոչ թե Օրենքի ուսուցիչների նման:

**Ավետարան ըստ Սատթեռսի. 5-7**  
**Աշխարհաբար նոր թարգմանությունը՝**  
**Դայաստանի Աստվածաշնչյան ընկերության**  
2001 թ.

## ՈՂԲ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԾԱԿՈՒՆՅԱՑ ՑԵՂԻՑ ԴԱԴՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՏՈՐՄԻՑ

Ողբում եմ քեզ, Յայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետեւ վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ եւ ուսուցանողդ. Վրդովկեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:

Խղճում եմ քեզ, Յայաստանյայց եկեղեցիդ, բեմիդ քարեգարդությունից անշքացած, քաջ հովկից եւ հովկակցից զրկված: Այլեւս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում եւ հանգիստ ջրերի մոտ սնվելիս եւ ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում եւ օահավեծ տեղերում:

Երանի՝ առաջին եւ երկրորդ փոփոխություններին. որովհետեւ եղավ մի ժամանակ, որ փեսան եւ խաչեղբայրը հեռացվեցին, բայց դու, հարսդ, համբերեցիր, ուղղախոհությամբ պահելով ամուսնությունդ, ինչպես մեկը մեզանից առաջ իմաստնաբար ասաց: Մյուս անգամ էլ, երբ մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու, հարսդ, չապականվեցիր. թեպետ քննի կերպով փեսան վտարվեց - երբ ստամբակ որդիները իրենց ծնողին անարգեցին, միանգամայն եւ խորթերը արժանապես օտար հորը եւ եկվոր խորթ հորը, բայց դու այս անգամ էլ ամեն բանով լքված չմնացիր. ակնկալելով քո (փեսայի) դարձին, դու հովկակցի ձեռքով, մանուկներիդ փայփայեցիր, ոչ ինչպես տագերոց, այլ ինչպես նույն զավակների տեր երկրորդ հոր ձեռքով: Իսկ այս երրորդ անգամ հեռանալիս՝ այլեւս չկա

դարձի ակնկալություն, որովհետեւ մարմնից բաժանվեց իր ընկերոջ ու գործակցի հետ:

Նրանց համար լավ է Քրիստոսի հետ բնակվել, Աքրահամի գողում հանգչել եւ շուրջը իրեշտակների խմբեր տեսնել: Բայց դու ես, որ այրիությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, եւ մենք ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից: Որովհետեւ այնպես չէ (մեր վիճակը), ինչ որ հնունը (հսրայելացոց) ժողովուրդն ուներ, այլ մեր թշվառությունն ավելի է: Որովհետեւ Մովսեսը Վերացվում է, բայց Յեսուն չի հաջորդում, որ առաջնորդէ դեպի Ավետյաց Երկիրը: Որոք վամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց Նաբատի որդին, եւ Աստծու մարդուն ոչ թե առյուծը ոչնչացրեց, այլ հասուն տարիքը: Եղիան համբարձավ, բայց Եղիսեն չմնաց կրկնակի հոգով՝ Յետին օծելու, այլ դեռ Ազայելն էլ հրավիրվեց Խսրայելին կոտորելու: Սեղեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբարել, որ տերությունը նորոգե: Անտիոքոսը բռնադատում է քողնել հայրենի կրոնը, բայց Մադաֆիան չի դիմադրում. պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում: Այժմ ներսը կրիվներ հերձվածողների կողմից, եւ չկա այն խորհրդականը, որ խրատեր եւ պատերազմի պատրաստեր:

Ավա՞ղ այս զրկանքներին, ավա՞ղ այս թշվառ պատմությանը: Ի՞նչպես դիմանան այս ցավերին, ի՞նչպես ամրապնդեմ միտքս ու լեզուս եւ հայրերիս (իմ պարտքս) հատուցանեմ այս խոսքով, (իմ) ծնունդի եւ սնունդի փոխարեն: Որովհետեւ նրանք ինձ ծնան եւ սնուցին իրենց տված ուսումով եւ ուրիշների մոտ ուղարկեցին կատարելագործվելու: Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավիրվեն իմ ամենինաստ արվեստով եւ լիակատար պատրաստությամբ, եւ մենք էլ Բյուզանդիայից շտապ շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել, խիզախս եւ արագ շարժումներով, եւ առագաստի երգեր երգել,- այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր են ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ չհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն եւ օրինությունը:

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում: Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար եւ ահավորությունը չարերի համար. ո՞ւր է այն զվարք շրթունքների ժամանական չափությունը, որ արբանյակներ էր գրավում. ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացողը.- ԿորաՎ ժողովուրդը, ծածկվեց նավահանգիստը, լրեց օգնականը. լրեց խրախուսիչ ձայնը:

Ո՞վ այսուհետեւ պիտի հարգե մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտե՝ մասամբ իր որդուց հաղթվելով: Ո՞վ պետք է զսպե առողջ վարդապետության հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք ամեն բանով քանդված ու քայլայված՝ շատ ուսուցիչներ են փոփոխում եւ բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը, ամեն բանի նրանք հավասարապես դժվարանում են, եւ իրենց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարելը, իբրեւ անհաստատ եւ որեւէ պիտանի արվեստից գուրկ (մարդկանց): Ո՞վ պետք է նրանց պապանձեցնե սաստելով եւ մեզ սփոփե գովելով եւ չափ դնե խոսքի եւ լրության:

Երբ մտածում եմ այս բաների մասին, իմ մեջ հառաջանք եւ արտասուք են ծագում, ինձ թելադրում են տխրալից եւ սգավոր խոսք ասել: Եվ չգիտեմ, ինչպես հորինեն իմ ողբը եւ կամ ո՞ւմ արտասկեմ,- արդյոք իմ թշվար մանուկ քազավորի՞ն, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ դեն զցվեց եւ նախքան մահով մեռնելը անարգաբար աթոռից կործանվեց, թե ինձ, որի գլխից վերցվեց փառավորող գեղեցիկ կենցաղօգուտ պասկը. արդյոք իմ հո՞րն ու քահանայապետին, այն վսեմ միտքը, լի կատարյալ խոհականությամբ, որով կառավարում էր եւ բարեկարգում, եւ սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս (ընթացքին) լեզուները, թե ինձ, նրա հոգու խանդից գրկվածիս ու տնամկիս. արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ոռօգում էր արդարությունը եւ իբրեւ հեղեղ դուրս էր քշում ամբարշտությունը, թե ինձ, նրա խրատ-

Աերը խնելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս. արդյոք մեր աշխարհին արդեն եկա՞ծ աղետները, թե ապագայում սպասվածները:

Ո՞վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտոնությանը, ո՞վ մեզ կը նկերանա՝ ցավակցելով մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու: Զարթիր, Երեմիա, զարթիր, եւ ողբա մարգարեանալով հանդերձ ինչ թշվառություններ որ կրեցինք եւ դեռ պիտի կրենք. գուշակիր, որ տգետ հովվիվներ պետք է երեւան գան, ինչպես (գուշակեց) Զաքարիան Խարայելացիների համար:

Ուսուցիչները՝ տխնար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած եւ ոչ Աստօնուց կոչված, փողով ընտրված եւ ոչ Սուլը Հոգով. ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ Աստված է բնակվում, եւ գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվասեր, քան աստվածասեր:

Վիճակավորները՝ հպարտ, դատեր սիրող, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առեւտուր եւ կատակերգություններ սիրող:

Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Աշխարհականները՝ անբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասագործ, ժառանգությունից փախչող:

Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, հելուզակ, ավազակների բնութենակից:

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կօծի, ժլատ, ազահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր, ծառաներին համամիտ:

Դատավորները՝ տմարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անհաստատ, հակառակող:

Եվ առհասարակ սերն ու ամորը ամենքից վերացած:

Եվ ի՞նչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ Աստված

մեզ անտես է արել եւ տարրերը փոխել են իրենց բնությունը.-գարունը երաշտ, ամառը սաստիկ անձրեւային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից եւ երկարատեւ: Քամիները՝ բուքեր բերող, խորշակի փոխված, ցավեր տարածող. ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. անձրեւներն անժամանակ եւ անօգուտ. եղանակը դաժան, եղամ բերող. իրերի անօգուտ ավելանալը եւ չափից դուրս պակասելը. երկրի պտղաբերությունը նվազած, անասունների աճելությունը պակասած, այլեւ երկրաշարժներ եւ սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքին, թե ամբարիշտներին խաղաղություն չկա:

Որովհետեւ (մեզ) տիրեցին խստասիրու ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախսվում է այստեղի ունայն կյանքի համար: Ասպատակություններ են գալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր եւ հիվանդություններ եւ բազմատեսակ համաճարակներ: Աստվածապաշտությունը նոռացված է, դժոխքի ակնկալություն:

Որից փրկե Քրիստոս Աստված մեզ եւ բոլորին, որոնք ճշմարտությամբ երկրագում են նրան: Նրան փառք բոլոր ստեղծվածներից, ամեն:

# Լեռնարդո դա Վինչի

## ԳՐԱՌՈՒՍԵՐ

1.

Սկսվել է Ֆլորենցիայում, Պիերո դա Բրաչո Մարտելիի տանը, 1508 թվի մարտի 22-ին: Եվ սա լինելու է չկարգավորված ընտրանի՝ քաղված շատ թերթերից, որ ես արտագրել եմ այստեղ՝ մտադրվելով հետո դասդասել նախկին տեղերում՝ այն նյութերի համապատասխան, որոնց դրանք վերաբերում են: Եվ ես վստահ եմ, որ նախքան ավարտին հասնելը, այստեղ նույնը մի քանի անգամ կրկնելու եմ և այդ պատճառով, ընթերցող, մի մեղադրիր ինձ, որ առարկաները շատ են և հիշողությունը չի կարող դրանք պահպանել, այդ մասին չեմ ուզում գրել, քանզի գրված է նախկինում, և եթե չցանկանայի նման սխալի մեջ ընկնել, անհրաժեշտ կլիներ ամեն դեպքում, որ կցանկանայի գրի առնել, կրկնություններից խուսափելու համար, միշտ կարդալ նախկինը, և հատկապես գրել միջակայքերում՝ մի անգամից մյուսը:

2.

Լավ գիտեմ, որ որոշ սնակառների, որովհետև ես շատ կարդացած չեմ, կրվա, որ իրենք իրավունք ունեն ինձ մերժել, իինք ընդունելով այն, որ ես գրքային կրություն չունեմ: Անխելքներ: Նրանք չեն հասկանում, որ ինչպես Մարիոսը պատասխանեց հռոմյան պատրիկներին, ես նույնը կարող էի պատասխանել նրանց՝ ասելով. «Դուք, որ ձեզ զարդարել եք ուրիշների աշխատանքով, չեք ուզում ճանաչել իմ իրավունքը իմ աշխատանքի նկատմամբ»: Կասեն, որ ես բանասեր չլինելով, չեմ կարող լավ ասել այն, ինչի մասին ուզում եմ խոսել: Նրանք չգիտեն, որ իմ առարկաները ավելի, քան ուրիշների խոսքերը, քաղված են փորձից, որը եղել է նրանց դաստիարակը, ով լավ է գրել, այդպես էլ ես վերցնում եմ նրան ինձ դաստիարակ և բոլոր դեպքերում հղում եմ անելու նրան:

3.

Թեպետ ես և չէի կարողանա ինչպես նրանք, լավ հղում անել հեղինակներին, շատ ավելի մեծ ու արժանի բան է (հեղինակների) ընթերցանության ժամանակ հղում անել փորձին՝ նրանց դաստիարակների դաստիարակին: Նրանք շրջում են փրված ու գուգված, զարդարված ոչ իրենց, այլ ուրիշների աշխատանքով, իսկ իմ աշխատանքներում ինձ մերժում են, և եթե ինձ՝ գյուտարարիս, արհանարհում են, որքան ավելի արհանարհված կլինեն իրենք՝ ոչ գյուտարարները, այլ փողիարները և ուրիշների ստեղծագործությունները վերապատմողները:

14.

Ով վիճում է՝ հղում անելով հեղինակություններին, նա օգտագործում է ոչ թե իր խելքը, այլ՝ հիշողությունը:

26.

Թեպետ պատմությունը սկսվում է պատճառներից և վերջանում է փորձով, մեզ պետք է գնալ հակառակ ճանապարհով. պետք է սկսել փորձից և նրա հետ որոնել պատճառը:

27.

Բնության մեջ չկա ոչինչ առանց պատճառի. գտիր պատճառը և քեզ փորձ պետք չէ:

28.

Փորձը չի սխալվում, սխալվում են միայն մեր դատողությունները, որ փորձից սպասում են նրա իշխանության տակ չգտնվող իրողություններ: Մարդիկ արդարացի են բողոքում փորձից՝ մեծագույն տրտունջներով մեղադրելով խարուսիկության մեջ: Դանգիստ թողեք փորձը և ձեր բողոքներն ուղղեք սեփական տգիտությանը, որը ստիպում է շտապել և չսպասելով նրանից ունայն ու տկարամիտ ցանկությունների իրողություններ, որ դուքս են նրա իշխանությունից, ասել, որ նա խարուսիկ է: Մարդիկ անարդարացի բողոքում են անմեղ փորձից՝ հաճախ մեղադրելով խարուսիկ ու կեղծ ցուցմունքների համար:

29.

Գիտություն է կոչվում այն խելամիտ դատողությունը, որ սկիզբ է առնում իր վերջին սկիզբներից, որին գուգահեռ բնության մեջ ոչինչ այլ բան չի կարող գտնվել, որը (նույնպես) կարող է լինել այդ գիտության մասը:

71.

Անհրաժեշտությունը բնության դաստիարակն ու թխանայրն է: Անհրաժեշտությունը բնության թեման է ու բնության հայտնագործողը, և սանձը, և հավերժական օրենքը:

72.

Եվ որքան բնությունը բավարարում է ու անսպառ է իր բազմազանության մեջ, որ միևնույն տեսակի ծառերի մեջ չի գտնվի բույս, որ նմանվի մյուսին, ապա ոչ միայն բույսերը, այլև ճյուղերը, տերևները, պտուղները չեն կարող նույնությամբ կրկնել մեկը մյուսին:

73.

Թվում է՝ այստեղ բնությունը շատ կենդանիների համար ավելի շուտ խորթ մայր է եղել, քան մայր, իսկ ոմանց համար ոչ թե խորթ մայր, այլ սիրասուն մայր:

74.

Դու այստեղ տեսնում ես՝ ինչ ջանքով է բնությունը տեղադրել նյարդերը, երակներն ու զարկերակները մատների կողքերից, այլ ոչ թե մեջտեղից, որ աշխատանքի ընթացքում հանկարծ չծակվեն կամ կտրվեն:

75.

Ինչու բնությունը չի արգելել մի կենդանուն ապրել մյուսի մահով: Բնությունը, որոնելով ու ուրախություն գտնելով, մշտապես ստեղծելով ու արտադրելով կյանքեր ու ձևեր, ինանալով, որ դա է իր կենսանյութի աճը, շատ ավելի հաճույքով ու արագ է ստեղծում, քան ժամանակը կործանում է: Եվ այդ

պատճառով է նա այդպես արել, որ շատ կենդանիներ սնունդ ծառայեն մյուսների համար, և այնպես, որ դա չբավարարի նման ցանկությունը, հաճախ նա ուղարկում է որոշ թունավոր ու կործանարար շոգիներ մեծ բազմությունների համար և կենդանիների կուտակումների, նախ և առաջ մարդկանց դեմ, որոնց աճը մեծ է, քանի որ նրանցով այլ կենդանիներ չեն կերակրվում, և պատճառների վերացումով վերանում են հետևանքները: Այսպիսով, այս երկիրը որոնում է իր կյանքի դադարը՝ ցանկանալով անվերջ բազմացնել նշված ու ապացուցված հիմքով. հաճախ հետևանքները նմանվում են իրենց պատճառներին, կենդանիները ծառայում են մարդկանց կյանքի օրինակ:

### 83.

Նայիր՝ հույսը և ցանկությունը բարձրանում են իրենց հայրենիքը և վերադառնում են իրենց առաջին որակին՝ նմանվելով թիթեռին լույսի հարաբերությամբ, և մարդը, որ միշտ անդուլ ցանկությամբ, հրճվանքով լի, սպասում է նոր գարնանը, միշտ նոր ամռանը և միշտ նոր ամիսներին ու նոր տարիներին, ընդ որում, նրան թվում է, որ ցանկալի իրողությունները չափազանց հապաղում են գալ, չի նկատում, որ ինքը կործանում է ցանկանում: Իսկ այդ ցանկությունը տարերքի քվինտէսենցիան է, ոգին, որ լինելով մարդկային մարմնի բանտարկված հոգի, միշտ ձգտում է վերադառնալ իրեն ուղարկողի մոտ: Եվ ուզում եմ, որ դու իմանաս, որ այդ ցանկությունը քվինտէտենցիան է՝ բնության ուղեկիցը, իսկ մարդը աշխարհի օրինակն է:

# **Ոուսական առաջին տպագիր՝ “Վեճոմոստ” թերթից**

## **2 հունվարի 1703 թ.**

Սոսկվայում այսօր արդեն նոր 400 պղնձե թնդանորներ, հառլիցներ և մարտիրներ են ձուլված: Այդ թնդանորները 24, 18 և 12 ֆունտանոց ռմբագնդերի համար են: Յառլիցները՝ փրանց և կեսփրանց ռումբերի: Մարտիրները՝ ինը, երեք և երկփրանց ու ավելի փոքր: Ու նաև հսկա ու միջին թնդանորների, հառլիցների և մարտիրների ձուլման շատ կաղապարներ են պատրաստ: Իսկ պղնձը, որ պատրաստված է նոր ձուլման համար՝ ավելի քան 40 000 փութ կլինի:

Նորին մեծության հրամանով մոսկովյան դպրոցները բազմապատկվում են, և 45 մարդ լսում է փիլիսոփայություն և արդեն ավարտել է դիալեկտիկան:

Մարեմատիկական շտուրմանական դպրոցում 300-ից ավելի մարդ է սովորում և գիտության բարիքը ստանում:

Սոսկվայում նոյեմբերի 24-ից մինչև դեկտեմբերի 24-ը ծնվել է իօվական և արտական սեռի 386 մարդ:

Պարսկաստանից գրում են. Յնդկաստանի կայսրը մեր մեծ Տիրակալին նվեր է ուղարկել փիլ և այլ շատ բաներ: Շեմախի քաղաքից այն Աստրախան է ուղարկվել ցանքաբային ճանապարհով:

Կազանից գրում են. Սոկու գետի մոտ շատ նավք և պղնձի հանք են հայտնաբերել: Այդ հանքից բավականին պղինձ են ձուլել, ինչից, ասում են, շատը անցել է Սոսկովյան պետությանը:

Սիբիրից գրում են. Չինական պետությունում ճիզվիտներին մեծատոհմիկները սկսել են ատել նրանց կեղծավորության պատճառով, իսկ նրանցից ոմանց մահվան են դատապարտել:

Օլոնցից գրում են. Օլոնց քաղաքի տերտեր Իվան Օկուլովը, հավաքելով հետևակ որսորդների՝ մինչև հազար մարդ,

արշավել է արտասահման՝ շվեդական սահման և ջարդել Ռուգոգենսկի, Գիպպոնսկի, Սուլմերսկի և Կերիսուրսկի ուղեկալները: Իսկ այդ ուղեկալներում շատ թվով շվեդներ է սպանել և գրավել վարձկան հեծյալների դրոշը, բավականին թմբուկներ և սվիններ, կայծքարի հրացաններ և ձիեր, իսկ ինչ գրավել է պաշարներից ու սննդից, նա՝ տերտերը, բաժանել է իր զինվորներին: <...>

*Մուկվա, 1703-ի, հունվարի 2-ին*

## 20 հուլիսի 1708 թ.

Դոնի կազակ, գող և աստվածուրաց Կոնդրաշկա Բուլավինը ուկրաինական քաղաքներում և Դոնի կազակների շրջանում խռովություն է բարձրացրել: Իր մոտ է հավաքել մի քանի գողերի և համախոհների ու գայթակղեցնող նամակներ է գրել շատ քաղաքներ և գյուղեր՝ կոչ անելով միանալ իր գողական համախմբին, ու շատ նույնափիսի գողեր և Դոնի կազակներ՝ ոմանք կարիքից դրդված, իսկ ոմանք էլ գայթակղվելով, նրան են միացել: Եվ հավաքված բազմամբոխով արշավում են քաղաքների ու գյուղերի վրա՝ թալանելու և ուրիշներին էլ կոչ անելու միանալ, և դրա համար կայսերական մեծությունը հրամայել է ուղարկել իր զորքերը պարոն Դոլգորուկիի դեկավարությամբ, որպեսզի այդ գող Բուլավինին բռնեն և նրա չար գողական խորհուրդը ցրեն: Եվ այժմ գնդերից և քաղաքներից նամակով հավաստի տեղեկություն է ստացվել, որ նրանք՝ գող բուլավինականները, ոչ թե միասնական մեկ տեղում են, այլ նրա գլխավոր ընկեր Ստենկա Դրանոյը <...> սպանված է և նրանց շատ համախոհներ էլ ջախջախված են: Նմանապես և Սարատով ու Ազով ուղարկված գողական ընկերները մեծ թվով սպանված են, և նա՝ Բուլավինը տեսնելով, որ չի կարող կայսերական մեծության զորքերից փախչել, ինքնասպան է եղել: Իսկ նրա շատ համախոհներ սպանված են, մյուսները բռնվել են ու շղթայված են: Իսկ Դոնի բոլոր քաղաքներից կազակները ներողություն են հայցել: Եվ այժմ

Աստծո ողորմածությանք այդ Բուլավինի և համախոհների գոռությունները արմատախիլ են արված: Իսկ թե որ օրերին և որտեղ և որքան գողեր են ջախջախվել ու բռնվել, այդ էլ կհայտարարվի առաջիկայում:

*Մուկվա, Աստծո թվագրության 1708-ի, հուլիսի 20-րդ օրը:*

## 2 հուլիսի 1709 թ.

Պոլտավայի ճամբարից հունիսի քսանյոթերորդ օրը ուղարկված նամակում ազնվագարն նորին կայսերական մեծության արքայի տիրակալ ձեռամբ գրված է.

Յայտնում են Զեզ չափազանց մեծ և աննախաղեա հաղթանակի մասին, որ Տեր Աստված մեր զինվորների աննկարագրելի արիության միջոցով բարեհածեց նվիրել՝ մեր զորքի փոքրաթիվ կորստյամբ, հետևյալ կերպ:

Դույն օրը, վաղ առավոտից սկսյալ, թշնամին ողջ հեծյալ և հետևակ բանակով հարվածեց մեր հեծելազորին, որը թեպետ մեծ արժանապատվությանք պաշտպանվում էր, սակայն հարկադրված էր նահանջել՝ միաժամանակ մեծ կորուստներ պատճառելով թշնամուն: Այնուհետև թշնամին հարվածեց մեր ճամբարի ճակատին, և նրա դիմաց անմիջապես պահնորդական հետևակը դուրս բերեցին ու թշնամուն ակն ընդ ական կանգնեցրին: Իսկ հեծելազորը՝ երկու թևերից: Այդ տեսնելով՝ թշնամին անմիջապես սկսեց հարձակվել մեզ վրա: Նրանց ընդառաջ մերոնք ելան և այնպես նրանց դիմավորեցին, որ անմիջապես էլ դաշտում ջախջախվեցին, շատ դրոշներ և բնդանոբներ գրավեցին: Նաև գեներալ ֆելդմարշալ պարոն Ռեյնշիլտը՝ չորս գեներալների՝ այն է՝ Ծլիպպենբախի, Ծտակենբերիսի, Գամոլտոնի և Ռոգենի հետ, նաև առաջին մինիստր կոնս Պիպերը՝ քարտուղարներ Եմերլինի և Ցիդերգերմի հետ գերի են վերցված, սրանց հետ նաև մի քանի հազար սպաներ և շարքայիններ են գերված, ինչի մասին մանրամասն շուտով կգրենք, իսկ առայժմ շտապելով՝ հնարավոր չեն գրել: Միով

բանիվ՝ թշնամու ողջ բանակը ֆաետոնի վախճան ունեցավ։ Թագավորի մասին դեռևս չենք կարող լուր տալ. մեզ հետ է արդյոք, թե մեր պապերին է արդեն բարեսում։ Իսկ մյուս ջախ-ջախված թշնամիներին հետապնդում են պարոնայք գեներալ պորուչիկներ, իշխաններ Գոլիցինը և Բուրը՝ հեծելազորով։ Եվ այս չլսված նորության համար մենք պատշաճ գոհություն ենք հայտնում հաղթական Տեր Աստծուն, իսկ ձեզ և պարոնայք նախարարներին և բոլոր մերոնց այս հաղթանակի առթիվ շնորհավորում ենք։

Բերել են նաև իշխան Վիրտելբերգսկոյին՝ շվեդական թա-գավորի ազգականին։

*Ստացվել և տպագրվել է Մոսկվայում 1709-ի  
հուլիսի 2-րդ օրը։*

**ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՒԽԱԼԻՍՏՆԵՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ,  
ԵՐԲ ՆՐԱՆՔ ԳՐՈՒՄ ԵՆ  
ՓԻԼԻՍՈՓՎՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՇՏՈԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Բոլորին է հայտնի, թե որքան նշանակալի և արագ են եղել գիտությունների հաջողությունները, որ ձեռք են բերվել սկսած այն պահից, երբ ստրկության լուծը թոքափել է և դրան փոխարինել է փիլիսոփայության ազատությունը։ Սակայն հնարավոր չէ չինանալ նաև այն, որ այդ ազատության չարաշահումը բերել է շատ տհաճ դժբախտություններ, որոնց թիվը կարող էր այդքան էլ մեծ չլինել, եթե գրողների մեծամասնությունն իր ստեղծագործությունները շարադրելը չվերածեր կենսական միջոցներ վաստակելու արհեստի ու գենքի, փոխանակ նպատակ դնելու ծշմարտության խիստ ու ուղղակի որոնումը։ <...>

Հանդեսները կարող էին <...> խիստ բարենպաստորեն ազդել մարդկային գիտելիքների աճի վրա, եթե նրանց աշխատակիցները ընդունակ լինեին կատարելու ամբողջությամբ իրենց վրա վերցրած խնդիրը և համաձայնեին չխախտել պատշաճության սահմանները, որ որոշարկված են նույն այդ խնդրով։ Կարողություն և բարի կամք ահա թե ինչ է նրանցից պահանջվում։ Կարողություն, որպեսզի հիմնավորապես և բանհմացությամբ քննարկի այն բազմաթիվ և բազմազան հարցերը, որ իր առջև դրել է, կամք՝ որպեսզի նկատի առնի միայն ծշմարտությունը։ <...>

Ահա կանոններ, որոնցով մենք երևի պիտի ավարտենք այս դատողությունները: Լայպցիգյան ժուրնալիստին ու նրա նմաններին խնդրում ենք հիշել սրանք:

1. Յուրաքանչյուրը, ով ձեռք է զարկում հասարակությանը տեղեկացնելու այն մասին, թե ինչ են բովանդակում նոր հորինվածքները, պետք է ամենից առաջ չափի սեփական ուժեղը: Չէ՞ որ նա դժվար ու շատ բարդ գործ է ձեռնարկում, որն իրականացնելիս պետք է հաղորդել ոչ թե սովորական բաների, ոչ թե ընդհանուրի մասին, այլև ընդգրկել այն նորը և էականը, որոնք պարունակվում են հաճախ մեծագույն մարդկանց կողմից ստեղծված գործերում: Ընդսմին՝ արտահայտել ոչ ճիշտ և անճաշակ դատողություններ, նշանակում է անձդ դարձնել արհամարհանքի և ծաղրի առարկա: Դա նշանակում է նաև նմանվել այն թգուկին, ով փորձում է շալակել լեռը:

2. Անկեղծ և արդարացի դատողություններ անելուն ընդունակ լինելու համար պետք է մտքից վանել ցանկացած նախապաշարում, ցանկացած կանխակալություն և չպահանջել, որ հեղինակները, ում մասին պատրաստվում ես գրել, ստրկամտորեն ենթարկվեն մեզ վրա իշխող գաղափարներին կամ, ծայրահեղ դեպքում, նրանց չնայել իբրև թշնամիների, ում դեմ պատերազմ պետք է մղել:

3. Գործերը, որոնց մասին հաշվետվություն է ներկայացվում, պետք է բաժանվեն երկու խմբի: Առաջինն իր մեջ ներառում է այն գործերը, որ գրել է մի հեղինակ՝ իրու մասնավոր անձ, երկրորդը՝ նրանք, որ հրապարակվում են ամբողջ գիտական հանրությի կողմից, ընդհանուր համաձայնությամբ և մանրակրկիտ քննարկումից հետո: Եվ առաջինները, և երկրորդները, անշուշտ, գրախոսների կողմից ամենայն շրջահայցության և ուշադրության են արժանի: Զկան ստեղծագործություններ, որոնց նկատմամբ հարկ է չպահպանել արդարության և պարկեշտության բնական օրենքները: Սակայն պետք է համաձայնել նաև, որ գգուշությունը հարկ է կրկնապատկել, եթե խոսքն այնպիսի ստեղծագործությունների մասին է, որոնք արդեն գնահատվել են մամուլում վստահություն ներշնչող դրվագանքով, ստեղծագործությունների, որոնք քն-

նարկվել և հրապարակման արժանի են դիտվել այնպիսի մարդկանց կողմից, ում հավաքական գիտելիքները, բնականաբար, պիտի որ գերազանցեն ժուռնալիստի գիտելիքներին: Յայիոյելուց և դատապարտելուց առաջ պետք է բազմիցս կշռադատես ասելիքդ, որպեսզի հնարավորություն ունենաս, եթե հարկ լինի, պաշտպանել և արդարացնել խոսքերդ: Քանի որ նման ստեղծագործությունները սովորաբար մանրակրկիտ մշակվում են և նյութը վերլուծվում է սիստեմատիկ կերպով, ապա դույզն ինչ վրիպումն ու անուշադրությունը կարող են հանգեցնել հապճեա դատողությունների, որոնք ինքնին արդեն ամոթալի են, սակայն ել ավելի ամոթալի են դառնում, եթե դրանցում առկա են անփութությունը, անկրությունը, շտապողականությունը, կողմնակալության ոգին և անբարեխողնությունը:

4. Լրագրողը չպետք է շտապի դատապարտել հիպոթեզները: Դրանք թույլատրելի են փիլիսոփայական առարկաների համար և նույնիսկ միակ ուղին են, որով մեծահանձար մարդիկ հասել են ամենակարևոր ճշմարտությունների բացահայտմանը: Դա պոռթկման նման մի բան է, որ նրանց ընդունակ է դարձնում հասնելու այնպիսի գիտելիքների, որոնց երբեք չեն հասնի չնչին ու գետնաքարշ ուղեղները:

5. Ժուռնալիստը թող ամենից առաջ յուրացնի, որ իր համար չկա ավելի ամոթալի բան, քան գրչեղբայրներից մեկից վերջիններիս արտահայտած մտքեր ու դատողություններ գողանալը և այն իրեն վերագրելը, այն դեպքում, եթե իրեն հազիվ թե հայտնի են այն գոքերի վերնագրերը, որոնք նա «ծվատում է»: Սա հաճախ է լինում բնական գիտությունների ու բժշկության վերաբերյալ ստեղծագործություններից քաղվածքներ անել փորձող անպատկառ գրողների հետ:

6. Ժուռնալիստի համար թույլատրելի է նոր ստեղծագործություններում հերքել այն, ինչն իր կարծիքով արժանի է դրան, թեպետ այդ չէ նրա ուղղակի խնդիրը և նրա իրական կոչումը: Սակայն, եթե արդեն ձեռք է զարկել դրան, պետք է լավ յուրացնի հեղինակի ուսմունքը, վերլուծի նրա բոլոր ապացույցները և դրանց հակադրի իրական առարկություն-

ներ ու հիմնավոր դատողություններ՝ նախքան ինքն իրեն դրանք դատապարտելու իրավունք վերապահելը: Հասարակ կասկածները կամ կանայականորեն դրված հարցերը նման իրավունք չեն տալիս, քանզի չկա մի թերուս, որ չտա ավելի շատ հարցեր, քան կարող է լուծել անգամ ամենագիտակ մարդը: Ժուռնալիստը հատկապես չպետք է երևակայի, թե այն, ինչը չի հասկանում և չի կարող բացարել ինքը, այդպիսին է նաև հեղինակի համար, ով կարող էր իր հիմնավորումները ունենալ՝ կրծատելու և բաց բողնելու որոշ նանրամասներ:

7. Վերջապես՝ ժուռնալիստը երբեք չպետք է իր գերազանցության, իր հեղինակության, իր դատողությունների արժեքավորության մասին չափազանց մեծ պատկերացում ունենա: Նկատի առնելով, որ գործունեությունը, որով նա զբաղվում է, արդեն իսկ տիաճ է նրանց ինքնասիրության համար, ում վրա դա տարածվում է, նա բացարձակապես ծշմարտացի չի լինի, եթե գիտակցաբար նրանց տիաճություն պատճառի և նրանց ստիպի բոլորի համար բացահայտելու սեփական անկարողությունը:

## **ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**ճառ Անգլիայի խորհրդարանում  
Հատվածաբարար**

Քարգարժան խորհրդարան: Նրանք, ովքեր իրենց խոսքն ուղղում են դասերին ու պետության ղեկավարներին կամ, նման հնարավորություն չունենալով, իբրև մասնավոր անձինք՝ գրավոր արտահայտվում են այն մասին, ինչը իրենց կարծիքով կարող է նպաստել ընդհանուր բարիքին, ձեռնամուխ լինելով այդ դժվարին գործին, ես կարծում եմ, իոգու խորքում բազում հուզումներ ու երկվություններ են ապրում. ոմանք՝ կասկածելով հաջողությանը, ոմանք՝ վախենալով դատապարտվել, ոմանք՝ հույս ունենալով, ոմանք՝ հավատալով այն ամենին, ինչ ցանկանում են ասել:

...Անկասկած, ազատությունը, որի հույսը մենք կարող ենք ունենալ, այն չէ, որ պետության մեջ չլինեն անարդարություններ. մեր աշխարհում դա ակնկալել հնարավոր չէ, բայց երբ բողոքները պատրաստականությամբ ունենդրվում են, մանրակրկիտ քննարկվում են ու արագ լուծումներ են ստանում, ուրեմն ձեռք է բերվել քաղաքացիական ազատության բարձրագույն աստիճանը, որ կարող են միայն ցանկանալ խելամիտ մարդիկ:

...Եթե ես, լորոեր և համայնքների պալատի անդամներ, այնքան հավատում եմ ձեր բարությանը, քաղաքացիական ազնվությանն ու վեհությանը, որ համարձակվում եմ ուղղակիորեն հակադրվել ձեր ընդունած օրենքին, ապա անփորձության կամ հանդգնության մասին դիտողություններից հեշտությամբ կարող եմ ինձ պաշտպանել, քանի որ բոլորը

կհասկանան որքան, ին կարծիքով, ձեզ համար շատ ավելի շահեկան է նմանակել իին Հունաստանի բարեկիրթ մարդասիրությանը, քան` հիների ու նորվեգների փառասիրության բարբարոսական հպարտությանը: Յենց այդ ժամանակներից, որոնց նուրբ ինաստնությանն ու գիտելիքներին ենք մենք պարտական, որ այլսա գորեր ու յուտլանդացիներ չենք, ես կարող եմ մատնանշել մարդու, ով իր մասնավոր բնակատեղից գրավոր դիմել է արենական արեոպագոսին՝ նպատակադրված լինելով համոզելու փոխել այն ժամանակ գոյություն ունեցող կառավարման ժողովրդավարական ձևը (Միլտոնը նկատի ունի Խոսկրատոսի՝ Ք.ծ.ա. 436-388, Areopageticos-ը. Ելույթ, որով նա 348 թ. դիմել է արեոպագոսին և հորդորել վերականգնել Սոլոնի սահմանադրությունը): Այն օրերին ինաստնության ու ճարտասանական գիտությամբ զբաղվող մարդկանց, ոչ միայն սեփական երկրում, այլև այլ երկրներում այնպիսի պատիվներ էին մատուցվում, որ քաղաքներն ու գյուղերը նրանց լսում էին մեծագույն հարգանքով, եթե նրանք հրապարակավ դիմում էին պետությանը ինչ-որ խնդրով:

...Ես պատճառներ չեմ տեսնում, որոնք խոչընդոտեին ինձ ուղղակի նշել այլ հարմար դեպք՝ վերհանելու համար ձեզ վերին աստիճանի բնորոշ սերը ծշմարտության հանդեպ, ինչպես ձեր դաստողությունների արդարանտությունը, որ անաշառորեն վերաբերում է նաև ձեզ անձանք. այդ նպատակով դուք միայն պիտի վերանայեք մամուլի մասին ձեր օրենքը, համաձայն որի «ոչ մի գիրք, պամֆլետ կամ թերթ հետայսու չեն կարող տպագրվել որևէ կերպ, քան` այդ նպատակով նշանակված մարդկանց կամ գոնե մեկ մարդու նախնական ծանոթացումը ու համաձայնությունը ստանալուց հետո»: Օրենքի այն հատվածին, որը արդարացիորեն պահպանում է յուրաքանչյուրի իրավունքը իր ձեռագրի հանդեպ, նաև որոշակիորեն հոգում է չքավորների կարիքները, ես չեմ անդրադառնա, միայն ցանկանում եմ, որ այդ մասը պատրվակ չդառնա՝ վիրավորելու ու հետապնդելու ազնիվ ու աշխատասեր մարդ-

կանց, ովքեր չեն խախտել այդ հոդվածներից որևէ մեկը: Ինչ վերաբերում է գրքերի գրաքննության առնչվող հոդվածներին, որոնք մենք համարում էինք պրելատների ու նրանց եղբայրների մեծպասյան ու ամուսնական համաձայնությունների հետ հողին հանձնված, ապա օրենքի այս նասի առնչությամբ, իմ դատողությունների օգնությամբ, ես կջանամ ձեզ մատնանշել հետևյալը. առաջին՝ այդ օրենքը գրել են այն մարդիկ, ում դուք հաճույքով չեք, որ կընդունեիք ձեր միջավայր, երկրորդ՝ ինչպես պետք է ընդհանրապես վերաբերվել ընթերցանությանը՝ ինչպիսին էլ լինեն գրքերը, երրորդ՝ այդ օրենքը ամենակին չի օգնի գայթակղիչ, հեղափոխական կամ զրպարտչական գրքերը ոչնչացնելուն՝ ինչի համար գլխավորապես և ստեղծվել է: Վերջապես, այդ օրենքը նախ և առաջ խլում է բոլոր գիտնականների եռանդն ու արգելակում է ճշմարտությունը՝ ոչ միայն այն պատճառով, որ զրկում է վարժությունից ու բթացնում է մեր ունակություններն արդեն ունեցած գիտելիքների հանդեպ, այլև այն պատճառով, որ կասեցնում ու կրծատում է հետագա հայտնագործությունների հնարավորությունները՝ ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ ասպարեզներուն:

Ես չեմ ժխտում, որ եկեղեցու ու պետության համար առավելագույնս կարևոր է ակնդետ հետևել գրքերի վարքագծին՝ ինչպես մարդկանց վարքագծին, և անհրաժեշտության դեպքում՝ նրանց ձերբակալել, բանտարկել, իբրև հանցագործների դատել, քանզի գրքերը ամենակին էլ մեռյալ իրեք չեն, այլ էակներ, որ պարփակում են կյանքի սերմերը՝ նույնքան գործուն, որքան այն հոգին, ում ծնունդն են: Ավելին՝ նրանք պահպանում են իրենց մեջ, ինչպես անոթի՝ մաքրագույն էներգիան և այն կենդանի բանականության բանձրուկը, որ ծնել է նրանց: Ես գիտեմ, որ նրանք այնքան կենսունակ և արգասաբեր են, որքան իրեշի առասպելական ատամները, և որ ամենուր սփռված լինելով՝ նրանք կարող են հառնել զինված մարդկանց տեսքով: Այնուհանդերձ. այստեղ զգուշություն չդրսկորելով՝ հնարավոր է սպանել լավ գիրքը, որ նույնն է, թե սպանել լավ մարդուն. ով սպանում է մարդուն, սպանում է

բանական արարածին, որ Աստծո պատկերն ու նմանությունն է. նա, ով ոչնչացնում է լավ գիրքը, սպանում է բուն բանականությունը, սպանում է Աստծո պատկերը սաղմի մեջ: Շատ մարդիկ իրենց կյանքով հոգս են հողի համար, լավ գիրքը ստեղծագործական ոգու թանկարժեք կենսահյութ՝ զնոսված ու պահպանված իբրև գանձ հետագա սերունդների համար:

...Աթենքում, որտեղ միշտ շատ ավելին էին գրքերն ու տաղանդները, քան մնացյալ Յունաստանում, ես գտնում եմ միայն երկու կարգի ստեղծագործություններ, որոնց իշխանությունները հարկ էին համարում հետևել. առաջին՝ աստվածաներժ ու աստվածանարդ Երկերը, Երկորորդ՝ զրպարտչականները: Արեոպագոսի որոշմամբ՝ այրվեցին Պրոտագորասի գրքերը և նա վտարվեց պետության սահմաններից դուրս այն ստեղծագործության համար, որը սկսվում էր «Ես չգիտեմ՝ աստվածներ կան, թե չկան» հայտարարությամբ: Կանխելու համար զրպարտությունը՝ արգելված էր ուղղակի անուններ տալը, ինչպես արփում էր հին կատակերգություններում. այստեղից կարելի է կռահել՝ ինչպես էին աթենացիները վերաբերվում զրպարտություններին: Ցիցերոնի վկայությամբ՝ դա, ինչպես արդյունքները հաստատեցին, լիովին բավարար էր, որ սանձահարվեին խելազուրկ աստվածամերժները և վերջ տրվեր վիրավորանքներին: Այլ աղանդներին ու տեսակետներին՝ թեպետ դրանք հանգեցնում էին զգայական ավելորդությունների ու Աստվածային արարչության մերժմանը, հույնները բոլորին չին հետևում: Այդ պատճառով՝ մենք ոչ մի տեղ չենք կարողում, որ էակիուրյանները կամ կիրենեականների դպրոցը կամ անպատկառ ցինիկները որևէ կերպ հետապնդվեին օրենքով: Հավասարապես՝ ոչ մի տեղ չի հիշատակվում, որ արգելվում է հին հեղինակների կատակերգությունների ընթերցանությունը, թեպետ նրանց պատկերացումները արգելված էին: Լավ հայտնի է, որ Պլատոնը խորհուրդ էր տալիս Արիստոֆանես կարդալ Դիոնիսիոսին՝ իր ամենաանզուսպ արքայածին աշակերտին, և դա առավելևս ներելի է, որ սուրբ Ուկերերանը, ինչպես ասում են, գիշերները չափազանց ուշ-

աղիր ուսումնասիրում էր այդ հեղինակներին և արվեստ էր դարձել նրանց կոպիտ ոգեշնչումը իր քարոզության մաքրագործող ուժով մշակելը:

...Երկար կանգ չեմ առնի Մովսեսի, Դանիելի և Պողոսի օրինակների վրա, որ լավ տիրապետում էին եգիպտացիների, խալդերի ու հույների գիտություններին, ինչը հազիվ թե հնարավոր էր առանց այդ ժողովուրդների գոքերը կարդալու: Պողոս առաջալը Սուրբ գոքի համար սրբապիտություն չհամարեց այնտեղ հույն բանաստեղծների ու մեկ ողբերգակի ստեղծագործությունների ներմուծումը: Ու թեպետ Եկեղեցական առաջին ուսուցիչները երբեմն այս հարցով վիճում էին, նրանց մեծամասնությունը ընդունում էր գոքերի ընթերցանության օրինականությունը:

...Ես կարծում եմ... որ եթե Աստված մարդուն է տվել իր մարմնի համար սննդի ընտրության ազատությունը՝ սահմանելով միայն չափավորության կանոնները, ապա նաև լիակատար ազատություն է տվել հոգևոր սննդի մասին հոգ տանելու առունով, որի հետևանքով ամեն մի չափահաս մարդ կարող է անձանք հոգալ իր գլխավոր ումակությունների գարգացումը: Ինչ մեծագույն առաքինություն է չափավորությունը, ինչ մեծ դեր է կատարում մարդու կյանքում: Եվ, այնուհանդերձ, Աստված մեծագույն Վստահությանը է այդ բարիքի կիրառումը թողնում յուրաքանչյուր չափահաս մարդու կամքին՝ առանց որևէ հատուկ օրենքի կամ հրահանգի: Ահա ինչու՝ հրեաներին Երկնքից սնունդ հրամցնելով, Նա ամեն օր յուրաքանչյուրին այնքան մանանա էր տալիս, որ առավել քան հերիք էր երեք լավ ուսողի: Քանզի այն առնչությամբ, ինչ մարդու մեջ է մտնում, այլ ոչ թե նրանից դուրս է գալիս ու այդ պատճառով չի պղծում, Աստված անհրաժեշտ չի համարում նրան պահել մշտական մանկության վիճակում՝ մշտական վերահսկողության տակ, այլ նրան հնարավորություն է տալիս, օգտվելով բանականության ձիրքից, լինել սեփական դատավորը, և շատ բան չէր մնա քարոզիչներին, եթե օրենքն ու

պարտադրանքը այդքան իշխողաբար վերաբերվեին այն բանին, ինչին մինչև հիմա հասել են հասարակ հորդորով: Սողոմնոց մեզ սովորեցնում է, որ շատ ընթերցանությունը հոգնեցնում է մարմինը, բայց ոչ նա, ոչ որևէ մեկը աստվածաներշնչյալ հեղինակներից մեզ չի ասուն, որ որևէ ընթերցանություն անթույլատրելի է, և հավանաբար, Աստված, Եթե հարկ համարեր այդ առնչությամբ սահմանափակում սահմանել, կմատնանշեր այն, ինչ հոգնեցուցիչ է, այլ ոչ թե այն, ինչ արգելված է:

...Եթե արատի ճանաչումն այս աշխարհում այդքան անհրաժեշտ է մարդու առաքինության համար, իսկ մոլորությունների բացահայտումը՝ վասն ճշմարտության հաստատման, ապա ինչպես է հնարավոր առավել վստահելի ու անվտանգ ներքափանցել ստի ու արատի ոլորտը, Եթե ոչ գրքերի ու տարատեսակ տրակտատների ընթերցանությամբ ու փաստարկների ունկնդրությամբ: Ճենց դա է բազմազան գրքերի ընթերցանության օգտակարությունը:

...Միաժամանակ, Եթե ճիշտ է, որ իմաստուն մարդը, ինչպես լավ մետաղագործը, կարող է ուսկի քամել ամենաանպետք գրքից, ինչպես ամօգտակար հանածներից, հիմարը հիմար էլ մնում է ինչպես ամենալավ գրքով, այնպես էլ առանց գրքի, ուրեմն ոչ մի հիմք չկա իմաստուն մարդուն զրկել իր իմաստնության օգուտներից՝ ջանալով հիմարին հեռու պահել այն ամենից, ինչը, միևնույն է, չի սպանում նրա հիմարությունը: Քանզի Եթե ձգտենք ամենայն ճշգրտությամբ նրան ձերքազատել որևէ վնասակար ընթերցանությունից, ապա մենք ի վիճակի չենք լինի նրա համար կանոններ քաղել ոչ միայն Արիստոտելի դատողություններից, այլև Սողոմոնից ու մեր Փրկչից, հետևաբար, հարկադրված կիմենք, չցանկանալով, թույլ տալ նրան մոտենալ լավ գրքերին, քանի որ հայտնի է, որ խելացի մարդը դատարկ պամֆլետի լավագույն կիրառությունը կգտնի, իսկ հիմարը Սուրբ Գիրքն էլ չի հասկանա:

Ապա՝ կարող են ասել, որ մենք չպետք է մեզ առանց անհրաժեշտության գայթակղության ենթարկենք, նաև՝ մեր ժամա-

նակը վատնենք: Դենվելով վերն ասվածի վրա, այդ երկու առարկություններին կարելի է պատասխանել, որ նման գրքերը բոլոր մարդկանց համար գայթակղություն ու ժամանակի վատնում չեն, այլ օգտակար դեղանյութ, որից կարելի է քաղել ու պատրաստել ուժեղ ներգործող կենսամիջոցներ: Ինչ վերաբերում է մանուկներին ու մանկամիտներին, որ չգիտեն ինչպես այդ օգտակար հանքանյութերն օգտագործել, նրանց կարելի է խորհուրդ տալ. դրանց ձեռք չտալ, բայց հարկադրել հեռու մնալ հնարավոր չէ ոչ մի գրաքննական արգելքով՝ ինչ արգելներ էլ հնարի սուրբ ինկվիզիցիան: Ին մերձակա խնդիրը ես համարում եմ ապացուցելը, որ գրաքննությունն ամենին էլ չի հանգեցնում այն նպատակին, հանուն որի սահմանվել է, ինչը, ի դեպ, ակնհայտ է նախընթաց բազում մեկնաբանություններից: Այդպիսին է ճշմարտությունը. նա բացահայտվում է արագ՝ գործելով ազատ ու առանց հարկադրանքի, ոչ թե մեթոդական դատողությունների օգնությամբ:

..Եթե մենք ուզում ենք կանոնակարգել մամուլը և այդ-կերպ բարելավել բարքերը՝ այդպես պետք է վարվենք նաև բոլոր զվարճանքների ու հաճույքների հետ, այն ամենի հետ, ինչը մարդուն բավականություն է պատճառում: Այդ դեպքում չի կարելի ոչ մի երաժշտություն լսել, չի կարելի որևէ երգել՝ բացի լուրջ դորիականից: Պետք է հսկիչներ կարգել պարերի վրա, որ մեր պատանիները որևէ այլ շարժում չսովորեն կամ որևէ դիմելածն չօգտագործեն՝ բացի նրանցից, որ հսկիչները կարտոննեն իբրև բարեվայելուչ: Դենց դրանով էր մտահոգված Պլատոնը: Ավելի քան քսան գրաքնիչների աշխատանքի կարիք կզգացվի, որպեսզի ստուգվեն բոլոր տավիդները, ջութակները, կիթառները, որ կան ամեն տանը: Ընդ որում՝ թույլտվություն պետք կլինի ոչ միայն այն ամենի համար, ինչ ասում են այդ գործիքները, այլև այն ամենի՝ ինչ նրանք կարող են ասել: Իսկ ինչը կարող է լրության դատապարտել բոլոր դերերգերին ու մադրիգալներին, որ քննչություն են սփոռում գողտրիկ անկյուններում: Դարկ է նաև ուշադրություն դարձնել բոլոր պատուհաններին ու պատշգամբնե-

րին. դրանք ամենախորամանկ գրքերն են՝ վտանգավոր ճակատամասերով: Ո՞վ կարգելի դրանք: Մի՞թե քսան գրաքննիչները: Դավասարապես՝ գյուղերում պետք է լինեն սեփական վերակացուները, որ հսկեն ինչ են ասում պարկապօւկներն ու փողերը, ինչպես նաև բալլաղներն ու գամնաները, որ նվազում են գյուղական ջութակահարները, քանզի նրանք գյուղերի «Արկադիաներն» ու Մոնտենայորներն են:

Ապա՝ ո՞ր ազգային արատի մասին է ավելի, քան մեր շատակերության, խոսվում ամենուր: Ո՞վ է դեկավարելու մեր ամենօրյա խնջույքները: Եվ ի՞նչ պետք է անել՝ խոչընդոտելու մարդկանց մուտքը այն վայրերը, որտեղ վաճառվում ու բնակվում է հարբեցողությունը: Մեր հագուստը ևս ենթակա է մի քանի սառնասիրտ դերձակների գրաքննությանը, որպեսզի նվազ թեթևամիտ ծևվածք լինի: Ո՞վ է հետևելու մեր երիտասարդներին, որ նրանք չխախտեն մեր երկրի ավանդույթները իրենց զրույցներում: Ո՞վ է գծելու ճշգրիտ սահմանը, որից այն կողմ չի կարելի անցնել խոսքի մեջ ու մտքի: Վերջապես՝ ո՞վ կարգելի զանազան վնասակար հավաքներն ու խմբերը: Նշված բոլոր փաստերը կլինեն ու պիտի լինեն, բայց ինչպես դրանք դարձնել նվազ վնասակար և այլասերող՝ դապետության իսկապես խելամիտ կառավարման խնդիրն է:

...Անպատժելիությունը և անփութությունը, անկասկած, կործանարար են պետության համար, բայց հենց դա է կառավարման մեջ արվեստը, որպեսզի իմանաս՝ որտեղ պետք է օրենքը արգելվ ու պատիժ նշանակի, իսկ որտեղ հարկ է օգտվել բացառապես համոզելու արվեստից: Եթե չափահաս մարդու ամեն մի՝ ինչպես լավ, այնպես էլ վատ արարք հսկման, հրամանի ու դրդման ենթարկվի, ապա ո՞րն է առաքինությունը՝ եթե ոչ սոսկ անվանում, ի՞նչ գին կունենային լավ արարքները, ի՞նչ երախտագիտության կարժանանային կշռադատվածությունը, արդարացիությունը, զսպվածությունը: Շատեղը տրտնջում են Աստվածային Նախախնամությունից, որ թույլ է տվել Աղամին մեղք գործել: Խելացնորներ: Եթե Աստված նրան բանականություն է տվել, ապա Նա տվել է նաև

ընտրության ազատություն, քանզի բանականությունը ընտրության ունակություն է, այլապես նա կլիներ միայն մեքենա՝ Աղամի տեսքով՝ ինչպես տիկնիկային կատակերգություններում է: Մենք ինքներս չենք հարգում նման հնագանդությունը, նման սերը կամ առատաձեռնությունը, որ հարկադրանքի հետևանք են. այդ պատճառով Աստված նրան ազատություն է տվել՝ գայթակղության առարկան նրա աչքի առաջ տեղակայելով. դա էր նրա ծառայությունը, պարզեցի, խրախուսանքի կամ ինքնազմպումի նրա իրավունքը: Յանուն ինչի՞ է Աստված ստեղծել կրքերը մեր ներսում ու հաճույքները մեր շուրջը, եթե ոչ այն պատճառով, որ նրանք, ենթարկվելով ճիշտ չափավորությանը, դառնան առաքինության բաղադրիչ մասեր: Մարդկային գործերի վատ դիտարկող է նա, ով մտածում է վերացնել մեղքը՝ վերացնելով մեղքի առարկան, քանզի, արդեն չխոսելով այն մասին, որ մեղքը վիթխարի զանգված է, որ մեծանում է ոչնչացման գործընթացում, նույնիսկ եթե ընդունենք, որ նրա մի մասը կարող է առժամանակ որոշ մարդկանցից հեռացվել, ապա ոչ բոլորից, երբ խոսքը այնպիսի ընդգրկուն երևույթի մասին է, ինչպես գիրքը, եթե նույնիսկ դա արվի, ապա բուն մեղքը, այնուհանդերձ, անվճառ է մնում: Խւեք ժլատից նրա բոլոր օգնձերը և բողեք միայն մի բանկարժեք քար, նրան չեք ձերբազատի իր ագահությունից: Ոչնչացրեք հաճույքի բոլոր առարկաները, պատահներին խստիվ վերահսկողության տակ փակեք որևէ մենաստանում, դուք մաքուր չեք դարձնի նրան, ով մաքուր չի եկել այնտեղ. այնքան վիթխարի պիտի լինեն զգուշությունն ու ինաստնությունը, որ անհրաժեշտ են այդ հարցի լուծմանը:

Բայց ենթադրենք, որ մենք այդ կերպ հալածում ենք մեղքը. այդ դեպքում հալածելով նրան, մենք հալածում ենք նաև առաքինությունը, քանզի նրանց առարկան մեկ և նույն է՝ վերջինիս ոչնչացումով երկուսն էլ վերանում են: Դա ապացուցում է Տիրոջ մեջ արարչությունը, որ, թեպետ և արտոնում է մեզ չափավորություն, արդարություն ու զապկածություն, այնուհանդերձ մեր առաջ առատորեն սփռում է մեր ցանկությունների առարկաները ու մեզ տալիս է հակումներ, որ կա-

րոդ են դուրս գալ բոլոր հաճույքների շրջանակներից: Այդ դեպքում ինչո՞ւ ենք մենք ձգտում խստության, որ հակառակն է Աստծով ու բնությամբ հաստատված կարգուկանոնի՝ կրծատելով ու սահմանափակելով այն հնարավորությունները, որոնք գրքերի ազատ ընթերցանության դեպքում կծառայեն ոչ միայն առաքինության փորձությանը, այլև՝ ծշմարտության հաղթանակին:

Օրենքը՝ որ ձգտում է սահմանափակել այն, ինչ չի տրվում ճշգրիտ հաշվարկների, այնուհանդերձ կարող է նպաստել ինչպես բարուն, այնպես էլ չարին, արդարացի կլիներ վատ օրենք հանարել: Եվ եթե ես ընտրության առաջ լինեի, կնախընտրեի ամենաննշան բարի գործը՝ բազմակի մեջ չարիքը հալածելուն: Քանզի Աստված, անկասկած, շատ ավելի գնահատում է մեկ առաքինի մարդու հաջողությունն ու կատարելագործումը, քան տասնյակ արատավորների սանձահարումը: Եվ եթե այն ամենը, ինչ մենք տեսնում ենք ու լսում՝ զբունելով, ճանապարհորդելով կամ զրուցելով, կարող է արդարացիորեն անվանվել նաև Գիրք և նույնպիսի ազդեցություն է ունենում, ինչպես գրքերը, ապա ակնհայտ է, որ միայն ինչ-որ գրքերը արգելելով, օրենքը իր նպատակին չի հասնի:

...Բայց նույնիսկ ընդունելով, որ դուք հասել եք նրան, ինչից Աստված ծեզ լավ կլիներ, եթե պահպաներ, այնուամենայնիվ, գրաքննության մասին օրենքը անօգուտ կլիներ և աննպատակ: Եթե գործը հանգում է նրան, որ կանխարգելենք աղանդների ու հերետիկոսության ծագումը, ապա ով է այդքան անտեղյակ պատմությանը, որ չիմանա շատ աղանդների մասին, որ խուսափում են գրքերից իբրև գայթակղությունից. այնուհանդերձ շատ դարեր պահպանել են իրենց ուսմունքը անձեռնմխելի՝ բացառապես բանավոր ճանապարհով: Անհայտ չեն, որ քրիստոնեական հավատքը (որ մի ժամանակ եղել է հերետիկոսական) տարածվեց ամբողջ Ասիայով նախքան գրվեցին Ավետարաններն ու պատվիրանները: Եթե գործը վերաբերում է բարքերի բարելավմանը, ապա ուշադրություն դարձեք իտալիայի ու իսպանիայի վրա. այդ երկրները դար-

ձե՞լ են ավելի լավը, ազնիվ ու խելամիտ, առաքինի՝ այն ժամանակներից ի վեր, ինչ ինկվիզիցիան անգութ հալածում է գրքերը:

...ի՞նչ օգուտ չափահաս լինելուց, այլ ոչ թե դպրոցահասակ, եթե, չձերբազատվելով դպրոցական ֆերուլայից՝ հարկադրված ես Ենթարկվել *imprimatur'a*-ի ցուցափայտին, եթե լուրջ և բազում չարչարանքների արգասիք շարադրանքները, ինչպես դպրոցականների ուղղագրական վարժությունները, չեն կարող լույսի երես տեսնել՝ անվճռական կամ չափազանց վճռական գրաքննիչի զգոն աչքի պատճառով:

...ճշմարտությունը և բանականությունը այնպիսի ապրանքներ չեն, որ կարելի է մենատիրացնել և վաճառել վառ պիտակներով, կանոնադրություններով և օրինակներով: Մենք չպիտի ճգտենք մեր երկրի ամբողջ գիտելիքը ապրանք դարձնել, վրան դրոշմ դնել և առևտրական վկայագրեր տալ, ինչպես անում ենք մեր կտավի ու բրդի հակերի հետ: Մի՞թե դա նույնը չէ, ինչ փղշտացիների ստրկությունը, երբ մեզ թույլ չէին տալիս սեփական կացիններն ու խոփերը սրել, այլ պարտադրում են բոլոր արվարձաններից քարշ տալ՝ դրանք քսան արտոնված դարբնոցներում սրելու:

...Կանխավ վախենալ սովորական զգաքննված պամֆլետից նշանակում է վախենալ սկսել ամեն մի հավաքից, իսկ հետո, քիչ հապաղելով՝ ամեն մի քրիստոնեական հավաքույթի մեջ տեսնել օրինախախտների:

Բայց ես կստահ եմ, որ պետությունը, ղեկավարվելով արդարության ու հաստատակամության օրենքներով, և եկեղեցին, որ իհմնվել ու կառուցվել է հավատի ու իսկական գիտելիքի իհմքի վրա, չեն կարող այդքան փոքրոգի լինել: Այն ժամանակ, եթե կրոնական հարցերը դեռ լուծված չէին, մանուկի ազատության սահմանափակումը պրելատներից էր փոխառնված, իսկ նրանք էլ յուրացրել էին ինկվիզիցիայից. որպեսզի մեզ նորից կաշկանդի գրաքննչի խիղճը, պետք է, հարկավ,

առիթ դարձնել գիտնականների ու հոգևորականների հանդեպ կասկածները, ովքեր չեն կարող չհասկանալ նման քաղաքականության նենգությունը և չիմանալ՝ ով է հեղինակը:

...«Տաղանդին պատժելը մեծացնում է նրա հեղինակությունը,-ասում է վիկոնտ Սենտ Ալբանացին,- և արգելված ստեղծագործությունը համարվում է ճշմարտության իրական կայծ, որ թռչում է դեպի նրանց, ովքեր ջանում են ոտնատակ տալ»: Այդպիսով, գրաքննության մասին օրենքը, հարազատ մայր լինելով բոլոր աղանդների համար, պարզվում է՝ խորթ մայր է ճշմարտության համար. նախ և առաջ նրանով, որ մեզ դարձնում է անընդունակ՝ պահպանելու արդեն ձեռքբերված մեր գիտելիքները:

...Բացի վերը շարադրվածից՝ հարկ է մատնանշել անհավանական կորուստները և վնասները, որ գրաքննչական կապանքները բերում են մեզ, որ ավելին են, քան եթե թշնամին ծովից պաշարեր մեր բոլոր նավահանգիստները, նեղուցները. այդ կապանքները կանգնեցնում ու դանդաղեցնում են ամենաթանկարժեք ապրանքի՝ ճշմարտության ներմուծումը:

...Ճշմարտությունը մեկ անգամ երկիր է իջել իր Աստվածային Ուսուցչի հետ՝ դրսնորելով իր կատարյալ կերպը, որ հրաշալի էր իրեն դիտարկող հայացքների համար: Բայց երբ Նա երկինք համբարձվեց և Նրա Ետևից՝ Նրա առաջալները, հայտնվեցին սրբապիղծ և անօրեն մարդկանց սերունդները, որ բռնեցին կուսական ճշմարտությունը, մասնատեցին նրա հիասքանչ մարմինը հազարավոր մասերի և նետեցին բոլոր չորս քամիներին, այնպես, ինչպես եգիպտացի Տիֆոնը և նրա դավադիրները վարվեցին բարի Օսիրիսի հետ: Այդ ժամանակներից ճշմարտության վշտացյալ բարեկամները, նրանք, ովքեր հանդգում են բացահայտ հանդես գալ, ամենուրեք հավաքում են նրա մասերը, որտեղ էլ գտնեն, ինչպես Իգիդան, որ հոգատար որոնում էր Օսիրիսի մարմնամասերը: Մենք դեռ ոչ ամեն ինչ ենք գտել, լորդեր և Քանայնքների պալատի անդամներ, և չենք էլ գտնի մինչև Ուսուցչի երկրորդ

հայտնությունն ու գալուստը: Նա կմիատեղի բոլոր մարմնամասերը և կվերստեղծի գեղեցկության ու կատարելության անմահ կերպարը: Թույլ մի տվեք գրաքննչական արգելքներին հայտնվել բոլոր հարմար տեղերում, որպեսզի բռնեն և անհանգստացնեն նրանց, ովքեր շարունակում են որոնել, շարունակում են հուղարկավորման ծեսեր կատարել մեր սուրբ մարտիրոսի մարմնամասերի համար:

Մենք հպարտանում ենք մեր լույսով, բայց եթե ոչ խելամտորեն նայենք արևին, նա մեզ կկուրացնի: Ո՞վ կարող է նայել այն հաճախ այրվող մոլորակներին ու վեհությամբ շողացող աստղերին, որ ծագում ու մայր են մտնում արևի հետ՝ նախքան նրանց ուղեծիրների հակառակ շարժումը նրանց կտանի երկնակամարի այնպիսի հատված, որտեղից նրանց կարելի է տեսնել առավոտյան կամ երեկոյան: Մեզ տրված լույսը նրա համար չէ, որ մեր հայացքը անթարթ հառենք մի կետի, այլ այն քանի՝ որ նրա օգնությամբ մեր ճանաչումի համար հայտագործություններ անենք:

...Եվ եթե ինչ-որ անձինք խառնակություն են սերմանում ու տարածայնություններ են սփռում, հենց նրանք են, քանի որ իրենք չեն ցանկանում ու այլոց թույլ չեն տալիս միացնել ճշմարտության մարմնին անջատված ու պակասող մասերը: Մշտապես որոնել անհայտը՝ հայտնի օգնությամբ, մշտապես միացնել ճշմարտությունը ճշմարտությանը՝ այն գտնելուն պես (քանի որ նրա ամբողջ մարմնը միատարր ու համաչափ է) այսպիսին է ոսկե կանոնը՝ ինչպես աստվածաբանության, այնպես էլ թվաբանության մեջ. միայն այն կարող է լիակատար ներդաշնակություն բերել եկեղեցի, այլ ոչ թե հարկադրաբար և արտաքուստ միակցել սառը, անտարբեր ու ներքուստ միմյանց խորթ հոգիները:

...Ի՞նչ պիտի անեք դուք, լորդեր ու Շամայնքների պալատի անդամներ: Լուծ ու կապանքնե՞ր կդնեք գիտելիքների այս ծաղկուն հերկի և նոր աշխարհի վրա, որը ածել է և դեռ ամեն օր ածում է մեր քաղաքում: Կսահմանե՞ք նրա վրա

քսան մեծածախ գնորդների մենիշխանությունը, դրանով դարձյալ կհարկադրե՞ք քաղցել մեր մտքին՝ զրկելով ավելին իմանալու հնարավորությունից, քան այն ամենը, ինչ նրանք սեփական չափով են չափում: Հավատացեք, լորդեր և Համայնքների պալատի անդամներ՝ դուք՝ շահագործման խորհուրդ տվողներո, առաջարկում եք շահագործել ինքներդ ձեզ: Ահա ինչպես. եթե որևէ մեկը ցանկանար իմանալ՝ ինչու է մեզ մոտ իշխում ազատությունը ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում, ապա հնարավոր չեր լինի մատնանշել ավելի հավաստի ու անմիջական պատճառ, քան ձեր ազատ, բարի ու մարդասիրական կառավարումը: Լորդեր և Համայնքների պալատի անդամներ, ձեր հիգախ ու հաջող խորհուրդները պաշտպանել են մեր ազատությունը: Ազատությունը՝ ահա բոլոր մեծագույն տաղանդների ստնտուն, որը լինելով ի վերուստ տրված՝ մաքրել ու լուսավորել է մեր հոգիները, հանել է մեր բանականության կապանքները՝ ընդլայնելով ու ինքն իրենից բարձրանալու հնարավորություն ու հեռանկար տալով: Դուք հիմա չեք կարող մեզ նվազ ընդունակ դարձնել, նվազ գիտուն, ճշմարտության որոնումների մեջ՝ նվազ համառ, եթե դուք ինքներդ, ում մենք այդ ամենի համար պարտական ենք, չսկսեք նվազ սիրել ու նվազ վայելել իրական ազատությունը: Մենք կարող ենք կրկին դառնալ անկիրթներ ու տիմարներ, որ ձևի ետևից են ընկել, ստրուկներ՝ ինչպիսին դուք մեզ գտել եք: Բայց մինչ այդ դուք ինքներդ պիտի դառնաք, իսկ դուք դա չեք կարող, շահագործող, բռնակալ՝ ինչպիսին նրանք էին, ումից դուք մեզ ազատագրել եք: Եթե մեր սրտերը դարձել են առավել ընկալունակ, մեր մտքերն առավել են հակված դեպի բարձրագույն ու մեծագույն ճշմարտությունների որոնումն ու սպասումը, դա ձեր սեփական առաքինության պտուղն է, որ սերմանել եք մեր մեջ: Եվ դուք չեք կարող դա ոչնչացնել, եթե բռնությամբ կրկին չհաստատեք վաղուց մերժված դաժան օրենքը, որի հիման վրա հայրերը կարող էին կամայականորեն սպանել իրենց որդիներին: Ո՞վ այդ ժամանակ սերտորեն կհարի ձեզ ու կոգեշնչի մյուսներին:

Ես չեմ հերքում արդարացի գեղչերը, բայց ինձ համար նախ և առաջ թանկ է իմ սեփական աշխարհը: Ուրեմն տվեք ինձ իմ մտքերը ճանաչելու ու արտահայտելու ազատությունը, և ամենակարևորը՝ իմ խղճի մտոք ապրելու ազատությունը:

## «SPECTATOR» «ՐԱՆԴԻՍԱՏԵՍ») ՐԱՆԴԵՍԻՑ

1 մարտ, 1711

Ես նկատել եմ, որ ընթերցողը հազվադեպ է գիրքը հաճույքով կարդում, քանի դեռ չգիտի գրողի մասին՝ սկահեր է, թե շիկահեր, ջղագրգիռ, թե հանգիստ բնավորությունի ունի, ամուսնացած է, թե ոչ, նաև այլ մանրամասներ, որ բավականաչափ նպաստում են հեղինակի ընկալմանը: Բավարարելու համար ընթերցողի լիովին բնական հետաքրքրությունը, ես մտադիր եմ այս և հաջորդ թերթերը նվիրել իմ ապագա ստեղծագործությունների նախաբաններին և կպատմեմ որոշ անձանց մասին, որ ներգրավված են այս աշխատանքներում: Քանի որ կազմման, կարգի բերելու ու սրբագրելու գլխավոր աշխատանքը ինձ է վիճակվելու, արդար է, որ սկսեմ սեփական պատմությամբ:

Ես ծնվել եմ ոչ մեծ ժառանգական կալվածքում, որ տեղական, գյուղական ավանդույթներով, Վիլհելմ Նվաճողի ժամանակներից ցանկապատվում էր նույն ջրանցքներով ու պատճեշներով, որոնք փոխանցվում էին հորից որդում՝ առանց կորստի կամ հավելումի՝ թեկուզ մի դաշտամասի կամ մարգագետնի, ամբողջ 600 տարի: Մեր ընտանիքում պատմում են, որ երբ մայրս երրորդ ամիսն արդեն հիյ էր ինձնով, երազ տեսավ, որ դատավոր է լույս աշխարհ բերելու: Դա այն պատճառով է եղել, որ մեր ընտանիքը դատաքննության մեջ էր, թե այն պատճառով, որ հայրս հաշտարար դատավոր էր՝ չեմ կարող որոշել: Ես այնքան էլ փառասեր չեմ, որ դա ինչ-որ բարձր դիրքի կանխատեսում համարեն, որին հասնելու էի իմ ապագա կյանքում, թեաւտ այդպես էին մեր հարկանները մեկնաբանել: Առաջին հայտնությանս ու կրծքով կերակրվելու ժամանակ իմ պահվածքի լրջությունը, թվում էր, համապատասխա-

նուն էին մորս Երազին: Նա ինձ հաճախ էր պատմում, որ ես չխկչիկանները դեն եմ նետել Երկու ամիսս չլրացած և չեմ ցանկացել մարդանը Վերցնել, քանի դեռ ծնծղանները չեն հանել:

Քանի որ մանկությանս օրերին նշանակալից ուրիշ ոչինչ չի եղել, ես լռությամբ առաջ կանցնեմ: Պարզվում է, որ անչափահաս շրջանում ես մոռյալ պատանու համբավ եմ ունեցել, բայց միշտ դպրոցական ուսուցչիս սիրելին էի: Նա սովորաբար ասում էր, որ իմ ընդունակությունները հիմնավոր են և ես աշխատասեր եմ: Համալսարան ընդունվելուց հետո ես նշանավոր դարձա իմ խորագույն լռությամբ: Ութ տարում, եթե չհաշվենք հրապարակային վարժանքները կոլեգիայում, ես հազիվ թե արտաքերել եմ հարյուր բառ և չեմ հիշում, որ երբեք կյանքում երեք նախադասություն իրար ետևից ասած լինեմ: Պատկանելով գիտական ընկերակցությանը՝ ես այնպիսի ջանադրությամբ էի տրվում պարապմունքներին, որ շատ քիչ գրքեր կային դասական կամ ժամանակակից լեզուներով, որոնց ծանոթ չէի:

Դորս մահից հետո որոշվեց, որ պիտի այլ երկրներ ճանապարհորդեն: Այդպիսով ես հեռացա համալսարանից տարօրինակ, անհասկանալի մեկը մնալով, փոխարենը գիտակցության մեջ պաշարով: Գիտելիքների անհագուրդ ծարավը ինձ տանում էր Եվրոպական բոլոր երկրներ, որտեղ ինչ-որ հետաքրքիր կամ նոր բան կար սովորելու: Ավելին: Իմ հետաքրքրությունը այնպես էր գրգռվել, որ կարդալով եգիպտական հնությունների մասին գիտնականների բանավեճը, ես մեկնեցի Կահիրե՝ նպատակ ունենալով չափել բուրգերը: Եվ հենց բավարար պատկերացում կազմեցի, մեծ հաճուքով վերադարձա հայրենիք:

Վերջին տարիներին ես ապրում եմ Լոնդոնում, որտեղ ինձ հաճախ կարելի է հանդիպել հանդիսատեսի այցելած վայրերում, թեպետ ինձ ճանաչում են իմ մի քանի բարեկամները, որոնց մասին ես մանրամասն կպատմեմ հետո: Զկան հասարակական հավաքներ, որտեղ ես իմ անձով չներկայանամ: Երբեմն Վիլլի սրճարանում կարելի է տեսնել՝ ինչպես ես քա-

ղաքական գործիչների խմբի մեջ գլուխս խցկած, ուշադիր լսում են, թե ինչ են պատմում ունկնդիրների փոքրիկ խնբերում: Երբեմն ես «Մանկիկի» սրճարանում ծխախոտ եմ ծխում և իբր թե ամբողջովին «Փոստատարի» մեջ խորացած՝ լսում եմ յուրաքանչյուրի խոսակցությունը: Շաբաթ օրերը ես հայտնվում եմ Սենտ Ջեյմսի սրճարանում և երբեմն միանում եմ քաղաքագետների փոքրիկ խմբին՝ իբրև մարդ, որ գալիս է լսելու ու սովորելու: Յավասարապես՝ իմ դեմքը լավ հայտնի է Յունական սրճարանում ու «Կոկոսի ծառ» նպարեղենի խանութում, ինչպես նաև երկու թատրոններում՝ Դրուիի Լեյնի ու Գեյմարկետի: Տասը տարուց ավելի ինձ համարում էին բորսային միջնորդ, երբեմն ես հրեայի տեղ եմ անցնում Յոնաֆանի սրճարանում: Կարծ ասած՝ որտեղ էլ մարդկանց խումբ տեսնեմ, միշտ խառնվում եմ նրանց, թեպետ երբեք ոչինչ չեմ խոսում: Գուցե միայն մեր ակունքում:

Այսպիսով, ես ապրում եմ այս աշխարհում ավելի շատ իբրև մարդկության Յանդիսատես, քան մարդ արարած: Ես մշակել եմ հայեցող քաղաքագետ, զինվոր, վաճառական ու արհեստավոր լինելու արվեստը՝ երբեք չխառնվելով կյանքի գործնական կողմին: Ես շատ լավ ծանոթ եմ ամուսնական կամ հայրական տեսությանը և կարող եմ լավ տարբերել սխալները ուրիշների տնտեսության մեջ, գործերի ու զվարժանքների, քան մարդիկ, որ զբաղվում են դրանցով՝ այնպես, ինչպես կողմնակի դիտորդները բացահայտում են այն վրիպումները, որ կարող են չնկատել խաղացողները: Ես երբեք կրքու չեմ կապվել որևէ կուսակցության հետ և որոշել եմ խստիվ չեզոքություն պահպանել վիզերի ու տորիների միջև, եթե կողմներից որևէ մեկի թշնամական տրամադրվածությունը չհարկադրի արտահայտվել: Միով բանիվ՝ կյանքումս գործել եմ իբրև դիտորդ և այդ բնավորությունը մտադիր եմ պահպանել հանդեսում:

Ես ծանոթացրի ընթերցողին իմ պատմության ու բնավորության հետ այնքան, որ նա համոզվի, որ ես այնքան էլ անընդունակ չեմ այն գործի համար, որը նախաձեռնել եմ: Ինչ

Վերաբերում է ին կյանքի այլ մանրամասներին ու արկածներին, ես հետո կանդրադառնամ՝ երբ առիթը ներկայանա: Մինչդեռ, մտածելով, թե ինչքան շատ բան եմ ես տեսել, կարդացել կամ լսել, ես սկսում եմ մեղադրել ինձ՝ լուակյացության համար: Բայց քանի որ ես ոչ ժամանակ ունեմ, ոչ հակված եմ բանավոր պատմել՝ ինչով է լի ին հոգին, ես վծորել եմ դա գրավոր անել և հրապարակել նախքան մեռնելս: Բարեկամներս հաճախ են ափսոսանք հայտնել, որ այդքան օգտակար հայտնագործությունների հեռինակը այսքան լրակյաց է: Այդ պատճառով ես ամեն առավոտ մի էջ կիրապարակեմ հօգուտ ժամանակակիցների և եթե ինչ-որ չափով նպաստեմ այն երկրի զվարժանքին կամ հաջողությանը, ուր ապրում եմ, ապա այնտեղից կհեռանամ, երբ ի վերուստ կանչվեմ, բավարարության զգացումով՝ որ ապարդյուն չեմ ապրել:

Երեք շատ էական կետեր կան, որոնց մասին չեմ խոսել և որոնք շատ կարևոր պատճառներով պետք է շրջանցեմ, գոներոշ ժամանակ. դրանք տվյալներն են ին անվան, տարիքի ու բնակավայրի մասին: Պիտի խստովանեն, որ պատրաստ են բավարարել ընթերցողի հետաքրքրությունը բոլոր այն հարցերում, որ խելամիտ են, բայց ինչ վերաբերում է այս երեք կետերին, ես դեռ չեմ համարձակվում հայտնել հասարակությանը, թեպետ հասկանալի է, որ դրանք կարող էին ին հանդեսի զարդը լինել: Դա, հավանաբար, ինձ դուրս կը երեր անհայտությունից, որից ես հաճույք եմ ստանում երկար տարիներ և հասարակական վայրերում ինձ կդարձներ ողջույնների ու ուշադրության կենտրոն, ինչը տիհած է ինձ համար, քանի որ ես ավելի շատ տանջվում եմ, երբ ին մասին խոսում են ու աչքները չուում են ինձ վրա: Այդ պատճառով ես գաղտնի եմ պահում ին արտաքինն ու կոստյումը, թեպետ բացառված չեմ, որ մի օր ամեն ինչ պատմեմ:

Այսքան հանգանակալից կանգ առնելով ին անձի վրա, ես վաղը կպատմեմ այն ծենտրումների մասին, որ մասնակցում են այս պատումին: Քանզի ինչպես ակնարկել են արդեն, ծրագիրը կազմվել ու քննարկվել է (ինչպես լինում է բոլոր կարևոր

նյութերի հետ) ակումբում: Սակայն, քանի որ բարեկամներս ինձ լիազորել են գլխավորել, նրանք, ովքեր մտադիր են ինձ թղթակցություններ ուղարկել, կարող են իրենց նամակներն ուղղել Փօքր Բրիտանիայի փողոց, պարոն Բոկլիին՝ «Հանդիսատեսի» անունով: Պիտի ընթերցողին հաղորդեն, որ չնայած մեր ակումբը հավաքվում է երեքշաբթի ու իինգշաբթի օրերին, մենք ընտրել ենք կոմիտե, որն ամեն երեկո նիստ կգումարի ու կըննարկի բոլոր նման թղթերը, որոնք կարող են նպաստել հասարակական բարեկեցությանը:

Շաբաթ, 29 դեկտեմբերի 1711

Ին հայրը, ում ես հիշատակել եմ առաջին ակնարկում և ում մասին հիշում եմ հպարտությամբ ու երախտագիտությամբ, շատ հաճախ գրուցում էր ինձ հետ ամուսնության մասին: Երիտասարդ տարիներիս ես, մասամբ նրա խորհրդով, մասամբ սեփական մղումով հրապուրված էի մի շատ գեղեցիկ անձով, որ իմ սիրահետումների սկզբում բոլորովին էլ արգահատանք չէր գցում իմ հանդեա: Բայց քանի որ իմ բնական լրության պատճառով ես չկարողացա նրան լավագույն կողմով ներկայանալ, նա աստիճանաբար սկսեց ինձ վերաբերվել իբրև շատ տխնար մարդու և նախապատվությունը տալով արտաքին որակներին՝ այլ արժանիքների համենատ, ամուսնացավ հեծյալների կապիտանի հետ, որն այդ ժամանակ նորակոչիկներ էր հավաքագրում մեր կողմերում: Այդ չարաբաստիկ իրադարձությունը իմ արգահատանքը ծնեց գեղեցիկ մարդկանց նկատմամբ և հարկադրեց հրաժարվել գեղեցիկ սերի բարեհաճությունը որոնելուց: Ին ապրումները, հորս խորհուրդները պատճառ դարձան սիրո ու ամուսնության մասին այս դիտարկումների:

Տղամարդու կյանքում առավել հաճելի շրջանը իիմնականում այն է, որն անցնում է սիրատածումների մեջ. ընդ որում՝ իհարկե, այն պայմանով, որ զգացմունքները անկեղծ են, իսկ երկրպագության առարկան նրան բարեհած է վերաբերվում: Նրա որոնումները գրգռում են հոգու բոլոր գեղեցիկ դրսեւորումները՝ սեր, ցանկություն, հույս:

Հնուտ մարդք, ով սիրահարված չէ, շատ ավելի հեշտ իր սիրահարվածության մեջ կհամոզի նրան, ում սիրատածում է, քան նա, ով սիրում է մեծագույն խելահեղությամբ, քանի որ խսկական սերը հազարավոր վշտեր, վիրավորանքներ ու անհամբերություն է բերում, որոնք մարդուն տիած են դարձնում նրա աչքում, ում բարեհաճությունը ջանում է ձեռքբերել. չխոսենք արդեն այն մասին, որ սերը ստիպում է նիհարել, ծնուն է վախեր, զգուշություն, հոգու թուլություն և հաճախ մարդուն ստիպում է ծիծաղելի թվական այն ժամանակ, երբ նա մտադիր է իրեն ամենալավ կողմից դրսենորել:

Այս ամուսնությունները, որոնց նախորդում են երկարատև սիրահետումները, անցնում են սիրո ու հավատարմության ուղեկցությամբ: Զգացումը պետք է ամրանա ու ուժ ձեռքբերի դեռ մինչև ամուսնությունը: Չույսերի ու սպասումների երկար ճանապարհը ամրապնդում է զգացումը մեր սրտերում և սովորեցնում է քննույց լինել սիրելի մարդու հանդեպ: Իր նշանակությամբ ոչինչ չի կարող համեմատվել սիրելի եակի դրական հատկանիշների հետ, ում մենք միանում ենք ամբողջ կյանքի համար. այդ որակները ոչ միայն բավարարություն են բերում ներկայում, այլև հաճախ կանխորոշում են մեր երջանկությունը հավերժության մեջ: Եթե բարեկամները մեր փոխարեն ընտրություն են կատարում, նրանց նախ և առաջ հետաքրքրում է կարողության հարցը. Եթե մենք ինքներս ենք կատարում մեր ընտրությունը՝ որոշիչ դառնում են մեր ընտրյալի անձնական հատկանիշները: Եվ նրանք, և մյուսները յուրովի ճիշտ են: Առաջինները մտահոգվում են հարմարություններով ու հաճույքներով կյանքի ձեռք բերման մասին այն անձի համար, ում շահերը իրենց համար կարևոր են, միևնույն ժամանակ հույս ունենալով, որ բարեկամի ձեռքբերած կարողությունը կծառայի նաև իրենց օգուտին: Մյուսները անդադար տոնակատարության են նախապատրաստվում: Յաճելի անձը ոչ միայն գրգռում է, այլև երկարացնում է սերը, նա գաղտնի հաճույքներ ու բավարարություն է բերում նաև այն ժամանակ, եթե առաջին ցանկության կրակն արդեն մարել է:

Դա բարեկամների ու անծանոթների հարգանքն է հարուցում, և հանգեցնում է նրան, որ ընտանիքում առողջ ու գեղեցիկ սերունդ է հայտնվում: Ես նախընտրում եմ հաճելի կին իմ աչքում և ոչ այլանդակ՝ հասարակության աչքում, քան ամենահայտնի գեղեցկուհուն: Եթե դուք անուսնանաք հրաշալի գեղեցկուհու հետ, պետք է նրան սիրեք խելահեղ կրօնվ, այլապես դուք արժանին չեք մատուցի նրա գեղեցկությանը, իսկ եթե դուք նման կիրք ունեք, համարյա միշտ՝ նա թունավորելու է վախերով ու խանդով:

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵԼԿԻՐԿԻ՝ ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԱԾ ՆԱՎԱՍՈՒ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ես կարծում եմ, որ կարելի է այսպիսի անուն կրող ամսագիրի էջերից պատմել մի մարդու մասին, որ ծնվել է Նորին Մեծության երկրում և հայտնի դարձնել նրա կյանքից մի արկած՝ այնքան արտառոց, որ, հավանաբար, ոչ մի նման քան ուրիշի հետ չի պատահել: Մարդը, ում մասին ես պատրաստվում եմ պատմել, Ալեքսանդր Սելկիրկն է: Նրա անունը հայտնի է հետաքրքրասեր մարդկանց, քանի որ չորս տարի ու չորս ամիս ապրել է Խուան Ֆերնանդես կղզում: Ես բավականություն եմ ունեցել 1711 թվականին՝ Անգլիա վերադառնալուն պես, հաճախ գրուցել նրա հետ: Քանի որ նա խելացի մարդ էր, շատ հետաքրքիր էր լսել նրա պատմություններն այն փոփոխությունների մասին, որ երկարատև մենակության օրերին տեղի էին ունենում նրա հոգուն: Յիշելով, թե ինչքան ծանր է մեզ համար մենակ մնալ թեկուզ մեկ երեկո, մենք կարող ենք պատկերացնել, թե ինչքան տաճաշալից էր թվում այդքան անխուսափելի և մշտական մենակությունն այն մարդուն, ով պատանի օրերից նավաստի դառնալով՝ վարժվել է հաճույք ստանալ ու տաճվել, խմել, ուտել, քնել՝ մի խոսքով ապրել ընկերների շրջապատում: Նա ափ իջեցվեց ճեղքվածք ունեցող նավից, որի կապիտանի հետ վիճել էր և նախընտրեց իր ճակատագիրը վստահել անմարդաբնակ կղզուն, քան մնալ խարխուլ նավի վրա՝ իր նկատմամբ թշնամաբար տրամադրված նավապետի դեկավարության ներքո: Իրերից նրան հատկացրին իր սնդուկը, հանդերձանքն ու անկողինը, կայծքարե հրացանը, մի ֆունտ վառող, բավականաչափ փամփուշտներ, կայծքար, մի քանի ֆունտ ծխախոտ, կացին, դա-

նակ, կաթսա, Աստվածաշունչ և հոգևոր այլ գրքեր, ինչպես նաև նավագնացության մասին գրքեր ու մաթեմատիկական սարքեր: Նավապետից Վիրավորվածությունը, որ այդքան վատ վարվեց իր հետ, ստիպում էր նրան ճակատագրի նման փոփոխությունը բարիք համարել մինչև այն պահը, երբ նավը հեռացավ ափից. այդ պահին նրա սիրտը սեղմվեց ու նվազց, քանի որ նա բաժանվում էր ոչ միայն ընկերներից, այլև ամբողջ մարդկությունից: Մննդի մեկ օրվա պաշար ուներ ընդամենը, իսկ կղզում վայրի այծեր, կատուներ ու առնետներ կային միայն: Նա կարծում էր, որ ավելի արագ ու հեշտ կբավարարի իր պահանջները՝ ափին մանրաձկներ որսալով, քան թե հրացանով որս անելով: Իրոք էլ՝ շատ կրիաներ գտավ, որոնց միսը նրան բավականին համեղ թվաց և սկզբում այնքան կերավ, որ հետո կրիայի միսը զգվելի դարձավ:

Մննդի ու ջրի պահանջները բավարարելը նրա համար շատ մեծ շեղում էր իր մենակության մասին դատողություններից: Մնացած ժամանակ մարդկանց հասարակության կարոտը այնպիսի ուժով էր նրան պատում, որ նա սկսեց մտածել, թե ավելի քիչ դժբախտ էր, երբ ամենաանհրաժեշտն էլ չուներ, քանզի հեշտ է պահել մարմինը, բայց մարդկային դեմք տեսնելու ցանկությունը, որ տիրում էր նրան, երբ առժամանակ մոռանում էր մարմնական պահանջները, նրան անտառելի էր թվում: Նրան տիրում էր տիրությունը, ուժասպառությունը և թախիծը, մեծ դժվարությամբ էր իրեն զսպում, որ ինքնասպան չլիներ՝ մինչև փոքր առ փոքր բանականության ուժով և շնորհիվ Աստվածաշնչի ջանադիր ընթերցանության ու նավագնացության ուսումնասիրնան, 18 ամսում նա ընտելացավ իր Վիժակին: Երբ իր հաղթանակին հասավ, ծաղկուն առողջությունը, աշխարհից մեկուսացածությունը, միշտ անամպ ու հաճելի երկինքն ու օդը նրա կյանքը դարձրին անդադար տոն և նա հիմա արդեն այնքան ուրախ էր, որքան առաջ՝ տխուր էր: Յիմա արդեն հաճույք գտնելով առօրյա զբաղմունքներում՝ անտառից հատված ծառի ճյուղերից հյուսված հյուղակը, ուր քնում էր, վերածեց հիանալի տաղավարի, որ միշտ թերև զեկյուռով էր շնչում, և դա որսից հետո նրա հանգիստը զգայական հաճույք էր դարձրել:

Ես մոռացա նշել, որ քանի դեռ նա թախօտում էր, ծովային խորքերի հրեշները, որ ափ էին լողում, մեծացնում էին մենակության սարսափը, նրանց կրինչները և ահազդու ձայները անտաճելի էին թվում մարդու ականջի համար, բայց երբ նրան վերադարձավ իր նախկին եռանդը, նա ոչ միայն հաճույքով լսում էր այդ կենդանիների ձայները, այլև նույնիսկ մեծ խիզախությամբ մոտենում էր նրանց: Դետո նա պատճում էր ծովայուժների մասին, որ իրենց ծնոտներով ու պոչերով կարող էին բռնել ու ոչնչացնել մարդուն, եթե նա մոտենար, բայց նրա հոգեստը ու մարմնական ուժերն արդեն այնքան մեծ էին, որ նա հաճախ մոտենում էր. թեպետ ծնոտներն ու պոչերը ահազդու էին, այդ կենդանիներն անսովոր դանդաղաշարժ էին, և հերիք էր նրանց մարմնի կենտրոնի դիմաց ու հնարավորինս մոտիկ կանգնել, որ հնարավոր լիներ կացնահարել:

Դիվանդության դեպքում սովոր չմեռնելու համար՝ նա կտրել էր երիտասարդ այծերի ոտքերի ջլերը՝ դա չէր վնասում նրանց առողջությանը, բայց նրանք կորցնում էին վազքի արագությունը: Նման շատ այծեր նրա հյուղակի շուրջն էին արածում, երբ նա լիովին առողջ էր, կարողանում էր ամենաարագավազ այծին էլ հասնել, եթե միայն այժը սարն ի վեր կամ վար չէր սլանում:

Դյուդակում նրան զայրացնում էին առնետները, որ կրծում էին հագուստները և նույնիսկ մոտենում էին ոտքերին՝ քնած ժամանակ: Առնետներից պաշտպանվելու համար նա կերակրելով ընտելացրեց կատուներին, որ պառկում էին մահճակալին ու պաշտպանում թշնամիներից: Երբ հագուստը լրիվ մաշվել էր, նա չորացրեց ու այծերի մորթիներից իր համար ծածկոցներ կարեց և հիմա արդեն անտառների, թվերի ու թափուտների միջով նույնքան սրբներաց էր անցնում, ողքան վայրի կենդանիները: Մի անգամ, երբ բարձրացել էր բլրի գագաթը և ցատկեց այծին բռնելու համար, այժի հետ գլորվեց անդունդը. նա այնտեղ երեք օր անգիտակից պառկեց՝ չափելով ժամանակը լուսնի սկավառակի մեծանալով՝ իր վերջին դիտարկումից հետո:

Նման կյանքը նրա համար այնքան հիանալի ու հաճելի էր դարձել, որ ոչ մի րոպե չէր տխրում. գիշերներն անխռով էին, ցերեկները ուրախ՝ շնորհիվ չափավորության ու վարժությունների: Նա սովորություն էր դարձել որոշակի ժամերի աղոթել և որոշակի տեղերում աղոթում էր բարձրաձայն, որպեսզի պահպանի խոսելու ունակությունը և իր զգացմունքները արտահայտի առավել ուժեղ:

Երբ ես առաջին անգամ հանդիպեցի այդ մարդուն, ու եթե նախապես չիմանայի նրա բնավորությունն ու արկածները, միևնույն է, պահպանքից ու կերպարանքից կհասկանայի, որ նա կտրված է եղել մարդկային հասարակությունից. Նրա հայցքում խոր, բայց նաև առույգ լրջություն կար, և ինչ-որ քամահրանք շրջապատող առօրյա իրերի նկատմամբ՝ կարծես թե նա խորաստովված էր մտքերի մեջ: Երբ նավը, որով նա վերադարձավ Անգլիա, մոտեցավ կղզուն, նա մեծագույն անտարբերությամբ վերաբերվեց տուն դառնալու հնարավորությանը, բայց մեծ ուրախությամբ օգնեց նավաստիներին լրացնել սննդի պաշարները: Նա հաճախ էր տրտնջում մեծ աշխարհ վերադարձից, որն, ինչպես ասում էր, բոլոր հաճույքներով չի փոխարինի իր մենության կորսված հանգստությանը: Ես հաճախ եմ նրա հետ գործել, բայց մի քանի ամիս անց հանդիպելով փողոցում՝ ես նրան չկարողացա ճանաչել, թեպետ նա ինքը ինձ դիմեց. մեր քաղաքացիների հետ շփումը ջնջել էր մենության հետքերը նրա կերպարանքից և բոլորովին փոխել էր նրա դեմքի արտահայտությունը:

Այս պարզ մարդու պատմությունը օրինակելի է հասկանալու համար, որ բոլորից երջանիկ է նա, ով իր ցանկությունները սահմանափակում է միայն բնական պահանջներով: Ով խրախուսում է իր քմահաճույքները, նրա կարիքներն աճում են հարստության հետ կամ, ինչպես ինքն է ասում՝ «Դիմա ես ունեմ 800 ֆունտ, բայց երբեք այնքան երջանիկ չեմ եղել, որքան այն ժամանակ, երբ մի ֆարտինգ էլ չունեի»:

1713 թ.  
«ENGLISHMAN»

## ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՑԱԽԱՎԵԼԻ ԿՈԹԻ ՄԱՍԻՆ

Այս միայնակ փայտը, որ հիմա տեսնում եք անփառունակ ընկած անկյունում, ես մի ժամանակ գիտեի իբրև անտառի ծաղկուն ծառ: Նա լի էր հյութերով, զարդարված էր տերևներով ու ճյուղերով: Իսկ հիմա մարդու ապարդյուն հոգսառատ արվեստը փորձում է մոցել բնության հետ՝ կապելով չորացած ճյուղերի տրցակը չոր փայտակորին: Լավագույն դեպքում այն իրենից ներկայացնում է լիովին հակառակն այն ամենի, ինչ եղել է առաջ՝ արմատահան ծառ. ճյուղերը՝ ներքև, արմատները՝ ողում:

Յիմա այն օգտագործում է չարքաշ աղջիկը իր սև աշխատանքի համար. և ճակատագրի քմահաճուքով նա կոչված է մաքուր պահել այլ իրեր՝ ինքը մնալով կեղտի մեջ: Իսկ հետո սպասուիկիների ձեռքին խապար մաշված՝ այն դեն են նետում կամ վերջին անգամ օգտագործում են իբրև վառելիք: Եվ երբ ես տեսա նրան՝ հոգոց հանեցի ու ասացի. իրոք և՝ մարդը ևս ցախավելի կոր է: Բնությունը նրան ուղարկել է աշխարհ ամուր ու ուժեղ, նա ծաղկուն էր և գլուխն էլ ծածկված էր խիտ մազերով: Եվ ահա ավելորդությունների կացինը հատել է նրա կանաչ ճյուղերը, և նա դարձել է գունատ բեկոր: Այդ ժամանակ նա դիմում է արվեստին և կեղծամ է դնում՝ առատ դիմափոշի ցանկած հակաբնական խոպովաներով, որ երբեք չեն աճել իր գլխին: Յիրավի, երբ ցախավելը մեր առաջ ելույթ ունենալու ցանկություն արտահայտի՝ հպարտանալով լորենուց առևանգված արդուզարդով, որ առաջ նրան երբեք չի զարդարել, ամբողջությամբ փոշու մեջ, նույնիսկ եթե դա հրաշալի տիկնոց ննջարանի կեղտն է՝ ինչքան կծիծաղենք և կարիհամարիենք նրա փառասիրությունը, մենք՝ կողմնակալ դատավորները սեփական արժանիքների և ուրիշների արատների:

Բայց, թերևս, դուք ասեք, որ ցախավելի կոթը գլխիվայր շրջված ծառի խորհրդանիշն է: Սպասեք, իսկ ինչ է մարդը, եթե ոչ գլխիվայր կանգնած արարած: Նրա կենդանական հակումները մշտապես գերակայում են բանականին, իսկ նրա գլուխը հայտնվում է այնտեղ, ուր պետք է կրունկները լինեին: Այնուամենայնիվ, չնայած իր բոլոր թերություններին, նա իրեն հայտարարում է աշխարհի մեծ բարենորոգիչ ու չարն ուղղող, բոլոր վիրավիրանքները հեռացնող՝ նա քանդում է էության բոլոր կեղտոտ անցքերը՝ լույս աշխարհ հանելով արատները, և փոշու ամպեր է բարձրացնում այնտեղ, ուր առաջ ինքը չի եղել՝ ներառելով այն աղտեղությունը, որոնցից աշխարհն ուղղում է մաքրած լինել:

Իր վերջին օրերը նա ծախսում է կանանց մոտ ստրկության մեջ՝ ընդ որում նվազ արժանավոր: Եվ երբ իրեն իսպառ սպառում է, իր եղբայր ավելի նման, դեն է նետվում կամ օգտագործվում է, որպեսզի թեժացնի կրակը, որի շուրջը ուղղը կարող են ջերմանալ ուրիշները:

## ՈՂՋԱԽՈՐՈՒԹՅՈՒՆ

**Կառավարչական իշխանության նշանակման ու  
ծագման մասին՝ անզիական Սահմանադրության  
շուրջ հակիրծ դիտարկումներով**

Որոշ հեղինակներ այնքան են խառնել «հասարակություն» և «կառավարություն» հասկացությունները, որ նրանց մեջ չի մնացել կամ գրեթե չի մնացել համարյա ոչ մի տարբերություն, մինչդեռ դրանք ոչ միայն տարբեր են, այլև տարբեր ծագում ունեն: Հասարակությունը ստեղծվում է մեր պահանջարկներից, իսկ կառավարությունը՝ մեր արատներից. առաջինը մեր երջանկության վրա դրականորեն է ներգործում՝ միավորելով մեր բարի պոռթկումները, երկրորդը՝ բացասական՝ խթանելով մեր արատները, մեկը խրախուսում է մերձեցումը, մյուսը հեռացում է ծնում: Առաջինը ապահովան է, երկրորդը՝ պատժիչ:

Հասարակությունն իր ցանկացած վիճակում՝ բարիք է, կառավարությունը (նույնիսկ ամենալավը) միայն անհրաժեշտ չարիք, իսկ վատագույն դեպքում՝ անտանելի չարիք, քանզի երբ մենք տառապում ենք ու կառավարությունից կրում ենք նույն աղետները, ինչ սպասելի էին առանց կառավարության երկրում, մեր դժբախտությունները խորանում են այն գիտակցությունից, որ մեր տառապանքները մենք ենք ստեղծել: Կառավարությունը, հագուստի նման, արտացոլում է մեր կորսված պարկեշտությունը. արքայական պալատները վեր են խոյանում դրախտի տաղավարների ավերակներում: Չէ՞ որ, եթե խորհի թելադրանքները պարզ, որոշակի լինեին ու անքննարկ կատարվեին, մարդը որևէ այլ օրենսդիրի կարիք չէր ունենա, բայց քանի որ դա այդպես չէ, մարդը հարկադրված է հրաժարվել իր սեփականության մի մասից, որ միջոցներ ապահովի մնացածի պաշտպանության համար: Եվ դա նա հարկադրված է անել նույն այն խելամտությունից ելնելով,

որը մնացած բոլոր դեպքերուն նրան մատնացույց է անուն երկու չարիքներից ընտրել նվազագույնը: Եվ քանի որ անվտանգությունը կառավարական իշխանության իսկական նպատակն ու նշանակությունն է, անհերքելիորեն հետևուն է, որ ինչ ձև էլ այն ունենա, նախընտրելի է այն ձևը, որը առավել հավանականությամբ է ապահովում այդ անվտանգությունը՝ նվազագույն ծախսերով ու առավելագույն օգուտով:

Կառավարության նշանակության ու նպատակի մասին պարզ ու հստակ պատկերացում կազմելու համար երևակայեք, որ մարդկանց մի մեծ խունքը բնակվել է երկրի մի մեկուսի անկյունում, որը մնացած աշխարհից կտրված է. այդ դեպքում այդ մարդիկ իրենցից կներկայացնեն որևէ երկրի կամ աշխարհի առաջին բնակիչներին: Բնական ազատության այդ վիճակում նրանք նախ և առաջ կմտածեն հասարակության մասին: Հազարավոր պատճառներ կամ դրան մղող: Մի մարդու ուժն այնքան չի համապատասխանում նրա պահանջարկներին, և նրա գիտակցությունը այնքան վարժված չէ հավիտենական մենակությանը, որ նա շուտով հարկադրված չլինի ուրիշի օգնությունն ու աջակցությունը որոնել. ուրիշի, որն էլ իր կարիքն է գգում: Չորսով կամ հինգով կարելի է կառուցել տանելի բնակարան վայրի տարածքում, միայնակ հարկադրված են աշխատել ամբողջ կյանքում՝ այդպես էլ ոչնչի չհասնելով: Ծառը կտրելով՝ նա չի կարողանա մենակ տեղաշարժել կամ շարժելով՝ բարձրացնել: Քաղցը այդ ընթացքում նրան կկտրեր այդ աշխատանքից, և ամեն մի հաջորդ պահանջ մի այլ տեղ կտաներ, հիվանդությունը և պարզապես անհաջողությունը նրա համար մահ կնշանակեին: Թեպետ թե մեկը, թե մյուսը կարող էին մահացու չլինել. նա կզրկվեր գոյության միջոցներից ու այնպիսի վիճակի մեջ կընկներ, որ նրա մասին կարելի էր ասել, թե նա ավելի շուտ կզոհիվի, քան պարզապես կմեռնի:

Այսպիսով՝ կարիքը ձգողականության ուժի նման արագ կհամախնիք մեր նորաբնակներին հասարակության մեջ, որի փոխադարձ բարի գործերը կփոխարինեին ու ավելորդ կդարձնեին պարտականությունները, որ պարտադրում են

օրենքն ու պետությունն այնքան ժամանակ, քանի դեռ այդ մարդիկ կպահպանեն լիակատար արդարացիություն միմյանց նկատմամբ, բայց քանի որ միայն երկինքն է արատին անհասանելի, ապա վերաբնակեցման անխուսափելիորեն առաջին դժվարությունների հաղթահարման չափով, որոնք նրանց միավորում են ընդհանուր գործի համար, պատասխանատվության զգացումն ու փոխադարձ կապվածությունը կակսեն թուլանալ, և այդ թուլացումը մատնացույց կանի կառավարման որևէ ձև հաստատելու անհրաժեշտությունը՝ փոխհատուցելու համար առաքինության պակասը:

Նրանց համար կառավարական շենք կդառնա որևէ համապատասխան ծառ, որի ճյուղերի տակ ամբողջ գաղութը կարող է հավաքվել հասարակական գործերը քննարկելու նպատակով: Առավել քան հավանական է, որ նրանց առաջին օրենքները կանվանվեն կանոններ և կկատարվեն հասարակական պարսավանքի վախից: Այդ առաջին խորհրդարանուն յուրաքանչյուրն իր տեղը կգրավի բնական իրավունքի ուժով:

Բայց գաղութի ածին գուգահեռ կշատանան և հասարակական գործերը գաղութի անդամների միջև տարածության մեծացումը անհարմար կդարձնի ամեն առիթով նրանց ընդհանուր հավաքները, ինչպես նախկինում էր, երբ նրանք փոքրաթիվ էին, բնակավայրերը մոտ էին իրար, իսկ հասարակական գործերը քիչ էին ու նվազ կարևոր: Դա մարդկանց կհանգեցնի այն մտքին, որ հարմար է օրենսդրությունը հանձնարարել ընտրյալ մարդկանց, ովքեր, ինչպես ենթադրվում է, ապրում են նույն շահերով, ինչ նրանք, ովքեր իրենց նշանակել են, և կգործեն այնպես, ինչպես գործում է ողջ հասարակությունը, եթե ամբողջ կազմով ներկա լիներ: Եթե գաղութը շարունակում է աճել, ծագում է ներկայացուցիչների թիվը մեծացնելու խնդիրը, իսկ որպեսզի գաղութի յուրաքանչյուր նասի շահերը պաշտպանվեն, լավագույնը կհամարեն ամբողջը բաժանել համապատասխան մասերի, որոնցից յուրաքանչյուրը կսկսի ուղարկել իր անհրաժեշտ թվով ներկայացուցիչներին, իսկ որպեսզի ընտրյալները երբեք չունենան այլ շահեր, քան իրենց ընտրողները, շրջահայացությունը մատնացույց կանի

հաճախակի ընտրությունների անհրաժեշտությունը: Քանի որ այդպիսով ընտրվածները մի քանի ամսից կվերադառնան ու կմիանան ընտրողների ամբողջ հանրությանը, նրանց հավատարմությունը հասարակության կամքին կապահովվի խելամիտ զգուշավորությամբ, որը նրանց կհուշի՝ իրենք իրենց համար դագանակներ չնախապատրաստել: Եվ քանի որ այդ հաճախակի հերթագայությունը կիաստատի հասարակության բոլոր մասերի շահերի ընդհանրությունը, մարդիկ փոխադարձաբար ու բնականաբար կաջակցեն միմյանց, և դրանից (այլ ոչ թե արքայի անհմաստ անունից) կախված կլինի պետական կառավարման ուժն ու կառավարվողների երջանկությունը:

Այդ կերպ է ծագում ու ընդլայնվում կառավարությունը, այսինքն՝ իրահանգը, որ կյանքի է կոչվել աշխարհը կառավարելու առաքինության անկարողությամբ: Դա է կառավարության դերն ու նպատակը, այսինքն՝ ազատությունն ու անվտանգությունը: Եվ ինչ տեսարան էլ կուրացնի մեր տեսողությունը, ինչ ինչյուններ էլ խարեն մեր լսողությունը, ինչպիսի նախապաշարումներ էլ կաշկանդեն մեր կամքը, իսկ շահախմնդրությունը մշուշի մեր գիտակցությունը՝ բնության ու բանականության պարզ ձայնը կհուշի մեզ՝ այս, դա ճիշտ է:

Կառավարման ձևի մասին իմ գաղափարները հենված են բնության օրենքի վրա, որը ոչինչ ի զորու չէ տարտղնել, իմա՝ որքան պարզ է իրը, այնքան դժվար է այն փշացնել և հեշտ է սարքել, եթե փշանա: Ելնելով այս որույրից՝ ես ուզում եմ մի քանի դիտողություններ անել Անգլիայի գովաբանվող Սահմանադրության մասին: Անկասկած, այն իրենից ներկայացրել է ազնիվ ինչ-որ բան ստրկության մրայլ ժամանակներում, երբ ստեղծվել է: Երբ աշխարհը կառավարում էր բռնապետությունը, չնչին շեղումը նրանից արդեն հիմնալի ազատագրում էր, սակայն հեշտ է ասել, թե Սահմանադրությունը կատարյալ չէ, ենթակա է ցնցումների և ի վիճակի չէ տալ այն, ինչ խստանում է:

Բացարձակ միապետությունները (թեպետ խայտառակություն են մարդկային բնության համար) այն առավելությունն ունեն, որ պարզ են: Եթե մարդիկ տառապում են, նրանք գիտեն տառապանքների պատճառը, գիտեն և բալասանը, չեն

նոլորվում պատճառների ու բալասանների բազմազանության մեջ: Բայց Անգլիայի Սահմանադրությունն այնքան բարդ է, որ ազգը կարող է տարիներով տառապել՝ ի վիճակի չլինելով իր դժբախտությունների պատճառը գտնել: Ոմանք մի տեղ կգտնեն, ոմանք՝ մեկ այլ տեղ, և քաղաքական ամեն մի բժիշկ իր դեղատոմսը կառաջարկի:

Ես գիտեմ՝ ինչ դժվար է հաղթահարել տեղական կամ անցյալի նախապաշարումները, այնուհանդերձ, եթե մենք համարձակվենք անգլիական Սահմանադրության բաղկացուցիչ մասերը ուսումնասիրել, կտեսնենք, որ նրանք արատավոր հետևանքներն են երկու հնագույն բռնապետությունների, որոնց միախառնվել են հանրապետական ինչ-որ տարրեր:

Առաջին՝ միապետական բռնապետության մնացուկները՝ ի դեմս արքայի:

Երկրորդ՝ արիստոկրատական բռնապետության մնացուկները՝ ի դեմս պէրերի:

Երրորդ՝ հանրապետական նոր տարրեր՝ ի դեմս Համայնքների պալատի անդամների, որոնց քաջությունից է կախված Անգլիայի ազատությունը:

Առաջին երկու հաստատությունները, ժառանգական լինելով, ժողովրդից կախված չեն, այդ պատճառով սահմանադրական առումով չեն նպաստում պետության ազատությանը:

Հաստատել, որ Անգլիայի Սահմանադրությունը երեք փոխադարձաբար զապիռ ուժերի միություն է, պարզապես ծիծաղելի է. կամ այդ խոսքերը իմաստագուրկ են կամ՝ կոպիտ հակասություն են պարունակում:

Հաստատել, որ Համայնքների պալատը վերահսկում է արքային, կարելի է միայն երկու պայմաններում.

Առաջին. որ արքային չի կարելի վստահել՝ նրան չվերահսկելով կամ այլ խոսքով՝ բացարձակ իշխանության ծարավը միապետությանը բնորոշ ախտ է:

Երկրորդ. որ Համայնքների պալատը՝ այդ նպատակով ստեղծված լինելով, կամ ավելի իմաստուն է կամ ավելի է արժանի վստահության, քան արքայական իշխանությունը:

Բայց քանի որ նույն այդ Սահմանադրությունը, որը Համայնքների պալատին իրավունք է տալիս արքային վերահսկել, մերժում է հարկերը, հետո արքային իշխանություն է տալիս պալատի վրա՝ թույլ տալով մերժել այլ օրինագծերը, ապա այդ ամենը իր հերթին ենթադրում է, որ արքան ավելի իմաստուն է, քան նրանք, ովքեր արդեն համարվել են ավելի իմաստուններ, քան նա: Բացարձակ անհեթեթություն:

Միապետական համակարգում ինչ-որ ծիծաղաշարժ բան կա: Նախ այն մարդուն զրկում է տեղեկատվության աղբյուրից, հետո լիազորում է գործել այն դեպքերուն, երբ պետք է բարձրագույն իմաստություն: Արքայի դիրքը նրան մեկուսացնում է աշխարհից, պարտականությունները, ընդհակառակը, պահանջում են այն կատարելապես իմանալ. այսպիսով՝ տարբեր մասերը, անբնականորեն հակասելով ու կործանելով միմյանց, ապացուցում են ամբողջ համակարգի անօգտակարությունն ու անհեթեթությունը:

Որոշ հեղինակներ բացատրում են անգլիական Սահմանադրությունն այսպես՝ արքան, ասում են նրանք, մի քան է, ժողովուրդը մի այլ բան, պէտքը արքայի բարեկեցության պալատը: Համայնքների պալատը ժողովրդի բարեկեցության պալատն է: Բայց այս ամենը հիշեցնում է մի տուն, որտեղ ընտանիքի անդամները գժտված են: Ու թեպետ բառերը բարեհունչ են, գործնականուն դատարկ ու երկիմաստ են. միշտ էլ այդպես է լինելու և նույնիսկ հիասքանչ բառակապակցությունները, որ օգտագործվում են նկարագրելու այն, ինչ ընդհանրապես չի կարող գոյություն ունենալ կամ՝ այնքան անհասկանալի է, որ չի նկարագրվում, պարզվում է՝ ընդամենը ինչեղ դատարկաբանություն է. կարող է շոյել լսողությունը, բայց չի կարող հոգին լուսավորել, քանի որ այդ բացատրությունը առանց պատասխանի է թողնում նախընթաց հարցը. այսինքն՝ ինչպես է արքան հասել իշխանության, որին մարդիկ վախենում են վստահել և որը միշտ պիտի զսպեն: Այդպիսի իշխանությունը չէր կարող իմաստուն ժողովրդին օգուտ տալ, սանձի կարիք ունեցող իշխանությունը չի կարող Աստծուց լինել, մինչդեռ սահմանադրությունը ենթադրում է նման իշխանության գոյությունը:

Բայց այն, ինչ նախատեսված է Սահմանադրությամբ, չի համապատասխանում խնդրին, միջոցները չեն ծառայում ու չեն կարող ծառայել նպատակին հասնելուն, այս ամբողջը նշանակում է felo de se (ինքնասպանություն), քանի որ մեծ կշիռ միշտ փոքրին կգերակշրի, և քանի որ մեքենայի բոլոր անիվները շարժման մեջ են դրվում մեկ անիվով՝ մնում է միայն իմանալ, թե Սահմանադրության համաձայն՝ որ իշխանությունն ավելի մեծ ուժ ունի, քանի որ հենց նա է իշխելու: Եվ քանի որ մյուսները կամ մյուսների մի մասը կարող են նրան խանգարել կամ, ինչպես ընդունված է ասել, զսպել նրա շարժման արագությունը, բայց քանի դեռ չեն կարողանա կասեցնել, ապարոյուն կլինեն նրանց ջանքերը: Ի վերջո առաջին շարժիչ ուժը կդառնա գերակա և արագության պակասը կլրացնի ժամանակը (գործողության երկարատևությունը):

Հազիվ թե պետք է ապացուցել, որ արքան իրենից ներկայացնում է անգլիական Սահմանադրության կարևորագույն տարրը և որ նրա ազդեցությունը պարզապես հիմնված է այն իրողության վրա, որ նրանից է կախված պաշտոնների ու քոչակների բաշխումը: Այսպիսով. եթե մենք բավականաչափ խելամիտ լինենք, որպեսզի մեզ դրնով սահմանազատենք բացարձակ միապետությունից, մենք, այնուամենայնիվ, անխելք կլինենք, եթե այդ դռան բանալին տանք արքային:

Անգլիացիների կանխակալությունը իրենց սեփական կառավարության նկատմամբ՝ ի դեմս արքայի, լորդերի ու Քամայնքների պալատի, սկիզբ է առնում նույնչափ, եթե ոչ ավելի, նրանց ազգային հպարտությունից ու նրանց բանականությունից: Անհատականությունը Անգլիայում, անկասկած, գտնվում է ավելի մեծ անվտանգության մեջ, քան որոշ այլ երկրներում, բայց արքայի կամքը նույնական օրենք է բրիտանական հողում, ինչպես Ֆրանսիայում այն տարբերությամբ միայն, որ ելնելով արքայական շուրթերից՝ ժողովողին հաղորդվում է պառլամենտական որոշման ահեղ տեսքով: Քանզի Կառլոս Առաջինի ճակատագիրը արքաներին դարձրեց ավելի մենք, բայց ոչ ավելի արդարամիտ:

Այդ պատճառով, մի կողմ թողնելով ազգային ամբողջ հպարտությունն ու հակվածությունը ձևերին ու ավանդույթներին, պետք է ուղղակի պարզ ասել ճշմարտությունը՝ միայն ամբողջ ժողովրդի, այլ ոչ թե կառավարության Սահմանադրության շնորհիվ, արքայական իշխանությունը Անգլիայում այնքան բռնակալական չէ, որքան Թուրքիայում:

Անգլիական կառավարման ձևի սահմանադրական սխալների ուսումնասիրությունն այժմ ծայրահեղորեն անհրաժեշտ է, որովհետև մենք երբեք չենք կարող արդարացի լինել ուրիշների նկատմամբ, քանի դեռ ինքներս գտնվում ենք ինչ-որ գերակշռող հակնան ներքո, ճիշտ այդպես՝ մենք արդարության ի վիճակի չենք, քանի դեռ գտնվում ենք արմատավորված նախապաշարման իշխանության ներքո։ Եվ ինչպես անօրակին կապված մարդը չի կարող ընտրել ու գնահատել իր կնոջը, արատավոր պետական Սահմանադրությանը նախապատվություն տալը մեզ անընդունակ կդարձնի լավ Սահմանադրություն ունենալու։

## **ՊՈՒԲԼԻՌՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՄԻԼՏՈՆ  
1787 թ., ԽՈՎՍՏԵՄԲԵՐԻ 27  
Նյու Յորք նահանգի ժողովրդին**

Այս բանից հետո, երբ դուք սեփական փորձով համոզվեցիք ֆեդերալ կառավարության անարդյունավետության մեջ, ձեզ առաջարկվում է ուսումնասիրել նոր Սահմանադրությունը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար: Թենա, որի նշանակությունն ակնհայտ է: Խոսքը ոչ ավել, ոչ պակաս Միության գոյության, նրա մեջ մտնող մասերի անվտանգության ու բարեկեցության, աշխարհում շատ առումներով ամենահետաքրքիր կայսրության ճակատագրի մասին է: Շաճախ է նկատվել, որ ակնհայտորեն մեր երկրի ժողովրդին վիճակված է իր վարքագծով ու օրինակով լուծել կարևորագույն հարց ի վիճակի՝ է մարդկանց հանրությունը խորհրդածությունների արդյունքում ու սեփական ընտրությամբ սահմանել լավ կառավարում, թե՞ նրանք ընդմիշտ դատապարտված են պատահականության կամքով կամ հարկադրանքով ստանալ իրենց քաղաքական սահմանադրությունները: Եթե այս դիտարկումը դույքն ինչ չափով ճիշտ է, ապա այն ճգնաժամը, որ մենք ապրում ենք, կարելի է համարել ժամանակ, երբ պետք է որոշում ընդունել և մեր դերի սիսալ ընտրությունը լինվին կարելի է համարել դժբախտություն ամբողջ մարդկության համար:

Այս միտքը բազմապատկում է հայրենասիրության մարդասիրական ազդակները, որը կուժեղացնի այս հանգամանքով բոլոր խելամիտ ու բարի մարդկանց անհանգստությունը: Իրավ, մենք երջանիկ կլինենք, եթե մեր ընտրությունը թելադրի ճիշտ գնահատական մեր իրական շահերին՝ չբարդացնելով և չպատուելով այն հասարակության բարիքին չառնչվող

նախապաշտումներով: Բայց շատ ավելի հեշտ է դա կրքոտ ցանկանալ, քան լուրջ ակնկալել: Մեր ուսումնասիրմանն առաջադրված պլանը շոշափում է բազում հատուկ շահեր, նորացնում է բազմաթիվ տեղական կանոններ, որը չի կարող քննարկման ընթացքում չառնչվել բազմաթիվ կողմնակի երևույթների, հայացքների, կրթերի ու նախապաշտումների հետ, որոնք բոլորովին ել չեն նպաստում ծննդրության բացահայտմանը: Ամենամեծ խոչընդոտների թվում, որոնց կարող է հանդիպել նոր Սահմանադրությունը, կարելի է հիշատակել որոշակի դասակարգի շահերը յուրաքանչյուր նահանգում, որոնք գգուշանում են իրենց իշխանության, Եկանուտների ու օգուտների նվազումից, ինչպես նաև մարդկանց մեկ այլ դասակարգի խեղաթյուրված հավակնությունները, որոնք կամ ցանկանում են օգուտներ քաղել երկրում իշխող լարված իրավիճակից կամ փաղաքշում են իրենց այն հույսով, որ տեղական կոնֆեդերացիաներուն կայսրության բաժանման դեպքում վերև բարձրանալու հեռանկարները մեծանում են շատ ավելի, քան կարող էր լինել միության դեպքում: Սակայն ես մտադիր չեմ գրադվել նմանատիպ դատողություններով: Ես հիանալի հասկանում եմ, որ խելամիտ չէր լինի առանց տարբերակման ընդդիմություն համարել մարոկանց ցանկացած խումբ (միայն այն պատճառով, որ իրենց գրադերած պաշտոնի բերումով նրանք կասկածի տակ են հայտնվում), եսասիրական կամ փառասիրական ազդակներով: Անկողմնակալությունը մեզ պարտադրում է խոստովանել, որ նույնիսկ նման մարդիկ կարող են դեկավարվել ազնիվ մտադրություններով, և կասկածներ չկան, որ արդեն արտահայտված առարկությունների մեծ մասը կամ այն առարկությունները, որ դեռ կարտահայտվեն՝ կրիսեն ծայրահեռ դեպքում ազնիվ նկատառումներից, կլինեն ազնիվ մոլորությունների հետևանք՝ նախանձից կամ վախից մոլորված մարդկանց: Փաստորեն, այնքան բազմաթիվ ու լուրջ են պատճառները, որ կեղծ կողմնակալություն են հաղորդում դատողություններին, ինչը մենք հաճախ ենք տեսնում հասարակության համար առաջնակարգ նշանակություն ունեցող գործերում խե-

լացի ու բարի մարդկանց՝ ինչպես ծիշտ դատողների, այնպես էլ սխալվողների մեջ: Այդ պարագան անհրաժեշտ դեպքում գուսապ լինելու դաս է դառնում նրանց համար, ովքեր ցանկացած վեճում գերվստահ են իրենց ծշմարտացիության մեջ: Զգուշության այլ դաս էլ կարելի է քաղել՝ մտածելով այն մասին, որ մենք ոչ միշտ ենք վստահ սկզբունքների մեջ մաքրության մեջ... Հավակնությունները, ագահությունը, անձնական թշնամությունը, կուսակցական ընդդիմությունը և շատ այլ պատճառներ կարող են ներգործել ինչպես նրանց վրա, ովքեր կողմ են հարցի ծիշտ լուծմանը, այնպես էլ նրանց վրա, ովքեր դեմ են: Նույնիսկ եթե չլինեին զսպության այդ դրդապատճառները, ոչինչ ավելի խոցելի չէ, որքան անհանդուրժողականության ոգին, որ միշտ բնորոշ է քաղաքական կուսակցություններին: Քաղաքականության մեջ, ինչպես կրոնի, հավասարապես անհեթեր է կողմնակիցներ գտնել հրով ու սրով: Յերեսիկոսության երկու դեպքերն էլ հազվադեպ են բուժվուն հալածանքներով:

Սակայն որքան էլ արդարացի լինեն այս դատողությունները, մենք բավականաչափ հիմքեր ունենք կարծելու, որ հենց դա է տեղի ունենալու մեր, ինչպես և անցյալում է եղել, ազգային մեծ բանավեճում: Ազատություն է ստանալու չար ու ներգամիտ կրքերի հորձանքը: Եթե դատենք հակամարտող կուսակցությունների վարքագծով, պետք է եզրակացնենք, որ նրանք փոխադարձաբար հոլոյ ունեն դրսևորել իրենց դատողությունների արդարացիությունը և բազմապատկել իրենց գործի օգտին բարձրագույն հայտարարությունների ու թունոտ ֆիլիալիկների թիվը: Կառավարման իրականացման արդյունավետության ու եռանդունության լուսավորյալ ձգտումը կխարանեն իբրև դեսպոտիկ իշխանության և ազատության սկզբունքներին թշնամության պտուղ: Ժողովորի իրավունքներին ուղղված սպառնալիքի ծայրահեղ մտահոգվածության մեջ շատ ավելի մեղավոր է խելքը, քան սիրտը. դա կներկայացվի իբրև ծևականություն ու կեղծիք, խայծ հասարակական բարիքի հաշվին հանրաճանաչություն ստանալու համար: Մի կողմից՝ կմոռանան, որ խանդը սովորաբար ուղեկ-

ցում է կրօստ սիրուն, իսկ ազատության ազնիվ ձգտումը ենթակա է նեղ ու անազատական անվստահության ոգով վարակվելուն: Մյուս կողմից՝ նույնպես կմոռացվի, որ ուժեղ իշխանությունը անհրաժեշտություն է ազատության և անվտանգության ապահովման համար, որ ողջամիտ ու լուսավորյալ տեսակետով այդ շահերը չեն բաժանվում, իսկ վտանգավոր հավակնությունները հաճախ թաքնվում են ժողովրդի իրավունքների ջատագովի բարետես դիմակի տակ ավելի, քան հաստատուն ու արդյունավետ կառավարության հաստատման վախեցնող ձգտումների մեջ: Պատմությունը մեզ սովորեցնում է, որ առաջինը շատ ավելի ուղիղ ճանապարհ է դեպի դեսպոտիզմ, քան երկրորդը, և նրանց շարքում, ովքեր ոչնչացրել են ազատությունը հանրապետություններում, ճնշող մեծամասնությունը իրենց կարիերան սկսել են ժողովրդի հետ սիրախաղերով և դեմագոգներ լինելով՝ վերածվել են բռնակալների:

Այս նախնական դիտարկումներով, հայրենակիցներ, ես մտադիր եմ նախազգուշացնել ձեզ՝ ձեր բարեկեցության համար մեծագույն նշանակություն ունեցող գործում ձեր որոշման վրա ազդելու բոլոր փորձերից, որոնք ծշմարտությամբ չեն թելադրվում՝ որտեղից էլ դրանք կատարվեն: Դուք, անկասկած, նկատել եք, որ նրանք բխում են մի աղբյուրից, որը նոր Սահմանադրության նկատմամբ բարեկամաբար չի տրամադրված: Այո, իմ հայրենակիցներ, աետք է ասեմ ձեզ, որ մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո ես չեմ կասկածում՝ ձեր շահերից է բխում Սահմանադրությունն ընդունելը: Ես համոզված եմ, որ դա ամենաճիշտ ճանապարհն է ձեր ազատության ապահովման, ձեր արժանապատվության ու ձեր երջանկության համար: Ես վերապահումներ չեմ անում, ես վերապահումներ չունեմ: Ես չեմ զվարճացնի ձեզ դատողությունների պատրաճով, քանզի ես արդեն կայացրել եմ իմ վճիռը: Ես անկեղծորեն կներկայացնեմ ձեզ իմ համոզմունքները և ցույց կտամ հիմքերը, որոնց վրա դրանք հենվում են: Գիտակցելով բարի մտադրությունները՝ ես քամահրում եմ երկիմաստությունը: Սակայն բավական է բազմա-

պատկել այս թեմայով դատողությունները: Իմ պատճառները պետք է մնան իմ կրծքում, բայց իմ փաստարկները մատչելի են բոլորին, և բոլորը կարող են նրա մասին դատել: Այն կներկայացվի գոնե ծշմարտության նկատմամբ հարգանքի ոգով:

Ես մտադիր եմ հոդվածաշարով ներկայացնել հետևյալ հետաքրքիր ու ազնիվ հարցերը. Միության օգուտը ձեր քաղաքական բարգավաճնան համար, ներկա կոնֆերացիաների անբավարարությունը Միության պահպաննան համար, կառավարության անհրաժեշտությունը՝ գոնե նույնքան եռանդուն՝ ինչպիսիք են այդ նպատակին միտված հայտարարությունները, առաջարկված Սահմանադրության համապատասխանությունը հանրապետական կառավարման իրական սկզբունքներին, ձեր սեփական նահանգի սահմանադրության հետ նրա զուգորդումները, և վերջապես՝ լրացուցիչ երաշխիքները, որ կտա նրա ընդունումը՝ կառավարման այդ ձևի, ազատության ու սեփականության պահպաննան համար:

Դատողությունների ընթացքում ես կփորձեմ բավարար պատասխան տալ բոլոր առարկություններին, որոնք կարտահայտվեն և ինչ-որ չափով արժանի կլինեն ուշադրության:

Գուցե ավելորդ հանարվեն Միության օգուտի անհրաժեշտության փաստարկները, որ անկասկած դրոշմված են շատ մարդկանց սրտում բոլոր նահանգներում, և ինչպես կարելի է ենթադրել, հակառակորդներ չունեն: Սակայն մենք արդեն գիտենք, որ նոր Սահմանադրության հակառակորդների խմբակներում գաղտնի շշնչում են, որ 13 նահանգները չափազանց մեծ տարածք են գրավում՝ նոր ընդհանուր համակարգի ներդրման համար և այդ պատճառով պետք է ստեղծել առանձին կոնֆերացիաներ՝ ընդհանուրից առանձին: Այս վարդապետությունը, ակնհայտորեն, աստիճանաբար քարոզվելու է, քանի դեռ չի հավաքել բավարար թվով կողմնակիցներ, որպեսզի հնարավոր լինի բացահայտ պաշտպանել: Նրանց համար, ովքեր ի վիճակի են իրողություններին լայն հայացք նետել, նոր Սահմանադրության ընդունման համար առավել ակնհայտ այլընտրանք չկա, քան Միության նասնատումը: Ուստի օգտակար է սկսել առաջարկվող Միության առավելու-

թյուններից, անխուսափելի դժբախտությունների ու հավանական Վտանգների քննարկումից, որոնց ենթարկվելու է յուրաքանչյուր նահանգ՝ մասնատման դեպքում: Այս հարցը ես կքննարկեմ իմ հաջորդ հրապարակման մեջ:

## ԶՈՂ ԶԵՅ

**1787 թ., 31 հոկտեմբերի  
Նյու Յորք նահանգի ժողովրդին**

Երբ Ամերիկայի ժողովուրդը հասկանա, որ կոչված է լուծելու մի հարց, որն իր հետևանքներով կոչված է դառնալու կարևորագույնը՝ որ երեսէ ծագել է, ապա պարզ կդառնա, որ այդ հարցին պետք է վերաբերվել միանգանայն լուրջ և հաճակողմանի:

Ոչինչ առավել ակնհայտ չէ, քան կառավարություն ունենալու պարտադիր անհրաժեշտությունը: Կասկածի ենթակա չէ և այն, որ ժողովուրդը պետք է նրան փոխանցի, իենց այն հաստատվի, իր բնական իրավունքների մի մասը՝ նրան անհրաժեշտ իշխանությամբ օժտելու համար: Այդ պատճառով ինաստ ունի մտածել այն մասին, ինչը առավել է հաճապատասխանում ամերիկացի ժողովրդի շահերին. կմնա՞ն ամ միասնական ազգ՝ մեկ դաշնային կառավարությամբ, թե՞ կրաժանվի առանձին դաշնությունների յուրաքանչյուրի ղեկավարությանն օժտելով նույն իշխանական իրավասություններով, որոնցով առաջարկվում է օժտել միասնական ազգային կառավարությանը:

Մինչ բոլորովին վերջերս իշխում էր այն տեսակետը, որ Ամերիկայի ժողովրդի բարգավաճումը կախված է միասնության անխարար պահպանումից: Մեր լավագույն ու ինաստնագույն քաղաքացիների մտքերը, աղոթքները ու ջանքերը մշտապես ուղղված էին այս նպատակին: Քիմա հայտնվել են քաղաքական գործիչներ, ովքեր հաստատում են, որ այդ տեսակետը սխալ է և Միության մեջ անվտանգություն ու երջանկություն ստանալու փոխարեն, մենք իբրև թե պարտավոր ենք

որոնել նույնը Միության առանձին դաշնությունների մասնատման կամ անկախ կազմավորումների մեջ: Որքան էլ արտառոց թվա այս նոր վարդապետությունը, կողմնակիցներ, այնուամենայնիվ, գտնում է՝ մինչ այս դեմ արտահայտվողները հիմա կողմ են: Ինչպիսին էլ լինեն փաստարկներն ու պատճառները, որ հարուցել են այս պարոնների տրամադրությունների ու ելույթների փոփոխությունը, ծայրահեղ անխելամիտ կլիներ, եթե զանգվածները ընդունեին այս նոր քաղաքական սկզբունքները՝ լիովին վստահ չլինելով, որ դրանք խարսխվում են շշնարտության և քաղաքական իմաստնության վրա:

Ինձ ոչ մեկ անգամ է բավականություն պատճառել մտածելն այն մասին, որ անկախ Աներիկան կազմված չէ առանձին, մինյանցից կտրված տարածքներից, այլ իրենից ներկայացնում է մեկ, միասնական, բերքառատ, լայնատարած երկիր, որ ժառանգել են ազատության մեր արևմտյան որդիները: Նախախնամությունը հատուկ կերպով օրինել է մեր երկիրը, նրա բնակիչներին հուրախություն ու հօգտագործում ուղարկելով տարատեսակ ընդերք ու այնտեղ աճող պտուղներ, նաև բազմաթիվ գետեր, որ հոսում են նրա լայնարձակ տարածքներում: Նավագնացության ենթակա գետերն ու լճերը շղթա են կազմում նրա սահմանների շուրջ, կարծես մեկ միասնական դարձնելով այն, իսկ աշխարհի ամենափառահեղ գետերը, որ հոսում են մինյանցից հարմար հեռավորության վրա, լայն խճուղիների նման, միացնում են բարեկամ ժողովուրդներին՝ օժանդակելով ապրանքափոխանակությունը: Ես նաև հաճույքով նկատում էի, որ Նախախնամությանը հածո է եղել այդ միասնական երկիրը տալ միասնական ժողովոյի, որը նույն նախնիներից է սերում, խոսում նույն լեզվով, նույն հավատն ունի, հակված է կառավարման միևնույն սկզբունքներին, պահպանում է միանման սովորույթներ ու ավանդույթներ, ժողովուրդ, որ միասնական ջանքերի արդյունքում՝ ուսոււսի մարտնչելով երկար ու արյունոտ պատերազմում, նվաճել է ազատություն ու անկախություն:

Այդ երկիրը և այդ ժողովուրդը ստեղծված էին մինյանց համար: Ակներևաբար՝ Նախախնամության ծրագիրը հենց դա էր.

որ այդքան հարուստ ժողովուրդների եղբայրական ընտանիքին վայել ժառանգությունը, որ շաղկապված է անքակտելի կապերով, երբեք չմասնատվի թշնամական, միմյանց միջև նրակցող պետությունների միջև:

Այսպիսի զգացումները մինչև ոչ վաղ անցյալը գերիշխում էին բնակչության բոլոր խավերի միջև: Փաստորեն, մենք մեկ ժողովուրդ էինք, ընդ որում՝ յուրաքանչյուր քաղաքացի, որտեղ էլ գտնվեր, օգտվում էր միանման իրավունքներից, արտոնություններից, ինչպես նաև՝ պետության պաշտպանությունից: Իբրև միասնական ազգ՝ մենք պատերազմ մղեցինք ու խաղաղություն կնքեցինք, հաղթեցինք բոլոր թշնամիներին, կազմավորեցինք միություններ և պայմանագրեր կնքեցինք օտարերկրյա պետությունների հետ:

Միության արժեքավորության ու շահավետության գիտակցությունը ժողովրդին ստիպեց պատերազմի սկզբում ստեղծել դաշնային կառավարություն՝ հանուն նրա պահպանության ու ամրապնդման: Կառավարությունը ձևավորվեց, հենց որ ժողովուրդն իրեն գգաց իբրև քաղաքական ուժ, նույնիսկ ավելի վաղ, երբ մեր բնակավայրերը կրակի մեջ էին, շատ քաղաքացիներ արնաքան էին լինում, իսկ պատերազմը և նրա բերած ավերածությունները ժամանակ չէին թողնում հանգիստ դատողությունների ու լուրջ նախապատրաստության համար, որ սովորաբար նախորդում են իմաստուն ու հավասարակշռված կառավարության ձևավորմանը՝ ազատ ժողովրդի համար: Զարմանալի ոչինչ չկա, որ այդքան դժվար ժամանակ ձևավորված կառավարության ձևավորմանը՝ ազատ ժողովրդի համար: Զարմանալի ոչինչ չկա, որ այդքան դժվար ժամանակ ձևավորված կառավարությունը բոլորովին էլ կատարյալ չէր և լիովին չէր համապատասախանում այն նպատակին, որի համար ստեղծվել էր:

Սեր լուսավորյալ ժողովուրդը հասկացավ որն է կառավարության անկատարության պատճառը և զղջում է: Լինելով միության ոչ պակաս կողմնակիցներ, քան ազատության, մարդիկ տեսնում էին վտանգը, որը սպառնում էր ամբողջ միությանը, ապա նաև ազատությանը, համոզվելով, որ միությունը և ազատությունը ըստ արժանվույն կարելի է պաշտպանել՝ ստեղծելով առավել կատարյալ, քան առաջ, դաշնային կա-

ուավարություն, նրանք միաձայն համաձայնեցին գումարել Վերջերս կայացած սահմանադրական կոնվենտը, որպեսզի քննվի այդ կարևոր հարցը:

Կոնվենտի առաջ դժվար խնդիր էր դրված, որի անդամները դարձել էին հայրենակիցների վստահությունը վայելող մարդիկ, ընդ որում նրանցից շատերը լայնորեն հայտնի էին՝ շնորհիվ իրենց հայրենասիրության և բարոյական բարձր հատկանիշների, որ դրսևորվել էին այն ժամանակներում, երբ մարդկանց մտքերն ու սրտերը ծանր փորձությունների էին ենթարկվում: Խաղաղ ժամանակներում, երբ արդեն ոչինչ չէր խանգարում, նրանք երկար ամիսներ նվիրել էին սահմանադրության քննարկմանը, և նրանց հանգիստ, ամենօրյա աշխատանքին ոչ ոք չէր խանգարում: Նրանք վախ չէին զգում իշխանություններից, նրանց վրա չէին ներգործում տարբեր կրթեր՝ բացի հայրենիքի նկատմամբ տածած սիրուց: Վերջապես՝ նրանք նախապատրաստեցին ու ժողովրդին երաշխավորեցին իրենց համատեղ քննարկումների արգասիքը՝ միական դրվատանքի արժանացած նախագիծը:

Ընդունում ենք. այդ նախագիծը հենց երաշխավորված է, այլ ոչ՝ պարտադրված: Չնորանանք նաև, որ մեզ խորհուրդ են տալիս ոչ թե մեխանիկորեն ընդունել կամ մեխանիկորեն մերժել, այլ հանգիստ ու ազնիվ ուսումնասիրել՝ ինչը պահանջում է խնդրի կարևորությունն ու նշանակությունը, և, ինչի այն, անկասկած, արժանի է: Սակայն (ինչպես նշվել է և նախորդ նամակում) ամբողջ ցանկալիությանը հանդերձ՝ դժվար է վստահ լինել, որ ուսումնասիրությունն ու քննարկումը հենց այդպես տեղի կունենան: Անցյալի փորձը մեզ ստվորեցնում է հույսերի հետ մեծ հույսեր չկապել: Դեռ մոռացության չի տրվել, այն վտանգի զգացողությունը, որն ամերիկացիներին ստիպեց գումարել հիշարժան մայրցամաքային կոնգրեսը 1774 թվականին: Կոնգրեսը իրեն ընտրած ժողովրդին որոշ միջոցներ ներկայացրեց, որոնց իմաստնությունն ակնհայտ էր: Բայց դեռ չեն խամբել այն հիշողությունները, թե ինչքան արագ բազուն պամֆլետներ ու հրապարակումներ հայտնվեցին օրաթերերում, որոնք քննադատում էին նույն այդ միջոցառումները:

Իրենց անձնական շահերը հետապնդելով՝ շատ կառավարական պաշտոնյաներ, նաև նրանք, ովքեր հետևանքները ճիշտ չեն գնահատել կամ գտնվում են նախկին կապերի ազդեցության տակ, անդադրում են իրենց փորձերում՝ համոզել ժողովրդին մերժել կոնգրեսի հայրենասիրությամբ թելադրված միջոցառումները։ Շատերը մոլորության մեջ են կամ իրենք են խարված, բայց գերակշիռ մասը դատում էր սթափ և հիմա երջանիկ է այն գիտակցությունից, որ վարվել է հենց այդպես։

Նրանք գտնում են, որ կոնգրեսը կազմված է շատ փորձառու և խելամիտ մարդկանցից, որ երկրի տարբեր ծայրերից հավաքվելով, իրենց հետ բերել ու միմյանց են փոխանցել օգտակար տեղեկատվություն։ Միասին անցկացրած ժամանակի ընթացքում նրանք քննարկում են, թե որոնք են երկրի իրական շահերը, և, բնականաբար, պետք է ունենային բավականին ճզգիտ պատկերացում։ Նրանցից յուրաքանչյուրը նտահոգված էր հասարակության ազատությամբ ու բարգավաճմամբ, այդ պատճառով ոչ միայն պարտքի զգացումից, այլև խղճի մտոք նրանք առաջարկեցին քայլեր, որոնք հասուն դատողությամբ համարեցին իրապես խելամիտ ու ցանկալի։

Այն ժամանակ այդ և նման դիտարկումները ժողովրդին համոզեցին վստահել կոնգրեսի խելամտությանը և վճիռներին։ Նա հետևեց կոնգրեսի առաջարկություններին, չնայած տարհամոզելու և վճիռները կենսագործելուն խանգարելու տարբեր հնարքներին ու փորձերին։ Բայց եթե ամբողջ ժողովուրդը բավարար պատճառներ ուներ կոնգրեսին վստահելու, պատգամավորների մեջ մասը սակավ հայտնի են և դեռ իրենց չեն դրսերել, ապա հիմա ավելի շատ պատճառներ կան սահմանադրական կոնվենտի կարծիքներն ու առաջարկությունները հարգելու, քանզի լավ հայտնի է, որ այն կոնգրեսի մի քանի ամենաականավոր պատգամավորները, որ հետո լավագույնս դրսերեցին իրենց և շահեցին արժանի հարգանք իրենց հայրենասիրությամբ ու տաղանդով, իսկ այդ մարդիկ բավականին փորձառու են քաղաքականության մեջ, դարձան նաև սահմանադրական կոնվենտի անդամներ, և այդ աշխատանքին բերեցին իրենց գիտելիքներն ու փորձը։

Արժե նշել, որ ոչ միայն առաջին, այլև բոլոր հետագա կոնգրեսների պատվիրակները, ինչպես նաև վերջերս տեղի ունեցած սահմանադրական կոնվենտի, ամերիկացի ժողովրդի հետ նույն կերպ էին մտածում՝ Ամերիկայի բարգավաճումը նրա միասնությունից է կախված։ Միության պահպանումն ու ամրակայումը այն մեծ նպատակն էր, որ ուներ կոնվենտն ընտրող ամերիկացի ժողովուրդը։ Նույն նպատակն ունի և նախագիծը, որ կոնվենտը կոչ է անում ընդունել։ Ի՞նչ նկատառումներով և բարի նպատակներով են դեկավարվում նրանք, ովքեր այս պահին փորձում են նվազեցնել Միության կարևորությունը։ Ինչո՞ւ են մեզ ասում, որ երեք-չորս կոնֆետերացիաները նախընտրելի են մեկից։ Ես խորապես համոզված եմ, որ ժողովողի կարծիքը ճիշտ էր, որ միասնական ու տարածական աջակցությունը, որ վայելում է Միության պահպանության գործը, ծանրակշիռ հիմքեր ունի և բացատրվում է ազնվագույն նկատառումներով։ Ես կմանրանասնեմ այդ հիմքերը հետագա հոդվածներում։ Նրանք, ովքեր աջակցում են առանձին կոնֆետերացիաների ստեղծման գաղափարին՝ կոնվենտի առաջարկած նախագծի փոխարեն, հավանաբար կրահում են, որ հրաժարումը Միությունը լուրջ վտանգի կենթարկի։ Նման ելքի հավանականությունը շատ մեծ է, և ես անկեղծորեն ցանկանում եմ, որ յուրաքանչյուր քաղաքացի հստակ հասկանա՝ երբ Միությունը տրոհվի, Ամերիկան, լիակատար հիմք ունենալով, կառող է բացականչել բանաստեղծի բառերը՝ ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ՄՆԱՍ ԲԱՐՈՎ ԻՄ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ։

## ՁԵՅՍՍ ՄԵԴԻՍՈՆ 1787 թ., 22 նոյեմբերի Նյու Յորք նահանգի ժողովրդին

Բազմաթիվ առավելությունների մեջ, որ մեզ խոստանում է լավ հաստատված Միությունը, ոչ մեկը առավել ուշադիր ուսումնասիրման ենթակա չէ, քան նրան բնորոշ կարողությունը՝ կործանել ու կարգավորել հանցագործ հանրությունների

խրախնճանքը: Ժողովրդական կառավարությունների կողմանակցին ոչինչ այդքան չի տագնապեցնում իրենց բնավորության ու ճակատագրի առումով, որքան ժողովրդի իշխանության հակվածությունը այդ վտանգավոր չարիքին: Եվ այդ պատճառով նա չի ցանկանում անհրաժեշտ կերպով գնահատել ցանկացած նախագիծ, որը, չխախտելով սկզբունքները, որոնց մեր ընկերը հակված է, առաջարկում է այս խոցի դեմ հուսալի միջոց: Անկայունությունը, անարդարությունը ու խաճաշփոթ գործերում, որով վարակված են հասարակական ներկայացուցչությունները, իրապես մահացու հիվանդություններ են, որ ամենուր ժողովրդական կառավարությունները կործանման են տանում, եղել և մնում են սիրելի և արգասարեր թեմաներ, որտեղ ազատության քշնամինները քաղում են առավել ճշմարտանման փաստարկներ իրենց ֆիլիպիկների համար: Թեպետ արժեքավոր կատարելագործումները, որ բերել են ամերիկյան սահմանադրությունները ժողովրդական կառավարման օրինակներում, ինչպես իին, այնպես էլ նոր, հարուցում են արդարացի հիացում. անթույլատրելի կողմնակալություն կլիներ պնդել, իբր նրանք լիովին ձերբազատվել են նման վտանգից, որքան էլ մենք դա ցանկանանք կամ սպասենք: Մեր ինաստնագույն ու առաքինի քաղաքացինները, որ հասարակական ու անձնական ազատության ամուր հավատ ունեն, միաձայն բողոքում են, որ մեր կառավարությունները չափազանց անկայուն են, որ մրցակցող կուսակցությունները տարածայնությունների մեջ՝ մոռանում են հասարակական բարիքի մասին, և այն միջոցները, որ մենք ձեռնարկում ենք, շատ հաճախ արդարության կանոնների ու մեծամասնության իրավունքների դեմ են, առավել ևս որ պարտադրվում են մեծամասնության շահագրգիռ ու իշխանական ուժով: Որքան էլ ջերմորեն մենք ցանկանանք, որ այդ բողոքները անհիմն լինեն, հայտնի փաստերի վկայությունները բույլ չեն տալիս մեզ հերքել, որ նրանք ոչ փոքր չափով արդարացի են: Ու թեպետ իրավիճակի անաչառ ուսումնասիրությունը բացահայտում է, որ մեզ հասած դժբախտությունների որոշ մասի մեղավորությունը սխալմամբ վերագրում են

մեր կառավարությունների գործողություններին, միևնույն ժամանակ չի կարելի չտեսնել, որ միայն այդ պատճառներով չես բացատրի մեր ծանր դժբախտությունները՝ մասնավորապես, աճող և արդեն իշխող անվտահությունը հասարակական հաստատությունների նկատմամբ և անհատի իրավունքների համար վախը, որ ամենուր համակել են մեր քաղաքացիներին և արտահայտվում են նրանց կողմից մայրցամաքի մի ծայրից մյուսը: Այս երկու երևույթներն եւ գլխավորապես, եթե ոչ ամբողջությամբ, հաղուցված են երերունությամբ և անարդարությամբ, որոնցով հանցագործության ոգին պատել է մեր հասարակական կառավարումը:

Հանցագործության կամ հանցավոր հանրության անվան տակ ես հասկանում եմ հայրենակիցների որոշ քանակ՝ անկախ նրանք ամբողջի մեջ թե փոքր մասն են, որ միավորված կամ տարված են ընդհանուր հրապուրանքով կամ շահով, որը հակառակ է մյուս քաղաքացիների իրավունքներին կամ ամբողջ հասարակության մշտական ու ընդհանրական շահերին:

Այս չարիքից բուժվելու երկու միջոց կա: Առաջինը՝ վերացնել ծնող պատճառները, երկրորդ՝ չափավորել նրա ազդեցությունը:

Իր հերթին հանցագործ հանրությունների ստեղծման պատճառների վերացման երկու միջոց կա. առաջինը ոչնչացնել բուն ազատությունը, որ անհրաժեշտ է նրանց գոյության համար, երկրորդ՝ բոլոր քաղաքացիներին ներշնչել միևնույն մտքերը, միևնույն հրապուրանքները, միևնույն շահերը:

Նշված միջոցներից առաջինը առավել լավ հնարավոր չէ բնորոշել, քան ասել, որ այն բուն հիվանդությունից վատ է: Ազատությունը հանցավոր հանրությունների համար նույնն է ինչ օդը կրակի համար՝ սնունդ, առանց որի անհապաղ կմարեն: Բայց մեծագույն հիմարություն կլիներ ոչնչացնել ազատությունը միայն այն պատճառով, որ նրանք սնում են հանցագործությունը, ինչպես և ցանկանալ ոչնչացնել օդը, առանց որի կենդանի ոչնչի համար կյանք չկա՝ միայն այն պատճառով, որ այն սնում է կործանարար կրակը:

Երկրորդ միջոցը նույնքան անկիրառելի է, որքան առաջինը խելամիտ չէ: Քանի դեռ մարդու բանականությունը հակված է սխալների, իսկ մարդը սահմանափակված չէ բանականության օգտագործման մեջ, անխուսափելի են տարբեր տեսակետները: Մինչև այդ ժամանակը պահպանվում է կազը բանականության ու եսասիրության, կարծիքները և հրապուրանքները կներգործեն միմյանց վրա և վերջիններս կներգործեն առաջինների վրա: Մարդու ընդունակությունների բազմազանությունը նույնպես անհաղթահարելի արգելք է, որ անհնար է դարձնում շահերի ընդհանրությունը:

Ընդունակությունների ու ծիրթերի պաշտպանությունը՝ կառավարության առաջին հիգին է: Սեփականության ծեռքբերման տարբեր ու անհավասար ընդունակությունների պաշտպանությունից անմիջականորեն կախված են սեփականության ձևերի տարբեր աստիճանները և ձևերը, իսկ նրանց ներգործությունից համապատասխան սեփականատերերի զգացումների ու աշխարհընկալումների վրա՝ բխում է հասարակության տրոհումը տարբեր շահերի ու կուսակցությունների:

Այսպիսով, հանցագործության թաքնված պատճառները մարդու էության մեջ են, և մենք տեսնում ենք ինչպես են նրանք ամենուր, թեպետ տարբեր չափով, հարուցում գործողություններ, որ համընկնում են քաղաքացիական հասարակության տարբեր հանգամանքների հետ: Տարբեր կարծիքների հակվածությունը վերաբերում է կրոնին, կառավարություններին և այլ առարկաների խավարին, ինչպես տարբերությունները դասողությունների և գործնական կյանքի միջև, տարբեր առաջնորդների հակվածությունը, որ ծգտում են զերակայության ու իշխանության կամ այլ կարգի մարդկանց, որոնց ճակատագրերը այս կամ այն կերպ գրավում են բանականությունն ու սրտերը, իրենց հերթին մարդկությանը բաժանում են կուսակցությունների, փոխադարձ թշնամանքն են սրում և մարդկանց դարձնում են առավել հակված ատելու ու հալածելու միջյանց, քան համագործակցելու հանուն ընդհանուր բարեկեցության: Փոխադարձ հակամարտության տրա-

մադրվածությունը այնքան ուժեղ է մարդու մեջ, որ նույնիսկ այնտեղ, ուր էական հիմքեր չկան, բավական են աննշան ու մակերեսային տարբերությունները: Ընդ որում՝ հանցագործության ծաղկումի ամենասովորական ու կայուն աղբյուրը միշտ եղել է սեփականության տարբեր ու անհավասար բաշխումը: Նրանք, ովքեր սեփականություն չունեն, հասարակության մեջ ներհակ շահեր ունեցող խմբեր են կազմում: Նրանք, ովքեր վարկատուններ են և նրանք, ովքեր պարտքեր ունեն, հավասարապես հակամետ են միմյանց: Քաղաքակիրք ժողովուրդների մեջ անհրաժեշտաբար ձևավորվում են հողատերերի, արդյունաբերողների, առևտրականների, բանկատերերի և իրենց նշանակությամբ շատ ավելի փոքր խմբերի շահերը՝ հասարակությանը բաժանելով տարբեր դասակարգերի, որոնց առաջնորդում են տարբեր գգացումներ ու հայացքներ: Այդ տարատեսակ ու հակասական շահերի կարգավորումը դառնում է ժամանակակից օրենսդրության խնդիրը՝ անխուսափելիորեն բերելով իր կուսակցական ու խմբային ոգին կառավարության գործունեության մեջ:

Ոչ մեկին արտոնված չէ դատավոր լինել սեփական գործում, քանի որ նրան առաջնորդող շահերը, անտարակույս, կազդեն որոշման վրա և լիովին հնարավոր է, որ տարտղնեն նրա ազնվությունը:

Հավասարապես և թերևս առավել հիմնարար՝ մարդկանց խմբին էլ անտեղի է միաժամանակ հանդես գալ իբրև դատավոր և հայցվոր: Մինչդեռ, մի՞թե բազմաթիվ կարևոր օրենսդրական ակտեր, ինչպես և դատական որոշումներ, որ վերաբերվում են ոչ միայն առանձին անհատներին, այլև հասարակություններին, չեն ընդունում օրենսդիրների տարբեր խմբերը, որոնք պաշտպաններն ու ջատագովներն են նույն այդ գործերի, որոնց շուրջ որոշում է կայացվում: Մի՞թե առաջարկվել է օրենք մասնավոր պարտքերի մասին: Դա դատավարություն է, որի մի կողմում վարկատուններն են, մյուս կողմում՝ պարտք ունեցողները: Դատարանը պիտի անկողմնակալ լինի երկու կողմերի նկատմամբ էլ: Սակայն դատավոր-

Ներն իրենք հանդես են գալիս իբրև հայցվոր կողմեր, և հաղթում է այն կողմը, որն ունի մեծ թվով կողմնակիցներ, այլ կերպ ասած՝ առավել հզոր համագործակցությունը: Պետք է այդ կերպ խրախուսել տեղական արդյունաբերողներին ի հաշիվ օտարերկրացիների: Սրանք հարցեր են, որոնց տարբեր լուծումներ են տալիս հողագործներն ու արդյունաբերողները, և ավելի շուտ, ոչ մի կողմն էլ չի առաջնորդվում արդարանտությամբ կամ հասարակական բարիքով: Սեփականության տարբեր ձևերին ուղիղ համեմատական հարկերի բաշխումը մի ակտ է, որ պահանջում է, ակներևաբար, առավելագույն անաչառություն, սակայն հազիվ թե գտնվի ուրիշ օրենք, որը ավելի մեծ հնարավորություններ կտա դեկավարող կուսակցությանը՝ նրան ենթարկելով արդարությունը ուժնահարելու գայթակղությանը: Յուրաքանչյուր շիլինգը, որ հասանելիից ավելի վերցվում է փորբամասնությունից, սեփական գրանում մնացող շիլինգն է:

Ապարդյուն է պնդել՝ իբր լուսավորյալ պետական այրերն ի գորու են հաշտեցնել այս ներհակ շահերն ու ստիպել հասարակական բարիքին ծառայել: Լուսավորյալ այրերը ոչ միշտ են կանգնած կերակրատաշտի կողքին: Ընդ որում, շատ դեպքերում նման հաշտեցումը ընդհանրապես անհնար է՝ ուշադրության չարժանացնելով կողմնակի ու հետագա հետևանքները, որոնք առավել կարևոր են անմիջական շահից, որ ունենում է կողմերից մեկը ի հաշիվ մյուսի կամ բոլորի բարիքի:

Այսինքն՝ մենք հանգում ենք եզրակացության, որ հանցավորության ի հայտ գալու պատճառները հնարավոր չեն արմատախիլ անել և փրկությունը պետք է որոնել դրանց ազդեցությունը մեղմացնող միջոցների մեջ:

Փրկությունը հանրապետական կառավարման սկզբունքն է, որը թույլ է տալիս վնասակար հայացքները հաղթել պարզ քվեարկության միջոցով: Դանցավորները կարող են հարձակվել իշխանության վրա, նրանք կարող են խառնակչություն սերմանել հասարակության մեջ, բայց ուժ չեն ունենա իրականացնել ու քողարկել իրենց անօրինականությունները՝ Սահմանադրությամբ հռչակված դրույթներով: Եթե հանցավո-

րությունն ընդգրկում է մեծանասնությանը, այդ ժամանակ ժողովրդական կառավարման ձևը նրան հնարավորություն է տալիս զոհաբերել իր գլխավոր շահին կամ հրապուրանքին ինչպես հասարակական բարիքը, այնպես էլ քաղաքացիների մյուս մասի իրավունքները: Այդ պատճառով մեր հետազոտության գլխավոր նպատակն է վնասազերծել հասարակական բարիքը և անհատի իրավունքները նման ընկերակցության ուսունականացներից և միևնույն ժամանակ պահպանել ժողովրդական կառավարման ոգին ու ձևը: Ինձ թույլ եմ տալիս հավելել, որ այդ նպատակը բարձրագույն desideratum է, որով կառավարման միայն այդ ձևը կարող է ազատել անորի խարանից՝ որն այդքան երկար կրել է և մարդկությանը ներկայանալ իրուն հարգանքի ու ներդրման արժանի ձև:

Ի՞նչ միջոցներով հասնել այդ նպատակին: Ակնհայտորեն այսուեղ պիտանի է երկուսից մեկը: Յարկ է կամ խոչընդոտել, որ քաղաքացիների մեծանասնությունը միաժամանակ ենթարկվի մեկ և նույն իրապուրանքին կամ շահին կամ, եթե այդ իրապուրանքը կամ շահը արդեն իրենց են ենթարկել մեծանասնությանը, օգտագործելով ընկերակցության մեծանասնությանն ու տեղական հանգանանքները, անհնար դարձնել պայմանավորվածությունը և ճնշման ծրագրերի իրականացումը: Եվ հարկ է հիշել, որ, ինչպես լավ հայտնի է, եթե գործողության ճգոտումը և գործողության հնարավորությունը համընկնում են, ոչ բարոյական, ոչ կրօնական սկիզբների վրա հույս դնել չի կարելի: Նրանք ավելի քիչ ազդեցություն են թողնում արդարության ու բռնության վրա տարբեր մարդկանց առնչությամբ և այդքանով ավելի արագ կորցնում են ներգործության ուժը, քան հանցավորությամբ համակված բազմությունը. այլ խոսքով՝ այնքան ավելի նվազ արդյունավետ են, որքան ավելի նրանց արդյունավետությունը դաշնում է անհրաժեշտ:

Ասվածից ելելով՝ կարելի է եզրակացնել, որ մաքուր ժողովրդավարությունը, որն ասելով՝ ես հասկանում են ոչ մեծ թվով մարդկանցից կազմված հասարակություն, որը համախմբվում ու անձանք իշխանություն է իրագործում միջոց-

Աեր չունի հանցավորության հարուցած դժբախտությունների դեմ: Ընդհանուր հրապուրանքը կամ շահը համարյա բոլոր դեպքերում տիրում է մեծամասնությանը, և քանի որ համախոհությունը պայմանավորվում է կառավարման ձևով, չկա ոչինչ, որ խանգարի թույլ կողմի կամ անցանկալի անձի հետ հաշվեհարդարին: Ահա ինչու ժողովրդավարությունները միշտ իրենցից ներկայացրել են տարածայնությունների ու խառնակությունների տեսարաններ, միշտ անզոր են եղել ապահովել սեփականության կամ անձնական անվտանգությունը, գոյություն են ունեցել շատ կարծ և բռնի մահով են վերջացել: Տեսաբան քաղաքագետները, որ ջատագովում են կառավարման այդ կերպը, սխալմամբ գտնում էին, որ երջանկացնելով մարդկությունը հավասարությամբ ու քաղաքական իրավունքներով, դրանով լիովին հավասարեցրել ու հարել են սեփականություն ունենալու բոլոր տարբերություններն ու հարաբերությունները՝ ինչպես նտքերում, այնպես էլ հրապուրանքներում:

Հանրապետությունը, այսինքն՝ ներկայացուցչական համակարգով կազմված կառավարությունը, բացում է նոր հեռանկարներ և բերում է ակնկալված համադարմանները: Մանրակրկիտ քննարկենք՝ ինչով է հանրապետությունը տարբերվում մաքուր ժողովրդավարությունից, և պարզ կդառնա՝ ինչ բնույթի են այդ համադարմանները և դրանց ներգործության ուժը, որ պետք է ստանան նահանգների միության շնորհիվ:

Ժողովրդավարության ու հանրապետության տարբերության երկու գլխավոր կետերը այսպիսին են՝ առաջինը այն է, որ հանրապետության կառավարումը փոխանցվում է քաղաքացիների փոքր թվի, որոնց մնացածը ընտրում են իրենց լիազոր ներկայացուցիչներ, երկրորդը՝ քաղաքացիների մեծ թվով ու մեծ տարածքով, որոնց վրա հանրապետությունը տարածում է իր իշխանությունը: Առաջին տարբերության հետևանքն այն է, որ մի կողմից հանրապետության մեջ հասարակական հայացքները ավելի վեհ ու լայն են, քանի որ տարածվում են ընտրյալ օրգանի կողմից, որ կազմված է այն քաղաքացիներից, որոնց իմաստնությունը թույլ է տալիս լա-

վագույնս որոշարկել երկրի շահերը, իսկ հայրենիքի ու արդարամտության սերը առավել մեծ հավանականությամբ թույլ չի տա դրանք զոհաբերել օրընթաց ու անձնական շահերին: Դանրապետական կարգերի օրոք ժողովրդի ներկայացուցիչների արտահայտած հասարակական կարծիքը ավելի շուտ համանուն կլինի հասարակական բարեկեցությանը, քան ժողովրդավարականի օրոք, որտեղ այն արտահայտվում է այդ նպատակի համար հավաքված ժողովրդի կողմից: Մյուս կողմից՝ հետևանքը կարող է և հակառակը լինել: Ինտրիգների, կաշառքի և այլ միջոցների շնորհիվ ժողովրդի ներկայացուցիչներ կարող են դառնալ այն անձինք, ովքեր հակված են տրոհման, ենթակա են տեղական նախապաշտումներին կամ թաքցնում են չարագույժ մտադրությունները, և հաղթելով ընտրություններում, այդ անձինք հետո կդավաճանեն ժողովրդի շահերին: Այստեղից հարց է ծագում՝ ո՞ր հանրապետությունները՝ փոքր թե խոշոր, առավել լավ են հարմարեցված ընտրելու համար ժողովրդի բարեկեցության իսկական պաշտպաններին: Երկու ակնհայտ փաստարկներ խոսում են հօգուտ վերջիններիս:

Նախ նկատենք, որ, ինչքան էլ հանրապետությունը փոքր լինի, ընտրյալ ներկայացուցիչների թիվը պետք է բավարար լինի, որ նրանք կարողանան պահպանել դավադիրների խմբի չարագույժ մտադրություններից, և որքան էլ այն մեծ լինի, ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի բանականը, որպեսզի թույլ տա պահպանել խառնակությունից, որ բերում է ամբողջը: Այսինքն՝ երկու դեպքերում էլ ներկայացուցիչների թիվը չի կարող ուղղի համեմատական լինել ընտրողների թվին և ավելի մեծ է փոքր հանրապետության քաղաքացիների թվից: Այստեղից հետևում է, որ քանզի արժանավոր անձանց թիվը ընդհանուր թվի հարաբերությամբ խոշոր պետությունում ավելի փոքր չէ, քան փոքր պետությունում, առաջինը ներկայացնում է լավագույն ընտրության հնարավորություններ և առավել մեծ հավանականություն, որ այն ճիշտ կարվի:

Եվ ապա՝ քանի որ խոշոր հանրապետությունում յուրաքանչյուր ներկայացուցիչ ընտրվում է ձայների ավելի մեծ թվով, քան փոքրերում, ընտրության ոչ արժանի թեկնածուին շատ դժվար կլինի հաջողությանք չարանենք հնարքների դիմել, առանց որոնց չափազանց հաճախ չեն անցնում ընտրությունները, և ընտրողները առավել մեծ հավանականությամբ գերապատվություն կտան ամենագրավիչ հատկանիշներն ունեցող թեկնածուներին, ինչպես նաև առավել հայտնի ու հաստատուն հեղինակություն ունեցողների:

Չենք թաքցնում, որ այստեղ, ինչպես նաև շատ այլ դեպքերում, ուսկե միջին գոյություն ունի, որի երկու կողմերում բացահայտվում են անխուսափելի կեղծիքներ: Չափազանց մեծացնելով մեկ ներկայացուցիչ ընտրողների թիվը, մենք նրան դատապարտում ենք անբավարար տեղեկացվածության տեղական հանգամանքների ու շահերի առումով, հավասարապես՝ չափազանց նվազեցնելով այդ թիվը, ներկայացուցին դատապարտում ենք նրանցից ծայրահեղ կախվածության և դրանով գրկում ենք համաժողովրդական շահերը ընդգրկելու ու պաշտպանելու ունակությունից: Այդ առումով դաշնային սահմանադրությունը հաջող որոշում է ներկայացնում իրենից. կարևոր ու համընդիանուր վճիռները փոխանցվում են համաժողովրդական օրենսդրությանը, իսկ տեղականներն ու նաև նախագործների օրենսդրությանը:

Մյուս տարբերությունն այն է, որ ներկայացուցիչների իրավասությունները հանրապետական կառավարության մեջ մարմնավորում են մեծ թվով քաղաքացիների կամքը և տարածվում են ավելի մեծ տարածքի վեա, քան դեմոկրատական կառավարությունում: Եվ հենց այդ հանգամանքը հանցավոր ընկերակցությունների հանգուցավորումները դարձնում է ավելի նվազ վտանգավոր առաջինի դեպքում՝ քան երկրորդի: Որքան ավելի սակավաճարդ է հասարակությունը, այնքան քիչ է այն կազմող բացահայտ կուսակցությունների ու շահերի թիվը. որքան հաճախ քաղաքացիների մեծամասնությունը լինում է մեկ կուսակցության համակիր, իսկ որքան քիչ են նման մեծամասնություն կազմող անձերը, և որքան փոքր

նրանց զբաղեցրած տարածքը, այնքան ավելի հեշտ նրանք կարող են միմյանց հետ պայմանավորվել և իրենց բռնությունների մտադրությունները իրականացնել: Ընդլայնեք գործողությունների ոլորտը, և դուք կստանաք կուսակցությունների ու շահերի բազմազանություն. նկատելիորեն կնվազի հավանականությունը, որ մեծամասնությունը պատրվակ կունենա ոտնձգություններ ծեռնարկել մնացած քաղաքացիների իրավունքների վրա: Եվ եթե նման բան առկա է, բոլորին, ովքեր դա կընդունեն, դժվար կլինի միավորել իրենց ուժերը և միասին հանդես գալ:

Այստեղից ամենայն ակնհայտությամբ բխում է, որ հանցավորության սանձահարման գործում մեծ հանրապետությունը փոքրի համեմատ ունի նույն առավելությունները, ինչ հանրապետությունն ունի ժողովրդավարության հանդեպ, և միևնույնը պետք է ասել նահանգների միության մասին՝ մյուս նահանգների համեմատությամբ, որ մտնում են այնտեղ: Արդյո՞ք այդ գերազանցությունը հնարավորություն տալիս է ներկայացուցիչներին ընտրել այն քաղաքացիներից, ում լրսավոր հայացքները և առաքինությունները թույլ են տալիս վեր կանգնել տեղական նախապաշարումներից և անարդարացի մտադրություններից: Չենք ժխտում, որ Միացյալ Նահանգների ներկայացուցչությունը մեծ հավանականություն ունի այդ անհրաժեշտ արժանիքները կրելու: Այդ առավելությունը քաղաքացիների անվտանգության առավել մեծ երաշխիքների մեջ է իբրև հետևանք կուսակցությունների մեծ բազմազանության գերազանցության՝ ի հակակշիռ այն վիճակի, եթե ինչ-որ մի կուսակցություն կարող է թվային գերազանցության բերումով մյուսներին նեղել: Յավասարաչափ մեծանո՞ւմ է քաղաքացիների անվտանգությունը՝ շնորհիվ կուսակցությունների բազմազանության մեծացման Միության շրջանակներում: Վերջապես՝ առավելությո՞ւն է, որ այն առավել մեծ խոչընդոտ կլինի անարդարացի և շահագրգիռ մեծամասնության դավադրության և գաղտնի ցանկությունների դեմ: Եվ այս դեպքում էլ արդեն իրենք՝ մեծ տարածքները, որ ունի Միությունը, մեզ շոշափելի առավելություններ են տալիս:

Հանցավոր ընկերակցությունների առաջնորդները կարող են կրակը վառել այն անմիջական նահանգի շրջանակներում, որտեղ ազդեցություն ունեն, բայց հազիվ թե նրանց ուժը բավականացնի այդ հրդեհը տարածել մնացած նահանգներում. այս կամ այն կրոնական աղանդը կարող է վերածվել քաղաքականի դաշնության որևէ մասում, բայց Միության վիթխարի տարածքում գոյություն ունեցող բազում աղանդները կպաշտպանեն մեր համաժողովրդական ժողովները այդ վատրար աղբյուրից բխող վտանգից: Թղթադրամների կատաղի քարոզչությունը, պարտքերի ներման մասին ողբերը, սեփականության հավասարաչափ բաշխման և այլ անարժան ու չարամիտ նախագծերը շատ ավելի նվազ ընդունակ էին զարմացնել Միության ամբողջ կազմը. ճիշտ այդպես նման ախտերը կարող են վարակել ավելի շուտ առանձին շրջաններ և տարածքներ, քան անբողջ նահանգը:

Այսպիսով՝ Միության տարածքի վիթխարիության և կառույցի մեջ մենք տեսնում ենք հանրապետական դեղամիջոց տկարությունների դեմ, որով ավելի շատ ախտահարված են հանրապետական կառավարությունները: Ու հենց այդ պատճառով, նոյն չափով, ինչ չափով ուրախանում ու հպարտանում ենք մենք, կրելով հանրապետականների կոչումը, բոլոր ուժերով պիտի սնենք ու խնամենք մեր մեջ ֆեդերալիստների կոչման ոգին:

## ՁԵՅՍՍ ՄԵԴԻՍՈՆ՝ ԱԼՔՍԱՍՆՐ ՀԱՍԻԼՏՈՒԻ ՔԵՏ ՀԱՍՎԱՏԵԴ 1788 թ., 6 փետրվարի ՆՅՈՒ ՅՈՐՔ ՆԱՐԱՆԳԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Այնուամենայնիվ, ինչ անել, որ գործականում ապահովվի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը, որ գրված է Սահմանադրության մեջ: Միակ հնարավոր պատասխանը, որ, թեկուզ բոլոր արտաքին միջոցառումները անբավարար են, բացը կարող է լրացվել՝ ստեղծելով կառավարման այնպիսի ներքին կառույց, որ այն կազմող մասերը իրենք միջոց

դառնան յուրաքանչյուրին պահելու իրեն հատկացված տեղում: Այս կարևորագույն միտքը ամբողջովին չզարգացնելով՝ համարձակվում եմ մի քանի ընդհանուր դիտարկումներ արտահայտել, որոնք, գուցե, բավարար լույս կսփռեն և այդ պատճառով մեզ թույլ կտան առավել ճիշտ դատել կառավարման սկզբունքների ու կառուցվածքի մասին, որոնք նշված են կոնվենտի նախագծում:

Հաստատուն իիմք ունենալու նպատակով իշխանության առանձին ու ինքնուրույն ճյուղերի ինստիտուտի համար, որ որոշակի չափով համատեղ նախատեսում են իրեն ազատության պահպանման կարևորագույն պայման, ակներևաբար, կպահանջվի, որ յուրաքանչյուր իշխանություն ունենա իր ազատությունը և, հետևաբար, կառուցվի այն իիմքի վրա, եթե այն ներկայացնող պաշտոնատար անձինք հնարավորինս քիչ մասնակցություն ունեն այլ պաշտոններում պաշտոնատար անձանց նշանակմանը: Այս սկզբունքի խստիվ պահպանմանք անհրաժեշտ է, որ բարձրագույն գործադիր, օրենսդիր ու դատական իշխանություններում բոլոր նշանակումները բխեն իշխանության սկզբնաղբյուրից՝ ժողովրդից և ընթանան մինյանց հետ չհաղորդակցվող հուներով: Յնարավոր է, որ տարբեր օրգանների կառուցման այս ծրագիրը գործնականում ավելի պարզ լինի, քան մտովի պատկերացնում ենք: Թեպետ որոշ բարդություններ, ինչպես և լրացուցիչ ծախսեր, անխուսափելի են: Այդ պատճառով սկզբունքից որոշ շեղումներ են հնարավոր: Մասնավորապես՝ նպատակահարմար չէ պնդել նրա խստիվ կիրառումը դատական գերատեսչության առումով. առաջին՝ քանի որ ճակատագիրը պահանջում է առանձին որակներ, այդ պաշտոնի ներկայացման առաջին պայմանը ընտրության այն ձևը է լինի, որը լավագույնս ապահովում է այդ որակները, երկրորդ՝ քանի որ դատական գերատեսչությունում պաշտոնի նշանակումը անժամկետ է, այն, անկասկած, արագ արմատախիլ կանի կախումը նրանցից, ովքեր նշանակել են:

Հավասարապես ակնհայտ է, որ գերատեսչություններից յուրաքանչյուրի ծառայության մեջ գտնվող անձինք որքան

հնարավոր է պետք է քիչ կախում ունենան այլ ծառայությունների անձանցից և այն բարիքներից, որ իրենց ծառայությամբ ստանում են: Եթե գործադիր իշխանության գլուխը կամ դատավորները այդ առումով կախված են օրենսդիրներից, գործողությունների ազատության մասին խոսք լինել չի կարող՝ նրանց անկախությունը պետք է ապահովվի գործնականում:

Բայց գլխավոր երաշխիքը տարբեր տեսակի իշխանությունների մի գերատեսչությունում կուտակման դեմ՝ այն է, որ իշխանության այս կամ այն մարմինը ղեկավարող մարդիկ ունենան սահմանադրական միջոցներ և անձնական պատճառներ՝ դիմակայելու կողմնակի ներխուժումներին: Այս և այլ դեպքերում, պետք է լինեն պաշտպանական միջոցներ, որ ի զորու են ոտնգործությունները կանխել: Փառասիրությանը պետք է փառասիրությունը դիմակայի: Գերատեսչության ղեկավարի շահերը պետք է կապված լինեն նրա սահմանադրական իրավունքների հետ, որ գործում են տվյալ իշխանության կառուցում: Ցավոք, նման խաղաշարժերը եւ խորանանկությունները, որոնց հարկադրված ենք դիմել՝ խանգարելու իշխանության չարաշահումները, չեն զարդարում մարդուն: Մարդիկ իրեշտակներ լինեին՝ ոչ մի կառավարման անհրաժեշտություն չեր լինի: Եթե մարդկանց կառավարեին իրեշտակները, կառավարության վրա ոչ մի վերահսկողության անհրաժեշտություն չեր լինի: Բայց այն կառավարության ստեղծման մեջ, որտեղ մարդկանց ղեկավարելու են մարդիկ, գլխավոր դժվարությունն այն է, որ նախ և առաջ պետք է ապահովել կառավարողների վերահսկողությունը կառավարվողների վրա, իսկ որպանից հետո պետք է կառավարողներին պարտավորեցնել իրենք իրենց վերահսկել: Ժողովրդից կախումը, անկասկած, նախ և առաջ ապահովում է վերահսկողությունը կառավարության վրա, բայց փորձը մարդկությանը սովորեցնում է լրացուցիչ նախազգուշացումները այստեղ բնավ ավելորդ չեն:

Յակառակ ու նրգակցող շահերի այս խաղը, լավագույն մտադրությունների պակասը կարելի է դիտարկել մարդկային փոխհարաբերությունների ամբողջ համակարգում՝ մասնավոր

և հասարակական: Դատկապես հստակ այն երևուն է իշխանության հիերարխիկ աստիճանակարգի վրա, որտեղ մշտական նպատակ է պաշտոնները բաժանել և դասակարգել այնպես, որ դրանցով գրադպող յուրաքանչյուր մարդ վերահսկի մյուսին, որ յուրաքանչյուր պաշտոնյայի անձնական շահը ծառայի հասարակական իրավունքների պաշտպանությանը: Պետության բարձրագույն պաշտոնների բաշխման մեջ խելամտության հայտնագործած հնարքները պակաս անհրաժեշտ չեն:

Սակայն հնարավոր չէ յուրաքանչյուր գերատեսչությանը ինքնապաշտպանության հավասար միջոցներ տալ: Կառավարման հանրապետական ծևի դեպքում օրենսդիր իշխանությունը անխուսափելի հորեն իշխող է դառնում: Բայց այդ պիտի դեմ դեղամիջոց կա. բաժանել տարրեր ճյուղերի և տարրեր ծևերով ընտրել ներկայացուցիչներին, յուրաքանչյուրի գործունեության հիմքում դնել տարրեր սկզբունքներ, այնքան քիչ մինյանց հետ կապված, որքան դա թույլատրելի է ընդհանուր պարտավորությունների և ժողովրդից ընդհանուր կախվածության պարագայում: Բացառված չէ, որ անհրաժեշտ լինեն և այլ նախազգուշական միջոցառումներ՝ վտանգավոր ոտնագությունների դեմ: Եթե օրենսդիր իշխանության պատկառելի քաշը պահանջում է այն բաժանել, գործադիրի թուլությունը, ընդհակառակը, պահանջում է ամրապնդել: Առաջին հայացքից գործադիր իշխանության բնական պաշտպանությունն օրենսդիր իշխանությունից կարող է լինել վետոյի իրավունքը: Սակայն դա, թերևս, այնքան էլ անվտանգ գենք չէ և ինքնին վերցրած դեռ բավարար չէ: Սովորական դեպքերում այն, հնարավոր է, չեն օգտագործի անհրաժեշտ կոշտությամբ, արտառող դեպքերում այն կարող է ուխտադրժորեն խլվել: Բայց չի կարելի այն բացը, որ ունի վետոյի իրավունքը, լրացնել՝ սահմանելով նախապես պայմանավորված որևէ կապ առավել թույլ գերատեսչության և առավել թույլ ճյուղի և առավել ուժեղի միջև, որի շնորհիվ առավել թույլ ճյուղը կակսի պաշտպանել գործադիր իշխանության սահմանադրական իրավունքները՝ չսահմանափակելով իր սեփական գերատեսչության իրավունքները:

Եթե սկզբունքները, որոնց վրա հենված են այս դատողությունները, ճիշտ են, իսկ ես կարծում եմ, որ հենց այդպես է, ապա դրանք կիրառելով իբրև չափանիշ սահմանադրությունների նկատմամբ մի քանի նահանգներում և դաշնային սահմանադրության նկատմամբ, մենք կտեսնենք, որ եթե վերջինները լիովին չեն համապատասխանում, առաջինները, առավել ևս բոլորովին ի գորու չեն դիմանալ նման փորձությունների:

Ավելին՝ Ամերիկայի դաշնային համակարգին մասնավորապես վերաբերվում են երկու նկատառումներ, որոնց լրւյսի ներքո այդ համակարգը ուսումնասիրման համար շատ հետաքրքիր է դարնում:

Առաջին: Մեկ առանձին հանրապետությունում ամբողջ իշխանությունը՝ ժողովրդից օտարվելով, փոխանցվում է առանձին կառավարությանը, իսկ նրա բաժանումը ինքնուրույն և տարրեր գերատեսչությունների միջև՝ պաշտպանություն է բռնազավորումից: Միավորված հանրապետության մեջ, որպիսին են Միացյալ Նահանգները, իշխանությունը, օտարվելով ժողովրդից, նախ բաժանվում է երկու ինքնուրույն կառավարությունների, ապա նրա մի մասը, որը տրվում է նրանցից յուրաքանչյուրի տնօրինությանը, երկրորդ անգամ բաշխվում է ինքնուրույն ու բաժանված գերատեսչությունների միջև: Այսպիսով՝ ժողովրդի իրավունքների պաշտպանվածությունը կրկնակի երաշխավորվում է: Կառավարությունում վերահսկում են միմյանց, և միաժամանակ յուրաքանչյուրը վերահսկում է ինքն իրեն:

Երկրորդ: Դանրապետության համար շատ կարևոր է ոչ միայն պաշտպանել հասարակությունը կառավարողների ճաշումներից, այլև պահպանել նրա մի մասը մյուսի կողմից: Քաղաքացիների տարրեր դասակարգեր անխուսափելիորեն ունեն տարրեր շահեր: Եթե ընդհանուր հետաքրքրությունը միավորում է մեծամասնությանը, փոքրամասնության իրավունքները կարող են սպառնալիքի տակ հայտնվել: Այդ չարիքի դեմ երկու միջոց կա միայն. առաջին՝ ստեղծել մեծամասնությունից անկախ ուժ, այսինքն բուն ժողովրդից, երկրորդ՝ հասարակությունը բաժանել քաղաքացիների այնքան մեծ

առանձին խմբերի, որը յուրաքանչյուր միավորում անարդարացի նպատակներով քիչ հավանական կդարձնի, և նույնիսկ անհնար: Առաջին միջոցը հաճախ են օգտագործում կառավարողները՝ ժառանգաբար ստանալով իշխանությունը կամ իրենք վերցնելով: Այդ պաշտպանությունն այնքան էլ հուսալի չէ. ուժը, որ կախված չէ հասարակությունից, կարող է հավասարապես պաշտպանել և մեծամասնության անարդարացի հայացքները, և փոքրամասնության օրինական շահերը, և ընդվզել երկուսի դեմ էլ: Երկրորդ միջոցը կմարմնավորվի Միացյալ Նահանգների դաշնային հանրապետության մեջ: Քանի ամբողջ իշխանությունը այնտեղից է բխում և կախված է հասարակությունից, հասարակությունն ինքը կբաժանվի այնքան մասերի, շահերի ու խմբերի, որ առանձին քաղաքացիների կամ փոքրամասնության իրավունքներին հազիվ թե սպառնա միավորված շահագրգիռ մեծամասնությունը: Ազատ կառավարման դեպքում քաղաքացիական իրավունքները պետք է լինեն նույնագիս անվտանգության մեջ, ինչպես կրոնական իրավունքները: Առաջին դեպքում նրանց անվտանգությունը ապահովում է շահերի բազմազանությամբ, երկրորդ դեպքում աղանդների բազմազանությամբ: Երկու դեպքերում էլ անվտանգության աստիճանը կախված է տարբեր շահերից և աղանդների բվից, իսկ դա իր հերթին կախված է երկրի տարածքների չափերից ու բնակչության բվից, որը ենթարկվում է միևնույն կառավարությանը: Այս տեսակետից դաշնային համակարգը հատկապես կարող է երաշխավորվել հանրապետական կառավարման բոլոր անկեղծ ու հավատարիմ դաշնակիցներին: Քանզի պարզ է, որ ինչպես Միության տարածքը կազմվելու է իր մեջ ներգրավվող ոչ մեծ դաշնություններից կամ նահանգներից, բռնապետական մեծամասնությանը ավելի ու ավելի հեշտ կլինի միավորվել, իսկ հանրապետական կառավարման յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները անվտանգ դարձնելու հնարավորությունը՝ կնվազի, և հետևաբար, անհրաժեշտ է համանասնորեն անրապնել վիճակը և կառավարության անդամների անկախությունը, որոնց էլ տրված է այդ անվտանգության ապահովումը: Կառավար-

նան նպատակը արդարությունն է: Արդարությունը քաղաքացիական հասարակության նպատակն է: Եվ այդ նպատակին այն միշտ ձգտել է ու կձգտի, քանի դեռ չի հասել կամ քանի դեռ այդ ձգտումներում չի կորցրել բուն ազատությունը: Այսպես կառուցված հասարակության մեջ, ուր առավել ուժեղ կուսակցությունների համար ոչինչ չարժե միավորվել ու նեղել առավել թույլին, լիովին հնարավոր է, ճիշտն ասած, որ անարխիա տիրի՝ ճիշտ այնպես, ինչպես բնության մեջ, որտեղ ավելի թույլ էակը պաշտպանված չէ ուժեղի բռնությունից: Եվ նույն կերպ վերջին դեպքում նույնիսկ ավելի ուժեղների մշտական անվստահության վիճակը նրանց թելադրում է այնպիսի ելք, որ պետք է ենթարկվել իշխանությանը, որը կպաշտպանի և ուժեղներին, և թույլերին, նույնպես քաղաքացիական հասարակության մեջ առավել ուժեղ կլանները կամ կուսակցությունները աստիճանաբար, առաջնորդվելով միևնույն պատճառներով, կիանգեն կառավարություն ունենալու ցանկությանը, որը իր պաշտպանության տակ կվերցնի բոլոր կուսակցությունները՝ առավել թույլերին և առավել ուժեղներին հավասարապես: Կասկած չկա, որ եթե Ռոդ Այլենդ նահանգը, դուրս գալով դաշնությունից, ինքն իր հայեցողությանը մնա, իրավունքների երերունությունը՝ չապահովված ժողովրդական իշխանության դեկավարությամբ այդքան փոքր տարածքում, կիանգեցնի մշտական կամայականությունների հանցավոր մեծամասնության կողմից, և շատ շուտով նահանգը կառավարելուն կկոչեն այն իշխանությունը, որը լիովին անկախ է ժողովրդից՝ կոչոյն նույն այն մեծամասնությունը, որի անպետք կառավարումը հարուցել է նույն այդ անհրաժեշտությունը: Միացյալ Նահանգներում՝ հանրապետության վիթխարի տարածքով, այնտեղ տարբեր շահերի, կուսակցությունների և կրոնական աղանդների գերակայությամբ՝ հազիվ թե հնարավոր է մեծամասնության միավորում՝ ամբողջությամբ հասարակությունից վերցված, որևէ այլ նպատակով՝ բացի արդարությունը և համընդհանուր բարեկեցության ձեռքբերումը: Այսպիսով, համարյա վերանում է փոքր կուսակցության մեջի ազդեցության տակ հայտնվելու վտան-

գը, կառավարության մեջ ներմուծելով ուժեր՝ անկախ մեջ կուսակցությունից կամ այլ խոսքերով՝ անկախ բուն հասարակությունից: Նույնքան կասկածի ենթակա չէ, ինչպես նույնքան կարևոր է, որ այն գոյություն ունի իրականում, դրանով այն ավելի ընդունակ է ինքնակառավարման: Իսկ բարեբախտաբար, հանրապետության գործերի համար այդ իրական ոլորտը կարող է ընդլայնվել մինչև վիթխարի չափեր, եթե չվախենանք խելամիտ վերափոխումներից և դաշնային իշխանության որոշ շեղումներից:

## ԸՆԾԱ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

**Ելույթ առաջին**

**Թանկագին հայրենակիցներ**

Գործն արված է: Կառավարության հեղինակությունը ոչնչացված է: Ասիա նրանք՝ այդ նախկին նախարարները, որ փառաբանվել են ապաշնորհությամբ, արհամարհվել թալանի պատճառով ու ատելություն են հարուցել իրենց բռնություններով և արդեն կրում են հասարակական պարսավանքի խարանը: Նրանք դավաճանել են իրենց տիրոջը՝ իրենց ժողովրդին, դավաճանել են երկրին, նրանք իրենց ոճրագործություններով հեղինակագրկել են իշխանությունը ու պետությունը հասցրել են կործանման եզրին:

Դեռ վերջերս նրանց ստոր համակիրները անդում էին, որ թագավորներն իրենց իշխանությամբ պարտական են միայն Տեր Աստծուն և սեփական սրին, որ նրանք նույնպիսի տերեր են իրենց հպատակների համար, ինչպես հովիվը՝ իր հոտի, որ ժողովրդին պետք է սովի մատնել, որ ժողովուրդը իրենց թողնի ապրել, որ պետք է նրան կուրացնել՝ ենթարկեցնելու համար, և վերջապես, ժողովուրդն այնքան ավելի հնագանդ է, որքան ուժեղ է շահագործվում: Խելագարնե՞ր: Նրանք չգիտեին, որ ամեն համբերություն իր սահմանն ունի, որ տառապանքներից տանջահար՝ խիզախ ժողովուրդը անդուլ ձգտում է խարանից ազատվել, որ հուսահատության հառաջանքները կարող են վերածվել կատաղության ծիչերի, և վերջապես՝ ազատության կոչերը միշտ պատրաստ են ապստամբության կրակներ վառել:

Ծնորհիվ փիլիսոփայությամբ լուսավորված լինելուն՝ արդեն անցել է այն ժամանակը, երբ իր տգիտության մեջ բթացած մարդն իրեն ստրուկ էր համարում: Բռնապետության կամակատարները, իրենց կործանարար համոզմունքներից

անաշելով՝ լրում են, փոխարենը բոլոր կողմերից հնչում են իմաստունների խոսքերը, որոնք տիրակալներին մատնանշում են, որ յուրաքանչյուր պետության մեջ իշխանությունը պատկանում է ամբողջ ժողովոդին, որ հենց ժողովուրդն է օրինական իշխանության իսկական աղբյուրը, որ թագավորները օրենքների ճիշտ կատարումը վերահսկելու համար են, օրենքներ, որոնց իրենք էլ ենթակա են, որ նրանց հզորությունը հենվում է արդարության պաշտպանության վրա, որ պիտի տարածվի նրանց ամենավերջին հպատակի վրա էլ: Միսիքարական ծշմարտություններ են: Ինչո՞ւ են նրանց մասին արագ մոռանում երջանիկ ժամանակներում և հիշում են միայն դժբախտությունների պահին:

Բայց ինչ հոգեցունց տեսարան է բացվում մեր աչքերի առաջ: Օ՛, իմ հայրենիք: Անկուշտ գիշատիչները հոշոտում էին քո մարմինը, բարբարոսների բազուկները սուր էին խրում քո կուրծքը. Ես դեռ տեսնում եմ քեզ կորուստներից թուլացած, սովոր տաճահար, վերքերով պատված ու արնաքամվող:

Վաղուց արդեն, քո դժբախտությունների ծանրության տակ՝ դու սգում ես լրության մեջ: Եվ միայն տանջանքների անծայրությունը, վերջապես, քո կրծքից հուսահատության ճիշեր պոկեց: Նրանք հասան քո աղքայի ականջին, և նրա սիրտը կարեկցանքով լցվեց: Նա անձամբ տեսավ քո վերքերը ու նրա հոգին ցնցվեց: Դիմա նա քեզ օգնության է շտապում: Նա խորապես զայրացած է իր ուխտադրուժ ծառաների արարքներից, որ ի չարն են գործադրել իրենց իշխանությունը և ձգտում է վերջ դնել հանցավոր հանդգնությանը նրանց, ովքեր կգայթակղվեն հետևել սրիկանների օրինակին: Այրան անձամբ է ուզում ձեզ պաշտպանել նրանց կատադրությունից:

Դու երջանիկ կլինես, եթե արքայի բարեգութ մտադրությունները իրագործվեն՝ հակառակ քո անդորրի թշնամիների: Ավելի երջանիկ կլինես, եթե քեզ մասերի չբաժանեն քո սեփական զավակները: Ոմանք՝ նենք սիբարիտները, աղքատության երդումներ են տալիս և նույն ժամանակ բարձրաշխարհիկ հաճույքների հորձանքում կողոպտում են աղքատների հասանելիքը, հնազանդության երդումներ են տալիս և նույն

Ժամանակ պահանջում են իրենց փառասիրությունը շոյող արտօնություններ, իրենց անվանում են խաղաղարար Աստծո ծառաներ և նույն ժամանակ ամենուր խառնակության ու թշնամության կրակն են վառում: Մյուսները՝ ծիծաղաշարժ պալաղինները՝ ձգտելով (խելահեղության նոպայում) վախեցնել տիրակալին և նրան առաջարկելով իրենց օգնությունը քո հանդեպ հաշվեհարդարում, քո գլխին կործանում ու կողոպուտ են բերում: Բայց՝ զինված հավատով սեփական ուժերի նկատմամբ, դու սանձեցիր որոտը և ճնշեցիր այդ հանցավոր կուսակցություններին բանականության փաստարկների ծանրությամբ: Կուսակցություններից մեկը արդեն շփոթահար է մի հարգարժան պրելատի դրսնորած սիրանքներից: Բայց նրա հետքերով գնալու ուժ չունի: Այդ կուսակցությունը լրություն է պաշտպանում և սպասում է իր ճակատագրի վճռին՝ իրադարձությունների ընթացքում, նույն ժամանակ մյուսը, առանձին նշանավոր անհատների հիմնալի վարքից ստորացած՝ թաքցնում է իր անհարդար նկրտումները և ձգտում է խարել քեզ ձևացյալ մեծահոգությամբ:

Օ՛, ֆրանսիացիներ: Զեր տանջանքներին վերջ կդրվի, եթե դուք հոգնել եք հանդուրժել. դուք ազատ եք, եթե ունեք ազատ լինելու քաջություն: Ամբողջ Եվրոպան է ծափահարում ձեր գործի արդարությանը: Վատահ ձեր իրավունքների օրինականությանը, ձեր թշնամիները դադարել են դիմադրել պահանջներին: Այդ մարդիկ, հեռու լինելով պետության ծախսեր հարուցել իրաժարվելուց, որից մինչև այժմ միայն արյուն են քաշել, պատրաստ են միայնակ մարել պետական պարտք՝ միայն թե դուք իրաժարվեք ձեր պահանջները Ազգային ժողովին ներկայացնելուց: Մարել ամբողջ պարտքը անձա՞մբ: Եվ որտեղից են վերցնելու միջոցներ՝ անդունդը ծածկելու: Ինքնամեծար փրկարարներ: Կգտնվի՝ նրանց մեջ թեկուզ հարյուր մարդ, որ չեն աղտոտվել շքեղ կյանքով, վատնումով, մոլեխաղերով, իրենց սեփական կառավարիչներին թալանելով: Կգտնվի՝ նրանց մեջ հարյուր մարդ, որ ծանրաբեռ չէ պարտքերով: Նայեք նրանց հողերին, որ դատական կալանքի տակ են, կամ ամայի, կամ վաճառքի տակ գտնվող, նայեք նրանց

կալվածքներին, որ դատական կատարածուների կամ խնամատարների ձեռքում են: Բայց նույնիսկ այն դեպքում, եթե նրանք խաբում են իրենք իրենց, եթե նրանք իսկապես կարողանային, եթե իրոք ցանկանային իրենց կամքով կառավարության ազատել պարտքերից, այդ դեպքում նրանց ճոխ գոհաբերությունը կլիներ միայն ժամանակավոր միջոց, քանի դեռ պետությունը կարիք ունի մշտական և հուսալի միջոցների: Զգուշացեք նրանց թակարդներից: Նրանք պատրաստ են մի անգամ բաժանվել ցանկացած գումարից, միայն թե հետո չվճարեն ամբողջ կյանքում: Քսակները բացելով մեկ անգամ, նրանք իրենցը կդարձնեին կռվի դաշտը՝ հավերժ կթուլացնեին ձեզ, կծանրացնեին ձեր շղթաները և կշարունակեին սնվել ձեր քրտինքով ու արյունով:

Նրանք որոշել են ձեզ չճանաչել ազգի գլխավոր խավը, և թեպետ իրենց նախկին ճառերն այսօր չեն արտասանում, նրանց վարքագիծը բոլորովին չի փոխվել: Բնության մեջ իրենցից բացի ոչ մեկին չտեսնելով, նրանք իրենց ամբողջ ազգի տեղն են դնում: Թող նրանք ընդմիշտ իրենց վրա վերցնեն պետության բոլոր ծախսերը, թող աջակցեն ու պաշտպանեն նրան, իոդ տանեն հանուն նրա բարգավաճման, թող մշակեն դաշտերը, կառուցեն քաղաքները, մշակեն հանքերը, բանեցնեն արհեստանոցները, աշխատեցնեն մանուֆակտուրաները, առևտուրը վարեն, արդարադատությունն իրականացնեն, երիտասարդներին սովորեցնեն, ծովն իջեցնեն նավերը, զինեն նավատորմն ու բանակը պահեն: Դուք, դժբախտ քաղաքացիներ, հեռու փախեք անշնորհակալ հայրենիքից, որ պարտական է ձեզ ամեն ինչով և միաժամանակ մերժում է ձեզ: Բայց ո՞ւր տարավ ինձ իմ սրբազն սլացքը: Ոչ, ոչ, քաղաքացիներ, մի լրեք ձեր օջախները, զգացեք ձեր ուժը: Այդ դուք եք պետության հարստությունն ու հզորությունը: Ձեզ գլխավորող արքան միշտ կմնա տիեզերքի ամենահզոր տիրակալը, առանց ձեզ նա, մնալով ազնվականության ու հոգնորականության գլխավորը, միշտ կլինի սովորական սենյոր՝ իր վասալների մեջ: Այդ դեպքում արքան կնմանվեր կայսրության այն մանրիկ իշխաններին, որոնք հարկադրված են

հզոր հարևանի հովանավորությունն աղերսել՝ նրա կողմից կուլ գնալու վախից և շատ արագ կդադարեր լինել մեծ տիրակալներից մեկը: Դե ինչ եմ ես ասում: Առանց ձեզ, Ֆրանսիան, որ ոռօգված է ձեր քրտինքով ու արցունքով, կզրկվեր իր բերքից ու կվերածվեր անապատի: Առանց ձեզ կսպառվեր նրա բերդիության աղբյուրը և արքան ինքը սովից կմեռներ: Թող նրանք փառասիրաբար պարծենան իրենց սխրանքներով, իրենց ծառայությամբ, ի՞նչ գին ունեն նրանց սխրանքները ձերի համեմատությամբ: Կարո՞՞ն էր արքան՝ հարկադրված լինելով ընտրել նրանց ու ձեր միջև, թեկուզ մի վայրկյան տատանվել: Սակայն, փառք երկնքին, նա չի հայտնվի նման ծանր ընտրության առաջ, և ազգը չի պառակտվի, չի մասնատվի, չի ոչնչանա: Բանականության լույսը աստիճանաբար ցրում է խավարը, որ պատել էր ձեր թշնամիների աչքերը. կշռադատելով ու ծանրութեթև անելով իրենց սեփական իրական շահերը, նրանք կդադարեն ծառանալ արդարության դեմ: Օ՛, իմ հայրենակիցներ: Ձեր տանջանքների անծայրածիրությունը ստիպել է ձեզ գիտակցել ապաքինման անհրաժեշտությունը: Ձեզ եզակի հնարավորություն է տրված, որ դուք նորից ստանաք ձեր իրավունքները: ճանաչեք վերջապես ակնթարի արժեքավորությունը: Թող իմաստնությունը ձեր բոլոր քայլերն ուղղորդի, բայց անհողողոդ մնացեք: Ինչ առավելություններ էլ ձեզ խոստանան, նույնիսկ եթե ձեր թշնամիները խոստանան հարկային բեռք իրենց ուսերին վերցնել, հրաժարվեք ամեն ինչից, քանի դեռ ձեր իրավունքները մեկընդմիշտ չեն ամրագովել: Ազգային ժողովում՝ ահա որտեղ դուք պետք է հանդիսավորապես դրանք հաստատեք և սրբացնեք դարերով:

Ինչի իրավունք չունեք դուք և ինչի կարիք ունեք: Այն վիճակուն, ինչ իմա դուք եք, դուք պիտի ոչ միայն պահանջեք անհրաժեշտը՝ որ կերակրվեք, հագնվեք, բնակարան ունենաք, ձեր երեխաներին դաստիարակեք ու ոտքի կանգնեցնենք. դուք պիտի, բացի դրանից, ապահովեք ձեր անձնական ազատությունը նախարարների կամայականություններից,

ձեր անմեղությունն ապացուցեք անարդար դատավորներին, պաշտպանեք ձեր կանանց ու դուստրերի պատիվը տիտղոսակիր անառակներից, իսկ ձեր սեփական բարի անունը՝ ազդեցիկ գրապարտիչներից, արդարադատության հասնեք հզոր հալածիչներից, և, վերջապես բարենպաստ պայմաններ ստեղծեք սեփական ընդունակությունների զարգացման ու երջանկության հասնելու համար: Դա ձեր պարտքն է ինքներդ ձեր առաջ, ձեր որդիների, հայրենիքի ու արքայի: Դա միակ միջոցն է ազգը բարգավաճ, հարգարժան ու հզոր դարձնելու և ֆրանսիացու անունը փառքի գագաթին հասցնելու համար:

### **ԵԼՈՒՅԹ ԵՐԿՐՈՐԴ**

Ոչ, իմ հարգելի հայրենակիցներ, չկա այնպիսի միջոց, որ մեր թշնամիները չօգտագործեն բարձրագույն ժողով չիրավիրելու համար, այն ժողովը, որտեղ դուք քաղաքացու իրավունքներ ձեռք կբերեք: Ամեն օր նրանք ձեզ համար նոր որոգայթներ են լարում: Երեկ նրանք ձգտում էին ձեզ շահագործել, այսօր ուզում են ձեզ բաժանել՝ անպտուղ ջանքեր, քանի ձեզ հետ են ձեր առաքինությունները:

Արդեն երրորդ խավի բոլոր դասակարգերը, ընդհանուր շահերով միավորված, մերձեցել են ու հաղորդակցվում են իրար հետ: Իմ թանկագին հայրենակիցներ, ուշադրություն դարձեք սեփական ուժերին և դա արեք ոչ միայն հանուն նրանց չափման (նրանք անթիվ ու անհաղթահարելի են), որքան հանուն ձեր այն եղբայրներին ճանաչելու, ովքեր պատրաստվում են ձեզ դավաճանել և նրանց, ում վրա դուք իրավ կարող եք հենվել:

Զեր թշնամիները ձեր խավից ուզում են բաժանել ֆինանսիստներին, բայց այդ ունեսոր մարդիկ բավականաչափ խելամիտ են, որ իրենց զարդարելով դատարկ տիտղոսներով, համընդիանուր ծաղրատեղի չղառնան, որպեսզի նույնանան այն դասի մարդկանց հետ, ովքեր միավորված են միայն ուկու տենդով, որպեսզի հարեն այն կուսակցությանը, որ քանահրուն է իրենց, որոնց բռնապետական հակումները չափանց լավ հայտնի են:

Զեր թշնամիները ուզում են ձեր խավից բաժանել նորաբուխ ազնվականներին, արքայի մարդկանց, քաղաքային իշխանության պաշտոնյաններին: Բայց այդ հարգարժան մարդիկ չափազանց բարձր են կանգնած մանրիկ փառասիրության նախապաշտումներից, որպեսզի չհպարտանան քաղաքու կոչումով, որպեսզի հեռանան իրենց հարգող եղբայրակիցներից և տեղ գրավեն այն կուսակցությունում, որի բռնակալական հակումները հաճախ են զգացել:

Զեր թշնամիները ուզում են ձեր խավից բաժանել փաստաբաններին, դատական աստիճանավորներին, ավելի ցածր աստիճանակարգի դատական պաշտոնյաններին: Բայց անմեղության այդ աննկուն պաշտպանները, օրենքի այդ վիճառումները չգիտեն այլ ազնվորթյուն, քացի զգացմունքների ազնվորթյունից, նրանց, իրենց համոզմունքներին հավատարիմներին, չի հաջողվի տեսնել կուսակցությունում, որի բռնակալական հակումներն այնքան հաճախ հակադարձել են:

Զեր թշնամիները ուզում են ձեր խավից բաժանել հիուրականներին, բայց հավատի այդ հարգարժան ծառաները, ինանալով, որ բոլոր մարդիկ եղբայրներ են և մշտապես քարոզելով հնազանդություն, չեն հպարտանա բարձրաշխարհիկ շնորհներով, որ մերժում է Ավետարանը: Նրանք չեն գնա այն կուսակցության ետևից, որի բռնակալական նկրտումները ամեն օր ողբում են:

Զեր թշնամիները ուզում են ձեր խավից բաժանել գրողներին, գիտնականներին, փիլիսոփաններին, բայց այդ անգին մարդիկ, որոնց ամբողջ կյանքը ծեզ լուսավորություն պարզելել է ու սեփական իրավունքները ներշնչելը, որ այդքան խանդու պաշտպանում են ձեր գործը և այդքան լավ տարբերում են տաղանդն ու առաքինությունները, մի՞թե կարող են դառնալ արգահատելի դավաճաններ և ընդունել այն կուսակցության կողմը, որի բռնակալական նկրտումների դեմ պայքարում են:

Այսախով, Ֆրանսիայի երրորդ խավը կազմված է ծառաներից, բանվորներից, վարպետներից, արհեստավորներից, առևտրականներից, ձեռնարկատերներից, գյուղացիական տն-

տեսությունների տերերից և ռանտիեներից՝ որ չունեն տիտղոսներ, ուսուցիչներից, արվեստի մարդկանցից, վիրաբուժներից ու բժիշկներից, գրողներից, գիտնականներից, իրավաբաններից, դատական ցածրաստիճան պաշտոնյաներից, տաճարի ծառաներից, ինչպես նաև բանակից ու նավատորմից. անհամար ու անհաղթելի մի լեզիոն, որ ներառում է և լուսավորությունը, և ծիրքը, և ուժը, և առաջինությունը:

Այն գլխավորում են մեծահոգի ու պարկեշտ ազնվականները, պաշտոնյանները, սենյորները, պրելատները, իշխանները, ովքեր մոռանում են իրենց արտօնությունների մասին ու ծառայում են ծեր գործին՝ բավարարվելով հասարակ քաղաքացիների կոչումով:

Այն պետք է գլխավորեին նաև մարդիկ, ովքեր վաղուց բավականին կրօստ են, սենատորները, որ ժողովրդի հայրը դառնալու հավակնություններ ունեն և բարեգործ օրենքների, սակայն պաշտամենտները լրել են երրորդ դասին և երրորդ դասն էլ իր հերթին լրում է նրանց:

Ի՞նչ է նա կորցնում դրանից: Սենատորներին մեղադրում են, որ նրանք միշտ քիչ են հոգ տարել ժողովրդին, բայց միշտ նախանձել են պատրիկների արտօնություններին ու պատիվներին:

Նրանց մեղադրում են, որ նրանք իրենց ներկայացնում են քաղաքում հալածվածների պաշտպան, գյուղերում իրենք են հալածում թույլերին, որ դժբախտություն ունեն նրանց հարևանը լինելու:

Նրանց մեղադրում են, որ ոչ ոք ու երբեք նրանցից արդարատություն չի տեսել նույնիսկ իրենցից չնշինագույնի նկատմամբ:

Նրանց մեղադրում են, որ մերժել են հողային հարկը՝ միայն հասարակական հոգսերի մի մասը կիսած լինելու վախից:

Նրանց մեղադրում են, որ իրենց ձայնը բարձրացրել են ձերբակալությունների կամայական իրամանների դեմ միայն այն ժամանակ, երբ դա վերաբերել է իրենց:

Նրանց մեղադրում են, որ պահանջել են Գլխավոր նահանգների գումարում միայն նոր հարկերի հաստատման հա-

նար, նաև այն բանի, որ նրանք ներկայանում են պէտերի և բարձրագույն հոգևորականների հետ, երբ խոսք է գնում Գլխավոր նահանգների գումարման մեջ երրորդ խավի ներկայությունն արտոնելու մասին:

Նրանց մեղադրում են, որ նրանք դրդել են երրորդ խավին պաշտպանել իրենց իրավունքները, բայց իրենք էլ լրեցնում են նրա ձայնը, երբ այդ խավը ցանկանում է ունկնդրված լինել:

Նրանց մեղադրում են, որ նրանք, գաղտնաբար դրդելով ապստամբության, իրենք կայացնում են ժողովրդի դեմ որոշումներ:

Նրանց մեղադրում են, որ նրանք, անկաշառ պահանջելով իրենց անարդարացիորեն ձերբակալված երկու անդամների ազատությունը, միայն մեկ անգամ են պատրաստակամություն հայտնել վրեժ լուծել զորքերի կողմից սպանված բազմաթիվ քաղաքացիների համար:

Նրանց մեղադրում են, որ սկզբուն նրանք պահանջում էին մամուլի ազատություն՝ գովարանության հույս ունենալով, իետո ջանում էին այն բեկանել՝ վախենալով պարսավանքից:

Նրանց մեղադրում են, որ նրանք, նայած հանգամանքերին, շրջվում են մեկ դեպի ժողովուրդը, մեկ կառավարությունը՝ ջանալով իրենց ատելության գենքը դարձնել նրանց դեմ, ովքեր հակառակվում են իրենց գաղտնի ու փառասիրական ձգտումներին ու ծրագրերին:

Նրանց մեղադրում են, որ նրանք ձգտում են անկախության և հակառակվում են արքային՝ երազելով մի գեղեցիկ օր կիսել նրա իշխանությունը:

Նրանց մեղադրում են դասակարգայնության ոգու համար և զարթելի կողմնակալության:

Նրանց մեղադրում են, վերջապես, փառասիրության, անհնազանդության, ապստամբականության, բռնապետության մեջ, և նրանք նույնիսկ արդարանալու փորձեր չեն անում: Ի՞նչ մտածել այդ լռության մասին: Արժե միայն համադրել նրանց հիասքանչ ճառերը և նողկալի վարքագիծը, նրանց բարոյական կանոնները՝ այդքան մեղմ տեսության մեջ և այդքան կոպիտ գործնականում, նրանց քաղաքականությունը,

որ այդքան իմաստուն է արտաքուստ և այդքան ուխտադրուժ իրականում, հնագանդության անդրւնդը նրանց շուրթերին և հպարտության խորքը նրանց սրտերում, այդքան մարդկայնությունը կանոններում և այդքան դաժանությունը գործերում, այդքան չափավոր մարդկանց և այդքան փառասեր պաշտոնյաներին, այդքան անկաշառ դատավորներին և այդքան անարդար դատավճիռները՝ արժե միայն համադրել այդ ամենը, և իրոք, չես իմանա՞ ի՞նչ մտածել: Ժողովրդի հայրերի հուզիչ կոչումը, որի ետևում նրանք պարծենկոտաբար թարնվում են, իիմա թվում է ընդամենը ծաղրալից կեղծանուն, որ տրվում է վտանգավոր, անմարդկային ու ինքնասիրահարված մարդկանց:

## Ելույթ երրորդ

Ես միշտ դառնությամբ եմ իիշում հասարակության սակավ խելամիտ ուրախությունը թուլույցան արքեպիսկոպոսի նախարար նշանակվելու արիթրով: Նա մեծ խելքի տեր մարդ է, մեծ ընդունակությունների. իհացմունքով ասում էին այն ժամանակ բոլորը՝ ամենալուսավոր հույսերը կապելով նրա հետ: Բայց բավական է, արդյոք, խելոք մարդ լինել, որպեսզի գտնվես կառավարական իշխանության ղեկին, եթե բացակայում են պետական այրին անհրաժեշտ ընդունակությունները, եթե պետական գործերը վարելու փորձ չունես: Եվ հարց է ծագում որտեղից այդ հանդուգն պրելատը կարողացավ առաջին նախարարին անհրաժեշտ տեղեկություններ ձեռքբերել: Բարձրաշխարհիկ հասարակության շրջանակներում, կանանց բուլուարներում, արքունիքի ինտրիգներում:

Բացի այդ, եթե նա նույնիսկ ունենար իր չունեցած ձիրքերը, միայն տաղամդը բավական չէ՝ անհրաժեշտ են բարոյական որակներ. դե ինչ կարելի էր սպասել արքունական ավարտված սինլքորից, այն մարդկանցից մեկից, ում հոգուն մշտապես իշխում են փառասիրությունը, ազահությունն ու ժլատությունը, որոնց արհեստը խաբեությունը, նենգությունը, կողոպուտն ու դավաճանությունն է:

Չարագույժ նախանշան: Եվ զարմանալի չե, որ իրադարձությունները այդքան արագ իրենց բացահայտեցին: Դուք ինքներդ տեսաք, այո, դուք ինքներդ տեսաք՝ ինչպես այդ դժբախտ թալանչին սկսեց իր գործունեությունը նախարարությունում ուսկու իր քաղցը հագեցնելով՝ ժողովրդական ունեցվածքի յուրացումով, իսկ հետո երբ սովոր ժողովրդը հաց խնդրեց, նրանից վերջին քրջերը խւեց: Սակայն այդ պատրանքը, շնորհիվ իրադարձությունների ինչ-որ անօրինակ ընթացքի, շարունակում էր գոյատևել մինչև վերջին օրերը: Իսկ ինչ վերաբերում է նախարարին, ապա նա, գիտակցելով սեփական անկարողությունը և վախենալով մոտեցող որոտից, փախավ երկրից՝ թռնելով նոր գլխապտույտ անդունդ, որի մեջ նետեց ազգին:

Թանկագին իմ հայրենակիցներ, թող անցյալը ձեզ ապագայի դաս լինի, զինվեք խելամտությամբ և ձեր ներկայացուցիչների Ազգային ժողով ընտրության ժամանակ նույնքան խիստ եղեք, որքան նախարարների ընտրության:

Քաղաքական ասպարեզից հեռացրեք կրքոտ ու անխելամիտ երիտասարդներին, ինչպես նաև մարդկանց, որ հայտնի են իրենց թերևանտությամբ, հակված են վատնումի, շքեղության ու անբարոյականության, ժլատության ու փառասիրության:

Գիտելիքներ և առաքինություն՝ ահա հատկանիշներ, որ անհրաժեշտ են երրորդ դասի ներկայացուցչին: Այդ կոչումը տվեք միայն սթափ դատող և փորձված ազնիվ մարդկանց, որոնց ընդունակություններին չեք կասկածում, մարդկանց, որ հասարակական բարեկեցության համար են հոգում, փորձառու են գործերի մեջ, ում շահերը անբաժանելի են ձեր շահերից, լուրջ ու հասունացած մարդկանց կամ նրանց, ում պատկառազրու ծերությունը պսակում են անբասիր ապրած տարիները: Եվ վերջապես, որպեսզի նրանց առաքինությունը պաշտպանեք գայթակղություններից, ընտրեք մարդկանց, որոնք շնորհիվ իրենց ունեցվածքի կամ վաստակի, կարիք չեն ճանաչում, իրենց գործունեությամբ անկախ մարդկանց կամ այնպիսիններին, որոնց պաշտոնները կախված չեն

բարձրագույն անձանց բարի կամեցողությունից՝ ոչ կառավարությունից, ոչ հովանավորությունից կամ նախարարից:

Նրանից, թե ով կընտրվի ծեր ներկայացուցիչ, կախված է ծեր երջանկությունը, ծեր փրկությունը: Չեր ունեցվածքի, ազատության ու պատվի պաշտպանության հոգսը, սերը ծեր ընտանիքի, հայրենիքի, արքայի նկատմամբ. պետության կրոնն ու փառքը հիմա միավորվում են, որպեսզի կոչ ուղղեն ծեր խելամտությանն ու առաջինությանը: Երբ նման խոշոր շահեր են շոշափվում, կիանդգնե՞ն մանր կրքերը ծայն բարձրացնել: Զգուշացեք, որ քամահրելով խելացի խորհուրդները և ունկնդրելով գայթակղիչ ճառերը, դուք սեփական ձեռքով փոս չփորեք ծեր ոտքերի տակ: Զգուշացեք, որ ծեր սեփական զավակները ձեզ վաղը չմեղադրեն, որ դուք եք կռել իրենց շղթաները, և նրանք ողբալով հարստահարման դառը պտուղները ու բողոքելով իրենց տանջանքներից, չանիծեն իրենց ծախու հայրերին:

## ԿԵՍԱՐԻ ՄԱՐԸ (Ք.Ծ.Ա. 44 թ.)

Իսպանիայից Հռոմ Կեսարը ժամանեց 45 թվականի հոկտեմբերին (այդ ժամանակ օրացույցն արդեն ճշգրտված էր), նրան սպանեցին 44 թվականի մարտին: Վեց ամիս նա տիեզերքի տիրակալն էր. նա Պոմպեոսի որդու նկատմամբ տիրումֆ ստացավ, որը բավականաչափ վիրավորական թվաց: Ոչ Մարիուսը, ոչ Սուլլան երբեք նման ստորացման չէին ենթարկել Հռոմի քաղաքացիներից և ոչ մեկին:

Սենատը նրան հրչակեց իմպերատոր և ցմահ դիկտատոր. այդ ժամանակից ի վեր նա գլխին մշտապես կրում էր դափնեպսակ և տոնական օրերին տրիումֆակրի տոգա էր հագնում: Նա ստեղծեց բազում սենատորներ ու պատրիկներ, կարգի բերեց օրացույցը, սկսել էր աշխատել քաղաքացիական ու քրեական օրենսգրքերի խմբագրման, պատիժներ սահմանող օրենսգրքի վրա, նախագծեր էր կազմում Հռոմը նոր ու հիասքանչ շենքերով զարդարելու համար: Նրա օրոք սկսեցին Կայսրության ընդհանուր քարտեզը կազմելու և ամբողջ տարածքում վիճակագրական աշխատանքները. նա Վարոնին հանձնարարեց հանրային ընդարձակ գրադարանի կազմակերպումն ու կարգավորումը, մտադիր էր չորացնել Պոնտական ճահիճները և Տիբրոս գետի համար նոր հուն փորել՝ Հռոմից մինչև ծով, Օստիայում կառուցել մեծ նավահանգիստ՝ ամենամեծ նավերի համար, նաև մտադիր էր Կորնթոսի ծովածոցը վերափոխել և Կորնթոսն ու Կարթագենը վերականգնելու համար գաղութաբնակներ էր ուղարկել:

Նա անկեղծորեն ներել էր բոլորին, որ մնացել էին Պոմպեոսի կուսակցությունից և առավել կարևոր պաշտոններին նշանակեց ամենահայտնի պատրիկների ընտանիքների ներկայացուցիչների. այդ քայլերին նրան դրդում էին ինչպես մեծահոգությունը, այնպես էլ քաղաքական նկատառումները: Նա Ռուբիկոնն անցավ իրեն ժողովրդական կուսակցության ղեկավար՝ հենց այդ կուսակցության օգնությամբ նա հաղթեց

Պոմպեոսի շուրջը հավաքված ամբարտավան արիստոկրատ-ներին: Իրոք՝ ի՞նչ կարող էր նա անել իր երկու կամ երեք լեզի-ոններով: Ինչպե՞ս կարող էր նա առանց կրիվների ու պաշտ-ման իրեն ենթարկել իտալիան ու Հռոմը՝ կողմնակից չունենա-լով իտալացի ու հռոմեացի ջլապինդ և կոշտուկապատ բա-զուկների մեծամասնությունը: Բաղաքացիական պատերազմի սկզբում Պոմպեոսը Հռոմի մատուցներում ուներ վետերաննե-րի երկու լեզիոն և 30000 զորք: Նրա 30 կոհորտաները Կորֆի-նիումում էին, բայց ժողովուրդը նրա դեմ էր, և Պոմպեոսը հար-կադրված էր առանց կրվի հեռանալ Հավերժական քաղաքից: Նա հատեց ծովը՝ ընդառաջ գնալով ասիական լեզիոններին. այնտեղ ձևավորեց բանակ և ժամանեց Հունաստան՝ իր կող-քին ունենալով սենատն ու պատրիկների մեջ մասին: Բայց Կեսարը ամենասկզբից դարձավ Հռոմի տերը:

Ֆարսալի, Տապսի, Մուլոնի հաղթանակներից հետո՝ ջախ-ջախելով Պոմպեոսի կուսակցությանը, ժողովրդական կու-սակցությունը և վետերանները իրենց պահանջները առա-ջադրեցին՝ ստիաելով իրենց ծայնը ունկնդրել: Կեսարը մտա-հոգված էր՝ նրանց զսպելու համար նա ազդեցիկ ընտանիքնե-րի ներգործությանը դիմեց: Բոլոր ժողովուրդներն ունեն արիստոկրատիա, մշտապես, բոլոր հեղաշրջումների ժամա-նակ: Կործանեք նրանց ազնվականների մեջ, տեղնուտեղը կիայտնվեն հարուստ ու ազդեցիկ երրորդ դասի մեջ, ճնշեք այդտեղ, կիայտնվեն ժողովրդական պարագլուխների ու ար-հեստավորների մեջ: Արիստոկրատիայի այս դիմափոխու-թյուններից տիրակալը ոչինչ չի շահում. քողնելով նախնա-կան տեսքով, ենթարկեցնելով նոր օրենքներին, նա, ընդհա-կառակը, ամեն ինչ բնական տեսքի է բերում: Իրերի այդ կար-գը հատկապես անհրաժեշտ էր Հռոմի համար, որ իշխում էր ամբողջ աշխարհին և իր գերազանցությունը պահպանելու համար կարիքն ուներ ինչ-որ մոգական ուժի, որ կապվում էր Սցիպիոնի, Պոլոս Էմիլիոսի, Կլոդիոսի, Ֆաբիոսի և այլոց հետ, ովքեր հաղթում էին, կառավարում էին և որոշում էին Եվ-րոպայի, Ասիայի ու Աֆրիկայի ճակատագրերը բազում դարեր շարունակ:

Կրասոսն իր բանակով կործանվեց Եփրատի ափին՝ նրա լեզիոնների արծիվներն անցան պարթևներին: Յռոմի ժողովուրդը հատուցում պահանջեց, որը վեց տարվա քաղաքացիական պատերազմ դարձավ: 44 թվականի առաջին օրերին Կեսարը հայտարարեց ծովն անցնելու ու պարթևներին հնագանդեցնելով՝ սպանված Կրասոսի հոգուն խաղաղություն պարզեցնելու մտադրության մասին: Ամբողջ ձմեռ նա նախապատրաստվում էր այդ մեծ արշավանքին, որ Յռոմին փառք ու Կեսարին օգուտներ էր խոստանում: Իրոք, այդքան տևական ու արյունահեղ քաղաքացիական պատերազմից հետո արտաքին պատերազմ էր պետք՝ միավորելու բոլոր կուսակցությունները ու ստեղծելու համար ազգային բանակ:

Պարթևների հետ պատերազմում երկու դժվարություն կար. առաջինը այդ ժողովուրդների պատերազմելու ձևն էր. նրանք հռոմեացիներից ավելի լավ էին զինված. պարթևների նետերը խոցում էին լեզիոններների վահանները, պարթևները չէին սպասում ծանր զենքերով զինավառ հռոմեացիների հետ բախմանը, այլ հեռվից ու դիպուկ նետահարում էին: Լարիենն Աֆրիկայում հաջողությամբ կիրառել էր պատերազմելու այդ ձևը: Քավանաբար այդ առումով Կեսարը պարթևներին կգերազանցել՝ նրանց հակառելով բազում նետաձիգների կրետե կղզուց, Բալեարյան կղզիներից, Խսպանիայից ու Աֆրիկայից: Երկրորդ դժվարությունը այդ երկրների բնությունն էր. Վերին Յայաստանից ներխուժման դեպքում երկար պատերազմ էր սպասվում լեռնային տեղանքում, Եփրատով ու Միջագետքով ուղևորվելիս՝ կիանդիպեր ճահիճների, լճերի ու անպտուղ տափաստանների: Այս բոլոր խոչընդոտները Կեսարի հանճարից ավելին չէին: Եփրատի ու Տիգրիսի վրա մեծարիկ նավատորմիղը կապահովեր ջրային արգելքների հաղթահարումը, իսկ կաշվե տիկերով բեռնված ուղտերը ի չիք կդարձնեին անապատի անջրդիտությունը, և հավանաբար, Կեսարը կհաղթեր՝ հռոմյան արծիվները հասցնելով մինչև Ինդոսի ափերը, եթե միայն նրան չդավաճաներ 13 պատերազմներում ուղեկցած երջանկությունը: Այդ երջանկությունը ժպտացել էր Սցիպիոնին հինգ պատերազմներում, Ալեքսանդ-

րին՝ տասննեկ պատերազմներում, լքել էր Պոնավեռսին տասն-վեցերորդում, Համիբալին՝ տասնյոթերորդում, և նրանցից ոչ ոք չէր կարողացել թեկուզ մեկ տարի իր կողքին պահել այդ խստասիրտ թեթևամիտին:

Այն ժամանակ, երբ այդ մեծ մարդը՝ Կեսարը, նախապատրաստվում էր այդքան մեծ գործերին, արիստոկրատների կուսակցության բեկորները, որոնց նա, մեծահոգաբար, ներել էր, դավադրում էին նրա դեմ: Բրուտոսն ու Կասիոսը դավադրության դեկավարներն էին. առաջինը ստորի էր, Կատոնի սանը: Կեսարը նրա նկատմամբ հատուկ վերաբերնունք ուներ և երկու անգամ փրկել էր նրա կյանքը, բայց Բրուտոսի աղանդը ոչ մի երախտագիտություն չէր ընդունում: Բռնապետության վերաբերյալ հունական դպրոցներում քարոզվող հասկացություններով ներձծված՝ նա օրինական էր համարում յուրաքանչյուրի սպանությունը, ով իրեն օրենքից վեր է դասում: Ցմահ դիկտատոր Կեսարը իշխում էր ամբողջ հռոմեական ծովածավալ աշխարհին, և Սենատի իշխանությունը նիայն երևութական էր: Այլ կերպ չէր էլ կարող լինել Մարիոսի ու Սուլլայի պարտությունից, Պոնավեռսի օրինախախտությունից, հնգամյա քաղաքացիական պատերազմից, և այն բանից հետո, երբ Խոսկայում հաստատվել էին Վետերանները, որ պահպանում էին հավատարմությունը իրենց գորավարներին. ամեն ինչ սպասում էին մի քանի մարդուց ու ոչինչ չին ակնկալում հանրապետությունից: Յանգամանքների այդ դասավորությամբ հնարավոր չէր դեկավարել պետությունը քաղմագլուխ ժողովի որոշումներով և աշխարհածավալ Հռոմի գերակայության և իշխանության երաշխիքներով միայն. բոլոր կուսակցությունների, քաղաքացիների հանգստության գրավականը Կեսարի անձն էր, ուստի նրա իշխանությունը օրինական էր:

Դավադիրներին դժվար չէր հաջողության հասնել. Կեսարը նրանց հավատում էր: Բրուտոսը, Կասիոսը, Դեցիմոսը նրա բարեկամներն էին, մերձավորները, նա դյուրահավատորեն կարծում էր, որ նրանց բոլորի համար թանկ է իր կյանքը, քանի որ ինքն աջակցում էր բոլոր ականավոր անձանց և այն

ամենին, ինչը փառահեղ էր Յօնմում՝ չնայած ժողովրդի ու բանակի դիմադրությանը։ Արդարացնելու համար ստոր ու քաղաքականության հետ որևէ կերպ չհամատեղվող սպանությունը, դավադիրներն ու նրանց կողմնակիցները լուրեր էին տարածում, թե Կեսարը մտադիր է իրեն արքա հռչակել. ակնհայտ սուտ ու գրաբարտություն, որը, սակայն, շուրջից շուրջ փոխանցվելով՝ իինա պատմական ճշմարտության տեղ է անցնում։ Եթե Կեսարը գործ ունենար այն սերնդի հետ, որն ապրում էր Նումիոսի, Տուլիոսի ու Տարկվինիոսի օրոք, նա, գուցե, իր իշխանությունը ամրապնդելու ու հանրապետությունում խառնակությունը դադարեցնելու համար՝ դիմեր կառավարման սովորական ու արգո միջոցներին, բայց նա ապրում էր այնպիսի ժողովրդի հետ, որն արդեն հինգ հարյուր տարի այլ իշխանություն չէր ճանաչում՝ բացի կոնսուլների, դիկտատորների ու տրիբունների իշխանությունը։ Արքայական իշխանությունը արհամարհված ու ստորացուցիչ էր, կուրուլիսյան աթոռը գահից բարձր էր դասվում հռոմյան սենատում։ Ի՞նչ գահ էր պետք Կեսարին։ Յօնմի հինավորց արքաների գա՞հը, որոնց իշխանությունը քաղաքի մատուցներից դուրս չէր գալիս։ Ասիայի բարբարոս արքաների՝ գահը, որոնց գահընկեց էին արել Սցիփինները, Մետելները, Կլորիոսները։ Արտառոց քաղաքականություն է։ Ինչպե՞ս։ Մի՞թե Կեսարը կարող էր հաստատունություն, հարգանք ու պատիվ գտնել Փիլիպոսի, Պերսևայի, Արիլլայի, Սիրիուսի, Փառնակի, Պտղոնմետոսի բազով, որոնց Յօնմի քաղաքացիները տեսել էին իրենց տրիումֆների ժամանակ՝ քառածի մարտակառքերին շղթաված։ Դա չափազանց անհերթ է։ Յօնմեացիները վարժվել էին արքաներին տեսնել իրենց տիրակալների նախարահներում սպասելիս։

Նաև ասում էին, որ Կեսարը ցանկանում է իրեն հռչակել ոչ թե Յօնմի, այլ՝ հռոմյան գավառների արքա. կարծես Յունաստանի, Փոքր Ասիայի, Սիրիայի ժողովուրդները կարող էին ավելի մեծ հարգանք տածել Պերսևայի, Անտիոքի, Արիլլայի ու Պտղոնմետոսի խորտակված գահերի նկատմամբ, քան Լուկուլլոսի, Սուլլայի, Պոմպեոսի և Կեսարի կուրուլիսյան գահավո-

րակի: Յետևաբար, այս ենթադրությունն էլ նույնքան անհիմն է, որքան առաջինը:

Մինչև իր կյանքի վերջին րոպեն Կեսարը հարգում էր ժողովրդական կառավարման բոլոր ծևականությունները. ոչինչ չէր անում առանց սենատի որոշման, բոլոր պաշտոնյաներին նշանակում էր ժողովրդը, և, եթե իրոք ամբողջ իշխանությունը Կեսարի ձեռքին էր, արտաքրուստ պահպանված էր հանրապետական ամբողջ կարգուկանոնը: Կեսարը չուներ որևէ պահակազոր, շրջում էր՝ ինչպես հասարակ քաղաքացի, նրա տունը ավելի շքեղ չէր, ամեն օր հանդիպում էր իր բարեկամներին, հաճախ էր ելույթ ունենում հրետորների ամբիոնից, լինում էր ժողովրդական ու սենատի ժողովներում: Եթե նա մտադրվեր արքա լինել, իրեն կշրջապատեր հավատարին պահակազորով. այդ նպատակով նա ոչինչ չէր անում և մշտապես մերժում էր իր բարեկամների հոգածությունը, որոնք լսելով պարտված կուսակցության տրտունջները, նրա անվտանգության համար պահակազորն անհրաժեշտ էին համարում: Լինելով դիկտատոր, նույն տարին նա ցանկացավ Անտոնիոսի հետ կոնսոլ լինել՝ այդ պաշտոնի բոլոր պարտականությունները կատարելով: Պատվանդանից վար նետված Պոմանեոսի բոլոր արձանները նրա հրամանով հանդիսավորապես վերականգնվեցին, նա ոչնչով չդավաճանեց իր բանակի ոգուն՝ կապված պահելով նրանց ժողովրդական, ժողովրդավարական կուսակցությանը:

Ի՞նչ ապացույցներ են ներկայացնում նրան մեղադրողները: Նրանք բերում են մի քանի անեկոտներ, հավանաբար սուստ կամ սիսալ փոխանցված, որովհետև ոչ Ցիցերոնը, ոչ Ֆլորոսը, ոչ Վելիոսը այդ մասին չեն խոսում: Եթե նույնիսկ ընդունենք, որ դրանք արդարացի են, միևնույն է, ոչինչ չեն ապացուցում: Պատմում են, որ հունիսի 26-ին, երբ Կեսարը վերադառնում էր Ալբինյան սարից, ծափողջունների ժամանակ ոմն մեկը նրան ողջունել է իբրև արքայի, և երբ ամբոխը զարմացած լսել է, Կեսարը նրան պատասխանել է, որ ինքը ոչ թե արքա է, այլ՝ Կեսար: Յետք՝ ժողովրդից ինչ-որ մեկը Կեսարի արձանը զարդարել է դափնեպսակով ու արքայական ակ-

նակուռ ապարոշով, և երրորդը. Լուսերկալիաների տոնակատարության ժամանակ լուսերկներից մեկը՝ կոնսուլ Անտոնիոսը, մոտեցել է Կեսարին, որ նստած էր ճարտասանական տեղում՝ իր տրիումֆակրի տոգայով ու դափնեպսակով և նրան է հրանցրել ապարոշը, բայց Կեսարը ապորոշը գլխին դնելու փոխարեն ուղարկել է Կապիտոլիում, ասելով, որ Յօնմը մի արքա ունի՝ Ցուպիտերը: Լուսերկալիաները խելահեղ տոնախմբություններ էին, լուսերկները մերկ վազվզում էին փողոցներում ու կաշվե խարազաններով հարվածում անցորդներին. ամենաազնվատոհմիկ կանայք նրանց էին մեկնում իրենց բազուկները՝ հուսալով և հավատալով, որ այդ հարվածները իրենց զավակներ կպարզեն: Եվ, չորրորդը՝ Լուցիուս Կոստան, Սիրիլլների գրքերը պահպանող քուրմերից մեկը, հայտարարել է, որ պարթևներին արքայից բացի ոչ ոք չի հաղթի: Յօնմեացիներին գրգռելու համար ավելին էին ասում՝ որ արքա դառնալով՝ Կեսարը մայրաքաղաքը տեղափոխելու է Ալեքսանդրիա կամ Իլիոն:

Ահա այսպիսի խղճուկ իհմնավորումների վրա բարեհոգի Պլուտարքոսը, զրպարտությունների սիրահար Սվետոնիոսը և նույն այդ կուսակցության մի քանի այլ գրողներ կառուցել են մեղադրանքների իրենց անհավանական համակարգը: Եթե Կեսարը որևէ օգուտ տեսներ արքայական գահավորակին բազմելում, նա այդ կաներ՝ իր գործի ու սենատի միաձայն հավանության բացականչությունների ներքո՝ նախքան սենատը Պոմանոսի կողմնակիցներով համալրելը: Պետք չէր լինի նախապատրաստել ոչ հարքած մեկի արքային ուղղված կոչերը, ոչ սիրիլլների «մարգարեությունը»՝ պարթևներին հաղթելու համար արքա դառնալու, ոչ էլ Լուսերկալիաների ժամանակ ապարոշ մատուցելու տեսարանները: Կեսարը այդ նպատակին այլ ճանապարհով կհասներ: Նրա համար շատ հեշտ էր իր լեգիոններին ներշնչել, որ նրանց փառքն ու հարստությունը ամբողջությամբ կախված են կառավարման նոր ձևից, որի ժամանակ իր տոհմը նրանց պաշտպանություն կտա պատրիկների տոգաներ կրողներից, իսկ սենատում նա ուղղակի կիայտարարեր, որ պետք է օրենքները վեր դասել

հաղթանակների ու գինվորականների կամայականությունից՝ տիրակալի գահակալությամբ պաշտպանելով քաղաքացիների սեփականությունը վետերանների ազահությունից: Բայց նա գնում էր հակառակ ծանապարհով. հաղթանակներից արքած՝ նա Հօռմը կառավարում էր միայն իբրև կոնսուլ, դիկտատոր կամ տրիբուն, հետևաբար նա հաստատում, այլ ոչ թե ոտնահարում էր հանրապետական հին ավանդույթները: Ուրիշուն անցնելուց և իր բոլոր հաղթանակներից հետո Կեսարը ոչնչով չէր փոխել հանրապետական կառավարման ձևը: Նույնիսկ Օգոստոսը, երկար ժամանակ անց, երբ եռապետականների հալածանքներն ու պատերազմները հանրապետականների մի քանի սերունդ ոչնչացրին, գահ բարձրանալու մասին չէր մտածում. ոչ Տիբերիոսը, ոչ Ներոնը նրանից հետո նման բան չմտածեցին, որովհետև համաշխարհային կայսրության տիրակալի մտքով չի անցնի իրեն զարդարել ստորացուցիչ ու ատելի զարդարանքներով: Արքայական թագը թե օգտակար լիներ Օգոստոսի կամ իր հաջորդների համար՝ նրանք այդ թագը կընդունեին, բայց Կեսարը, հոգով հռոմեացի, ժողովրդի սիրելին, որ միշտ իր ճառերում ու ստեղծագործություններում այդպիսի հաճույքով ու փառասիրությամբ էր ներկայացնում «հռովմեական ժողովորդի» հմայող ուժը, Կեսարը արքայական թագից միայն կտիսրեր:

Հետևաբար Կեսարը չէր կարող ցանկանալ, չէր ցանկանում և ոչինչ չէր անում հանուն այն բանի, ինչի մեջ իրեն մեղադրում են, այլ ճիշտ հակառակն էր անում: Եվ իհարկե՝ ոչ դեպի Եփրատ արշավանքի նախօրեին, դժվար պատերազմից առաջ չէր նախաձեռնի 500-ամյա կառավարման ձևի փոփոխությունը: Իսկ ո՞վ էր կառավարելու Հօռմը արքայի բացակայությամբ: Ոեգենտը: Արքայի փոխանորդը: Նահանգապետը: Հօռմն ընտելացել էր կոնսուլների, պրետորների, սենատի, տրիբունների իշխանությանը:

Սպանելով Կեսարին՝ Բրուտոսը ենթարկվում էր այն նախապաշարմունքին, որ քաղել էր հունական դպրոցներից. նա Կեսարին մի շարքում էր դասում Պելոպնեսի ինչ-որ մանրիկ բռնակալների հետ, որ քաղաքի իշխանությունը զավթել էին մի

քանի գանձագողերի հետ. նա չէր ուզում տեսնել, որ Կեսարի իշխանությունն օրինական է, որովհետև անհրաժեշտ է, որովհետև բոլորի պաշտպանությունն է և բոլորի համար պահպանում է հռոմեացիների գերազանցությունը, և որ հետևանքն է ժողովրդի կամքի ու կարծիքի: Կեսարը սպանվեց, նրա իշխանությունը վերածնվեց Անտոնիոսի, Օկտավիանոսի, Տիբերիոսի, Ներոնի մեջ, իսկ նրանցից հետո 600 տարի փորձարկվեցին մարդկության համար հնարավոր կառավարման բոլոր ձևերը, բայց ոչ հանրապետությունը, ոչ արքայական միապետությունը այլևս չհայտնվեցին՝ հաստատուն ապացույց, որ ոչ մեկը, ոչ մյուսը չէին կարող կիրառվել դարի իրադարձություններին ու ոգուն համապատասխան: Կեսարը չէր կարող ցանկանալ արքա լինել, որովհետև չէր կարող դա ցանկանալ. իսկ չէր կարող ցանկանալ, որովհետև նրանից հետո 600 տարի նրա հետնորդներից որևէ մեկը դա չցանկացավ:

## ՀԱՌՐՅԱԾՈՒԹՅՈՒՆԵՐ ՎԵՐԻՆԻ ՄԱՍԻՆ

<...> «Աստվածաշնչի ձեռագրերի մոտեցման հարցում գոյություն ունի երկու տեսակետ: Գոյություն ունի նախակրոնական տեսակետ. դա մաքուր բնության և բանականության տեսակետն է, և դա աստվածային ծագում ունի: Այդ տեսակետը հավերժորեն կմնա անփոփոխ և կհարատուի ու կպահպանի իր նշանակությունը այնքան ժամանակ, քանի գոյություն կունենան Աստծուց օժտված էակները: Այդ տեսակետը, սակայն, միայն հատուկ ընտրյալների համար է և ընդհանրական դաշնալու համար շատ է բարձր ու ազնիվ: Այնուհետև գոյություն ունի Եկեղեցական տեսակետ, որն իր բնույթով շատ ավելի մարդկային է: Նա թույլ է, փոփոխական և անկայուն, բայց նույնպես կապրի հավերժական անկայունության մեջ, քանի գոյություն կունենա մարդկային երթյան թուլությունը: Աստվածային հայտնության լույսը շատ է մաքուր ու պայծառ. խեղճ, թույլ մարդկանց համար այն չափից ավելի վեհ է ու անտանելի: Բայց Եկեղեցին բարերար միջնորդուհու դեր է կատարում: Նա մթագնում ու չափավորում է այդ լույսը, որպեսզի դրանով օգնի բոլորին և բոլորի համար օգտակար դարձնի այն: Քրիստոնեական Եկեղեցին սոզորված է վիթխարի ուժով հենց այն պատճառով, որ նրան վերագրվում է Քրիստոսի հետևորդներին մարդկային մեղքերի բերից փրկելու հավատը: Քրիստոնեական հոգևորականության գլխավոր խնդիրն է՝ պահպանել այդ իշխանությունը և այդ ուսմունքը և դրանով իսկ հաստատել իր Եկեղեցու շենքը:

Ահա թե ինչու քրիստոնեական հոգևորականությանը քիչ է մտահոգում այն հարցը, թե Աստվածաշնչի այս կամ այն գիրքը ինչ չափով է նպաստում մարդկային բանականության լուսավորությանը, և արդյոք նա արտահայտում է բարձր բարոյականության և մարդկային ազնիվ բնավորության ուսմունքը.

նա ավելի շատ ուշադրություն է դարձնում Մովսեսի գրքերուն շարադրված մեղսագործության և քավության պահանջի առաջացման պատճությանը, ինչպես նաև մարգարեների գործում Նրա՝ Եկողի մասին եղած ապացույցներին, իսկ Ավետարաններում՝ Երկրի վրա Նրա իրական հայտնությանն ու մարդկային մեղքերի քավման պատճառով խաչելությանը։ Այսպիսով, մենք տեսնում ենք, որ նման նպատակների և ձգտումների, ինչպես նաև նման դատողությունների կողքին չեն կարող նշանակալի կշիռ ունենալ ոչ ազնիվ թորիասը, ոչ Սողոնինի իմաստությունը և ոչ Սիրախի առակները։

Սակայն Աստվածաշնչի գրքերի իսկությունն ու անիսկությունը շատ տարօրինակ հարցեր են։ Ի՞նչ է իսկությունը, եթե ոչ այն, ինչ միանգամայն գեղեցիկ, ներդաշնակ է անաղարտ բնությանն ու բանականությանը և այսօր էլ ծառայում է մեր բարձր գարգացմանը։ Իսկ ի՞նչ է անիսկությունը, եթե ոչ այն, ինչ անհեթերություն ու հիմարություն է, և չի բերում ոչ մի արդյունք, համենայն դեպք՝ ոչ մի բարություն։

Եթե աստվածաշնչային գրքերի իսկությունը հնարավոր լիներ որոշել այն հարցադրմամբ, թե, արդյոք, լրիվ ճշմարտությո՞ւնն է նկարագրված նրանցում, այն ժամանակ Ավետարանների որոշ տեղերի իսկությունը կարող էր կասկած հարուցել մեր մեջ, քանի որ Մարկոսի և Ղուկասի գրքերը գրվել են ոչ թե անմիջապես նրանց տեսածի ու փորձի հիման վրա, այլ ավելի ուշ, և դրանց հիմքում ընկած են եղել բանավոր պատումները, իսկ Յովհաննես առաջյալն իր գիրքը գրել է խոր ծերության հասակում։ Բայց, այնուամենայնիվ, բոլոր չորս Ավետարաններն էլ ես իսկություն եմ համարում, որովհետև նրանցում զգացվում է փայլն այն մեծության, որը Քրիստոսի անհատականությունից է գալիս, և որն այնքան աստվածատիա է, որքան աստվածությունը կարող է երևալ Երկրի վրա։ Եթե ինձ հարցնեն, թե արդյո՞ք իմ հոգու խորքում ես խորին պատկառանք եմ տածում նրա հանդեպ, կպատասխանեմ՝ անպայման։ Ես խոնարհվում եմ նրա առաջ, որպես բարոյականության բարձրագույն սկզբունքի աստվածային հայտնության առաջ։ Եթե ինձ հարցնեն, թե արդյոք իմ հոգու խորքում

Ես պաշտում եմ արևը, նորից կպատասխանեմ՝ անպայման։ Չէ՞ որ արևը նույնպես Բարձրյալի հայտնությունն է, ընդ որում, ամենազորեղ հայտնությունը, որը միայն մենք՝ Երկրի զավակներս կարող ենք զգալ։ Ես նրա մեջ պաշտում եմ լույսը և Աստծոն ստեղծագործ ուժը, որի շնորհիվ մենք ապրում, զարգանում և գոյատևում ենք, իսկ մեզ հետ նաև՝ ողջ բուսական ու կենդանական աշխարհը։ Բայց եթե ինձ հարցնեն, թե արդյոք ես հակված եմ խոնարհվելու Պետրոսի և Պողոսի բամատերի ոսկորների առաջ, ես կպատասխանեմ, խնայեցեք և մի վրդովեք ինձ ձեր այդ անհերետություններով։ «Մի տրտմեցուցանեք զինօդին սուրբ», - ասում է առաքյալը։

Եկեղեցական արարողություններում շատ հինար բաներ կան։ Սակայն Եկեղեցին ուզում է իշխել, և նրան հարկավոր է ունենալ մտավոր սահմանափակ ամբոխ, որը խոնարհվի նրա առաջ և նրանից իշխվելու հակում ունենա։ Բարձր, մեծ Եկամուտներ ունեցող հոգևորականությունը ոչ մի բանից այնպես չի վախենում, ինչպես ժողովրդական ստորին զանգվածների լուսավորվածությունից։ Նա նույնիսկ Երկար ժամանակ, որքան հնարավոր էր, Աստվածաշունչը չէր տալիս ժողովրդի ձեռքը։ Եվ, իսկապես, ի՞նչ կարող է մտածել քրիստոնեական Եկեղեցու խեղճ անդամը մեծ Եկամուտներ ստացող, իշխանական փառքով ապրող, վեցձիանոց շոնդալից կառքով ընթացող Եպիսկոպոսների մասին, եթե նա Ավետարանում կարդում է իր աշակերտների հետ ոտքով քայլող Քրիստոսի աղքատության ու կարիքների մասին։

Մենք դեռ բոլորովին չենք գիտակցում, - շարունակեց Գյոթեն, - թե որքան երախտապարտ ենք Լյութերին և ռեֆորմացիային ընդհանրապես։ Մենք ազատագրվեցինք մտավոր սահմանափակության կապանքներից, իսկ դրա շնորհիվ ի վիճակի դարձանք զարգացնելու մեր մշակույթը, վերադառնալու դեպի սկզբնադրյութը և քրիստոնեությունն ընկալելու իր ողջ մաքրությամբ։ Մենք կրկին համարձակություն ձեռք բերեցինք՝ անոլոր ոտքերով կանգնելու Աստծոն ստեղծած Երկրի վրա և մեր մեջ զգալու մեր աստվածապարգև մարդկային բնավորությունը։ Թող հոգևոր մշակույթը միշտ առաջ գնա, թող մարդ-

կային բանականությունը ընդարձակվի որքան հնարավոր է, միևնույն է, ոչինչ չի կարող գերազանցել քրիստոնեական բարոյագիտական ուսմունքի վեհությանը, ինչպես որ նա Ավետարաններում է փայլատակում ու լուսավորում:

Եվ մենք՝ բողոքականներս, որքան մեծ եռանդ ցուցաբերենք ազնիվ առաջադիմության համար, կաթոլիկներն այնքան ավելի շուտ կհետևեն մեզ: Երբ նրանք կզգան, որ իրենք ավելի ու ավելի են համակված իրենց շրջապատող ժամանակի մեծ լուսավորությամբ, ստիպված կլինեն կամա թե ակամա հետևել նրան և կհանգեն այն բանին, որ վերջ ի վերջո ամեն ինչ նույնն է:

Այդ նույն ձևով կանհետանա բողոքականության՝ դեպի աղանդավորությունն ունեցած ողորմելի ձգտումը, իսկ դրա հետ կանհետանա նաև այն ատելությունը, որ գոյություն ունի հայրերի և որդիների, եղբայրների և քույրերի միջև: Դենց որ քրիստոսի մաքուր ուսմունքն ու սերը կյուրացվի այնպես, ինչպես այն կա, այն ժամանակ մարդիկ իրենց կզգան որպես մեծ ու ազատ և առանձնապես մեծ նշանակություն չեն տա արտաքին պաշտամունքի այսպիսին կամ այնպիսին լինելուն:

ճիշտ այդպես էլ, մենք բոլորս բարի ու հավատի քրիստոնեությունից անցում կկատարենք մտքի ու գործի քրիստոնեության»:

Զրույցը դարձավ չինացի, հնդիկ, պարսիկ և հույն այն մեծություններին, որոնք ապրել են Քրիստոսից առաջ և նշվեց, որ նրանց մեջ Աստծո ուժը նույնքան զգալի է, որքան Յին Կտակարանում հիշատակված որոշ հրեաների մեջ: Խոսք եղավ նաև այն մասին, թե Աստծո ներգործությունը ինչպես է դրսնորվում մեր, ժամանակակից աշխարհի մեծ անհատականությունների մեջ:

«Եթե ականջ դնենք մարդկանց զրույցներին,- ասաց Գյորեն,- այն տպավորությունը կստանանք, որ նրանք կարծում են, թե Աստված վաղուց արդեն դադարել է գործելուց, և այժմ մարդն ինքը պիտի ամուր ոտքերի վրա կանգնի և առանց նրա ամենօրյա անտեսանելի շնչառության յոլա գնա: Կրոնական ու բարոյական գործերում նրանք թերևս ընդունում են աստ-

վածային ազդեցությունը, մինչդեռ գիտության ու արվեստի բնագավառների մասին նրանք նտածում են, որ դրանք զուտ երկրային են և ուղղակի մարդկային ուժերից են ծնունդ առել:

Սակայն թող փորձի որևէ մեկը զուտ մարդկային կամքի ու մարդկային ուժի օգնությամբ մի քան ստեղծել, որը կարելի լինի դնել Մոցարտի, Ռաֆայելի կամ Շեքսպիրի ստեղծածների կողքին: Ես շատ լավ գիտեմ, որ այդ երեք ազնիվ մարդիկ բոլորովին էլ միակը չեն, և որ արվեստի բոլոր բնագավառներում գործել են բազմաթիվ երևելի մարդիկ, որոնք նոյնքան հրաշալի ստեղծագործություններ են տվել, որքան հիշատակած անունները: Սակայն եթե դրանք նույնքան մեծ լինեին, որքան առաջինները, նշանակում է, նրանք էլ այդ ուղղությամբ վեր կրաքանային սովորական մարդկային բնավորություններ և նրանց ննան օժտված կլինեին աստվածային շնորհիներով:

Եվ, ընդհանրապես, ի՞նչ է սա և ի՞նչ է նշանակում: Աստված, այսպես կոչված, արարման վեց օրերից հետո երբեք էլ չի դադարել գործելուց, ավելի ճիշտ, նա այժմ էլ նոյնքան գործունյա է, որքան առաջին օրը: Ամենայն հավանականությամբ նրան քիչ հաճույք կպատճառեր հասարակ տարրերից ստեղծել այս անպետք աշխարհը և նրան ստիպել տարեցտարի պտտվել արևի շուրջը, եթե նա ծրագրած չլիներ այդ նյութական հիմքի վրա կենդանի միջավայր ստեղծել ոգիների աշխարհի համար: Այդ պատճառով էլ նա միշտ և անընդհատ ապրում ու գործում է մեծ բնավորությունների մեջ, որպեսզի վեր բարձրացնի նաև փոքր բնավորություններին»:

Գյորեն լրեց: Բայց ես իմ սրտում ամփոփեցի նրա իմաստուն ու լավ խոսքերը:

**Եքերման. «Զրույցներ Գյորեի հետ»**  
Թարգմանությունը՝ Հակոբ Հակոբյանի

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՄԱՍԻՆ (հատված)

Փարիզ, 3 հունիսի 1840 թ.

Փարիզյան թերթերը ընթերցողներ ունեն և Հռենոսի այն ափին, ինչպես ընդհանրապես ամբողջ աշխարհում. և այնտեղ ընդունված է ժխտել հայրենական մանուլի բոլոր ձեռքբերումները՝ ֆրանսիական մանուլի հետ համեմատած, որի արժանիքները չափազանցվում են: ճիշտ է, այստեղի թերթերը խճողված են դատողություններով, որ Գերմանիայում ամենաբարեհոգի գրաքննիչն իսկ կարգելեր, ճիշտ է, ֆրանսիական թերթերի հոդվածները ավելի լավ են գրվում և տրամաբանորեն ավելի կուտ են, քան գերմանական թերթերի հոդվածները, որոնց հեղինակն իր քաղաքական լեզուն պիտի մշակի՝ դժվարությամբ ճանապարհ հարթելով իր գաղափարների կուտական անտառների միջով, ճիշտ է, ֆրանսիացին ավելի լավ է խնբագրում իր մտքերը և հասարակության աչքերի առաջ դրանք կարող է խսպան մերկացնել, մինչդեռ գերմանացի լրագրողը, ավելի շուտ ամորթսածությունից, քան մահացու կարմիր մատիսի ահից, ջանում է իր մտքերը պարուրել ամենայն անորոշության մշուշով, այնուհանդերձ, եթե ֆրանսիական մանուլի մասին դատենք ոչ թե արտաքրուստ, եթե քննենք ներքին կյանքը, որ ընթանում է խնբագրատներում, պետք է խոստովանենք, որ նա տառապում է հատուկ տեսակի անազատությամբ, որը միանգամայն խորթ է գերմանական մամուլին, և գուցե ավելի կործանարար է, քան հոենոսյան գրաքննությունը: Ապա պետք է նաև ընդունել, որ պարզությունն ու թերևությունը, որով ֆրանսիացին կարգի է բերում ու շարադրում իր մտքերը, իհմքում ունի չոր միակողմանիություն և մեխանիկական սահմանափակում, որ շատ ավելի վտանգավոր է, քան գերմանացի լրագրողի ճոխ խառնաշփոթն ու անօգնական բառաբարդումներն ու մտքերի խճողումները: Կարծ դիտարկում այդ առիթով.

Ֆրանսիական մամուլը հայտնի չափով օլիգարխիկ է, և ամենակին էլ ոչ դեմոկրատական քանզի Ֆրանսիայում թերթի հիմնումը և տպագրությունը այնպիսի ծախսերի ու դժվարությունների հետ է առնչվում, որ այդ անել կարող են միայն նրանք, ովքեր ձեռքի տակ խոշոր գումարներ ունեն և կարող են վտանգել այդ գումարները: Սովորաբար այդ պատճառով թերթի հիմնադրման գումարը տալիս են կապիտալիստները կամ ընդհանրապես արդյունաբերողները՝ ընդ որում նրանք մեքենայությունների են դիմում թերթի սպառման հարցում, եթե հաջողվում է ազդեցիկ դաշնալ՝ իբրև հայտնի կուսակցության օրգան կամ հետին մտքեր ունեն. Եթե թերթը բավականչափ բաժանորդներ է ձեռք բերում՝ ավելի մեծ օգուտով վաճառում են կառավարությանը: Այդկերպ՝ դատապարտված լինելով ծառայել արդեն եղած կուսակցություններին կամ կարինետին՝ թերթերը կախվածության մեջ են հայտնվում, որը նեղում է նրանց կամ, որ ավելի վատ է, դարձնում է միակողմանի նրանց բոլոր հաղորդումները, նեղ կուսակցականություն է հաղորդում, որի համեմատ գերմանական գրաքննության խոչընդոտները թվում են ուրախ եւ վառ ծաղկաշղթաներ՝ վարդերից կազմված:

Ֆրանսիական թերթի գիւսավոր խմբագիրը վարձկան գինվոր է, որ բոլոր սյունակներում պաշտպանում ու ամրապնդում է շահերն ու ձգտումները այն կուսակցության, որը նրան խոստացել է լավ սպառում կամ դրամական ներդրում: Նրա օգնականները, նրա սպաները և գինվորները ենթարկվում են նրան զինվորական հիերարխիային համապատասխան և իրենց հոդվածներին տալիս են պահանջված ուղղվածությունն ու երանգավորումը: Այդ պատճառով թերթերն ունեն այն միասնականությունն ու ծզգրտությունը, որը հեռվից մեզ այդքան զարմանալի է թվում: Այստեղ իշխում է խստագույն կարգապահություն՝ մտքերում ու նույնիսկ արտահայտություններում: Եթե որևէ անուշադիր աշխատակից հանկարծ չլսուի հրամանը, եթե ոչ այնպես գրի, ինչպես հրամայված է, գիշավոր խմբագիրը նրա հոդվածն ուղղակի կգլխատի՝ ռազմական անգթությամբ, որը չունի գերմանացի որևէ գրաքննիչ:

Գերմանացի գրաքննիչը ևս գերմանացի է և իր բարեհոգի բազմակողմանիությամբ հաճույքով հետևում է բոլոր խելամիտ փաստարկներին, բայց ֆրանսիական թերթի գլխավոր խմբագիրը գործնականում միակողմանի ֆրանսիացի է, որն ունի իր որոշակի տեսակետը՝ մեկընդմիշտ ձևակերպված որոշակի արտահայտություններով, որը նրան հաղորդված է բանավոր կամ գրավոր տեքստով։ Եթե որևէ մեկը գա և նրան հոդված տա, որը չի համընկնում նրա թերթի նպատակներին կամ գոնե առնչվում է այն թեմաներին, որոնք առանձնապես չեն հետաքրքրում այն հասարակությանը, որին ծառայում է թերթը, խմբագիրը խոժոռված դեմքով կվերադարձնի հոդվածը հեղինակին և կասի մարգարեական բառերը՝ «*Cela n'entre pas dans l'idée de notre journal*» («Դա մեր թերթին չի վերաբերում»)։ Այդպիսով՝ քանի որ այստեղի թերթերից յուրաքանչյուրն ունի իր որոշակի քաղաքական երանգավորումը և գաղափարների իր որոշարկված շրջանակը՝ լիովին հասկանալի է, որ նա, ով կարող է ասել ինչ-որ բան, որ դուրս է գաղափարների այդ շրջանակից և այս կամ այն կուսակցական երանգավորումն էլ չունի, իր տեսակետների արտահայտման համար որևէ թերթ չի գտնի։ Այս, մի քիչ միայն շեղվեք օրվա թեմայից, այսպես ասած՝ հրատապ խնդրից, փորձեք զարգացնել մտքեր, որ չեն առնչվում կուսակցությունների պարզունակ հարցերին, մի քիչ միայն խոսեք թեկուզ մարդկության մասին ընդհանրապես, այստեղի թերթերի խմբագիրները հեգնական քաղաքավարությամբ կվերադարձնեն ձեզ այդպիսի հոդվածը։ Եվ քանի որ ժողովրդի հետ հնարավոր է խոսել միայն թերթերի կամ թերթերի գովազդի միջոցով, յուրաքանչյուր ֆրանսիացու իր մտքերը մամուլով ազատ արտահայտելու հնարավորություն տվող խարտիան ընդամենը հանձարեղ մտածողներին ու աշխարհի բարեկամներին ուղղված դառը հեգնանք է և նրանց համար փաստորեն բնավազատ մամուլ գոյություն չունի։ «*Cela n'entre pas dans l'idée de notre journal*»...»

## ԱՄԵՐԻԿՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԸ

Ամերիկյան մամուլի մասին

Մեր երկրի ամենօրյա մամուլը եվրոպական մամուլից տարբերվում է մի քանի էական առանձնահատկություններով։ Թեպետ մեզ մոտ տպագիր հրատարակություններն ավելի շատ են՝ դրանց որակն ընդհանրապես և ընդհանուր առմամբ ավելի ցածր է։ Սա հանգեցնում է նրան, որ եթե դրանց պարունակած օգտակարը հասարակության մեջ ավելի լայն տարածում է ստանում, ապա դրանցում եղած վնասկարն էլ ավելի քայլայիշ ազդեցությունն է ունենում։

Ամերիկայում հրատարակվող թերթերի մեծաքանակությունը պատճառներից մեկն է, որ դրանց հրատարակության վրա այդքան քիչ միջոցներ և որպես դրա հետևանք՝ այդքան քիչ մտավոր և հոգևոր ունակություններ են ծախսվում։ Դա է նաև թերթերի տարածած շատ տեղեկությունների անձտությունների պատճառներից մեկը։ Եզրիտ տեղեկություններ ստանալու համար, անհրաժեշտ է մամուլում ներդնել շատ ավելի մեծ միջոցներ, քան սովորաբար ներդրվում է մեր երկրում։ Սակայն դրան խանգարում է հսկայական մրցակցությունը, ինչը հրատարակիչներին ստիպում է իրենց թերթերի էջերը լցնել հապշտապ հաղորդագրություններով ու չստուգված տեղեկություններով։ Իրավիճակը խորանում է նրանով, որ այնպիսի մի հսկայական և նոսր բնակեցված երկրում, ինչպիսին ներն է, անորոշ եւ չիհմնավորված ասեկուսեներն ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան ոչ մեծ տարածքում կենտրոնացված մեծաքանակ բնակչության վրա։

Խորաթափանց և դիտողունակ մարդիկ հարց էին տալիս. համապատասխանո՞ւմ է, արդյոք, իրականությանը թեկուզ և կեսը ամերիկյան թերթերում հիշատակվող փաստերի, եթե չհաշվենք ամուսնության և մահվան մասին հաղորդագրությունները։ Ինչ վերաբերում է քաղաքական կուսակցություն-

ների գործունեությանը, ապա այստեղ կասկածելի տեղեկությունների ծավալը, թերևս, ավելի տպավորիչ է:

Տխուր խորհրդածությունների տեղիք տվող ահավոր մի պատկեր է ստացվում. չէ՞ որ, եթե հիշենք, թե որքան մեծ է մեզանուն լույս տեսնող տպագիր հրատարակությունների քանակը, և եթե հաշվի առնենք, թե ինչ ազահությամբ են դրանք կլանում ընթերցողները, ապա ստիպված ենք ընդունել, որ մեր երկրում ողջ ժողովուրդը բարոյական ստի մթնոլորտում է գտնվում: Սակայն ինաստ չունի թաքցնել ճշմարտությունը. ընդհակառակը, հասարակական գործիչների և գրողների՝ իրենց վնաս հասցնելու ընդունակ մամուլի հանդեպ ունեցած վախը հնարավորություն տվեց չարին տարածվելու այնպես լայնորեն, որ այն խլացնում է արդարության և անհանգստության զգացումը, մղում է հայտարարելու, թե մեր երկիրը չի կարող իրեն պաշտպանված զգալ՝ հետագայում ևս ենթարկվելով իր գոյությունը մթագնող այդքան չարաղետ ազդեցության: Յուրաքանչյուրը, ով իր կյանքի ընթացքում բավականին հաճախ է բախվել նման երևույթների, հավանաբար նկատել է, թե ինչ արագությամբ են մեր երկրում իրենց ազդեցությունը կորցնում ազնիվ և արժանավոր մարդիկ՝ պարտվելով նրանց, ովքեր չունեն հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ դրույթ ինչ բարձր հատկանիշներ: ճակատագրի այդ ահավոր խոտորումները պետք է նշանակալի չափով վերագրել մամուլի կոռումպացվածությանը, ինչն էլ իր գոյության համար մեծապես պարտական է շահամոլ քաղաքական արկածախնդիրներին:

Կյանքը լավ չիմացող մարդիկ կարող են երևակայել, թե մամուլում հրապարակված փաստերն ու պնդումներն ավելի մեծ վստահության կամ հարգանքի են արժանի, քան բանավոր ելույթներում կամ մասնավոր զրույցներում ինչող նույն փաստերն ու պնդումները: Սա այնքան քիչ է համապատասխանում մեր մամուլի իրական վիճակին, որ առավել ճիշտ կլիներ ուղիղ հակառակ ենթադրությունը: Մարդիկ, ովքեր վարժվել են անեն օր հրաժարվել իրենց ոչ ճշգրիտ և սխալ հայտարարություններից, դադարում են մտածել հետևանքնե-

թի մասին: Եվ նա, ով կտատանվեր ինքն իրեն վարկաբեկել մերկապարանց հայտարարությամբ, եթե դա աներ նրանց ներկայությամբ, ում դա վերաբերում է, և եթե անձամբ պատասխան տար իր խոսքերի համար, ընդունակ է հոդված գրելով՝ թաքնվելով դրա անանունության հետևում և անպատասխանատու հրատարակության էջերում բարձրածայնել նույն բովանդակությունը ողջ աշխարհի համար: Կասկածներ հարուցող դեպքերի առնչությամբ մարդկանցից հազվադեպ են պահանջում արտահայտվել դրանց մասին, սակայն մեզ մոտ, այն պայմաններում, երբ տպարանը շտապեցնում է հանձնել նյութերը, երբ ժամանակը չի սպասում, իսկ հրատարակիչը ներքուստ համոզված է, որ եթե ինքը ձեռնպահ մնա կասկածելի հաղորդագրությունը հրապարակելուց, ապա դա կանի մրցակիցը, նա շատ հաճախ դիմում է իրականության խեղաթյուրված ներկայացմանը: Հոդվածները տեղեկություններ են պարունակում, որոնք արտացոլում են և այսօրվա վեճերն ու բախումները, և երեկով սուտը: Սակայն նա, ով տեսնում է միայն վերջինը և չի նկատում առաջինը, չի կարող ըստ արժանվույն գնահատել տպագրվածը՝ այդպիսի հոդվածից քաղելով միայն ոչ ճշմարիտը:

Փոխանակ պատկերացնելու թերթի հրատարակչին իբրև մի վերացական անձնավորություն, մի իդեալական կերպար, ով առաջնորդվում է բացառապես սկզբունքները պահպանելու և հավաստի փաստեր հրապարակելու ցանկությամբ, անհրաժեշտ է հիշել, որ հրատարակիչը բոլորին հատուկ շահերով ու կրքերով սովորական մարդ է, որ լրագրության ուղին է բռնել միայն այս կյանքում հաջողության հասնելու համար և մշտապես գայթակղություն ունի չարաշահելու իր հնարավորությունները, ընդունին՝ ձեռուուտն էլ կապված է սեփական քաղաքական, կրոնական կամ գրական համակրանքներով ու հակակրանքերով: Եթե սովորական գործերում իշխանությունը անձնաշահ, ապօրինի նպատակների համար օգտագործելու գայթակղությունն իշխանությամբ օժտված մարդկանց համար սովորական երևույթ է, ապա դա առավել և սովորական բան է այնպիսի բացառիկ դեպքում, ինչպիսին հանրային մամուլի նկատմամբ վերահսկողությունն է:

Հրատարակիչները թերթերում և հանդեսներում գովերգուն են իրենց ընկերներին և սևացնում իրենց թշնամիներին ճիշտ այնպես, ինչպես դա անում են սովորական մարդիկ անձնական գրույցներում ու բամբասանքներում: Ահա իրատարակիչների այս դիրքորոշման հետևանքով աճում է նրանց և բարեկամների, և թշնամիների թիվը, ինչի պատճառով էլ ընթերցողները թերթերում տեսնում են չափազանցված գովերգություն առաջինների հասցեին և անարդարացի պարսավանք՝ երկրորդների:

Եթե թերթերը կարող են անգամ օգուտ թերել բռնակալներին տապալելու գործում, ապա միայն նրա համար, որ հաստատեն սեփական բռնակալությունը: Մանուլը սեփական բռնակալության զոհ է դարձնում և հասարակական գործիչներին, և գրականությունը, արվեստը, թատրոնը, և անգամ՝ մարդկանց անձնական կյանքը: Յանդես գալով իբրև հասարակական բարոյականության պաշտպան, մանուլն այն հիմնավորապես բարոյագրություն է, ինքն իրեն ներկայացնելով իբրև ազատության պաշտպան՝ այն քայլ առ քայլ հաստատում է քրիստոնեական պետությունում երբեմն եղած ամենադաժան, ամենաանողոք, ամենագորեհիկ բռնակալությունը: Ի լուր ամենքի հռչակելով կարծիքների ազատություն՝ մենք ապրում ենք անհանդուրժողականության մեջ, ցուցադրելով ձևական հայրենասիրություն՝ մենք ոչինչ չենք զոհաբերում մեր անձնական շահերից. անձաշակ շողոքորոտությամբ ներծծված ներքողներ ձոնելով պարկեշտությանը, մենք շատ հաճախ անգամ հասարակ օրինավորություն չենք պահպանում:

Գոյություն ունի բանականությունը մամուլի կործանարար ազդեցությունից գերծ պահելու մեն մի եղանակ՝ դրա էության և մղումների վերլուծությունը: Յիշելով, որ քննարկվող հարցերի վերաբերյալ բոլոր հայտարարություններն արտացոլուն են միայն դրանք արտահայտողների տեսակետները, որ բոլոր մտքերը, բացառությամբ հասարակական հռչակագրերի, անձնական բնույթ ունեն, որ իշխանությամբ օժտված մարդիկ նշտապես ենթակա են չարաշահնան գայթակղությանը, կարելի է ի վերջո ըստ արժանվույն գնահատել մամուլի որակը և

սովորել որոշ չափով չեզոքացնել նրա վնասակար ազդեցությունը: Սակայն դժվարությունն այն է, որ մտքի ազատությունը բոլորին չէ հասու, քանզի քերն ունեն այս ճշմարտությունները ճանաչելու հնարավորություններ:

Սամուլի տարածած տեղեկատվության մեջ ճշմարտության և սուս միահյուսումը չարիքի հիմնական պատճառն է: Միայն սուս տեղեկություններ հրապարակող հանդեսը անխուսափելիորեն կորցնում է իր ազդեցությունը, սակայն նրանք հո այդքան տգետ չեն. ժամանակ առ ժամանակ հրապարակում են նաև ճշմարիտ տեղեկություններ: Միայն այն դեպքերում, երբ հրատարակիչն ամփականորեն շահագրգռված է հակառակը կատարել, երբ տեղեկությունները ճշտելու համար նրա ժամանակը և հնարավորությունները սուս են կամ երբ հենց ինքն է բյուրինացության մեջ՝ ենթարկվելով այլոց զգացմունքներին, կրքերին կամ շահերին՝ անստուգը տեղ կգտնի նրա հրատարակության էջերում: Սակայն սա շատ հաճախ է լինում:

Մերի ննան երկրում հոգևոր անկախության անհրաժեշտ պայմանը մանուլում հրապարակվող քաղաքական լուրերի արժանահավատության, քաղաքական գործիչների կարծիքների մասին հստակ պատկերացումներ ունենալու յուրաքանչյուր մարդու հնարավորությունն է, քանի որ նա, ով անվերապահորեն վստահում է մանուլի հրապարակումներին, կուրորեն կիսում է նաև նրա գնահատականները՝ ինչպես քարեկամների հասցեին միտումնավոր ու չափազանցված գովասանքները, այնպես էլ ընդդիմադիրների դեմ նախապես պլանավորված հարձակումները: Քանի որ ոչ մեկն այդքան լավ և այդքան վատ չի լինում, որքան նրան ներկայացնում են թերթերում, մենք կարող ենք որոշել նման հայտարարությունների արժեքը:

Միայն մարդու վաստակը թվարկող կամ միայն նրա թերությունները հիշատակող ցանկացած բնութագիր վստահելի չէ, քանզի չկան բացարձակապես թերություններ չունեցող անբասիր մարդիկ, ինչպես որ չկան այնպիսիք, որ չունենան որևէ լավ արժանիք:

Անեն անգամ, երբ թերթերը սկսում են անզուսաց կերպով միաբերան գովել ինչ-որ քան, կարելի է վստահաբար ասել, որ դա հետևանք է կամ նրանց ծախվածության, կամ նրանց ցանկության՝ հետևելու ինչ-որ մեկի հրաշալի արժանիքների մասին նախապես ծրագրված կարծիքին, քանզի նախընտրում են լողալ հոսանքով, քան թե դիմակայել դրան, եթե չկան հակառակ ընթացք ընտրելու լուրջ իհմքեր: Անեն անգամ, երբ վարկաբեկող տեղեկությունները ընդհանուր և լողզված են, կարելի է պնդել, որ դրանք չափազանցված են ու կեղծ:

Քաղաքական և գրական երևույթների, առանձին անձանց ու անբողջ պետությունների հասցեին անզուսաց գովասանքների կեղծավորությունը կարող է, որպես կանոն, ապացուցվել դրանք պարունակող հրապարակումների աշառությամբ. նույն կերպ և նման գովասանքների հականիշը՝ չարախսությունն է ապացուցելի: Մտադրությունների ոչ անկեղծ լինելը աշխարհիկ մարդիկ հեշտությամբ ընկալում են ասվածի տոնեց. և նա, ով կուրորեն հավատում է գովարանությանը կամ պարսավաճքներին միայն այն իիմնավորմամբ, որ դրանք առանց խղճի խայթի հրապարակված են մամուլում, ապացուցում է, որ ինքնուրույն մտածողության իր ընդունակությունը դեռևս սաղմնային փուլում է:

Գրողներն իրենք են գրում իրենց գրքերի գրախոսականները կամ խնդրում են այդ անել իրենց ընկերներին, քաղաքական արկածախմնդիրները պահում են մի մեծ խումբ կողմնակիցներ, որոնք իրենց կյանքի պլանները կապում են այդ հովանավորների քաղաքական կարիերայի հետ, նկարիչները, դերասանները և անգամ կրտսական քարոզիչները բաց չեն թողնում հաջողության հասնելու համար նույն հնարքներին դիմելու հնարավորությունը: Աշխարհը կզարմանար՝ իմանալով, թե ժամանակիս մեծագույն այրերից ոմանք մամուլի ինչպիսի բռնություններին են ենթարկվում, քանզի քչերը տղամարդկային և բարոյական արիություն ունեն այդ ճնշմանը դիմանալու համար:

Միապետի գահը տապալած և նրա տեղը հասարակական կարծիքի իշխանությունը հաստատած ժողովուրդը, որն իր

շահերի պաշտպանությունը կուրորեն վստահուն է հանուն իր շահադիտական հաշվարկների թերթերի միջոցով իշխել ցանկացող մարդկանց, ընդամենը բռնության մի ծևը փոխարինել է մեկ ուրիշով:

Հաճախ են պարծենում, որ Միացյալ Նահանգներում հրատարակվում են շատ ու շատ թերթեր ու հանդեսներ: Ավելի ողջամիտ կլիներ ցավել դրա հանար, քանզի այդ հրատարակությունների որակը հակառակ համեմատական է դրանց քանակին:

Կարելի է գտնել ամերիկյան մամուլի վնասակար ազդեցության մի ուրիշ բացատրություն ևս. այս երկրի յուրահատուկ ֆիզիկական պայմանները: Բոլոր երկրներում էլ առավել լուսավորյալ և նրբաճաշակ դատողությունները (կարևոր չեն դրանք վերաբերում են բարոյականությա՞նը, թե՞ գիտական ճշմարտությանը, ճաշակին, շարժուձևին, փաստերին) անխուսափելի իրեն միայն քերին են հասու: Մարդկության գերակշիռ մեծամասնությունը իր գոյության պայմանների պատճառով ի վիճակի չէ հասնելու ոգու նման բարձունքների: Խելացի և կրթված մարդկանց ու բնակչության ընդհանուր թվի հարաբերակցությունը (եթե պատշաճորեն հաշվի առնվի տարբեր երկրների քաղաքակրթության աստիճանը) ներ երկրում հավանաբար նույնն է, ինչ մյուս երկրներում: Գուցե այն ավելի բարենպաստ է տղամարդկանց շրջանում: Սակայն տարածքի հսկայածավալությունը խանգարում է նման մարդկանց համախմբմանը, հետևաբար՝ փոքրացնում է նրանց ազդեցությունը հասարակության մեջ: Նման պայմաններում մանուլն ստիպված չէ եռանդագին ջանքեր գործադրել՝ իր նպատակներին հասնելու համար, ինչպես մյուս երկրներում, ուր անսկզբունք աճպարարներն ու թերուս տգետները հանդիպում են այն մարդկանց դիմադրությանը, ովքեր իրենց բնավորության և իրենց տրամադրության տակ եղած տեղեկությունների շնորհիվ տեղի չեն տալիս իրենց թյուրիմացության մեջ գցել ցանկացող ստորության, սովետության ու ստիառածկերպի: Եվս մի պատճառ է դեկավարնան, մեր հասարակական հաստատություններում տարածված վարվելակերպի ժողովորդական բնույթը. դրանց ծառայողները պահպանում են

ամբոլիսի միջին մակարդակին հարիր վերաբերմունքի ձևերը:

Ամերիկայում, ուր մեծագույն սկզբունքներ են հոչակվել՝ մամուլը նպաստել է ժողովրդական ոգու վերելքին, հասարակական գիտակցության կատարելագործմանը, հասարակական շահերի պաշտպանությանը։ Սակայն քանի որ պայքար՝ հանուն այդ սկզբունքների իրականացման այլևս չի մղվում, և այն փոխարինվել է ինքնասիրության ու նեղ անձնական շահերի մրցակցությամբ, մամուլն ամբողջությամբ վերցրած ծառայում է ոչ վաղ անցյալում իր իսկ սկսած նախաձեռնությունների ոչնչացմանը՝ երկրում նախապատրաստելով ահավոր փոփոխություններ, նրա վրա հրավիրելով Աստծո արդարացի զայրույթը։

Իր այսօրվա վիճակով մամուլը, թերևս, կարող է համարվել այն գլխավոր գենքը, որով խեղաթյուրվում, ճնշվում և ոչնչացվում է ամեն լավ բան ու գովերգվում, ծաղկեցվում է ամեն այլանդակը, որ կա մեր երկրում։ Ծշմարտության այն փոքր քանակությունը, որ կա մամուլի հաղորդումներում, վանող տպավորություն է թողնում, անհամոզիչ է թվում և պարունակում է բավականին սխալ ու կեղծ տվյալներ, քանզի կրում է կարծիքների աչառության և կանխակալության հետքերը։ Կեղծիքով, սովորական աշխատանքով, քշնամանքով, նախապաշտումներով ու քաղաքական աճպարարությամբ ապրող մարդիկ մամուլը համարում են հարմար գենք, որ սատանան ստեղծել է միայն իրենց դիտավորություններն իրականացնելու համար։ Մեր ժամանակների մի սրամիտ, սակայն անսկզբունք քաղաքական գործիչներից մեկն ասել է, թե «լեզուն մարդուն տրված է իր մտքերը թաքցնելու համար», այսօրվա դիրքերից իրականությունը գնահատելու դեպքում, նա կարող էր ավելացնել. «...իսկ մամուլը ստեղծված է ծշմարտությունը խեղաթյուրելու համար»։

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

### ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

...Եթե Ամերիկան լիներ հնագույն երկիր՝ իր տևական պատմական ու մշակութային անցյալով և ունենար, ինչպես ասվում է, սեփական նախնիներ՝ մշակույթի ոլորտում, նման սահմանափակումը (օտարերկրյա արվեստի և գրականության) ձևականորեն կրվար հիմնավորված, եթե ոչ արդարացված: Բայց չի կարելի մոռանալ, որ Ամերիկան վերաբնակների երկիր է, երկիր, որ նոր-նոր կայանում է՝ արվեստի ոչ մի ասպարեզում սեփական դպրոց չունենալով: Ամերիկացիները գործարարներ են, բայց բոլորովին չեն հասկանում՝ նրանք անտարբեր են գեղանկարչություն չեն հասկանում՝ նրանք անտարբեր են գեղանկարչության նկատմամբ: Համարյա նույն կերպ են վերաբերվում գրականությանը: Եթե նկարչության մեջ նրանք տեսնում են ընդամենը գույների միախառնում, որով հիանալ կարելի է նաև պատճենումների դեպքում, ճիշտ նույն կերպ լիովին անտարբեր են գեղարվեստական գործի մակարդակի նկատմամբ. կարևորը, որ սիրո մասին պատմվի ու հնարավորինս շատ կրակեն իրար վրա: Գրականությունն Ամերիկայում հոգևոր ուժ չէ և դաստիարակության միջոց չէ, այլ, ընդամենը, առավել կամ նվազ չափով հաճելի զվարճանք: Մարդկիկ կարդում են ոչ թե իրենց միտքը զարգացնելու համար. նրանց գրավում են բալլադների կտրուկ լեզուն, գրգռում են դետեկտիվների արյունոտ տեսարանները, արցունքի աստիճան հուզում է սերը, որ նկարագրված է Շառլուտուա Բրեմեի վաղ շրջանի վեպերում, իսկ երեկոները

նրանք հաճույքով քուն են մտնում Լոնգֆելլոյի երկարաշունչ պոեմների սիթմերի ներքո: Թերթեր ամերիկացիները կարդում են, որպեսզի տեսակ լինեն քաղաքային նորություններին, հետևեն Նյույորքյան ձիարշավի վերջին տվյալներին, Զեյ Գուլդի երկաթուղային վերջին մեքենայությունների մանրամասներին: Եվ՝ բնավ ոչ այն պատճառով, որ ինչ-որ նոր բան իմանան գրականության նոր հոսանքների, արվեստի ու գիտության մասին. թերթերում նման բան չես գտնի: Ամերիկյան թերթերի հիմնական բովանդակությունը միօրինակ է՝ բիզնես և հանցագործություններ:

Ամերիկյան ցանկացած քաղաքում լրագրավաճառը տեղական մշակույթի զգայուն և օգտակար ծանրաչափն է: Եթե օտարերկրացին մի շաբաթ շարունակ օր առ օր լսի նրա քննադատությունը, վառ ու ամբողջական պատկերացում կունենա քաղաքի կյանքի մասին: Լրագրավաճառը պրոֆեսիոնալ է և դիպուկ արտահայտում է համաքաղաքացիների տրամադրությունները. այդ տրամադրությունների ծանրաչափն է նաև ինքը՝ իր բացականչություններով կարողանում է հարուցել անցորդների հետաքրքրությունը, հիանալի իմանալով՝ ինչն է նրանց գրավում: Նա երբեք չի ասի, որ տպագրվել է այսինչ գիոքը կամ այսինչ կտավն է նկարվել. փայլուն գիտի, որ հասարակությանը հրապուրում են երկաթուղային վրարները և տարատեսակ սպանությունները: Քանի որ Ամերիկայում թերթերը նախ և առաջ առևտրական ձեռնարկություններ են, որ սպանությունների նկարագրությամբ շատ ավելին են վաստակում, քան հոգևոր կյանքի ու մտավոր ստեղծագործության, լրագրողները համապատասխանաբար լրացնում են իրենց սյունակները: Եվ եթե լրագրավաճառը ազդարարում է, որ Վաշինգտոնյան ավենյուում հրդեհ է բռնկվել, իսկ 17-րդ փողոցում ծեծկուտուք է, Մոնտանա նահանգում՝ փոթորիկ, Մասաչուսետսում էլ մի կին են բռնաբարել, մի կասկածեք՝ ինց դա է թերթի գլխավոր բովանդակությունը: Ահա և ստացվում է, որ լրագրավաճառները, որոնց հետաքրքրություններով, իրենք ևս ներգործում են ամերիկյան լրագրության բնույթի վրա:

Արտառոց է այդ լրագրությունը՝ աղմկոտ, պաշտում է սկանդալները, թափահարվող բռունքները, ատրճանակների կրակահերթերը: Այդ են արտացոլում և կաշառքով գրված առաջնորդողները, և գովազդային պոեզիան, և քաղաքային բանբասանքները. իրավ արտառոց լրագրություն է: Այստեղ և դատարանի դահլիճից փոխանցվող սկանդալային պատմություններն են, և գնացքների բախումից տուժածների տնքոցները, և հայրենասիրական կերուխումների «կեցցե»-ները, և խոշոր գործարանների շղենուրենքի դիմունները, և թերթի հաստիքային քարոզիչ արտաքերած Աստծոն խոսքը. պետք է, չե, որ թերթը հաստիքային քարոզիչ ունենա, և Թեննեսիի լուսնալույսի ու Բոստոնում սիրո մասին կանացի ոտանավորներ, առողջապահական խորհուրդներ՝ չորս սյունակով... իրապես արտառոց լրագրություն է: Եվ ինչ բարձրածայն է բարբառում թերթեր գորո՞ վառողից այրված ծովահենների այս գործը:

Ամբողջ Ամերիկայում հանրահայտ դարձած բրուկլինցի հոգևորական Ուիթ Թուլիչը կիրակնօրյա թերթերին նվիրված դասախոսության մեջ վերջերս ամերիկյան թերթերի մասին ասաց հետևյալը. «Նա հոգու համգստություն է ծեռքբերել: Եվ բարենորոգիչները, ինչպես լրագրողների մեջ, այնպես էլ նրանց շրջանակից դուրս, պետք է կրկնապատկեն ջանքերը, որպեսզի բարձրացնեն բարոյական մակարդակը և վերածնեն բարության գենրի: Մեր թերթերը համաշխարհային իրադարձություններին համընթաց են: Եթե համեմատենք մեր ժամանակակից թերթերից որևէ մեկը 35 տարի առաջ տպագրված նման թերթի հետ, ամիսուսափելիորեն կզարմանանք՝ որքան է աճել գրական մակարդակը: Այժմ մամուլում աշխատող մարդիկ ավելի լավան են 35 տարի առաջ աշխատածներից: Նրանց արտադրանքը առանձնանում է առավել առողջ ոգով, ավելի բարձր է դարձել աշխարհիկ մամուլի կրոնական ու բարոյական մակարդակը: Բարոյականությունը, որ մեզ ներկայացնում են թերթերը, ոչ մի կերպ չի գիշում բարոյականությանը, որ եկեղեցական ամրիոնից է հնչում: Այո, մամուլը համգստություն է ծեռքբերել»:

Եվ քանի որ հոգևորական Թումիջը հայտնի է իր անառարկելիությամբ ու ի հավելում է՝ լիովին զուրկ է հումորի զգացումից, յանկիները որոշեցին, որ նա պարծենում է այն բանով, ինչից պատկերացում չունի և լրագրողներից մեկը ստանձնեց «հանգստացած» գործընկերների պաշտպանությունը: «Ամերիկա» ամսագրի խմբագիրը քահանային զայրացած առարկություններ ներկայացրեց՝ բանավիճելով նրա պարզիությունը հավատի շուրջ առ ժամանակակից ամերիկյան բարձրարդույական մասուլը: Ասի ինչ է գրում «Ամերիկան»:  
«Եթե մեր ժամանակակից կիրակնօրյա թերթերից որևէ մեկը համեմատենք 35-ամյա վաղեմության սովորական օրաթերթի հետ, կպարզվի, որ իհն թերթն առանձնանում է տոնի բարոյականությամբ և հայրենասիրական բովանդակությամբ, մինչդեռ ժամանակակից թերթը իրենից ներկայացնում է գոեհկության, սենացիաների ու սկանդալների համածուլվածք՝ լուրջ տոնով պատմված: Գուցե կիրակնօրյա թերթերի բարոյականությունն ու ճշմարտությունը նույն մակարդակն ունի՝ ինչ քարոզիչներինը, բայց շատ ցավալի է նման խոստովանություն լսել հոգևորականից»:

Ի դեպք ամերիկյան լրագրության մասին ոչ մի դեպքում չես ասի, որ նրա հրապարակումները «առավել ու առավել լավն են դառնում»: Գրականության համեմատությամբ նրանց լրագրությունը կարելի է համեմատել միայն կոպենհագենյան մանրիկ թերթուկների հետ՝ դա բուլվարային մամուլ է, որի բովանդակությունն ու ոգին ամբողջությամբ հատուկ ամերիկյան ու նյութական տրամադրվածություն ունեն: Ելույթ է ունեցել Մոլժևսկան (Յելենա Մոլժևսկան՝ 1840-1909, լեհ դերասանուհի էր, որ հաճախակի է հյուրախաղեր ունեցել Մեծ Բրիտանիայում ու ԱՄՆ-ում) քաղաքային «Մեծ թատրոնում», նվագել է Մենտերը (Սոֆիա Մենտեր՝ 1846-1918, հայտնի դաշնակահարուիհի, Լիստի սանուիհին) «Օպերայում», դասախոսություն կարդացել է Լինդեն (Կառլ Լինդեն՝ 1842-1934, գերմանացի ֆիզիկոս, ինժեներ)՝ Ամերիկայում. հաջորդ օրը արդեն ոչ մեկին դա չի հուզում, եթե նույնիսկ թերթերը հիշատակեն նրանց մասին, հիմնականում դերասանուիհիների

սանրվածքի ու հագուստի նկարագրության համար, նաև հաղորդելու՝ քանի մատանի են կրել, քանի անգամ են «քիս» բղավել և մոտավորապես գնահատելու, թե ինչ գին ունեին նրանց զարդերը: Դուք ապարդյուն կորոնեք արտիստների արվեստի վերլուծություն, խաղի նկարագրություն, նտահոգ քննադատություն... ոչ, հոգևորի հետին նշույլ իսկ թերթերում չես գտնի: Ու՞մ համար դա տպագրել: Ու՞մ համար և ո՞վ պիտի քննադատական գրախոսություն գրի: Լրագրողներին դաստիարակում են լրագրավաճառները, նրանց՝ ընթերցողների ամբոխը, իսկ ամբոխին արվեստը բոլորովին չի հետաքրքրում: Գործարարները իրենց թերթը կարդում են տրամվայում, իսկ թիգնեսմենի կինն ու դուստրը գուցե նույնիսկ եղել են համերգին ու սեփական աշքերով են տեսել Մոլժևսկայի սանրվածքը: Ոչ, նրանց առավել սուր ճաշտեսակ մատուցեք՝ օրինակ, որևէ տան մուտքում գտնված խեղված ու արյունոտ դիակ, բորսայի վայրենի խառնաշփոթը, խոշոր գործադուլ, ընտանեկան ողբերգություն՝ դա հասու է նրանց խելքին, հետաքրքրում է նրանց, խտղտում է նրանց կոփված նյարդերը:

Խոստումների, կաշառքների, հանցագործությունների ու դժբախտ պատահարների այս ամբողջ շեղի հետ ամերիկյան յուրաքանչյուր թերթ մեկ, երբեմն նաև երկու սյունակ է տրամադրում քաղաքային նորություններին, սեփական խմբագրական տեղեկություններին, որոնք երբեմն երկրորդ, երրորդ անձից են հայքայթվում՝ դառնալով տեղացի տիկինների առավոտյան ընթերցանության նյութ, անբանների էրութիցիայի աղբյուր՝ այսպես կոչված «տեղական ժամանակագրություն»: Այդ սյունակում հաղորդվում է ամուսնությունների, ծնունդների ու մահերի մասին: Եվ ինչպես եվրոպական թերթերը տեղեկացնում են քաֆակիր անձանց քաղաքական նկատառումներով միմյանց հետ հանդիպումների մասին, ամերիկյան թերթերը իրենց «տեղական ժամանակագրություններում» պատմում են տվյալ քաղաքի մի բնակչի այցի մասին տվյալ քաղաքի մեկ այլ բնակչի: Օրինակ, Մեծ լճերից նավապետի օգնականի կինը այցելել է իր երկաթագործ որդուն

կամ պրերիաներից ձիապանը Եկել է ծնողներին տեսնելու՝ թերթերում բոլորին հիշում են, թերթերում բոլորին վերաբերվում են հավասար հարգանքով։ Ընդհանրապես՝ այս սովորույթը ոչ մի առարկություն չի առաջացնում այդպես է ընդունված այս երկրում, և տասնյակ հազարավոր բաժանորդները միանգամայն բավարարված են նավապետի օգնականի տիկնոց արարքների նկարագրությամբ։ «Տեղական նորությունները» ցանկացած ամերիկյան թերթի ամենախաղաղ սյունակն է. համարյա միշտ ազատ է թժկական խորհուրդներից, քրեական ժամանակագրությունից և, դրանով իսկ, բարձրաշխարհիկ տիկնանց սիրած սյունակն է։ Բայց նույնիսկ այս խորագրում երբեմն ինչում է արտաքին աշխարհի աղմուկը. «Տեղական նորություններում» հայտնվում են հայտարարություններ վարսահարդարման պարագաների, ինչուր սեղմիրանների, ոտանավորներ՝ արդուզարդի առարկաների, տավարի մսի պահածոների նոր տեսակի մասին, որն արդեն շուկայում վաճառվում է։ Դրան անմիջապես հաջորդում է լուրը որևէ ծոխ հարսանիքի կամ ինչ-որ մեկի բարեհաջող լույս աշխարհ գալու մասին, որից հետո էլ՝ ինչ-որ մեկի՝ այս աշխարհը լրելու մասին։ Ընթերցողը վեր է թռչում, ընթերցողը ապշահար է. ուրեմն նորից՝ ինչ-որ մեկը հանգեավ ի Տեր, էի մի յանկի պակասեց։ Գուցե կյանքից հեռացել է քարիատ Ֆուռուլերը կամ ժամագործի զարմուիի Բրաունը, որն ապրում էր Աղամանի փողոցում, 16, թե 17 տանը։ Խոսքեր չկան ասելու, թե ինչ հիանալի քաղաքացու մեզնից խլեց մահը։ Բայց ընթերցողը, այնուամենայնիվ, իրեն մի կերպ վերագտնում է ու շարունակում է կարոլալ նույն սյունակը, և՝ թերևացած շունչ է քաշում. պարզվում է քարիատը չի վախճանվել, իսկ եթե ավելի ուշադիր կարդաս՝ կպարզվի, որ ժամագործի զարմուիին էլ է ողջ-առողջ։ Ուրեմն ի՞նչ, բողոքես, որ մեռնողը եղել է միայն կարի մեքենաների վաճառքի գործակալը Սիսայդ ավենյուից, կամ էլ՝ ոմն միսիս Կինգսլիի զարմիկը, իսկ միսիս Կինգսլիի ամուսինը վերջերս փառահեղ նշեց իր 40-ամյակը։ Շարունակում ենք կարդալ։ Սյունակի կեսը կարդացինք, ընթերցողը հանգստանում է. վերջիվերջո այդքան էլ դժվար չէ պատկե-

րացնել Կոնվեյ ազգանունով մարդու, որը կարող էր ապրել Լինքոլնի կամ որևէ այլ փողոցում: Ու արդեն կարդում ես մեծագույն եռանդով. իրավ էլ, ընթերցանությունը ավելի ու ավելի հետաքրքիր է դառնում՝ ընթերցողը պատրաստ է երդվել, որ հետայսու միայն ու միայն մահազդներն է կարդալու: Հաւկանալի է, որ Վերջիվերջո կպարզվի, որ նոթը նվիրված է ամենասովորական խառատի՝ Գրիմշոու, թե ուղղակի Սմիթ ազգանունով: Թերևս նա վախճանվել է կաթվածից, որ օրինաչափ է նրա կենսակերպի համար: Կարդում ու կարդում ես՝ հետաքրքիր է, վախենում ես՝ մի բար բաց թողնել, կարդում ես արագ, վերջում՝ համարյա կատաղի: Խառատին արդեն հանձնել են հողին, մնում է ընդամենը չորս տող, ժամանակն է այս պատմությունը Վերջակետելու և դեռ ոչ մի խոսք չի ասվել կաթվածի մասին: Իսկ գուցե խոսքը ոմն միստեր Դաունինգի մասին է, վարսավիրի, որ բապտիստական եկեղեցու կողքին է ապրում: Դու արդեն պատրաստ ես վատթարին, ծայրաստիճան նյարդային ես, համարյա համոզված ես, որ խոսքը վարսավիրի մասին է, ինչ-որ մեկը, բոլոր դեպքերում, մեռավ, չէ<sup>o</sup>. ինչով է վարսավիրը վատ ինչ-որ տիկնոջից, որ Ֆրանկլին ավենյուում ուստրեներ էր վաճառում: Կարծես թե հատուկ պատճառեր չկան ամբողջ աշխարհի վարսավիրներին իրենց ճակատագրից պաշտպանելու համար: Եվ ահա, լայն բացելով աչքերը ու շունչը պահած, հոլզմունքից դողալով, Վերջապես կարդում ես. «Անխուսափելի մահից խուսափելու համար պետք է գնաք մեր քաղաքի միակ խանութը, որտեղ կարելի է գնել նշանավոր ծեռնոցները, որ ծեղ կպաշտպանեն մրսելուց. գիտեք, չէ, որ դա Դոնալդսոնի խանութն է»: Օ, Մեծաշնորհ Տեր: Պարզվում է՝ դժբախտ ընթերցողը կես սյունակ գովազդ է կուլ տվել:

«Տեղական նորություններում» ընթերցողը, անտարակույս, կնկատի գովազդը. նրա հետաքրքրությամբ լի աչքը միշտ առաջինը որոնում են այդ խորագիրը, ուստի «Տեղական նորությունները» բավականաչափ թամկ գին ունեցող գովազդային սյունակ է. պետիտով հավաքված մեկ բառը սովորաբար մեկ դոլար արժե, բայց հատուկ հանգամանքների դեպ-

քում, օրինակ տոն օրերին, մեծ քաղաքների թերթերում գինը բարձրանում է մինչև հինգ դոլար:

Ինչոր խմբագիր կարող է իր «Տեղական նորություններում» տեղակայել նման հաղորդում. «Մեր տիկինն այս գիշեր զավակ է պարզել մեզ»: Դե ինչ, արտակարգ հետաքրքիր է, հիանալի, ուղղակի փառահեղ է: Բայց մի քիչ ներքև, մեկ այլ հաղորդման մեջ նույն խմբագիրը շնորհակալություն է հայտնում ոմն հարգարժան ազարակատիրոջ, որ խմբագրություն է բերել այսքան ու այսքան կարտոֆիլ: Այսինքն՝ դա ընդամենը բիզնես է, սովորական գովազդ: Խմբագիրն անհրաժեշտ է համարել հրապարակավ շնորհակալ լինել ազարակատիրոջը կարտոֆիլի համար, կարճիկ տեղեկատվություն տեղակայելով «խմբագրության կողմից» և անպայման «Տեղական նորություններում», որովհետև այն կարդում են բոլորը. ի հավելուն նշվել է կարտոֆիլի տեսակը և խմբագրի տեսակետը. կարտոֆիլը նրան այնքան հրաշալի է թվացել, որ նա վստահ է՝ միայն այդ կարտոֆիլի շնորհիվ իր տիկինը բարեհաջող ծննդաբերեց և որդի պարզեց իրեն և ինչ ինանաս, եթե նախորդ օրը խմբագրի տիկինը երկու կարտոֆիլ ճաշակած չլիներ, գուցե դուստր լույսաշխարհ բերեր:

Այսպիսով՝ նպատակին հասավ. ծիշտ է՝ ի հաշիվ ամենայնտիմ ընտանեկան մանրամասների, խմբագիրը պարզեց ստացավ կարտոֆիլ, որով ինչոր ժամանակ կերակրվի, ազարակատերը՝ այնպիսի գովազդ, որ ամբողջ կյանքում չես մոռանա: Ահա ինչ է մտածում ազարակատերը. հենց որ տանտիրութին տեսնի, որ իր կարտոֆիլի պաշարները սպառվել են, ամուսնու այսոր շոյելով՝ կասի. «Խնորում եմ՝ անպայման այ այս տեսակի կարտոֆիլ կգնես: Ինքդ գիտես՝ որ տեսակի: Յենց այն, որն ուտելուց հետո տղաներ են լույսաշխարհ գալիս»: Թեկուզ դա կատակով ասվի, մտածում է ազարակատերը, այնուամենայնիվ, դա կնշանակի, որ «Տեղական նորությունների» ամենաթանկարժեք գովազդը մարդիկ չեն մոռանում:

Անտաշ, կոպիտ, կպչուն է ներկայանում մեզ ամերիկյան լրագրությունը. այնուամենայնիվ, նա ամենաճիշտ արտացո-

լումն է այդ երկրի հասարակական կյանքի, նրա բնակիչների հետաքրքրությունների ու հայացքների նույնը ոչ մի դեպքում չես ասի ամերիկյան մնացյալ գրականության մասին, հատկապես գեղարվեստական: Լրագրողները նյութեր են քաղուն իրական կյանքից, ճիշտ են փոխանցում յանկինների մտքերն ու զգացումները, առանց գունազարդման արտացոլում են նրանց մկանուտ նյութապաշտությունը, ամեն օր իրենց ներդրումն են բերուն հայրենական մշակույթի պատմությանը: Ի տարրերություն նրանց՝ ամերիկացի գրողները առաջվա նման տարութերում են հոգևոր հնամաշ ավանդույթները և անցյալ դարերի տրամադրությունները, փառաբանում են մեծ սերը, որ հիշեցնում է հինանգլիականը և այլ մարդկանց համար հերոս ու օրինակ են հայտարարում ամերիկացի հայրենասերին, որը թեկուց մեկ դոլար ունի և սղոցարան Միսիսիպիում:

Ամերիկյան թերթերը չունեն նույնիսկ այն ծիծաղաշարժ քաղաքական բանավեճերը, որով հագեցած են եվրոպական թերթերը: Գուցե միայն չորս տարին մեկ ամերիկացիները երկու-երեք շաբաթ բանավիճեն առևտորի ու մաքսային օրենքների ազատության մասին: Այստեղ նրանք մարտնչում են ամբողջությամբ՝ ընդհուար արյունվիկ լինելը, հաղթում են կամ ընդհակառակը՝ տառապում են պարտության համար և վերջապես ընտրում են նախագահին, որից հետո ամեն ինչ հանդարտվում է մինչև հաջորդ նախագահական ընտրություններ: Ոչ ոք չի վիճում քաղաքականության մասին չորս տարի շարունակ: Ամերիկացի լրագրողը թույլ չի տա, որ իրեն՝ չափահաս մարդուն, ստիճան ամբողջ օրը նստել խմբագրատանը ու համառությամբ ինչ-որ հրապարակումների տպագրության համար մարտնչել իին օրենքի հոդվածների կամ նոր օրենքի ստորակետի համար. նա կարիք չունի երկար առաջնորդողներ հորինելու Բիսմարկ կրտսերի անքաղաքավարի պահվածքի մասին Վատիկանում, պետք չէ հորինել գիտական մեկնաբանություններ՝ գահակալական ճառերին ու բարձրաշխարհիկ անձանց այլևայլ հիմար մտահղացումներին: Այդ կարգի քաղաքականության մասին նա միայն լսել է, չգիտի

Նա նաև այնպիսի հասկացությունների մասին՝ ինչպես «աջերն» ու «ձախերը» և ընտրությունների միջև չի տարբերակում «ընդդիմությունը»։ Նրա թերթը իրենից ներկայացնում է անգույն ընթերցանություն, իրադարձությունների ինչ-որ կանոնագիրք, որ տեղի են ունեցել Արևելքում, Աներիկայի արևամուտքում։ այնտեղ կգտնես աշխարհում ամեն ինչի մասին տեղեկություններ, օրընթաց նյութեր։ Ահա ձեռքիս տակ են ամերիկյան վերջին օրաբերթերը, և ես, ոչինչ չընտրելով, ուղղակի կարդում եմ վերնագորերը։ «Փախստականի ձերբակալությունը... Երեկվա հրդեհը... Լինչի դատաստանը... Տարագորության հետևանքները... Կանադական ձկնորսության պրոբլեմները... Մեծ ծեծկոտուք... Գանձարանի պաշարները... Բորսայական նորություններ... Ինչ են մտածում Հյուսիս-Արևմուտքի բնակիչները... Վերջին նորությունները... Գողական նկրտումներ... Բարձրագույն դատարանի դահլիճից... Ծեծվել է մինչև մահվան դուռը հասնելը... Եզակի միջոց (դեղամիջոցի մասին)... Արճիճե խողովակների գողությունը... 1000 դոլարի գողությունը... Բննցքամարտիկներ Կիլենի և Մակլաֆրիի մենամարտը «Կոմիկում»... Սպիտակ ստրուկներ Տեխասում... Մարզական քայլք. Երեկվա արդյունքները... Սպորտ... Դանակի հարված... Նորություններ Մինեսոտայից... Դակոտայից... Միչիգանից... Տարբեր տեղերից... Հանկարծանի եղավ... Քաղաքացիական հոգեհանգիստ... ճանապարհին... Հուղարկավորություն Ուայնոնում... Տրանսպորտի վիճակը... Դատական ստորին ատյաններից... Գողացել են ութ հազար... G.A.R. (Grand Army of the Republic-Հանրապետության մեծ բանակ).... Սենատոր Քեյի գործը... Կենտրոնական Աֆրիկայում կանայք վաճառքի են հանվում... Ընկնում է հացահատիկի գինը... Խանդրու սարսափելի վրեժը... Նյույորքյան շուկան... Զիկագոյի շուկան... Սևամորթը այն աշխարհ գնաց... Ինչու նա դարձավ հերոսուհի... Բանկային գործակալի անհետացումը... Հոգևորականների միավորումը... Վրարեկաբուլագծում... Գտնվել է բուժիչ խոտաբույս (դեղամիջոցի արտոնագրման մասին)... Իգլզի դեկավարի կարծիքը...

Կորդենի ղեկավարի կարծիքը... Տեղական նորություններ... Լքել է ամուսնուն... Սպանվել են երկու հնոցապաններ... Օրենսդրություն... Կինը վրա է հասել... Գեներալ Գրանտը՝ որսորդի դերում... Տրամվայի մասին... Զնաբքեր... 63-ամյա հայրը անբարո կապի մեջ՝ իր 7-ամյա դստեր հետ... Կանանց միությունը... Մի մոռացեք Աստօն Ճնշուկներին (գովազդ)... Սնանկացում... Յեռագրեր... Գեղեցիկ հագուստների սիրահարների համար... Ագարակապանի սպանությունը... Փառուղերին ապաքինվում է... Քահանա Ֆիցջերալի քառոզը... Լեհերի ձերբակալությունը... Go on (Երկիրը չինացիներից մաքրելու կոչ)... Գլահստոնը ամերիկյան հայտնագործությունների մասին... Օծվել է նոր եկեղեցի... Կոտրված լուսամուտը... Վայրի երթ... Երեք ոստիկանները պահակակետում... Յայտարարությունների 11 սյունակներ» («Գլոբ» թերթի 1889 թ. հունվարի 9-ի համարի վերնագրերը):

Ոչ մի բառ քաղաքականության մասին, ոչ մի բառ... Բայց յուրաքանչյուր վերնագիր (որքան էլ անտաշ ու անհետաքրքիր լինի) ցույց է տալիս, թե ինչով են զբաղված յանկիների ուղեղները, ինչի մասին են խսում ու ինչ են ուզում կարդալ: Ամերիկյան թերթերը ճշգրտորեն բավարարում են ամերիկյան հոգևոր կյանքի պահանջները. նրանց բովանդակությունն այնքան նրբանկատ ու հովվերգական չէ, ինչպես գեղարվեստական ստեղծագործությունները, փոխարենը նրանք հարյուր անգամ ավելի իրատես են և ծշմարտացի: Ամերիկյան թերթերը անհանգիստ ու աղմկոտ են, ինչպես կյանքն ինքը. անտաշ, բայց ծշմարիտ:

Մի բանով ամերիկյան մամուլը առաջ է անցել մնացած բոլոր երկրների մամուլից՝ նա կարողանում է հայթայթել և վայրկենապես հրապարակել նորությունները: Թերթերը վիթխարի միջոցներ են ծախսում նորությունների ձեռքբերման վրա, թղթակիցների լայն ցանցի ստեղծման համար՝ նրանց հրահանգված է խմբագրությանը հեռագրել ցանկացած, թեկուզ շատ անկարևոր իրադարձության մասին. ամենաչնչին առիթներով թերթը արտակարգ համարներ է տպագրում՝ այդ իմաս-

տով «Նյու Յորք Յերալդն» իրեն հավասարը չունի: Այդ թերթի խմբագրությունը, բացի առանց բացառության բոլոր երկրներում թղթակիցներից, բացի գրաշարներից, տպագրիչներից, սրբագրիչներից, 65 հաստիքային աշխատակիցներ ունի: Նրանցից 17-ը խմբագիրներ կամ բաժնի վարիչներ են, մնացածները ռեպորտյուներ, որ թափառում են Նյու Յորքի փողոցներում ու նյութեր են հավաքում: Յերիջ է, որ նման ռեպորտյուրը որևէ նորություն լսի, նա տեղմուտեղը կը լանա առաջին իսկ պատահած հեռախոսակետ ու հեռախոսավարուհուն կիրահանգի՝ «Միացրեք «Յերալդ», որպեսզի անմիջապես տեղեկությունը հաղորդի խմբագրություն: Այդ ռեպորտյուներից բացի թերթի տնօրինության տակ է սեփական շոգենավակը, որ լողանցում է ամբողջ նեղուցը և հավաքում բոլոր նորությունները, որ կարող են ծովի կողմից հասնել այդ վիրխարի քաղաքը: Ինչպես հայտնի է «Նյու Յորք Յերալդի» թղթակիցը սլացել էր Նիազարայի ջրվեժ և տեղական հեռախոսագիծը կանխավճարով վերցրել՝ սպասելով Ուելսի արքայազնի գալստյանը, որը այց նախաձեռնելով Ամերիկա՝ հայտարարել էր, որ անպայման լինելու է ջրվեժներում: Բայց այնպես էր ստացվել, որ արքայազնը ուշացել էր ու չցանկանալով հեռախոսագիծը կորցնել՝ թղթակիցը հրահանգել էր, որ հեռագրավարուհին սկսի ուղարկել Մովսեսի առաջին գիրքը: Եթե ամբողջ տեքստը բարեհաջող թելադրվել էր Նյու Յորք, իսկ արքայազնն էլ դեռ չէր ժամանել, սկսել էին թելադրել Մովսեսի երկրորդ գիրքը: Արքայազնը վերջապես հայտնվել էր և «Նյու Յորք Յերալդի» թղթակիցը առաջինն էր աշխարհին տեղեկացրել այդ մասին: Ծիշտ է՝ այդ հնարքը թերթին մի քանի հազար դոլար էր արժեցել: Առաջներում էլ «Նյու Յորք Յերալդին» հաջողվում էր նորությունների հրապարակմանը կանխել մյուս թերթերին. արիստինյան պատերազմի ժամանակ նույնիսկ լոնդոնյան «Թայմսն» էր ռազմադաշտից թղթակցություններ արտատպում ամերիկացի գործընկերների թերթերից, ընդ որում՝ իրադարձությունները վերաբերում էին բուն Անգլիային:

Միայն «Նյու Յորք Յերալդ»-ը չէ այդ կերպ ձգտում ապշեցնել ընթերցողներին աշխարհի բոլոր ծայրերից ստացված նորություններով՝ ամերիկյան թերթերի մեջ մասը կենսունակ կապ ունեն թե ամերիկյան թոլոր քաղաքների հետ, թե արտասահմանյան շատերի: Դա անտարակույս խրախուսելի է. ամերիկյան թերթերը ձգտում են յանկիների գլուխը մտցնել աշխարհի ճանաչման ինչ-որ գիտելիքներ, այն աշխարհի, որ տարածվում է Ամերիկայի սահմաններից դուրս և և որի մասին դպրոցում նրանք ոչինչ չեն սովորել: Խասկանալի է՝ ամերիկյան թերթերի տպագրած նորությունները այլ երկրների մասին, իբրև օրենք, հանգում են կարճառոտ կամ առավել ընդարձակ հեռախոսագրերի, բայց փոխանցում են այլ մայրցամաքների լուրերը, տարատեսակ փաստերը, որոնք, եթե օր առ օր համադրվեն, երկար տարիների ընթացքում կդառնան պատմական ակնարկ՝ շատ ավելի հիմնավոր ու լիակատար, քան այն, որ դասավանդվում է ամերիկյան դպրոցներում: Թեպետ՝ նման հեռագրերի բովանդակությունն էլ որոշարկվում է ամերիկյան ոգու բնորոշ առանձնահատկություններով: Թերթերը հարկադրված են հաշվի նստել իրենց բաժանորդների հետաքրքրությունների ու ճաշակի հետ: Նրանք լրության են մատնում գրականության ու արվեստի բոլոր նորությունները, փոխարենը՝ ֆինանսների աշխարհում որևէ մանրութ չկա, որ նրանք հեռախոսագրի անարժան համարեն: Արքունական պարահանդեսները, թագակիրների ճառերը, կայսեր ճանապարհորդությունները, ինչ-որ երկաթուղագծի բացումը, ձիարշավի մրցումները Անգլիայում, մենամարտերը Ֆրանսիայում, ահարեկչությունը Ռուսաստանում՝ ամերիկյան մամուլի սիրած թեմաներն են, որ փոխանցվում են հեռագրով, բայց նույն թերթերը լրում են ամենանշանավոր ողբերգության թեմադրության, արվեստի երկնակամարում ամենախոշոր աստղի հայտնության մասին: Փոխարենը նրանք վայրկենապես հաղորդում են արտասահմանում տեղի ունեցած ամենաանկարևոր իրադարձության մասին, որն առնչվում է առևտրին, ապրանքաշրջանառությանը՝ թեկուզ դա լինի որևէ գերմանա-

ցի ճանապարհորդի մասին, որ իյուրանոցում կորցրել է դրա-  
մապանակը կամ լուր, որից պարզ է դառնում, որ մեկ այլ պա-  
րոն Սարենտեի բորսայում խարենությամբ է գրաղված:

Չնայած իր բոլոր լուրջ թերություններին՝ ամերիկյան  
լրագրությունն, այնուհանդերձ, իրենից ներկայացնում է ամե-  
րիկյան ժողովրդի ոգու ինքնատիպ ու հզոր արտահայտու-  
թյունը՝ շնորհիկ իր խիզախության, իր իրապաշտական հզո-  
րության, իսկ գրական առումով նա կարող է հանարվել ամե-  
նաժամանակակիցը բոլորից:

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՍ ԽՄԲԱԳՐԵՑԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԵՐԹԸ

Առանց դույզն-ինչ վախտնալու ես հանձն առա գյուղատն-տեսական թերթը ժամանակավորապես խմբագրելու առաքելությունը: Ենիշտ այնպէս, ինչպէս հասարակ մահկանացուն, ոչ նավաստին, հանձն կառներ դեկավարելու նավը: Սակայն ես նեղ վիճակում էի, և աշխատավարձն ինձ խիստ անհրաժեշտ էր: Խմբագրի արձակուրդ էր մեկնում. ես համաձայնեցի նրա առաջարկած պայմաններին և զբաղեցրի նրա տեղը:

Նորից աշխատանք ունենալու զգացումն ինձ այնպիսի բավականություն էր պատճառում, որ ես ողջ շաբաթը ջանասիրաբար աշխատեցի: Մենք համարը հանձնեցինք տպագրության, և ես հազիվ կարողացա դիմանալ մինչև հաջորդ օրը. անհամբեր սպասում էի, թե ինչ տպավորություն կգործեն իմ քերթվածքներն ընթերցողի վրա: Երբ ես երեկոյան կողմ դուրս էի գալիս խմբագրությունից, սանդղամուտքի մոտ կանգնած երեխաներն ու մեծահասակները այս ու այն կողմ ցրվեցին՝ ճանապարհը գիծելով ինձ, և ես լսեցի, թե ինչպէս մեկն ասաց. «Լա է»: Բնականաբար՝ ես շոյված էի: Առավոտյան, գալով խմբագրություն, ես առմուտքի մոտ տեսա հանդիսականների նույնպիսի մի բազմություն, բացի այդ էլ՝ մարդիկ, զույգ-զույգ կամ միայնակ կանգնած էին սալարկուղուն ու հանդիպակաց մայթին և հետաքրքրությանը նայում էին ինձ: Ամբոխը հետ քաշվեց ու ճամփա տվեց ինձ, իսկ հավաքվածներից մեկը բարձրածայն ասաց. «տեսեք, թե ի՞նչ աչքեր ունի»: Ես ձևացրի, թե չեմ նկատում համընդիանուր ուշադրությունը, սակայն մտքում շոյված էի և անգամ որոշեցի այդ մասին գրել մորաքրոջ:

Ես բարձրացա ոչ բարձր սանդղամուտք և մոտենալով դռանը, ուրախ ձայներ ու քրքիջներ լսեցի: Բացելով դուռը՝ աչքի պոչով տեսա երկու երիտասարդների, դատելով հա-

գուստներից՝ ֆերմերների, որոնք իմ հայտնվելուց գույնները զցեցին ու դուրս թռան լուսամուտից՝ ջարդելով ապակիները։ Դա զարմացրեց ինձ։

Սու կես ժամ անց ներս մտավ երկար, ծածանվող մորուքով և բարետես, սակայն բավականին խիստ դեմքով մի պատվարժան ծերուկ։ Ես նրան իրավիրեցի նստել։ Ըստ երևոյթին նա ինչ-որ բանից սրտնեղած էր։ Հանելով գլխարկն ու դնելով հատակին՝ նա գրանից դուրս բերեց կարմիր մետաքսե թաշկինակն ու մեր թերթի վերջին համարը։

Նա թերթը փոեց ծնկներին և թաշկինակով սրբելով ակնոցը՝ հարցուեց։

- Եդ դուք եք, հա՞, նոր խմբագիրը։

Ես հաստատեցի։

- Դուք երբեք գյուղատնտեսական թերթ խմբագրե՞լ եք։

- Ոչ,- ասացի ես,- սա իմ առաջին փորձն է։

- Այդպես էլ կարծում էի։ Իսկ գյուղատնտեսությամբ երբեք գրադպէ՞լ եք։

- Ո-ոչ, ինչքան իիշում եմ՝ չեմ գրադպէլ։

- Զգիտեմ ինչու, ես դա կանխազգում էի,-ասաց պատվարժան ծերուկը՝ դնելով ակնոցն ու դրա վրայից բավականին խիստ նայելով ինձ։ Նա թերթն ավելի հարմար ծալեց։ - Ես կցանկանայի կարդալ այն տողերը, որոնք ինձ ներշնչեցին այդ կանխազգացումը։ Լսեք և ասեք՝ սա դո՞ւք եք գրել։

«Շաղգամը չափութք է պոկտել ձեռքերով, դրանից այն փշանում է։ Ավելի լավ է տղան բարձրանա ծառը և զգուշորեն թափ տա շաղգամի պտուղները»։

- Ոե, ի՞նչ եք կարծում այս մասին։ Սա դուք եք գրել, չէ՞,  
ինչքան ինձ հայտնի է։

- Ինչ եմ կարծո՞ւմ։ Կարծում եմ, որ վատ չի գրված։ Կարծում եմ այն իմաստազուրկ չէ։ Ոչ մի կասկած չկա, որ միայն մեր շրջանում մի քանի միլիոն բուշել \* շաղգամ է փշանում միայն այն պատճառով, որ խակ վիճակում են քաղում, իսկ եթե տղային ուղարկեն, որ ծառը թափ տա...»

\* Բուշել – ծավալի միավոր, որ հավասար է 36,346 լիտրի

- Տատուդ թափ տո՞ւր,-գոռաց նա,- շաղգամը ծառի վրա չի՝ աճում...

- Ահա թե ի՞նչ, չի՝ աճում: Իսկ ո՞վ ասաց, թե աճում է: Դա պետք է փոխաբերական իմաստով հասկանալ, միայն ու միայն փոխաբերական իմաստով: Յուրաքանչյուր ոք, ով փոքրինչ գլուխ է հանում գործից, կիասկանա, որ ես ցանկացել եմ ասել «թափ տալ թուփը»:

Այս խոսքերի վրա պատվարժան ծերուկը վեր թռավ տեղից, պատառուեց թերթը, օցեց գետնին, կոխսկրտեց, ձեռնափայտով ջարդուիշուր արեց մի քանի իրեր, ճշաց, թե ես զյուղատնտեսությունից կովից էլ քիչ եմ հասկանում և դուրս թռավ խնբագրությունից՝ ուժգին շրիկացնելով դուրը: Ընդհանրապես, նա իրեն այնպես էր պահում, որ ինձ թվաց՝ ինչոր բանից դժգոհ է: Սակայն չիմանալով, թե ինչից՝ ես, բնականաբար, չէի կարող նրան օգնել:

Դրանից քիչ անց խնբագրություն ներս ընկավ երկարահասակ, մեռյալի նման, մինչև ուսերը հասնող մազերի ցանցառ գգուզներով, իր կերպարանքի բոլոր բլրակների ու հարթությունների վրա մի շաբաթվա ցցամազերով մի սուբյեկտ և քարացավ շենքին՝ մատը դնելով շրթունքներին: Ողջ մարմնով առաջ թերվելով՝ նա ասես ունկնդրում էր ինչ-որ ծայներ: Սակայն ոչ մի ծայն չէր լսվում: Այսուհանդերձ՝ նա ունկնդրում էր: Բանալին պտտելով՝ նա ոտնաթարերի վրա բարձրացած գգուշորեն քայլ օցեց, մոտեցավ ինձ, մի փոքր հեռավորության վրա կանգ առավ և երկար նայում էր դեմքին՝ աշխույժ հետաքրքրասիրությամբ: Ճետո գրպանից հանեց իմ թերթի չորստակ ծալած համարն ու ասաց:

- Ահա, սա դուք եք գրել: Կարդացեք բարձրաձայն, արագ: Թեքևացրեք իմ տառապանքները: Ես ուժասպառ եմ լինում:

Ես կարդացի ստորև թերված տողերը, և իմ շրթունքներից ամեն մի բառի պոկվելու հետ, տառապանքն իրեն ավելի ու ավելի լավ էր զգում: Ես տեսնում էի, որ նրա դեմքի տրտմալի կմծիններն աստիճանաբար հարթվում են, տագնապալի արտահայտությունն անցնում է, և վերջապես նրա դիմագծերը ողողվում են խաղաղությամբ՝ ինչպես

թախօտ բնությունն է պայծառանում լուսնի կարճատև փայլատակումով:

«Գուանոն\*\* արժեքավոր թռչուն է, սակայն դրա բուծումը գլխացավանք է: Այն պետք է ներկրել հունիսից ոչ շուտ և սեպտեմբերից ոչ ուշ: Զնորանք պետք է պահել տաք տեղում, որպեսզի այն կարողանա թուխս նստել»:

«Այս տարի հավանաբար հացահատկի բերքը կուշանա: Այս պատճառով ֆերմերներն ավելի լավ է եգիպտացորենի կողութերը տնկելուն և հնդկացորենի բլիթները ցանելուն ձեռնամուխ լինեն հուլիսին և ոչ թե օգոստոսին»:

«Դդումի մասին. այս հատապտուղը Նոր Անգլիայի բնակիչների սիրելի անուշեղենն է: Նրանք գերադասում են հաղարջի փոխարեն դրանով լցոնել թխվածքները և արքայամորու փոխարեն օգտագործում են անասուններին կերակրելու համար, քանզի դդումն ավելի սննդարար է, միաժամանակ՝ արքայամորուն չի զիջում իր համով: Դդումը նարինջների ընտանիքի միակ ուտելի տարատեսակն է, որ աճում է Յունականում, եթե չհաշվենք ուղուղ և սեխի երկու-երեք սորտերը: Սակայն իբրև դեկորատիվ բույս տան առջև դդում տնկելու ավանդույթն արդեն դուրս է մնում մնոդայից, քանի որ այժմ բոլորն են հասկացել, որ այն քիչ ստվեր է անում»

«Ներկայումս, երբ մոտենում են շոգերը և արու սագերը սկսում են խավիար ձվադրել...»:

Յուզված ունկնդիրս ցատկեց դեպի ինձ, սեղմեց ձեռքս և ասաց.

- Բավական է, եղքանք բավական է: Այժմ ես գիտեմ, որ խելքս չեմ թոցրել. դուք բառ առ բառ կարդացիք այն, ինչ ես էի կարդացել: Իսկ այսօր առավոտյան, հարգելի պարոն, առաջին անգամ տեսմելով ձեր թերթը, ինքս ինձ ասացի. «Ես նախկինում երբեք չեմ հավատացել դրան, թեպետ ընկերությունը երբեք ինձ հսկողությունից դուրս չեն թողել, սակայն այժմ գիտեմ. խելքս տեղը չե»: Յասկանալով այս՝ ես այնպիսի վայրի

\*\* Գուանո – թռչնաղը, կենդանական մնացորդներից պատրաստված պարարտանյութ

աղաղակ արձակեցի, որ լսելի լիներ երկու մղոնի վրա և սլացա՝ սպանելու որևէ մեկին. միևնույն է, եթե ես գիծ եմ, դա անելու եմ վաղ թե ուշ, ավելի լավ է չհետաձգել: Ես վերընթերցեցի ձեր հոդվածից մի պարբերություն, որպեսզի վստահաբար համոզվեմ, որ խելքս թռցրել եմ, ապա կրակի տվեցի տունս ու փախսա: ճանապարհին ես խեղանդամ դարձրի մի քանի հոգու, իսկ մեկին՝ ծառը հանեցի, որ պետք եղած ժամանակ միշտ ձեռքիս տակ լինի: Սակայն անցնելով ձեր խմբագրության մոտով, ես որոշեցի այնուհանդերձ մտնել և մի անգամ էլ ստուգել ինքս ինձ: Այժմ ստուգեցի, և դա երջանկություն է ծառին քառած այն խեղճ մարդու համար: Ես նրան անպայման կսպանեի տուն վերադառնալիս: Մնաք բարով, հարգելի պարոն, լավագույն մաղթանքներս ձեզ, դուք իմ սրտից մի մեծ քար գցեցիք: Եթե իմ բանականությունը դիմացավ ձեր գյուղատնտեսական հողվածին, ապա նրան այլևս ոչինչ չի կարող վնասել: Մնաք բարով:

Ինձ մի քիչ վախեցրին խեղումներն ու հրդեհումները, որոնցով զվարճացել եր այդ սուբյեկտը, մանավանդ, որ ես ինձ որոշ չափով այդ գործի մասնակից էի զգում: Սակայն այդ մասին երկար չկարողացա մտորել. սենյակ մտավ խմբագիրը: (Ես ինքս ինձ մտածեցի. «Այ, եթե դու մեկնեիր Եգիպտոս, ինչպես խորհուրդ էի տվել, ապա ես դեռ հնարավորություն կունենայի ցույց տալու, թե ինչի եմ ընդունակ: Սակայն դու չցանկացար ու վերադարձար: Քեզանից այլ բան սպասելի էլ չեր»):

Խմբագիրը մռայլ, վհատ և այլայլված տեսք ուներ:

Նա երկար զննում էր ծերուկ սկանդալիստի և երիտասարդ ֆերմերների իրականացրած ավերածությունները, ապա ասաց.

- Տիսուր է, շատ տիսուր է: Զարդված են սոսնձի շիշը, լուսամուտի վեց ապակի, թքամանը և երկու մոմակալ: Սակայն դա դեռ վատագույնը չէ: Կործանված է թերթի հեղինակությունը, վախենամ ընդմիշտ: ճիշտ է, մեր թերթը երբեք այսքան պահանջարկ չի ունեցել, երբեք այսքան տպաքանակով չի վաճառվել և երբեք այսքան հաջողություն չի ունեցել, սակայն

ով կուզենա հռչակվել իբրև խելակորույս և հարստանալ սեփական տկարամտության հաշվին: Բարեկամս, ձեզ ազնիվ մարդու խոսք եմ տալիս, որ փողոցը լիքը ժողովուրդ է հավաքվել, մարդիկ նստած են նույնիսկ ցանկապատին՝ որպեսզի պատեհություն ունենան գոնե կես աչքով տեսնելու ձեզ, և սա այն պատճառով, որ ձեզ խելագար են համարում: Եվ նրանք դրա իրավունքն ունեն՝ ձեր հողվածները կարդալուց հետո: Այդ հողվածները ժուռնալիստիկայի ամոթն են: Եվ որտեղից էր ձեր գլուխը մտել, թե կարող եք գյուղատնտեսական թերթ խմբագրել: Դուք, ինչպես երևում է, անգամ գյուղատնտեսության այբուբենը չգիտեք: Դուք արորը ակոսից չեք տարրերում, ձեզ մոտ կովերը փետրաբափում են, դուք խորհուրդ եք տալիս ընտելացնել կզաքիսներին, քանի որ դրանք աշխույժ բնավորություն ունեն և լավ մուկ են բռնում: Դուք գրում եք, թե ոստրեները հանգիստ են մնում, երբ երաժշտություն է հնչում: Սակայն այդ դիտողությունն ավելորդ է, քացարձակապես ավելորդ: Ոստրեները միշտ են հանգիստ: Նրանց ոչինչ հավասարակշռությունից չի հանի: Ոստրեները երաժշտությունից ոչինչ չեն հասկանում: Օ՛, որոտ և կայծակ: Եթե դուք ձեր կյանքի ողջ նպատակը դարձնեիք տգիտության մեջ կատարելագործվելը, ապա ավելի աչքի չեիք ընկնի, քան այսօր: Ես կյանքում ննան քան չեմ տեսել: Դենց միայն ձեր այն հաղորդումը, թե ձիաշագանակը շատ արագ գրավում է շուկան իբրև սպառնան առարկա, կարող է հավերժ խորտակել թերթը: Ես պահանջում եմ, որ դուք անհապաղ հեռանաք խմբագրությունից: Ինձ այլևս արձակուրդ պետք չէ, միևնույն է ոչ մի կերպ չեմ կարող դրանից օգտվել, քանի դեռ դուք նստած եք իմ աթոռին: Ես վախից անընդհատ կղողացնեմ՝ պատկերացնելով, թե հատկապես ինչ խորհուրդ կտաք դուք ընթերցողներին հաջորդ համարում: Աչքերիս առաջը մթնում է, հենց որ հիշում եմ, թե ինչ էիք գրել ոստրեների տնկարքների մասին «Դեկորատիվ այգեգործություն» վերնագրով: Ես պահանջում եմ, որ անհապաղ հեռանաք: Ինչո՞ւ դուք ինձ միանգամից չասացիք, որ գյուղատնտեսությունից ոչինչ չեք հասկանում:

- Ինչու չասացի ձե՞զ, այ ոլորի պատիճ, կաղամբակոթ, դդմի որդի: Առաջին անգամ եմ այսպիսի հիմարություն լսում: Ահա թե ինչ կասեմ. ես արդեն տասնչորս տարի խմբագիր եմ աշխատում և առաջին անգամն եմ լսում, թե մարդն ինչ-որ բան պիտի իմանա՝ թերթ խմբագրելու համար: Այ շաղգամի գլուխ, ովքե՞ր են բատերախոսականներ գրում ողորմելի թերթոններում. նախկին փինաչիներն ու թերուս դեղագործները, որոնք դերասանական խաղից այնքան են հասկանում, որքան ես գյուղատնտեսությունից: Ովքե՞ր են գրքերի մասին արձագանքներ գրում. մարդիկ, ովքեր ոչ մի գիրք չեն գրել: Ովքե՞ր են թխում ֆինանսական հարցերով ծանրամարս առաջնորդողները. մարդիկ, որոնց գրաբանում երբեք մի լումա անգամ չի եղել: Ովքե՞ր են գրում հնդկացիների դեմ ճակատամարտերի մասին: Վիզվամը վանպումից չտարբերող պարոնները, ովքեր կյանքում երբեք գլխապատառ չեն փախել՝ փրկվելով տոմահավկներից կամ չեն հանել նետերը իրենց ցեղակիցների մարմնից՝ դրանցով կանգառի ժամանակ խարույկ վառելու համար: Ովքե՞ր են սրափության սրտառուց կոչեր գրում և բոլորից բարձր ոռնում հարբեցողության վնասների մասին. մարդիկ, ովքեր միայն գերեզմանում կսթափվեն: Ովքե՞ր են խմբագրում գյուղատնտեսական թերթերը: Մի՞թե այնպիսի արմատապտուղները, ինչպիսին դուք եք: Ոչ, ավելի հաճախ անհաջողակները, ովքեր ոչնչի չեն հասել պոեզիայի, դեղին կազմերով բուվարային վեպերի, սենագիոն մելոդրամների, քրոնիկների ասպարեզում և ովքեր, ի վերջո, ընտրել են գյուղատնտեսությունը՝ իբրև դեպի ծերանոց տանող ժամապարհի ժամանակավոր հանգրվան: Դուք ի՞նձ եք ինչոր բան բացատրում լրագրային գործի մասին: Ես այն գիտեմ Ալֆայից մինչև Օմախ և ասում եմ ձեզ՝ ինչքան մարդը քիչ գիտի, այնքան ավելի շատ է աղմկում և այդքան էլ ավելի շատ է աշխատավարձ ստանում: Վկա է Աստված, եթե ես լինեի անկիրք ու լպիրշ մեկը, այլ ոչ թե համեստ ու ուսալ մարդ, ես հռչակ ձեռք կբերեի այս ցուրտ ու անսիրտ աշխարհում: Ես հեռանում եմ, սըր: Դուք ինձ հետ այնպես եք վերաբերվում, որ ես նույնիսկ ուրախ եմ հեռանալ: Սակայն ես կատարեցի իմ

պարտքը: Ինչքան կարողացա՝ կատարեցի այն ամենը, ինչ նախատեսված էր մեր պայմանագրով: Ես խոստացել եի, որ ձեր թերթը հետաքրքիր կդադանեմ հասարակության բոլոր շերտերի համար. Ես դա կատարեցի: Ես խոստացա, որ տպաքանակը կհասցնեմ մինչև քսան հազար օրինակ. Կհասցնեի, եթե իմ տրամադրության տակ ևս երկու շաբաթ լիներ: Եվ ես ձեզ կտայի գյուղատնտեսական թերթի երրու ունեցած ամենընտրյալ ընթերցողներին. և նրանց մեջ չեր լինի ոչ մի ֆերմեր, ոչ մի մարդ, ով անգամ իր կյանքը փրկելու համար տարբերեր դդմի թուփը դեղձի վազից: Դուք եք կորցնում մեր բաժանումից, այլ ոչ թե ես: Մնաք բարով, ձմերուկի ծառ:

Եվ ես հեռացա:

## ՅՐԱԺԵԾ Դատված

<...> Ահա թե ինչ կասեմ հրաժեշտից առաջ: Այժմ, երբ անհրաժեշտ է, որ թուրս պատյանը դնեմ, պետք է խոստովանեմ. չնայած ողջ հոգնածության և հիասքափություններիս, ինչին այդքան հաճախ ինձ արժանացրել եմ այդ ճակատամարտերը, ես ափսոսանքով եմ թողնում մարտադաշտը:

Ավելի քան տասնհինգ տարի ես մարտնչել եմ թերթերի էջերում: Սկզբում ես դրանով հաց էի վաստակում: Եվ դա բոլորովին էլ հեշտ չէր. ինչով ասես ստիպված չեմ եղել գրադարձել՝ սկսած պատահարների սյունակից և վերջացրած խորհրդարանական քրոնիկայով: Դետո, երբ արդեն կարող էի ապրել գրքերիս հաշվին, ես դեռևս շարունակում էի մասնակցել այդ կրիվներին՝ այնքան մեծ էր պայքարի մոլությունը: Ես ինձ միայնակ էի օգում. քննադատներից ոչ մեկը չհամարձակվեց կանգնել ին կողքին, և այդ ժամանակ ես որոշեցի, որ ինձ ինքս պիտի պաշտպանեմ: Ինձ թվում էր, որ եթե ես չլեն գրավածս դիրքերը, հաղթանակն ինը կլինի: Ամենակատաղի ճնշումները ինձ գրգռում էին միայն և արիություն հաղորդում:

Ես նույնիսկ հիմա ել չգիտեմ արդյո՞ք ծիշտ տակտիկա էի ընտրել, սակայն, համենայն դեպս, հասցրեցի այդ ընթացքում ինչպես հարկն է ուսումնասիրել մանուլը: Ավագ սերնդի նշանավոր գրողները հաճախ էին ահավոր մեղադրանքներով հարձակվում նրա վրա. այն, իբր, սպանում է գրականությունը, այն ապականում է լեզուն փողոցային կեղտով, այն համաշխարհային հիմարության դեմոկրատական միջնորդն է: Ել չեմ խոսում այլ՝ ավելի վայրագ մեղադրանքների մասին: Ես լսում էի ու մտածում՝ եթե նրանք մամուլի մասին խոսում են այդպես չարությամբ, ուրեմն չգիտեն այն: Իհարկե, մամուլն ինչ-որ բանում իրոք մեղավոր է, սակայն, դրա հետ մեկտեղ, այն ունի իր ուժեղ կողմերը, որոնք ամբողջովին փոխհատու-

ցում և չեզոքացնում են վատ կողմերը: Պետք է երկար ժամանակ խորովել լրագրության հնոցում, այն հասկանալու և գնահատելու համար:

Եթե որևէ երիտասարդ գրող հարցներ իմ կարծիքը, ես կպատասխանեի. «Գլխապատառ նետվեք մամուլի մեջ, ինչպես ջուրն են գցվում՝ լողալ սովորելու համար: Մեր օրերում դա արիության միակ դպրոցն է: Այնտեղ դուք հանդիպում եք իսկական տղամարդկանց, այնտեղ դուք կոփիվում եք: Ընդսմին, սա օգտակար է հենց արհեստի առումով. եթե դուք ամեն օր հողվածներ գրեք, ապա այդ սալի վրա դուք կկռւք սեփական ոճը»: Ես գիտեմ. ժուրնալիստիկային մեղադրում են, թե այն ամայացնում է հոգիները, մարդկանց կտրում է լուրջ զբաղմունքներից, ավելի վեհ գրական խնդիրներից: Այո, իհարկե, ժուրնալիստիկան ամայացնում է մարդկանց, ովքեր իրենց հոգում ոչինչ չունեն, այն խրտնեցնում է ալարկոտներին ու չոր ձևապաշտներին, ում պատվախնդրությունը բավարարելը ջանքեր չի պահանջում: Սակայն դա ի՞նչ նշանակություն ունի: Ես չեմ խոսում միջակությունների մասին. սրանք խցկվում են մամուլ, ինչպես կխցկվեին առևտրային կամ նոտարական գրասենյակ: Ես խոսում են ուժեղների մասին, նրանց, ովքեր աշխատում են և ինչ-որ բանի հասնում: Թող նրանք առանց վախենալու գնան թերթերի խմբագրություններ. նրանք այնտեղից կվերադառնան ինչպես զինվորներն են արշավից վերադառնում վիրավոր և կոփիված, նրանք կինանան իրենց գործը և կճանաչեն մարդկանց:

Մի՞ թե մեզանից լավագույնները չեն անցել այդ փորձություններով: Մենք բոլորս մամուլի աշակերտներն ենք: Այդ նա է մեր ուսադիրներին դրել առաջին աստղերը: Այդ նա է մեր ոճին ճկունություն հաղորդել, նա է մեզ մատակարարել փաստացի նյութերի մեջ մասը: Պետք է միայն բավականաչափ ոինացկուն լինել, պետք է ինքդ օգտվես նրանից, ոչ թե նրան հնարավորություն տաս օգտագործել քեզ: Այդ նա պետք է քեզ տանի իր շալակին:

Եվ այնուամենայնիվ, այս բոլոր պրակտիկ գիտելիքների համար նույնիսկ ամենահամառները շատ բանկ են վճարում:

Ինքս անձանք հաճախ եմ ստիպված եղել անիծելու մամուլը. Երբեմն այնպես ցավոտ են եղել նրա հասցրած վերքերը: Քանի-քանի անգամ եմ ինձ բռնացրել՝ մանուլի հասցեին նույն մեղադրանքները նետելիս, ինչ իմ ավագ գրչընկերները: Լրագրողի արհեստը՝ վերջինն է վերջիններից: Ավելի լավ չէ ճամփեքի աղբը հավաքել, քար ջարդել, գրաղվել ամենածանր ու նվաստացուցիչ գործով: Եվ իմ այս բողոքները կրկնվում են ամեն անգամ, երբ ինձ զգվանք էր պատճառում հանկարծակի պատահած որևէ նողկալի բան: Աշխատելով մամուլում՝ հաճախ ես խրվում մարդկային հիմարության և անբարեխղճության ճահիճը: Սա նրա զգվելի, բայց և անխուսափելի կողմն է: Քեզ կծում են, տանջում, ցեխ շպրտում վրադ, իսկ դու նույնիսկ չես էլ կարողանում որոշել, թե ինչն է դրա պատճառը՝ մարդկային հիմարությունը, թե չարությունը: Քեզ թվում է, թե արդարությունը վերջնականապես մեռել է, երազում ես փակվել ինչ-որ տեղ աշխատասենյակում այնպես, որ քեզ չանհանգստացնի փողոցի աղմուկը և այնտեղ՝ լրության մեջ, մարդկանցից հեռու գրել միանգամայն անկաշառ ստեղծագործություններ:

Սակայն զայրույթը ու զգվանքը անցնում են, իսկ մամուլը մնում է նույնքան ամենակարող: Դու վերադառնում ես նրա մոտ, ինչպես նախկին սիրուդ: Նա՝ կյանքն է, գործողությունը, այն, ինչը արբեցնում է քեզ և հաղթում բոլորին: Բաժանվելով նրանից, չես կարող վստահ լինել, որ լքում ես ընդմիշտ, քանզի դա մի ուժ է, որի կարիքը դու մշտապես զգում ես այն պահից, երբ չափեցիր նրա հնարավորությունները: Անգամ եթե այն քեզ թաղել է կեղտի մեջ, եթե անգամ այն եղել է տիսմար ու կեղծուպատիր, միևնույն է մնում է պայքարի ամենահուսալի, ամենաազեցիկ միջոցներից մեկը, որ ունի մեր դարը: Եվ նա, ով համարձակվել է ձեռք զարկել այդ դարի առջև ծառացած խնդիրներին, ոչ միայն նրա հանդեպ չարություն չի տածում, այլև, ընդհակառակը, այն իբրև գենք է վերցնում ամեն անգամ, երբ պետք է մարտի նետվել:

## ՅՈՂՎԱԾԱՇԱՐ ՈՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Նախաբան

Կարիք չկա ասելու, որ մենք քաղաքակիրթ մարդկանց փոքր զանգված ունենք: Վեհության մեջ չեն խնդիրը, այլ այն իրողության, որ մեզ մոտ արդեն պատմականորեն ավարտված է Եվրոպական քաղաքակրթության հեղաշրջումը, որ գալիս է ուրիշը, և առավել կարևոր է այն, որ սա արդեն գիտակցել են մեզ մոտ: Գիտակցության մեջ է ամբողջ խնդիրը: Մեզանում գիտակցել են, որ քաղաքակրթությունը միայն նոր տարրեր է բերում մեր ժողովրդական կյանք՝ բոլորովին նրան չխանգարելով, բոլորովին չշեղելով նրան իր նորմալ ճանապարհից, այլ, ընդհակառակը, ընդլայնելով նրա մտահորիզոնը, մեզ բացատրելով մեր նպատակները և մեզ նոր գենք տալով ապագա սխրանքների համար: Մենք չունենք դասային շահեր, որովհետև դասեր, իրական իմաստով, չկան: Մենք չունենք գալլեր ու ֆրանկներ, չունենք ցենզ, որ արտաքին տեսքից դատում է՝ ինչ արժի մարդը, որովհետև մեզանում մարդու միայն կոթությունը և միայն բարոյական արժեքները պետք է որոշեն՝ ինչ արժի մարդը. դա գիտակցում են և դա համոզնունքների մեջ է, որովհետև ռուսական ոգին լայն է դասային թշնամանքից, դասային շահերից ու ցենզերից: Նոր Ռուսաստանն արդեն կամաց-կամաց զգացվում է, արդեն կամաց-կամաց գիտակցում է իրեն... Նա, թեկուզ անգիտակցաբար, ապրում է բոլոր ռուսների սրտերում, ռուս մարդկանց բոլոր ձգտումներում ու կոչերում: Մեր նոր Ռուսաստանը հասկացել է, որ միայն մի շաղախն կա, մի կապ, մի հիմք, որի վրա ամեն ինչ հավաքվում ու հաշտվում է դա համընդհանուր ոգեղեն հաշտեցումն է, որի սկիզբը կրթության մեջ է: Այդ նոր Ռուսաստանը արդեն ինքն իրեն վկայել է օրգանական ու ամբող-

ջական երևույթներով, այլ ոչ թե չկայացած պատճեններով ու վերապատվաստումներով՝ ինչպես դուք մտածում եք: Նա վկայել է իր սկիզբը. նոր սերնդի մեջ՝ նոր բարոյականությամբ, խանդուտ ու խիստ հետևելով ինքն իրեն, նա վկայել է ինքն իրեն բարեծին ինքնաքննադատությամբ, խիստ խղճով, որը առհավատշյան է մեծագույն ուժի և դեպի իդեալ անշեղ ձգտման: Ամեն օր նա ինքն իր համար ավելի ու ավելի շատ է բացատրում իր իդեալը: Նա գիտի, որ ինքը միայն նոր է սկսվում, բայց չէ՝ որ սկիզբն է գլխավորը: Ամեն գործ կախված է առաջին քայլից, սկզբից, նա գիտի, որ ինքն արդեն կտրվել է ձեր եվրոպական քաղաքակրթությունից և հիմա սկսում է նոր՝ անհամենատ լայնահուն կյանքը: Եվ հիմա, երբ նա դիմում է ժողովրդական սկզբին ու ուզում է միավորվել նրա հետ, նա նվեր է տանում գիտությունը՝ այն, ինչ ձեզնից երախտագիտությամբ ստացել է և ինչի համար հավիտենապես ձեզ բարի խոսքով է հիշելու. ոչ թե ձեր քաղաքակրթությունն է նա տանում բոլոր ռուսներին, այլ գիտությունը, որ ձեռք է բերել ձեր քաղաքակրթության մեջ, ներկայացնում է ժողովրդին, իբրև արդյունք իր երկար ու տևական ճանապարհորդության՝ ժողովրդական արմատներից դեպի գերմանական հողեր, իբրև իր արդարացնումը նրա առաջ, և նրան մեզ փոխանցելով, կսպասի, թե նա ինչ կանի այդ գիտությունը: Գիտությունն, իհարկե, հավերժական ու աներեր է բոլորի ու յուրաքանչյուրի համար՝ իր հիմնական օրենքներում, բայց նրա պատվատումը, նրա պտուղները հենց կախված են ազգային առանձնահատկություններից, այսինքն՝ հողից ու ժողովրդի բնավորությունից...»

Եվ ահա բափիվել է, ինչպես ծովը, բարեգործ բարձրախոսությունը, բարձր հնչում է Ռոգենհեյմի քնարը: Հնչում է թավ ու խիստ ծայմը պարոն Գրոմեկիի, կայծկլտացին ու խառնվեցին անհաշիվ իբսերը և զեթերը, միմյանցից բողոքներով թերթերում և հրատարակություններում հայտնվեցին բանաստեղծներ, արձակագիրներ, ու բոլորը՝ մերկացնող... հայտնվեցին այնպիսի բանաստեղծներ, արձակագիրներ, որոնք երբեք աշխարհ չեն գա, եթե չլիներ մերկացնող գրականությու-

նը... Օ, մի հավատացեք, մի հավատացեք, հարգարժան օտարներ, որ մենք վախենում ենք բարեգործ բացախոսությունից. հենց ձեռք բերեցինք՝ վախեցանք ու բաքնվում ենք նրանից: Ի սեր Աստծո, մի հավատացեք «Հայրենական գրառումներին», որ միախառնում են բացախոսությունը սկանդալների գրականության հետ: Դա միայն ցույց է տալիս, որ մեզ մոտ դեռ շատ պարոններ կարծես մաշկազերծված են և եթե նրանց կողքին հանկարծ հովը փչի՝ արդեն ցավ են զգում, որ մեզ մոտ դեռ շատ պարոններ կան, որ սիրում են կարդալ ուրիշների մասին և վախենում են, որ ուրիշները ինչ-որ բան կկարդան իրենց մասին: Ոչ, մենք սիրում ենք բացախոսությունը ու շոյում ենք նրան, ինչպես նորածին երեխային: Մենք սիրում ենք այդ փոքրիկ սատանային, որ հենց նոր է բարի ու առողջ ատամներ հանել: Նա երեմն կըոտում է՝ դեռ կծել էլ չգիտի: Հաճախ, շատ հաճախ չգիտի՝ ում կծել: Բայց մենք ծիծաղում ենք նրա չարաճիությունների վրա, նրա մանկական սիսալների, ու ծիծաղում ենք սիրով: Մանկական տարիք է, ներելի է... Ոչ, մենք չենք վախենում բացախոսությունից, մենք չենք շփոթվում: Այդ ամենը առողջությունից է, երիտասարդ ավյունից, երիտասարդ անփորձ ուժից, որը դուրս է հորդում... Բոլորը լավ, լավ նշաններ են...

Բայց ինչ ենք մենք խոսում բացախոսության մասին: Միշտ, բոլոր հասարակությունների մեջ կա այսպես կոչված ոսկե գորշություն, որ հավակնում է առաջինը լինել: Այդ ոսկյանները սարսափելի ինքնասեր են: Նրանք ոչնչացնող արհամարհանքով և ստահակի հանդգնությամբ նայում են չփայլողներին, անհայտներին, դեռ խավար մարոկանց: Նրանք առաջինն են սկսում ամեն մի նորարարի վրա քար նետել: Եվ ինչքան չար են նրանք, ինչքան բոլը՝ ամեն մի նոր գաղափարի հանդեպ, որը դեռ չի հասցրել արմատավորվել հասարակական գիտակցության մեջ, ինչքան են հալածում այն: Իսկ հետո ինչ աղմկարարներ են նրանցից դուրս գալիս, ինչ ջանադիր ու միաժամանակ բութ հետապնդողներ այդ նույն գաղափարի, երբ նա արդեն գերակա նշանակություն է ստանում հասարակության մեջ՝ չնայած հենց իրենք էին սկզբում այդ գաղափա-

Իը դատապարտում: Դասկանալի է, որ նրանք վերջապես կհասկանան նոր միտքը, բայց կհասկանան միշտ բոլորից հետո. միշտ կոպիտ են նրանք, սահմանափակ, բութ և ոչ մի կերպ թույլ չեն տալիս իրենց պատկերացնել, որ եթե գաղափարը ճիշտ է, ապա կարող է զարգանալ, իսկ եթե կարող է զարգանալ, ապա անպայման ժամանակի հետ պետք է տեղը զիջի այլ գաղափարի, որ նրանից է դուրս եկել, նրան է լրացնում, բայց արդեն համապատասխանում է նոր սերնդի նոր պահանջներին: Բայց ոսկյաները չեն հասկանում նոր պահանջները, իսկ ինչ վերաբերում է նոր սերնդին, նրան միշտ ատում են ու բարձրից են նայում: Դա նրանց տարբերանշանն է: Այդ ոսկյաների թվում միշտ լինում են չափազանց շատ արդյունաբերողներ... Նրանք էլ գրեհիկացնում են նոր գաղափարը և անմիջապես դարձնում են նոդայիկ արտահայտություն: Նրանք գրեհիկացնում են այն ամենը, ինչին հպվում են: Կենդանի ամեն գաղափար նրանց շուրբերին մեռյալ է դառնում: Պարզևաները նրանք առաջինն են ստանում հանճարեղ մարդու հուղարկավորության հաջորդ օրը, և գաղափարների տեսքով, որ հոչակել է նա և որին իրենք էլ հետապնդել են: Նրանցից ոնանք այնքան սահմանափակ են, որ նրանց լրջորեն թվում են, թե հանճարեղ մարդը ոչինչ չի արել, այլ իրենք են արել: Նրանց ինքնասիրահարվածությունը սարսափելի է: Մենք արդեն ասել ենք, որ նրանք չափազանց բութ ու դանդաղաշարժ են, թեպետ ամբոխին թվում են խելացի, տպավորություն են ստեղծում հանդուգն ու մոլի արտահայտություններով, ընկնում են ծայրահեղության մեջ՝ չհասկանալով ոչ իմաստը, ոչ գաղափարի հոգեկան կառուցքը. այդպիսով նրան վնասում են և նունիսկ այն ժամանակ, երբ անկեղծորեն կիսում են այն...

... Ոչ միայն բացախոսությունն է հալածվում մեր օրերում: Դալածվում է և գրագիտությունը:

## ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՐՁ ՀԱՆԴԻՍԱԾԵՍ-ԺՈՂՈՎՈՒՐԴ

Կար ժամանակ, երբ մենք չունեինք հանդիսատես... Յնարավո՞ր է դա՝ կասեն ինձ: Միանգամայն հնարավոր է և միանգամայն ճիշտ է՝ մենք չունեինք հանդիսատես, այլ կար ժողովուրդ: Դա եղել է նախքան Պետերբուրգի կառուցումը: Յանդիսատեսը զուտ արևմտյան երևոյթ է, և մեզ մոտ բերվեց տարատեսակ նորամուծությունների հետ: Զեավորվեց շատ պարզ. ժողովրդի մի մասը հրաժարվեց ռուսական կյանքից, լեզվից ու հագուստից և դարձավ հանդիսատես, ու դուրս լողաց մակերես: Յենց նա էլ՝ հանդիսատեսը, կազմում է մեր մշտական կապը Արևմուտքի հետ. այնտեղից դուրս է գրում տարբեր տեսակի՝ և նյութական, և հոգևոր հանդերձներ, խոնարհվում է նրանց, ինչպես ուսուցչի, նրանից մտքեր ու զգացումներ և պարտք վերցնում՝ վիթխարի գին վճարելով՝ ժամանակ, ժողովրդի հետ կապ և մտքի ծշմարտություն: Յանդիսատեսը ժողովրդից վեր է, կարծես թե նրա արտոնյալ արտահայտումը, իրականում հանդիսատեսը ժողովրդի գաղափարի աղճատումն է:

Յանդիսատեսի ու ժողովրդի միջև տարբերությունը մեզ մոտ ակնհայտ է (մենք նկատի ունենք ընդհանուր առումը, բացառությունները հաշվի չեն առնվում):

Յանդիսատեսը նմանակում է և ինքնուրույնություն չունի. այն ամենը, ինչ նա ընդունում է, օտար է, նա արտաքուստ է ընդունում ամեն անգամ ինքն էլ օտար դառնալով: Ժողովուրդը չի նմանակում և միանգամայն ինքնուրույն է, իսկ եթե օտար ինչ-որ բան ընդունի, կդարձնի իրենը, կյուրացնի: Յանդիսատեսի համար սեփականը վերածվում է օտարի: Ժողովրդի համար օտարը վերածվում է սեփականի: Յաճախ, երբ հանդիսատեսը պարահանդես է գնում, ժողովուրդը գնում է

Տիրոջ մոտ, երբ հանդիսատեսը պարում է, ժողովուրդը աղոթում է: Հանդիսատեսի հավաքատեղին Կուզնեցկի Մոստն է: Ժողովրդի հավաքատեղին՝ Կրեմլը:

Հանդիսատեսը ծովից անդին է ստանում մտքեր ու գգացմունքներ, մազուրկաներ ու պոլկաներ. ժողովուրդը կյանք է քաղում հարազատ աղբյուրից: Հանդիսատեսը խոսում է ֆրանսերեն, ժողովուրդը՝ ռուսերեն: Հանդիսատեսը հագնում է գերմանական հագուստ, ժողովուրդը՝ ռուսական: Հանդիսատեսը փարիզյան նորաձևություն ունի, ժողովուրդը՝ ռուսական սովորույթներ: Հանդիսատեսը (ճեծավ մասամբ՝ ծայրահեղ դեպքում) համեստ է սնվում, ժողովուրդը պաս է պահում: Հանդիսատեսը քնած է, ժողովուրդը վաղուց ոտքի վրա է ու աշխատում է: Հանդիսատեսը աշխատում է (իիմնականում ոտքերով՝ մանրահատակի վրա), ժողովուրդը քնած է կամ արդեն ոտքի վրա է՝ նորից աշխատելու: Հանդիսատեսը արհամարհում է ժողովրդին, ժողովուրդը ներում է հանդիսատեսին: Հանդիսատեսը ընդամենը 150 տարեկան է, իսկ ժողովրդի տարիքը հնարավոր չէ հաշվել: Հանդիսատեսը անցողիկ է, ժողովուրդը՝ հավերժական: Հանդիսատեսի մեջ էլ կա ոսկի ու աղտեղություն, ժողովրդի մեջ էլ կա ոսկի ու աղտեղություն, բայց հանդիսատեսի աղտեղությունը ոսկու մեջ է, ժողովրդի ոսկին աղտեղության մեջ է: Հանդիսատեսն ունի բարձրաշխարհիկ կյանք (monde, պարահանդեսներ և այլն), ժողովուրդը՝ աշխարհ (հավաքատեղի): Հանդիսատեսն ու ժողովուրդը ածականներ ունեն՝ հանդիսատեսը՝ հարգարժան, ժողովուրդը՝ ուղղափառ:

Հանդիսատես՝ առաջ: Ժողովուրդ՝ ետ: Այդպես բազմանշանակ բացականչեց մի ոստիկան...

## «ՄՈՍԿՈՎՅԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻ» ԱՌԱՋՆՈՐԴՈՂՆԵՐԻՑ (1863 թ.)

Մոսկվա. 12 ապրիլի

Մենք մեզ անվանում ենք հավատարիմ հպատակներ: Մենք ցարին արժանի պատիվներն ենք մատուցում իբրև գերագույն անձի, ումից կախված է և ումից սկսվում է ամեն ինչ: Բայց իենց այդ պահերին չենք հասկանում ցարի ամբողջ նշանակությունը ժողովրդական կյանքում: Չենք զգում մենք իիմա լիակատար համոզնունքով և այդ սկզբի հիմնաքարային պարզությամբ, չենք զգում ինչ խորքում է նա արմատավորվում և ինչպես է նա պահպանում, ինչպես է ամբողջացնում ժողովրդական միասնության ուժը: Ո՞ւն համար պարզ չէ իիմա, թե ինչքան թանկ է այդ սկիզբը ցանկացած քաղաքացու համար, ով սիրում է իր հայրենիքը: Ուն մեջ կենդանի արտահայտվում է հայրենիքի միասնությունը, նրա մեջ հավասար կենդանությամբ ու ուժով արտահայտվում է Յարի գաղափարը. մեկը և մյուսը միևնույն համապարփակ ուժն է:

Ոուսաստանում կա մի իշխող ժողովուրդ, մի իշխող լեզու, որ մշակվել է պատմական կյանքի դարերով: Սակայն Ոուսաստանում կան նաև բազմաթիվ ցեղեր, որոնցից յուրաքանչյուրը խոսում է իր լեզվով ու ունի իր սովորույթները, կան երկրներ՝ իրենց առանձնահատուկ խառնվածքով ու ավանդույթներով: Բայց բոլոր այդ տարատեսակ ցեղերը, բոլոր այդ տարբեր խառնվածքներով շրջանները, որ գտնվում են ռուսական մեծ աշխարհի ծայրամասերում, կազմում են նրա կենդանի մասերը և զգում են իրենց միասնությունը պետության միասնության մեջ, գերազույն իշխանության միասնության մեջ՝ Յարի, այդ միասնության համապարփակ մարմնավորման մեջ: Ոուսաստանում կա իշխող եկեղեցի, բայց այնտեղ կան բազմաթիվ, միմյանց հակասող հավատալիքներ: Բայց բոլոր այդ անհաշիվ հավատալիքների բազմազանությունը,

որ միավորում ու բաժանում է մարդկանց, ծածկվում է պետական միասնության մեկ ընդհանուր սկզբով: Տարբեր ցեղերի պատկանող ու տարբեր հավատ ունեցող մարդիկ միաննան իրենց գգում են մեկ պետական ամբողջության անդամ, մեկ գերագույն իշխանության հպատակ: Տարատեսակությունը Ռուսաստանի ընդհանուր կազմում, ամեն ինչ, որ գուցե բացառում է միմյանց և թշնամի է մեկը մյուսին, միավորվում է մեկ ամբողջության մեջ՝ հենց խոսում է պետական միասնության գգացումը: Այդ գգացումի շնորհիվ Ռուսական հողը կենդանի ուժ է ամեն տեղ, որտեղ ուժ ուժի Ռուսական հողի Ցարությունը: Ոչ մի փոփոխություն մեր քաղաքական կենցաղում չի կարող նվազեցնել կամ բուլացնել այդ գաղափարի նշանակությունը: Բոլոր բարեփոխումները, որ կատարվում ու կատարվելու են մեզ մոտ, կարող են ծառայել միայն նրա հզորացմանն ու վերընթացին...

### Մոսկվա. 22 ապրիլի

Չի կարելի ասել, որ Ռուսաստանը մինչև հիմա ընթացել է չափազանց արագ և չափազանց տարված է եղել իր բնակիչների հայրենասիրությամբ: Ոչ մի կերպ չես ասի, որ մինչև հիմա մեր մամուլը գտել է ժողովրդական գգացումի ծայրահեղ գրգռվածությունը՝ այն սպառնալիքների ու վիրավորանքների ազդեցությամբ, որ թափել են մեր հասարակության վրա բոլոր կողմերից այն ժամանակ, երբ նա ավելի, քան երբեք արժանի էր նման վերաբերմունքի: Ավա՞ղ: Ընդհակառակը: Մեր անտարբերությունը, մեր լոռությունը, մեր աներեր հանգստությունը զարմացրել է օտարերկրացիներին և նրանց համար նշան է ծառայել մեր լիակատար բարոյական անկման (բարեբախտաբար՝ խարուսիկ):

Եվ մամուլում, և օրենսդիր ժողովներում ամենաուժեղ փաստարկներից մեկը մեր դեմ եղել է այն, որ Ռուսաստանը կարծես թե հիմա գտնվում է լիակատար քայլայման մեջ, որ ազգաբնակչության ամբողջ դասակարգեր լի են հեղափոխական տարրերով, որ Կայսրության ներսում պատրաստ է բռնկվել համընդհանուր ապստամբություն, որ ամբողջ շրջաններ

ամեն պահի պատրաստ են բաժանվել և մի չնչին ցնցումից այդ վիթսարի մարմինը փշուր-փշուր կլինի:

Յամոթ մեզ՝ օտարերկրացիներն այս անգամ ոչնչից են կազմել իրենց հայացքները Ռուսաստանի մասին. բացի այն հարուստ նյութը, որ նրանց տրամադրում են լեի քարոզիչները, օտարերկրացիները կարող էին իրենց եզրակացությունների համար նյութեր քաղել ռուսական աղբյուրներից: Երբեք, ոչ մի տեղ մտավոր անառակությունը չի հասել այնպիսի այլանդակության, ինչպես ռուսական ծագմամբ որոշ երևույթներում: Օտարերկրացիների համար հերիք կլիներ թեկուզ մակերեսային պատկերացում ունենալ այն մասին, ինչ տպագրվում է ռուսերեն, օրինակ, Լոնդոնում, և այդ ընթացքում իմանալ, որ այդ ամբողջ արգահատելի խառնաշփոթը, որ հնարավոր չէ որևէ այլ գրականության մեջ, Ռուսաստանում ունի մեծ վարկ, որ տարբեր խավերի ռուս մարդիկ պանդիստում էին դեպի գժանոցների այդ ազատարձակները, սնվում էին նրանց իմաստնությամբ և նրանց հետ մեծ հույսեր էին կապում իրենց հայրենիքի նորացման գործում: Օտարերկրացիներին լուրեր էին հասնում նաև ռուսական ներքին գրականության ոչ պակաս վայրի երևույթների մասին, որ զարգանում են գրաքննության օրինությամբ, մեր ուսումնական հաստատությունների վիճակի մասին, գոյություն ունեցող բոլոր հարաբերությունների վերակառուցման զարմանալի նախազների մասին, տարատեսակ զառանցանքների ծաղկումի, որոնք երբեւ ու ուրևէ անցել են եքսցենտրիկ և հիվանդ ուղեղներով, և այն մասին, որ բոլոր այդ անհերետությունները ուժեղ հակազդեցության չեն հանդիպել հասարակական միջավայրում, և օտարերկրացիները եզրակացրել են, որ այդ միջավայրում չկա ոչ ոգի, ոչ ուժ, որ մեր ժողովուրդը սպառվել է, որ գրկվել է ապագայից: Յանկացած օտարերկրացի դիտորդ, իսկ այդպիսիք չեն կարող չլինել եվրոպական տարբեր դեսպանատների գրասենյակներում, կարող էր գոնե մի քիչ ականջ դնել այն ամենին, ինչ լրջորեն խոսվում էր Պետերբուրգում, տեսնել այն ամենը, ինչ կատարվում էր շուրջբոլորը, որպեսզի լիակատար համոզվեր մեր հասարակական օրգանիզմի բոլորեքյան քայ-

քայման մեջ: Կարո՞ղ էր օտարերկրացի վերլուժաբանը կասկածել, որ միջավայրը, ուր նա կատարում էր իր ուսումնասիրությունները, կեղծ միջավայր է: Կարո՞ղ էր նա մտածել, որ այդ ամենը ավելին չէ մղձավանդից, գիշերվա վատ երազից, որ հարուցում է հաշիշի շատ օգտագործումը: Առաջ Ռուսաստանը օտարերկրացի դիտորդի համար հանելուկների երկիր էր. և իրոք, ոչ մի երկիր մասին այդքան առասպելական պատումներ չկային, ինչքան Ռուսաստանի: Բայց վերջին ժամանակները դիտորդը իրեն իրավունք էր վերապահում մտածել, որ հանելուկի պատասխանը գտնված է, և որ գաղտնախորհուրդ երկիրը իր համար բացահայտվել է ամբողջ անհուսությամբ: Օտարերկրացի դիտորդը հաստատ համոզվեց, որ Ռուսաստանը ուրվական է, և պետք է անհետանա՝ ինչպես ուրվական: Եթե նրա մեջ մնում են ինչ-որ կասկածներ, ապա դրանք էլ անհետանում են ռուս քարոզիչների հայտարարություններից: Մեր քարոզիչները նախ իրենց ներկայացնում էին իրուս կառավարության կատաղի հակառակորդներ և ժողովրդի բոցաշունչ բարեկամներ ու խոստանում էին նրան աներևակայելի բարեկեցություն՝ ինչպես բոլոր երկրների ու ժողովուրդների հեղափոխականները: Օտարերկրացի դիտորդը այդ երևույթի մեջ տեսնում է իրեն ավելի կամ պակաս ծանոթ բան և իրեն չբացատրելով պատճառները, զարմանում է միայն այն պատճառով, որ ռուսական քաղաքակրթության այդ ամբողջ անհերերությունը պահանջարկ ունի: Ահա այդ ժամանակ գործը պարզ ու համոզիչ է դառնում: Մեր հեղափոխականները նրա առաջ մերկացրել են իրենց ամբողջ «գեղեցկությունը», և նա նահանջում է այդ տեսարանի առաջ ամորով ու արգահատանքով: Նա իր առաջ տեսնում է ինչ-որ չլսված ու չտեսնված բան: Արտասահմանյան թերթերում մեջքերվում են հատընտիր գեղեցկություններ ռուս-լոնդոնյան հրատարակություններից, որտեղ դեռ ոչ վաղ անցյալում, համոք մեզ, ռուս շատ մարդիկ լսում էին նորացող Ռուսաստանի ձայնը և արտասահմանցի հրապարակախոսները միահամուռ զայրանում են՝ մեջբերելով հատվածներ «Կոլոկոլից» և որոշ չափով պնդում են եթե ոչ ներկա, ապա ծայրահեղ դեպքում

անցյալ նշանակությունը ռուս ժողովրդի՝ սեփական այլանդակների մեղադրանքներից պաշտպանելով։ Քիչ է կարծես, որ այդ այլանդակները բացահայտորեն անցել են Ռուսաստանի թշնամիների բանակը, որ նրանք ամեն կերպ ջանուն են աջակցել լեհական ապստամբությանը և ցինիկ հայինյանքներ են նետում ռուսների հասցեին, որ արտասահմանում անոթխած կարեկցանք են արտահայտում ռուսական գործին՝ բաժանորդագրվելով հօգուտ վիրավոր ռուս զինվորների՝ նրանք անարգում են ռուս ժողովրդին ընդհանրապես...

## ճԱՇԵՐ ԵՎ ճԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

«Մարդը երեք օր կարող է ապրել առանց հացի, բայց մի օր էլ չի ապրի առանց բանաստեղծության»՝ այս աֆորիզմը Բոդլերին է: «Ճնարավոր է ապրել առանց նկարների ու երաժշտության, բայց ոչ առանց սննդի»՝ հաստատում է «ճաշերի և ճաշատեսակների» հեղինակը և, անկասկած, վերջին եզրակացությունն ավելի շատ կողմնակիցներ ունի: Իրոք, մեր անկումային ժամանակներում ո՞վ կտատանվի օդայի ու օմլետի, սոնետի ու սայամի ընտրության միջև: Այս տեսակետը, սակայն, չի կարելի ամբողջությամբ համարել քաղքենիական. խոհարարությունն ինքնին արվեստ է. մի՞թե նրա հիմքերի մասին դասախոսություններ չեն կարդացվում Հարավային Քենսինգտոնում և մի՞թե Թագավորական ակադեմիան ամենամյա բանկետներ չի կազմակերպում: Բացի այդ՝ եթե ժողովրդավարության հաստատումը բոլորի համար կանոն դարձնի էժանագին ճաշերը, խոհարարության օրենքները պետք է բացատրվեն. հերիք է ժողովրդի սիրած կերակուրը պահանջվածից շատ տապակվի կամ հավելվի ոչ այն համեմունքով կամ մատուցվի ոչ այն թացանով, կարող է ահավոր հեղափոխություն սկսվել:

Գիտակցելով այս հանգամանքները, մենք բոլորին հորդորում ենք կարդալ «ճաշեր և ճաշատեսակներ»՝ գիրքը, որը գրված է հակիրճ և արտահայտիչ, չի հավակնում պերճախոսության, և դա ակնհայտ առավելություն է: Ո՞վ ուժ կունենար օրատորիա լսել թեկուզ ի փառս որսամսի: Ունի ևս մի արժանիք՝ պատկերազարդ չէ: Իհարկե, արվեստի ստեղծագործության առարկան ընդհանուր ոչինչ չունի այդ ստեղծագործության գեղեցկության հետ, բայց, միևնույն է, ինչ-որ ճնշող բան կա ոչխարի ոտքի գունավոր փորագրանկարի մեջ:

Ինչ վերաբերում է հեղինակի սեփական հայացքներին, ապա մենք ամբողջովին համաձայն ենք նրա հետ մակարո-

նին վերաբերող կարևոր խնդրում: «Երբեք,- գրում է նա,-մի խնդրեք ինձ քվեարկել այն մարդու օգտին, ով ինձ հյուրասիրել է պուդինգով մակարոնը»: Մակարոնը բացառիկ համեղ ճաշատեսակ է՝ այն կարելի է մատուցել պանրով, լոլիկով, բայց ոչ շաքարով կամ կաթով: Գրքում օգտակար նկարագրություն կա և ռիզոտտոյի պատրաստման. իրաշալի մի կերակուր, որ մենք հազվագյուտ ենք իանդիապում Անգլիայում: Յիանալի մի գլուխ նվիրված է տարատեսակ աղցաններին (լավ կլիներ, որ այս գլուխը մանրամասն ուսումնասիրեին այն տանտիրուիհները, ում երևակայությունը կաթնուկից ու ճակնդեղից այն կողմ չի անցնում) և հատկապես բրյուսելյան կադամքի պատրաստմանը, որը, հարկավ, գլուխգործոց է:

Սակայն իսկական հժվարությունը, որի հետ մենք, այնուամենայնիվ, բախվում ենք, ոչ թե խոհարարական գիտության մեջ է, այլ՝ խոհարարուիհների բրության: Գործնական էպիկուրության (ուսմունք, որ սկսվում է հին հունական փիլիսոփա Էպիկուրից (մ.թ.ա. 341-270), ով հաստատում էր, որ կյանքի նպատակը խելամիտ հաճույքն է, տառապանքների բացակայությունը, իոգու հանգստությունն ու ուրախությունը. հետագայում Էպիկուրի ուսմունքը գրեհկացվեց և ներկայացվեց իրեն զգայական հաճույքների պաշտամունքը) այս գորոսկը անգլիական խոհանոցի տիրուհուն ներկայացնում է «ամբողջ փայլով»: Նրա լիակատար անգրագիտությունը խոտերի մասով, նրա հակվածությունը քամուկների ու եփուկների նկատմամբ, ապուր, այլ ոչ թե պղպեղի խառնուրդ եփելու նրա բացարձակ անընդունակությունը, կաքավը հացի սոուսով մատուցելու նրա քարացած ավանդույթը՝ այս և շատ այլ մեղքեր անգրորեն մերկացված են գրքում: Անգրորեն և արդարացի: Բրիտանացի խոհարարուիհն հազվագյուտ անշնորհք է, և իր բոլոր մեղքերի համար նրան արժեր աղեսյան վերածել, որն, ի դեպ, այդպես էլ չսովորեց օգտագործել ըստ ամենայնի:

Բայց մեր հեղինակը միայն տեղական թեմաներ չի քննարկում: Նա եղել է շատ երկրներում, համտեսել է վիեննական նրամիս և սանկտութերբուրգյան կուլեբրյակի, համարձակություն է ունեցել երիտասարդ ցուլի միս ուտել Ռումինիա-

յում և գերմանացի ընտանիքի հետ ժամը մեկին սեղան նստել: Նա հիանալի գիտի՝ ինչպես պատրաստել թուրինյան նշանավոր սպիտակ տրյուֆելները, որ այդպես սիրում էր Ալեքսանդր Դյունան, և մարտահրավեր նետելով Արևելյան ակումբին՝ նա հայտարարում է, որ Բոնբեյում պատրաստված քերին ավելի լավն է բենգալականից: Թվում է՝ նա ճաշակել է բոլոր կերակուրները՝ բացի ամերիկյան ճաշից, որ առաջինը պիտի համտեսեր. Միացյալ Նահանգներում վիթխարի տարածք կա փիլիստիքայական էպիկուրության համար: Բոստոնյան ընդեղենը միանգամից կարելի է մերժել իբրև մոլորություն, բայց փափուկ պատյանով ծովախեցգետինները, ջրային կրիաները, կարմրագլուխ բաղերը, կապտածկները և Նոր Օռլեանի պոնդոնն ձուկը հիասքանչ աղանդերներ են, հատկապես եթե Դելմոնակոյում են պատրաստված: Իրավ, Նահանգներում երկու տեղ կա, ուր գործից հասկանում են՝ Դելմոնակոն և Յոսեմիտյան դաշտավայրը, որը շատ ավելի մեծ դեր է կատարել Անգլիայի ու Ամերիկայի միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման համար, քան մեր հարյուրամյակում որևէ այլ բան:

Մենք հույս ունենք, որ «Օտարականը» շուտով կտպագրվի «ճաշեր և ճաշատեսակներ» գլխի հավելումով և Անգլիայում արժանի հաջողություն կգտնի: Կարտոֆիլի պատրաստման 20 ձև կա և ձու եփելու 365 ձև, բայց բրիտանացի խոհարարուիհին թե մեկի, թե մյուսի միայն 3 ձև գիտի:

# ԱՅԴ ԱՆՏԱՆԵԼԻ ՀԱՅԵՐԸ

## Լինքով Սթեֆընսի հարցագրույցը Լոուրենս Արարացու հետ

Դա իմ հարցագրույցն էր: Իր սենյակում էր, այն հյուրանոցում, ուր ապրում էր նա, բայց ինքս էի խնդրել տեսակցությունը, և իմ նպատակն էր այդ կայսերական հետախույզից մի բան իմանալ Փոքր Ասիային և Մերձավոր Արևելքին վերաբերող գործնական քաղաքականության մասին: Եվ կարծում էի, թե ինքս էի վարում խոսակցության ընթացքը: Դետո միայն կրահեցի, մի տեսակ ցնցվելով, որ նա էլ մի նպատակ էր ունեցել, և որ իր նպատակն էր իմ ուղեղը լցնել հայերի վրա ամերիկյան մանդատ հաստատելու վերաբերյալ բրիտանական պրոպագանդով: Ահա այդ էր, որ կրահեցի: Ուրիշ բաներ էլ: Բայց ես շշմել էի և բավական նվաստացած էի զգում գտնելով, որ հատուկ պատճառներ ունեի (պատճառներ, որ հուզում էին ինձ՝ սկզբունքով անկախ մարդուս), թե ինչո՞ւ մենք՝ ամերիկացիներս պետք է աշխարհի մյուս կեսը գնանք հայերին հոգալու և ոչ միայն նրանց փրկելու թուրքերից, հույներից, ֆրանսիացիներից, իտալացիներից, բրիտանացիներից և հենց իրենցից էլ, այլև, մի տեսակ, ինքներս էլ մեզնից և նրանցից փրկելու:

Նա ասաց, օրինակ, որ հայերը «մարդկային անտանելիության վերջնական խոսքն են»: Որպես ցեղ՝ ակադեմիկ բանավեճում նրանք համանման են «վերջին մարդուն»: Ինձ նման իր գործն իմացող, ձախողակ երազողի համար ազգերի մեջ ամենանվաստացածը անդիմադրելի հմայք ուներ և ունի: Այդպես էլ ասացի նրան:

Անգլիական հումորը մերինի նման չէ: Յակառակն է: Ամերիկյան հումորը, գոնե մասամբ, ասվածի մեջ է: Բրիտանական հումորը բրիտանացու չասածի մեջ է: Այս բրիտանացուն ակնհայտորեն շատ դուր եկավ իմ ասածը: Ինձ թվաց, որ նա ուրախությամբ ծիծաղելու է կամ նման մի բան: Բայց նա փրկեց Բրիտանական կայսրության չափ, ասես պայթելու էր:

Սակայն չպայթեց, չծիծաղեց, չսասաց որևէ բան, որ հումորի դույզն իսկ նշան ցույց տար: Երկար դադարից հետո միակ խոսքը, որ ասաց, այս էր.

- Լավ:

Եվ ապա, կրկին մի դադարից հետո, երբ վերագտել էր իր ինքնատիրապետումը, մեր ամերիկյան իդեալիզմի մասին խոսեց լրջորեն, ավելի ճիշտ՝ բավական տաղտկալիորեն: Համարում էր, որ դա սքանչելի է: Իսկ ըստ իս՝ մի քիչ չափից ավելի էր սքանչելի համարում: Կարծում էր, թե մենք՝ ամերիկացիներս, չափից ավելի իդեալիստ ենք: Եվ գտնում էր, որ հայերը չափից ավելի գործնական են: Ուստի մեկս մյուսին կարող ենք շոկել, մենք բուժիչ ենք նրանց համար, նրանք՝ մեզ համար: Երկուսս էլ հուսահատական պարագաներ ենք, մանավանդ հայերը:

Ես այնպես եզրակացրի, որ նա մի անասելի համակրանք ունի հայերի հանդեպ կամ էլ, ավելի ճիշտ այսպես ասեմ՝ նրանց վերաբերյալ ունի մի այնպիսի իմացություն կամ փորձառություն, որ նրան թույլ է տալիս մարդկայնորեն հասկանալ թուրքերին և հայերի բոլոր մերձավոր հարևաններին, որոնք երբեք զանացել են ոչնչացնել այդ որք ցեղը: Կարծես թե նրա մտքինն այն էր, որ դա հայերի հանդեպ անելիք միակ բանն է: Ուղղակի այդպես չսասաց: Կարող եք նկատել, որ շատ էլ ազատորեն չեն մեջքերում այս հեղինակության խոսքերը: Պատճառն այն է, որ նրա մեթոդը, ինչպես երևում է, ոչ թե իր կողմից որևէ բան ասելն էր, այլ ստիպել ինձ, որ իր տպագրելիք ցանկացած բաները ես ասեմ այնպիսի ծնով, որ անհրաժեշտության դեպքում կարողանար ժխտել որանք: Ուստի նա չսասաց, թե հայերը պետք է ամբողջությամբ ոչնչացվեն: Պարզապես իմ մեջ այնպիսի տպավորություն ստեղծեց այն ժամանակ, թե դա է հայկական հարցի միակ լուծումը, և թե այդ պատճառով էր ցանկանում, որ ամերիկացիներս մեզ վրա վերցնենք այդ գործը:

Նա այնպես էր համարում կամ ինձ ստիպում էր համարել, թե թուրքերը չպետք է անեն այդ գործը. նրանք չափազանց պրիմիտիվ են, և քրիստոնյա չեն: Ոչ էլ հույները. սրանք էլ շատ

Են հաճույք զգում դրանից և արդյունավետ չեն. Երբեք որևէ բան մինչև վերջ չեն հասցնում, և երբ հայերին սպանելու իրենց գեղագիտական հաճույքը հագենա, ձեռք կքաշեն: Այդպես էլ բոլոր հին, մրցակցած, ոսդիս ցեղերը դադարեցրել են գործը՝ նախքան բոլոր հայերին սպանելը: Նույնիսկ երբ բոլորը միասին էին գնում խնդիրը կատարելու, միշտ էլ թողնում էին մի զույգ այստեղ, մի զույգ այնտեղ՝ Ադամ ու Եվաներ, որոնք, հենց որ մեկը կռնակ դարձներ նրանց, բազմանում, բազմանում ու բազմանում էին, այնպես որ հաջորդ անգամ Հայաստան այցելողը կրկին հայեր կտեսներ այնտեղ, միլիոնավոր ու միլիոնավոր հայեր, բոլորը հեզ ու համեստ, բայց ցերեկը գործով զբաղված, իսկ գիշերը գաղտնորեն բազմանալով ու կամացուկ տարածվելով ու տարածվելով ու...

Նա ինձ վրա ոտից գլուխ տարածեց իր մալթուսական հուսահատությունը և մի այնպիսի սարսափ հայերից, որ քիչ մնաց կուլ տայի իր ամբողջ որոգայթը ամերիկա-հայկական մանդատի վերաբերյալ, երբ իմ փրկարար ամերիկյան հումորը շունչ տեղը բերեց:

- Բայց ինչո՞ւ հենց բրիտանացիներն էլ չանեն այդ գործը,- հարցրի և, ակնկալելով իր հումորի զգացումը, ժպտացի: Իզուլ: Ամերիկյան հումորի զգացումը նա չուներ, կարծում եմ: Սպասեց, որ իմ զվարք ժպիտը չքանա, ու հետո երբ տեսավ, որ ես իմ մեջ եմ քաշվել նորից և լրիվ լուրջ եմ, պատասխանեց ինձ լրջորեմ:

- Հայերի լիակատար կոտորածը,- պատճառաբանեց,- կարող է սկանդալ դառնալ, եթե դա բրիտանացիներն անեն,- ու բացատրեց, որ թեպես իրենց կայսրությունը դիմացավ որոշ այդպիսի ցնցումների և պետք է, անշուշտ, դիմանա ուրիշ ցնցումների էլ, բայց չափից ավելին, հենց այս ժամանակ, կարող է սասանել կայսրությունը: Իսկ կայսրությունը, հենց այս օրերին, չպետք է սասանվի անհարկի: Բրիտանական կայսրությունը համաշխարհային կառավարման նախատիպն է: Մեր բոլոր մեծ տագնապները՝ պատերազմներ, հեղափոխություններ, գործադուներ, համաճարակներ և այլն, հետևանք են այն իրողության, որ երկրագունդը թեև ամբողջություն է,

բայց չի կառավարվում որպես ամբողջություն: Բրիտանացիները մի օր պիտի վերջ տան այս անշխանականությանը: Բայց կայսրությունը երիտասարդ է տակավին և հարաբերաբար փոքր, թույլ և գերծանրաբեռնված: Յաշվի առեք՝ մայր կղզիները, գաղութային ռազմավարական կետերը, ծովերը և առևտրական ճանապարհները, բոլոր այն նոր ժանրություններն ու պատասխանատվությունները, որ Բրիտանական կայսրության ուսերին ընկան գերմանական իմպերիալիզմի պարտությամբ: Ոչ: Բրիտանական կայսրությանը պետք է խնայել առայժմ: Յետագայում, երբ ծովերի ազատությունը ցամաք հանվի, այսպես ասած, և երբ բրիտանական իշխանությունն ալիքներից տարածվի ցամաքի վրա, բոլոր ցամաքների, ապա Մեծն Բրիտանիան կկարողանա, և պետք է կարողանա, ուրախությամբ ընդառաջ գնալ հաղթահարելու մի այնպիսի ցնցում, որ ես (նա հենց այդպես էլ ասաց՝ «ես») առաջարկում էի Յայաստանում: Բայց ոչ այժմ: Ոչ կայսրության դեռ մանուկ տարիքում:

- Բացի այդ,- հարեց նա,- բրիտանական իմպերիալիզմն այս փուլում շահագրգոված է ավելի բնական հարստություններով, քան ժողովուրդներով՝ որպես այդպիսիք: Անգլիացիները գործնական մարդիկ են, ոչ իդեալիստներ, հասկանում եք: Նրանք գիտակցում են, որ համաշխարհային մի կառավարություն պետք է հիմնվի, բայց ոչ թե «ձեր»: Ոչ թե Ազգերի լիգայի նման, գաղափարների և իդեալների, սկզբունքների և ժողովուրդների, այլ շոշափելի բաների վրա՝ նավթ, հանքանյութ, օդային տարածություն, ծովեր:

- Բայց,- առարկեցի ես (և կարող եք տեսնել, թե ուր էր հասցնում նա ինձ. առարկում էի հօգուտ իր երկրի՝ իմ երկրին ընդդեմ),- հարուստ հողեր և շահավետ հանքավայրեր կան Յայաստանում:

Նա լուր մնաց: Այնքան երկար մնաց այդպես լուր, որ ինձ թվաց, թե շփոթության են մատնել նրան, թե նա չգիտեր Յայաստանի հարստությունների մասին: Բայց կրկին նկատեցի ուռչելու և պայթելու նրա հակումը: Եվ որքա՞ն էի ցանկանում, որ նա ծիծաղի: Կարծում եմ՝ դա կրեթևացներ ինձ էլ, նրան էլ:

Բայց ոչ, նա չծիծաղեց: Չժպտաց նույնիսկ: Պարզապես սպասեց, ինչքան կարող էր, ապա ինձ հիշեցրեց, որ լսած կլինեմ, ինչպես, ասաց, ինքն էլ է լսել, թե Հայաստանը պետք է բաժանման Ենթարկվի: Բուն երկիրը, ուր բնական հարստություններն են, պետք է անջատվի առաջանասից, ուր ոչինչ չկա բացի հայերից: Ամերիկյան մանդատը պետք է լոկ հայերի վրա լինի: Սի ուրիշ դաշնակից, ոչ թե բրիտանացիք, այլ մի ուրիշ հավասարաչափ գործնական տերություն պետք է ստանա Հայաստանը:

- Բայց,- դարձյալ առարկեցի ես,- ի՞նչ օգուտ մի երկրի բնական հարստություններից առանց այն ժողովրդի, որ պետք է մշակի դրանք: Յանքերը, նավթի պաշարները, բերրի հողերը, մի խոսքով բնական հարստությունները,- համբերությամբ բացատրեցի նրան,- ոչ մի օգուտ չեն տա կապիտալին առանց այն աշխատուժի, որ պետք է փորի ու զարգացնի դրանք: Եվ երկրի բնիկներն ամենաքննական աշխատուժն են դրա համար, ամենաէժանը, ամենահնազանդը, ամենաքիչ կազմակերպվածը, լավագույնը:

Տեսնում էի՝ տաղտուկ է զգում, բայց բաղաքավարի էր: Լսում էր ինձ, ուստի իրար ետևից օրինակներ էի բերում ամերիկյան, ինչպես նաև բրիտանական գաղութներից նրան ցույց տալու համար, որ սխալ է անջատել մի երկրի ժողովրդին այդ երկրի բնական հարստություններից: Պետք է միասին օգտագործվեն դրանք, միասին զարգացվեն, և այդպես էլ արվում է սովորաբար: Չկա ուրիշ ճանապարհ: Նկարագրեցի թուրքերի կամ ֆրանսիացի դրամատերերի կամ որևէ չաշխատող ժողովովի անօգնականությունը, երբ կօջանան օգտագործել Հայաստանի հարստությունները: Այսպես պերճախոսում էի, ու մի պահ թվաց՝ բավականին հաջող:

- Ես կոչ եմ անում,- գոչեցի վերջապես,- ոչ թե գաղափարապաշտորեն, ոչ թե «Հայաստանը հայերի համար», այլ գործնականորեն՝ «Հայերը Հայաստանի համար»:

Նա ինձ նայում էր ոտից գլուխ չափելով, հետաքրքրությամբ՝ ինձ թվաց: Կարծես մի նոր պատկերացում էր ստանում ամերիկացիներիս մասին: Ասել էի, որ չգիտե մեզ, և նա թե՝

- Որևէ գիտակից անզլիացի կարող է հասկանալ որևէ ան-գիտակից ամերիկացու:

Շատ էլ չեմ ըմբռնում, թե ինչ էր ուզում ասել դրանով, բայց դրա նման դատողություններն էին, որ ինձ տալիս էին այն խօսվիչ տպավորությունը, թե նա բոլորովին սխալ էր պատկերացրել մեզ: Ու որոշեցի ցույց տալ նրան, նախքան հաշիվները կմաքրեր ինձ հետ, թե ոչ բոլոր ամերիկացիներս ենք այնպիսի զուտ իդեալիստներ, ինչպես նաև շատ եվրոպացիներ հետևցրել են այն մի օրինակից, որ նախագահ Վիլսոնն է և նրա 14 կետերը: Բայց նա չափազանց երկար ու լուր ուսումնասիրում էր ինձ: Ակսեցի մտածել, որ ինչ-որ սխալ էր գտնում իմ մեջ կամ մեր մեջ: Գուցե ես շատ էի թերվել գործնականության կողմը: Յիշեցի, թե ինչպես էր նա հայերին կշտամբում դրա համար: Ուստի դարձ կատարեցի: Ավելի զաղափարապաշտորեն և, հուսով եմ, հայրենասիրաբար խոսեցի կրկին:

- Եթե ամերիկացիներս հանձն առնենք հայերին,- հայտարարեցի,- նրանց իսկ օգտի համար կանենք այդ բանը: Նրանց կկառավարենք միշտ էլ այն գաղափարով, որ նրանց ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու:

- Այո, այո, մենք հասկանում ենք այդ բոլորը,- ասաց նա: Բայց զգացի, որ չի հասկանում, ուստի ուղղակի շարունակեցի իմ սիլլոգիզմը:

- Լավ, ուրեմն,- ասացի պատշաճորեն,- պետք է դրանուն տեսնեք նաև իրենց այդ նպատակը. որպեսզի հայերին ընդունակ դարձնենք իրենց իրենց կառավարելու, պետք է աշխատեցնենք նրանց: Ու քանի որ չես կարող մի ժողովուրդ աշխատեցնել առանց մի այնպիսի բանի, որի վեա աշխատեցնես, մենք կարիք կունենանք Յայաստանի հողերի և հանքերի: Ոչ թե հարստությունները կորզելու համար նրանցից, այլ՝ օգտագործելու որպես ուսումնադաշտ, ուր ժողովրդին վարժեցնենք աշխատասիրության, խնայասիրության և բոլոր այն քրիստոնեական առաքինություններին, որոնց միջոցով նրանց դարձնենք լավ մարդիկ և լավ քաղաքացիներ:

Ծփորահար, ուռած տեսք էր ընդունել նա: Զգիտեի՝ ինչ է պատահել նրան, մինչև որ վերջապես որոշեց արտահայտվել:

- Խնայասիրությունը չի պակասում հայերին,- ասաց նա չոր,- և անշուշտ գիտեք, որ քրիստոնյաներ են նրանք, երդվյալ քրիստոնյաներ:

Իհարկե գիտեի: Պարզապես, ոգևորությանս մեջ, մի պահ մոռացել էի այդ բանը: Յամենայն դեպք նա ինձ բռնել էր այդ կետում, ուստի վերադարձեց ինձ իմ շրջանի սկզբին:

- Բայց,- ասացի,- հայերը պետք է աշխատեն: Դա է հաջողության գաղտնիքը, լինի անհատի, լինի ազգի համար աշխատանք, համառ, եռանդուն աշխատանք: Եվ հայերը պետք է ունենան Յայաստանը՝ դրա վրա աշխատելու համար:

- Յայերը չեն աշխատելու,- ասաց նա: - Դա է, ցավոտ կետը ձեր ծրագրում, դա է հայերի էլ ցավոտ կետը: ճիշտն ասած, դա է ցավոտ կետը բոլոր այս իին ցեղերի, որոնք եղել են քաղաքակիրք, կորցրել են իշխանությունը և դեգրադացվել, ինչպես դուք ասում եք: Կամ էլ, ինչպես ես եմ ասում, շարունակել են, առաջ են գնացել տրամաբանականորեն, հոգեբանորեն, բնախոսականորեն: Նրանք չեն սիրում համառ, եռանդուն աշխատել: Դա է, որ նրանց տարբերում է այն երեխայանման, իսկապես հետամնաց ժողովուրդներից, որոնց հետ գործ եք ունեցել ամերիկացիներդ: Նախնական ժողովուրդները պարզապես ծովյլ են: Նրանց կարելի է ստիպել աշխատելու, զարգանալու, նրանց հնարավոր է շահագործել, եթե ուզում եք: Մի որոշ հույս կա նրանց համար, մի որոշ օգուտ նրանցից: Իսկ այս առաջադեմ ժողովուրդները, երբեմնի քաղաքակիրք ազգերը ծովյլ չեն: Նրանք չափից ավելի խելացի են ուրիշների օգտին աշխատելու համար: Իրենք իսկ շահագործողներ են՝ բնագրական, բնածին, անուղղելի, անհուսալի շահագործողներ: Բոլոր ազգերը բաղկացած են զարգացող մարդկանցից, նրանք մարդ են աճեցնում: Նրանք խոսում են իրենց երկրները զարգացնելու մասին, բայց հակառակն է. նրանց երկրներն են զարգացնում իրենց: Իսկ իին ազգերը ցույց են տալիս մարդկանց այն տեսակը, որ այժմ նոր ազգերը կազմավորում են իրենց մոտ: Այս իին ժողովուրդները բնաշրջության արդյունք են: Դուք կարող եք Միջերկրականի ափերին տեսնել այն տիպը, որ ինքներդ այժմ ընտրասերում, աճեցնում, բնաշրջում

Եք ձեր հայրենիքում: Դին ցեղերից նրանք, որ այստեղ ապրուն են դեռ, վերապրածներն են մի քաղաքակրթության, որ բնույթով առևտրական էր, ինչպես ձերը:

- Մերը,- ուղղեցի ես, անգլիացիներին էլ մտցնելու համար խնդրի մեջ: Նա ուղղակի վրա տվեց:

- Դուք՝ նոր ազգերի պետք է սովորեք իին ժողովուրդների օրինակի վրա, - կրկնեց նա, - որ նախսկին մեծ ու նախսկին հռչակավոր ազգերի արդի ներկայացուցիչները բնական և անխուսափելի արդյունքն են արհեստական այն ընտրասերման, որը կատարվել է մի այնպիսի հասարակության մեջ, որը բանտարկում է քաջերին, արտաքսում ինքնատիպներին, ճնշում զանգվածին, խեղդում է ցեղի միջին մակարդակից ցանկացած տարբերություն և պաշտամունքացնում հեզին, միջակին, խորամանկին, նրբամիտին ու խնայասերին, որովհետև սրանք առևտրական առունով պիտանի են: Արդի հույները ուղղակի ժառանգներն են հելլենների և իրենց տիհած հատկանիշներն այն տևական գծերն են, որ ծագում են իին հունական մշակութից, ինչպես իրականում կենսագործում էին իին հույները: Ոչ այնպես, ինչպես մեծ, բացարիկ հույները խոսում, երգում և կերտում էին այդ մշակույթը, այլ հենց այնպես, ինչպես միջին հույները կենսագործում էին գործարարությամբ, ուզում են ասել՝ այն հույները, որոնք Սոկրատեսին մահվան դատապարտեցին: Արդի եգիպտացիները, ինչպիսիք ժառանգել ենք բրիտանացիներս, եգիպտական մշակույթի ամենահեռավոր – հեռավոր փոքր ծոռներն են՝ իրենց ապուպապերի երեխայանման աշխատանքով այնքան գեղեցկորեն կերտված Սֆինքսի հանելուկին ուշացած պատասխանը: Այսօրվա արարը իին, փառավոր Արաբիայի արվեստներից, բարերից, գործարարությունից գուրկ է, նա անապատի փոշին է...

Նա կանգնեցրեց իմ նոր առարկությունը կանխելով.

- Հնադարյան հույները, նաև եգիպտացիները, սիրիացիները, վերջապես թուրքերը և մյուսները՝ նրանք էլ իրենց հանձարմերն ունեին, իրենց բանաստեղծներն ու արվեստագետները, իրենց գորավարները, որոնք հետամնաց ժողովուրդներ էին նվաճում, ունեին իրենց արդյունաբերական դեկապարնե-

րը, որոնք աշխատանքով էին ապահովում, իրենց սեփական աշխատուժն էլ ունեին: Բայց ընտրասերյալները, ազնվագետությունները, հարստապետությունները չհարատևեցին: Նրանց հետնորդները ժառանգորդներ չեղան, չվերապրեցին նույնիսկ: Հաջողակների, հարուստների, հզորների, առանձնաշնորհյալների օպավակները գրողի ծոցը գնացին, և նույնը լինելու է ձեզ մոտ: Եվ աշխատուժի էլ հաջորդական սերունդները, աշխատանքով գերծանրաբեռնված, թերսնված, վհատված և խիստ կարգ-կանոնի ենթարկված, բութ ստրուկների վերածված, մեռան կամ ոչնչացվեցին: Պարզվեց ու պարզվում է, որ միջին դասակարգն է ունակ վերապրելու այդ կերպ կազմակերպված հասարակության մեջ, այդ ստոր միջին դասակարգը: Ուստի ամբողջ իին աշխարհին այժմ տեսնում եք, փաստորեն, միայն բիզնեսմեններով բնակված, մանր բիզնեսմեններով՝ վաճառականներ, առևտրականներ, խանութպաններ, վաշխառուներ, փերեզակներ, ոչ արտադրողներ: Նրանք գրադարձ են գնել-ծախսելով. ու սերված լինելով գնող-ծախսողներից, առևտրական մրցակցության բազում սերունդների միջով ընտրասերված, նրանք լավ գնող-ծախսողներ են: Կարող են գնալ աշխարհում որևէ տեղ առևտուր անելու: Ոչ թե ստեղծելու, ոչ թե կազմակերպելու, կառուցելու, ծրագրելու և աշխատելու: Նրանց այն եղբայրները, որոնք այս բաներն էին անում, անզավակ մեռյալներ են: Ոչ, միայն ամենազուտ, ամենախորամանկ առևտրականներն են ապրում, և նրանց ենք գտնում ամեն տեղ, ուր սողոսկում-թափանցում են: Մեր գաղութներուն, Հարավային Ամերիկայուն ես հանդիպել եմ արաբների, որոնք փերեզակություն են անում, առևտուր են անում, հարստանում են: Իսկ ինչ վերաբերում է սիրիացիներին, հույներին, հայերին...

- Եվ իրեամերին,- հուշեցի: Անտեսեց:

- Իմ այս իին ժողովուրդները,- ասաց,- կգնան որևէ տեղ, ուր աշխատավորներ կան աշխատեցնելու, խորամանկորեն կսիրակախեն հեզորեն տառապելով, դրամ խնայելով, գործ անելով: Այս, նրանք գործ են անում: Այնպես են գործ անում, որ աշխատավորն այդպես չի աշխատի: Այնպես են գործ անում, ինչպես

բիզնեսմենը միայն կանի՝ հարատևորեն, համառորեն, մնալով հենց միայն շահի նեղ լուսանցքով: Բայց,- շեշտեց նա,- չեն աշխատի նրանք: Չեն կարող: Չեն կարող հասկանալ «աշխատավարձի համար աշխատելու» դրույթը: Դա բնագդ է նրանց մեջ, մի գիծ, մի ուշիմություն, որ զարգացվել է հաջողված ընտրասերումով, ինչպես որսորդության ուրույն գծերն ենք զարգացնում որսկան շների այս կամ այն ցեղի մեջ: Նրանք իրենց արյան մեջ իսկ գիտեն, որ աշխատավարձով, նույնիսկ բարձր աշխատավարձով աշխատելն անօգուտ է, եթե ուզում ես հաջողության հասնել ու հարստանալ: Ոչինչ չկա, ոչինչ չի կարող լինել աշխատավարձի որևէ հնարավոր բարձրության մեջ՝ ոչ շահույթ, ոչ դրամագլուխ, ոչ բաղադրյալ առաջատվություն: Նրանք չեն ել խոսում դրա մասին, դա շատ ակնհայտ է նրանց համար, դա նրանց կյանքն է: Նրանք խելոք են, ինչպես իին մի ցեղ կարող է խելոք լինել՝ որսալու խաղին պատրաստ: Քոթոքի իրենց աչքերը բանալու պահից արդեն տեսնում են արարող աշխատանքի անհեթերությունը: Անելիքը միայն դիտել ու սպասելն է մինչև հարստությունն արտադրվի, ու հետո, մի կերպ, արտադրողից այն ձեռք բերելը: Եվ նրանք գիտեն՝ ինչ կերպ անեն այդ բանը, ինչպես կենդանին գիտե իր կենդանական գործը ու բույսն ել գիտե իր բուսական գործը՝ բնագրով: Ուստի կզբաղվեն բժշկությամբ, իրավաբանությամբ, ցանկացած այլ մասնագիտությամբ էլ, որ բիզնեսի նման ձեռք է բերում այս կամ այն շահաբաժնը հասարակական ընդհանուր հարստության ավարտված, վերջնական, դրոշմված ձևից, երբ հասարակ ժողովուրդն արդեն ստեղծել է այդ հարստությունը: Իսկ դրւոս գալ ու ճակատի քրտինքով արդյունահանել երկրի հումքը և մշակելով վերածել շուկայական ապրանքների՝ ոչ: Յին ժողովուրդները չեն հանդուրժում անել այդ բանը, իսկ ինչ վերաբերում է ձեր հայերին՝ նրանք պարզապես չեն անի:

Լոեց մի պահ, դիտելով ինձ, ու երբ տեսավ, որ ինքու չեմ դիտում իրեն, իր պրոպագանդի սլաքներից դեռ մի քիչ ել արձակեց ինձ վրա:

- Հայերը,- ասաց,- ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակրթվածության տեսակետից:

Ես կրկին տվի իմ թեկնածուի անունը:

- Յրեանե՞րը,- արձագանքեց: - Առաջ էլ ասացիր նրանց մասին, և ես գոհ զգացի: Դա ցույց տվեց, որ գեթ մի նշույլ ընկալում եք իին ցեղերի մասին իմ ասել ուզածից: Քիչ ճամփաներ անցած մարդու համար իրեաներն ամենածանոթ օրինակն են իին, խորաթափանց, խելացի ժողովրդի, և այս, նրանք բնագդորեն շահագործողներ են: Նրանք հակված են վաշխառության: Բայց նրանք կաշխատեն: Չեն հանդուրժում, բայց կարելի է նրանց աշխատեցնել: Եվ ավելի վատ, որ նրանք ստեղծագործող էլ են, ինարամիտ ու սենտիմենտալ: Նրանց մեջ դեռ կան արվեստագետներ, փիլիսոփաներ, մարդաբարեներ: Անկատար են նրանք: Քաղաքակրթության անավարտ մի արդյունքն են, կիսատ մնացած: Ես հասկանում եմ, թե ինչու իրենց հանդեպ վախ ու ատելություն են հարուցում նրանք. ունեն ցեղային տարեցության՝ որոշ իմացական գերազանցություն: Բայց անհերեթ է նրանց նույն ոգով դասել այն իին ժողովուրդների հետ, որոնց մասին խոսում եմ: Չէ՞ որ իմ իին ցեղերն իրենց երկրից դուրս են քշել ձեր այդ հրեաներին կամ չեն թողել, որ գործ անեն իրենց մոտ: Նրանք չեն կարող ապրել արաբների, սիրիացիների, եգիպտացիների վզին: Իրենց լավ են զգում Անգլիայում, հարստանում են Ֆրանսիայում ու Գերմանիայում և անշուշտ Միացյալ Նահանգներում, այս, այս, նրանք: Բայց չինացիները, օրինակ, չինացիները կուլ են տալիս հրեաներին, ինչպես կետ ծուկը փոքր ձկներին: Մեր շոտլանդացիները ողջ-ողջ քերթում են նրանց: Այդպես են անում արաբներն էլ, թուրքերը, հույները, իսկ ինչ վերաբերում է հայերին...

Շունչ քաշելով, շարունակեց.

- Յրեաներն իրենք այնպես են զգում հայերի հանդեպ, ինչպես հակասեմական եվրոպացիները հրեաների հանդեպ են զգում: Ծիշտ նույն կերպ էլ հույները, թուրքերը և բոլոր այն մյուս ցեղերը, որոնք երբեւ գործ են ունեցել հայերի հետ: Զգում են, որ հայերը բոլորին էլ աշխատանքի կլծեին: Ու կլծեն: Հայերն ունեն հրեաների բոլոր հատկանիշները, առավել բոլոր մյուս ցեղերի էլ բոլոր հատկանիշները: Եվ բացի այդ քրիստոնյաներ են:

Կանգ առավ, ոչ թե ասելիքի համար բառեր գտնելու. կրթված անգլիացին, ենթադրում եմ, լավ գիտի անգլերենը: Ավելի ճիշտ՝ կարծես խուսափում էր իր եզրակացությունն ասելուց, նախընտրելով ինձ ստիպել, որ ինքս բռնեմ իր եզրակացությունը, քան թե իր բերանից մեջբերեմ: Ու քանի որ խայծը չի կլել, նա տաղտկալիորեն շարունակեց՝ ևս մի պատեհություն տալու ինձ:

- Հայերը,- ասաց,- չպետք է ունենան Հայաստանը, բուն երկիրը: Իրենք չեն աշխատի, որ մշակեն երկիրը, նույնիսկ ոչ իսկ հօգուտ իրենց: Ուզում են այդ հողերը, այո, բայց միայն սեփականատերը լինելու համար: Մինչև իսկ զարգացման գործը կազմակերպելու համար չեն աշխատի նրանք: Արտոնագրությամբ վարձու կտան ուրիշներին՝ գործը վարելու: Նրանք ուզում են ապրել ծովեզրին, քաղաքներում, ի հաշիվ ստացած վարձի շահույթի, շահաբաժնների, արժեքորեր առնել-ծախելով ձեռք բերված շահի և դրանագլխով ու աշխատուժի կիրառմամբ վաստակած դրամի:

- Շատ մարդիկ կան այդպես,- ասացի: -Միայն հայերը չեն:

- Տեսնում եմ, որ դուք դեռ չեք ըմբռնում բուն խնդիրը,- ասաց նա: - Իրոք, ուրիշներ էլ կան, որ կուզենային այդպես անել: Ֆրանսիական բուրժուազիան այդ ուղղությամբ է շարժվում, ու մեր անգլիացիներն էլ գալիս են դրան, մանավանդ մեր այսպես կոչված բարձր դասի այն դգոհները, որոնք զնում են գաղութներ կառավարելու, բայց ինքնամփոփում են իրենց համար «Փոքր Անգլիա» ստեղծելով տեղում: Նրանք կուզենային ոչինչ չանել, բայց չեն կարող: Անվնաս են նրանք: Կուզենային ոչինչ չանել, բայց ծախսել: Ու ծախսում են իրոք, հասկանում եք: Նույնիսկ ձեր իրեաները ծախսող են, սքանչելի ծախսող: Բայց ձեր այդ հայերը ոչինչ չեն անի և չեն էլ ծախսի: Ձեռք են բերում ու խնայում: Վաճառում են, բայց միայն կրկին գնելու և ավելի և ավելի ձեռք բերելու համար: Դարերով բնաշրջություն է պետք՝ իսկական առևտրական ոգու այդպիսի կատարելություն զարգացնելու համար, իսկ բնաշրջությունն աստիճան առ աստիճան զարգացման խնդիր է: Ու հայերն ամենաբարձր աստիճանին են հասել: Ասում եմ ձեզ, որ

Եթե հայերին առիթ տրվի մի կարգին թոփք առնելու աշխարհում, եթե նրանք ազատ իշխանություն ձեռք բերեն երկրագնդի որևէ անկյունում, ամբողջ մոլորակի տերը կդառնան և կաշխատեցնեն մնացյալ ամբողջ մարդկությանը: Այդ է, որ գիտեն թուրքերը և սարսափում են, և հույներն էլ և... մենք բոլորս, որ գիտենք նրանց: Ուրեմն...

Նա կրկին ինձ վրա էր գտում, որ ասեմ եզրակացությունը, բայց ես չէի ուզում ասել: Ուստի խթանեցի նրան:

- Ուրեմն...- ասացի:

- Ուրեմն,- պոչը թեքեց նա, ինչպես ամերիկացիներս ասում ենք կոպտորեն,- ուրեմն պետք է բաժանենք նրանց՝ Յայաստանի վրա մի մանդատ, հայերի վրա ուրիշ մանդատ:

- Ուրեմն,- դիմադարձեցի ես,- դուք ուզում եք, որ Յայաստանը տրվի ձեր մի դաշնակցին, բրիտանական կապիտալի մի գործակցին, իսկ հայերը տրվեն մեզ՝ ամերիկացիներիս: Շատ լավ: Երկու հարց է ծագում: Զեր դաշնակիցը ի՞նչ կարող է անել Յայաստանում առանց աշխատուժի: Ու Վերջապես ի՞նչ կարող ենք անել ամերիկացիներս հայերի հետ առանց Յայաստանի:

- Օ,- ասաց,- ուրիշ ժողովուրդներ կամ Բրիտանիայում, Փոքր Ասիայում, Յնդկաստանում և Աֆրիկայում, հետամնաց ազգեր, իսկապես հետամնաց, ազգեր, որոնք աշխատուժ կարող են լինել: Նրանց կարելի է բերել Յայաստան և աշխատանքի լծել: Աշխատուժի պակաս չկա:

- Ուրեմն դա կլուծի բրիտանական, գործնական խնդիրը,- ասացի: - Գնանք իդեալիստական, ամերիկյան խնդրին: Ի՞նչ պետք է անենք հայերի հետ:

Չէր ուզում ասել: Իր բրիտանական հումորը կամ իր դիվանագիտական զգուշավորությունը և կամ զգիտեմ ինչը չէր թողնում նրան ասել: Խուսափելով խոսեց այն մասին, թե ասիական աշխատուժի ու Եվրոպական կապիտալի համար վտանգավոր է հայերի ներկայությունը որևէ այնպիսի վայրի մոտ, ուր հողեր են ճշակվում:

- Ուրեմն,- ասացի ես, ոչ առանց մի քիչ (ամերիկյան) հումորի: - Ուրեմն...

Մի ստվեր անցավ աչքերում, բայց ոչ ձայնի մեջ: Կրկին զվարթորեն խոսեց «ամերիկյան հիեալիզմի» մասին: Հոգնել էի այդ բանը լսելով, սոսկալի ծանծրացել, բայց դրա մասին խոսել նա սիրում էր: Եվ այս անգամ մի քիչ փոխեց երգի բանալին: Երիտասարդ կոչեց ամերիկացիներիս, ասաց, որ մենք դեռ անփորձ ենք ուրիշ, ավելի հին ցեղեր ղեկավարելու մեջ: Եվ ուրեմն, անտարակոյս, հակված ենք խստորեն դատելու գաղութային վարմունքը բրիտանացիների և այլ գործնական կառավարիչների, որոնց ամենախղճամիտ գործակալն անգամ երբեմն անհրաժեշտ էր գտնում սպանել կամ ուրիշ կերպ Աստծո վախը ներշնչել ենթակա մի ժողովրդի փոքրամասնության՝ մեծամասնության ընդհանուր շահի և ներդրված կապիտալի ապահովության համար:

- Դուք չեք գիտակցում,- եզրակացրեց նա,- թե որքան դժվար ու նրբին խնդիր է մի տարօրինակ, մի օտար ժողովուրդ կառավարելը:

- Սխալվում եք,- ասացի ջղագրգռված, ու կրկնեցի մեղադրանքս, թե նա չգիտե մեզ: - Դուք նույնքան անտեղյակ եք իմ ժողովրդի մասին,- հայտարարեցի,- որքան ասում եք, որ մենք ենք անտեղյակ եվրոպացիների, բուրքերի, հայերի և մյուսների մասին:

Ի ցույց բերեցի Ֆիլիպինները, Կուբան, Սանտիյան կղզիները, բոլոր այն օտար երկրները, որ կառավարում ենք հաջողությամբ: Ու իիշեցրի նրան, որ ամեն տեսակ օտարականներ ունենք ինչ մեջ: Առանց պատճառի չէ, որ Միացյալ Նահանգները ծուլարան են կոչել: Ինչ օտարականներ ասես չունենք այստեղ: Նույնիսկ նրա հայերին ենք աշխատեցրել: Պնդեցի, որ մենք ել մեր դժվար գործն ենք արել, ինչպես որևէ կառավարություն երկրագնդի երեսին, չբացառելով բրիտանացիներին էլ, և համոզելու համար նրան, որ գործնական ենք մենք, պատմեցի, թե տեսել եմ՝ ինչ է արվել օտար աշխատուժի նկատմամբ մեր Նոր Անգլիա նահանգներում, հարավային նահանգներում, մեր արևմուտքում և ամենուրեք: Բայց պատահեց, որ իշխատակեցի նաև մեր սեփական բնիկներին՝ ամերիկյան հնդկացիներին:

Հենց դրա վրա էլ նա ուղղակի վեր թռավ:

- Այդ է ահա,- գոչեց: - Այդ էր իմ մտքում ամբողջ ժամանակ: Զեր հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականությունն այն է, ինչ պետք է հայերի հանդեպ:

Անակնկալի եկա, շշմեցի: Յարցրի, թե իր կարծիքով ինչ է եղել մեր քաղաքականությունը հնդկացիների հանդեպ, և նա ասաց, թե իր հասկացածով՝ մենք ոչնչացրել ենք նրանց բոլորին էլ... բոլորին: Այնպես չէ՞:

Ես նայեցի նրան ոտից գլուխ, ինչպես ինքն էր ինձ նայել մի քանի անգամ: Ու հաճույքով այդպես նայեցի:

- Այդպես ուրեմն,- ասացի մի երկար դադարից հետո,- ուրեմն դուք մտածում եք՝ այդ է, որ պետք է հայերին անենք... - պետք է ոչնչացնենք նրանց բոլորին էլ, գլխովին:

- Ոչ, ոչ, ոչ,- ուղղեց նա: - Ինչպե՞ս եք դուք՝ լրագրողներդ սխալ հասկանում և սխալ մեջքերում:

Բոլորովին էլ չէր ուզում ասել, թե մենք պետք է կոտորածն ընդունենք որպես քաղաքականություն: Գիտեր, որ չենք անի, չենք կարող անել դա:

Դե լավ, ի՞նչ էր ուզում ասել, ուրեմն: Ի՞նչ պետք է անենք: Չասաց: Իրենք իրենց շուրջ պտտվող մի գույզ դերվիշների նման պտտվեց ու պտտվեց կլոր-կլոր: Յոգնեցուցիչ էր: Բայց ի վերջո հասկացա: Պետք է ինքս ասեի իր ասել ուզածը, երևի ա՞յդ էր ճիշտը: Չուղղեց ինձ:

Որոշակիորեն ու հստակորեն չէր ուզում ասել, թե մենք պետք է գիտակցորեն ու մտածված կերպով գնանք բնաշնչելու հայերին: Բոլորովին ոչ: Պարզապես հոյս ուներ կամ հավատում էր, որ ուրիշ ամեն ինչ փորձելուց հետո՝ մենք պետք է հարցը վերջացնենք այդ Բանն անելով: Ու նաև հիմնավոր անելով: Չթողնելով ոչ մի Աղամ ու Եվա, որ շարունակեն Կայեն ածեցնել...

- Բայց դա սկանդալ չի՝ դառնա,- ասացի:

Կարծում էր՝ ոչ: Ճիշեցրեց, որ մենք այնքան գաղափարապաշտ ենք և այնպիսի համբավ ենք վայելում մեր մարդասիրության համար, որ թվում է՝ ի զորու ենք որևէ բան անելու բանականության սահմաններում առանց կորցնելու մեր իդեա-

լիզմը կամ մեր բարի անունը:

- Յնդկացիների հանդեպ ձեր քաղաքականության մեջ խայտառակություն չկար, այնպես չէ,- հարցրեց: - Ու երբեք էլ չեք դադարել մտածելուց, թե ձեր արածը ճիշտ էր, այո՞ւ: Նվաճել եք Մեքսիկայի մի մասը, գրավել Հավայան կղզիները, զենքի ուժով հսպանիայից խլել եք Ֆիլիպինները և Պուերտօ Ռիկոն, ազատագրել եք Կուրան և գրավ եք դրել դրա վրա, զնել եք Դանիական կղզիները, ձեր ծովային հետևակազորը ափ եք հանել Կենտրոնական Ամերիկայում և զորքը մոռացել այնտեղ: Շուտով ստիպված եք լինելու վերականգնել կարգ ու կանոնը միացյալ Մեքսիկայում: Եվ սակայն,- ասաց նա, կարծեմ իհացմունքով,- դուք դեռ կողմ եք փոքր ազգերի ինքնորոշմանը: Դուք փոքր կայսրություն եք, իսկ մեզ զգուշացրել եք ձեր Մոնրոյի դոկտրինով, որ երբ պատրաստ լինեք՝ մեծ կայսրություն եք դառնալու: Եվ սակայն դուք հակախմաբերիալիստներ եք: Դենց նոր պատերազմ մղեցիք գերմանական իմպերիալիզմի դեմ, և...

- Դուք էլ,- արձակեցի կրակոց:

- Օ՛հ, դա տարբեր է,- հակադարձեց նա իմ կրակոցը: - Մենք իմպերիալիստներ ենք: Մենք մեզ անկեղծորեն կայսրություն ենք կոչում և պարկեշտորեն կովեցինք մեր կայսրության համար գերմանացու կայսրության դեմ: Իսկ դուք՝ դուք կովեցիք կայսրության դեմ հօգուտ ինքնորոշման:

Կար մի կետ դրա մեջ. և զգացի՝ նա շարախմարորեն սպասում էր, որ դիմակայեմ դրան: Բայց հենց ուղղակի չէի կարող այդպիսի վայրկյանին, ու երբ չպատասխանեցի, նա շարունակեց.

- Ես կարծում եմ, որ դուք՝ ամերիկացիներոդ կարող եք որևէ բան անել ու տարակուսանքի չենթարկվել ոչ աշխարհի, ոչ էլ ինքներդ ձեր կողմից: Մի սքանչելի բան կա դրա մեջ, շատ սքանչելի, աշխարհի համար օգտակար մի բան: Դա թույլ է տալիս մտածելու, որ ամերիկացիներոդ բուն Հայաստանում կարող էք իիմնավորապես անել ու վստահաբար կանեք այն, ինչ պետք է արվի այնտեղ: Կանեք աստիճանաբար, բայց կատարելապես, առանց բաց թողնելու որևէ մի առանձին կամ, ավելի ճիշտ, ամուսնացած հայի, և այդ ամբողջը

առանց խայտառակության, առանց նվազագույնս խախտելու ձեր այն հավատքը, թե դուք... ինչպես ասեմ...դեհ, դուք նման չեք մեզ՝ անգլիացիներիս կամ ֆրանսիացիներին, գերմանացիներին, բուրգերին և, վախենամ, դույզն իսկ նման չեք հայերին էլ: Եվ,- շտապեց ավելացնել նա,- պետք է որևէ մեկը լուծի հայկական հարցը: Ինձ թվում է բանաստեղծական արդարություն կլինի, լավ քաղաքականություն և հաստատ գործ, որ աշխարհում ամենահղեալիստ ժողովուրդն իր վրա վերցնի աշխարհի ամենագործնական ժողովողին:

Ի՞նչ էր նա թելադրում ինձ: Բրիտանական հումո՞ր էր սա: Նայեցի նրան խիստ-խիստ: Աչքն էլ չքարթեց: Նստել էր այդ փրված տեսրով, որ նկատել էի առաջ, բայց, չէ՛, մկան չի շարժվում դեմքին: Ծանր բան է անգլիացու հետ հարցագրուցը, և վտանգավոր: Յիշեցի, որ ասաց՝ ժխտելու է հարցագրուցը, եթե ամենաթեթև իսկ առարկություն լինի: Որոշեցի հենց ուղղակի փորձել նրան:

- Ինչպես հասկանում եմ, ասացի,- ամերիկացիներս առևտրական մշակույթ ենք, ինչպես հայերն են, ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել:

Նա գլխով արեց: Ես շարունակեցի.

- Նրանք մտածում էին, որ զարգացնում են գործարարությունը, երբ իրականում զարգացնում էին մարդկային ցեղի մի որոշ տեսակ՝ մի ուրույն ցեղ գործարար մարդկանց, որ կախյալ են ուրիշների արտադրական աշխատանքից, ուրիշների, որոնց նրանք չեն կառավարում իինա, և որոնք ատում են նրանց, որովհետև նրանք կարող են որևէ մեկին մատի վրա խաղացնել առևտրի մեջ և ապրում են առանց աշխատելու, ստախոսներ են, չարաշահողներ, մակաբույժներ՝ ամենագործնական ուղեղով և ամենաքրիստոնեական իդեալներով ու վարվելակերպով:

- Դուք՝ ամերիկացիներդ լավ եք խոսում,- ասաց նա: Չեք կարող գտնել ոչ մի անգլիացու, որ այդքան հստակորեն բանաձևեր որևէ այդպիսի բան:

- Եթե ամերիկացիներս կարողանայինք այժմ, մեր ներկա դրությամբ, այս տեսակ մարդու զարգացման նախնական

փուլում, եթե կարողանայինք, կառավարելով հայերին, մոտիկից տեսնել մեր մշակույթի կիրառման գործնական ձևերն ու արդյունքները, եթե կարողանայինք հասկանալ, որ այն, ինչ ստուգում ու քննում ենք ներկա հայի մեջ, ապագա ամերիկացին է...

- Վաղվա,- շտկեց նա:

- Ապա ուրեմն, - շարունակեցի ես, - գուցե հուսախաք լինենք հայերից, գուցե, ջղայնացած, ոչնչացնեինք նրանց բոլորին...

- Ահա, ահա:

- Գուցե ոչնչացնեինք բոլոր հայերին, բայց պիտի տուն գնայինք...

- Ճեռագրեիք, - հուշեց նա, - ավելի արագ է դա:

- Ճեռագրեինք տուն, - ընդունեցի փորձի համար, - հեռագրեինք զգույշ լինելու մի ահազանգ. «Զգուշացեք գործնական բիզնեսի հետ քրիստոնեական իդեալիզմի խաչաձևումից»: Չափից շատ բիզնեսը և չափից շատ իդեալիզմը կարող են վնասել այս երկու լավ բաներին ու մեզ էլ որպես ժողովրդի:

- Ահա, ահա, - բացականչեց:

- Դա կարող էր մեծ, հարուստ Ամերիկան վերածել մի Յայստանի, որը բրիտանացիներն ու ռուսները (ապագայի) պիտի «անհրաժեշտ» գտնեին վերցնելու որպես մանդատային՝ երկու մասի բաժանված, մեկը՝ բուն իսկ Միացյալ Նահանգները, Անգլիայի համար, մյուսը՝ ամերիկյան ժողովուրդը՝ Ռուսաստանի համար:

Նա լուր մնաց: Սպասեցի տեսնելու, թե որևէ չափով զգո՞ւն է ամերիկյան հումորը: Նա էլ մի պահ սպասեց ու հետո, տեսնելով, որ մի բան են ակնկալում, խոսեց:

- Զեր այդ գաղափարը..., - սկսեց:

- Ի՞ն գաղափարը, - պայթեցի ես:

- Այո, - ասաց: - Դա մի գաղափար է: Լավ գաղափար է, լավ է տեսականորեն, բայց... էությանք իդեալիստական է: Ես նկատի ունեմ գործնականը: Յավատո՞ւմ եք իրոք, որ հայերին կառավարող ամերիկացիք բավական գիտակից կլինեն տեսնելու համար, որ հայերը նման են ամերիկացիներին:

- Դուք՝ անգլիացիներդ տեսնում եք,- կտրուկ նետեցի երեսին:

- ճիշտ է,- համաձայնեց նա մտածկոտ: - Մենք տեսնում ենք հայերի նշանակությունը ամերիկացիների համար, մենք՝ ինպերիալիստ անգլիացիներս տեսնում ենք դա: Բայց վստահ չեմ ու մտածում եմ՝ կարելի՞ է արդյոք մեր, այսպես կոչված, բարձր դասի դժգոհներին բերել այն գիտակցության, որ կանխատեսեն իրենց ճակատագիրը այն հին ազգերի ճակատագրի մեջ, որոնց կառավարում են:

Ես պարտված էի, անօգնական, շշմած: Բարեբախտաբար նա չտեսավ իմ վիճակը: Աչքերը խոնարիվել էին: Վեր կացավ, բայց խորը մտածմունքի մեջ էր, երբ ինձ առաջնորդում էր դեպի դուռը: Այնտեղ աչքերը բարձրացրեց:

- Գնաք բարով,- ասաց,- ես հավանում եմ ձեր տեսությունը: Գայթակղիչ է: Վախենամ՝ թե գործնականում դա չաշխատի, բայց գրեցեք դրա նասին: Թելադրական է: Զգույշ գրեցեք, ոչ շատ հստակ և, իմիջիայլոց, մի մեջբերեք ինձ: Ես ոչինչ չեմ ասել, ոչինչ...

*Թարգմանությունը՝ Կարպիս Սուլենյանի*

## ԼՐԱԳՐԱՅԻՆ «ԽԱՅԾԵՐԻ» ԲՇՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

### Հատվածաբար

Խոսքը բոլորովին էլ որսորդական կամ ձկնորսական խայժերին չի վերաբերելու ... Մեր դարում հետաքրքիր են այլ «խայժերը», որոնք կարելի է կուլ տալ միայն աչքերով և որոնք, այսուհանդերձ, օրինավոր քաղաքացիների ամենօրյա սննումն են դարձել:

«Խայժը» ծնվել է Երուսաղեմյան փողոցում. այն ամեն առավոտ փողոց է նետվում պ-րն Ռոսինյոլի հաստատությունից և գորշ, քառակուսի փոքրիկ թղթի տեսքով թևածում է մայրաքաղաքում: «Նորություններ, թարմ նորություններ»: Դուք լսո՞ւմ եք փողոցներն արթնացնող այդ խռպոտ, խլացնող կանչերը...

«Խայժը»՝ նորությունն է, երբեմն հավաստի, երբեմն չափազանցված, հաճախ՝ կեղծ: Դրանք սարսափելի սպանության մանրամասներ են՝ երբեմն պատկերազարդված պարզունակ գծանկարներով, որևէ աղետ, արտասովոր երևույթ կամ իրադարձություն: Վճարեք հինգ սանտիմ և «խայժն» իր գործը կանի: Երանելի է նա, ում պարզունակ ուղեղը կարող է հավատալ այդ հնարովի լուրերին:

«Խայժը» ծնվել է խոր հնադարում: Այն հիերոգլիֆների բանալին է, նրանց առեղծվածային արտահայտությունների բառային արտահայտությունը: Բոլոր ժողովուրդների պատմությունը սկսվել է «խայժերից»:

Չները մեզ են ավանդել զարմանահրաշ պատմություններ, իսկ մենք դրանք մեր սերունդներին ենք փոխանցում ավելի գեղեցկացված: Այս իմաստով Յերոդոտոսը և Պլինիոսն անգուգական են. մեկը հորինեց անգլուխ նարդկանց, մյուսը՝ տեսավ պոչավոր մարդիկ: Ֆուրիեն համարում էր, թե կատարյալ մարդը պոչ պետք է ունենա:

(...) Այսպիսին են գիտության հովանավորության տակ Վերցված անդրջրիկեղյան «խայծերը»: Դրանք լավ ապագա ունեն: Յին գիտնականները մոտ էին Տևտոբովուս թագավորի հսկայական ուսկորները մեզ ժառանգելուն: Սակայն ոչինչ չի կարող համեմատվել ծուկ-եպիսկոպոսի պատմության հետ, որին իբր բռնել էին Բալթիկ ծովում, ներկայացրել Պապին, և նա վերջինիս հետ խոսում էր լատիններեն:

XVI դարում ծովագնացները բազմաթիվ այլ «խայծեր» են բերել ներառյալ Էլդորադոյի, լողացող կղզու տեղ ընդունված ծովային հրեշի, ուրպական նավի, հօղողոյան վիշապի և ժակ Արագոյի տեսած ծովային օձի պատմությունները:

(...) Կար ժամանակ, երբ դեռևս թերթեր գոյություն չունեն, թեպետ արդեն հայտնագործված էին վառողն ու տպագրական հաստոցը: Այդ ժամանակներում «խայծերը» փոխարինում էին թերթերին: Քաղաքականությունը քիչ էր հետաքրքրում քաղաքների ու գյուղերի բնակչներին: Անարխիայի հիդրան, պետական կուրսը, ժողովրդական հուզումները դեռևս ի վիճակի չեին գրավելու անկիրթ մարդկանց ուշադրությունը: Այն ավելի հակված էր դեպի անհավատալի հորինվածքները: Կերպափոխուկ մարդ, ճգնակյաց եկեղեցական, ժևողանյան գազան. սրանք էին փորագրանկարներում, լեզենդներում, ժողովրդական երգերում արտացոլված հիմնական թեմաները:

Այսպես էր Լյուդովիկոս XV-ի ժամանակ, սակայն պ-րն Ռենդոն հիմնեց «Գազետ դե ֆրանս»-ը, իսկ պ-րն Վիզեն «Մերկյուր գալան»-ը և «խայծը» մշտական բնակավայր ունեցավ՝ հայտնվեց ժուրնալիստիկան:

Լրագրային առաջին «խայծը» ուսկե ատամի մասին էր: Երեխան ծնվել էր ոսկե ատամով: Այս փաստը հաստատված, հիմնավորված, ուսումնասիրված էր ակադեմիաների կողմից: Յրապարակվեցին թեր և դեմ գիտական հետազոտություններ: Յետագայում ընդունեցին, որ ատամը դնովի էր, սակայն ոչ մեկը չէր ուզում հավատալ նման բացատրությանը:

Յետո եղավ Յոլանդիայի իշխանություն անհավատալի երկունքի մասին «խայծը». Նա երեք հարյուր երեխաների մայր էր դարձել, ովքեր բոլորն էլ մկրտված էին:

XVIII դարում աստիճանաբար աճեց պաշտոնական թերթերի թիվը: «Ժուռնալ դե Տրևու»-ն, «Ժուռնալ դե Սավան»-ը այդ ժամանակի հասարակության մեջ գիտական «խայծեր» էին տարածում: Կոլեխ գաղտնի հուշերը և Բաշոնի ժողովածուն նույնպես զերծ չէին այդ հնարքներից, ու հանրության հետաքրքրասիրությունն էին գրգռում:

Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակներում ձևավորվեց ճշնարտության պաշտամունքը: «Խայծերն» այդ ժամանակաշրջանում անվտանգ չէին, և դրանք սկսեցին պահել ավելի լավ ժամանակների համար:

Կայսրությունը նորանոր նշտացածին բաներ էր իմանում, որ օտար երկրներից թերում էր նապոլեոնյան բանակը: Դրանք հաճույքով պատմում էին ընտանեկան օջախներում, սակայն հազվադեպ էին հրապարակում թերթերում:

«Խայծերը» նորից փարիզյան հասարակության ուշադրությունը գրավեցին Ռեստավրացիայի ժամանակաշրջանում: 1814 թվականից հետո առաջին և ամենանշանակալի «խայծը» ամբողջովին ճաղատ կնոջ պատմությունն էր: Այդ տարօրինակ եակն ուներ հրաշալի կազմվածք և երկու կամ երեք միլիոն օժիտ: Թերթերը հրապարակեցին նրա հասցեն, սակայն նա ոչ մեկին չէր ընդունում: Սիրատոչորներն հայումաշ էին լինում նրա դրսերի առջև, թափառում էին նրա լուսամուտների տակ, բանաստեղծություններով ու արձակ գործերով գովերգում էին նրա առաքինությունն ու նրա միլիոնները: Ոմանք լրջորեն սիրահարվեցին և պատրաստ էին ամուսնանալ նրա հետ առանց անգամ օժիտի: Վերջապես ոմն անգլիացու հաջողվեց հանդիպել նրան, և անգլիացին հիասթափվեց՝ ճաղատ անձնավորության փոխարեն տեսնելով բավականին գրավիչ մի կնոջ, որը շահարկում էր իր իբր այլանդակությունը՝ ուշադրություն գրավելու համար: Ինչպիսի՝ խաբեություն:

Իսկ մոռացե՞լ եք փայտագլուխ հաշմանդամի մասին:

Թերթերն ավելի ու ավելի էին շատանում և «Խայծերի» թիվն էլ էր աճում: «Կոնստիտուսյոնելը», «Կուրիեն», «Պերան» դեռևս համեմատաբար փոքր հրատարակություններ էին: Սակայն խորիրդարանի նստաշրջանների միջակայքում,

խորհրդարանական երկարատև արձակուրդների ժամանակ այդ թերթերը կարիք ունեին բավարարելու իրենց ընթերցողների հետաքրքրասիրությունը, որպեսզի պահպանեն բաժանորդներին: Այդ ժամանակ էլ կրկին թերթերի էջերում հայտնվեց հսկայական ծովահրեշը, որի մասին չին հիշել միջին դարերից ու Մարկո Պոլոյի ճամփորդության ժամանակներից ի վեր: Ծովային օձին չուշացավ միանալ նաև ահավոր խեցգետին-սարդը, որ իր ոստայնները նետում էր նավերի վրա, և որի հրեշավոր շոշափուկը կացնի մի հարվածով կտրել և Լիսաբոն էր թերել պորտուգալացի լեյտենանտը:

Մրան հավելեք նաև հրաշքով նորից աշխարհ եկած երկալիսնի հորթերի հարյուր կամ երկուհարյուրամյա հնության հավաքածուն և նոր ժամանակների այլ «խայծերը»:

Որոշ մտացածին լուրեր ունեին քաղաքական ենթատեքստ: Այդպիսին է, օրինակ, այն սուլզանավի պատմությունը, որը Նապոլեոնին պիտի աքսորավայր կղզուց փախցներ: Ինչպես նաև պատմությունը՝ Կայսրության ժամանակների այն գինվորի, որ փախել էր Սիբիրից:

Այլ «խայծեր» առնչվում էին արվեստին կամ գիտությանը: Այդպիսին է ամենագետ սարդի, գորտային անձրևի, իր բաղի սիրուց վերջինիս ձվերին թուլսս նստած անգլիացու, մի քանի հարյուր տարի առաջ կառուցված պատի մեջ հայտնաբերված դոդոշի պատմությունները և այլ դատարկ գրույցներ, որ հմայք էին հաղորդում մեր անդարձ նանկությանը:

Չմոռանանք, որ թերթերն այդ ժամանակ ընդամենը երկու սյունակ ունեին: Սյունակների թվի ավելացումը համարյա անմիջապես նշանավորվեց Կլարա Վանդելի, Գասպար Օգեի և ավագակ Շյութրիի մասին պատմություններով (...):

Առաջինը, ով կատակախսադ «խայծ» հորինեց՝ դռնապանների նկատմամբ թշնամանք տածող մի նարդ էր: Ըստ Երևույթին նա պատճառներ ուներ դրանցից մեկից բողոքելու: Նրա վրեժիք դաժան էր: Այդ մարդը թերթերից մեկի խմբագրություն ուղարկեց հետևյալ գորությունը.

«ՍԵՆ-ԱՆՏՈՒԱՆԻ կալվածքի մի ատաղձագործ, սղոցելով կարմիր ծառի գերանը, ներսում հայտնաբերեց խոռոչ, իսկ դրա մեջ՝ օձ: Օճն ասես թմրած լիներ, և ատաղձագործը կարողացավ նրան դուրս բերել... Օճն ու գերանը կարելի է տեսնել հետևյալ հասցեում. Ուկետ փողոց, տուն N... Դռնապանն անսահման երջանիկ կլինի ցույց տալու դրանք բոլոր ցանկացողներին»:

Մի քանի թերթերում բազմիցս հրապարակված այս կատակն ահավոր հետևանքներ ունեցավ. դռնապանը, ասում են, խելագարվելով ամենօրյա այցերից (հատկապես մի քանի անգլիացիների), ովքեր կասկածում էին, թե օճն իրենցից թաքցնում են իրենց ազգի հանդեպ առկա ատելության պատճառով) մահափորձ կատարեց այցելուների դեմ:

Քետո մենք հերթով ծանոթացանք նեգրուիի Սեսիլիայի՝ թատրոնում օրիորդ Մարսի մրցակցուիու, կին ծովահենի, լուսնաբնակների հետ, մեզ տեղեկացրին Նիագարայի քարերի փլուզման, Ներակում գալլերի թագավոր Տետրիկուսի հարթաքանդակների հայտնաբերման մասին: Այս վերջինները, որ բազմաթիվ գիտական դիսերտացիաների առարկա դարձան, ինչպես հայտնի է, գասկոնցի ապակեգործի ստեղծագործություններն էին, որոնք նա թաղեց և դարձավ հանրահայտ, երբ Ինստիտուտը դրական եզրակացություն տվեց այդ հարթաքանդակների հնության մասին:

«Խայջը» հաճախ իշխանության համար միջոց էր հասարակության ուշադրությունը վարկաբեկող հարցերից կամ հսկայական ծախսերից շեղելու համար:

Տեսնում եք, որ «խայջերը» շարունակում էին մտացածին լինել: Այս հարցում գավառը, թվում է, առաջ է անցել Փարիզից: «Մարսելյան սենաֆոր» թերթը հորինեց Յունոսի ծովահեններին, որոնք եկել էին Միջերկրական ծովից և կարողացել էին գետով բարձրանալ մինչև Բոկեր և փախցնել բոլոր տեղացի աղջիկներին նեգրոպանտական փաշայի հարեմի համար:

Այս «խայջը» հայտնվեց, երբ հասարակությունը կարդում-տարվում էր «Արևելյան մոտիվներով»: Փարիզն ահարեկված

էր: Ներքին գործերի նախարարը ճեպագիր ուղարկեց Նիմ, որով նկատողություն հայտարարեց պրեֆեկտին, իսկ վերջինս էլ Տարասկոնեի թագավորական դատախազին հարցրեց, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկված այդ իրադարձությունների առնչությամբ: Թագավորական դատախազը մեկնեց դեպքի վայր, կտրեց անցավ Յունոսը վերից վար և համոզվելով, որ ամեն ինչ սուտ է՝ պատասխանեց. ծովահենները Բոկերում ոչ մի աղջիկ էլ չեն փախցրել, ավելին՝ խիստ կասկածելի է, որ նրանք ընդհանրպան այդտեղ եղել են: Պրեֆեկտը շտապեց հանգստացնել փարիզցիներին, ովքեր դրանից հետո այլևս չեն վախենում «Մարսելյան սենաֆոր»-ում հրապարակվող լուրերից:

Իսկ Սերում կարելի էր լսել երկու իտալացի գիտնականների՝ Մասկրեդատի և դե Բյուֆի մենամարտի պատմությունը: Այդ գիտնականների մասին տեղեկություններն այժմ տեղադրում են բոլոր կենսագրական գրքերում, սակայն նրանք իրականում չեն էլ եղել: Բոլորովին վերջերս ողջ Փարիզը ալեկոծվել էր որք Յուլիայի պատմությունից: (...) Յայտնի է, որ Մարսելում՝ գիտնականների հավաքում պարզաբանվել է, որ Յուլիան չի խոսում հայտնի լեզուներից և ոչ մեկով: Ահա այստեղ էր, որ Փարիզը ռևսանշի հասավ: «Դուք ասում եք,- պատասխանեցին փարիզցիները մարսելյան աղքատ ազգականներին,- թե Յուլիան չի խոսում Մարսելում հայտնի և ոչ մի լեզվով: Իսկ գուցե նա պարզաբան ֆրանսերե՞ն է խոսում...»: «Մարսելյան սենաֆորը» սրան ոչինչ չպատասխանեց:

Ըստ եռթյան, ընդունենք, որ եթե երեմն անգամ «խայծը» ծնվում է գավառում, ապա այն գոյություն ունենալ կարող է միայն Փարիզում. Իենց այստեղից է այն նետվում և ողջ աշխարհը շրջելով վերադառնում է այստեղ՝ ավելի ուռճացած: Եվ ինչն է ամենից զարմանալին. «խայծը», լինելով պարադոքսի և ֆանտազիայի խաչասերման արդյունք, վերջին հաշվով միշտ ճշմարտացի է դուրս գալիս: Շիլերը գրել է, թե Կոլումբոսը երազում էր Ամերիկայի մասին, և Աստված օվկիանոսից վեր բարձրացրեց այդ նոր երկիրը, որպեսզի հանճարը հանկարծ կեղծիքի մեջ չմեղադրվի: Ցանկացած հանճարի

մասին կարելի է ասել, թե նա չի հորինում որևէ այնպիսի բան, որը չհայտնվի և ի հայտ չգա որոշակի պահի:

Թերթերից մեկը գրեց մի փոքրիկ աղջկա մասին, որի շրջազգեստին ասեղնակարպած էր «Կայսր Նապոլեոն» գրությունը: Երեք տարի անց երեխային տեսան Բուլվարում: Մենք էլ ենք տեսել:

Գասպար Օգեն և ավազակ Շյուբրին իրական են դարձել իենց այն բանի շնորհիվ, որ մտացածին են եղել: Քին պոետները կարծում էին, թե իրենք են հորինել վիշապին: Պ-րն Բրոնյարը Մոնմարտրում հայտնաբերեց դրա ոսկորները և այն անվանեց պտերողակտիլ: Կար մի ժամանակ, որ հավատում էին ֆանտաստիկ դելֆինի գոյությանը: Իտալացի բնագետները վերջերս Ապենիններում հայտնաբերեցին նրա ամբողջովին պահպանված կմախքը: Կասկածում էին, թե գոյություն են ունեցել առասպելական Սիրենները: Քչերին է միայն հայտնի, որ երեք սիրեններ, Յավա կղզու մոտ՝ ծովում հոլանդացիների բռնած երեք սիրեններ՝ ապակու տակ դրված, պահպանվում են Յաագայում՝ թագավորական թանգարանում, 449 համարի տակ:

Այ կտեսնեք, երբ Մյուլոյի հորինած սարքի օգնությամբ մեզ հաջողվի ներթափանցել երկորի ընդերքի խորքերը, մենք այնտեղ կհայտնաբերենք ընդերկյա արեգակով լուսավորվող Նազոր մոլորակը, որի մասին պատմում է տասնվեցերորդ դարում Նիկոլա Կլինիուսի հորինած իրաշալի «Խայծը», որ շարադրված է հեղինակի «Iter sugterraneum» գրքում:

Ի վերջո, այդ Նազոր մոլորակը, անկասկած, գոյություն ունի: Դա պարզապես... դժոխքն է: Սակայն Արարիչը դրա մասին մեզանից լավ գիտի:

Այսպիսին է վերջին «Խայծը», և չկա ոչինչ դրանից վեր:

## ԼԵՎ ՏՈԼՍՈՅԻ ԹԱՂՈՒՄԸ

Մոսկվա, 9 նոյեմբերի

Յամեստ ու անշուք էր Լև Տոլստոյի թաղումը:

Այդ թաղումը կատարվեց այնքան արագ, որ շատ շատերը ոչ մի հնարավորություն չունեցան գնալու Յասնայա Պոլյանա: Նույնիսկ ներկայացուցիչները հնարավորություն չունեցան գնալու թաղման: Այսօր Յասնայա Պոլյանայից վերադառնալիս ես հանդիպեցի Տուլայում Պետերբուրգից եկած ներկայացուցիչներին, որոնք չգիտեն, որ արդեն Մեծ ծերուկը հանձնված է հողին: Մոսկվայի ներկայացուցիչների մեջ մասը նույնպես չկարողացավ գնալ, որովհետև չնայած որ հաղորդակցության կառավարիչը խոստացել էր յոթը բացարիկ գնացք տալ Յասնայա Պոլյանա գնացողներին – տվեցին մի-այն 2-3 գնացք:

Երբ հասանք «Զասեկա» (Յասնայա Պոլյանայից 4 վերստ հեռավորության վրա գտնվող կայարանը), այնտեղ արդեն սպասում էր բազմամարդ ամբոխ:

Մեզանից հետո էլ եկան մի քանի խումբ, և այդպիսով հավաքվեցին 5-6 հազար (մոտավորապես) մարդ, որ դիմավորեց Լև Տոլստոյին բերող շոգեկառքը:

Առավոտը նոր էր բացվել, երբ եկավ այն գնացքը, որի մեջ տեղավորվել էր Տոլստոյի ընտանիքը և նրա դիակը:

Դիմավորողների առաջին կարգում կանգնած էին Յասնայա Պոլյանայի գյուղացիները իրենց անշուք պսակով և մի կտավի ցուցագրով՝ հետևյալ բովանդակությամբ. «Լев Հոկոլաևսի! Պայտե օ տեօմ ճօբը հոկօգда հե յմրետ սրեւ հաս, օսրօտեւասի կրեստյան յանու Պոլյանի!»:

Կային և ուրիշ պսակներ՝ թվով մոտ 50 - զանազան կողմերից, սակայն երևի մեծ մասը դարձյալ չէր հասել ժամանակին:

Ժամը 8-ին տիսուր պրոցեսիան ուղևորվեց Տոլստոյի գյու-

Դը - Յասնայա Պոլյանա:

ճանապարհին շարունակ երգում էին «Վեռայա ոամյա»:

Հոգևորականություն չկար: Չկար և ոչ մի հոգևորական:

Բազմության մեծագույն մասը կազմում էին ուսանողները և ուսանողուինները:

Յասարակական գործիչներից և ռուս գրողներից կային մի-այն մի քանի հոգի - դրանց թվում Վալերի Բրյուսով, Գրիգոր Պետրով (նախկին քահանա) և ուրիշ մի քանիսը: Յասնայա Պոլյանայում դագաղը դրին սենյակներից մեկում և թույլ տվին հասարակությանը վերջին անգամ գլուխ խոնարհելու մեջ մարդու դիակի առաջ: Դա մի քանի ժամ տևեց: Ապա նույն կարգով՝ «Վեռայա ոամյա» երգելով, տարան դագաղը դե-պի գերեզման, որ գտնվում է նույն կալվածքում բլրակի վրա՝ կաղնիներով շրջապատված, այն տեղում, որ ինքը Լև Տոլս-տոյը ընտրել է իր գերեզմանի համար: Աշխարհից հեռու, խա-ղաղ ու գեղեցիկ մի անտառակի մեջ:

Ոչ մի ճար չարտասանվեց:

Միայն երբ դագաղը իջեցրին գերեզման, մեկը բարձր ասաց.

Յելսկու Լև Սմեր:

Ապա ամբոխը ծունկ չոքեց և երգեց «Վեռայա ոամյա»:

Նորից ծունկ չոքեցին և նորից – մի քանի անգամ:

Ծանր էր և սրտաճմլիկ այդ տեսարանը:

Շատերը լալիս էին, ինչպես և կայարանում, դիակին դիմա-վորելիս և ճանապարհին...

1910

## ՌԱՌԱՑԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Մտածմունքներ կան, որ սաստիկ ծանր են, բայց դուք դատապարտված եք մտածելու, չեք կարող փախչել նրանցից: Նրանք են ծանր հիվանդությունների նման են, երբ դուք գիտեք, որ ձեր մարմնի մեջ կրում եք քաղցկեղի խոցը, բարակացավի բացիլները կամ ժանտախտի թռւյնը: Չեք կարող անց կենալ ու արհանարհել. կամ նրանք պետք է ձեզ հաղթահարեն ու սպանեն կամ դուք պետք է մարդկային հանճարի տված ամեն միջոցներով վեր կենաք ցավերի դեմ ու ազատվիք, առողջանաք, իհարկե, եթե էդքան արհություն ու հասկացողություն ունիք:

Են մարդիկ, որ երկար ու լուրջ զբաղվել են մեր ժողովրդով, մեր մարդով, միշտ եկել են մի ծանր եզրակացության, թե շատ չարություն կա մեր հոգում:

Եսպես են ասում նրանք և ասում են խորը ցավով, ինչ ցավով որ կարելի էր ասել, թե բարակացավի բացիլներ կան իմ կրծքում:

Բայց քիչ են էս տեսակ ազնիվ ու քաջ մարդիկը: Մեծ մասամբ ախտի գոյությունը ընդունելով հանդերձ, իրենց առողջ են հանարում ու միշտ ուրիշներին են հօչչակում հիվանդ: Ամեն մինը ինքը չար չի, կեղծավոր չի, հայիոյող չի, ստախոս չի, թայֆայական չի, եղ ամենը իրենից դուրս ուրիշներն են:

Բայց, իհարկե, սրանց չպետք է հավատալ, ոչ էլ ականջ դնել: ճշմարիտը են է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով:

Նայեցեք:

Գյուղացի ռանչպար մարդիկ են, հարևան, միասին մեծացած, իրար հետ օխտը բեռը աղ ու հաց կերած, բայց եթե մեկի արտը լավ է գալի կամ անասունը բազմանում, մյուսը նախանձից հիվանդանում կամ ինչպես իրենք են ասում՝ «արնով է ընկնում»:

Վաճառականներ են, առևտուր են անում, թեկուզ մրցակիցներ էլ չեն, բայց մեկը մյուսի հաջողությունը լսելիս քունը կորցնում է ու էնքան էլ իր գործի վրա չի մտածում, որքան նրա հաջողության վրա է դարդ անում, ու, տեղն ընկած տեղը ոչինչ չի խնայիլ նրա գործին վճասելու:

Յոզենորական է, ինչքան վարձ ու պատիվ կուզեք տվեք - միշտ դժգոհ է, բողոքում է, գանգատվում է անարդարությունից, և գիտե՞ք էր անարդարությունը որն է, որ իր ընկերն էլ է նույնը ստանում կամ նա էլ է կարողանում ապրել:

Քաղաքացի թե գյուղացի, երկուսը վեճ ունեն իրար հետ: Ոչ մի դատաստանում չի վերջանում նրանց վեճը, տևում է երկար տարիներ և հաճախ իրենց ամբողջ կյանքն ու կայքը դնում են եղ վեճի վրա, մինչև կարողանում է մեկը մյուսին խեղդել, գետնին հավասարել կամ հենց երկուսն էլ փշանում են:

Սամուլ կա: Տասնյակ տարիներով ու անհամար դեպքերով փորձված է, էլ հայինյանք, էլ զրպարտություն, էլ ափաշկարա սուտ, էլ չարախոսություն, կեղծավորություն: Նեղ թայֆականությունը հո ոչ մի գյուղում գուցե էնքան անվայել կերպարանք չի առել, որքան սրա մեջ: Մի հայտնի հրապարակախոս պատմում էր, թե պարզ խոսում էին մեր խմբագրատանք, թե ես կամ էն գորոհն, ինչքան էլ լավ գրվածք հրատարակի, միշտ պետք է զարկել, ծաղրել կամ լռել, մի խոսքով ամեն կերպ աշխատել սպանել, միայն նրա համար, որ մեզ հետ չի, մեր թայֆիցը չի:

Երպես էլ մտեք ազգային, հասարակական, գրական գործիչների մեջ: Մեկը մյուսի հոչակն ու հաջողությունը տանել չի կարողանում:

Դիմի եկեք ուսուցիչներին տեսեք: Դասերից ավելի շատ էն աշխատանքի վրա են, որ իրար ոտի տակ փորեն, և շարունակ մի որևէ չնչին դեպք, որ կարելի էր ընկերական շրջանում հեշտ վերջացնել, ազգային հարց դարձրած, տարիներով ճգնում են պաշտոնական ճանապարհով, դատարանով ու մամուլի էջերում մեկը մյուսին անվանարկել, հալածել ասպարեզից ու սպանել բարոյապես... ոչ մի մեղմություն, ոչ մի ներողանմտություն, ոչ մի սահման չարությանը:

Ինչո՞ւ է էսպես:

Պարզ հասկանալու համար, երևույթի վրա պետք է նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից, էն լայն, խաղաղ ու խոր հայացքով, որ նրանք միայն կարող են տալ: Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարիկուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ: Իսկ ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում ու փչանում: Եսպես է բնության օրենքը:

Են հասարակ վարունգի թուփն ինչ է. հայտնի է, որ եթե նա էլ ոտի տակ է ընկնում, ել նրա պտուղը չի ուտվում, էնքան է դառնանում: Նրա համար էլ ձեզ թույլ չեն տալ, որ նրա թուփը ոտի տակով անեք: Եսպես դառնանում ու դաժանանում է և մարդը, նրա հոգին, սիրտը, միտքը, ու ներքին դառնությունը դուրս է տալի, հայտնվում է և աչքերում, և դեմքին, և խոսքերում, և գործերում, ամեն տեղ, ամեն ասպարեզում, ու ամբողջ կյանքը դարձնում է դառն ու դաժան: Եվ էս տեսակ կյանքը կունենա, այդ, շատ բան, և «հառաջադիմություն», և «կուլտուրա», և «մամուլ», և «գրականություն», և «դպրոց», և «քարեգործություն», բայց էտ բոլորը ներսից ճիճվի կերած պտուղի ննան են, և տառապում են հիմնական պակասություններով, մի ընդհանուր ցավով, որի ճարդ դրսից անել չի կարելի: Եդ տեսակ կյանքը կտա և տաղանդավոր մարդիկ, սակայն նրանք էլ կլինեն դառն ու դաժան: Բայց նա չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց են, ինչը որ դարձնում է մի կյանք՝ գեղեցիկ ու հրապուրիչ, և մի ժողովուրդ՝ բանկ ու համակրելի:

Արդ՝ եթե մենք ունենք ազգային իմաստություն, հոգու արիություն և առողջ բնազդներ, անկարելի է աչքներս փակենք մեր էս ծանր հիվանդության առաջ և չզգանք, որ մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած, և դրա դեմ կրվելու, առողջանալու առաջին պայմանը են է, որ մենք և մեր սրտերում, և աշխարհի առաջ անկեղծ խոստովանենք ու ճանաչենք մեր դժբախտությունը: Ապա թե էդ փրկարար գիտակցությանը կիետևեն ինքնակատարելագործության բարձր ցանկությունն ու ազնիվ գործը: Ուրիշ ճանապարհ չկա, ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած:

## ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆ ՈՒ ՄԱՍՈՒԼԸ

Նա, ով երկար տարիներ բաժանորդ է եղել մեր թերթերին ու ընթերցող, լավ կլիներ մի նստեր ու հաշիվ տար ինքն իրեն, թե ի՞նչ է ստացել այդ թերթերից:

Էլ հեռու զգնանք, գոնե մեր կյանքից, իր շրջապատից ի՞նչ տեղեկություն ունի:

Տարիներով կարդացել է ժողովուրդ, ժողովուրդ...Ո՞վ է այդ ժողովուրդը, ի՞նչ է ուզում, ինչո՞ւ են միշտ նրա անունը տալի. արդյոք հասկացե՞լ է այդ ընթերցողը:

Տարիներով գավառից, գյուղից թղթակցություններ է կարդացել. այսինչ գյուղում սա նրան սպանեց, թունդ երաշտ է, այնպիսի խոշոր կարկուտ եկավ, որ ծերերը չեն հիշում, տերտերը տգետ է կամ քյուսվի ընտրություն կա... Տարիներից հետո արդյոք սրա ընթերցողը թեկուզ հեռավոր ծանոթություն ունի՝, թե ինչ բան է հայ գյուղը, ով է հայ գյուղացին և որն են նրա ցավերը:

Գուցե այդ թերթերը անկողմնապահ ու լուրջ զբաղվել են հայ դպրոցի խնդրով և բազմակողմանի քննության առարկա են դարձել նրա ուսումնական ու տնտեսական կյանքը և իրենց ընթերցողների համար պարզել են այդ «լուսավորության տաճարը» ներսից ու դրսից: Երբեք: Աղմուկներ, աղմուկներ այսինչ հոգաբարձուի կամ այնինչ ուսուցչի չորս կողմը, մեծ մասամբ լիբր հետին մտքերով, կուսակցական կրօվ ու անձնական վիրավորանքներով:

Կարելի է այդ թերթերը հայ ընթերցողի առջև բաց են արել հայ եկեղեցու և հայ հոգաբարձուի պատկերը, որոնց անունից խոսել են ու խոսում են շարունակ: Երբեք: Ինչ գրել են, եղել են կամ բարեկամի գովասանք կամ թշնամու բամբասանք, և մինչև այսօր էլ նրանց ընթերցողը լավ չի հասկանում, թե ինչու են նրա փեշիցը բռնել: Նա գիտի միայն հրեշներ ու հրեշտակներ, ուրիշ ոչինչ:

Սակայն գուցե թե հայ լրագրի ընթերցողը մի որևէ ճաշակավոր ու անաշար խոսք է լսել իր թատրոնի կամ իր գրականության մասին: Կրկին նույն պատասխանը՝ շատ քիչ դեպքերի բացառությամբ: Եղիր թեկուզ շատ տաղանդավոր դերասան, միևնույն է, չես ազատվելու ծաղրից ու հալածանքից,

Եթե այս կամ այն պատճառով թերթն ընկավ քեզ հետ: Գալով գրականությանը, գրողներ կան, որ ամբողջ ժողովրդի հարգանքն ու համակրանքն են վայելում, հոբելյաններ են տոնում, բայց դեռ ոչ մի մարդավարի խոսք չեն լսել այդ թերթերից: Հաճախ միայն հային հայինել են և ամեն կերպ աշխատել են խեղդել կամ բույլ չտալ, որ անունը դուրս գա հրապարակ: Շատ է տարօրինակ, շատ է զարմանալի, բայց փաստ է: Վերջապես հայի կյանքում խոշոր դեպքեր են տեղի ունեցել, աղետներ ու շարժումներ են եղել: Գուցե թե այդ մանուլը անկողմնապահ ու բազմակողմանի քննության է ենթարկել այդ երևույթները: Դարձյալ նույնը, միշտ նույնը՝ կամ օվսաննա կամ հայինյանը: Գնա ինչ կուգես դրանից հասկացիր:

Եվ մեր այն բազմությունը, որ կրթվել է այդ մանուլի վրա, զարմանալի թերեւ, մակերևութորեն դատել ու հեշտ դատապարտել է սովորել, խոսքն ընչի մասին ուզում է լինի, հայինյել, ցեխը կոխել կամ բարձրացնել, երկինք հանել, դեմն ով ուզում է լինի: Չի սիրում բնավ առարկել կամ հիմնավորել իր առարկությունները, չգիտի հարգանք տածել դեպի հակառակորդը և նեղություն չի քաշում գործի եռթյունը հասկանալ:

Խոսքս վերջացնելով ավելին ասեմ, որ այդ թերթերը հոգս չեն քաշում՝ գոնե մի տանելի լեզու ունենային, և հայոց լեզվի աղճատման ու աղավաղման ամենամեծ պատճառներից մինն էլ հենց ինքը՝ հայ թերթն է:

Եվ չի ուղղվելու հայ թերթը, մինչև չտեսնի՝ իր դեմ կանգնած է այն ընթերցողը, որ հասկանալ ու պահանջել գիտի, որ թույլ չի տալ իրեն հետ ամեն բան խոսել և ամեն ծնով խոսել:

Իսկ երբ հորիզոնի վրա կերևա այդ պատկառելի ընթերցողը – նա, հայ թերթը, ստիպված կլինի իրեն հավաքելու, «զոհաբերություն» անելու և կարգին աշխատակիցներ պահելու կամ եղածների հետ մարդավարի վարվելու, ստիպված կլինի բան տալու և տալու վայելուց կերպով: Այդ օրը կլինի վախճանը աղմկարար ու անբովանդակ հնի և սկիզբը բովանդակալի, անաչառ ու ազնիվ մի նոր հոսանքի, որ ցանկալի է այնքան և որ պետք է գա վերջապես:

# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՆՔ

Եվրոպական եւ ռուսական թերթերի էջերը մեծ մասամբ բռնված են քաղաքական հարցերով: Ինչո՞ւ որովհետև այդ ժողովուրդները ապրում են քաղաքական մեծ պայքարներով, երկիրներ ու ազգեր տիրելու և կառավարելու ծրագիրներ ունեն, առևտուրի մեծ շուկաներ ու ազդեցությունների ասպարեզներ ձեռք բերելու խնդիրներ ունեն, միլիարդներով փոխառություն անելու, դաշնակցություններ կապելու հոգսեր ունեն, խաղում են իրենց ահօելի ուժերով, աշխարհներ ու ազգեր են շարժում, և արթում, ուշի՝ ուշով հետևում են ամեն մեկը մյուսի կամ ամբողջ աշխարհի քաղաքական կյանքի ընթացքին, մանրանասն հաշվի են առնում դիմացինի այս կամ այն շարժումը, նավերի թիվն ու զորաբանակը, աշխատում են գուշակել մեկը մյուսի տեսակցությունն ու խոսակցությունն, զբաղվում են դրանով, խորհրդածություններ են առնում, և այդ պատճառով իրենց թերթերն ու հոդվածներն ել նվիրում են դրանց:

Այս ամենը շատ է պարզ ու շատ է հասկանալի: Բայց մի բան, որ շատ է անհասկանալի ու անհեթեթ, այն է, որ մեր մանուլն էլ, մենք էլ ամենայն եռանդով միշտ հետևել ենք և հայ ընթերցողների հետ զրույց ենք արել, հաշիվ ենք տեսել քաղաքական այդ բոլոր դեպքերի ու դեմքերի մասին, շարունակ առաջնորդողներ ենք նվիրել մեկի ու մյուսի քաղաքականությանը, խորհրդածություններ արել, եզրակացություններ հանել, սխալներ գտել, և, թո՛ղ զարմանալի չթվա, նույնիսկ զգուշացրել ու սպառնալիքներ արել:

Եվ այս սովորությունը, այս աղաքը այնպես է արմատացել մեր մեջ, այնպես է տիրել մեր ուղեղին, որ, շատ է հավանական, շատերի զարմանքն են հարուցանելու մեր տողերը, թե՝ հապա ի՞նչ կերպ կարող է լինել: Կասեն՝ մենք կուլտուրական ժողովուրդ ենք, մենք մանուլ ունենք, ինչպե՞ս չհետևենք լուսավոր ազգերի քաղաքական կյանքին: Բայց երբ այդ կուլտուրական ժողովուրդի մամուլի ներկայացուցչին, բարերարին

ու գյուղատնտեսին դուրս են անում հայ գյուղից, նոր են խոս-  
տովանում, թե չեն ճանաչել հայ գյուղացուն ու հայ գյուղը, մի  
խոստովանություն, որ նորերս արին «Մշակում»։ կամ թե չէ,  
այդ քաղաքակիրք բազմությունը, որ քանի-քանի անգամ  
տեսել է Եվրոպական ազգերի կուլտուրական ու քաղաքա-  
կան գործերի հաշիվը, նոր է իմանում, որ իր թեմական դպրոց-  
ներում աշխարհաբար հայերեն լեզու չկա, և հալածված է  
եղել իր գրականությունը նրանց մեջ, ինչպես վերջերս բաց-  
վեց «Յորիզոնի» էջերում։

Իսկ եթե մենք պետք է զբաղվեինք քաղաքականությամբ,  
այդ ամենից առաջ այն էր լինելու, որ մի ճշմարիտ հայացք  
լինեինք ստեղծած, մի պարզ վերաբերմունք լինեինք մշա-  
կած, դեպի այն պետությունները, որոնց ձեռքի տակ գտն-  
վում ենք։ Մի գիտակցական, մտածված վերաբերմունք, որ  
գոյություն չունի ամենակին և միշտ առաջնորդվում ենք քամու  
հոսանքներով, նախապաշարումներով ու թյուրիմացություն-  
ներով, ամեն անգամ էլ դառնությամբ հաշվելով մեր կոպիտ  
սխալներն ու կորուստները, ամեն անգամ էլ ամեն մեկս  
ետին թվով հանդիսանալով խելոք ու հեռատես, երբ եղածն  
անցել է անդառնալի։ Եվ ո՞րտեղից պետք է լինի այդ գիտակ-  
ցությունն ու մտածված վերաբերմունքը, քանի որ միանգա-  
մայն տգետ ենք մեր նույնիսկ մոտիկ անցյալին և այսօրվա  
անցած դարձածին։

Այսպես է, դժբախտաբար, Եվրոպական պետությունների  
քաղաքականության վրա խորհրդածող կուլտուրական ժողո-  
վուրդը։ Եզրակացուի աստղաբաշխի նման, որ, դիտակն աչքե-  
րին, աստղերը դիտելով, առանց իր ոտի տակի ճանապարհը  
նայելու առաջ է գնում ու գնում է ընկնում ջրհորը։

Անշուշտ, քաղաքական աշխարհից պետք է երբեմն-եր-  
բեմն տալ տեսություններ և այդ շատ է հեշտ, որովհետև  
պատրաստ գալիս է տպված, բայց առաջին ու մեծ տեղը  
պետք է բռնեն մեր աշխարհը, մեր կյանքը, այդ կյանքի հար-  
ցերն ու նրանց լուրջ, ամենակողմանի ուսումնասիրությունը,  
այն, որ դժվար է, և գուցե դրա համար էլ ամենից քիչ տեղ է ու-  
նեցել մեր մամուլի մեջ։

## Ֆյոդոր Իվանովիչ Շալյապինի կարծիքը

- Դուք խնդրում եք ասել իմ կարծիքը մամուլի մասին: Ահա-վասիկ... Քննության ժամանակ ուսուցիչը հարցրել է մի գիմ-նազիստի՝ ի՞նչ կարող է ասել Յովին Կեսարի մասին: Եվ գիմնազիստը պատասխանել է. «Միայն լավը, պարոն ուսու-ցիչ»: Ահա և ես, խոսափելով հետագա խոսակցություններից՝ «Ի՞նչ եք դուք մտածում մամուլի մասին» հարցին նույն կերպ եմ պատասխանում՝ «Միայն լավը»: Բայց ես ինձս էլ զգում եմ, որ այս սրբազն դարձած պատասխանը հարցը չի սպառում և, ինչ էլ անես, ինչ-որ բան պետք է ասես...

Մամուլ, մամուլ...

Երբեմն դա հզոր ու հրաշալի ուժ է, որ ցնցում է հազարա-վոր մարդկանց բանականությունը, գահընկեց է անում բռնա-պետերին ու փոխում է պետությունների սահմանները, ժողո-վուրդների ճակատագրերը: Այդ ուժը մի շաբաթում մարդուն դարձնում է նշանավոր և երեք օրում վայր է զցում պատվան-դանից:

Բայց երբեմն մամուլը ինձ թվում է անուշիկ մանրավաճա-ռուիի, որ ամեն առավոտ թեյասեղանի շուրջ զբաղվում է երազների մեկնությամբ՝ և նստում է այդ անուշիկ մանրավա-ճառուիին, մեկնաբանում է քննկոտ երազանքները, ու նրան թվում է, որ դա կարևոր է, պետք է ու հրաշալի է:

Պատմեն մի բնորոշ փաստ՝ ոչինչ չհավելելով ու չնվազեց-նելով: Գավառական մի թերթ մի առավոտ մատուցեց նման մի «քննկոտ երազանք»: «Շալյապինը պատրաստվում է իր հուշ-երը գրել»: Ես այդ ժամանակ հյուրախաղերի էի արտասահ-մանում, բայց եթե նույնիսկ Ռուսաստանում էլ լինեի, հերքում չէի գրելու: Յուշեր՝ թող լինեն հուշեր: Պատրաստվում եմ՝ պատրաստվում եմ: Թող այդպես լինի: Իրենք ավելին գիտեն:

Յոգուս խորքում նույնիսկ շնորհակալ էի թերթին ինձ մա-տուցված գաղափարի համար:

Մի ուրիշ թերթ սովորական վերընթերցումների ժամանակ՝ այդ «սենսացիային» հավելեց իր «ներդրումը». «Դուշերը գրվում են իտալերեն»: Երրորդ թերթը միանգամայն տրամաբանորեն կշռադատեց, որ եթե հուշերը գրվում են իտալերեն, ուրեմն իրատարակելու են իտալացիները, և ավելացրեց. «Դուշերը իրատարակելու է իտալական հայտնի «ՈՒԿորդի» իրատարակչատունը»: Չորրորդ թերթը առաջ գնաց «Տպագրվում են, տպագրվում են»: Դե եթե տպագրվում են, ուրեմն վաճառվելու են: Իսկ ի՞նչ գնով: Այդպիսի հուշերը 100 000 լիրայից պակաս չպիտի լինեն ու ավելացրեց իր կողմից. «Դուշերը վաճառվում են 100 000 լիրայով»: Դինգերորդ թերթը շատ զվարճալի իրատարակություն էր ու դիտարկեց. «Սովորական, չոր, ոչինչ չասող լուր է, ոչ մեկին չհետաքրքրող: Պետք է գունազարդել», ու ազատություն տվեց իր երևակայությանը. «Դավաստի աղբյուրներից մեզ հայտնում են, որ Շայապինի ձեռագիրը անհայտ չարագործները հեղինակից գողացել են: Աննկարագրելի է դժբախտ հեղինակի՝ Օլոֆերնի ու Բորիս Գորունովի լավագույն դերակատարի, Վիշտը»:

Եվ ահա այս վերջին լուրը նկատվեց մեծ ու ծանրակշիռ մի թերթում: Պտտեց իր ձեռքում լուրջ, ծանրակշիռ ու մեծ թերթը, ուսերը թոթվեց ու գրեց. «Ահա թե ինչի է հասցնում մեր նշանավորների ինքնագովազդը... Թերթերը հաղորդում են, որ «Ֆյոդոր Շայապինի հուշերը ինչ-որ ավագակներ հափշտակել են հեղինակից»: Ինչո՞ւ նույն այդ Շայապինը չի նշում, որ առևանգման ժամանակ եղել է արյունոտ ծեծկրտուք, որի ժամանակ ամեն կողմից մեկ տասնյակ մարդ սպանվել է: Անոթ է այդքան լավ արտիստին, որ իրեն թույլ է տալիս այդքան կոպիտ «ամերիկյան հնարանքներ»: Մի՞թե կշտացած Սորինովի քրքրված դափնեպսակը նրան թույլ չի տալիս հանգիստ քնել:

Ինձ են դատափետում:

Ու ոչ միայն ինձ, այլև Սորինովին, որ տասը տարի առաջ ոչ թարմ օմարներ էր ճաշակել ու հիվանդացել էր (ժամանակին այդ մասին հաղորդել էին նույն թերթերը):

Դեռ ոչինչ, եթե գործը այդքանով ավարտվեր: Դե, դատափետեցին՝ դատափետեցին: Ում հետ չի պատահի: Իսկ ավարտվեց նրանով, որ մոսկովյան թերթերից մեկը սկսեց «Իմ կյանքը» վերնագրով հոդվածներ տպագրել «Ֆյոդոր Շալյապին» ստորագրությամբ: Մեկ օր, երկու, երեք... Գաղափարը ակնհայտորեն կենսունակ էր...

Բայց երբ ես ընդվզեցի՝ չցանկանալով, որ ընթերցողին մոլորեցնեն, թերթը ինձ խոստացավ առերեսում այն անձի հետ, որը կիաստատի, որ ես, իրոք, գրել եմ ու գրում եմ հուշեր, որ առերեսման առաջ «գույնները գցում են նույնիսկ սախալինյան ամենափորձված հանցագործները» և իր համար շատ հետաքրքրիր է՝ կգունատվե՞մ ես:

Ի՞նչ կասեն ես մամուլի մասին:

Կա նրբանկատ, խելամիտ, արտիստի անձնական կյանքին հարգանքով վերաբերվող մամուլ, բայց կա և այնպիսին, որ կմոտենա քեզ, ոտքից գլուխ կշափի ու մտահոգ կասի.

-Յըմ... Երգում ես, հա՞... Հազարներով հոնորարներ ես շորթում: Դե առ քեզ, որ ել չերգես...

Չգիտեմ, գուցե դա ճաշակի հիվանդագին այլասերում է, բայց ինձ ավելի գրավում է առաջին տեսակը: Եվ այդ լուրջ մամուլին ես դիմում եմ լուրջ խնդրանքով.

-Մի մեղադրեք ինձ, որ ավազակները գողացել են իմ հուշերի ձեռագիրը, նախ պարզեք, հետո մեղադրեք ինձ այս կամ այն թատրոնի տնօրենի հետ վեծի համար, և ինձ հապճեա բոյկոտ մի հայտարարեք այն պատճառով, որ ես իմ լավագույն ընկերոջ հեծանիվն եմ գողացել, քաղաքի բանուկ փողոցում պարել եմ ու հետո կրակ եմ տվել խեղճ այրու տնակը... Հնարավոր է, որ շատ բան չափազանցված է...

Հավարտ կասեմ՝ բոլորը, ովքեր երբեւ լսել են ինձ, ում ես որևէ բավականություն եմ պատճառել իմ երգով, և, վերջապես, բոլորը. որ գրել են իմ մասին ու կարդացել են իմ մասին՝ հասկացեք իմ տարօրինակ, արտառոց, զվարճալի վիճակը թեկուզ այսպիսի կենցաղային, սովորական իրավիճակուն.

Մտա ռեստորան՝ ընթելու: Նստեցի: Նստած եմ, ինձ ճանաչեցին: ճոճվելով ինձ է մոտենում մեկը ու հենվում է սեղանին.

-Պարրոն Շ...յապին: Այո՞ւ: Ֆյոդոր Իվանովի՞չ: Շատ ուրախ եմ: Սիրում եմ քեզ, գրողի տարած, խոնարհվում եմ: Խոնարհվում եմ: Յամբուրիր ինձ: Յա՞... Դե... Յամբ... րիր... Ինչո՞ւ չես ուզում: Մեծամտացե՞լ ես, հա՞: Որովհետև դու Ֆյոդոր Շայապինն ես, իսկ ես միայն Նիկիֆոր Շուպակովը: Քեզ հետ եմ է...

Եվ ահա նա խոնավ ծեռքերով ծզվում է դեպի ինձ, ջանալով ճարպկորեն բռնել իմ գլուխը ու շուրթերիս դրոշմել իր համբույրը:

Ու եթե ես համբերությունից դուրս եկած նրան իրեմ, գիտե՞ք, թե ինչ կասեն իմ մասին:

«Յանրահայտ բաս ու ծեծկոտուքի առավել հանրահայտ սիրահար Ֆ. Շայապինի երկրպագուներից մեկը մոտեցավ նրան՝ արտահայտելու իր հարգանքը նրա տաղանդի նկատմամբ: Յոգու անկեղծ պոռթկումին ի պատասխան Շայապինը ծեծեց նրան: Ծեծեց նրան, ով ուզում էր ողջագուրվել: Ահա ինչպիսին են նրանք՝ ռուսական բեմի քուրմերը»:

«Синий журнал», 1912, № 50

## **ԴՐԱԽՏ ՏԱՆՈՂ ՍԱՆԴՈՒՂՔԸ**

**(Բնօրինակից)**

**Սոսկվա-Բելոռուսկայա կայարանի գրադարան  
(1-ին Մեշչանսկայա փողոց) տանող սանդուղքները  
ամբողջությամբ սառցակալել են: Լիակատար խավար է,  
բանվորները ընկնում են ու ջարդուխուրդ լինում:  
**Բանքութեակից****

Բանվոր Կոսինը հաջող ընկավ: Դողոդոցով երկրորդ հարկից հասավ առաջին, հարթակում գլխով շրջվեց առաջ և դուրս սղաց փողոց: Նրա ետևից հասավ գլխարկը, գլխարկի ետևից՝ և Տուստոյի հեղինակած «Պատերազմ և խաղաղություն» գիրքը: Գիրքը տեղ հասավ կրնակի վրա, թերթերը բացուխուփ անելով ու Կոսինի կողքին կանգ առավ:

- Դ՞ո, ո՞նց է,- հարցրին ներքեւում իրենց հերթին սպասողները:

- Տարատս պատռվեց,- մռայլ ու խուլ պատասխանեց Կոսինը,- լավ տարբատ էր, կինս Սուխարևկայում էր առել,- և ձեռքով շոշափեց հրաշալի աստղային պատռվածքը ազդրի վրա:

Յետո վերցրեց Տուստոյի ստեղծագործությունը, դրեց գլխարկը ու կաղալով տուն գնաց:

Երկրորդը Բալչուգովը հանդգնեց:

- Ես քո հախից կգամ, ես քեզ կհաղթահարեմ,- քի տակ հիխորտում էր նա, կրծքին սեղմելով Գոգոլի երկերի ժողովածուի միհատորյակը,- ես գուցե, 15 թվին Կարպատներ եմ բարձրացել ու ձայն չեմ հանել: Երկու անգամ էլ վիրավորվել եմ... Ուսապարկը թիկունքիս, հրացանը ձեռքիս, սապոգներով, իսկ այստեղ՝ Գոգոլի հետ... Գոգոլի հետ ու չհաղթահրենք... Ես ուզում եմ «Կոմունիզմի այբուբենը» վերցնել, ես... Վայ ձեր ի՞նչն եմ ասել (նա կորավ անթափանց խավարում)... Այ, խորը գնաք, ձեր գրադարանն էլ հետը...

Նա փորձեց շոշափելով կառչել անտեսանելի բազրիքից, բայց այն ակնթարթորեն անհետացավ: Յետո ձեռքից դուրս պրծավ Գոգոլը ու մեկ վայրկյանում հայտնվեց փողոցում:

- Օ՞խ,- ճաց Բալչուգովը, զգալով, որ սատանան իրեն կտրում է սառցակալած սանդուղքներից ու քաշ է տալիս դեպի անդունդ:

- Փըրկ..., - սկսեց նա ու չավարտեց:

Ոտքերի տակի սառցե բլրակը նրան ինչ-որ տեղ իրեց, որտեղ էլ հանդիպեց երկարե հեղյուսը: Բալչուգովը կյանքում ձախողակ էր ու հեղյուսը «հարմարվեց» ուղիղ նրա ատամնաշարին:

- ...Փը՞րկ..., - տնքաց Բալչուգովը՝ գլխիվայր ցած ընկնելով:

- ...Ե՞ք,- ավարտեց նա՝ արդեն ձյան վրա նստած:

- Դու ձյունով մաքրի,- խորհուրդ տվեցին նրան սպասողներ՝ տեսնելով, թե ինչպես է Բալչուգովը գեղեցիկ կարմիր արյան շիթեր շաղուն շուրջբռնորը:

- Ոչ թե ջունով,-պատասխանեց Բալչուգովը (նրա այտը րոպե առ րոպե ավելի էր ուռչում), այլ դագանակով պետք է խփել էշ գրադարանավարի գլխին ու ակունքի դեկավարության էլ... ու քիթումռութով... էշ շանդուղքով...

Նա ձեռքերով շոշափեց ձյունը ու հավաքեց «Տարաս Բուլբայի» էջերը: Յետո ոտքի կանգնեց ու բռնեց տան ճամփան:

- Փոխեցի գիրքը,- մոքմռաց նա՝ շիթելով այտուցված այտը,- ա ՞ թե փոխեցի...

Խավարը կուլ տվեց նրան:

- Միտյա, ի՞նչ ես ասում, չփորձե՞նք,- անվստահ հարցրեց սպասողներից մեկը, ախր ուզում եմ թերթ կարդալ...

- Թող գրողի ծոցը գնան,- պատասխանեց Միտյան,- գնանք՝ որ սրանց օ՞րն ընկնենք... մեռնե՞նք, հա՞... ես նոր եմ ամուսնացել: Կինս անմա՞րդ մնա: Տո՞ւն գնացինք:

Խավարը նրանց էլ կուլ տվեց:

## ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ

Ամոք պետք է զգա այն մարդը, ով օգտագործում է սովորական ռադիոընդունիչում կերպավորված գիտության հրաշքները՝ դրանք գնահատելով նույնքան նվազ, որքան բուսաբանական հրաշքները՝ այն որոճացող կովը:

Չմոռանանք՝ ինչպես կապի այդ հրաշալի միջոցը մարդկության սեփականությունը դարձավ: Գիտական բոլոր նվաճումների աղբյուրը Աստծո շնորհած հետաքրքրասիրությունն է անխոնց փորձարարին ու ինժեներ-գյուտարարի ստեղծարար երևակայությունը:

Յիշենք Երստեղին, ով առաջինը բացահայտեց էլեկտրական հոսանքի մագնիսական ազդեցությունը: Յիշենք Ույսին, ով առաջինն օգտագործեց այդ ազդեցությունը՝ ձայնի էլեկտրամագնիսական ծագումնաբանության մեջ, Բելլին, ով կարողացավ զգայուն հաղորդիչների միջոցով խոսափողի մենքրանի վրա ընկնող ձայնային ալիքները վերածել փոփոխական էլեկտրական հոսանքի: Յիշենք Մաքսվելին, ով մաքենատիկորեն ապացուցեց էլեկտրամագնիսական ալիքների գոյությունը, և Յերցին, ով առաջինը դրանք ստեղծեց կայծի օգնությամբ: Առանձնահատուկ հիշենք Լիբենին, որ իր Ֆլեմինգի դիոդով դարձավ էլեկտրական ալիքների անհամեմատելի դետեկտորի գյուտարարը, ինչը միաժամանակ կատարյալ պարզագույն սարք էր էլեկտրական ալիքների առաջացնան համար: Երախտագիտությամբ հիշենք անհայտ տեխնիկների բանակը, որ պարզեցնելով՝ ռադիոսարքերը դարձրեց հանրամատչելի:

Իրական ժողովողավարությունը առաջին անգամ հնարավոր դարձավ գիտնականների շնորհիվ, որ ոչ միայն թերևացրին մեր ամենօրյա աշխատանքը, այլև համընդհանուր սեփականություն դարձրին արվեստի ու գիտության նվաճումները, որոնցով հիանալը մինչև վերջերս միայն ընտրյալների

մենաշնորհն էր: Այդպիսով գիտնականները ամբողջ ազգեր արթնացրին մեռյալ ձանձրույթից:

Ուղիղիեռարձակումը իր տեսակի մեջ եզակի գործառնություն է իրականացնում. նպաստում է ազգերի մերձեցմանը: Այն կարելի է օգտագործել բարեկամության զգացումը ամրապնդելու համար, որ այդքան արագ փոխարկվում է անվտահության ու թշնամանքի: Մինչ այժմ մարդիկ միմյանց մասին տեղեկանում էին միայն մանուկի ծուռ հայելու միջոցով: Ուղիղն եթեր է բերում կենդանի մարդկանց և ներկայացնում նրանց հիմնականում լավագույն կողմերով:

## ՕՐԱԳՐԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

14. III. 1934

Մահվան մեջ միշտ կա ինչ-որ խայտառակ, ստորացուցիչ, ամոքալի բան: Գոնե այսպիսի տպավորություն է միշտ թողել իմ վրա ինձ անձամբ ծանոթ մարդկանց մահը: Երբ տեսել եմ ինձ ծանոթ մարդկանց դագաղում՝ միշտ այս է եղել իմ առաջին զգացմունքը: Կարծես մեռնողը մի ինչ-որ ծայր աստիճանի ամներելի, քստմնելի, կեղտոտ հանցանք է կատարել – թե մեր, այսինքն կենդանի մնացողների, թե, մանավանդ, իր հանդեպ: Թե ինչից է առաջ գալիս այս տպավորությունը – չգիտեմ: Երևի կյանքի հանդեպ ամենամեծ հանցանքը նրա բացասումն է, հերքումը: Տարօրինակն այն է, որ քո ողջ գիտակցությամբ զգում ես, որ ամենից քիչ այդ բանում մեղավոր է մահացողը, բայց և արդեն ամենից շատ նրա դեմ ես դառնանում և ... լցվիւմ քստմնելի վախով ու զգվանքով: Այդ զգացմունքը մի փոքր նման է այն արգահատելի զգվանքի ու արհամարհանքի զգացմունքին, որ մարդու մեջ առաջացնում է թղթախաղում անաջողակ մարդը. տարվում է, տարվում է վերջին ունեցածը, պարզապես թուղթը չի գալիս,- և, փոխանակ խղճալու, - արհամարհանք ես զգում և զգվանք դեպի նա...- կենդանի, առողջ, նորմալ մարդը արհասարակ չի սիրում դժբախտությունն ու անաջողակցությունը: Իսկ ինչ է մահը - եթե ոչ ամենածանր, ամենամեծ «տանուլ տալը», անաջողությունը:- Եվ այս չէ՝ պատճառը, որ առողջ, լիարյուն ազգերը չեն սիրում հայերին, որ հաճարեղ տանուլ տվող դժբախտներ և անաջողներ են, քստմնելի լինելու աստիճան թշվառ ու անաջողակ... Եվ ի՞նչ մոլորություն, որ իբր թշվառությունը վեհ է և ազնիվ... Արգահատելի է թշվառությունը, ինչպես մահը - և ուրիշ ոչինչ...

### 15. III. 1935

... Իսկ ռուսական գրական ապողոնյան հանճա՞րը... Նա իր լավագույն արտահայտությունը գտել է հանձին Ա. Պուշկինի - և... մնացել է... մենակ... Եվ սա էլ է չափազանց հետաքրքիր, որ ռուսական կուլտուրայի մեջ դրական ապողոնյան հանճարի ներկայացուցիչը սերում է... Աֆրիկայից: ... Եվ մինչև այս չունի ոչ մի շարունակող ու հետևող (իր) լուսավոր գժին... Պուշկինը - ռուսական կուլտուրայի միակ դրական, (շինարար) սկզբունքն է - և մնացել է մենակ... Բոլորը նրան երկրպագում են, բայց ոչ ոք նրան չի հետևում...

### 18. III.

Լենինը հիանալի, հանճարեղ կերպով գլխի է ընկել, որ մարդկության գլխին թափվող չարիքների ամենամեծ աղբյուրներից մեկն էլ «գաղտնի դիպլոմատիան» է և այդ պատճառով իր մեծագույն հեղափոխությունն սկսեց այդ դիպլոմատիայի գաղտնի վավերաթղթերի հրապարակումով: Բայց բանն այն է, որ քանի դեռ աշխարհիս երեսին գոյություն ունի պետությունը - դիպլոմատիան, ինչպես ընդհանրապես քաղաքականությունը, լինելու է գաղտնի և միշտ «մաքուր քաղաքականությամբ» գրավող (այսինքն՝ որոնց պրոֆեսիան է քաղաքականությունը) մարդիկ, իրենց պրոֆեսիայի, իրենց գործի բնույթի բերումով, լինելու են մնացած մարդկությունից չինական պարիսպներով ծածկված մի կաստա, որոնք ապրում են մի տեսակ կրկնակի կյանքով: Եվ ինձ վրա միշտ մի տեսակ միստիկական տպավորություն են թողնում այդ մարդիկ, նայում են՝ մարդ է, ինչպես և դու, սակայն զգում ես յուրաքանչյուր վայրկյան, որ նա բացի բոլորին հայտնի իր կյանքից ապրում է և մի այլ, բոլորովին թաքուն կյանքով, գիտե բազմաթիվ բաներ, որ դու, հասարակ մահկանացուդ, երբեք չես իմանա, և, որ ամենաճնշիչն է - իրավունք չունես իմանալու... Դուրս է գալիս այսպիսի մի դրություն, իրենց քո կողքին, քեզ հետ կողք-կողքի, ապրում է մարդկային մի ամբողջ շերտ, քեզ նման մարդիկ, մի ամբողջ խավ, որ գրավում է ինչ-որ բոլորից թաքուն գաղտնի կյանքով, գործ ունի յուրա-

քանչյուր օր այսպիսի դեպքերի ու փաստերի հետ, որոնք մնացած մարդկության համար մի տեսակ «փակ աշխարհ» են - և այդ ամբողջը հանուն այդ միևնույն մահկանացուների շահերի լավագույն հետապնդման... Միտքս սխալ ընթանալուց խուսափելու համար ես պետք է ասեմ, որ ի նկատի ունեմ այսպես կոչված «քաղաքական մարդկանց» գործունեության առօրյա, գործնական բովանդակությունը, ընթացիկ քաղաքական գործունեությունը, այդ գործունեության կոնկրետ պարունակությունը (ընթացիկ բանակցություններ, պետական ընթացիկ հարցերի քննարկում, կառավարական փոփոխություններ և այլն) - այսինքն «քաղ.մարդկանց» գործունեության այն կողմը, որը բոլոր (ժամանակներում) և բոլոր սիստեմներում ընթանում է մնացած մարդկությունից գաղտնի, - և ոչ թե այդ մարդկանց գործունեության ընդհանուր իդեական բովանդակությունը, որ, իհարկե, երբեք էլ գաղտնի չէ և չի էլ կարող լինել: Եվ ահավասիկ այն հանգամանքը, - այսինքն այն, որ մարդկային հասարակության մեջ մի շարք մարդիկ իրենց գործի բնույթով հարկադրված են ամբողջ ժամանակ ապրել մնացած մարդկությունից թաքուն, նրանց տեսողությունից ծածկված ինչ-որ երկրորդ կյանքով, - այս հանգամանքը բնականորեն մշակում է այդ մարդկանց մեջ մի հոգեբանություն, որ հատուկ է «ընտրյալներին»: - Քաղ. գործունեությամբ զբաղվող մարդը բնականորեն պետք է որ իրեն բարձր զգա իր շրջապատից, իրեն շրջապատող «հասարակ մահկանացուներից», որոնք ոչ միայն ոչ մի տեղեկություն չունեն այս «ընտրյալների» նեղ շրջանակում կատարվող դեպքերից, առօրյա անցուղարձից, այլև իրավունք էլ չունեն ունենալու, և ինքն էլ իրավունք չունի ասելու: - Մրա վրա ավելացնենք և այն, որ այդ «ընտրյալների» գործունեությունը ոչ թե սովորական մարդկային գործունեություն է, որ կարող է վերաբերել միայն իրենց՝ այդ գործունեությամբ զբաղվող մարդկանց, այլ մի գործունեություն, որ ամբողջովին վերաբերում է ուրիշներին, անմիջականորեն վերաբերում է նրանց կյանքին և ճակատագրին, - և պատկերը ավելի ահօելի կդառնա: - Եվ քանի դեռ չի վերացել այս, այսինքն քանի դեռ մարդկային հասա-

րակության մեջ այդ հասարակության մի չափազանց չնչին մասը պաշտոնապես ապրում է նույն հասարակության վիթխարի մեծամասնությունից գաղտնի գործունեությամբ, և այն էլ մի այնպիսի գործունեությամբ, որից կախված է այդ մեծամասնության կյանքը իր բոլոր առօրյա մանրամասնություններով,- քանի դեռ մարդկային հասարակության մեջ սա կմա այսպես - ավելորդ է երազել անգամ, որ քաղաքականությունը կարող է դառնալ յուրաքանչյուրի սեփականություն (խոսքը, իհարկե, վերաբերում է **միևնույն դասակարգին** պատկանող մարդկանցից յուրաքանչյուրին): Քանի դեռ այսպես է՝ միշտ էլ հասարակության մեջ կլինեն պատրիկներ և պլեբեյներ - և այն էլ այս հակադրության ամենավատքար առունով։ Քանի որ՝ եթե մարդկային քանականությունը չի ուզում հաշտվել, որ գոյություն ունեն «պատրիկներ և պլեբեյներ» սոցիալական պատճառներով (այսինքն՝ ես պատրիկ եմ, որովհետև հարուստ եմ, իսկ դու պլեբեյ ես – քանի որ **աղքատ** ես.-Մարդսից հետո մենք գիտենք ավելի քան լավ, որ այս տարբերությունը մարդկային հասարակության մեջ բնավ էլ չի (բխում) մարդկանց հոգևոր կարողություններից) - էլ ինչպես կարելի է հաշտվել, որ այդ տարբերությունը գոյություն ունենա... չգիտես թե ինչ պատճառով։ - Մի՞թե x-ը, որ զբաղվում է քաղաքականությամբ, ավելի է խելացի, ընդունակ, քան y-ը, որ զբաղվում է, ասենք, նկարչությամբ... Կարող է պատահել ճիշտ հակառակը։ - Այնինչ քաղաքականությամբ զբաղվող x-ի «երկրորդ» կյանքը ամբողջովին թաքնված է y-ից, x-ի փաստացի տեղյակությունը քաղաքական կյանքի ընթացիկ, գործնական անցուդարձից տասնյակ հազար անգամ ավելի է, քան y-ը,- և ընդհանրապես այս վերջինիս հոգևոր տեսադաշտից միանգումայն դուրս է մարդկային հասարակության տվյալ շրջանի քաղաքական կոնկրետ առօրյայի այն ամբողջ գումարը, որը կազմում է այդ x-ի ամբողջ «երկրորդ» կյանքը... Ել ո՞նց այդ x-ը, որքան էլ հոգեպես նա փոքր ու ողորմելի լինի ү-ից,- էլ ո՞նց նա իրեն չզգա և չհաճարի «ընտրյալ», իսկ յ-ին – խեղճ քաղքենի (օբյեւգալ) , որը ապրում է, շնչում, կին ու երեխա ունի, նույնիսկ գրքեր է կարդում ու գրում - այնինչ ոչ

մի տեղեկություն չունի, թե ի՞նց իր կողքին, համարյա իր «քթի տակ», ինչ է կատարվում ներկայումս մի այնպիսի կարևոր ասպարեզում, ինչպիսին է քաղաքական կյանքը...

Բայց սա ունի իր հակառակ կողմը: Եթե մի կողմ թողնենք քաղաքական հանճարներին և վերցնենք այդ «կաստային» պատկանող միջին, միջակ անհատներին, կտեսնենք, որ համարյա միշտ այս վերջիններս իրենց հոգեսոր ունակություններով պատկանում են «մտածող մարդու» տիպի քավական ողորմելի տեսակին: Զրկեցեք այդ «կաստային» միջակ ներկայացուցին դիրքից ու պաշտոնից և կտեսնեք, որ ձեր առաջ կանգնած է մի սովորական, հաճախ ավելի քան սահմանափակ հոգեսոր ունակությունների տեր անձնավորություն: Եվ այս չէ՝ պատճառը, որ այնքան շուտ են «խունանում» քաղաքական ասպարեզը այս կամ այն պատճառով կորցրած մարդիկ, հաճախ նույնիսկ այնպիսինները, որոնք թվում էին հոգու և մտքի շտեմարան: - Եվ ես չգիտեմ կյանքում ավելի խղճալի և տիսուր պատկեր, քան քաղաքական «նախկին գործիչն» է. մի՞թե այդպես է ստեղծագործությունից հրաժարված գրողը, նկարիչը, մտածողը...

Բայց սրան կասեն ...ք...սրտի մխիթարանք – մեզ, հասարակ նահկանացուներիս համար...



Որքան դժվար է գրավոր կերպով արտահայտել այն ամենը, ինչ որ մտածում ես և մտածելիս քեզ թվում է, թե պարզ, թե հասկանալի: Գրելուց հետո ես կարողացի այս վերջին հատվածը և տեսա, որ չեմ կարողացել արտահայտել բուն միտքս «քաղ. մարդկանց» և «սովորական նահկանացուների» միջև եղած տարբերության մասին: Այս խնդիրն ինձ շատ է զբաղեցրել, բազմիցս ես մտածել եմ, թե ինչն է, որ որոշ նարդկանց հարմարացնում է քաղ. կյանքի, իսկ մյուսներին – ոչ: Բացի այս՝ բազմաթիվ այլ հարցեր, կապված այս խնդիրի հետ: Այս ամենի մասին հարկավոր է լավ մտածել և աշխատել ճշգրիտ կերպով գրի առնել այդ մտքերը, - մի քան, որ շատ ավելի է դժվար, քան ոտանավոր գրելը...

## ԼՐԱԳՐՈՂ ՕՇԵՅՆԻԿՈՎԸ

Ուշ գիշերին լրագրող Օշեյնիկովը նստել էր գրասեղանի առջև ու գեղարվեստական ակնարկ էր գրում:

Այստեղ, իհարկե, հարմար է ընթերցողին ուրախացնել արտակարգ հաղորդագրությամբ առ այն, որ լամպի փափուկ լույսը զարմանահրաշ ստվերներ էր գցում լրագրողի դեմքին, որ տանը խաղաղ էր, և միայն հատակի տախտակներն էին ճոճում, ինչ-որ տեղ (հեռու-հեռվում) կենտահաչ էր տալիս մի շուն:

Բայց ում են պետք բոլոր այս գրական մանրամասները: Ժամանակակիցները, միևնույն է, չեն գնահատի, սերունդներն էլ՝ կնօպվեն:

Ուստի՝ համառոտ կլինենք:

Օշեյնիկովին բաժին ընկած թեման այնքան էլ հետաքրքիր չէր՝ պետք էր գրել ինչ-որ հորելյանական նիստի մասին: Այդ նյութի շուրջ ծավալվելու տեղ այնքան էլ չկար: Բայց Օշեյնիկովը ոչ ընկճված էր, ոչ էլ իրեն կորցրել էր:

«Ոչինչ,- մտածում էր նա,- թեկուզ միայն մերկ տեխնիկավով կհաղթահարեմ: Ես, փառք Աստծո, շնացել եմ ակնարկի վրա»:

Առաջին տողերը Օշեյնիկովը գրեց առանց մտածելու: Օգնեց «մերկ տեխնիկան» և խմբագրի ճաշակի ինացությունը:

«Քաղաքային դրամատիկ թատրոնի ընդարձակ դահլիճը, իր երկու հարյուր հիսուն տեղով, եռում էր գլուխների ծովից: Դասարակայնության ներկայացուցիչները դուրս էին հորդում ամֆիթատրոնից ու պարտերից՝ բերկրալից գվացոցի ալիքներով լցնելով մեր վիթխարի թատերական գետեղարանը»:

Օշեյնիկովը կնօշից թեյ խնդրեց և շարունակեց գրել.

«Բայց ահա գլուխների ծովը լռում է: Եստրադայում հայտնվում է բոլոր հավաքվածներին ծանոթ հզոր, ասես ինչ-

որ ժայռից կոփված, Անտոն Նիկոլաևիչ Գուսիլինի կերպարանքը: Դահլիճը ծփում է հանց անթիվ ծափողջունների օվկիանոս»:

Եվս մի տասնյակ նման տողեր հեշտությամբ դուրս լողացին լրագրողի գրչից: Յետո դժվարացավ, որովհետև պետք էր նեկարագրել նոր կերպար՝ գործկոմի նախագահ ընկեր Զիխանին:

Կերպարը նոր էր, իսկ արտահայտությունները՝ միայն իին: Բայց այստեղ էլ Օշեյնիկովը ելքը գտավ:

«Յորելյանական ժողովի սեղանի ետևում եռանդուն քայլվածքով հայտնվեց ընկեր Զիխանի դեմքը: Դահլիճը պայթուն է անդուլ ծափերի թնդացող մակընթացությունից: Բայց ահա ներկաների տարուբերվող ծովը, փրփրելով ու ալիքավորվելով բուռն իրձվանքից, մտնում է կենտրոնացած ուշադրության ափ»:

Օշեյնիկովը սկսեց մտահոգվել:

«Մտնելը մտնում է, իսկ հետո՝»:

Նա վեր կացավ սեղանի մոտից ու սկսեց նյարդային մանգալ սենյակում: Դա երբեմն օգնում է, որոշ իմաստով փոխարինում է ոգեշնչումին:

«Այսպես, այսպես,- մտածում էր նա,- եդ Զիխանին ես վատ չնկարագրեցի: Գուսիլինի կերպարանքն էլ բավականին տպավորիչ դուրս եկավ: Բայց զուտ գեղարվեստական մանրամասների պակաս է զգացվում»:

Օշեյնիկովի մտքերը կարծես շփոթվում էին:

«Սատանան գիտի՝ ինչ է,- մտածում էր նա,- երկրորդ տարին է բնակարան են խոստանում նոր շենքում ու չեն տալիս: Իյուշկա Կաչուրինին տվեցին, եդ ավագակ Ֆիալկինին տվեցին, իսկ ինձ...»:

Հանկարծ Օշեյնիկովի դեմքը լուսավորվեց մանկական քննուշ ժպիտով: Նա մոտեցավ սեղանին ու արագ գրեց.

«Ժողովի նախագահի աջ բազուկի կողմուն հայտնվեց վստահ, հաստատուն, լավ սափրված կերպարը բնակրածնի մեր հոգատար նախագահ ընկեր Ֆ.Զ.Գրուդաստիի: Նորից փոթորկվեց ծափահարությունների աղմուկը»:

-Ախ, եթե երկու սենյակ տա,-կրքոտ շշնջաց գեղարվեստական ակնարկի հեղինակը:- Բա որ հանկարծ չտա՞՛: Չէ, կտա: Յիմա պետք է որ տա:

Հոգեւկան լիակատար հանգստության համար նա, այնուամենայնիվ, «ծափահարությունների աղմուկը» բառերի փոխարեն գրեց «ծափողջունների դդրդոցը» և շռայլորեն ավելացրեց.

«Ընկեր Գրուդաստին նշանավոր տնտեսվարի հանգիստ հայացքով նայեց առաջին շարքերի տագնապով լռած դեմքերին, որ, կարծես թե, արտահայտում էին բոլորի կարծիքը. «Դե մեր ընկեր Գրուդաստին իր գործը գիտի, նա Վստահ մինչև վերջ կիասցնի շինարարությունը և արդարացի կրաշխի բնակարանները արժանավորների միջև»:

Օշեյնիկովը կարդաց գործը: Ակնարկը վատը չէր, բայց գեղարվեստական մանրամասները դեռ քչություն էին անուն:

Եվ նա խորասուզվեց ստեղծագործական դատողությունների մեջ: Շուտով ամառը կգա, արևը կփայլատակի, ճնճղուկները կծլվլան, խոտերը կխչխչան... Ախ, բնություն, հավերժ պատանի բնություն... Պառկած ես սեփական ճոճանակի մեջ, սեփական ամառանոցում...

Օշեյնիկովը անուրջներից սրափվեց:

«Էխ, ես էլ ամառանոց ունենայի», -մտածեց նա՝ աչքերը կլոցելով:

Տեղնուտեղը լրագրողի գրչից դուրս հորդեցին ոգեշնչված նոր տողեր.

«Նախագահության անդամների խմբից առանձնանուն էր խելացի, կարծես թե գարնանային արևով լուսավորված, աշխատունակ կիսադեմը ամառանոցային ենթաքաժնի դեկավար ընկեր Կուլիկովի, այդ անխոնջ գործչի, որ կռուն է մեր ամառային, առողջ, կուլտուրական, առույգ, ուրախ, ցնծագին հանգիստը: Ակամա մտածում ես, որ ամառանոցային գործը հուսալի ծեռքերում է»:

Գեղարվեստական ստեղծագործության տառապանքները ակոսեցին Օշեյնիկովի ճակատը խոր կնճիռներով:

Սենյակ մտավ կինը:

- Գիտես,-ասաց նա,-ինձ մեր Միշան անհանգստացնում է:
- Իսկ ինչ է եղել որ:

- Դե ինչ պիտի լինի՝ անբավարարներ է բերում դպրոցից:  
Յանկարծ երկրորդ տարին չթողնեն նույն դասարանում:

- Սպասի, սպասի,- անսպասելի ասաց լրագրողը:-Դա շատ կարևոր գեղարվեստական մանրամասն է: Յիմա, իհմա:

Եվ ակնարկում նոր պարբերություն հայտնվեց:

«Այս ու այնտեղ գլուխների ծովում առկայժում է ժողովրդական կրթության բաժնի վարիչ ընկեր Կալաչևսկու արտահայտիչ և ակամա հարգանք ներշնչող դեմքը: Մտովի միացնում ես նրա կերպարանքը մանկական դեմքերի ծովի հետ, որ այդքան ազահորեն մղվում են դեպի մշակույթը, գիտելիքը, լույսը, դեպի ինչ-որ նորը»:

-Տեսնում ես, դու նստում ես,-ասաց կինը,- գիշերները աշխատում ես, իսկ այդ անբան Ֆիալկինը ձրի նավախցիկ ստացավ շոգենավում:

- Չի կարող պատահել:

- Ինչո՞ւ չի կարող: Կինն ինձ ասաց: Մի երկու օրից գնում են: Յիանալի ճամփորդություն է: Մի շաբաթ՝ այնտեղ, մի շաբաթ՝ ետ: Կարծեմ՝ նրանց նաև կերակրելու են պետության հաշվին:

- Տեսար դրամ՝ շան մեկը,- ասաց Օշեյնիկովը՝ գունատվելով:- Եդ ե՞րբ հասցրեց: Դե լավ, մի խանգարիր ինձ քո դատարկարանությամբ:

Բայց ձեռքն արդեն ինքն իրեն գրում էր տաք ու արևոտ տողերը.

«Իսկ ահա բոլոր աշխատավորներին մարզի սիրելի դեկավարների թիկունքների ետևից երևում է գետային պետնավագնացության պետ Կայուտկինի առնական և խորապես համակրելի դեմքը, որ ցույց է տալիս անվերջ օրինակներ հարվածային, իսկապես ջրային աշխատանքի»:

- Ես վերջերս ինչ-որ անընդհատ գոտկատեղս ցավում է,- շարունակում էր կինը,- լավ կլիներ փոշիներ ճարեի, բայց իհմա դրանցից ոչ մի տեղ չկա:

- Ցավու՞ն է,-արձագանքեց ակնարկագիրը,-իհնա քո փոշ-իները քեզ դուրս կգրենք:

Օշեյնիկովը սրբեց քրտինքը և ստեղծագործական ուժերի տեղատվության զգացողությամբ շարունակեց գրել.

«Յանդիսատեսի ամբոխի մեջ փայլատակում է առողջապահության բաժնի մեր սիրելի վարիչի ամբողջ քաղաքում հանրահայտ պենսնեն...»:

Առավոտյան կողմ ակնարկն արդեն պատրաստ էր: Այնտեղ հիշատակված էին բոլորը՝ և թատրոնի տնօրենը, և «Գողիաթ» կինոթատրոնի տնօրենը, և ոստիկանության պետը, և նույնիսկ հրշեց բաժնի պետը («...ում խիզախությամբ լի հայացքը...»): Նրա նասին ակնարկագիրը նշել էր համենայն դեպս՝ եթե մեկ էլ ու հրդեհ լիներ:

- Առավել լավ կհանգնի,-գորովանքով մտածում էր նա,- ավելի եռանդուն, քան մյուսներինը:

Իր գեղարվեստական ստեղծագործության մեջ նա չէր անդրադարձել միայն հորելքարին:

- Ո՞նց առանց հորելքարի,-զարմացավ կինը:- Այսր քառասուն տարի անթերի աշխատել է Բուսաբանական այգում:

- Իսկ ինձ ի՞նչ հորելքարը,-նյարդայնացած ասաց Օշեյնիկովը:-ինձ ի՞նչ Բուսաբանական այգին: Այ եթե պտղատու այգի լիներ, այն ժամանակ՝ ուրիշ...

Եվ նա կնոջը նայեց հանգիստ, լուսավոր ու ոչնչացնող հայցքով:

## ՄԱԵՍՏՐՈՆ ՀԱՐՑԵՐ Է ՏԱԼԻՒ

(Նամակ ալեկոծ ծովից)

Տարիուկես առաջ Քի Վեստի իմ տան առաջ հայտնվեց մի երիտասարդ և հայտարարեց, որ այստեղ է հասել Մինեսոտայից, պատահական մեքենաներով, որպեսզի ձեր թղթակցին մի քանի հարցեր տա գրել սովորելու մասին: Այդ օրը վերադառնալով Կուբայից և պատրաստվելով մեկ ժամ անց կայարան ճանապարհել բարեկամներիս, իսկ մինչ այդ մի քանի ճամակներ գրել, ձեր թղթակիցը՝ միաժամանակ շոյված և վախեցած նախատեսվող հարցաքննությունից, երիտասարդին առաջարկեց հաջորդ օրը գալ: Նա բարձրահասակ էր, շատ լուրջ տեսքով, վիրեսարի ձեռքերով ու ոտքերով և կոշտ մազախրձով:

Պարզվեց, որ նա ամբողջ կյանքում երազել է գրող դառնալ: Ազարակում մեծանալով՝ նա ավարտել է դպրոցը, հետո Մինեսոտայի համալսարանը, աշխատել է թերթում, հյուսն է եղել, մշակ, լումայափոխ և, բափառելով, երկու անգամ քայլանցել է ամբողջ Ամերիկան: Նա ցանկանում էր գրող դառնալ և բավականին սյուժեներ էր կուտակել: Նա շատ վատ էր պատմում այդ սյուժեները, բայց երևում էր, որ եթե ինչպես հարկն է փորձես, տարածվելու տեղ կգտնվի: Ու այնքան լրջորեն էր վերաբերվում գրողի աշխատանքին, որ կարելի էր ենթադրել՝ այդ լրջությունը կիառթահարի բոլոր խոչընդոտները: Իր ձեռքով խրճիթ էր կառուցել Յյուսիսային Դակոտայում, ամբողջ մի տարի մենակ ապրել էր այնտեղ և անընդհատ գրել էր: Նա ինձ ոչինչ ցույց չտվեց իր գրածներից: Ասում էր, որ շատ վատն են:

Ես կարծում էի, որ նա համեստություն է անում, քանի դեռ ցույց չեր տվել մինեսոտյան թերթերից մեկում տպագրվածը: Ահավոր էր: Բայց շատ ուրիշները, մտածեցի ես, ավելի լավ չեն սկսել, իսկ այս պատանին այնքան արտառոց լուրջ է, որ

հույսեր է ներշնչում. գրողի գործին իսկապես լուրջ վերաբեր-նունքը երկու անհրաժեշտ պայմաններից մեկն է: Երկրորդը, ցավոք, տաղանդն է:

Բացի գրելը, երիտասարդն ուներ ևս մի կպչուն գաղափար: Նա անպայման ուզում էր ծովում լինել: Կարծ ասած՝ մենք նրան գիշերային պահակ վերցրինք մեր շոգենավակում: Յիմա նա քննելու տեղ ուներ և, երկու-երեք ժամվա գործից հետո, բա-վականաչափ ժամանակ՝ գրելու համար: Յագուրդ տալու հա-մար ծովում լինելու նրա կրորոտ ցանկությանը, մենք նրան խոստացանք մեզ հետ վերցնել Կուրա ուղևորվելիս:

Նա հիանալի գիշերային պահակ էր, ջանադիր աշխատում էր և շոգենավակում, և իր ձեռագրերի վրա, բայց ծովում ուղ-դակի աղետ էր՝ դանդաղաշարժ, երբ պետք էր ճարպկություն, նա կարծես երկուսի փոխարեն չորս ոտք ու ձեռք ուներ, իրեն կորցնում էր, երբ վճռականություն էր պետք, դրսնորում էր անհաղթահարելի հակում ծովային իիվանդության նկատ-մանք և գյուղացու ննան տիհաճությամբ էր լսում հրամանները: Բայց նա չէր հրաժարվում աշխատանքից, նույնիսկ ծանր և գլուխ հանում էր, եթե ոչ ոք չէր շտապեցնում:

Մենք նրան կոչում էինք «Մասստրո», որովհետև ջութակ էր նվազում, իսկ հետո այդ անունը կրճատեցինք՝ «Մայս» քող-նելով: Թարմ քամին այնքան հիմնավոր էր նրանից դուրս մնել ընկալունակության ու կողմնորոշման մնացորդները, որ ձեր թղթակիցը մի օր ստիպված էր ասել. «Մայս, դուք ակ-ներևաբար կդառնաք փայլուն գրող, որովհետև ուրիշ ոչ մի բանի պետք չեք»:

Մյուս կողմից՝ նրա շարադրանքը ամեն անգամ ավելի լավն էր դառնում: Գուցե նա իսկապես էլ գրող դառնա: Բայց ձեր թղթակիցը, որ հաճախ է անտրամադիր լինում, այլևս եր-բեք շոգենավակ չի վերցնի սկսնակ գրողին և այլևս չի համա-ձայնի ամբողջ ամառը լողալ Կուրայի կամ որևէ այլ ափերի մոտ՝ գրողական տեխնիկայի հարցուպատասխանի ուղեկցու-թյամբ: Եթե սկսնակ գրողների մեջ գտնվեն ուրիշ ցանկացող-ներ «Պիլար» - ով նավարկելու, թող կանայք լինեն, ցանկալի է՝ գեղեցիկ ու թող իրենց հետ շամպայն վերցնեն:

Չեր թղթակիցն իր գործին վերաբերվում է, ի տարբերություն ամենամսյա թղթակցությունների, բավականին լուրջ, բայց այդ մասին խոսել, բացի շատ հազվադեպ գրուցակիցների հետ, նա տաճել չի կարողանում: Յարկադրված լինելով դատողություններ անել իր գործի մասին 110 օր շարունակ, այդ ամբողջ ընթացքում զայռում էի ամեն անգամ Սահմանադրության վրա շիշ շպրտելու ցանկությունը, երբ նա բացում էր բերանն ու ասում «գրող» բառը: Չեր թղթակիցը գրավոր վերաբերադրում է այդ դատողությունների մի մասը:

Եթե դրանք ինչ-որ մեկին հետ պահեն գրելուց, ուրեմն այդպես էլ պետք էր: Եթե դրանք ինչ-որ մեկին օգնեն, ձեր թղթակիցը շատ ուրախ կլինի: Եթե դրանք ձեզ տաղտկալի թվան, ապա թերթում բավականաչափ նկարներ կան, որ ձեզ կարող են զվարճացնել:

Իբրև արդարացում՝ ձեր թղթակիցը կարող է նշել, որ եթե նա ինքը 21 տարեկանում կարդար այս դատողությունները, կմտածեր, որ դրանց գինը 50 ցենտ է:

**ՄԱՅՍ. Գրողի աշխատանքում ի՞նչ է նշանակում լավն ու վատը:**

Չեր ԹՂԹԱԿԻՑԸ. Լավ գրել նշանակում է ճշմարտացի գրել: Իսկ պատմվածքի ճշմարտացիությունը կախված է նրանից, թե հեղինակը ինչքան է ճանաչում կյանքը և ինչքան բարեխիղծ է աշխատում, որպեսզի, եթե նույնիսկ նա հնարում է, դա լինի՝ ինչպես իրական կյանքում է: Եթե նա չգիտի՝ տվյալ իրավիճակում ի՞նչ կանեն ու ի՞նչ կմտածեն մարդիկ, ապա ինչ-որ ժամանակ նրան կարող է օգնել պատահականությունը, կամ նա ընդհանրապես մասնագիտանում է հնարանքի մեջ: Բայց եթե նա շարունակի հետո էլ գրել այն, ինչ չգիտի, ապա միայն կեղծիք է ստացվելու: Իսկ մի քանի անգամ կեղծելուց հետո նա այլևս չի կարողանա ազնիվ գրել:

**ՄԱՅՍ. Իսկ երևակայությո՞ւնը:**

Չեր ԹՂԹԱԿԻՑԸ. Ոչ ոք կարգին չգիտի՝ դա ինչ է, բացի այն, որ մենք դա ձրի ենք ստանում: Գուցե դա մեզ ժառանգական փորձով է տրվում: Ազնվությունից հետո դա երկրորդ

որակն է, որ անհրաժեշտ է գրողին: Որքան մեծ է նրա փորձը, այնքան ծշմարտացի է նրա հնարածը: Իսկ եթե նա կարողանում է բավականաչափ ծշմարտացի հնարել, մարդիկ կիավատան, որ այն ամենը, ինչ նա պատմում է, իրոք տեղի է ունեցել, և նա ուղղակի իբրև ռեպորտյոր, ամեն ինչ արձանագրել է:

**ՄԱՅՍ. Բայց ինչո՞վ դա կտարբերվի ռեպորտաժից:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Եթե դա ռեպորտաժ լիներ, ոչ ոք չէր հիշի: Երբ դուք նկարագրում եք այն, ինչ այսօր է տեղի ունեցել, համաժամանակյա լինելը ընթերցողին ստիպում է կատարվածը պատկերացնել իր երևակայության մեջ: Մեկ ամսից ժամանակի տարրը կանհետանա, և ձեր փորձը կիարթվի, իսկ ընթերցողը ոչինչ չի երևակայի ու ոչինչ չի հիշի: Բայց եթե դուք ոչ թե նկարագրեք, այլ պատկերեք, դա կարելի է անել ծավալային, հաստատում, ամբողջական ու կենսական: Այդ ժամանակ դուք լավ, թե վատ, բայց ստեղծագործում եք: Դա ստեղծված է, այլ ոչ թե նկարագրված: Իսկ ծշմարտացի է պատկերելու ձեր կարողության համեմատ և այն գիտելիքի, որ դուք ներդրել եք: Դասկանալի՞ է:

**ՄԱՅՍ. Ոչ այնքան:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. (նյարդայնացած). Այդ դեպքում գրողը տանի, եկեք այլ բանից խոսենք:

**ՄԱՅՍ. (նախկին համառությամբ).** Ինձ էլի ինչ-որ բան պատմեք գրողի տեխնիկայի մասին:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ինչի՞ մասին: Մատիտով գրել, թե՝ գրամեքենայո՞վ: Դրա՞ մասին:

**ՄԱՅՍ. Այո:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ուրեմն լսեք: Սկսնակ գրողի ամբողջ հաճույքը միայն իրենն է, իսկ ընթերցողը ոչինչ չի ստանում: Այդ դեպքում կարելի է գրամեքենա օգտագործել, այդպես ավելի հեշտ է ու հաճույքն էլ մեծ է: Բայց երբ սովորում ես գրել, քո խնդիրը համարում ես ընթերցողին ամեն ինչ փոխանցելը՝ ամեն պահը, զգացումը, տեսածը, լսածը, ընկալածը: Դրա համար գրածիդ վրա պիտի շատ աշխատես: Երբ գրում ես մատիտով, երեք անգամ կարող ես տարբեր ձևերով ստուգել՝ կստանա՞ ընթերցողն այն, ինչ ցանկանում ես նրան տալ:

Առաջին անգամ ձեռագիրդ կարդալիս, հետո՝ մեքենագիր տեքստը կարդալիս, և, վերջապես, սրբագրելիս: Այնպես որ մատիտը ձեզ տալիս է լրացուցիչ մեկ երրորդ շանս տեքստի բարելավման համար: 0,333 տոկոսը օրական՝ լավ ցուցանիշ է: Եվ տեքստը ավելի երկար է ընթացիկ մնում, որը հեշտացնում է սրբագրումը:

**ՄԱՅՍ. Իսկ ինչքա՞ն պետք է գրել օրական:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ավելի լավ է կանգ առնես, երբ լավ է ստացվում ու գիտես, թե հետո ինչ է լինելու: Եթե օր առ օր այդպես վարվես վեպ գրելիս, ոչ մի անգամ չես խրվի: Ահա ամենաթանկարժեք խորհուրդը, որ այս առիթով կարող են ձեզ տալ:

**ՄԱՅՍ. Ես դա կիշեմ:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Միշտ կանգ առեք, քանի դեռ գրվում է, և հետո մի մտածեք աշխատանքի մասին ու մի անհանգստացեք, քանի դեռ հաջորդ օրը չեք վերսկսել գրելը: Այդ դեպքում դուք ենթագիտակցորեն ամբողջ օրը գրում եք: Բայց եթե ձեզ թույլ տաք մտածել ու անհանգստանալ, դուք կսպանեք այդ հնարավորությունը, և ձեր ուղեղը հոգնած կլինի՝ դեռ աշխատանքը չսկսած: Եթե վեպը սկսել եք, ապա կասկածել՝ վաղը աշխատանքը առաջ կգնա՞՝, թե՞ ոչ, նոյն է, թե խուսափես ինչ-որ անխուսափելի արարքից: Պետք է շարունակել: Եվ անհնաստ է անհանգստանալը: Վեպ գրելու համար դա պետք է հասկանալ: Վեպի ամենադժվարը՝ այն ավարտելն է:

**ՄԱՅՍ. Բայց ինչպե՞ս սովորես չանհանգստանալ:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Չնտածել աշխատանքի մասին: Չենց սկսեք մտածել, կսկսեք ձեզ կաշկանդել: Ինչ-որ ուրիշ բանի մասին մտածեք: Դա անպայման պետք է սովորել:

**ՄԱՅՍ. Իսկ արդեն գրվածից ինչքա՞նն եք կարդում՝ մինչև շարունակելը:**

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ամենից լավ կլիներ, եթե ամեն օր կարդայիք ամենասկզբից ու իրնբացս ուղղումներ անեիք ու նոր առաջ գնայիք: Երբ այնքան է գրված, որ ամեն օր չես կարդա, կարդացեք վերջին երկու-երեք գլուխը, իսկ շաբաթը մեկ անգամ լրիվ կարդացեք: Այդպես ամբողջական պատկերա-

ցում կունենաք: Եվ մի մոռացեք դադար առնել՝ քանի դեռ գրվում է: Դա կապահպանի շարժումը և թույլ չի տա զռառվ աշխատել: Այլապես դուք արագ կհամոզվեք, որ հաջորդ օրն արդեն շնչահեղձ եք լինում ու չեք կարողանա շարունակել:

ՄԱՅՍ. Իսկ եթե դուք պատմվա՞ծք եք գրում:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Միևնույն է: Ուղղակի պատմվածքը կարելի է մեկ օրում գրել:

ՄԱՅՍ. Իսկ դուք կանխավ գիտե՞ք, թե ինչ է տեղի ունենալու ձեր պատմվածքում:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Դամարյա երբեք: Ես սկսում եմ, և տեղի է ունենում այն, ինչ պետք է տեղի ունենա իրադարձությունների ընթացքից ելնելով:

ՄԱՅՍ. Դա բոլորովին էլ այն մեթոդը չէ, որ մեզ սովորեցնում են քոլեջում:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Դե դա արդեն չգիտեմ: Ես քոլեջում չեմ սովորել: Իսկ եթե ինչ-որ շանորդի ինքը կարող է գրել, ինչո՞ւ է գրել սովորեցնում ուսանողներին:

ՄԱՅՍ. Բայց դուք ինձ սովորեցնում եք:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Որովհետև խելքս շատ է: Եվ հետո՝ մենք նավի վրա ենք, ոչ թե քոլեջում:

ՄԱՅՍ. Ի՞նչ գրքեր պիտի կարդա գրողը:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Նա պիտի ամեն ինչ կարդա, որպեսզի միշտ ինանա՝ ումից պիտի առաջ անցնի:

ՄԱՅՍ. Բայց նա չի կարող ամեն ինչ կարդալ:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ես չեմ ասում, թե նա ինչ է կարող, ես ասում եմ՝ ինչ պետք է անի: Իսկ ամեն ինչ կարդալ, իհարկե, ինարավոր չէ:

ՄԱՅՍ. Բայց ինչ-որ գրքեր, այնուհանդերձ, պարտադի՞ր են:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Նա պիտի կարդա Տոլստոյի «Պատերազմն ու խաղաղությունը» և «Աննա Կարենինան», կապիտան Մարիետի «Միջնա իզին», «Ֆրենկ Մայլդմեյը» ու «Պիտեր Սիմֆիլը», Ֆլոբերի «Մադամ Բովարին» ու «Զգացմունքների դաստիարակությունը», Թոնաս Մանի «Բուդենբրուկները», Զոյսի «Դուբլինցիները», «Նկարչի պատաճության դիմանկարը» ու «Ուլիսը», Ֆիլդինգի «Թոն Զոնսը» ու «Զոգեֆ

Ենդրյուսը», Ստենդալի «Կարմիրն ու սկը» ու «Պարմի մենաստանը», Դոստոևսկու «Կարամազով Եղբայրները» ու Էլի միքանի Վեպերը, Մարկ Տվենի «Հեքլբերի Ֆիննը», Սթիվեն Ջոն- նի «Խավակը» ու «Երկնագույն հոթելը», Զորջ Մուրի «Ողջույն ու մնաս բարովը», Յետսի «Ինքնակենսագրությունը», Մոպասանի լավագույն էջերը, Կիալինգի լավագույն էջերը, Տուրգենևին՝ լրիվ, Յաղողնի «Յեռավորի ու անցյալի մասինը», հատկապես «Մադամ դե Մովը», «Պտուտակի պտույտը», «Մի տիկնոց դիմանկարը», «Ամերիկուիին»....

ՄԱՅՍ. Ես չեմ կարողանում այդքան արագ գրի առնել: Դեռ շա՞տ կա:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Մնացածներին հետո կասեմ: Մոտավորապես երեք անգամ ավելի:

ՄԱՅՍ. Ու գրողը այդ բոլորը պիտի կարդա՞:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Բոլորին, ու՝ դեռ ավելին: Այլապես նա չի իմանա, ումից առաջ անցնել:

ՄԱՅՍ. Ի՞նչ է նշանակում «առաջ անցնել»:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Լսեք՝ ինչ իմաստ ունի գրել այն մասին, ինչ արդեն գրված է, եթե ավելի լավ գրելու հույս չունես: Մեր ժամանակներում գրողը պիտի գրի կամ այն մասին, ինչ դեռ գրված չէ, կամ փորձի առաջ անցնել անցյալի գրողներից իրենց իսկ ասպարեզում: Եվ միակ միջոցը հասկանալու, թե դու ինչի ես ընդունակ, անցյալի գրողների հետ մրցակցությունն է: Կենդանի գրողների մեծ մասը ուղղակի գոյություն չունի: Նրանց փառքը ստեղծել են քննադատները, որոնց միշտ հերթական հաճար է պետք, գրող, ում ամբողջությամբ հասկանում են ու անսպաս կարող են փառաբանել: Բայց երբ այդ փքված հաճարները մեռնում են, նրանցից ոչինչ չի մնում: Լուրջ գրողի համար միակ մրցակիցը անցյալի այն գրողներն են, որոնց նա ընդունում է: Ինչպես վազորդը, որը փորձում է առաջ անցնել իր ռեկորդից, այլ ոչ թե մրցակցում է իր մրցակիցների հետ այդ վազքի ժամանակ: Այլապես երեք չես իմանա՝ ինչի ես ընդունակ:

ՄԱՅՍ. Բայց բոլոր այս հիանալի գրողների ընթերցանությունը կարող է մարդուն շփոթեցնել:

**ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. ԴԵ ԻՆՅ, ՈՒՐԵՄՆ նրան տեղն է:**

**ՄԱՅՍ. Իսկ ի՞նչն եք դուք համարում լավագույն տարրական դպրոցը գրողի համար:**

**ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ.Դժբախտ մանկությունը:**

**ՄԱՅՍ. Զեր կարծիքով՝ Թօնմաս Մանը մե՞ծ գրող է:**

**ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Նա մեծ գրող կլիներ, եթե «Բուլենբրոկ-ներից» բացի ոչինչ չգրեր:**

**ՄԱՅՍ. Իսկ ի՞նչ նախավարժանք պիտի անցնի գրողը:**

**ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ուշադիր հետևեք, թե ինչ է կատարվում շուրջբռնորդ: Եթե մենք իմանա ձկան հանդիպենք, նկատեք, թե ինչ է անելու մեզնից յուրաքանչյուրը: Եթե ձեզ ուրախացնում է այն տեսարանը, թե ինչպես է նա ջրից դուրս թռչում, փորձեք վերլուծել ու հասկանալ՝ հատկապես ի՞նչը ձեզ ուրախացրեց: Ասես՝ աղվեսը ջրից դուրս եկավ՝ ձգված, ինչպես ջութակի լար, այնպես որ նույնիսկ կաթիլներ ցայտեցին: Կամ՝ ձուկն ինչպես է ջրից դուրս ցատկում: Յիշեք բոլոր հնյունները, և ով՝ ինչ ասաց: Փորձեք հասկանալ՝ ի՞նչը հարուցեց հենց այդ զգացումները, ո՞ր գործողությունները ձեզ հատկապես հուզեցին: Յետո այդ ամենը գրեք հստակ ու պարզ, որպեսզի ընթերցողն ինքը անձամբ կարողանա տեսնել ու զգալ այն՝ ինչ տեսել ու զգացել եք դուք: Դա իինգ մատների համար նախավարժանք է:**

**ՄԱՅՍ. Դասկանում եմ:**

**ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Յետո դիտարկեք մյուս կողմից, փորձեք պատկերացնել՝ ի՞նչ է կատարվում ուրիշի գլխում: Օրինակ՝ եթե ես բղավում եմ ձեզ վրա, ջանացեք երևակայել, թե ինչ եմ ես այդ ժամանակ մտածում, այլ ոչ միայն այն, թե դուք ինչպես եք արձագանքելու: Եթե կառլոսը դատավետում է Խուանին, փորձեք լինել և մեկի, և մյուսի կողքին: Միայն թե մի մտածեք՝ ո՞վ է նրանցից ճիշտ: Իբրև մարդ՝ դուք գիտեք, թե ինչն է լավ, ինչն է վատ: Իբրև մարդ՝ դուք հստակ գիտեք՝ ով է մեղավոր, ով՝ անմեղ: Դուք հարկադրված եք որոշումներ ընդունել ու դրանք իրականացնել: Իբրև գրող՝ դուք չպետք է նրանց դատեք: Դուք պետք է նրանց հասկանաք:**

**ՄԱՅՍ. Պարզ է:**

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ուրեմն՝ լսեք: Ականջ դրեք խոսակցություններին: Մի մտածեք, թե դուք ինչ եք պատրաստվում ասել: Մարդկանց մեծամասնությունը երբեք չի լսում: Եվ չի դիտարկում: Մտնելով սենյակ ու անմիջապես դուրս գալով՝ դուք պետք է հիշեք, թե ի՞նչ եք տեսել այնտեղ, և՝ ոչ միայն դա: Եթե այդ ընթացքում ինչ-որ զգացում եք ունեցել, պիտի հստակ զգաք նաև՝ ի՞նչը հարուցեց այդ զգացումը: Վարժվեք: Քաղաքում, թատրոնի մոտ կանգնած՝ նայեք՝ ինչքան տարբեր են մարդիկ դուրս գալիս տարսիներից ու սեփական մեքենաներից: Հազարավոր միջոցներ կան սովորելու: Եվ միշտ մտածեք ուրիշների մասին:

ՄԱՅՍ. Ի՞նչ եք կարծում՝ ես կդառնա՞մ գրող:

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Դե ես ի՞նչ գիտեմ: Գուցե ձեր տաղանդը չի հերիքի: Եթե դուք չկարողանաք ուրիշների փոխարեն զգալ: Դուք նյութ ունեք լավ պատմվածքների համար, եթե կարողանաք գրել:

ՄԱՅՍ. Բայց ինչպե՞ս:

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Գրեք: Մի հինգ տարի գրեք, և եթե այդ ժամանակ հասկանաք, որ ձեզնից ոչինչ դուրս չի գա, միշտ կհասցնեք ինքնասպան լինել:

ՄԱՅՍ. Ոչ, ես ինքնասպան չեմ լինի:

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ուրեմն եկեք ինձ մոտ, ես ձեզ կսպանեմ:

ՄԱՅՍ. Շնորհակալություն:

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Չարժի, Մայս: Գուցե հիմա այլ բանի մասին խոսենք:

ՄԱՅՍ. Եվ ինչի՞ մասին:

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ինչի մասին պատահի, Մայս: Ինչի մասին ուզում եք:

ՄԱՅՍ. Լավ: Բայց...

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ոչ մի «բայց»: Վերջ: Գրելու մասին ոչ մի խոսք: Այսօր բավական է: Վերջակետ: Պանդոկը փակ է: Տերը տուն գնաց:

ՄԱՅՍ. Լավ: Բայց վաղը ես ձեզ էլի ինչ-որ բան կհարցնեմ:

ՉԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Պատկերացնում եմ՝ ինչքան հաճելի կլինի գոելը, եթե դուք հստակ իմանաք՝ ինչպես է դա արվում:

ՄԱՅՍ. Ի՞նչը նկատի ունեք:

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Ինչպե՞ս թե: Յաճելի: Թեթև: Ուրախ: Մեկ-  
երկու՝ ու պատրաստ է ծեր վարպետի գլուխգործոցը:

ՄԱՅՍ. Բայց ասեք...

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Յերիք է...

ՄԱՅՍ. Բայց վաղը...

ԶԵՐ ԹՂԹԱԿԻՑԸ. Դե լավ: Իհարկե, բայց՝ միայն թե վաղը:

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐՈՇ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին գիրքը, որ իրոք սիրեցի, Զանս Քրիստիան Անդերսենի հեքիաթների ժողովածուն էր: Դա իմ կարդացած արդեն երկրորդ գիրքն էր: Չորս ու կես տարեկանում ես այրվում էի խսկական գիրք կարդալու ցանկությունից: Զին փայտե սնդուկում, որ լեփ-լեցուն էր դեղնած կատալոգներով եւ ուղեցույցներով, ես գտա գինեգործության մասին մի գրքույկ, որ բոլորովին անհասանելի էր իմ գիտակցությանը, բայց ես ծայրից ծայր կարդացի՝ յուրաքանչյուր բառից գերվելով: Դա իմ առաջին գիրքն էր:

Մի քանի տարի անց ես ինձ համար հայտնագործեցի Ժյուլ Վեռնին. համարյա տասը տարեկան էի: «Սև Ջնդկաստանը» նրա նվազ հայտնի գրքերից էր, որը ընդհանուր առմամբ ձանձրալի է համարվում, բայց ինձ կուրացրեց իր հիասքանչությամբ ու գաղտնախորհուրդ փայլով: Եվ ես հիմա էլ իմ կարծիքն ունեմ, որովհետև այդ վեպը իմ կյանքում կարևոր դեր խաղաց: Վեպի գործողությունները ծավալվում են ստորգետնյա քարանձավներում՝ մի քանի հազար ֆուտ խորությամբ, որտեղ դարերով լուս չի թափանցել: Լիովին հնարավոր է, որ այս գրքի ֆանտաստիկ մթնոլորտը, որ դրոշմվել էր իմ հիշողության մեջ, իմ «Գիշերային թաիչքի» ակունքներուն էր, որը ևս ոչ այլ ինչ է, եթե ոչ թենայի հետազոտություն:

Ես երբեք հակված չեմ եղել դեպի վեպերը և այդքան էլ շատ չեմ կարդացել: Առաջինն ինձ գայթակղեցին Բալգակի վեպերը, հատկապես «Հայր Գորիոն»: 15 տարեկանում ես հայտնագործեցի Դոստուսկուն. դա ինձ համար խսկական հայտնություն էր, ես անմիջապես զգացի, որ հաղորդակցվել եմ ինչ-որ վիթխարի բանի, և նետվեցի կարդալու այն ամենը, ինչ նա գրել է՝ գիրք գրքի ետևից, ինչպես մինչ այդ կարդացել էի Բալգակին:

16 տարեկանում ես ինձ համար բացահայտեցի բանաստեղծներին: Բնականաբար, ես վստահ էի, որ ինքս էլ նրանց թվին եմ պատկանում, և երկու տարի շարունակ, բոլոր դեռահասների նման, տեսդագին բանաստեղծություններ էի գրում: Ես աստվածացնում էի Բողվերին, և համոթ ինձ պիտի խոստովանեմ, որ անգիր էի սովորել ամբողջությամբ Լեկոնտ դե Լիլին ու Երեդիային, ինչպես և Մալարմեին: Մալարմեից այսօր էլ չեմ հրաժարվում:

Ժամանակակից վիպասաններից առաջինը սիրեցի ժան Ժիրոնուին: Դպրոցում կարդացածս «Անտարբերների դպրոցն» ու «Պաթետիկ Սիմոնը» ինձ հմայեցին, ես կարծում էի՝ այնտեղ գտել եմ մի մարդու, որ կյանքում զբաղվում է իրոք միակ կարևոր գործով: Օրինակ «Պաթետիկ Սիմոնից» հիշում եմ, որ Սիմոնի համար կենսականորեն կարևոր էր իմանալ՝ իր մահճակալը տեղաշարժված է դեպի պատը, թե՞ ոչ: Երեխայի համար դա իրոք էլ անսովոր կարևոր հարց է՝ մոլոք դատարկությունը նրա և պատի միջև խորհրդավոր աշխարհ է, որ միայն նրան է պատկանում:

Ուղևորությունների ժամանակ ես չեմ բաժանվում մի քանի գրքերից, բայց չեմ ուզում թվարկել դրանց անունները. եթե հիմա խոստովանեմ, որ ամենուր ինձ հետ տանում եմ Պասկալի ու Շեկարտի, ժամանակակից փիլիսոփանների, մաթեմատիկոսների ու կենսաբանների աշխատությունները, դա կրվա հավակնու ու ցուցադրական: Սակայն ահա այդ գրքերը՝ ինձ հետ են, իմ սեղանին: Պատերազմում իմ հավատարին ուղեկիցներն էին Պասկալը, Ռիլկեի «Մալտե Լաուրիդս Բրիգեի դիտարկումները» և Բողվերի մաշված հատորյակը:

Ստածելով այս գրքերի մասին, որ անկասկած խոր ազդեցություն են ունեցել իմ կյանքում՝ ես հիշում եմ այն խորհրդավոր պատմությունը, որ ինձ հետ է տեղի ունեցել: Այն գրքից չի ծնվել, այլ կարդացածի մասին հիշողություններից, բառի մեխանիկական իմաստից. մանկության հիշողություններից այն մարդու, որ արտաօռց պայմաններում հայտնվել է աշխարհի ծայրին:

Մի քանի տարի առաջ իմ ինքնաթիռը աղետի ենթարկվեց Գվատեմալայում: Ես երկար ժամանակ կոմայի մեջ էի՝ առավել քան տհաճ զգացում, որովհետև անմիջապես չես վերադառնում կյանք. դանդաղորեն խելքի ես գալիս ու թվում է արտաքին աշխարհի մակերևույթ ես լողում ինչ-որ խիտ, թանձր զանգվածի միջով: Ես ֆիզիկական ու մտավոր տանջալից ջանքեր էի գործադրում, բայց չի կարողանում դուրս գալ մոռացության իշխանությունից: Դիշում եմ՝ ինչպես գիշերն արթնացա, որովհետև վրայից ցած էին սահել սավաններն ու ծածկոցները: Գվատեմալայում, ծովի մակերևույթից շատ բարձր լինելու պատճառով գիշերները հատկապես ցուրտ են: Ես ուր կոտրվածք ունեի ու ծածկոցներին հասնել չի կարող: Այդ պատճառով ձայնեցի բուժքոջն ու սկսեցի խնդրել, որ ինձ փաթաթի «աննախադեպ կտավով»՝ վստահ, որ եթե նա անհապաղ իմ խնդրանքը չկատարի, ես կմեռնեմ:

-Բայց մենք նման բան չունենք,-ասաց բուժքույրը,-մենք ոչ մի «աննախադեպ կտավ» չունենք:

Գլխումս ամեն ինչ խառնվել էր: Ես փորձում էի հիշել՝ ինչպես են սպիտակեղենը հարդարում: Ինքս ինձ մտածում էի՝ բանակում դա ես էի անում... Բայց ինչպե՞ս էի անում... Մի սավան ներքնից, մյուսը վերնից... Ոչ, երրորդ սավան չկար: Բուժքույրը ծիշտ է... Ես դժվարությամբ ու ափսոսանքով էի բաժանվում «աննախադեպ կտավի» մտքից:

Ժամանակի ընթացքում այդ դեպքը մոռացել էր: Յետո մի գեղեցիկ օր եկա Լիոն, որտեղ մի տարի ապրել էի մանուկ հասակում: Կիրակի օրերին հարազատներս ինձ պատարագի էին տանում Ֆուլվիերի տաճար, որն իշխում էր քաղաքին՝ մերձակա բլրից, ուր ճոպանութով էինք բարձրանում: Ես ցանկացա սենտիմենտալ ուղևորություն կատարել: Այնտեղ հասնելով՝ տեսա, որ տոնսերն առաջվա նման վաճառվում են թունելի ելքի մոտ՝ ավտոմատի կողքին: Ես հերթ կանգնեցի, մի քսան մարդ կար, մենք դանդաղ առաջ էինք շարժվում, պատահաբար հայացքս ընկավ ձախակողմյան պատին փակցված ազդագրերին: Նույն այն գովազդներն էին՝ քառասուն տարում ծխից թուղթն էր սկացել միայն, և տառերը կիսով

չափ ջնջվել էին: Ես մտացրիվ կարդում էի, ու հանկարծ սիրտս կծկվեց: Ահա թե ինչ: «Յավազրկող կտավ՝ աննախադեպ միջոց վերքերի ու այրվածքների համար»: Ահա այն սավանները, որ կարող են մեղմել, թեթևացնել ցավը, ահա ինչ էի հիշել Գվատեմալայի հիվանդանոցի մահճակալին պառկած: Անտարակույս իինգ տարեկանում վերքերի ու այրվածքների համար այդ աննախադեպ միջոցը խոր տպավորություն էր թողել ինձ վրա: Նույն այդ գովազդից իմ կարծիքով ծնվել է և «Մարդկանց երկիր»-ից Գիյոմին ուղղված մի արտահայտություն՝ «Նույն երեկոյան ես քեզ ինքնաթիռով հասցրի Մենդոս, որտեղ քեզ, ինչպես բուժիչ բալասան, պարուրեց սավանների ճերմակությունը»: Կախարդական սավանների մասին հիշողությունը, որ վերքեր են դարմանում... Ճին գովազդի մասին հիշողությունը Ֆուրվիերի փոքրիկ թունելի գովազդային վահանակից, որ համարյա երեսուն տարի անթեղված էր իմ գիտակցության մութ խորքերում...

«HARPER'S BAZAAR» 1941, ապրիլ

## **ՆՈԹ «OXFORD EAGLE» ԹԵՐԹՈՒՄ**

Օքսֆորդի քաղաքային գծից ներս տեղակայված բացատ-ների ինձ պատկանող տարածքում ձեռնասուն սկյուռիկներ են բազմանում: Նրանց որսն արգելված է, բայց հենց նրանց հանդիպելիս որոշ որսորդներ՝ ոչ այնքան հմուտ կրակելու մեջ, որ գնան վայրի սկյուռների որսի, իրենց անվտանգության մեջ են զգում: Այդ բացատների հարևանությամբ ին ձիերի ու կովերի արոտատեղերն են: Եթե դուք այնտեղ հասնեք ուշացումով, այլ որսորդներից հետո, բախանձագին խնդրում եմ՝ մի կրակեք ոչ առաջինների, ոչ էլ... վերջինների վրա:

# «ԱՎԵԼԻ ՀԵՌՈՒ»՝ ԷԺԵՆ ԻՌՆԵՍԿՈՅԻ ՀԵՏ

Էժեն Իրնեսկոյի մասնագիտությունը ռնգեղջյուրների որսն է՝ «սոսկալի և սահմանափակ կենդանիների», որոնք մարդուն շատ են նման: Այս հարցազրույցում նա «ավելի հեռու» գնալով՝ բացատրում է, թե ինչու են ռնգեղջյուրներն ամենուր:

Ու նաև պատասխանում է աջ ու ձախ ռնգեղջյուրներին վերաբերող հարցերին:

- Եթե ձեզ խնդրեին բացատրել ձեր իսկ թատրոնը, ինչպես կանեթիք դա:

- Ինձ միշտ պարադոքսալ է թվում՝ ինձ ասել տալ այն, ինչ ասել եմ, քանի որ ես այնպես եմ ասել, որ արդեն ամեն ինչ ասված է: Ես երբեք չեմ կարողացել ինձ ամփոփել: Բայց կարծում եմ, ինչ որ ներկայացրել կամ առաջարկել եմ, երբեք խնդրի լուծումներ ու պատասխաններ չեն եղել, եղել են միայն հարցեր:

- Չեր կարծիքով գրողը նախ և առաջ նա է, ով հարցե՞՞ր է տալիս:

- Այո, խնդիրներ է առաջադրում: Սա միակ պատգամն է, որ գրողը ըստ պատշաճի պետք է կատարի: Գրողը նա է, ով երբեմն ավելի լավ է տեսնում խնդիրները, քան ուրիշները: Ես հաճախ ասել եմ, որ գրողը ոչ իմաստուն է, ոչ սուրբ, ոչ մարգարե և ոչ էլ բժիշկ: Նրա ստեղծագործությունը հարցերի մի ճարտարապեսություն է: Արծարծված հարցերը նրանց են, բայց քանի որ յուրաքանչյուրս միևնույն ժամանակ ուրիշներ ենք՝ ուրեմն նրա հարցականները նաև ողջ մարդկության հարցականներն են: Արծարծված հարցերը նույն այդ ստեղծագործության խնդիրներն են, այն խնդիրները, որ իր իսկ ստեղծագործությունն է իրեն առաջադրում և վերջապես՝ խնդիրը Արարշության: Անկասկած նախապատվությունը տալիս են այն գրողին, որը խնդիրներ է առաջադրում, քան նրան, ով խնդրի լուծումներ է տալիս: Վերջինս ոչինչ չունի ասելու: Նա

ուրիշների խնդրի լուծումները կրկնելուց և արդեն իսկ տրված պատասխանները տալուց բացի ոչինչ չի անում:

- Պոլ Սարտրը, Բրեխտը ըստ ձեզ այն գրողնե՞րն են, ովքեր խնդրի լուծումներ են առաջադրում:

- Սարտրը վազում է պատմության ետևից: Եվ ահա թե ինչու միշտ ուշացած է հասնում: Գալով Բրեխտին և բրեխտյան հեղինակներին, նրանց մեղադրում են, որ նրանք ստեղծում են մի թատրոն, որը ոչ այլ ինչ է, քան մի գաղափարախոսության լուսաբանում: Եթե ինչ-որ մի գաղափարախոսության լուսաբանումից բացի ոչինչ չենք անում, ապա թատրոնը կրկնակի դեր է կատարում այդ գաղափարախոսության հետ: Գեղարվեստական ստեղծագործությունը նման է մի անձանոք երկրամասուն կատարվող երկրախուզության: Նախապես ստույգ չգիտենք, թե ո՞ւր ենք գնում, հետո է, որ իմանում ենք:

- Ի՞նչ եք ուզեցել արտահայտել ձեր առաջադրած հարցերով:

- Արդ՝ նրանց համար, ովքեր չեն կարդացել իմ գրքերը և ովքեր շատ են, ուզեցել եմ արտահայտել գոյության չարիքը, մարդու բաժանումը իր տրենսցենդենտալ արմատներից. արտահայտել են նաև այն, որ մարդիկ խոսելիս չգիտեն, թե ինչ են ուզում ասել, որ խոսում են ոչինչ չասելու նպատակով, և ավելին՝ որ խոսքը փոխանակ մարդկանց ավելի մերձեցնի միմյանց, հակառակ՝ մի քան էլ ավելի է իրարից բաժանում: Ուզեցել եմ արտահայտել մեր գոյության անսովոր բնույթը: Փորձել եմ պարողիայի ենթարկել թատրոնը, այսինքն՝ աշխարհը, և այն ինչ գործ եմ՝ ակնհայտորեն եղել է մասամբ պարողիա, գուցե նույնիսկ պարողիայի պարողիա:

- Դուք հեղինակն եք «Ռնգեղջյուրները» պիեսի, որը ներկայացվել է ողջ աշխարհում: Մի քաղաքի պատմություն, որտեղ մարդիկ վերածվում են ռնգեղջյուրների: Չեր ստեղծագործության մեջ հաճախ հանդիպում ենք «ռնգեղջյուր», «ռնգեղջրախտ» տերմինների, թվում է, թե ամբողջ կյանքում այս թեման զբաղեցրել է ձեր միտքը, նույնիսկ դիվահարել:

- Ռնգեղջյուրը պատրաստի գաղափարներով նտածող մարդն է: Պիեսում ես պարզապես նկարագրել եմ գաղափա-

րական վարակը: Ես այն ապրել եմ առաջին անգամ Ռումինի-այում, երբ ինտելիգենցիան կամաց-կամաց դաշնում էր նացիստական, հակասենիտական և «երկաթյագվարդիական»: Ինտելիգենցիան այն ժամանակ ծայրահեղ աջակողմյան էր, այժմ՝ ծայրահեղ ձախակողմյան:

- Ի՞նչ է «ռնգեղջյուրը» և ինչ է «ռնգեղջրախտը»:

- Ներկա «ռնգեղջրախտը» նմանվում է հնին, դրոշակներն են միայն տարբեր: Մենք այսօր ականատես ենք լինում ծայրահեղ ռնգեղջրախտի ծաղկմանը:

- Ի՞նչ եք ուզում ասել:

- Փնտրում էի սոսկալի սահմանափակ մի կենդանի, որն ուղիղ առաջ է խոյանում: Թղթատելով «Հառուսը» պատահմամբ հանդիպեցի ռնգեղջյուրի անվան ու պատկերին: Այս անունը ես պարզապես վերագտել էի, որովհետև 30-ական թթ. օգտագործել էի ին անձնական օրագրերում և բոլորովին նոռացել:

- Ինչո՞ւ եք ընտրել հատկապես ռնգեղջյուրի պատկերը:

- Զվարճալի է: Բայց ռնգեղջյուրն այն համարժեք բառը չէ, որովհետև նա մենակյաց կենդանի է: Ավելի ճիշտ պետք է օգտագործեի «ոչխար» բառը:

- Ուրեմն սխալվել եք կենդանու ընտրության հարցում:

- Այո, սխալվել եմ: Բառը ճիշտ չէր ընտրված: Ի վերջո չկան ռնգեղջյուրների հոտեր: Ոչխարն ավելի կիամընկներ, քանի որ խոսքը մի տեսակ կոլեկտիվ համաճարակի մասին է: Իրականում իմ ռնգեղջյուրները գազազող ոչխարներ են: Չեզ ծանո՞թ է Ռաբլեի այն հայտնի հատվածը, որտեղ, երբ Պանուրգը ծով է գցում մի ոչխար՝ մնացած բոլոր ոչխարները հետևում են նրան. այս է ոչխարախտը, և այս է լինում ի վերջո, երբ մարդիկ դադարում են մտածելուց և սկսում են որդեգրել պրոպագանդների լոգունգները:

1938թ., երբ նոր էի Փարիզ եկել, ծանոթացա մի ամբողջ հոգևոր ընտանիքի՝ Ենմանուել Մունյեի, Բերդյակի, Մարիտենի, Գաբրիել Մարսելի... բնագրերին: Դա ինձ օգնեց դիմադրելու ռնգեղջրախտին: Օգնեց նաև Դընիս դը Ռուժմոնի «Սատանայի բաժինը» գիրքը, որը պատմում է այն մասին, թե ինչպես

Ե մի ցույցում նյուրնբերգյան մի փողոցով Յիտլերը քայլում, ու նրա քայլերին համընթաց ժողովուրդն ավելի ու ավելի բարձր է գոչում «Յայլ Յիտլեր, հայլ Յիտլեր»: Երբ Յիտլերը մոտենում է Ռումինիա, վերջինս զգում է «Էլեկտրական հոսանքի» նման մի բան, նրա մազերը բիզ-բիզ են կանգնում և թիշ է մնում ամբոխի օրինակին հետևի: Նա չի ենթարկվում, որովհետև զգում է այն, ինչ իր բառերով կոչվում է «սրբազն սարսափ»: Սա նույնիսկ ոչ թե ինացական, այլ ողջ եռյունից բխող մի դիմադրություն է ընդդեմ կոլեկտիվ հավատակության: Այս բոլորն իհարկե իրենց կնիքը դրեցին իմ ստեղծագործության վրա: Եթե առաջներում չգիտեի, թե ինչու են դիմադրում «ռնգեղջրախտին», այսօր ավելի լավ գիտեմ:

Օրինակ, ռուսներն ինձ գրեցին, որ արդեն իսկ բարգմանում են իմ գործը, բայց նամակում ավելացրել էին, թե «այս պիեսը իր դրամատիկական փայլուն արժեքներով հանդերձ որոշ շփոթությունների տեղիք է տալիս»: Դուք հասկանո՞ւն եք, -գորում էին նրանք, - մենք ունենք մի այնպիսի հասարակություն, որին պետք է դաստիարակել, նա ստույգ պետք է իմանա, թե ովքե՞՞ր են ռնգեղջյուրները, հարկավոր է որոշ ռեալիկներ փոխել: Մենք չենք կասկածում, որ դուք առաջադեմ մարդ եք, և ռնգեղջյուրները միևնույն են ինչպես ձեզ, այնպես էլ մեզ մոտ:

Ես պատասխանեցի, որ ավելի լավ կլինի ոչինչ չփոխել պիեսից, որովհետև այն բեմադրվել է ինչպես կապիտալիստական, այնպես էլ մի շարք սոցիալիստական երկրներում, և եթե պիեսում փոփոխություններ մտցնեն, նրանք այդ կիմանան, և ես նույնքան ծիծաղելի կդառնամ, որքան դուք: Ինչսէ, պիեսը բարգմանվեց, հրատարակվեց, բայց Ռուսաստանում երբեք չբեմադրվեց: Վերջին հաշվով, պարզ է, որ իրենք ինձնից պահանջում էին միայն աջ ռնգեղջյուրներ: Բայց ռնգեղջյուրներն ամենուր են:

- Պատմությունը, ըստ ձեզ, անընդհատ ծնունդ է տալիս ռնգեղջյուրների նորանոր տարատեսակների<sup>5</sup>:

- Պատմությունը ծշմարտություն չէ, այն հատկապես մոլորություն է: Քենց այդ է պատճառը, որ այն միշտ պետք է ուղել, և յուրաքանչյուր հեղափոխությունից հետո հարկավոր

Են ռեստավրացիաներ: Ամեն մի պատմական եղելություն, ասում էր Մունիեն, մասամբ իրականություն է:

- Զեր «օրագրերում» բազմաթիվ էջեր եք հատկացնում ռեժիսորների դերին, ձեր հարաբերությունները դժվար են եղել...

- Սկզբում բավականին դժվար: Նույնիսկ ֆրանսիայում Դյուլենի կամ Ժուլեյի աշակերտները ամենատափակ ռեալիզմի գերին էին մնացել: Երբ «Աթոռները» պիեսում ուզում էի բեմում գետեղել մի հինգ տասնյակ դատարկ աթոռներ և մի համր հոետոր՝ սարսափելի արտառոց էր թվացել: Ստիպված կոչի մեջ մտա գերմանացի ռեժիսորի հետ: 1958թ. Անգլիայում Պիտեր Ջոլը ուզում էր անգլերեն բեմադրել ին «Ղասը»: Պիեսում մի դասախոս կա, որը 20 տարուց ի վեր օրական 40 աշակերտ է սպանում: Ռեժիսորն ինձ ասաց. «Ճնարավոր չէ այն, ինչ պատմում եք: Թարգմանությունը հիմարություններով լի է: Ես չեմ կարող սա բեմադրել»: Ես պատասխանեցի. «Այդ հիմարությունները թարգմանիչը չէ, որ ասել է, այլ ես ինքս»: Վերջապես նա ամեն ինչ ընդունեց, բացի օրական 40 աշակերտ սպանելուց: Նրա համար 4-ն էլ բավական էր: ԱՄՆ-ում «Ոնգեղջուրների» բեմադրիչը անհավանական էր համարում, որ գործող անձանցից մեկը՝ Բերանժեն, կարող էր այցել իր ընկերոջն առանց նախօրոք զանգահարելու: Այն, որ հարյուրավոր ռնգեղջուրներ ներխուժում էին քաղաք և մարդիկ այլակերպվում էին ռնգեղջուրների՝ բնական էր, ոչ ոքի չէր անհանգստացնում, բայց այն, որ մեկը կարող էր գնալ մեկի մոտ առանց նախօրոք զանգահարելու, անընդունելի էր:

- Սրանք ռեալիզմի խնդրի՞ն են վերաբերում:

- Ռեալիզմի թերությունն այն էր, որ մարդիկ կարծում էին, թե ռեալիզմը իրականությունն է: Այնինչ ռեալիզմը պայմանականությունների մի համակարգ է, մի դպրոց, մի ոճ. այնպես, ինչպես սիմվոլիզմը կամ ռոմանտիզմը: Իրականությունը ռեալիստական չէ, բայց այսօր թատրոնը շատ ավելի հեռու է գնացել: Նա մի կողմ է թողել ռեալիզմը: Մի ժամանակ ավանդարդիզմն էր իր ետևից տանում թատրոնին, այսօր թատրոնն է իր ետևից տանում ավանդարդիզմը:

- Ի՞նչ դեր կատարեց քննադատությունը ձեր կարիերայում:

- Ժան Պոլհանը ամենազվարժալի բանն է նկատել՝ մենք նվիրվում ենք մեր ասպարեզին ոչ այն պատճառով, որ կան լավ քննադատներ, այլ՝ վատ: Վատ քննադատները պահպանում են ստեղծագործությունները այնպես, ինչպես միրզն է պահպանվում սպիրտի մեջ: Քննադատները հազվադեպ են գրողին ինչ-որ բան սովորեցնում: Այսուհանդերձ Մոչվան Լըբեսկը ինձ շատ բան սովորեցրեց: Նա ասում էր, որ ին թատերգության մեջ հատկանշականը պրոլիֆերացման թեման է, քաղցկեղոտ պրոլիֆերացումը՝ խոսքի, մատերիայի, ֆանտազմների, դիակների, որոնք անվերջանալիորեն աճում են, սնկեր, որոնք բուսնում են, և այլն: Եվ ես նկատեցի, որ դա ճիշտ է. առանց գիտենալու խոսել էի պրոլիֆերացման մասին այնպես, ինչպես ժուրդենը խոսել էր արձակ:

- Ի՞նչ է այդ պրոլիֆերացման իմաստը:

- Դա մատերիայի գրոհն է: Այն օգացումը, որ մատերիան պրոլիֆերանում է ոգու հաշվին: Վերջին հաշվով վախենում եմ, որ կյանքը մահ դառնա: Այս սարսափից, այս վախից է գալիս իմ պրոլիֆերացման թեման:

- Մի՞շտ եք ունեցել այդ անձկությունը:

- Չիշում եմ, երբ 14 տարեկան էի, նայում էի աստղալից երկնքին և ահաբեկվում էի, վախենում էի անդունդներից և ինքս ինձ հարց էի տալիս, թե մինչև երբ կարող է այսպես շարունակվել: Այս օգացումը բոլորս էլ ունեցել ենք: Բոլորս էլ պասկալականներ ենք եղել առանց գիտենալու: Մենք անգիտանում ենք և կանգիտանանք «այս բոլորը»՝ այս աշխարհն անվերջավոր ու վերջավոր, ոչ վերջավոր, ոչ էլ անվերջավոր: Մենք չգիտենք, թե ինչ ենք և ինչ ենք անում, ուրեմն պետք է հավատալ. եթե չենք հավատում, կորած ենք:

- Տիեզերքում ի՞նչ տեղ եք տալիս մարդուն:

- Ինձ թվում է, որ նա հեգնալի մի երևոյթ է, ոչ իրեշտակ է, ոչ էլ անասուն, թվում է, թե տիեզերքում նա իր տեղը չունի: Դամենայն դեպք մենք ճգնում ենք նրան տեղադրել իր տեղում՝ պատճության ու մետաֆիզիկայի միջև: Նա պատկանուն է կամ պետք է պատկանի կիսով չափ երկնքին, կիսով չափ՝ երկրին:

- Ինչպիսի՞ն է ձեր ամենազարհուրելի պատկերացումը ապագայի մասին:

- Կլինի ոչխարների, գազազած ոչխարների մի տիեզերք: Եվ կարծում եմ, որ այդ ժամփան արդեն բռնել ենք: Մի ժամանակ, երբ գոյություն ուներ երկաթյա գվարդիան, կային այնպիսի բաներ, որոնք կարծես այսօր էլ ենք տեսնում: Հատկապես երիտասարդ դիմադրողականների, մտավորականների ոլորտում: Յեղափոխության միֆը, անտիամերիկանիզմը, անտիկոնունիզմը, երիտասարդության միֆը, անասնական եռանդը, ատելությունը բուրժուազիայի և ինդիվիդուալիզմի նկատմամբ: Նրանք այն ժամանակ այրում էին ստեղծագործությունները, կոտրում էին ցուցափեղկերը, կեղտոտում էին նկարները կամ ատում էին կուլտուրան և պահանջում կոլեկտիվիզմ: Երբեմն այն տպավորությունն ունեն, որ կրկին երկարյա գվարդիայի և նացիզմի ժամանակաշրջանն եմ ապրում:

- Ի՞նչ եք մտածում քաղաքական այն հանձնառության մասին, ինչպիսին է ժան Պոլ Սարտրինը:

- Ես Սարտրին մեղադրել եմ այն բանի համար, որ նա ժամանակին չհայտնեց Ռուսաստանում գոյություն ունեցող համակենտրոնացման ճամբարների մասին: Նա բոլոր փաստաթթերն ունեցել է և ոչինչ չի ուզեցել անել, որպեսզի բուրժուաներին հաճույք չպատճառի: Այնտեղ մարդիկ տանջվում էին, ինչո՞ւ նա ոչինչ չասաց: Սեղադրում եմ նաև այն բանի համար, որ նա այնտեղ անցած-դարձածի մասին ասաց շատ ուշ, այն ժամանակ, երբ տեղի ունեցան 68-ի մայիսյան բախումները: Կարծեմ նա մոտավորապես այսպես ասաց. «Սովետական Ռուսաստանում դիկտատուրան պրոլետարիատի դիկտատուրա չէ, այլ՝ դիկտատուրա պրոլետարիատի վրա»: Այդ բանը նա վաղուց գիտեր և սպասեց այն նպաստավոր պահին, որպեսզի կրկին պատմության հոսանքի մեջ լինի:

Նա բոլոր ժամանակների երիտասարդության հետ քարշ էր գալիս, որպեսզի միշտ գործունեության մեջ լինի: Անշահախնդիր մի օպորտունիստ է. բարձրագույն տեսակի Ոնգեղջյուր՝ հետևում է քաղաքական շարժումներին, խոնարիվում է պատմության առջև, վազում է ետևից և փորձում է հասնել նրան:

Նայեցեք Բերեթին՝ չի վազում պատմության ետևից: Նա սավառնում է: Նա արտահայտում է դիվահարություններ, տագնապներ՝ ֆունդամենտալ ճշմարտություններ, որոնք 3-4 դար առաջ արտահայտվել են արդեն: Նա միշտ էլ այնպիսին է եղել, ինչպիսին կա իր գրքերում և թատերգություններում: Մի օր ես ասել եմ, որ նա Սոլոմոն իմաստունի կամ Յոթ Երանելիի ժամանակներից է եկել: Բայց ինձ թվում է, որ ֆրանսերեն ստեղծագործողներից նա ամենակարևոր դեմքն է: Բեկետը դիմադրում է պատմության հոսանքին:

- Դուք գտնում եք, որ ժամանակակից հասարակարգերը սնանկ են: Դա իրենց արդիակա՞ն լինելուց է, թե՞ դատապարտված լինելու հանգանակից:

- Չկան լավ հասարակարգերը: Բոլոր հասարակարգերն էլ՝ լինեն հեղափոխական կամ ոչ ձախողված են: Կարծես պատմությունը ձեռք է առել մարդուն՝ նրա ուզածի ու պահանջածի ճիշտ հակառակն է արել: Կամ գուցե պատմությունը ի հայտ է բերել տվյալ հասարակարգերը հիմնադրողների թաքուն մտադրություննե՞րը՝ խոր, անգիտակցական և իրական: Ամենաազնիվ իդեալների ու վեհանձն մտադրությունների ետևում թաքնված է իշխելու մի կամեցողություն, չար մի կամեցողություն կամ ավերելու մի տենչանք: Այսիդեղ է բոլոր հասարակարգերի ձախողված լինելու բացատրությունը: Ըստ Էւլիքան՝ հասարակարգերը իրականացնում են մարդկանց չար կամեցողությունները: Յենց «տիրելու» սեռական բնագդն է, որ ամեն ինչ ապականեց: Յուրաքանչյուր հեղափոխությունից հետո վերակազմվում է բռնապետական մի հասարակարգ՝ ավելի վատթար, քան նախորդը: Յեղափոխության միֆից է, որ պետք է մեր օձիքն ազատենք: Արդյո՞ք ամեն մի «քաղաքական» գործողություն ավերիչ չէ, եթե ոճիրը մշտնշենավորելուց, բռնակալությանը մի նոր ուժ ու ձև տալուց, պետությունը վերակառուցելուց բացի ոչնչի չի ծառայում:

- Օրսոն Ուելսը՝ մեկը ձեր թատրոնի երկրպագուներից, մի օր իր այն մտավախությունն էր արտահայտում, որ ձեր չեղոքությունը պատճառ կդառնա, որ դուք լրեք «ընկηմվող նավը»...

- Ի՞նչ նավ: Նավը դեռևս չի ընկղմվում: Հավանաբար չի էլ ընկղմվի: Չեմ հավատում հեղափոխությանը: Յեղափոխությունները ծառայում են միայն ռեարեսիաներ վերահաստատելուն: Նայեցեք ձեր շուրջը: Ի՞նչ են դարձել հեղափոխություն կատարած երկրները: Եթե իրավիճակը չփոխվի, ապա մի տասը տարի հետո կենթարկվենք տոտալիտար ռեժիմի վտանգին: Ինչպես Օուրելն էր կանխատեսել: Այն, ինչ կարող է մեզ փրկել՝ ինդիվիդուալիզմն է, ուզում են ասել, որ ամենակարևոր բանը մարդկանց միջև եղած տարբերությունը տեսնելն է, այլ ոչ թե նմանությունը: Ոչ ոք ոչ ոքի նման չէ: Ես-ի իրականացումը, ինչպես Մունիեն էր ասում, կարող է լինել լոկ այն դեպքում, երբ մի ուրիշի և բազում ուրիշների գոյության ճանաչմանն ենք հասնում: Այսպիսով կարողանանք դիմադրել վարակին՝ Ոնգեղջրախստին, բայց, միևնույն ժամանակ՝ կարող ենք հարել: Հարել, բայց ոչ ներգրավել: Մարդը հավերժական պայմանագիր չի կնքում, և նա ազատորեն կարող է փոխել իր տեսակետը:

**Գարողել Գարսիա Մարկես  
Մարիո Վարգաս Լիպս**

**ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԼԱՏԻՆԱԿՄԵՐԻԿԱՆ  
ՎԵՊԻ ՄԱՍԻՆ**  
**Հատվածաբար**

Մ.Վ.Լ.- Գրողների հետ կատարվում է այն, ինչ իմ կարծիքով երբեք չի կարող կատարվել ինժեներների ու ճարտարապետների հետ: Հաճախ մարդիկ իրենք իրենց հարցնում են. «Ու՞ն են պետք գրողները»: Բոլորը գիտեն՝ ում է պետք ճարտարապետը, ինչի է պետք ինժեները, ինչի համար է բժիշկը, բայց երբ խոսքը գրողի մասին է, ծագում են կասկածներ: Որոշ մարդիկ համաձայն են, որ գրողները ինչ-որ բանի պետք են, բայց ինչի՝ որոշակի չգիտեն: Ես էլ իմ կասկածներն ունեմ: Այդ պատճառով էլ առաջին հարցը՝ իբրև գրող դու ինչի՝ ես պետք:

**Գ.Գ.Ա.- Ինձ թվում է, որ ես գրող եմ դարձել, երբ հասկացա, որ ուրիշ ոչ մի բանի պետք չեմ: Դայրս դեղասուն ուներ և բնականաբար ցանկանում էր, որ ես դեղագործ դառնամ ու փոխարինեմ իրեն: Իսկ ես ուզում էի փաստաբան դառնալ, քանի որ փաստաբանները միշտ հաղթում են ամենաանհույս դատավարություններում անգամ: Այնուհանդերձ, շատ դժվարություններ հաղթահարելով՝ համալսարան ընդունվելուց հետո ես հասկացա, որ փաստաբանությունն իմ խելքի բանը չէ: Սկսեցի պատմվածքներ գրել և այդ ժամանակ դույզն ինչ պատկերացում չունեի՝ ինչի են պետք գրածներս: Սկզբում ինձ գրելը դուք էր գալիս, որովհետև ինձ տպագրում էին և ես հասկացա այն, ինչի մասին հետո բազմիցս հայտարարել եմ՝ ես գրում եմ, որ իմ բարեկամներն ինձ ավելի շատ սիրեն: Դա զուտ ծշմարտություն է: Դետո, խորհրդածելով գրողի արհեստի ու այլ գրողների ստեղծագործությունների մասին, ես վճռեցի, որ ամենակած գրականությունը և մասնավորապես վեպն ունի իր գործառույթները: Ենթադրիս է, որ գրականությունը կոչում է, որից չես խոսսակի և ով գրելու ձիրք ունի,**

պարտավոր է գրել, որովհետև միայն այդ կերպ կարող է հաղթահարել գլխացավն ու ստամոքսի խանգարումը:

Եթե ես նստում եմ գիրք գրելու, ուրեմն ուզում եմ ինչ-որ պատմություն անել: Պատմություն, որը մարդկանց դուր է գալու: Ես ևս ունեմ գաղափարական նախապատրաստություն, կարծում եմ՝ բոլոր գրողներն ունեն, և եթե այդ նախապատրաստությունը հիմնավոր է, իսկ գրողն անկեղծ է պատմելիս, թեկուզ դա լինի Կարմիր գլխարկի մասին հեքիաթը կամ պատմություն պարտիզանների մասին, կրկնում եմ՝ եթե գրողը գաղափարական հաստատուն դիրքերի վրա է, այդ դիրքերը կարտացոլվեն պատմության մեջ: Դա անխուսափելի է, թեև կամխանտածված չէ:

Ա.Վ.Լ.- Այսինքն՝ զուտ ռացիոնալ գործոնը գրական ստեղծագործության մեջ առաջնային չէ: Ուրեմն ո՞ր գործոններն են առաջնային: Ո՞ր տարրերն են որոշարկում գրական ստեղծագործության որակը:

Գ.Գ.Մ.- Պատմություն գրելիս ինձ հետաքրքրում է միայն մի բան՝ ընթերցողին դուր կգա՝ մտահղացումը և ես լիովին համաձայն եմ դրան: Ես չեմ կարողանա պատմություն գրել, որը հիմնված չէ բացառապես անձնական փորձի վրա: Դենց հիմա ես մշակում եմ մտացածին բռնապետի կերպարը: Բռնապետ, որ ենթադրաբար լատինամերիկացի է: Այդ բռնապետը 182 տարեկան է և այնքան ժամանակ է իշխանության գլուխ, որ արդեն չի էլ հիշում, թե երբ է եկել իշխանության: Այդ բռնապետը միանգամայն մենակ է իր վիթխարի դյակում, որի դահլիճներում գրունում են կովերը և խժորում են արքեպիսկոպոսների վիթխարի կտավները: Եվ ինչն է հետաքրքիր՝ այդ պատմությունն իրավ իմ սեփական կենսափորձից է: Այսինքն՝ սեփական վիրուժի բանաստեղծական մշակումը ինձ հնարավորություն է տալիս պատկերել այն, ինչ այս պահին ցանկանում եմ, այսինքն՝ իշխանության անպարագիծ միայնությունը: Ինձ թվում է՝ իշխանության մենակությունը փոխանցելու համար առավել լավ նախատիպ չկա, քան լատինամերիկացի բռնապետը, որն իրենից ներկայացնում է մեր դարաշրջանի փառահեղ առասպելաբանական մի հրեշ:

**Ս.Վ.Լ.-** Ես ուզում եմ անձնական հարց տալ: Երբ խոսում էիր մենակության մասին, ես մտածեցի, որ դա քո բոլոր գրքերի մշտական թեման է: Մեկը նույնիսկ կոչվում է «Հարյուր տարվա մենություն»: Դա հետաքրքիր է, որովհետև քո բոլոր գրքերը մշտապես խիտ բնակեցված են, բազմամարդ, ու մարդիկ պարզապես «ոտքի տակ են ընկնում», այնուհանդերձ, քո գրքերի սրբազն մատերիան միայնությունն է: Ես ուշադրություն եմ դարձրել, որ քո հարցազրույցներում հաճախ ես հիշատակում ազգականներից մեկին, որ քեզ տարբեր պատմություններ էր պատմում, երբ երեխա էիր: Մի անգամ էլ նշել ես, որ այդ ազգականի մահը քո կյանքի վերջին կարևոր իրադարձությունն էր, իսկ դու ուք տարեկան էիր: Ի՞նչ չափով են այդ մարդու պատմությունները խթանել քո գրելու ցանկությունը: Վերջապես՝ ո՞վ էր այդ մարդը:

**Գ.Գ.Մ.- Պապս է: Նկատիր, որ այդ սենյորին ես հետո հայտնաբերեցի իմ վեպում: Երիտասարդության օրերին նա ստիպված է եղել մարդ սպանել և ամբողջ գյուղը պաշտպանել է նրան, նույնիսկ սպանվածի եղբայրներից մեկը պապիս տան առաջ է գիշերել, որպեսզի քոյլ չտա հանգուցյալի ազգականներին վրեժ լուծել: Բայց պապս վրեժի մշտական սպառնալիքին չի դիմացել ու հեռացել է այդ գյուղից, գնացել է շատ ու շատ հեռու մի վայր ու նոր գյուղ է հիմնադրել:**

Ամենից շատ տպավորվել է պապիս խոսքը՝ «Դու չես պատկերացնում, թե որքան է կշռում մեռած մարդը»: Եվս մի փաստի մասին ես երբեք չեմ մոռանում, որը ինձ հետ, իբրև գրողի, ուղիղ կապ ունի: Մի երեկո պապս ինձ կրկես տարավ և ես տեսա միասսապատ ուղտ: Երբ մենք վերադարձանք տուն, պապս բացեց բառարանը և ինձ ասաց. «Դա դրամադեր էր, ահա ինչով է դրամադերը տարբերվում փղից և ինչով երկսապատ ուղտից», և նա կենդանաբանության մի մեծ դասախոսություն կարդաց ինձ: Այդպես ես սովորեցի բառարաններից օգտվել:

**Ս.Վ.Լ.-** Այդ մարդը քեզ վրա վիթխարի ազդեցություն է ունեցել՝ դատելով այն իրողությունից, որ նրա ողբերգությանը հաճախ ես անդրադառնում քո գրքերում: Ո՞ր պահից վճռեցիր գրականություն դարձնել նրա պատմածները, երբվանից սկ-

սեցիր օգտագործել քո հիշողությունները, պատնվածքներ ու վեպեր գրելու անձնական փորձը:

**Գ.Գ.Ա.- Երկու-երեք գիրք գրելուց հետո միայն գիտակցեցի, որ օգտագործում եմ այդ փորձը: Ծիշտն ասած՝ Ես հիշում էի ոչ միայն պապիս, այլև մեր տունը այդ բնակավայրում, որը նա հիմնել էր. Վիթխարի տունը, ուր ամեն ինչ պարուրված էր խորհրդավորությամբ: Այդ տանը մի դատարկ սենյակ կար, ուր վախճանվել էր զարմուհի Պետրան: Այնտեղ մի դատարկ սենյակ էլ կար, ուր վախճանվել էր զարմիկ Լասարոն: Գիշեր-ները այդ տանն անհնար էր շրջել, որովհետև հանգույցալ-ներն ավելի շատ էին բնակիչներից: Երեկոյան վեցին ինձ նստեցնում էին մի անկյունում և ասում էին. «Այստեղից չշարժ-վես, որովհետև եթե հեռացար, իրենց սենյակներից կզան զարմիկ Լասարոն կամ զարմուհի Պետրան»: Եվ ես նստում էի... Ին առաջին «Տերևաթափ» գրքում կա մի յոթնամյա տղա, որ ամբողջ պատումի ժամանակ նստած է աթոռակին: Դիմա ես հասկանում եմ, որ այդ տղան մասամբ ես եմ՝ նստած սար-սափիներով լեցուն տանը: Մի դրվագ շատ լավ եմ հիշում և այդ դրվագը լավ հաղորդում է տան մթնոլորտը...**

**Ա.Վ.Լ.-** Ներիր, որ քեզ ընդհատում են: Դա այն բնակա-վայոն էր, ուր դու ծնվե՞լ ես, Արակատակա՞ն:

**Գ.Գ.Ա.- Այո, Արակատական, որ հիմա նույնացվում է Սա-կոնդոյին, ուր տեղի են ունենում բոլոր այս պատմություննե-րը: Ես մի զարմուհի ունեի, որին «Դարյուր տարվա մենություն» կարդացողները հեշտությամբ կճանաչեն: Նա շատ եռանդուն կին էր, ամբողջ օրը ինչ-որ բանով խիստ գրաված էր, մի անգամ նա նստեց սավան հյուսենու: Ես նրան հարցրի. «Ինչո՞ւ ես հյուսում այդ սավանը»: «Որով-հետև շուտով մեռնելու եմ, որդիս» պատասխանեց նա: Իրոք, երբ սավանն ավարտված էր, նա վախճանվեց ու նրան փա-թաթեցին իր հյուսած սավանով: Նա արտասովոր կին էր: Նա է նաև մեկ այլ տարօրինակ պատմության նախատիպը: Մի անգամ նա պատշգամբում ասեղնագործում էր, երբ եկավ գյուղաբնակներից մեկը՝ ծեռքին հավի մի զարմանալի ծու՝ հավելածով: Զգիտեմ ինչո՞ւ այդ տունը ինքնատիպ խորհր-**

դատվությունների վայր էր բոլոր խորհրդավոր երևույթների շուրջ: Ամեն անգամ, երբ ինչ-որ բան էր կատարվում, որը ոչ ոք չէր կարողանում բացատրել, զալիս էին մեր տուն և, իբրև օրենք, զարմուհիս պատասխան էր ունենում: Ինձ հիացնում էր այն բնականությունը, որով նա լուծում էր բոլոր խնդիրները: Զուն բերող աղջիկը հարցրեց. «Ինչի՞ց է ծուն այսպես ծևափոխվել»: Զարմուհիս նայեց ծվին ու հանգիստ պատասխանեց. «Որովհետև չարքի ծուն է: Խարույկ վառեք բակում»: Խարույկը վառեցին և ծուն այրեցին: Կարծում եմ՝ այդ բնականությունն է ինձ բանալի տվել «Դարյուր տարվա մենություն» վեպի համար, ուր պատմվում է ամենասահմուկեցուցիչ, արտառոց դեպքերի մասին դեմքի նույն անհաղորդ արտահայտությամբ, որով զարմուհիս հրամայեց այրել չարքի ծուն, որը երբեք նույնիսկ պատկերացնել էլ չէր կարող:

...Լատինամերիկացի գրողներս հաճախ չենք հասկանում՝ ինչ հրաշալի մտահղացումներ են ննջում մեր տատիկների հեքիաթներում, իսկ երեխաները հավատում են: Յենց երեխաներին են պատմվում այդ անհավանական դեպքերը, և երեխաները կարծես թե օգնում են դրանց ստեղծմանը, և դա հրաշալի է, ինչպես «Դազար ու մի գիշերում»: Սեզ շրջապատում են անհավանական, ֆանտաստիկ իրողություններ, իսկ գրողները համարուեն պատմում են սակավ կարևոր, առօրյա իրադարձությունների մասին: Ես կարծում եմ՝ մենք պետք է աշխատենք լեզվի և արտահայտչամիջոցների վրա, որպեսզի լատինամերիկյան ֆանտաստիկ իրականությունը դառնա մեր գրքերի մասը և լատինամերիկյան գրականությունը իրականում համապատասխանի լատինամերիկյան կյանքին, որտեղ օր առ օր տեղի են ունենում ամենահավանական իրադարձություններ: Օրինակ, գոյություն ունեն քաղաքացիական 32 պատերազմներ սկսած ու բոլորն էլ տանուլ տված գնդապետներ: Կամ՝ Սալվադորում մի բռնապետ, ում անունը չեմ հիշում, հայտնագործում է ծոճանակ, որը ցույց է տալիս սմունդը թունավորված է, թե ոչ: Այդ բռնակալը մեծ իմաստուն էր: Երբ երկրում բռնկվեց ծաղկի համաճարակ և առողջապահության նախարարը հարցրեց՝ ինչ անել, նա հրահանգեց

Երկրի բոլոր լամպերը ծածկել կարմիր թղթով: Եվ ամբողջ երկրի բոլոր լամպերը փաթաթեցին կարմրաթղթով: Լատինական Ամերիկայում ամեն օր են նման դեպքեր կատարվում, իսկ մենք՝ լատինամերիկացի գրողներս, նստելով գրասեղանի առաջ՝ այդ ամենը իրականության տեղ ընդունելու փոխարեն ընկնում ենք բանավեճերի գիրկը ու եզրահանգում՝ դա անհնար էր, նա պարզապես խելագար էր: Մենք սկսում ենք հայտնագործել խելամիտ բացատրություններ, որ աղավաղում են լատինամերիկյան իրականությունը: Ես կարծում եմ, որ իրականությունը պետք է ընդունել ինչպես կա, քանի որ այդ իրականությունը համաշխարհային գրականությանը նորություն է բերում:

...Բանանի պլանտացիաների պատմությունը բացարձակապես իրական է: Այդպիսին է Լատինական Ամերիկայի տարորինակ ճակատագիրը, որ իրական իրադարձությունները մշտապես դառնում են ֆանտասմագորիա, ինչպես տեղի ունեցավ բանանի պլանտացիաներում՝ այդքան դաժան, այդքան ողբերգական: Բնակավայրում բանանի պլանտացիա ստեղծելուց հետո ամբողջ աշխարհից սկսեցին մարդիկ գալ և, որքան էլ տարօրինակ է, մի շրջան Կոլումբիայի ատլանտյան այդ ափամերձ հողակտորում խոսում էին աշխարհի բոլոր լեզուներով: Սարդիկ միջյանց չէին հասկանում, բայց այնպիսի մի ծաղկում սկսվեց, ավելի ծիշտ՝ այսպես կոչված «ծաղկում», որ կումբիա պարելիս մարդիկ այրում էին իրենց փողերը: Կումբիան պարում են մոմք ծեռքներին, և բանանի պլանտացիայի հասարակ աշխատավորները հանգիստ, մոմի փոխարեն կրակի էին տալիս իրենց վաստակը, որովհետև նրանք ամսական ստանում էին 200 պեսո, իսկ մունիցիպալ դատավորը՝ 50: Այդ պատճառով գոյություն չուներ իրական իշխանություն, իշխանությունը ծախվում ու գնվում էր, և բանանի ընկերությունը կարող էր իշխանությունը գնել ցանկացած թուլաբաժնով, ու ինքն էր դարձել արդարադատությունը, և իշխանության բոլոր վճիռներն իր ծեռքում էին: Բայց աստիճանաբար մարդիկ խելքի եկան, դրսևով մասնագիտական գիտակցությունը: Բանվորները սկսեցին ամենատարրա-

կան պահանջներից, քանի որ բժշկական ծառայությունը հանգում էր երկնագույն հարին, որը տրվում էր բոլորին, ով ինչ-որ ցավ էր զգում: Յիշանդարին շարք էին կանգնեցնում ու բաժանում նույն հարերը, և դա այնքան սովորական էր, որ երեխաներն էլ էին շարք կանգնում ու մեկական հար ստանում:

Բանանի ընկերության շոգենավերը Սանտա Մարտայում բեռնավորվում էին և մեկնում Նոր Օռեան, իսկ հետադարձը դատարկ էին կատարում: Ընկերությունը երկար մտմտում էր՝ ինչպես արդարացնել հետադարձի դատարկությունը: Վճռեցին ընկերությանը պատկանող խանութների համար ապրանքներ բերել և բանվորներին վճարել ոչ թե դրամով, այլ չեկերով, որոնցով կարող են առևտուր անել այդ խանութներում: Նրանց տալիս էին բոներ, որով վճարվում էր բանանի ընկերության նավերով բերված ապրանքների դիմաց: Բանվորները պահանջնեցին փողով վճարել: Գործադուլ սկսվեց, որը ամբողջ շրջանը կազմալուծեց, իսկ կառավարությունը խնդիրը կարգավորելու փոխարեն գործեր ուղարկեց: Բանվորները հավաքվեցին երկարուղային կայարանում, որովհետև ենթադրում էին, որ խնդիրը լուծելու համար նախարարն ինքը կժամանի: Չորքը շրջապատեց նրանց և հեռանալու համար հինգ րոպե տվեց: Ոչ ոք չհեռացավ: Սկսվեց կոտորածը: Այս պատմության մասին, որը նկարագրված է վեպում, ես տեղեկաց իրադարձություններից տասը տարի անց: Մարդկանց մի մասը պատմում էր, որ հենց այդպես էլ եղել է, մի մասը ժխտում էր՝ ոչինչ էլ չի եղել: Ունանք հաստատում էին. «Ես այնտեղ եղել եմ և գիտեմ, որ սպանվածներ չեն եղել: Մարդիկ հանգիստ ցրվեցին և բացարձակապես ոչինչ տեղի չունեցավ»: Իսկ ուղիշները պատմում էին, որ եղել են սպանվածներ: Պարզապես Լատինական Ամերիկայում հնարավոր է դեկրետով մոռացություն սահմանել այնպիսի իրադարձությունների մասին, եթե սպանվել են երեք հազար մարդ: Դա ֆանտասմագորիա է թվում, բայց դա հենց այդպես է:

Ս.Վ.Լ.- Ասուն են՝ մի անգամ Բրազիլիայի կառավարությունը դեկրետով արգելել է համաճարակը:

#### **4.4.U.-Եթե փորձենք օրինակներ գտնել, հազարը կամցնենք:**

Մ.Վ.Լ.- Այսինքն՝ բանվորների սպանությունը ոչ միայն պատմական փաստ է, այլև...

**4.4.U.- Վեպում ես հիշատակել եմ դեկրետի թիվը, որով գինվորներին թույլատրվում էր կրակել բանվորների վրա և այն գեներալի անունը, որը ստորագրել է դեկրետը: Նաև նրա քարտուղարի անունը: Այդ փաստերը վերցված են Ազգային արխիվից, իսկ հիմա վեպում կարդում են ու հայտարարում, թե ես չափազանցրել եմ:**

Մ.Վ.Լ.- Յետաքրքիր է, որ բանվորների սպանության այդ տեսարանը բոլորովին էլ արհեստական խցկված չի թվուն և հրաշալի տեղավորված է վեպի ֆանտասմագորիկ մքնոլորտում: Այն փաստը, որ այդ կոտորածը վերապրողներից մեկը հարություն է առնում, ընդ որում մինչև վերջ էլ չենք իմանում՝ նա հարություն առավ, թե սպանված չեր, թե վերապրեց, ծնուն է երկակիություն, որով գրված է հատվածը, և դա շատ հետաքրքիր է:

Մի քիչ պատմիր լեզվի ու արտահայտչամիջոցների քո ընտրության նաևին:

#### **4.4.U.- «Յարյուր տարվա մենությունը» սկսեցի, եղը 17 տարեկան էի:**

Մ.Վ.Լ.- Ինչո՞ւ չսկսել առաջին գրքից:

**4.4.U.- Առաջինը հենց «Յարյուր տարվա մենությունն» էր: Ես սկսեցի գրել ու հասկացա, որ այդ բեռք չափազանց ծանր է: Ես ուզում էի պատմել այն ամենի մասին, ինչ հենց նոր պատմեցի:**

Մ.Վ.Լ.- 17 տարեկանում դու ուզում էիր պատմել Մակոնդոյի նաևին:

**4.4.U.- Ոչ միայն ուզում էի, այլև գրեցի առաջին պարբերությունը: Բայց հասկացա, որ չեմ հաղթահարի այդ ծանրությունը: Ես ինքս չեմ հավատում իմ պատմածին, բայց քանի որ գիտեի, որ դա ծշմարտություն է, հասկացա, որ իմ դժվարությունները զուտ տեխնիկական են: Ես չեմ տիրապետում գրական հնարանքներին, ոճաբանությանը, որպեսզի իմ պատմա-**

**Ժին հավատան, որպեսզի դառնա ծշմարտաննան:** Ես թողեցի վեպն ու գրեցի չորս գիրք: Ամենամեծ դժվարությունը անհրաժեշտ տոնայնությունը և ոճը գտնելն է, որպեսզի ընթերցողը հավատա պատմածիս:

Ս.Վ.Լ.- Երբ դու 17 տարեկան էիր և արդեն մտահեղացել էիր վեպը, քեզ գրող զգո՞ւմ էիր, մտածո՞ւմ էիր, որ քեզ կնվիրես բացառապես գրականությանը: Կարծո՞ւմ էիր, որ գրականությունը կդառնա քո ճակատագիրը:

**Գ.Գ.Ա.- Տեղի ունեցավ մի իրադարձություն, որը հիմա եմ հասկանում՝ գրողի իմ ճակատագրում վճռորոշ դարձավ:** Իմ ընտանիքը հեռացել է Արակատակայից, երբ ես ութ կամ տասը տարեկան էի: Մենք այլ վայր փոխադրվեցինք, իսկ երբ լրացավ 15 տարեկանս, մայրս վճռեց վերադառնալ Արակատակա, որպեսզի վաճառի մեր տունը: Ես վճռեցի նրա հետ գնալ: Մենք եկանք Արակատակա, և ես տեսա, որ ամեն ինչ առաջվանն է, միայն մի քիչ փոխված, կարծես թե բանաստեղծական անցում էր եղել: Ես համոզվեցի այն նույն իրողության մեջ, որում բոլորս ենք համոզվում՝ նախկինում լայնարձակ թվացող փողոցները հիմա նեղ էին դարձել, տները մեր պատկերացրածի պես բարձր չէին: Նրանք նույն էին, բայց մաշված ժամանակի ու ամայության մեջ: Պատուհաններից մենք տեսնում էինք, որ ներսում էլ ոչինչ չի փոխվել, միայն 15 տարով մեծացել է: Դա շիկացած ու փոշոտ գյուղակ էր: Կիզիչ կեսօր էր, ու փոշին լցվում էր թռերիս մեջ: Երբ այդ գյուղակում որոշել էին ջրամբար աշտարակ կառուցել, ստիպված էին եղել գիշերները աշխատել, որովհետև ցերեկով հնարավոր չէր շիկացած գործիքներին ծեռք տալ: Մենք մորս հետ քայլում էինք այդ գյուղակի միջով ինչպես միրաժի՝ փողոցում բացարձակապես մարդ չկար: Վստահ եմ՝ մայրս էլ նույն ապրումներն ուներ՝ տեսնելով, թե ժամանակն ինչ է արել այդ բնակավայրի հետ: Մենք հասանք անկյունի փոքրիկ դեղատանը, ուր ինչ-որ սենյորա նստած կարում էր: Մայրս ներս մտավ ու ասաց. «Ո՞նց ես, խնամի»: Կինը գլուխը բարձրացրեց, նրանք գրկախառնվեցին ու կես ժամ լաց եղան: Նրանք ոչ մի բառ չասացին իրար, միայն լաց էին լինում: Այդ պահին

**Ես մտածեցի թղթին հաղորդել, թե ինչ է նախորդել այդ տեսարանին:**

Մ.Վ.Լ.- Ինձ թվում է, որ Էսկեյպիստական գրականությունը հեռացնում է որոշակի իրականությունից, պատմական իրողությունից: Ես կարծում եմ՝ այդ գրականությունը անխուսափելիորեն պակաս կարևոր ու պակաս նշանակալից է, քան այն, որ որոնում ու գտնում է իր նյութը անմիջական իրականության մեջ:

**Գ.Գ.Ա.- Անձամբ ինձ այդ գրականությունը չի հետաքրքրում: Ես հավատում եմ, որ ցանկացած մեծ գրականություն պետք է հիմնվի որոշակի իրականության վրա: Ես լավ հիշում եմ մեր խոսակցություններից մեկը: Դու այն ժամանակ ասացիր, որ մենք՝ վիպասաններս, նման ենք գիշատիչների, որ սնվում են քայլայվող հասարակության դիակներով:**

Մ.Վ.Լ.- Լսիր, գոտկատեղից ներքև ես խփում: Այո, ես կարծում եմ, որ գրականության ծաղկումի պահին հետաքրքիր փոխկապվածություն կա գրողների համարձակ, վճռական ելույթների և հասարակության ճգնաժամային վիճակի միջև: Ինձ թվում է, որ կայացած, բարեկեցիկ հասարակությունը, ներքին խաղաղվածության մեջ ապրելիս շատ ավելի քիչ է գրավում գրողին, քան այն, որ, ինչպես ներկա լատինամերիկյան հասարակությունը, գրգռված է ներքին ճգնաժամերով և ինչ-որ չափով մոտեցել է ապոկալիպսիսին: Այլ խոսքով՝ գտնվում է վերափոխումների, փոփոխությունների մեջ, որոնք հայտնի չեն ուր են տանում:

**Գ.Գ.Ա.- Ինձ թվում է՝ մենք բոլորս գրում ենք մեկ-ընդհանուր վեպ: Ես նկարագրում եմ մեկ դրսևորումը և գիտեմ, որ դու գրում ես մյուսը, իսկ Ֆուենտեսը՝ երրորդը, որ բացարձակապես նման չէ մեր նկարագրածին, բայց բոլորը լատինամերիկյան կյանքից են: Այդ պատճառով՝ մի կարծիր, որ «Նարյուր տարվա մենություն» վեպում դու պատահաբար ես գտել այն հերոսին, որը պատրաստվում է ամբողջ աշխարհը ման գալ ու հանդիպում է վիկտոր Ֆուեսի նավի ուրվականին, որ Կարպունտիերի «Լուսավորության դարի» հերոսն է: Կա և մեկ այլ հերոս՝ գնդապետ Լորենսո Գավիլանը Կարլոս Ֆուենտեսի**

«Արտեմիո Կրուսի մահը» վեպից: «Դարյուր տարվա մենություն»-ում ևս մի հերոս կա, ավելի շուտ ակնարկ՝ իմ հերոսներից մեկը մեկնում է Փարիզ և ապրում Դոֆին փողոցի հոբելի այն նույն սենյակում, որ վախճանվել է Ռոկամադուրը՝ Կորտասարի հերոսը: Ես բացարձակապես վստահ եմ, որ զամբյուղով վերջին Առլելիանոյին բերած միանձնուիին «Կանաչ տան» Պետրոսինիոյի մայրն է: Ինձ տեղեկություններ էին պետք քո այդ հերոսուհու մասին, որպեսզի քո գրքից անցնեի իմ գրքին: Ուզում եմ ասել, որ չնայած մեր ունեցած տարրերություններին, մենք հեշտությամբ կարող ենք խաղալ այս խաղը՝ գրքից գիրք փոխադրելով հերոսներին, և դա շինծու չի դիտվի: Կա իրականության մեկ ընդհանուր մակարդակ, և այն օրը, երբ մենք կգտնենք նրա արտացոլման միջոցները, կստեղծենք իսկական լատինամերիկյան վեպը, լատինամերիկյան համընդհանուր վեպ, որ կընդունեն լատինամերիկյան ցանկացած երկրում՝ չնայած քաղաքական, սոցիալական, տնտեսական պատմական տարրերություններին:

Մ.Վ.Լ.- Անդրադանանք այն ոլորտին, որը գրականությունից դուրս է, բայց գրականության հետ սերտ կապված՝ պատմությանը: Մեր երկրներում պատմությունը զբաղեցնում է ընթերցողների, ուսանողների, քննադատների մտքերը: Նրանց հետաքրքրում է գրողների գրական գործունեության և քաղաքական դիրքորոշումների փոխկապը: Ընդունված է կարծել, որ գրողը պատասխանատու է հասարակության առջև, ու այդ պատասխանատվությունն արտահայտվում է ոչ միայն նրա ստեղծագործություններում, այլև քաղաքական գործունեությամբ: Ինչպես ես դու վերաբերվում այս խնդրին: Ի՞նչ կապ կա քո գրական գործունեության և քաղաքական տեսակետների միջև:

Գ.Գ.Մ.- Նախ և առաջ, ես կարծում եմ, որ գրողի քաղաքական գլխավոր պարտքը լավ գրելն է: Լավ գրել ոչ միայն իսկական, փայլուն արձակ ստեղծելու առումով, այլև իր համոզմումների համաձայն, էլ չեմ ասում անկեղծության մասին: Չեմ կարծում, որ գրողից պետք է պահանջել իր գրքերում քաղաքական գործիչ լինել: Չի կարելի պահանջել, որ գրողը իր

**ստեղծագործությունը դարձնի քաղաքական գենք, որովհետև եթե գրողն անցել է գաղափարական պատրաստվածություն և ունի քաղաքական դիրքորոշում, անպայման կարտահայտվի նրա ստեղծագործություններում:** *Տորե Նիլսոնն ինձ ապշեցրեց Բուենոս Այրեսում, երբ ասաց, որ «Դարյուր տարվա մենություն»-ը հրաշալի, բայց, ավաղ, հետադիմական վեա է:*

Մ.Վ.Լ.- Ինչո՞ւ այդպես ասաց:

**Գ.Գ.Մ.- Չբացատրեց, բայց մոտավարապես այս էր պատճառը. իհմա, երբ Հատինական Ամերիկայում այսքան հիմնահարցեր կան, երբ ամեն ինչ այսքան զարհուրելի է, հիանալի վեաի ստեղծման բուն փաստն արդեն հետադիմական է: Դա ինձ այնքան զարմացրեց, որ ուզում եմ քեզ հարցնել՝ դո՞ւ էլ ես համարում, որ «Դարյուր տարվա մենություն»-ը հետադիմական վեա է:**

Մ.Վ.Լ.- Ոչ:

**Գ.Գ.Մ.- Ինչո՞ւ:**

Մ.Վ.Լ.- Որովհետև քո վեպում անաչառ, նույնիսկ ոչ կողմնակի, ոչ այլաբանորեն, ինչպես մյուս գրքերում (օրինակ, Կորտասարի) նկարագրվում են լատինամերիկյան հասարակական-քաղաքական իրականության արմատական հիմնահարցերը:

**Գ.Գ.Մ.- Դու կարծում ես, որ այդ գիրքը մեր գրած մյուս գրքերի պես ընթերցողին օգնում է հասկանալ Հատինական Ամերիկայի հասարակական-քաղաքական իրականությունը:**

Մ.Վ.Լ.- Ես կարծում եմ, որ ցանկացած լավ գրականություն անխուսափելիորեն առաջադիմական է, անկախ հեղինակի մտադրություններից: Ասենք՝ Բորիսեսը խորապես պահպանողական, խորապես հետադիմական մտածելակերպ ունի, բայց իբրև գրող ոչ պահպանողական է, ոչ էլ հետադիմական: Բորիսեսի ստեղծագործություններում (Եթե նկատի չառնենք նրա ստորագրած անհեթեթ հանգանակները) ոչինչ չի պարունակում հասարակության կամ պատմության ոչ մի հետադիմական հայեցակարգ, աշխարհին ուղղված քարացած հայցք, ֆաշիզմի կամ ինչ-որ բանի, որ նա պաշտում է, ասենք՝

իմպերիալիզմի փառաբանություն: Ննան ոչինչ չկա նրա գրքերում:

**Գ.Գ.Ա.- Որովհետև նրան հաջողվում է խուսափել նույնիսկ իր սեփական համոզմունքներից:**

Մ.Վ.Լ.-Ցանկացած մեծ գրող, նույնիսկ հետադիմական, խուսափում է, ինչպես դու ես ասում, իր համոզմունքներից, երբ նկարագրում է իրականությունն այնպես, ինչպես կա, իսկ ես չեմ կարծում, որ իրականությունը կարող է հետադիմական լինել:

**Գ.Գ.Ա.- Մենք չենք խուսափում մեր համոզմունքներից: Ասենք, բանանային պլանտացիաների ողբերգությունն իմ վեպում նկարագրված է իմ համոզմունքների համաձայն: Ես անխոս ընդունում եմ բանվորների արդարացիությունը: Դա ակնհայտ է: Ես կարծում եմ, որ գրողի մեծագույն քաղաքական պարտքն է չշեղվել սեփական համոզմունքներից կամ իրականությունից, այլ սեփական ստեղծագործությամբ նպաստել, որ ընթերցողը լավ հասկանա իր երկրի կամ մայրամաքի հասարակական-քաղաքական իրավիճակը, իր հասարակությունը: Դա կարևոր և դրական քաղաքական աշխատանք է: Դա է գրողի քաղաքական գործառնությունը: Դա և միայն դա: Իսկ իրեն մարդ՝ գրողը կարող է լինել քաղաքական մարտիկ, և ոչ միայն կարող է, այլև պարտավոր է, որովհետև ունի լսարան և պարտավոր է օգտագործել այդ լսարանը իր քաղաքական խնդրի լուծման համար:**

Մ.Վ.Լ.- Հնարավոր են տարբեր իրավիճակներ: Պատահում է՝ գրողներն ունեն քաղաքացիական առաջավոր դիրքեր, նույնիսկ քաղաքական կուսակցությունների անդամ են, իսկ նրանց գրքերում սեփական հայացքներին հակառակ համոզմունքներ են արտահայտվում:

**Գ.Գ.Ա.- Իհարկե, գրում ես որոշակի ծգտումներով, բայց ես կարծում եմ, որ այդ ծգտումները որոշարկում են և համոզմունքները: Այսինքն՝ եթե նման հակասություն է ծագում՝ կամ գրողը անկեղծ չէ, կամ այնքան էլ հաստատում չեն նրա համոզմունքները:**

**Ա.Վ.Լ.-** Իսկ գուցե այդ երկու տարրերից և ոչ մեկը ստեղծագործության պահին առավել խոր ու առավել վճռական չեն, քան մեկ ուրիշը: Եթեև օրինակ՝ քո «Հարյուր տարվա մենություն» վեպը, որի թեման քեզ այդքան տարի տանջել է: Ի՞նչ կերպարանքով է թեման քեզ հետապնդել: Գաղափարների<sup>9</sup>, համոզմունքների<sup>10</sup>: Դու ցանկանում էիր վերհանել Մակոնդոյի<sup>11</sup> ողբերգությունը, Կոլումբիայի քաղաքացիական պատերազմների<sup>12</sup> ողբերգությունը, բանանային պլանտացիաների<sup>13</sup>, որ իրենց հետ այդ վայրեր էին բերել սպանություններ ու աղքատություն, թե՝ իրականում դու ցանկանում էիր պատմել ինչ-որ պատմություններ, ինչ-որ ֆանտասմագորիկ դրվագներ, իսկ գուցե դու ազատություն էիր ուզում տալ ինչ-որ հերոսների, որոնց կերպարանքը հստակ հիշում էիր: Ի՞նչն էր քեզ ոգեշնչում՝ գաղափարախոսությունը, թե՝ ինչ-որ իրադարձություններ:

**Գ.Գ.Ա.-** Կարծում եմ՝ այդ հարցին պիտի պատասխանեն քննադատները: Ես ձգտում էի ստեղծել համընդգրկուն վեպ, իսկ վեպին անհրաժեշտ է ամեն ինչ՝ համոզմունքներ, ձգտումներ, ավանդույթներ, առասպելներ... Ես մի քիչ շփոթվում եմ, որովհետև իմ գրքերի համար վաստ քննադատ եմ: Թերևս ես այնքան էլ քծախնդիր չեմ, որովհետև վեպ եմ ներմուծում դրվագներ, որոնք հետո եմ փորձում վերլուծել և սովորաբար եզրակացնում եմ, որ համապատասխանում են իմ համոզմունքներին, իմ ձգտումներին: Ես բացարձակապես անկեղծ եմ և չեմ կարող ինքս ինձ ստել ոչ մի պահ: Համոզված եմ՝ որքան անկեղծ եմ, այնքան ծշգրիտ, այնքան մեծ է վեպի ներգործության ուժը:

**Մ.Վ.Լ.-** Դու ինձ հիշեցրիր գրողի «փոքրիկ խոհանոցը»: Միշտ հետաքրիր է ինանալ՝ ինչպես է գրողը գրում, ինչպես է գիրքը ծնվում: Յիմնական խթանը պատմությունը պատմելն է, բայց այն պահից, երբ այդ ցանկությունը տիրապետում է քեզ և մինչև գրքի տպագրվելը մի քանի փուլ է տևում:

**Գ.Գ.Ա.-** Մենք կարող ենք խոսել գրքերից յուրաքանչյուրի մասին, որ...

**Մ.Վ.Լ.-** Ավելի հետաքրիր է «Հարյուր տարվա մենության» ստեղծման պատմությունը: Հարցազրույցներից մեկում ասել

ես, որ այդ գիրքը քեզ մի քանի տարի զբաղեցրել է, մի քանի անգամ սկսել ու ընդհատել ես, մինչև Ակապուլկոյից Մեխիկո ճանապարհին հանկարծ այնքան հստակ ես պատկերացրել գիրքը, որ կարող էիր սկզբից մինչև վերջ թելադրել:

**Գ.Գ.Ս.- Այո, բայց այդ ասելիս ես նկատի ունեի գրքի զուտ ծևական կողմը, երկար տարիներ ինձ համար խնդիր էր գրքի միայն լեզուն, սոնայնությունը: Բովանդակությունը, բուն պատմությունը ավարտուն էին դեռ վաղ պատանությանս օրերին: Ես հիշեցի Բունյուելին: Մի քիչ կշեղվեմ: Լուիս Բունյուելը մի անգամ պատմեց, որ «Վիրիդիանի» մասին առաջին միտքը ունեցել է կերպարի տեսքով՝ հարսանեկան հագուստով չքնաղ կնոջ, նա ուշաբափ է, իսկ կողքին մի ծերուկ է, որ ուզում է նրան բռնաբարել: Այդ կերպարի շուրջ Բունյուելը կառուցել է ամբողջ պատմությունը: Դա ինձ ապշեցրեց, որովհետև «Ճարյուր տարվա մենություն» վեպի մասին իմ առաջին միտքը ինձ հայտնվել է ծերուկի տեսքով, որ երեխային տանում էր սառույց տեսնելու:**

Մ.Վ.Լ.- Այդ կերպարը քո կենսափորձի՞ց էր:

**Գ.Գ.Ս.-** Դա բխում էր իմ համար ձգտումից՝ վերադառնալ պապիս տունը, որ ինձ կրկես էր տանում: Սառույցը կրկեսի դիտարժան վայրերից էր, քանի որ զյուղում կիզիչ շոգ էր, այնտեղ չգիտեին՝ ինչ է սառույցը, որ զյուղաբնակների համար նույնն էր, ինչ փիղը կամ ուղտը: Վեպում ծագում է ծերունու կերպարը, որ մանջուկին տանում է սառույցը տեսնելու և հիշիր, որ սառույցը գտնվում է կրկեսի վրանի տակ, ուր մուտքի համար պետք է վճարել: Այդ դրվագի շուրջ կառուցվել է գիրքը: Իսկ իրադարձությունները, սյուժեն ոչ մի խնդիր չհարուցեցին, դա իմ կյանքի մասն էր, որը ես երբեք էլ չեմ մոռանում. մնում էր ամբողջ նյութը ընդամենը դասղասել ու շարադրել:

Մ.Վ.Լ.- Ի՞նչ լեզվական խնդիրներ էին առաջանում: Ի տարբերություն քո նախորդ գրքերի խիստ, ճշգրիտ ու չափազանց հակիրճ լեզվի, այս գրքի լեզուն պարզապես հարստացնում է լեզվական աշխարհը:

**Գ.Գ.Ս.- Այո, բացառությամբ «Տերևաթափի», որ առաջին գիրքն էր, երբ տեսա, որ «Ճարյուր տարվա մենություն»-ը չեմ**

կարողանում գրել: Իսկ ընթացքում գրեցի «Գնդապետին ոչ ոք չի գրում», «Մեծ մայրիկի հուղարկավորությունը» և «Տարածամբ»: Այդ ժամանակ իմ կյանքում շատ կարևոր իրադարձություններ եղան. «Տերևաթափը» տպագրելով՝ ես մտածում էի, որ պիտի գնամ նույն ճանապարհով, բայց նշանակալից չափով վատքարացավ Կոլումբիայի հասարակական-քաղաքական վիճակը, սկսվել էր կոլումբիական վիոլենսիան (violencia-իսպաներեն՝ բռնություն, Կոլումբիայում քաղաքացիական պատերազմ սկսվեց, երբ 1948թ. սպանվեց լիբերալ կուսակցության առաջնորդ Գախտանան): Այդ ժամանակ, դժվարանում եմ որոշարկել որ պահից, ես քաղաքական գիտակցություն ծեռք բերեցի ու սկսեցի զգալ իմ մասնակցությունը երկրի ողբերգությանը: Ես անցա պատմությունների, որ լիովին տարբերվում էին ինձ նախկինում հետաքրքրող պատմություններից՝ ողբերգություններ, որոնք ուղղակի կապված էին Կոլումբիայի սոցիալ-քաղաքական խնդիրներին: Ես համաձայն չէի այն մեկնաբանությանը, որ տալիս էին կոլումբիացի գրողները այդ ամենին, նրանք բռնությունը ներկայացնում էին իրեն սպանվածների ցուցակ, իրեն փաստաթուղթ: Ես միշտ մտածել եմ, որ բռնության մեջ ամենաահավորը սպանվածների թիվը չէ, այլ այն սարսափելի հետքը, որ մնում է հասարակության մեջ, որն ամայանում է այդ մահերով: Այլ հանգամանք էլ կար, մի քիչ միստիկ, որ բնորոշ է բոլոր գրողներին ինձ ինձ հետաքրքրում էին ինչպես սպանվողները, այնպես էլ սպանողները: Ինձ շատ էին հուզում զոհերը, բայց և հետաքրքրում էր այն ոստիկանը, որ գալիս էր սպանելու: Ես հարցում էի ինձ՝ ի՞նչ է եղել այս մարդուն, ինչպես է հասել այս կյանքին, որ սկսել է սպանել: Բռնության նկատմամբ ես բոլորովին այլ հայացք ունեի. ուրիշները պատմում էին, թե մարդասպանները ինչպես են գալիս բնակավայր, բռնաբարում կանանց ու գլխատում երեխաներին, ես կշռադատում էի ծանր սոցիալական հետևանքների մասին ու սպանվածների ցուցակները մի կողմ էի թողնում:

Ես գրեցի «Գնդապետին ոչ ոք չի գրում» վիպակը, որտեղ գնդապետի վիճակը և ժողովրդի վիճակը հետևանքն են այն

բռնության, որի մեջ «ապրում» էր երկիրը: Նույնն է «Տարածամբ» վեպում, որի գործողությունները ծավալվում են մի գյուղակում, որով անցել է բռնությունների ալիքը: Ես փորձում էի պատկերել՝ ինչպիսին է դարձել այդ գյուղը և ցանկանում էի պարզ դարձնել, որ բռնությանն անհնար է վերջ դնել գյություն ունեցող վարչակարգում, որ բռնությունը չի մեռնում և ցանկացած պահին կարող է նոր պայթյուն բռնկվել: Ասելով, որ այդ թեմաներն ինձ հոգեհարազատ չեմ, ես խոստովանում եմ ամենադժվարը, այն, ինչ ինձ, իբրև գրողի, հուզում է, որովհետև ես զգում եմ, որ «Գնդապետին ոչ ոք չի գրում» վեպը, որ առավել մեծ հաջողություն ունեցավ, ամենաանկեղծ վեպը չէ: Գիրքը գրվել է խնդիրները հետազոտելու մտադրությամբ, որոնք ինձ այնքան էլ չեմ հուզում, սակայն ես գտնում էի, որ այդ խնդիրները պետք է արծարծել, որովհետև ինձ զգում էի պարտավորված: Ես հասկացա, որ ինձ հուզող այդ խնդիրների մասին չի կարելի գրել նույն լեզվով, որով գրված է «Տերևաթափը» և որով ուզում էի «Դարյուր տարվա մենություն»-ը գրել: Ես պիտի գտնեի մի լեզու, որը հարմար լիներ այդ պատմվածքին, և «Դարյուր տարվա մենություն»-ի ու մյուս գրքերի լեզվի տարրերությունը պայմանավորված է թեմաների տարրերությամբ: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր թեմա ունի իր լեզուն, որը պետք է գտնել: Այդ պատճառով չեմ կարծում, թե «Դարյուր տարվա մենություն»-ի լեզուն ի տարրերություն մյուս գրքերի ավելի հարուստ է: Պարզապես այդ գրքի նյութը այլ մոտեցում էր պահանջում: Եթե վաղը ես գտնեմ այնպիսի սյուժե, որը պահանջի այլ արտահայտչամիջոցներ, կփորձեմ դրանք գտնել հանուն առավել ներգործության:

Ս.Վ.Լ.- Քո վերջին վեպի վերջին գլխում քամու հորձանքով Մակոնդոն քշվում է երկինք և անհետանում է: Ի՞նչ կկատարվի առաջիկա գրքերում, հետևելո՞ւ ես Մակոնդոյի թռիչքին...

Գ.Գ.Մ.- Կկատարվի այն, ինչի մասին խոսում էինք արկածային վեպի հետ կապված: Ասպետի զլուխը կտրում են այնքան անգամ, որքան պետք է պատումին, և ես անհնար չեմ համարում Մակոնդոն վերակենդանացնելը՝ մոռանալով, որ

**քամին քշել է:** Որովհետև եթե գրողն ինքն իրեն չի հակասում, ուրեմն դոգմատիկ է, իսկ դոգմատիկ գրողը հետադիմական է: Այսինքն՝ եթե Մակոնդոն վաղն ինձ անհրաժեշտ լինի, քամին հանգիստ կվերադարձնի...

## Գյունտեր Վալրաֆ

# ՍԵՆՍԱՑԻԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ: ՄԱՐԴԸ, ՈՐ «ԲԻԼՂՈՒՄ» ՀԱՆՍ ԷՍՍԵՐ ԷՐ

Դատվածներ գրքերից

**Պարոն Կոյները հանդիպում է պարոն Վիրին՝ թերթերի դեմ  
պայքարի մարտիկին:**

- Ես թերթերի մեծ հակառակորդ եմ,- ասում է պարոն  
Վիրը,- ես զնդիանրապես թերթերի դեմ եմ:
- Այդ դեպքում ես թերթերի ավելի մեծ հակառակորդ եմ,- Ա-  
կատում է պարոն Կոյները,- ես այլ թերթերի կողմն եմ:

ԲԵՐՏՈՒԴ ԲՐԵԽԱԾ

## ՆԱԽԱԲԱՆ

Ես անընդունելի եմ համարում բռնության ու ահաբեկչության ցանկացած դրսևարում:

Ինչո՞ւ եմ այսպես սկսում: Այն պատճառով, որ երկրի ներսում, այս քաղաքական մքնոլորտում, ժողովրդավարության դիրքերից ցանկացած քննադատություն ենթարկվում է զրպարտչական այլափոխումների և համարյա թե հավասարեցվում է ահաբեկչության: Օրինակ, այն ժամանակից, երբ ես հանդգնեցի ներթափանցել բիլդյան խոհանոց, սույն թերթն արդեն երեք անգան ինձ անվանել է «ընդհատակյա կոմունիստ», որը նրա բառապաշտով հավասարագոր է «ահաբեկչին»:

Այս գրքում խոսքը նորից բռնության մասին է լինելու, բայց հատուկ բռնության՝ «հոգնոր», որը առանց թնդանոթների ու պայքուցիկների է գործում: Այն խեղում է մարդկանց մտքերն ու զգացումները, ոտնահարում մարդկային արժանապատվությունը: Ստեղծելով հատուկ կոմիտեների ու հետախուզական կազմակերպությունների լայն ցանց՝ այդ վտանգը չես վերացնի, ոչ մի շուրջկալ անակնկալի չի բերի «ենթագիտակցության ավագակներին», ոչ մի հատուկ ջոկատ ազատու-

թյուն չի տա առևանգված հոլյսերին ու սպասումներին, ոչ մի դատախազ իրաման չի արձակի նման ահարեկչության տարածողներին վերահսկելու համար: ԳԴՐ քրեական օրենսգիրքը, նույնիսկ ահարեկչության ու բռնության մասին նոր հոդվածներով լրացվելուց հետո, նման հանցագործություններ չի նախատեսում: Հանցակազմ, կարծես թե, չկա, հանցագործների մասին նույնիսկ խոսելն ավելորդ է: Եվ, ընդհանրապես, կա՞ն նրանք: Որքան ավելի մոտիկից էի ես նրանց ճանաչում, այնքան շատ էին ինձ տանջում կասկածները: Այդ մարդիկ, որ իրենց եղբայրներին էին զոհաբերում, ըստ էության, զոհեր էին հենց իրենք: Վիթխարի մեքենայի զոհերը, որ մեխանիկորեն ծնում է հոգևոր բռնությունը:

Ես չեմ պատրաստվում անուն առ անուն թվարկել նրանց, ովքեր, լինելով բիլլյան համակարգի զոհեր, շարունակում են աշխատել կոնցեռնի համար. մանրամասն չեմ նկարագրի նրանցից յուրաքանչյուրին ու չեմ փակցնի պիտակներ, որոնցից մինչև մաս չեն ազատվի: Ահա ինչու «Բիլլի» Հանովերյան խմբագրության գործընկերները և էլի մի խումբ մարդիկ մտացածին անուններ ունեն, իսկ շարադրված փաստերը լիովին համապատասխանում են իրականությանը: Ռեպլիկներն ու երկխոսությունները ես մասամբ գրառել եմ զրույցների ընթացքում, մասամբ վերարտադրել եմ հիշողությանը: Շարադրանքում ես դրանք մեջբերում եմ ուղղակի, թեպետ, ջանալով ընդհանրացնել, ոչ միշտ եմ բառ առ բառ մեջբերում:

## ԴԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Քիմա ես Հանս Էսերն եմ: 30 տարեկան: Ուսանել եմ հոգեբանություն ու տնտեսագիտություն, սրափ ինքնազնահատական ունեմ. ինչն ինչ արժի՝ լավ գիտեն, մինչև այժմ աշխատել եմ գովազդում, «Բիլլը» համարում եմ նոր կարիերայի մի աստիճան միայն:

Ինձ երաշխավորողը՝ Ալֆ Բրոյլը (28 տարեկան), նախկինում եղել է «Նոյե հանովերշե պրեսս» սոցիալ-դեմոկրատական թերթի աշխատակից: Թերթը դարձավ ոչ շահութաբեր, և Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությու-

Նը հրաժարվեց նրանից: Ալֆը մնաց առանց աշխատանքի, մինչև ականջները խրվեց պարտքերի մեջ (նրա կինը դեռ սովորում էր): «Բիլդն» այդ ժամանակ, առանց փող խնայելու, մեծացնում էր գործը՝ իր ձեռքն էր հավաքում տեր չունեցող շուկաները, որոնում էր նոր աշխատողներ, նոր ընթերցողներ: Ալֆն ինքն իրեն խոսք տվեց, որ կաշխատի «Բիլդի» համար՝ մինչև պարտքերը վճարի ու կինն ուսումն ավարտի: Նա իր խոսքի տերը եղավ՝ երկու տարի զբաղվում էր կեղտոտ աշխատանքով և վերջակետ դրեց, թեպետ «Բիլդ» համոզում էր մնալ և նույնիսկ առաջարկում էր, ընդ որում ոչ մեկ անգամ, շահավետ պայմանագիր՝ այնուամենայնիվ, տաղանդ էր, գրող, խմբագրության «առաջին գրիչը»: Ալֆն անդրդվելի էր՝ «Թեկուզ ամիսը 10000 մարկ վճարեն՝ ոչ: Ես առանց այդ էլ կորցրել եմ իմ նկատմամբ հարգանքի զգացումը»: Դիմա նա նորից գործազուրկ է: Ոչ ամեն ինչ և ոչ բոլորն են վաճառվում:

Ալֆի մտադրությունն ինձ «Բիլդում» տեղափորելն է: «Թող «Բիլդի» հնարավորինս մեծ թվով ընթերցողներ իմանան ճշմարտությունը, թե ինչպես են սարքում իրենց թերթը: Ինքս էլ աղավաղում էի փաստերը, նոր փաստեր էի հնարում, լրության էի մատնում մի մասը: Այդ ամենը ճշմարիտ կարող է նկարագրել միայն նա, ով ներքուստ կապ չունի այդ խոհանոցի հետ», -ասում է Ալֆը:

Դանովելու: Բեմերողերշրասե: Խմբագրության շենքը և տպարանը շրջապատված են բարձր պարսպով՝ կարծես ռազմական օբյեկտ: Ցուցանակներ՝ «Մուտքն արգելված է: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների համար»: Պահակ՝ շան հետ: Ընդունարան: Երեք հերթապահ: Պատվար: Դուն վրա՝ ավտոմատ փական: Նախազգուշական միջոցներ են ուսանողական նոր ցույցերի դեպքում՝ եթե խանգարեն տպաքանակը տպարանից հանել: Մեքենաները առանց որևէ մակագրության լուսաբացին տպարանից դուրս են գալիս (հիշեցնում են աղբատարներ, որոնցով արդյունաբերական կոնցենտրացիան սուսուփուս խուլ վայրեր են տանուն մնացուկները՝ վնասակար ու թունավոր թափոնները):

Հերթապահը մեզ անցագրեր է տալիս ու նշում է գալստյան ժամանակը: Պատճենը պահում են իրենց մոտ՝ հաշվետվության համար: Վերելակը բարձրանում է համարյա անաղմուկ: Վեցերորդ հարկում «Բիլիդի» խմբագրությունն է՝ մենք նպատակակետում ենք: Իմ զարկերակն արագանում է, ու կոկորդս էլ սկսում է չորանալ:

Հետագա ամբողջ գրուցի ընթացքում չեմ կարողանում ազատվել այն զգացողությունից, որ ինձ ուսումնասիրում են կողքից՝ կաշկանդված եմ, բացահայտնան վախից դողդողացող: Իրականում՝ ես վատ եմ խաղում՝ ձայնս կեղծ է հնչում, անբնական՝ ոչ. այս ամենը լավ վախճան չի ունենալու: Սակայն խմբագրության շեֆի վրա, հավանաբար, իենց դա է տպավորություն թողնում՝ նա, կարծես թե ավելի վատ դերասան է, քան ես: Բոլոր այդ շինուու անհեթեթությունները, մաշված մտքերը այստեղ լավ են ընդունվում:

- Իմ ազգանունը Շվինդման է: Խնդրում եմ նստել:

Խմբագրական սրահից, որտեղ ևս նա գրասեղան ունի, ավելի ճիշտ՝ դիտակետ, Շվինդմանը մեզ իրավիրում է իր առանձնասենյակը: Այստեղ ամեն ինչ անդեմ է, ստանդարտ՝ ինչպես կահույքի հավաքածուն ցուցափեղկում: Անձաշակ գրասեղանին «Ումի Մարտենի» շիշն է: Կողքին՝ գունավոր հեռուստացույցը:

Շվինդմանը նախ գրոհում է Ալֆին.

- Դե ինչ: Չե՞ք մտածում վերադառնալ աշխատանքի: Մեր առաջարկը դեռ ուժի մեջ է:

Ալֆը (վճռականորեն):

- Ոչ, շնորհակալ եմ, պարոն Շվինդման, նախ ուզում եմ ավարտել կրթությունս:

Նա ստում է, որպեսզի Շվինդմանին չգոգոի: «Բիլիդ» երկու տարի աշխատելուց հետո Ալֆն ի վիճակի չէ վերսկսել պարապմունքները: «Մեկ-երկու տարի է պետք, որ ուշքի գամ»՝ ասել է նա ինձ:

Ալֆը խոսքն «ինձ վրա է շրջում».

- Փոխարենն ուզում եմ ձեզ ներկայացնել իմ համադասարանցի Յանս Էսսերին: Կարծում եմ՝ նա կարող է ինձ փոխարինել:

Ծվինդման.- Դե ինչ, այդ դեպքում զեկուցեք՝ ով եք, ինչ եք...

Յանս Էստեր.- Պարոն Բրոյլից ես տեղեկացա, որ կարծես թե բացառված չէ ուժերս ձեր թերթում փորձելու հնարավորությունը: Գիտեք, ես ուզում եմ փոխել աշխատանքիս բնույթը: Մինչ այժմ ես աշխատել եմ գովազդի բնագավառում:

Ծվինդման.- Եվ ի՞նչն է ձեզ ժուռնալիստիկա մղել:

Յանս Էստեր.- Իմ կարծիքով՝ իմ ձիրքի առանձնահատկությունն ու իմ հակումները՝ ես գլխավորապես զբաղվում եի կարծ, տպավորիչ գովազդային տեքստեր կազմելով, ինձ թույլ կտան առանց մեծ դժվարության զբաղվել լրագրությամբ: Ինձ թվում է, որ «Բիլդը» նույն սկզբունքով է աշխատում, ինչ գովազդում է ոճի տպավորիչ հակիրճություն, մանրամասներով գլխավորի ընդգծում, զուսապ միջոցներով վառ կերպարների ստեղծման ունակություն: Որ նոր ապրանքները սպառող գտնեն, գովազդատուները կազմակերպում են մանրամասնորեն մշակված ծրագրեր, մոտավորապես այս կարգով՝ ա. տագնապ հարուցել, բ.վերհանել խնդիրը, գ.առաջարկել լուծումը: «Բիլդն» ինձ այս առումով մշտապես հիացել է:

Ծվինդման. (կարծես՝ խայջը կուլ է տալիս). – Յետաքրքիր մոտեցում է: Իսկ բուն լրագրությամբ ընդհանրապես զբաղվե՞լ եք:

Յանս Էստեր.- Դեպքից դեպք: Ֆիշտ է, մեծավ մասսամբ ես, այսպես ասած, կիսաֆարբիկատներ եի պատրաստում, հեռուստահաղորդումն անում էին ուրիշները, նրանք էլ հեղինակներ էին համարվում: Այնպես որ այդ առումով ես ժուռնալիստիկայում չկամ:

Ծվինդման.- Պատկերացնում եմ՝ ձեզ համար ինչքան վիրավորական է եղել: Դե ինչ, մենք ձեզ երաշխավորում ենք լավագույն պայմանները, եթե դուք իրոք լրջորեն մտնեք գործի մեջ և ձեզ նվիրեք գործին:

Յանս Էստեր.- Ինձ համար շատ կարևոր է խմբագրատանն անվերջ նստած չլինելը: Գրասեղանին կպած մնալն իմ գործը չէ: Ես ուզում եմ լինել իրադարձությունների կենտրոնում, դեպքի վայրից ռեպորտաժներ գրել, անընդհատ շփվել իրականության հետ: Եթե պետք է, «աղտեղություններն էլ կը չփորեմ»: Իմ կարծիքով՝ այդպես ամենահետաքրքիր նյութերը

կարող ենք հայթայթել: Ես ընդհանրապես սիրում եմ գրել այն մասին, ինչը գիտեմ, այն մարդկանց մասին, ում տեսել եմ անձամբ:

Ծվինդման.- Եթե մարդն ի վիճակի է թղթի վրա շարադրել այդպես ձեռք բերված նյութը, արդեն արժեքավոր է: Եվ քանի որ մենք մեր խոհանոցը գաղտնի չենք պահում, ամեն ինչ էլ կարելի է սովորել:

Հանս Էսսեր.- Բնականաբար: Թեկուզ սկզբում ֆինանսները սուլ լինեն: Ես, ի դեպ, հույս չունեմ, որ միանգամից ամեն ինչ լավ կլինի:

Ծվինդման.- Ոչինչ, մեկ-երկու ամսից կը նտելանաք: Մեր աշխատանքը ձեր միսն ու այրունը կրառնա, դուք ուղղակի այլ կերպ չեք կարողանա: Օրինակ՝ Ալֆ Բրոյլը՝ ինչո՞ւ հեռու գնանք: Սկզբում նա ընդվզում էր, իսկ հետո, եթե չեմ սխալվում, չորս ամսից ամեն ինչ կարգավորվեց Ալֆը հասկացավ ինչն ինչոց է ու սկսեց մեկը մեկից լավ նյութեր գրել: Բարձր մակարդակով:

(Ալֆը չկարողացավ «հաճոյախոսությանը» ճառագող ժպիտով արձագանքել):

Ծվինդման (ինձ՝ խրախուսանքով).- Դե ինչ. իրաշալի է, իսկ իհմա ճշտենք մի քանի մանրամասներ: Դուք ամուսնացա՞ծ եք: (Նա գրի է առնում՝ երկու երեխաներ: Անունը՝ Հանս Էսսեր: Տարիքը՝ շուտով երեսուն): Օրինյալ տարիք է... Յրաշալի է... (Գրի է առնում Հաննովերում իմ վարձակալած սենյակի հասցեն ու հեռախոսը): Ալֆ Բրոյլը կռահել է՝ մենք որոնում ենք մարդու, որը գրել գիտի: Ավելին՝ նա պիտի կարողանա փաստեր հայթայթել: Այդ իմաստով մեզ մոտ դուք իսկապես կարող եք գործի մեջ մտնել, ու՝ թափով: Եվ որքան արագ հասկանաք՝ ինչն ինչոց է, այնքան լավ:

Հանս Էսսեր.- Յիանալի է, ե՞րբ կարող եմ սկսել:

Ծվինդման.- Թերևս իմաստ ունի այնպիսի թենա գտնել, որին անհապաղ կարող եք ձեռնամուխ լինել: Դե դա խնդիր չէ: Կնտածենք: Իսկ այն, ինչ դուք մեզ պատմեցիք, խոստումնալից էր:

Հանս Էսսեր.- Հույս կա՝ ժամանակի ընթացքում հաստիքային աշխատող դառնալ:

Ծվինդման.- Անկասկած:

Հանս Էսսեր.- Բայց մի՞թե հաստիքները լրացված չեն:

Ծվինդման.- Կոնյունկտուրան փոխվում է: Նախ՝ ինչ-որ մեկը աշխատանքից դուրս է գալիս, թափուր տեղ է մնում, հետո էլ՝ մի մոռացեք՝ մենք անընդհատ ընդլայնվում ենք:

Հանս Էսսեր.- Եվ ի՞նչ շանսեր կան՝ հիսուն-հիսո՞ւն:

Ծվինդման.- Չեր բույլտվությամբ՝ ես չեմ ճշտի: Երբեմն դա շատ արագ է կատարվում: Օրինակ պարոն Բրոյլին մենք վաղուց ենք ցանկանում գնել, բայց նա անդրդվելի է: Իսկ մենք երկար ժամանակ դուրս բաց ենք պահում: Գուցե ձեզ հետ էլ այդպես ստացվի:

Հանս Էսսեր.- Այս պահին ոչ մի ակնկալիք չունեմ, ինչ-որ խնայողություններ էլ կան, իսկ կարիերա ես իրոք ուզում եմ այստեղ անել:

Ծվինդման.- Ինչպես հարկն է աշխատեք, ու բավարար կվաստակեք: Պարոն Բրոյլը վատ չէր վարձատրվում: Յաճախ հաստիքային աշխատողներն էլ այդքան չեն ստանում: Իսկ չարչարանք կա, մենք աշխատում ենք շաբաթը վեց օր, իսկ եթե պետք է նաև յոթ օր: Այնպես որ նկատի ունեցեք: Ի դեպ իսբագրության կեսն արտահաստիքային աշխատողներ են... Լավ, ի՞նչ թեմաներ եք նախընտրում:

Հանս Էսսեր.- Ընդհանրապես ես գտնում եմ, որ բոլորեր-յան էլ թեմաներ են. այսինքն՝ նյութ որտեղ ասես կարող ես գտնել: Գլխավոր խնդիրը՝ նյութն ընտրելը, ես հույս ունեմ այստեղ սովորել: Այդ պատճառով էլ չեմ ուզում կանխավ սահմանափակել ընտրությունը:

Ծվինդման.- Այնուհանդերձ, ի՞նչն է ձեզ առավել գրավում:

Հանս Էսսեր.- Մարդկային փոխհարաբերությունները: Այդ թվում՝ մանրիկ, առաջին հայացքից անկարևոր մանրամասները, որ, պատկերավոր ասած, ոտքի տակ ընկած են, բայց հաճախ դառնում են վճռորոշ՝ նայած ինչպես ես մատուցում: Իսկ «Քիլըն» ապրում է այդպիսի թվացյալ մանրութներով՝ բացահայտելով դրանց իրական նշանակությունը: Կարծում եմ՝ ես պիտի մանրամասները խորքով ուսումնասիրեմ, հաճախ հանդիպեմ այն մարդկանց, ում մասին մտադիր եմ գրել:

(Այս դատողությունների ժամանակ Շվինդմանը բարեհաճ և համաձայնությամբ գլխով էր անում):

Յան Էսեր.- Ես հոգեբանություն եմ ուսումնասիրել և մարդկանց կարողանում եմ ճանաչել:

Շվինդման.- Պատմեք ձեր մասին: Ուրեմն՝ ժամանակին դուք ստացել եք հասունության ատեստատ:

Յան Էսեր.- Միանգամայն ճիշտ է: Յետո ես կամավոր գնացի Բունդեսվեր և այնտեղ զբաղվում էի պատերազմ վարելու հոգեբանական մեթոդներով:

Շվինդման.- Պատերազմ վարելու հոգեբանական մեթոդնե՞ր՝ այ դա գործ է: Փայլուն է:

Յան Էսեր.- Դա ինձ հետագայում օգնեց համալսարանում մասնագիտություն ընտրել. ես ուսանում էի հոգեբանություն ու մասնակի էլ՝ տնտեսագիտություն: Յետո որոշ ժամանակ աշխատում էի հորս ֆիրմայում: Նրա մահից հետո գործն անցավ եղբորս և նա ինձ վճարեց ժառանգության իմ մասը: Յետո ես աշխատանքի անցա գովազդային գործակալությունում և միաժամանակ երկխոսություններ էի գործում հեռուստատեսության համար: Բայց այդ աշխատանքը օրավոր առավել քիչ էր ինձ գրավում՝ իմ գաղափարները հրապուրում էին հեռուստադիտողին, հաջողություն էին ունենում, իսկ իբրև հեղինակ, ես կարծես թե գոյություն չունեի: Բայց ճիշտ ասած՝ ես գուրկ չեմ փառասիրությունից:

Շվինդման.- Այ-այ-այ: Տարօրինակ է, որ հեռուստատեսությունն այդպես ճնշում է տաղանդներին: Մեզ մոտ բոլորովին այլ է: Ով նյութի տերն է, նա էլ ստորագրում է: Յան Էսեր՝ վաս չի հնչում: Կարծ ու հատու: Եթե հոդվածներն էլ այդպես լինեն, մենք կաշխատենք միասին: Ի դեպ, դուք ինչո՞ւ ուրիշ տեղ չեք գնացել, այլ հենց «Բիլդ»: Որովհետև Ալֆ Բրոյի հետ ծանո՞թ եք:

Յան Էսեր.- Ոչ միայն: Իմ կարծիքով՝ «Բիլդ» առաջնակարգ թերթ է, կարծում եմ այստեղ դժվարություններ չեմ ունենա գովազդից լրագրությամն անցնելիս, այստեղ ջանում են գրել կարծ ու պարզ՝ համարյա ամեն արտահայտության մեջ, ըստ էության, գովազդ կարող ես գտնել: Գովազդի մեջ էլ

ավելորդ բառեր չկան՝ տեղը քիչ է, թանկ արժե՝ նվազագույն միջոցներով առավելագույն արդյունքի պիտի հասնես՝ սպառողին գնումների տրամադրելով:

Ծվինդման.- Կեցցեք, պարոն Էսսեր: Տեսնում եմ, որ դուք փորձված մարդ եք: Եթե նաև խիզախ ու թեքն գրիչ ունենաք, որը հարկ եղած պահին անվրեա հարվածում է թիրախին, մնացածը աշխատանքի ընթացքում իրեն-իրեն կստացվի: Կարծում եմ՝ պիտի գործը սկսենք:

Հանս Էսսեր.- (անվստահ) Համենայն դեպս՝ փորձենք:

Ծվինդման.- Ինչ-որ թեմա կգտնեմ ձեզ համար առաջիկայում ու արագ կսկսենք: Դե առայժմ այսքանը:

Այսպիսով՝ ես պետք է ծանոթանամ «խոհանոցի» գաղտնիքներին, որպեսզի «անվրեա հարվածում թիրախին»: Եվ եթե «գործի մեջ մտնեմ», սարքեմ ու վաճառեմ նյութեր, շանս կա, որ ինձ «կգնեն»: Բառապաշարը՝ համարյա գանգստերական է: «Եւեք մի գործ կացնենք: Դարձիր բաժնետեր: Թե ստացվեց՝ իրեւ պարզ քեզ էլ կառնենք ավարի մեջ»: Եվ ընդհանրապես՝ տարօրինակ խոսակցություն էր, շատ տարօրինակ: Ոչ փաստարդեր, ոչ երաշխավորագրեր չեն հարցնում: Թեպետ, թերևս, այստեղ կա սեփական, բարձրագույն տրամաբանություն:

Խմբագրության մոտավորապես կեսը՝ արտահաստիքայիններ են: Ազատ, ինչպես թռչնակներ: Գալիս են բոլորից շուտ, գնում են բոլորից հետո: Իրավաբանական պայմանագիր չունեն: Ինչպես և արձակուրդի, սոցիալական ապահովության իրավունք չունեն, ցանկացած պահի կարող են հայտնվել փողոցում ու ոչ մեկին չեն կարող բողոքել: Նրանք անբողջովին խմբագրության շեֆի իշխանության տակ են և նրա բարեհաճությունից ուղղակի կախման մեջ: Նրանց միջև դաժան մրցակցություն կա:

Ծվինդմանն ինձ ուղեկցում է խմբագրական սրահի ժամանակավոր աշխատատեղ:

-Առայժմ տեղավորվեք Էլեոնորայի սեղանի շուրջ, Էղելտրառութի կողքին...

Ծվինդմանը աշխատակիցներին դիմում է «դու»-ով ու անուններով: Նրանք երբեք չեն համարձակվում նույն կերպ պատասխանել և հարգալից կոչում են «պարոն Ծվինդման»: Աչքի են զարնում ՔԴՄ-ի բազում կպչանները, որ ամեն տեղ են՝ սեղաններին, պատերին, սյուններին: Փոխարենը ՍԴԿ-ի ոչ մի ազդագիր չկա բոլորովին, թեպետ Ալֆի ասելով՝ այստեղ աշխատում են բոլորովին ել ոչ միայն ՔԴՄ-ի համակիրներն ու ընտրողները:

## **«ՈՒԺԵՂ ՔԱՍՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԶՈՒՐԸ ՏԱՇՏԻՑ ԴՈՒՐՍ Է ՑԱՅՏՈՒՄ»**

«Բիլդի» հիմքերի հիմքը գերադրական աստիճաններն են: Այն ամենը, ինչ կարելի է բնորոշել «ամենամեծ», «ամենափոքր», «ամենաաղքատ», «ամենահաստ» և համանման ածականներով՝ հենց դա է «Բիլդի» սենսացիան: «Գլխավորը,-մի անգամ ինձ ասաց Ծվինդմանը,-որ դուք ապահովեք նյութը»: Նա ինքը բոլորովին գուրկ չէ երևակայության թոհքներից և հանդես է գալիս բացառապես վերակացուի դերով՝ շրջում է սենյակում ու թմրկահարում «Գրեք, գրեք, գրեք»:

Իմ Հաննովերում եղած ժամանակ Ծվինդմանը միայն մի անգամ գրիչ վերցրեց: «Ոիգոլետո» օպերայի նոր ներկայացման գրախոսության մեջ (այլ թերթեր դրական տեսակետներ էին ներկայացրել) Ծվինդմանի խառնվածքը դրսևորվեց ամբողջ փայլով. «Երբ դերերգերը սովորում են մահակի տակ, ներկայացումը չի կարող անգույն չլինել»:

Այսպիսով, ես գիտեմ, թե ինչ պետք է անել: Եվ արդեն երկրորդ օրը ներկայացնում եմ «գերադրական աստիճան»՝ ամենաբարձր շենքը Հաննովերում: Ինչ-որ տեղ կարդացել են, որ բարձրահարկերում ապրող երեխաները հատկապես ագրեսիվ են, քանի որ խաղալու հնարավորությունից զրկված են: Աշխատանքային վերնագիրը ես նույնպես նտածել եմ՝ «Ինչպես են ապրում Հաննովերի ամենաբարձր շենքում»: Ծվինդմանը տեղնուտեղը հավանություն է տալիս իմ մտահղացմանն ու ուղարկում է նյութի ետևից:

Տեղվույն վրա պարզվում է, որ վերին հարկերում ապրուն են բացառապես երեխաներ չունեցող զույգեր, չամուսնացած կանայք ու տղամարդիկ: Ավելին՝ բնակարանների 40 տոկոսն ընդհանրապես դատարկ է: Շենքի շինարարության ժամանակ, կառուցել է ինչ-որ հոլանդական ընկերություն, ի դեպ, քաղաքաբետարանը բավականաշափ ֆինանսական գեղչեր է տրամադրել, բոլորովին հաշվի չեն առնվել բնակչության պահանջները: Բարձր հարկերը գերազանց բնակարաններով մի քանի տարի արդեն դատարկ են, իսկ բնակարանի կարիք ունեցող մարդիկ, հասկանալի է, ի վիճակի չեն գնել. 450000 մարկ գինը քչերին է հասու:

Եվ քանի որ շենքը համարյա թե բնակեցված չէ, շինարարական ընկերությունը ֆինանսական դժվարություններ ունի: Նա հարկադրված է տնտեսել և տնտեսում է նախ և առաջ «կողմնակի» ծախսերից՝ ինչպես ջեռուցումն ու փոքրիկ վերանորոգումներն են: Այդ պատճառով համեմատաբար նոր շենքը արդեն բավականին ողբալի վիճակում է:

Այս այսպիսին է իմ հավաքած նյութը՝ Հաննովերի ամենաբարձր շենքի իրական պատմությունը, բայց դա «Բիլդին» հարմար չէ: Եվ խմբագիրը ինձ նորից է ուղարկում այնտեղ, որ զրուցեմ շենքում ապրող հայտնի մարդկանց հետ: Ֆուլսբրուկստը տանը չէ, բախում են ֆոտոմոդելի դուռը, ում մասին «Բիլդը» մի անգամ արդեն գրել է: Իմ այցի առիթով նա հագել է ամենագայթակղիչ զգեստը և իր ընկերոց անդուլ վերահսկողության տակ նստում է բազմոցին՝ ամենագայթակղիչ դիրքով՝ հանկարծ ու «Բիլդը» որոշի նորից նրա լուսանկարը տպագրել: Չիշելով Շվինդմանի հորդորները՝ ես նրան հարցնում են, թե իրենց մոտ՝ վերևներում ինչ հետաքրքիր բան կա (քանի որ երեխաներ չկան): Ֆոտոմոդելի ընկերը (նրա խոսքերը հետո կվերագրվեն տանտիրություն) պատմում է, որ ուժեղ քամու ժամանակ երբեմն ճոճվում է զահը և գավաթները զնզգնգում են պահարանում: Այդ մարդը (բարձրաստիճան պաշտոնյան խնդրում է իր անունը չիրապարակել) շատ արագ ընկալում է ինչ է պետք «Բիլդին» և իմ հարցին՝ արդյոք քամուց ալիքներ չե՞ն առաջանում լոգարանի ջրում, պատասխանում է իհարկե:

Վերադառնալով խմբագրություն՝ ես նախապատրաստում եմ ընդարձակ սևագրություն՝ աշխատելով այնտեղ խցկել ինչոր տվյալներ իմ առաջին այցելությունից: Խմբագիրը կարդում է ու հայտարարում. «Գործն այսպես առաջ չի գնա՝ պետք է սկսել հակադրությունից... Ոչինչ, ժամանակի հետ կսովորեք»: Եվ ինձ ուղղակի քնարական սկիզբ է թելադրում. «Ահա այսպես էլ ապրում են Հանճովերի ամենաբարձր շենքում՝ ուժեղ քանուց դուրս է ցայտում լոգարանի ջուրը: Զեր ոտքերի տակ լույսերի կայծկլտացող ծովն է, իսկ գլխավերելում...»:

Չուրը ծածկվում է ալիքներով, «ջուրը դուրս է ցայտում լողատաշտից»՝ մեկ-երկու ու պատրաստ է, մի քիչ ուղղեցինք, մի քիչ հետուառաջ արեցինք ու ծշմարտացի պատմությունից դուրս եկավ բիլյյան նյութ՝ նյարդերը խտղտող ու տագնապեցնող: Եվ գերադրական աստիճանն է տեղում՝ ամենաբարձր շենքը: Եվ հակադրությունը կա՝ հերքիաբային տեսարան պատուհանից ու ջրով լցված լոգարան: Եվ գործող անձն է գերազանց՝ ֆոտոմոնել: Այս ամենը, այսպես ասած, թերային հենքի հիմքն է: Ի դեա՝ հակադրությունը ոչ մի դեպքում չի կարելի խառնել հակասության հետ. «Բիլդում» դա շատ արագ ես սովորում: Եթե, օրինակ, գրես՝ կառուցվել է քաղաքաբետարանի հաշվին, հարկատուների հաշվին, հաճախակի օգտագործում են մի խումբ հարուստ ցուցանոլներ, իսկ ընդհանուր առնամբ դատապարտված է դանդաղ քայլայման, ապա այստեղ առկա է բացահայտ հակասություն: Դա անթույլատրելի է. հակասությունը հարկադրելու է մտածել: Իսկ հակադրությունը ընդամենը տրամադրություն է ստեղծում:

**«Բիլդ» նաև տաղտուկի դեմ միջոց է, օգնում է մարդուն ձերքազատվել իրեն շրջապատող խելահեղ աշխարհում անօգնականության զգացումից»:**

(«Բիլդի» շպոհնգերյան ներքին օգտագործման վերլուծությունից)

Եվ այսպես՝ սյունակում հայտնվում է մաքուր ֆարս, և ցանկացած այլ թերթում, «Բիլդից» բացի, այլ հրապարակումների շարքում այդպես էլ կընկալվեր: ճշմարտությունը «Բիլդ»

համար չափազանց մռայլ է՝ ինչպես ինձ բացատրեցին, եթք առաջին անգամ խմբագրություն թերեցի իմ հավաքած նյութը Դանճովերի ամենաբարձր շենքի մասին:

## »ԱՍՐԴԸ, ՈՐ ՌՈՒՄԲ ԷՐ ՏԱՆՈՒՄ«

«Բիլդուն» այնպես չէ, ինչպես մյուս թերթերում, այստեղ բաժիններ չկան, չկան աշխատակիցներ, որ մանրակրկիտ խորանուն են բարդ ու մասնագիտական հիմնահարցերի մեջ: Այստեղ բոլորը գրում են ամեն ինչի մասին, և ինաստ չունի խորանալ այն հարցերի մեջ, ինչի մասին գրվում է, պետք է միայն «տեսնել նյութը», այսինքն՝ ցանկացած գնով գտնել ու «խաղարկել» ինչ-որ «հատիկ», թեկուզ զավեշտական: Գլխավորը բուն առիթը չէ, բուն իրադարձությունը չէ, այլ այն, ինչ դրանից կսարքի ճարպիկ ռեպորտյորը: Եթե սպանությունից, ինքնասպանությունից կամ դժբախտ պատահարից մղջավանջային մանրամասներ չեն շարադրում, խմբագիրը հարցնում է. «Որտե՞՞ն է նյութը: Ես նյութը չեմ տեսնում»:

Սարտի 11-ին նյութ կա. քաղաքում հայտնաբերվել է հինգ-իարյուր կիլոգրամանոց ռումբ, որ մնացել է պատերազմի ժամանակից: Ես մեկնում եմ դեպքի վայր: Սակրավորները՝ ռազմական ոստիկանությամբ շրջապատված, արդեն ռումբն ուղարկել են գորավարժարան՝ վնասազերծելու համար: Արգելափակոցի առաջ լրագրողների բազմությունն է, ոչ մեկին արգելված գոտուց ներս չեն թողնում: Իսկ ինձ համձնարարված է հարցագրույց վերցնել ռումբը տեղափոխսած վարորդից: Սուտենում եմ ոստիկանին ու ասում եմ, որ ես «Բիլդից» եմ, որ բոլորը, ասենք, գիտեն՝ ինչ ոգով ենք մենք իրադարձությունը լուսաբանում, և ի դեպ, մենք իհանալի հարաբերություններ ունենք տեղական իշխանության հետ, այնպես որ ավելի լավ է ինձ ներս թողնել, այլապես տիհաճություններ կլինեն... Ոստիկանները իրար խառնվեցին (ակնհայտորեն զանգահարեցին կայազորի պետին), և ահա ես արդեն շրջափակված գոտում եմ զնդ որում, նույնիսկ փաստաթղթեր չեմ ներկայացրել, միայն սպառնացել եմ իզոր «Բիլդով»: Ոստիկաններն ինձ տանում են ռումբի մոտ:

Վերջապես հարցազրույցը պատրաստ է: Մարտի 12-ին այն հայտնվում է թերթում՝ «Մարդը, որ ռումբ էր տանում. ոխկի համար մեզ լրացուցիչ չեն վճարում» վերնագրով: Նախնական տարբերակում ես հիշատակել էի, որ տարհանելով բնակչությանը վտանգավոր շրջանից, ոստիկանությունը չէր նկատել կիսախուլ պառավին, թեպետ ռումբը հենց նրա տան կողքին էր: Ավելին՝ տարհանման ժամանակ կինը պատուիանից դուրս էր նայում և նրան դարձյալ ոչ ոք չէր նկատել: Սակայն պարզվեց, որ դա տպագրել չի կարելի:

Կարծես թե պատմությունը լիովին «Բիլդի» ոգով է կարդալիս սարսառում ես: Բայց ինչպես ինձ հանրանատչելի բացարեցին՝ միանգամայն անթույլատրելի է ոստիկանությանը այդքան անշահավետ լույսի տակ ներկայացնել: Իսկ բուն հարցազրույցը՝ ես վարորդին հարցուել էի ոչ միայն այն մասին՝ թե ինչ էր զգում ռումբը տեղափոխելիս, այլև այն մասին, թե ինչն է ստիպել այդքան վտանգավոր գործով զբաղվել: Նախկինում և նա, և նրա հերթափոխի ընկերը այլ աշխատանք են ունեցել՝ մեկն աշխատել է «Ֆոլկսվագենում», մյուսը՝ ջեռուցման համակարգի վարպետ է եղել: Ոչ լրիվ զբաղվածությունը երկուսին էլ հարկադրել է լրացուցիչ աշխատանք գտնել՝ այդպես էլ նրանք հայտնվել են մահապարտների խմբում (ռումբերը վաղ թե ուշ պայթում են): Իհարկե, ես գրեցի այդ մասին, բայց նորից ջնջվեց: «Ոչ մեկին չի հետաքրքրում, թե այդ տականքներն առաջ ինչ էին անում»՝ ասաց խմբագիրներից մեկը:

Բայց գլխավորը դա չէ: Գլխավորը՝ ես առաջին անգամ ներքուստ զգացի «Բիլդի» հզորությունը: Առանց փաստաթղթերի, գործընկերներին աչքի առաջ ես թափանցեցի արգելված գոտի և ոստիկանությունը սուսուփուս ինձ ուղեկցեց ռումբի մոտ՝ միայն այն պատճառով, որ ոչ մեկը չցանկացավ հակասություններ ունենալ «Բիլդի» հետ:

## ճՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ Է, ԻՆՉ ԳՐՎԱԾ ԶԵ

ճշմարտությունը «Բիլդի» համար հաճախ ոչ տողերի մեջ է, ոչ էլ տողատակում: Այն պարունակվում է, ավելի շուտ, տողերի տակ՝ համենայն դեպք՝ տպագրված: Տպագրվում է այն, ինչ մեծացնում է տպաքանակը, նույնիսկ եթե դա ճշմարտություն չէ: Չի տպագրվում այն ամենը, ինչը չի նպաստում թերթի վաճառքին: Դասական սկզբունք է պարզ ու միաժամանակ կատարյալ իր կիրառության մեջ: Արագընթաց ժամանակը պահանջում է արագընթաց լրագրություն, չափազանց արագընթաց: Նյութերի կողմնորոշման տեսանկյունն ուղիղ 360 աստիճան է: «Բիլդի» հեղինակներն իրենց անվանում են «ունիվերսալներ»:

Դավատո՞ւմ են ընթերցողները «Բիլդի» նյութերին՝ էական չէ, քանի դեռ նրանք շարունակում են թերթը գնել: Որոշ ընթերցողների գայրալից նամակները անտեսվում են: Գործը լրցանում է, եթե «պարզունակները» զանգվածաբար են ընդվզում, եթե սկսում են լրջորեն կոտոշահարել:

Ինչպես պայծառատեսի մասին նյութի դեպքում: Եթե պայծառատեսներ չլինեին, «Բիլդը» նրանց կինարեր: Սեփական «պայծառատեսություններին» հավատացող մարդիկ ոչ միայն «Բիլդի» համար են ծնվել, այլև կազմում են նրա միան ու ոսկորը: Խոսքը մանր գեղձարար մի կնոջ մասին է: «Բիլդը» նրան վերցնում է իր հովանավորության տակ և զգացնունքային նկարագրում նրա գործունեությունը:

Այդ իրենից ոչինչ չներկայացնող կինը, «Բիլդի» կողմից խրախուսվելով, վճռում է, որ հասել է իր աստեղային ժամը և իր քանի տասնյակ միլիոն ժառանգությամբ կարող է դառնալ համաշխարհային մակարդակի արկածախնդիր: Նա բավականաչափ պայծառատես է, որպեսզի հասկանա, որ «Բիլդի» նյութն իր համար այն կապիտալն է, որից ինքը կարող է լավ շահել: «Բիլդի» ռեպորտաժն իսկապես նպաստում է նրա բիզնեսի առաջնաբացին և իիմք է ստեղծում մեծ մեքենայությունների համար: «Բիլդը» նրան օգնում է իրական «քաշ» ու «նշանակություն» ձեռքբերել:

«Պայծառատեսություններից» տուժած քաղաքացիները զայրացած բողոքում են: Խարվածներն ու հիմարացվածները գրոհում են խմբագրությունը: Ստեղծվում է անմիջական սպառնալիք, որ նրանք բարձրացնելու են թերթի մեղավորության տիած հարցը: Այս իրավիճակում ի՞նչ է անուն թերթի որակյալ խմբագիրը: Նա գործին այլ ընթացք է տալիս: Դովանավորությունից անցնում է մեղադրանքի: Նույն դերասանները խաղում են նոր ներկայացում. պայծառատեսը խարում է «Բիլդի» ընթերցողներին:

«Ամեն ինչ հրաշալի է: Այս ամենից մենք կպատրաստենք չորրորդ նյութը», -ասում է Շվինդմանը:

Երեք օր և կատակերգությունը նորից խաղացանկում է խաղում են նույնիսկ մեծ բեմի վրա՝ «Բիլդի» կենտրոնական շենքում: Վերջին օրը այն կոչվում է «ԿԸՀ-ն որոնում է մադամ Վիոնվիլին»: Պատմությունը ուռացվում է՝ ներառելով դատական կատարածուներին, և վերջապես, պայծառատեսը փրկվում է ԱՄՆ փախուստով: Մանր զեղծարարը հանկարծ վերածվում է հիմնարար հանցագործի: «Բիլդ» հանգիստ կարող է սխալվել, քանզի «Բիլդ» գիտի օգտագործել իր սխալները:

## ԱՏԻ ՖԱԲՐԻԿԱ

Կամաց-կամաց ես դադարում եմ ինքս իմ ճանաչել: Շուտով կլրանա «Բիլդում» աշխատելու իմ չորս ամիսը, իսկ գրքերը, որ իմ հետ բերել եմ, նույնիսկ գրադարակներում չեն տեղավորել:

Ես նկատում եմ, որ նույնիսկ չեմ կարողանում ընկերներիս հետ հաղորդակցվել. լուրջ ընդունել նրանց ասածները: Չէ՞ որ դա նյութ չէ: Ամեն ինչ ակնթարթորեն տարաբաժանվում է գործնական օգտակարության տեսակետից: «Բիլդի» համար օգտակարության:

Մեկ ամիս ապրելով Համնովերում, ես հանկարծ հասկացա, որ բավականին լավ ծանոթ եմ այս քաղաքին, նախկինում էլ ես մի քանի անգամ մեկ-երկու օրով, երբեմն էլ մեկ շա-

բարով եղել են այս քաղաքում: Բայց իհնա տեսնում եմ բոլորովին այլ աչքերով ու քաղաքն օտար է ինձ: Կենտրոնի հնագույն թաղանասերը, որտեղ մեկ տարի առաջ ուղղակի փողոցում իրապարակայնորեն կարդում էի ին նյութերը, բացարձակապես կորցրել են իրենց ծանոթ գծերը: Ես դժվարությամբ եմ ճանաչում նրանց, այն էլ այն ժամանակ, երբ հանճովերյան ծանոթներից մեկը հիշեցնում է: Քինա իմ առաջ նոր ու արհեստական քաղաք է:

«Նյութ հայքայթելու» հանձնարարություն ստանալով՝ մարդկանց ես նայում եմ բացառապես իբրև օբյեկտների, որոնցից ինչ-որ բան պետք է կորզեմ: Ես ժամանակ չունեմ լսելու նրանց տրտունջները կենցաղային դժվարությունների ու հոգսերի մասին: Ժամանակ չկա: Ուղեղս մեխանիկորեն ամեն ինչ դասդասում է «Բիլդի» համար արդյունավետ օգտագործման նկատառումներով: Ամեն մեկ-երկու ժամը մեկ՝ հեռախոսային հաշվետվություն Շվինդմանին: Նույնիսկ խոսրս ինձ համար օտար է՝ ես խոսում եմ իբրև թրծված, փորձառու, բիլդյան գրչակ: «Մի վախեցեք, մեզ կարող եք վստահել: Ամեն ինչ կլինի՝ ինչպես պետք է»:

Շրջապատող աշխարհը կծկվում ու քարանում է «Բիլդի» համար տաղտկագույն հոդվածիկում: Ինչ էլ կատարվի, գլխում առաջին հերթին ծնվում են վերնագիրն ու առաջին պարբերությունը: Նույնիսկ խիստ մասնավոր վեճում ես միանգամայն լրջորեն ասացի ընկերուիհու՝ «Բավական է այդ մասին: Մի՞թե դա նյութ է: Ինքը դատիր»: Յետագայում նա պատմում էր, որ այդ օրերին ես նման էի հիվանդի՝ չնչին առիթով զայրանում էի և ընդհանրապես ինքս ինձ նման չէի՝ կարծես իմ մեջ ինչ-որ վարակ կար: «Տիպիկ էսսեր: Եթե Վալրաֆը տեսներ, ամոթից գետինը կմտներ»՝ այս բառերը անընդհատ նրա շուրջերին էին:

Ապրիլի 21-ին, ես արդեն ամիսուկես աշխատում էի «Բիլդում», նա իմ ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ մասնավոր խոսակցության ժամանակ ես առաջին անգամ «Բիլդի» մասին ասացի՝ «մենք»: Նա փորձում էր իմ հետաքրքրությունը շարժել ինչ-որ սոցիալական թեմայով, իսկ

Ես առանց մտածելու, մեխանիկորեն նետեցի. «Մենք ննան բաներով չենք զբաղվում»:

Վախն ու ահաբեկումը՝ ահա ինչն է բնորոշ խմբագրության մթնոլորտին: Քեզ մշտապես ճնշում են բռնության սառցե ծիրանները և հարկադրումները, բռլորը կարծես թե ժպտում են միմյանց և խոսում են իրար հետ, բայց չես կարողանում ազատվել այն զգացումից, որ եթե մի քայլ այն կողմ անես, նույն վայրկյանին քեզ կամ գետին կտապալեն, կամ տեղդ ցույց կտան:

Նման իրավիճակում անհնար է ապրել, մնում է միայն «գործառնել»: Որպոտի նման: Գնում ես ու գնում՝ մեկընդմիշտ ծրագրված ուղղությամբ:

Ամեն ինչ տեղի է ունենում համարյա առանց քո մասնակցության, քանի որ քո հիշողության պարունակությունը կանոնավոր հաշվարկում ու ստուգում են: Քո գլխում Շվինդմանի տեղակայած ծրագիրն է. Շվինդմանին ծրագրում է Պրինցը, Պրինցին՝ Շպրինգերը, որ անտեսանելի ինչ-որ տեղերում է թևածում՝ ժամանակ առ ժամանակ մատնանշելով ուղղությունը:

Եվ քո հոգին անհաղորդ է. կենդանի մարդկանց նկատմամբ անտարբեր ես դառնում, դու նրանց վերստեղծում ես նորից՝ այնպես, ինչպես հարկ է համարում տեսնել «Բիլդը»՝ Շպրինգերին համապատասխան: Չե որ դու աշխատում ես զանգվածային պատրանքների ֆաբրիկայում: Նենգ, սուտ պատրանքների, որ հեռացնում են իրականությունից:

Իսկ «արարիչնե՞րը»: Նրանք, ովքեր սարքում են այդ պատրանքները: Նրանց համար բիլյյան նոթը ինքնահաստատման միջոց է: Առավոտյան թողարկման մեջ կարդում են սեփական քերթվածքները ու հոլովում են՝ տեսեք մենք ով ենք: Միլիոնավոր տպաքանակով տեքստը հագեցնում է նրանց այն գիտակցությամբ, որ նրանք կան, նրանք գոյություն ունեն: Տեսնո՞ւմ եք: Իմ ազգանունը կա թերթում, ուրեմն ես գոյություն ունեմ:

Նույնիսկ ես չկարողացա դրանից խուսափել: Շվինդմանի հրապարակային գրոհները ինձ հունից հանում են, տևական ժամանակով փչացնում տրամադրությունս: Իսկ եթե երբեմն հպանցիկ խրախուսում է, կարծես թե թևեր եմ առնում ու ճախրում են: Այնքան կարծ ժամանակ է անցել, իսկ ես արդեն սկսել եմ հարմարվել: Վախեցնող ախտանիշ է:

«Արագ բացվեց ձեր ձեռքը: Կարդում ես ձեր նյութը ու ոչ մի հարց արդեն չի ծագում», -ասում են ինձ: Ու ես, չգիտես ինչու, դա արժանիք եմ համարում, նույնիսկ իրճվում եմ: Իբրև Յանս Էսսեր: Թեպետ իրականում շահում է միայն Վալրաֆը՝ ստանալով Շվինդմանի աջակցությունը, ես, գուցե, կարողանամ տեղափոխվել Յամբուրգ՝ գլխավոր խմբագրություն:

Բացահայտվելու վախն ինձ ուղեկցում է ամենուր, նույնիսկ քնած ժամանակ: Ինձ անընդհատ թվում է, որ որևէ խորանանկ որոգայթի մեջ կընկնեն կամ էլ իմ դուստր ինեսը հանկարծ կներխուժի խմբագրություն ու գիրկս ընկնելով՝ կբացականչի. «Ողջույն, Գյունտեր»:

Բացի այդ ես վախենում եմ կորցնել զգոնությունս ու պատահաբար ներկայանալ Վալրաֆ՝ հեռախոսազրույցում կամ ծանոթանալիս:

Երբ ինձ քաղաք են ուղարկում՝ ես դուրս եմ թռչում ասես բանտից: Սկզբում մտածում էի, որ շահում եմ «Բիլդի» հետ խաղում, բայց իհմա առավել հակված եմ կարծել, որ «Բիլդն» ինձ հաղթում է:

### *Օրագրից.*

Այնուամենայնիվ, ի՞նչն է փոխվում: Տեղի են ունենում ինչոր իրադարձություններ, որոնց դու մասնակցում ես, և կամապահամա ինչ-որ բան էլ կաշում է քեզ ու պետք չէ ձևացնել, թե առաջվանն ես մնում: Ինչ-որ բան կառչում է քեզնից ու քեզ աղտոտում: Ինչպես ծխելիս. մոլի ծխողին, որ երկարամյա սովորությունից հրաժարվել է, շատ երկար ժամանակ է պետք մարմինը թույնից ճաքրելու համար: Այստեղի վարակն էլ է ներծծվում ու՝ շատ խոր: Ուրեմն առողջանալու համար էլ երկար ժամանակ է պահանջվելու: Ի՞նչն է փոխվել: Յավանաբար՝ այս ամենից հետո դու դաշնում ես մի քիչ ավելի հաստակաշի, ստոր, որոշակիորեն կորցնում ես նախկին եռանդդ, ինչ-որ բաներ ընկալում ես արդեն ոչ այնքան հուզական և եթե առաջ ինչ-որ իրադարձություններ ու արարքներ քեզ սարսափեցնում էին, իհմա անտարբեր ես դաշնում: Դա, ինչպես ասվում է, նյութ չէ:

Ես զգում եմ, որ այս անհոգի մեխանիկական ծովահրեշը բռնել է ինձ ու ճգնում է իր շոշափուկներով, կամազոկում է, հարմարեցնում իրեն: Կարծես թե ես որոշել եմ թմրամոլության մասին նյութ գրել, և ինչպես պետքն է դերի մեջ մտնելու համար, ինքս սկսել եմ ներարկվել: Կիաջողվի՝ անվնաս դուրս գալ այս պատմությունից: Դանուն զգուշության ես ժամանակ առ ժամանակ հրաժարվում եմ «սպեղանիից»՝ ասում եմ, որ հիվանդ եմ, բարեկամներիս հետ պետք է հանդիպեմ քյոլնում կամ Դամբուրգում, ովքեր տեղյակ են իմ գաղտնիքին, թեպետ հիանալի գիտեմ, որ նրանցից շատերը ի վիճակի չեն՝ հակառակ խոստումների, լեզուն ատամների տակ պահել: Բայց նույնիսկ դա ինձ չի կանգնեցնում, և իիմա, երբ ամեն ինչ անցյալում է, ես անկեղծորեն ուրախ եմ, որ այդքան շատ մարդ գիտեր ամեն ինչ և, այնուհանդերձ, ամբողջ չորս ամիս այն կողմը ոչինչ չէր կասկածում՝ ոչ ոք ինձ չդավաճանեց փողի կամ կարիերայի համար:

Դուլիսի 22-ին օրվա երկրորդ կեսին համբուրգյան մի բարեկամ Գյումտեր Վալրաֆին հեռախոսով հաղորդեց, որ պատկերազարդ ամսագրերից մեկում տեղեկություն է հրապարակվել, թե Վալրաֆն աշխատում է «Բիլդում» Դանս Էստրի անվան տակ: Ծարինգերյան կոնցենտրացիոն արոեն ամեն ինչ գիտեն: Վալրաֆը հարկադրված էր դադարեցնել իր փորձերը:

## «ԲԻԼԴԻ» ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ՄԻՆՉԵՎ ՐՈԱԺԱՐՈՒՄ

### ԲԻԼԴՅԱՆ ԽՄՐԱԳԻՐՆԵՐԸ ՊԱՏՍՈՒՄ ԵՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԵՍՏԱՍՈՅԻ ՍԱՍԻՆ

#### ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ

Այն բանից հետո, ինչ ես Դանս Էստրի անվան տակ աշխատում էի հաննովերյան «Բիլդում», առավել ու առավել մեծ թվով լրագրողներ են պատրաստակամություն հայտնում խորհուրդներով, տեղեկություններով, այս ու այն որոշակի դեպքերի նկարագրությամբ օգնել ինձ իմ բացահայտումնե-

րում: Ոմանք բառացիորեն խոստովանում են, թեպետ ես ի զորու չեմ թողություն տալ նրանց մեղքերին: Ոմանք էլ բացահայտորեն անցել են մեր կողմը և ակտիվորեն հանդես են գալիս իբրև «Բիլդին» մերկացնողներ: Նրանք շարունակում են համագործակցել Շարինգերի հետ, որպեսզի հնարավորություն ունենան ապացուցելու թերթի գործունեության հակաօրինականությունը, օրագրեր են վարում ու փաստական նյութեր են հավաքում: Նրանցից մեկը հրատարակչությունում նույնիսկ բարձր պաշտոն ունի: Նա պահպանողական է և հիմնականում քաղաքականապես համաձայն է Շարինգերի հետ, սակայն ավելի ու ավելի շատ է տառապում կասկածներից և վաղուց արդեն հրաժարվել է բիլդյան լրագրության հանցավոր մեթոդներից: Դիմա նա նախապատրաստում է իր «հեռանալը», որպեսզի հետո հրապարակի տպավորությունները, որ կուտակվել են «Բիլդում» աշխատելու տարիներին:

«Բիլդի» խմբագրությունները, ավելի ճիշտ, թերթի տարբեր խմբագրությունները վաղուց ի վեր դադարել են լինել միակամ կեղծարարներ կամ ամոթն ու պատկառանքը կորցրած տեքստագիրների ու լուսանկարիչների խմբակներ, որոնց հերիք է «նյութ» ճարելը, իսկ մարդկային արժանապատվության ու մարդկանց անձնական կյանքի վրա խորապես թքած ունեն: «Բիլդի» առավել մեծ թվով աշխատակիցներ՝ հաստիքային ու արտահաստիքային, սկսում են գիտակցել, թե ում համար են աշխատում ու ինչ հանցավոր նպատակներով են իրենց օգտագործում: Նրանցից ոնանք համաձայնել են պատասխանել իմ հարցերին: Բայց հասկանալի պատճառներով ես չէի կարող նրանց միանգամից հավաքել ու խմբակային հարցագրույց վերցնել: Մեր օրերում, եր նաև լրագրողներն են վախենում կորցնել աշխատանքը, այդ մարդիկ չէին ուզում ոհսկի դիմել՝ հանկարծ ու գործընկերներից ինչ-որ մեկը, գուցե նույնիսկ անզգուշաբար, նրանց մատնի: Այս հարցագրույցը ես հավաքել եմ բազում առանձին գրույցներից: Միևնույն հարցին հաճախ պատասխանում են մի քանի մարդ: Պատասխանում են անանուն, որպեսզի բիլդյան լրտեսները, իսկ նրանց հաստատ հետքի վրա ուղղողելու են, ոչինչ չգտնեն: Տարբեր մարդկանց պատասխանները աստղանշված են:

**Փոխվե՞լ է ինչ-որ բան խմբագրությունում, ավելի ճիշտ՝ խմբագրություններում, «Բիլդի» մասին իմ երկու գրքերի լույսընծայումից հետո: Այս հետաքննությունը ինչ-որ արդյունք տվե՞լ է:**

Այն էլ ինչպես: Երբ հայտնի դարձավ, որ Յաննովերում աշխատել է «Յանս Էսսերը», Յամբուրգում ուղղակի խուճապ էր: Աղմկում էին «Վալրաֆը ստում է» շարքի մասին: Դե դա բոլորին է հայտնի: Իսկ զիսավոր փոփոխությունը՝ թերթը դարձավ առավել զգուշավոր, նույնիսկ գրեթե վախսուտ: Օրինակ՝ ընտանեկան կյանքի ու ամուսնալուծությունների մասին պատմությունը՝ առաջ ցանկացած ասեկոսեի ետևից էին ընկնում, ով ինչ կարող էր՝ գրում էր: Ղեր յուրաքանչյուրն էլ, ում ձեռքը տեքստը ընկնում էր, ինքն էր ինչ-որ բան ավելացնում: Յիմա դա անհնար է: Ղեկավարությունը փաստաթղթեր է պահանջում: Յաճախ, նույնիսկ եթե իրական պատմություն է, մեկ փաստաբանի վկայությունը բավարար չէ: Եթե նյութը փաստերից աղքատ է, հերոսին գաղտնագրում են, օրինակ՝ Սյուզաննա Բ-ն Ֆրանկֆուրտից, իսկ այնտեղ Սյուզաննաներ որպան ասես:



Ղետևանքներ եղան և զիսավոր խմբագրությունում, և տեղերում: Սկզբում ռեպորտյորները նույնիսկ ինքնավստահությունն էին կորցրել՝ իսկ եթե նյութը տապալվի<sup>9</sup>: Յիմա ավելի շատ հորետեսությունն է իշխում: Յատկապես եթե Յամբուրգից ինչ-որ կարևոր անձ հարցում է ուղարկում՝ իսկ մենք մարդկանց հարցումներ արե՞լ ենք: Ունե՞նք որոշակի լրատու: Առաջներում մի ակնթարթում լուն ուղտ էին դարձնում, իսկ իիմա հակառակը՝ վերաապահովագրվում են՝ ցանկացած մանրութիւ համար փաստաթղթեր ներկայացրու: Մի խոսքով նողկալի է: Բացի այդ՝ մրցակցությունն է մեծանում, ես նկատի ունեմ տեղերում: Սեփական նյութի շուրջ ժողովուրդն ավելի շատ լրում է: Նույնիսկ լրատուների համար կրիվ է գնում: Մեզ մոտ մեկը կա, որ լուրերի համար սովորական վճարից բացի

ոստիկանության լրատուներին կաշառք է տալիս, իսկ իր այդ ծախսերը փոխհատուցում է տաքսիների ու հյուրասիրության հաշիվների կեղծումով։ Իմ կարծիքով՝ խմբագիրը գիտի, բայց լրում է. նյութ լինի, մնացածը՝ օ’քեյ է։

■  
Ի՞նչ փոխվեց։ Մենք զգուշավոր դարձանք, իսկ թերթը հանդարտվեց։ Ավելի շատ նյութեր են մեռնում սաղմնային վիճակում։ Լրատուներն են պակասել, որոնումներն են դժվարացել։ Բոլորովին վերջերս գործընկերս պատմում եր, որ մերոնցից մեկը, նյութ հավաքելիս, ինչ-որ տանտիրուիու հետ է զրուցել և որոշել է նրա վրա ճնշում գործադրել՝ դե «Բիլդի» համար է ու նման բաներ։ Մեկ էլ տանտիրուիու դպրոցական որդին է մոտեցել՝ Վալրաֆի գիրքը ձեռքին ու ասել է. «Մենք ամեն ինչ գիտենք։ Նման դեպքերը հիմա հազվադեպ չեն»։

■  
«Բիլդ» ոչ միայն զգուշավոր է դարձել նյութի ճշգրտության առումով։ Թերթը հիմա ոչ միշտ է առաջ նետվում։ Օրինակ՝ մի քանի շաբաթ, թերևս մի ամիս, խմբագրությունում ընկած էր մի լուր, որ Վերջիվերջո տպագրվեց առաջին էջում՝ հենց կտրվածքի վրա։ «36 տարվա ամուսնությունից հետո Խը («Բիլդում» Բոննի քաղաքագետի անունը լրիվ տպագրվել է, բայց այստեղ ամիմաստ է կրկնել) տեղափոխվել է սիրուիու մոտ»։ Լուրը թերի նման ընկած էր՝ մինչև մեկ այլ թերը չտպագրեց՝ միայն այդ ժամանակ մենք մերը տպագրեցինք։

**Այդ զգուշավորությանը, այդ նոր մոտեցմանը որևէ հիմնավորում տրվո՞ւմ է։ Խմբագիրները հատուկ գրավոր հրահանգներ ատացել են։**

Պաշտոնապես ոչ մի բացատրություն չի տրվում՝ ոչ բանավոր, ոչ գրավոր։ Փոխվել է ու վերջ։ Եվ եթե խմբագիրներից մեկը հարցնում է. «Ինչո՞ւ է իմ հոդվածը մնում այնքան, քանի դեռ մրցակից թերթում համանման նյութ չի տպագրվում»,

նրան պատասխանում են. «Մենք մեր թերթն ենք անում»: Ուղղակի թևավոր խոսք: Բայց բոլորը գիտեն, որ դա այդպես չէ: Այն ժամանակից, ինչ Պրինցին փոխարինեց Հոտե Ֆուստը, ավելի վատ է դարձել: Ֆուստը շատ անվճռական է: Ակնհայտորեն՝ չափազանց երկար է երկրորդական դերերում եղել, նրա փոխարեն ուրիշներն են վճիռներ կայացրել, և հիմա, իհարկե, չի ուզում սիսալվել: Վերջիվերջո՞նա ևս գլխով է պատասխանատու: Այդ պատճառով էլ մանրամասն հաշվետվություն է պահանջում ցանկացած նյութի մասին, իավաքում է իր սեղանին և միայն այն ժամանակ, երբ ամեն ինչ հավաքում է, նոր վճիռ է կայացնում: Ինչ վերնագրերին է վերաբերվում, վերջին խոսքը Անդրեա Յանգենայստերինն է: Առաջ նա գլխավոր ռեպորտյորն էր, հիմա գլխավոր խնճագրի տեղակալը:

### **Այդ վիճակում «Բիլդը» աշխատողների պակաս չի՝ զգում:**

Նոր կադրերի հարցը դժվար է: Թեպետ լավ են վճարում. ուրիշներից շատ ավելի՝ կուլուարներում դա կոչվում է հավելավճար կեղտի դիմաց, բայց գործը առաջ չի գնում: Ում ասես չեն վարձում՝ նախկին ոստիկանների, նույնիսկ մի նախկին թմրադեղեր վաճառողի և մեկ էլ գենքի առևտրով գրառվողի: Այդ, այսպես կոչված, լրագրողների մի մասը գրիչ բռնել էլ չգիտի, բայց նրանց լսում են, նրանք, միևնույն է, իրենց նյութով մեկնում են, նրանց անունները բացահայտորեն գրանցված են հատուկ ծառայությունների վճարումների ցուցակներում: Եվ հակառակը՝ սահմանադրության պաշտպանության գերատեսչության պաշտոնյանները՝ օրինակ Լոխատեն Շանբուրգից, բոլոր լծակներով ճնշում են գործադրում Շարինգերի վրա:

Այդպիսի կադրերը հիմնականում գրել չեն կարողանում: Նշանակում է գրելու աշխատանքը պարտադրում են այդքեսիննալներին: Մի անգամ չէ, որ գրամեքենաները թռել են դեպի պատը, երբ բուն նյութը լիակատար հիմարություն է եղել: Այդ պատճառով ծայրահեղ թշնամական նթնոլորտ է հաստատվում: Խևկ եթե բաժնի վարիչը կամ մասնաճյուղի ղեկավարը գալիս է ու ասում է. «Ինձ մարդիկ են պետք», նրան պա-

տասխանուն են. «Գնա ու գնիր»: Իսկ որտեղ և ում՝ չեն ասում: Փող կա, բայց մարդիկ չեն գալիս: Եվ նախկինում «Բիլղում» աշխատածներին էլ այդքան հեշտ չէ մոտենալը: Կասկածամ-տությունը խմբագրությունում այնքան մեծ է, որ ամեն ինչ զե-կուցվում է ղեկավարությանը:

Իհարկե, լուրեր էին տարածվել, որ գլխավոր խմբագրու-թյունում ամեն ինչ գրանցվում է: Որ հեռախոսից և ում ես զան-գահարել՝ միշտ կարելի է պարզել: Յամարյա բոլորը կարծում են, որ հեռախոսային խոսակցությունները գաղտնալսվում են: Իսկ թե որքան է մեծ կոնցեռնի իշխանությունը, միանգամից տեսանելի է դառնում, երբ գործընկերներից որևէ մեկին ներ-կայացնում են քաղվածքներ իր սեփական քանկային հաշվից՝ կարմիր նշումներով, որը նշանակում է, որ թերթում աշխա-տանքի ընդունվելիս նա ճշգրիտ պատասխաններ չի տվել պարտքերի մասին հարցին: Յավելեք, որ աշխատանքի ըն-դունվելիս թեկնածուն բուժիանձնաժողով է անցնում, ընդ ո-րում՝ ստուգում են ոչ միայն այդ օրվա առողջական վիճակը:

Բացի այդ, թեկնածուների նկատմամբ ևս սահմանվում է հսկողություն՝ համենայն դեպս Յանս Էսսերի դեպքից հետո: Պաշտոնական լիազորություններով մարդիկ հարևաններին հարցեր են ուղղում բարեկամների, մեքենայի, սովորութների մասին: Կարծես «Բիլղը» ոչ ավել, ոչ պակաս պետական հաս-տատություն է: Իսկ իմանալով այդ բաների մասին՝ ոչ ոք աշ-խատել չի ուզում:

Ղեկավարությունն օր առ օր ավելի նյարդային է դառնում: Նրանք արդեն իրար էլ չեն հավատում: Առաջ անընդհատ աֆորիզմներ էին շրայլում, իսկ հիմա հավաքվում են երեք-չորս հոգով և համարյա չեն խոսում: «Թշնամին ականջ է դնում»՝ սկզբունքով:

Եվ Շպինգերի իրավաբան ֆավորիտուհին էլ իր տաճուլ տված գործերի համար պատասխան է տալիս արդեն. նա խառնված վազվագում է խմբագրությունում՝ գլուխը կորցրած: Բոլորովին վերջերս նա ներկայացնում էր կոնցեռնը համ-բուրգյան զանգվածային տեղեկատվության օրերին և իրա-պարակայնորեն տապալվեց: Երբ իրապարակախոս երիխ

Կուրին, զեկույցով հանդես գալով, խոսեց այն մասին, որ «շուկայում գերիշխանության տեսակետից շարինգերյան կոնցեռնի դիրքերը առավել կասկածելի են դառնում», նա գրգրված վեր թռավ, իսկ խոսափողը և հայտարարեց, որ պաշտոնապես բողոքում է կոնցեռնի անվան հիշատակնան դեմ «պոռնկության» հետ կապված: Եվ ի լրումն՝ պահանջեց, որ բանավեճը վարող Հյոֆերը պաշտոնապես դատափետի Կուրիին:

Դահլիճում տիրեց զարմացած լոռություն, հետո ինչ-որ մեկը բացականչեց. «Ողջուններ Ֆրեյդից»: Բայց նա հիմար չէ, առաջ բավական ազատական հայացքներ ուներ և նվազագույնը ենթագիտակցորեն փառահեղ հասկանում է, թե ում է վաճառվել:

Այն ժամանակից, ինչ «Բիլդի» աշխատակիցներն էլ են հայտնվում դատարաններում, այն ժամանակից, ինչ, չնայած Ռենատա Դամի բոլոր խուսանավումներին ու գիգագներին, «Բիլդն» արդեն ապահովագրված չէ դրամական բարձր տուգանքներից և դատական հայցերից, թերթը ստիպված է հայտարարություն տալ՝ իրավիրելով նոր աշխատակիցներ, բայց միայն աղք ստանալով: Վեց կամ յոթ թեկնածուներից առաջ գոնե մեկը լրագրող լինում էր, որը, ծիշտ է, վաղուց արդեն մասնագիտությամբ չէր աշխատում: «Վամպիրների» գործից հետո տղերքն արդեն լրիվ պոչները քաշեցին: Ո՞վ կցանկանա հազար մարկ տուգանք վճարել և դեռ դատվածություն ստանալ: Դե տեսեք՝ Լոտար Շինդլբեկին գրավոր ներկայացրին «քարցնողի» մեղադրանք, հիմա նա համբուրգյան խմբագրությունում լրիվ սսկվել է: Յիմա պարոն խմբագիրը գրում է միայն արխիվային նյութի վրա և կենցաղային թեմաներով, օրինակ՝ հեծանիվների գողության մասին, և բոլորը նրան սիրում են: Եվ նորմաները հիմա նա պիտի կատարի բոլորի ննան: Ու տես, որ կատարում է: Իսկ եթե նրան Դաշնային դատարանն էլ դատապարտի, ապա, թերևս կորցնի աշխատանքը «Բիլդում»: Ընդ որում, Ֆրանկֆուրտում աշխատող այդ մարդուն, որ խրվել էր «Վամպիրների» գործով, Քաններյան սկանդալից հետո արդեն փորձաշրջան էր նշանակված:

Մյուս կողմից Շինդլբեկի իրավիճակը բավականաշափ բնորոշ է կոնցեռնի համար: Առաջներում նման մեկից երկու րոպեում կազատվեին: Քիմա Շինդլբեկը չի ցանկանում երկարամյա աշխատակցին փոխատուցում վճարել: Ավելի էժան կնստի, եթե նրա հետ հաշիվները սկզբում դատարանը մաքրի: Այդ ժամանակ կարելի է ասել. դուք հասկանում եք, չէ՞ և աշխատանքային վեճերի գծով դատավորն էլ ընթանում կվերաբերվի փոխատուցման չափին: Իհարկե, բոլորն էլ դա հասկանում են ու նախընտրում են իզուր մեջտեղ չընկնել:

### **Եվ դա զգացվո՞ւմ է ամենուր:**

Միանգամայն ճիշտ է: Առաջ ինչպես էր. գնում ես «քեմայի» ետևից, բարի եղիր առանց նյութի չպերադառնալ: Դուրս կնետեն շքամուտքից՝ հետնամուտքից մտիր: Խնճագրություն զանգել էլ պետք չէ, որ, իբր, վրնդեցին, որովհետև կպատասխանեին՝ «Այստեղից էլ դուրս կնետենք»: Իսկ իհնա, եթե ինչոր մեկին վրնդել են, և նա ծեծված շան նման այդ մասին հեռախոսով գեկուցում է, պատասխանում են՝ «Ինչ արած, արի տեսնենք»: Բոլորի տոնը իհնա չեզոք է ու գործնական: Նույնիսկ նորությունների բաժնի վարիչ Շայնց Ջյունդերը իհնա հազվադեպ է նետում իր «ապուշները»՝ հեռախոսով խոսելիս: Նա ընդհանրապես նոր հեռախոսափողերի աբոնենտ ուներ, որովհետև արդեն հազար անգամ փոխել էին նրա խոսափողերը՝ ամեն խոսակցությունից հետո այնպես էր խոսափողը նետում, որ սարքից հիշողություն էր մնում: Բայց դա իհնա արդեն անցյալ է: Որովհետև եթե նրանք ասեն. «Գնա գրողի ծոցը», մի գեղեցիկ օր նրա բախտն արդեն չի բերի:

### **Իսկ լրատուները, ինչ է, չե՞ն բացահայտվում:**

Նայած՝ որ: Մարդիկ, որ առաջ ասում էին. ես սա «Բիլդ» կիսցեմ, իհնա աշխատում են թերթից հեռու մնալ: Չափազանց շատ կամուրջներ են այրել իրենց ետևից: Քիմա առավել շատ են այնպիսինները, ովքեր հարևաններից, հարազատներից, գործընկերներից իհնացել են՝ ինչի են հանգեցնում բիլյան պատմությունները:

## **Իսկ ականավոր քաղաքական գործիչները:**

Եթե նայեք «Ինչո՞ւ եմ ես «Բիլդ» կարդում» կամ «Ի՞նչ է ինձ «Բիլդ» տալիս» խորագրերը, անմիջապես տեսանելի է դառնում, թե ինչ է կատարվում: Ոճանք դիտմամբ են «Բիլդին» տրվում օրինակ մադամ Շեելը իր քաղցկեղի բուժնան դեղով ու ամուսնյակով: Նա՝ այդ տիկին դոկտորն իր քաղցկեղով մեզ մոտ՝ ինչպես շրջազգեստով Քյոնլեհները: Բայց դա հոգեցունց նյութ է ապահովում, իսկ քաղցկեղի դեմ պայքարի ընկերությունը մեկ էլ տեսար ժառանգություն շահեց: Իսկ նրա անուսինը «մանրից» խնբագրություն է բերում համաժողովրդական խաղի՝ գոլֆի ու համաժողովրդական ընպելիքի՝ շամպայնի գովազդը: Նրա հետ կապը պահում է պարոն Բիլգեսը: Նրանք ընկերներ են վաղուց՝ դեռ բոննյան ժամանակներից, երբ Շեելը, փաստորեն, իրենից ոչինչ չեր ներկայացնում:

## **Իսկ ի՞նչ է ձեռնարկում թերթը:**

Պատրաստվում է վերանայել նպատակային հրահանգները: Վերակողմնորոշվել դեպի երիտասարդները, որոնք կորցնում են «Բիլդի» նկատմամբ հետաքրքրությունը: Նոր կուրօքեր ստեղծել: Մի խոսքով՝ «Բիլդ» մտադիր է երիտասարդանալ: Ահա և զնում է, օրինակ, նախագահ Կարստենսի զարմիկին: Նրա անունը Նիկո է, նա ժամանակ առ ժամանակ վերջին էջում ձայնապնակների մասին երիտասարդական խոսելածով նյութեր է տալիս:

Տեղերում մենք շատ բան չենք կարող անել: Քանի դեռ որոշարկված չեն ուղղությունը, ամեն ինչ շարունակվում է տրորված ճանապարհով՝ հինգ քայլ աջ և կես քայլ ձախ: Տպվում ենք ավելի քիչ, ես նկատի ունեմ երկրի մասին նյութերը, սյունակները լցվում են արտասահմանյան մամլո ժառայությունների շպրինգերյան հոդվածիկներով ու այլ անորոշ աղբյուրներից ստացված լուրերով: ճնշում են նաև նրանց, ովքեր ազատ աշխատողներ են: Բոլորեքյան խնայողություն է: Ոչ աշխատավարձի, մնացած անեն ինչի: Առաջ մինչև ուշ գիշեր խնբագրությունն աշխատում էր, իհմա դա կոչվում է «արտաժամյա աշխատանք», արհկոմը դրան հասավ, և դեկավարու-

թյունը ձգտում է քեզ ժամ առաջ տուն ուղարկել: Խնայողության ծրագիր է: Ամեն մարդու՝ 30 ժամից ոչ ավելի արտաժամյա աշխատանք:

### **Դա պաշտոնապես հայտարարված է:**

Պաշտոնապես ես ոչինչ չեմ լսել, բայց աչքեր հո ունեմ:

Նման բաները գրավոր չեն կատարվում: Դանկարծ ինչ-որ մեկը կգրի այդ մասին:

### **Խնայողության ծրագիր կապված է տպաքանակի անկման հետ:**

Իհարկե: Տպաքանակն ընկնում է: 10 տոկոսով: Արդեն կես միլիոն: Հոտե Ֆուրստը դա պիտի կասեցնի, թե չէ կդառնա խմբագրի տեղակալ: «Բիլդի» շահույթները խիստ նվազել են: Դա նկատելի է աշխատավարձի հավելումներից: Վերջին անգամ՝ 5 տոկոս, համարյա լրիվ: Իսկ իրականում նույնիսկ 5 տոկոս չի հավաքվում, որովհետև հավելումը կատարվում է հաստիքային աշխատավարձին: Առաջ այդպես չեր: Առաջ կլորացնում էին հավելումով: Այնուհանդերձ, նոր գլխավորը վազվզում է միջանցքներում ու ամեն պատահողի (թեկուզ միջանցքում, թեկուզ գուգարանում) շարադրում է նոր հայեցակարգը՝ «Մենք շարունակում ենք»: Ուղղակի թևավոր խոսք է՝ «Մենք շարունակում ենք»: Իսկ յոթերորդ հարկի գուգարանում, ուր առաջ գրված էր. «Այստեղ եղել է Վալրաֆը», հիմա մեծ-մեծ տառերով գրված է. «Բիլդը» ստում է ձեզ հանար»: Եվ մոլագարության հարցականը. ամեն տեղ հետապնդվողի նոլուցը կա, մի ժամանակ ամեն քայլափոխի էր: Ինաստը սա է. դու գիտե՞ս, թե ո՞վ է հաջորդը: Ամեն ինչ ճիշտ է: Մենք յուրայինների՝ շրջապատում ենք»:

## ԻՄ ՇԵՔՍՊԻՐՈԾ

Թող ներվի ինձ այս անսովոր վերնագիրը մարդկային մեծագույն հոգեբան-իմաստասերի ծննդյան 400-ամյա հիշատակի առթիվ, որը իր հզոր ձեռքերի մեջ պահեց թատերագրության արվեստի մականը ոչ միայն քանի ինքը ապրեց, ոչ միայն չորս հարյուր տարուց ի վեր, այլև անսահման այնքան տարիներ կպահի, քանի մարդը կա:

Ինչո՞ւ:

Մի՞թե չունեցավ մարդկությունը թատերգություն կամ թատերգուներ մինչև նրա հայտնվելը կամ հայտնվելուց հետո...

Օ՛, ունեցավ անշուշտ, ունի և կունենա քանի կա զգայուն և մտածող մարդը: Բայց եթե թատերգության նախահայր Եսքիլոսը ստեղծեց թատրոնը մարդկային հիշողության ամենասկզբնական ժամանակներին, նա մարդուն տեսավ ինքն իրենից դրւու ճակատագրական ուժերի հետ մաքառելիս, մարդու գործունեության ու դրա հետևանքների ամբողջ բացատրությունը խտացնելով մարդու ցավատանջ ուղեղից ծնված ինչ-որ գերբնական ուժերի միջամտությամբ... Աստվածներով:

Եսքիլոսն ու նրա բոլոր հետևորդները, իին Յելլադայից մինչև Յոռմ, հեղիեղուկ ու ջղագար Բյուզանդիայից մինչև Միջին դարը, գրեթե ամբողջ թատերգությունը, եթե մարդուն տեսավ էլ, ապա տեսավ մարդը աշխարհի մեջ և այդ ելակետից էլ բացատրեց մարդը մարդուն:

Սակայն չորս դար է այսօր ահա, որ Եյվընի ափերին խոնարի մի քաղաքի համեստ ծնունդ Շեքսպիրը տեսավ աշխարհը մարդու մեջ և բացատրեց աշխարհը մարդով: Ո՞հ, ինչպես չիհշեմ Սիրակուզացի նախնադարյան Արքիմեդեսին, որի ահավոր կերպարանքը թաղված է դարերի ստվերների մեջ, հայր բնապատճական գիտությունների, որը ցավատանջ մտորումով հենակետ էր փնտրում իր նոր գյուտի՝ լծակի համար - կարենալ շարժելու համար աշխարհը և նետելու նրան

իր ծիրից դուրս... Եվ մեռավ հելլեն գիտնականը հօռնեական փաղանգի սրերի տակ երկար պաշտպանելուց հետո իր քաղաքը, առանց գտնելու ցանկալի հենակետը իր նորահնար լծակին, շարժելու համար երկիրը:

Նա գիտության մարդն էր:

Բայց Շեքսպիրը այդ լծակին հենարան տվեց մարդկային հոգին և ոչ միայն շարժեց մարդու աշխարհը, այլև շարժելուց հետո նրան իր բնականոն ծիրի մեջ դրեց. Դամլետի պատզամով «Աշխարհն իր շավից դուրս է սայթաքել, ո՞հ բախտ ին դժիւնմ, ինչո՞ւ ծնվեցի, որ հենց ես ուղղեմ...»

Սա արվեստի մարդն էր:

Եվ ինչ է աշխարհը առանց մարդու. անհիշատակ ժամանակներից ի վեր անսահմանության մեջ թափալվող անբարբար նյութի խտացումը, երբ մարդը չկա:

Ինչ է անսկիզբ ու անհանգրվան տևողությունը, որին ժամանակ անվանեց մարդը միայն, և որը անուն կամ հորջորջուն չէր ունենա առանց մարդու:

Մի՞թե պարզ չէ հիմա, թե ինչու... «Իմ Շեքսպիրը»...

Եվ ոչ միայն իմը, նաև բոլորինը, որ եկան ու գնացին մեր մոլորակի վրայով, բոլոր նրանցը, որ կան հիմա և որ գալու են ու անցնելու...քանի ժամանակը կա:

■

Իմ պատկառելի դաստիարակներից ինձ պարտադրված էսքիլոսը, այն էլ ոչ միայն թարգմանական, այլև անտիկ հելլեն լեզվով, որին գրաբարի էին վերածել Միխթարյանները, սովորեցի ճառակել նախաքայլերիցս... Սակայն անսվաղ էի մնացել այդ փարթամ սնունդից, երբ մի օր, դասամիջոցին, այդ դպրոցի ծերունի հայկաբան Կասկանդիլյանը կարդաց մեզ Մակբերի մի ազատ ու հնամենի թարգմանությունը Հյուրնյո՞ւղի թե Ավգերյանի, չեմ հիշում, ծանրաքարշ տողերով:

Ահա այդ երջանիկ րոպեից կարծես առանցք գտավ մաշող պրապտունը այն ճակատագրական հարցումին, թե ի՞նչ են ես և ինչո՞ւ կամ: Եվ վերզգույշ ու երկյուղած մոտեցումով կարդալուց հետո ամբողջ Շեքսպիրը, հասկացա թեև Սոկրատի

«Ծանիր զքեզ» աֆորիզմը...բայց վախեցա նախ՝ մարդուց, վախեցա և ինքս ինձնից:

Դժնդակ մտորումներից, անխնա ինքնախարազանումից հետո միայն վախսը տվեց իմ մեջ մարդուն տեսնելու անգուստ ցանկության, և մի երկրորդ ընթերցումից հետո տեսա մարդուն, այս անգամ ոչ միայն թատերգուի տողերիս մեջ, այլև իմ սեփական ինքնության խորքերում, և զգիտեմ, չեմ կարող բացատրել այսօր ել թե ողբերգո՞ւն եղավ ու մնաց ինը... թե՞ ես եղա ու մնացի իրենը:

Եթե մարդը բացատրեինք իր սեփական առօրյայի արտացոլումով միայն, իիրավի չնչին բան կլիներ նա. կդառնար իր սեփական հոգսերի ծանծաղուտի մեջ մոլորված մի էակ, հավետ անծանոթ՝ անեզր ծովերի հմայքին, աշխարհում և ոչ աշխարհից մի գոյություն, որի կարճառոտ անցումը կյանքի վրայով, եթե անցողակի մի ժայիտի ծամածռանք չէ, ապա արցունքի մի լճացում է հաճախ:

Եվ Շեքսափիրի ճանաչումով էր միայն, որ այդ արցունքն ու ժայիտը, որ բաժին էր ինձ ծննդից, գիտակցաբար թաղեցի ես առօրյայի ծանծաղուտում... լսելու, հասկանալու, հետևաբար և պատմելու համար իմ նմաններին, նույն այդ ժայիտի ու արտասուրի իր գեղեցկության մեջ իսկ ահավոր սիմֆոնիան, որը հասնում էր զարմացած ականջներիս այն անեզր ծովերի բացերից, որի սպանող, միևնույն ժամանակ և վերածնող անծանքներին, մղում էր ինձ հեղինակի կենարար շունչը:

Ահա թե ինչու եղա նրա զինվորը: Եվ այն էլ այնքան, որ ամենազեղում զգացմունքներն իսկ սրտիս, լինի դա ատելությունը դաժան, արյունակցական կապերը անխախտ, առարինամերժ գոռողությունը նույնիսկ, նույնիսկ ինքնաբավ հպարտությունը, սերը՝ վերջապես, կշրեցի միայն նրա նժարով: Ու տարիների հոլովումի շնորհիվ, երբ այսքան մաքառումից հետո «այսու աղացել եմ ու մաղս կախել», անսահման միխթարանք է ինձ համար ոչ միայն հասնել, այլև ամուր շղթայով խարսխվել այն գերագույն ծշմարտության, որին ուզում եմ անվանել ինքնաճանաչում:

Ինքնաճանաչումը, սակայն,- ուզես այդ թե ոչ,- իր նմանին ճանաչելն է. իսկ ճանաչելը նշանակում է հասկանալ, իսկ հասկանալը՝ սիրել:

Անուլ և դժմղակ կարծիք է, թե մարդը կենդանական աշխարհի մի այլասերումն է, որովհետև մարդկայնությունը մի գոյավիճակ չէ, որին պետք է սակայն տիրանալ գերմարդկային մաքառումով:

Մարդը իր գերազանց առումով իսկ մարդու մեջ չէ, այլ պետք է սերմանել, մշակել ու ծաղկեցնել մարդը մարդու մեջ:

Այս է ասում ինձ հեղինակը:

Նրա գործերը, օրինակ, ոչ միայն պետք է կարդալ, այլ կարենալ կարդալ: Որովհետև ոչ մի կոմեդիոգրաֆ չի գրել նման գործ, որին կարդալիս ծիծաղես՝ մտածելով... կամ մտածես՝ ծիծաղելով:

Յսկա ողբերգուն մեկնաբանողների գրեթե բոլորն էլ, շշնորհած նրա գործերի համապարփակ հմայքից, միշտ փորձել են բացատրել նրա անչափելի մեծությունն իրենց սեփական տեսանկյունից, տվյալ մի ֆորմուլայի, երբեմն նույնիսկ հասարակ մի «ասացվածքի» աստիճանին իշեցնելով մեծությունը հեղինակի, և իրենց սեփական հոգին փոթորկող կրքերի առավելագույն չափով խոր նկարագրությունն են տեսել մարդապատում այդ օվկիանոսում, որ Շեքսպիրն է:

Քերվինուսը, օրինակ, երկուս-երկուս էլ չորսի սկզբունքով և թվաբանական չորությամբ մոտեցել է հեղինակին և նրա գործերից յուրաքանչյուրին մի պիտակ կպցրել:

Քերվինուսի համար, օրինակ, եթե Մակբեթը փառամոլության մոլուցքի ծայրագույն ընդհանրացման նկարագրությունն է, ապա Շայլոկը հօռմեացի փիլիսոփա Սենեկայի. «գերագույն արդարությունը գերագույն անարդարությունն է»-ի թատրական պատկերացումը:

Շեքսպիրը իր հայրենիք Անգլիան մշուշոտ ծանծաղուտի մեջ կորած սպիտակ կարապների մի բույն անվանեց, բայց այդ կարապներից սերած բազում մեկնաբաններ, քիչ բացառությամբ, իրենց ազգային սնապարծությունը ուրիշի պարտադրելու մի միջոց տեսան ավելի շուտ, քան ժամանակ ունեցան ճաշակելու այդ մեծությունը, որ իրենցից էր ծնվել:

Ըստ իս, եթե վերոհիշյալ մեկնաբանները լայնաբիր ակնարկով կարենային, և թող ներվի ինձ ասել, ուզենային չափել այն անհորիզոն հեռուները, որ Շեքսպիրի գործն է, ապա նրանք կտեսնեին անպայման իրենց սեփական ներքնաշխարհը, կտեսնեին հետևաբար և իրենք իրենց ոչ միայն հավաքական մարդու մեջ, այլև մարդու իր անսահմանությամբ իրենց մեջ:

Եվ ամենախոնարի հոգիները կարողացան տեսնել նրան, հետևաբար տեսան և իրենք իրենց, երբ անսեթևեթ պարզությամբ բյուրեղ ոգևորությամբ եւ խորին հավատով մոտեցան նրան, և եղան նրանք անվերադարձ, ինչպես նա եղավ նրանցը անվերադարձ...Սրանք դերասաններն են:

Գրեթե չգորեցին նրանք, բացատրություններ ու վերլուծումներ չըռղեցին իրենցից հետո, բայց եղան կենդանի ցոլքը, անմար ճառագայթները այն աշխարհակուլ հրդեհին, որ հեղինակն էր, յուրաքանչյուրը տանելով իր հետ իր արվեստն ու հմայքը, երբ կյանքի օրենքով վերջակետեցին իրենց գոյությունը:

Այ սրանցից է, սրանց մի քանի ժամ տևող ապրումների հիշատակից է միայն, որ կարելի էր կազմել, ամփոփել միակ մեկնաբանությունը բոլոր ժամանակների մեծագույն ողբերգությունը:

Ին ազգը, հակառակ իր փոքրաթիվ հանգամանքին՝ մեծագույն ու քաջանարտիկ գինվորներ տվեց այդ տաղանդին: Կարիք չեմ տեսնում այստեղ հիշատակել այդ անունները, քանի որ նրանք կան և լինելու են միշտ բոլոր հայերի սրտում, համուսատեսներ եղած լինեն նրանք, թե ընթերցողներ, բայց կա մի պարագա, որի կողքից լրությամբ անցնել ներելի չէր լինի ոչ ինձ, ոչ մեզ: Այդ աներկյա ճշմարտությունն է, ակնբախ փաստը, որ գիտեն բոլորը, թեև չեն խստովանում, որը գիտե և ինքը՝ քիչ թե շատ դաստիարակված ցեղակիցը հոգեխույզ փիլիսոփային, որ մեզանում իր տաճն է Շեքսպիրը, և մեզանից ել են նրա սեհտների բանակի ամենաանձնությաց գինվորները:

Եվ նրա 400-ամյակի հանդեսը, որ տոնում է ամբողջ աշխարհը, մեզ հաճար սովորական մի հարգանքի ապացույց չէ միայն, այլ մի ազգային տոն իր խոր իմաստով, նույնքան անկեղծ, նույնքան նվիրական:

## ԹԱՓԱՆՑԻԿ ՕՐ

- Քեզ են հարցնում:
- Ծնորհակալություն:

Եթեքս գրապանիս մեջ, բարձրահասակ, գեղեցիկ, մաքուր՝ ես վերցնում եմ ընկալուչը և ձգում ֆրանսերեն առողանությամբ. «Ալո՛»: Եվ ինձանից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի, հիմա լրիվ ազատված հովիվ դաշնալու՝ կարկուտից ծեծվելու և հողացավից տրորվելու վտանգից, նստում եմ ապահով մի տեղ, հեռախոս ունենալու չափ կարևոր մարդ եմ, ընկերներս նշանավորեն են և ես էլ, ուրեմն, նշանավոր եմ: «Ալո՛»:

- Դու մի ժամանակ ուզում էիր Անի գնանք:
- Ա՛, շատ բան է ուզում:
- Ես եմ, դու ես, Մինասն է, քենին, ճարտարապետներից մի երկու հոգի:

Ծոգ է, Մասսի ձյուները մարմրում են, խաղողը շրջյունով լցվում է քաղցրությամբ, մի քիչ՝ մի հիսուն գրամ կոնյակ է, քենին նայլուն թերեւ գլխաշոր է կապում, օծանվում է որպեսզի չսևանա, ծխագույն ակնոցը արտասահմանյան ու շատ լավն է, հարկավոր է մի քիչ սուրճ խմել: «Այդ Գարսիա Լորկա ասվածը մեր Իսահակյանի իսպանական տեսակն է»: «Այո, հիանալի պոեզիա ունենք»:

- Բայց ինչո՞ւ ես ծիծաղում:
- Լավ եմ անում:
- Ասա, մենք էլ ծիծաղենք:
- Չապա կասե՞մ:

Սայլվոր չեմ ու եզանս ոտը հեռու ճամփաների վրա չի կոտրվել, բրիգադիրը հետս չի կրվելու, հեռու-հեռավոր ճարտարապետ բարի փոխարեն հարաբերվում եմ իրական ճարտարապետների, նկարիչ Մինասի որոշ գործեր շատ լավն են, մի քանիսը չեմ ընդունում, նկարիչ Մինասի հետ խոսելիս աշխարհին իր քաղաքակրթության լավագույն մասով գալիս

հունցվում է մեր լեզվի մեջ: Սեզան կա, Մանե կա, Կարծեն Սոնե էլ կա, պիտի ասեի փողի՝ ասում եմ Սեզան, պիտի ասեի դաբաղ՝ ասում եմ «Երեկ էդ ի՞նչ չեխեր են եղել քո արվեստանցում», գայլի հարայը և շների ու հովվի տագնապը մութ ուրբերում՝ հեռավոր երազանք է ինձ համար, հոդացավով անձրև գուշակելը քնարերգություն է, ինչպես միջնադարյան մորեխի ամպերն այսօրվա գյուղացու համար: Մի հոգատար-հոգատար ձեռք արտի միջից ինձ վերցրեց, դրեց քաղաքուն բազկաբռոի մեջ: Եվ ուրախությունից՝ որ այլս հնձվոր չեմ, երբեմն քննադատում եմ հնձվորներին: Հովիվներին՝ նույն-պես: Ղեկավարությանը՝ նույնպես: Նաև՝ Մար Ցեղունին: «Այս կամուրջը, ասել է Մառն և խոսքը ուսկեզրվել է կամուր-ջին, կապում է գետի այս ափը գետի մյուս ափին»: Ես՝ հովվի տղա հովվացու, ահա քնծիծաղով եմ իհշում չինական աստ-ծուն: Ես՝ գյուղացու զավակ գյուղացի, ասֆալտը ահա լիովին յուրացրել ու ասում եմ, որ ասֆալտը դարուփոսեր չի ունենա-լու: Իմն են այս «Վոլգա» մեքենան, այս հարյուրանոց արա-գությունը, այս նայլոնե գլխաշորը, ծաղկազարդ թերմոսն ու միջի սուրճը, այս այգիների հղի ալարկոտությունը, քաղա-քանման գյուղերն ու նկարեն Արագածը, ճանապարհ հան-ված աղբյուրը, հնօրյա իջևանատունը, ամպերի պես փոված հոտերն ու ծաղկի բույրով շրջող հովվը: Եվ՝ արտերի ծովը և Գյումրի քաղաքը: Եվ՝ սահմանապահների ռոստովցի հրամա-նատարն ու սահմանի բերան ուղեկցելու նրա զուսա պատ-րաստակամությունը: Եվ՝ այն զգացողությունը, թե իմ երկիրն սկսվիմ է Մասիսներից ու վերջանում Չուկոտկայով: Ես մի տեղ Շիրակն ու Կուրբանը խառնում եմ իրար, ինչպես ռուսն է խառնում դրիմյան ու արարատյան խաղողները:

Եվ ահա այսպես երջանիկ, այսպես հզոր՝ կանգնել եմ իմ նույնքան երջանիկ ու հզոր ընկերների մեջ որտարանի գլ-խին, հեռադիտակի ետև, և կանաչ անայության մեջ օրորվում են գլխատված սլացուները: Կինոներուն ավելի լավերն են տեսել ու ավելի մանրամասնորեն: Եվ Երևանն էլ յոթ Անի ար-ժե, և ես Երևանի բնակիչ եմ:

- Ինչո՞ւ ես լաց լինում:

Մեր սարերում թուրքի ուրբեր կային: Գալիս էին իրենց դեղին հովհաններից, մեր սարերում կարմրում, ճաքճռում, բարձում իրենց քոչը իրենց եզներին ու հո հա հո՝ էլի իրենց դեղին հովհանները:

Դիմա, մեծ հորեղբորս հետ գնացել ենք նրանցից յուղ առնելու, իմ կյանքում առաջին անգամ ուրիշ լեզվի խոսակցություն եմ լսում ու վախենում եմ: Աշխույժ, հայոցող, թաքուն խփող ու աշկարա ժպտացող սատանի ծուտ երեխեք են, մի տեսակ՝ չմտածող աչքերով: Ես նրանց մեկ էլ քսան տարի հետո երազում տեսա. Կարոն բերդն էր իբր, կավե պարիսապներ ու այդ երեխեքը, ու երեսուն տարեկան՝ ես երազում էլ վախեցա:

Նրանց մեջ մեկը կար, ծնկները գրկած նստել էր ու մի քիչ ապուշավուն խոշոր աչքերով կարծես նայում էր մեզ, կարծես ոչնչի էլ չէր նայում: Մի կին ձայն տվեց նրան՝ նա տեղից ելնելու պես շարժվեց, կարծես թե գնաց, բայց մեկ էլ կինը նորից կանչեց, նա ուրեմն չէր գնացել: Կինը փեշերը շարժելով եկավ՝ որ նրան ծեծի, նա կտրուկ վեր կացավ, կարծես մի երկու քայլ փախավ էլ, բայց հետո ալարե՞ց թե մոռացավ՝ որ փախչելու էր:

Կիսաճաղատ, եռանկյուն աչքերով բարձրաքիթ հորեղբայս այնտեղ սակարկում էր. նրանց դրած գինը իրեն, չէ, ձեռ չէր տալիս, նրանց չարչիությունից իբր թե նեղացած՝ ետ էր քաշվում գնալու և, իբր թե դա վերջնական հրաժարումն է, ինձ էլ ասում էր՝ «Վեր կաց գնանք, տղա» և աչքով էր անում: Նա գյուղում մերոնց և ճանապարհին ինձ պարծենալով ասել էր՝ «կտեսնեք թե հորեղբայրը թուրքերին ոնց է խաբում», և հիմա ինձ ու իրեն ցույց էր տալիս, թե ահա-ահա խաբել է: Նրանք այն է հորեղբորս գնին էին իջնում, մեկ էլ սա ալարեց սակարկելուց կամ մոռացավ որ պիտի խաբեր, «լավ, ասաց, քանիսով տալիս եք տվեք»: Նրանք ծախեցին իրենց ուզած գնով, ուզածների պես էլ կովի կարագին ոչխարի էին խառնել, հարսներն էլ տանը նրա հետ առանձին կովեցին, բայց դա այլևս նրա հրազդ չէր, նրա ուշքը իհմա ուրիշ բանի էր: Նա նկատել էր ծնկները գրկած տղային, նայում էր: Կշեռքի լուծը թողեց, իր գործը մոռացավ ու կանչեց տղային:

- Նստեղ արի, հայի տղա:

Ականջը ուրբի իրիկնային ձայներին՝ Երեխան ձորերի աղջամուղջին էր նայում, աչքերը խոշոր բացած ու կարծես թե միքի շիլ՝ նստած էր անշարժ, անարձագանք:

- Հայի չի՝,- շփոթվեց հորեղբայրս:

- Հայի է, հայի,- ասացին,- կարագիդ նայիր՝ որ հետո չասես, թե խարել ենք:

- Քը՝,- պարծեցավ հորեղբայրս,- հազարի մեջ գցիր՝ արյունս կցոկեն:

Տղան հիմա ճիպոտն առել ու ցուլին ծեծում էր: Խփում էր դնչին, աչքերին, պոզերին ու հազիվ թե ցավեցնում էր: Ցուլը մի քայլ առաջ գար՝ այդ թիգուկեսին կճզներ, բայց նա մտել էր դնչի տակ ու խփում էր վրա-վրա, ջղային, ընկնել-ելնելով ու անհավասար, թփում էր՝ ամեն րոպէ զղջում է խփելու համար: Ցուլը շուր եկավ փախչելու, մյուս երեխաները շների հետ ետևից ընկան, իսկ տղան դարձյալ նստել էր ծնկները գրկած և նայում էր մթնով լիքը ձորերին:

- Հազարի մեջ արյունս կճանաչեն,- դարձյալ մրմնջաց հորեղբայրս, կարծես մեծ քան էր այդ ճանաչելը:

- Կցոկեն հազարի միջից,- ասաց, երբ ինձ դնում էր թամբին, բեռների մեջ:

Այն հին տարիներին իր Զանգեզուրում լավ հայտնի մեկը, ազգամիջյան ու քաղաքացիական կոհվներում ծեծված ու ծեծած, դեպքերի կենտրոնում՝ գլուխ չի հանում այս երկրի դեպքերից, Արաքսն անցնում է, իջնում Թավրիզ: Թավրիզ նստում է իր առևտուն, և փափուկ կյանքը նինջ է բերում, և վառողի խանձահոտը ռունգերում մարմրում է, ինչպես խիստ տաք ու խիստ սառը երեկվա օրը՝ հիշողության արահետներում: Այս իմ դարպասն է, այս իմ տունն է, այս իմ բարձն է, այս՝ իմ կինն ու երեխաները:

- Հայաստանը դեռ կա՝, իր տեղո՞ւմ է:

Հայաստանը կար, պարտավոր էր լինել, որովհետև որդին ահա հիվանդացավ հայրենախսուվ: Տեր Աստված, Տեր Աստված...աշխարհում հազար տեսակի ցավ ու հազար էլ դեղուճար

կա, իսկ լակուտն ահա հիվանդացավ հայրենախտով: Բժիշկն ասաց, որ դա կենդանական հիվանդություն է, մարդու հիվանդություն չի, պարսկական վագրն օրինակ չի ապրի, ասենք թե, Գերմանիայում և այլն, բժիշկը դեղեր տվեց և ասաց, որ դրանք սուտ բաներ են, երեխային իր հայրենիքն է բուժելու:

- Որտե՞ղ է ծնվել,- հարցրեց բժիշկը:
- Զանգեզուր է ինչ է, Դափան:
- Որտե՞ղ է,- հարցրեց բժիշկը:
- Արաքս է, ինչ է, դրանից դենք, Ռուսաստան:
- Չգիտեմ, - ասաց բժիշկը, - Երեխադ քեզ համար թա՞նկ է կտանես, չե՞ս կարող՝ բժշկությունն այստեղ անզոր է:

Տեր Աստված, Տեր Աստված... այսպես եղել է մեկ էլ պարսկական հաշիշե հին հեքիաթներում, տասը հազար տարի առաջ, և մեկ էլ եղավ Թավրիզ, Գերասիմ Աթաջանյանի ընտանիքում, 1927 թվին:

Անցյալով հակակոմունիստ Գերասիմ Աթաջանյանը կապեց մաուզերը, տղային ետևը զցեց, Արաքսը գիշերն անցավ, բարձրացավ սարերը:

Արևի զնոգոնվ կապույտ կիրճերի ու դեղին սարերի առավոտ եղավ – ծուխ էին տալիս այնտեղ Արծվանիկի ուրբը, այնտեղ Գեղանուշի, այնտեղ Դավիթ Բեկի, այնտեղ Ծավի ուրբերը: Կապույտ մշուշ էին ծխում հեռու անտառները, ձորերի ձորերը, ոսկեփոշի էին ցնդում գագաթների գագաթները: Եվ Գերասիմը տեսավ, որ, չէ, կենդանախտով միայն երեխան չի հիվանդ:

Առավոտ եղավ – կարմիր միլիցիայի ջոկատը շարվեց Գորիսի հեղկոմի դռանը և հրահանգով, մարդ՝ սահմանախախտ Գերասիմ Աթաջանյանին ձերբակալելու:

- Գյանջունց Սիմոն,- ծերպերում դարանած կանչեց Գերասիմ Աթաջանյանը, - Գյանջունց Սիմոն, մարդ եղիր՝ տնարդի մի եղիր, երեխան հիվանդ է:

- Աթաջանանց Գերասիմ,- կանչեց կարմիր միլպետը, - կարծում էիր Թավրիզ փախչելով կազատվե՞ս, դուրս արի հանձնվիր:

- Գյանջունց Սիմոն, քանի դեռ արյունդ մեջդ է գործիդ գնա:

Լավ կրակողի նրա համբավը, երեխան, հաջող թաքսուոցը և այն միտքը՝ որ այս սարերը նաև Գերասիմինն են, կարմիր

ջոկատին ստիպեցին ետ դառնալ առանց Աթաջանյանի, խաղաղ գրուցելով իշնել սարերից, բարձրանալ սարերը, իշնել Գորիս և զեկուցել, թե սահմանախախտ չկա: Իսկ սահմանախախտը վերուվար էր անուն մանկության օրերի արահետներով, ծարավ՝ իին սառը աղբյուրներից ջուր էր խնուն և որդուն ասում էր.

- Ես՝ Ցուրտ աղբյուրն է, էս՝ Կույր աղբյուրն է, հիշիր, Է՛ Արջուտ ձորն է: Ես՝ կաղնի է: Ոսկի չի, աշխարհքը լիքը կաղնի է, բայց սա հատուկ ծառ է, սա էն ծառն է՝ որ մեր պապի կողքին է եղել ու իհմա մեր կողքին է: Թավրիզից եթե Եգիպտոս ու Ամերիկա էլ անցնես՝ սա քո ծառն է, քեզ հետ գալու է: Պիտի հիվանդանաս, պիտի ասեն ի՞նչ ես ուզում, պիտի ասեն՝ էն կաղնին, որ մեր պապերի կողքին ապրում էր:

Եվ նայում էր Գերասիմն ու տեսնում իր պապին՝ որ կացինը գոտում, ահա դանդաղ զարիվերում էր շավդով և նրա ետևից դանդաղ գնում էր նրա չալ շունը: Գերասիմը ճանաչում էր շանը, դա իր տոհմի յոթ հարյուր բողարներից երկու հարյուր քսաններորդն էր, որ անմնացորդ փոխադրում էր իր ոչխարապահ նախնիների բնազդներն ու խելքը իր հետնորդների համար:

Եվ նայում էր Գերասիմն ու տեսնում թշերը կարմիր մանուկ Գերասիմին, բեղատեղին քրտինք պատաճի Գերասիմին, հոնքը կեռած երիտասարդ Գերասիմին, որ ձորից առաջ ու ետ անելով բարձրանում էին աղբյուր: Եվ ականջ էր պահում Գերասիմն ու լսում իր բոլոր հասակների ձայները հավերժորեն նույն լանջերում և այն ձայները, որ լսել էր պատմելով: Կարմիր կակաչի ծով էր, կամաչից էլ կանաչ արտեր էին, արտույտների համերգ էր, և այդ բոլորը բազմապատկվում էին, որովհետև նրա համար կարմրում, կանաչում ու խշշում էին իր բոլոր հասակների կակաչները, արտույտներն ու արտերը:

Այդ ամառ մինչև աշուն և դարձյալ երկու լրիվ ամառ մինչև խոր աշուն, երբ սարերի գովզ դառնում է ցուրտ և ուրթերը դատարկում են, օջախները ծուխ չեն ծխում և սարերը ամայության մեջ կանաչում են աշնան վերջին կանաչով, այդպես՝ Գերասիմ Աթաջանյանը որդու հետ ապրեց սարերում, ապա ետ

նայելով իջավ Թավրիզ: Որդին առողջացել էր, հիվանդացել էր ինքը: Պետք էին իր սարերը՝ որ Արաքսի այս կողմն էին, և Արաքսի այս կողմն էր նաև իր անցյալը:

Գրող Անտոն Չեխովը ձանձրացավ իր Մոսկվայից, ելավ գնաց իր Վոլգայի վրայով իր Ուրալ, Ուրալով Արևմտյան Սիբիր. Արևելյան Սիբիր, իր Իրկուտիհա, իր Յակուտիա, իր Յեռավոր Արևելք, իր Ամուրով՝ իր Սախալին: Գնաց պտտվեց, ճամփորդական նոթերի «Սախալին» գիրքը թվի տակ եկավ իր Մոսկվա:

Գրող Դերենիկ Դեմիրճյանը ձանձրացավ իր Երևանից, դուրս եկավ Ճամփորդելու մինչև իր Սախալին՝ դա երկու ժամվա ճանապարհի վրա էր. Սևանի սարն անցավ, իջավ Դիլջանի կիրճ, ձորով գնաց և որտեղ կիրճը հովիտ էր դաշնում՝ Դեմիրճյանն ասաց.

- Այստեղ Վարդանը մի կարծ կրիվ է տվել: - Եվ ասաց ադրբեջանցի բոստանչուն.- Նե՞ վար նե՞ յոխ, ա քիրվա, քեփ, հալ...

Եվ մեքենայի գլուխը շրջեց դեպի Յայաստան աշխարհի մյուս ծայրը - մյուս ծայրը չորս ժամվա ճանապարհի վերջն էր: «Նե՞ վար նե յոխ, ա քիրվա»: Չորս ժամում վատ սովորող աշակերտը կարող է չորս հատ անբավարար ստանալ, լավ սովորող՝ չորս հատ գերազանց, հրթիռը լուսնին մի քիչ էլ կմոտենա, ծովը մի քիչ էլ կալերախսի ինքն իր մեջ, Մատենադարանի կապույտ որձաքարը մի քանի գուներանգ էլ կփոխի, բայց չորս ժամը, չէ, չի դաշնա նոթերի գիրք:

Վեց ժամ հետո Դերենիկ Դեմիրճյանը եկավ տուն:

- Ոտի տակ տվինք Յայաստան աշխարհը: Եղանք Յայաստան աշխարհի Գուգարք աշխարհում, Կոտայք աշխարհում, Ծաղկոտ գավառում, Այրարատ Մեծ աշխարհում, Սյունիք աշխարհում, Սիսական գավառում, Շիրակ աշխարհում:

Նապոլեոնի գործերը հաջող գնային – Ուստաստանը նրա նպատակը չէր, Կովկասով իջնելու էր Յնդկաստան՝ ճանապարհին կործանելով Օսմանյան կայսրությունը, ստեղծելով

Հայոց թագավորություն: Եվ ասելու էր իր բանակի հայ զորավար Իռակին Մյուրատին՝ Շովակիմ Մուրադյանին. «Ստացիր, Մյուրատ, քո կորսված հայրենիքը»: Միայն թե Նապոլեոնի գործերը Բորոդինոյում ձախողվեցին, որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ հարբուխի պատճառով:

Միամի՞տ, սիրելի՝, թու՝ լ, հավատավոր:

Հարկավոր է լավ նայել դիվանագիտության հանրագիտարանը. Երևի թե կա քաղաքագիտության հայագահ մի գայլ, որ աչքը աչքին խաբում է ուրիշ գայլերի հանուն, ասենք թե, իր Անգլիայի և Երեխայի պես խաբվում հարբուխի առասպելից:

Երբ մենք բարբարոս էինք, իսկ Շունաստանը գիտեր նիզակից ու մարդուց վաշտ կապելու շատ մեծ գաղտնիքը՝ ինչպես նատներից են բռունցք կապում,- ասում է հույն պատմագիրը, - Շունաստանը չէր ուզում մեզ այդպես վայրենի թողնել, որովհետև ուժեղները միշտ ու ամենուր են տառապում իրենց բարի մտադրություններից, և ահա հունական քառակուսի փաղանգը եկավ ու տրորելով անցավ հայերի աշխարհը արևմուտքից հայոց արևելք և արևելքից հյուսիս և հյուսիսից հարավ և ծամբար խփեց Մշո կապույտ դաշտում: Դա զորավարժության պես հեշտ եղավ, քանի որ վաշտի դեմ վաշտ և բարանի դեմ պարիսապ չկար: Եվ մեր կավը դեռ թրծած չէր և մեր պղինձն ու բրոնզը դեռ առանձին էին, որովհետև մեր թրծողները կավ էին հունցում և կոփողները սուր էին կռում մեծ Պարսկաստանի համար:

Եվ Մշո դաշտում, բանակատեղում, գիշերապահները բռնեցին մի բարբարոսի, որ պղնձե դանակը ձեռքին սողոսկում էր զորավարի վրանը: Ի՞նչ էր ուզում: Շունարեն՝ չգիտեր: Մի կարգին սողալ՝ չգիտեր: Դանակ բանեցնել՝ չգիտեր: Ծեծում էին՝ մոլտում էր, մի կարգին բառաչել՝ չգիտեր: Քաջը՝ քաջ չէր, մորթվելիս գալարվեց ու ոռնաց, - ասում է հույն պատմագիրը:

Այդպես չհասկացված, այդպես թույլ, այդպես անհավասար՝ նա երկու հազար հինգ հարյուր տարվա մշուշից ընդառաջ ելավ, և ես տեսա ինձ: Եվ իմ անզորությանը, փափուկ դանակին ու փուխր բազուկին տեր կանգնեցի:

«Ղրիմ եղե՞լ ես»: «Չեմ եղել»: «Ափսոս, պիտի տեսնեիր: Ուրեմն ծովն է, չես էլ ուզում Պոնտական ասել, Պոնտականը անտակ ու անվերջ ալիքավորված ջրերն էին, մոլորված նավակներ ու մեծ աղաքանք ծով-աստծուն: Սա ծով էլ չի, տաք ջրի տաշտակ է և անընդմեջ այն գիտակցությունը, թե այդ ծովափը օգտակար է, հոդացավերի դեմ լավ է: Յետո՛ մանր դեղին ավագ ու մի տասը, քսան, իխուն հազար մարմին ավագին փռված: Դաշնամուրը վրան մի բեռնամեքենա, դաշնամուրի մոտ նստել է նվազողը, տնկտնկացնում է, նվազի հետ օգտակար շարժումներ են անում իին դերասանուի իիները, հաշվապահները, բժշկուի իիները: Մութ ակնոցների ետևից դրանց են նայում պնդակազմ աղջիկներն ու տղաները, պադպաղակ են ուտում, խոսում են ռուսերեն, դազախերեն, մոլդավերեն, ահա մեկ էլ տեսար՝ գերմաներեն: Ուտում են, սիրաբանում, կատակում, հաշվում են իրենց ռուբլիները, - իսկ էնտեր մեր փոշո՞տ, մեր խե՞ղճ, մեր համե՞ստ, մեր կորած փշատենիներն են: Յին հայերն են բերել: Իրենք հիմա այստեղ չեն, իրենց փշատենիներն են մնացել: Ոչ տեսքից են մի բան, ոչ բուրմունքն է մի բուրմունք»...

Ղրիմում անհամարձակ բուրող իմ խեղճ փշատենիները:

Եվ մեր Մեսրոպ Մաշտոց աստվածը, որ ասաց. «Քող լուս լինի» և լուս եղավ:

Եվ մշեցի մեր այն խենթը, որ 1915-ի սկ ամռանը թողել էր կին, երեխա, օրվա հաց, շալակել էր Ասքելոց վանքի դուռը և շեկ ճանապարհների վրա օրորվում էր դեպի Էջմիածին:

Եվ այն մատենագիրը, որ քառասուն, հարյուր քառասուն, հազար քառասուն տարի կքել էր քարայրում՝ մեծ ճանապարհի հետ կապված արահետով, արահետին՝ դարերի խոտ, ու շարագրում էր այս փոքրիկ մարգի եղածն ու չեղածը:

Եվ մեր այդ սևազգեստ արևո, այդ Կոմիտասը:

Եվ մի տարում հարյուր տարով ծերացած այդ Թունանյանը:

Եվ այն խեղճ երազողը, որ հեռու Եվրոպայում թնդանոթ էր ձուլում՝ Սյունյաց կատարներից կրակելու հույսով:

Եվ տղաների այն հարյուրավոր խմբերը, որ գիրք ու վառող առած գնում էին կարմիր դրոշ պարզելու մեր կորչող կա-

պույտ աշխարհի գլխին և շան լակոտի պես գնդակահարվուն էին սահմանի վրա և թիկունքից, և ճակատից:

Եվ 1915-ին եղած զարհուրելի սերերը, պատարագները, ծանված հացը, շաղված սերմը, ծնված երեխաները, հյուսված երգերը:

Եվ ամենազարմանալին. դարձյալ կանաչեցին արտեր, արտի ու հովի խաղ եղավ, դարձյալ կակաչը կարմիր էր և զանգակ ծիծաղ կար մեր կանաչ մարգերի վրա: Եվ Վարպետը նստեց գահին և խորհեց զարհուրելի դաժան ու անդիմադրելի գեղեցիկ աշխարհի բանը, երբեմն միայն ասելով բառեր, որ աղանանդ էին, որովհետև հիսուն տարում հազար տարվա արև ու անձրև էին կերել:

...Ինչո՞ւ ես տխուր և ինչո՞ւ ես ուրախ:

## Անատոլի Ագրանովսկի

### <ՆՈԹԱՏԵՏՐԵՐԻՑ>

1964 թ.(Ակնաբուժություն)

Կով. «1919-1921 թթ. հոսպիտալների, զինկոմիսարիատների մոսկովյան օկրուգի ոյազանյան բաժանմունքի տեսուչ: Աճամբ Ռյազանից են: Միջնակարգ դպրոցն ավարտել են մեղալով (հայրս հոգևորական է): Աշխատանքից հետո գործուղվել են բժշկական ինստիտուտ: Ավարտել են 1926 թվականին:

...Գրավում էր վիրաբուժությունը: Բայց վիրաբուժությունը տարբեր է լինում: Մեկի դեպքում ուժ է պետք, թափ: Մեզ մոտ ասում են ոսկերիչներ վիրաբուժության մեջ: Ես նկարիչ չեմ, բայց գեղեցիկը գնահատել ու գգալ գիտեմ: Մանուկ օրերիս սիրում էի սղոցել... Մեր վիրահատությունները գեղեցիկ են:

Վերջին երկու կուրսում սովորում էի Միխայիլ Իոսիֆովիչ Ավերբախի (Միխայիլ Իոսիֆովիչ Ավերբախ. 1872-1944, սովետական ակնարույժ, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Պետական մրցանակի դափնեկիր, Շելմիոլցի ինստիտուտի հիմնադիրներից մեկը) ակնարութական խմբակում: Նա ինձ նկատեց... Եվ ավարտելով ինստիտուտը՝ իբրև օրդինատոր մնացի կլինիկայում:

Չետո, մանրանամաները կարելի է շրջանցել, իմ վերընթացը շատ արագ եղավ: 1930 թվականին Ավերբախն ինձ տեղափոխեց Շելմիոլցի ինստիտուտ: 1931 թ. մարտին կազմավորվեց Կենտրոնական հետազոտական վարչության ամբիոնը, ես ամբիոնում ասիստենտ էի: Շատ արագ՝ պրիվատ-դրցենտ, երկորոր պրոֆեսոր և առաջին պրոֆեսոր (Ավերբախի մահից հետո):

1936 թվական՝ գիտությունների բեկնածու:

1939 թվական՝ գիտությունների դոկտոր:

Ավերբախը մահացավ 1944 թվականին: Ես նրա օգնականն էի, համարվում էի նրա սիրելի աշակերտը: Եվ վիրա-

բույժ, և դասախոս, և խորհրդատու-ախսորոշող: Նա ինձ վստահում էր, վստահությունն արդարացված էր: Նա ընկերության նախագահն էր, ես՝ քարտուղարը:

Պատերազմի ժամանակ գործուղվեցի Լեֆորտովյի ռազմական հոսպիտալ:

Ավերբախի մահից հետո ես ստացա երկու բան.

1. Մրցույթով՝ ԿՅՎ-ի աչքի հիվանդությունների ամբիոնի վարիչի տեղակալ:

2. Աշխատանք Կրեմլի առողջապահական-սանիտարական վարչությունում: Դիմա դա գաղտնագրված է «Առողջապահության նախարարության չորրորդ գլխավոր վարչություն»:

Ավերբախի հուղարկավորությանը ես դագաղը ձեռքբերիս վրա էի տանում ու երիկամներս հիվանդացրի: Եվ քանի դեռ պառկած էի, հիվանդանոց բերին անկետաները... Եվ 44-ից ես այնտեղ գլխավոր մասնագետ եմ:

Հասարակական գործերը: Մոսկվյան ակնաբուժական ընկերության նախագահ: Տարբեր հանձնաժողովներ, կոմիտեներ, խմբագրական խորհուրդներ...

Ռյազանն ինձ շնորհեց պատվավոր հայրենակցի կոչում:

Դե... պատվոգրեր: Գիտության վաստակավոր գործիչ:

Վիրահատություններ տասնյակ հազարներով... Դե, չեմ հաշվել: Աշխատանքի ծավալը՝ վիթխարի: Իմ ենթակայության տակ 400 մահճակալներ եմ: Մանկավարժությունը սիրել եմ ու սիրում եմ:

- Զեր որդին ակնաբռնվյած է:

- Օ, որո՞իս ծագող աստղ է»:

...

«Որդի, Կով Մ.Մ. Պաշտպանեցի դոկտորականը: ԲՈՀ-ն անցա: Սա արդեն նոր սերունդ է՝ ֆիզիկայի, էլեկտրոնիկայի օրենքների իմացություն: Գիտե անգլերեն: 14 երկրներում է եղել: 50 գիտական աշխատանքներ ունի: Երկու տեղ պրոֆեսորի աշխատանք են առաջարկել: 40 տարեկանում ես գիտությունների դոկտոր էի, իսկ նա՝ 34-ում: Ես ոչինչ չեմ հայտնագործել: Իսկ նա արդեն 11 գրանցված գյուտեր ունի: Մա-

նուկ օրերին նա սիրում էր ժամացույցներ ու ռադիոընդունիչներ քանդել»:

21.04.1964 թ. առողջապահության նախարարություն (ին առանձնատուն Նեգլիննայա փողոցում):

Նախարարական ցուցահանդես՝ գործիքներ, հեռադիտակներ...

Նիստերի դահլիճում մոտ 80 մարդ... Նիստի երկրորդ մասը. ամենաակնառուներն արդեն հեռացել են: Ձեկուցումները կարծ են՝ յոթ րոպե: Քննարկումներն ավելի արագընթաց են:

Դա կոչվում է «Ակնաբուժության ոլորտում գյուտարարների ու ռացիոնալիզատորների երրորդ միութենական կոնֆերանս»:

Ահա ինչն է հետաքրքիր (ընդմիջմանն իմացա)՝ վաղն առավոտյան ելույթ է ունենում Մ.Ս.Կ-ովը (որդին) և Վ.Վ.Ա-ին (որդին): Այդպիսով երկուսն էլ այստեղ «նշված են»:

Ես դեմ չեմ ժառանգական ակնաբույժներին (ես ինքս էլ «որդի եմ»). ակնարկում՝ այդպես էլ գրել): «Պարզապես ես հաշվի եմ առնում՝ որքան դժվար է եղել իմ Ֆյոդորովին (Ավյատուլավ Ֆյոդորով. ակնաբույժ, արդեն պրոֆեսոր, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիկոս, Սոցիալիստական աշխատանքի հերոս, «Աչքի միկրովիրաբուժություն» գիտատեխնիկական համալիրի գլխավոր տնօրեն) առաջ գնալը: Նրան ոչինչ չեն մատուցել «կապույտ եղանակտերով ափսենում»:

...Ինչ ասես չի պատահում կյանքում: Դահլիճում է Օլեսյա Օռլովան: Իմ համադասարանցին: Նա էլ ինձ ճանաչեց, ձեռքով կանչում է: Յիմա նա բժշկական գիտությունների թեկնածու է, ակնաբույժ, նա լաբորատորիա ունի Յելմիոլցի ինստիտուտում: Եվ նույնիսկ լինզաների վրա է աշխատում (նույն կատարակտը): Յիմա նա Ելենա Միխայլովնա է:

Այ քեզ հրաշք՝ ծանոթ է Ֆյոդորովի հետ: Կարելի է (համադասարանցու իրավունքով) անկեղծ խոսել:

- Ասա նա շառլատա՞ն է:

- Ըմմ... Չէ:

- Ինչո՞ւ ես մզզում:

- Վախտենում են, որ նա կարիերիստ է:
- Հիմքեր կա՞ն:
- Կան...Որոշ...

Ուրեմն, իմ Ֆյոդորովը մի ժամանակ ցանկացել է Օլեսյայի մոտ աշխատել, նա պատրաստվել է վերցնել՝ ընդունակ վիրաբույժ է: Գնացել է շեֆի մոտ: Նա էլ թե՝ «Մի վերցրեք»: «Ինչո՞ւ»: «Կռիվ կցցի»: «Չեմ կարծում»: «Չեր տեղը կնստի»...

Սա առաջին դրվագն է: Այստեղ դեռ «օբյեկտիվ ճշմարտություն» չկա:

Թե ինչպես են նրան «մեծերը» վերաբերվում, ես արդեն գիտեմ: Ուրիշ ի՞նչ:

- Նա ինձ հարցնում էր բյուրեղիկի մասին: Ինչ գիտե՞՝ պատմեցի նրան, ցույց տվեցի... Որոշ ժամանակ հետո մի ծանոթ պրոֆեսոր (նա փորձագետ է) ասում է՝ Ֆյոդորովը գյուտի հայտ է ներկայացրել...

Սա արդեն ավելի վատ է, բայց հանցակազմ չկա:

Չեկուցումներն արդեն չեմ լսում, Օռլովային եմ լսում.

- Ֆյոդորովը արհեստավոր է, թեաթր ոսկեհատիկ կա...Բայց ռիսկը շատ մեծ է: Նրա դեմ եմ հանդես գալու (նա իմա կոնտակտային լինզամերով է զբաղվում):

Եվ վերջինը (բոլորովին անսպասելի ու մտագբաղ ասված):

- Ընդհանրապես նա ուժեղ մարդ է: Շատ ուժեղ...

Ահա ինչ բարդ է կյանքը...

...Ոե, իհարկե, Ֆյոդորովը կարիերիստ է: Ցանկացել է աշխատել Յելմհոլցի ինստիտուտում: Իսկ ի՞նչ հիմքեր ուներ: Նրա հայրիկն ո՞վ էր: Երկու որդիներն ել՝ Կ-ի ու Ա-ի, այդ ինստիտուտում են, և նրանք կարիերիստներ չեն, նրանք կարիերայի համար չեն պայքարել՝ կարիք չկար...

24.06.1964 (Ֆյոդորովը Մոսկվայում)...

- Վիճակագրության մասին: Այլ հարց էր սկիզբը, այլ է հիմա: Մրտային վիրաբուժության նման: Առաջին տարիների վիճակագրությունը սարսափազդու էր, իհմա այլ վիճակ է:

...Օտտո Կառլովիչ Վիխստեղը, 50 տարեկան է: Նրա մասին ակնարկ կարդացի «Գիտություն և տեխնիկայում»: Նրա հետ նամակագրական կապ ունեի դեռ 60 թվականից: Նա պատասխանեց, «գել»-ի նմուշ ուղարկեց, ես ճագարների վրա փորձեցի՝ ստացվեց: Այդ ժամանակից ես քիմիկոսներ էի որոնում...

...Ես համոզված եմ, որ հինգ տարի հետո, գուցե և չորս, մենք կոնֆերանսներում կասենք.

- Բյուրեղիկի հեռացումը հաշմող վիրահատություն է: Դա նույնն է, թե ոտք հատես ու ասես՝ զնա, քայլիր: Կարո՞ղ է մարդն առանց ոտքի: Կարող է: Ես ինքս ոտք չունեմ: Բայց ես կիհամաձայնեի բիոպրոթեզ ունենալ: Թեկուզ, նույնիսկ, պլաստմասայից: Միայն թե կարողանայի վագել: Յատելը հակաֆիզիոլոգիական է: Իսկ չդնե՞լը: Ինչո՞ւ ավելի լավ է դնել, քան չդնել: Բյուրեղիկ դնելուց հետո հետվիրահատական շրջանը լավ է անցնում: Հինգ-վեց օր աչքը հանգիստ է (իսկ հետո՝ տասնմեկ-տասներկուերրորդ օրը գրգռվածություն է լինում)...

...Ակնաբույժների դժվարությունները: Սովորաբար բոլոր վիրահատությունները անում են կանգնած: Միայն մի քանի կլինիկաներում՝ նստած: Զեռքերը կամ օդի մեջ են կամ հիվանդի դեմքին՝ հենվում են այտոսկրին, ծակատին... Ցանկացած վիրահատող գիտի ճշգրտության առաջին պահանջը՝ ձեռքերի հարմար դիրքը, լավ հենարանը: Երկու ամսի առաջ մեզ համար շատ հասարակ մի քան սարքեցին՝ վիրահատական սեղանի վրադիր: Սեղան՝ հիվանդի գլխի չափով կտրվածքով: Վիրաբույժի ձեռքերը անուր սեղանի վրա են, վիրահատում ես նստած, վիրահատական դաշտը մեծ չէ, հեշտ ես կողմնորոշվում...

Դա սարքել է մեզ համար Պավել Լուկյանովիչը՝ «Կարմիր դարբնոց» գործարանի վարպետը: Անվճար է սարքել՝ մեր գծագրերով: Փորձված վարպետ է 55-56 տարեկան...

Գիշերն ավելի լավ ես մտածում: Ի՞նչ ես անում: Ո՞ւր ես զնում: Ինչո՞ւ ես ապրում այս հողի վրա: Մի անգամ մտածեցի՝ ես իմ տեղում եմ կանգնած:

...Առավոտից գործունեություն ծավալեցի: Արխանգելսկի բոլոր գործարաններում եղա, սովորաբար սովորաբար գործների արհեստանոցներում եղա:

Մեկում գտա «ձախլիկի» (ի դեպ՝ նա ծնյալ ձախլիկ է): Վիկտոր Սմիռնով՝ ժամագործ: Ինձ պետք էր ոսպնյակում 120 միկրոնանց անցք շաղափել: Ավելի ճիշտ՝ երեք միլիմետր երկարությամբ անցք: Պլաստմասայի վրա: Վիկտորը չկարողացավ, բայց երկրորդն արեց՝ կապրոնե ամրանները ծռելու համար ծանրոցներ: Նրան վճարել էր պետք՝ ամեն օր մինչև ուշ գիշեր նստում էր: Բնականաբար՝ իմ գրաբանից:

...Պատահաբար լսեցի մի թոշակառուի մասին: Սիրում է նորոգել հազվագյուտ ժամացույցներ, կրկնօրինակներ է անում, ինքնատիպ վարիչներ...

Նույն «խորամանկ հնարքը»՝ պատմեցի գործի մասին, արդեն արվածի: Յետաքրքրվեց: Ամբողջ ընթացքում չի եղել մարդ, որ անտարբեր մնա... Դե բացի նախարարության աշխատողներից, որոնց, կարծես թե՝ ի պաշտոնե, բնորոշ պիտի լինի ամեն նորով հետաքրքրվելը...

Մի ամսից ավելի ծերուկը չարչարվում էր: Պարզվեց՝ մասնագիտությամբ թատերական նկարիչ էր, ինտելիգենտ մարդ, շատ կրթված: Գայլիկոնները ծեռքով էր սարքում՝ 170 միկրոնից բարակ չեր կարողանում: Քասկացանք, որ նրա սարքած առաջին գայլիկոնները բանի պետք չեն՝ տաքանում են ու փշրվում: Քասկացանք՝ պարույրածն է պետք:

Վալերի Զախարովը (նա առաջին կուրսից իմ խմբակում է) փորձեց անցքը այրելով ստանալ: Բարակ շիկացած ասեղով: Չի ստացվում: Տաքանալիս ոսպնյակը ձևափոխվում է:

Գնացի Լենինգրադ: Դա արդեն 64-ի հունվարին: Պետերգոֆի ժամացույցի գործարան... Տնօրինությանը նամակ տարա՝ «Խնդրում ենք օգնել միկրոանցք բացելու հարցում»: Գնացի գլխավոր տեխնոլոգի մոտ, բայց երբ նա հասկացավ, նա և բոլորը բաժնից միաբերան՝ «Ոչ, չի ստացվի, պողպատից՝ խնդրեմ...»: «Իսկ գուցե գայլիկոններ կա՞ն»: «Այո, կան 110-120 միկրոն»: Յենց այն է, ինչ պետք է: Գնացինք արտադ-

րամաս: «Գայլիկոններ են պետք»: Պատմեցի՝ ինչի համար: Բանվորները հավաքվեցին, լսեցին, նայեցին բյուրեղիկները՝ իները, դեռ Չեքոկսարիից...

Նիկոլայ Վասիլևիչ Լեբեդին՝ յոթերորդ՝ բարձրագույն կարգի մեխանիկ, ասաց. «Դա կարելի է սարքել», ու տեղնուտեղը սարքի գծագիրը ուրվանկարեց, կես ժամից սարքեցին...

Ինձ 50 գայլիկոններ նվիրեցին, երկու շաբաթից խոստացան ուղարկել ու փոստով ուղարկեցին միկրոսեղմիչներ, որոնք պահում են ոսպնյակը և գայլիկոնվող անցքը...

Առաջին անգամ նատեցի շաղափելու առավոտյան ժամը իննից մինչև երեկոյան վեցը: Մի շաբաթ մոլագարների նման էինք՝ ուրիշ բանից չենք խոսում:

Եղ իինա մեզ համար խնդիր չէ: Յետո նույն Լեբեդին մեզ համար սարք պատրաստեց ամրանները ծռելու համար: Յետո՝ առաջին կապորնե անցքերը ծռելու համար՝ պարզ, ինչպես կոլումբոսի ծուն: Խոստացավ դեռ սեպտեմբերին գործիքներ պատրաստել: Յատուկ բռնիչ՝ որտեղ անցքեր կան դեղերի համար՝ ծիածանաթաղանթի լայնացման ու նեղացման համար: Բինկիորստի (հոլանդացու) գաղափարն է՝ պինցետ երկու անցքերով: Նա ևս կլիպսի կողմնակից է: Նամակում գրել էր, որ լավագույնը համարում է միաժամանակյա վիրահատությունը (հեռացնել ու տեղադրել) ... Մենք համակարծիք էինք...

...Երբ Լեբեդինի հետ խոսում էի ծանրոցիկների մասին, նա ասաց, որ մի վարպետ ունեին՝ ժամացույցի ապակիներ էր պատրաստում պլաստմասայից: Դակիչով: Կորան Ալեքսանդր Մոդեստովիչ: Լենինգրադցի: Հիմա արդեն թոշակառու: Յասցեն ոչ ոք չգիտի:

Գնացի տեղեկատու: Պարզվեց՝ Լենինգրադում չորս Կորաններ կան, մեկը՝ Ալեքսանդր Մոդեստովիչ: Գնացի... Զա, պարզվեց՝ մանկությունից մի աչք չունի: Երկորորդ կարգի հաշմանդամ է, թոշակառու... Հիմա նա մեր ինժեներն է: 58 տարեկան է:

Շատ ջերմիրեն համաձայնեց օգնել: Սարսափելի հայրտէր, անընդհատ հարցնում էր՝ ո՞նց ինձ գտաք, ու կնոշն էր նայում...

Մի ամսից մի քիչ երկար առաջին դրոշմն էր անում: Ամենամուր պողպատից: Դրոշմի մակերևույթի մաքրությունը՝ 14-րդ կարգի՝ ավելի մաքուր չի լինում... Եթք ոսպնյակի մակերևույթին մանրադիտակի տակ նայում ես, չի երևում: Թափանցիկ է, ոչ մի գիծ, ոչ մի թարթիչ... Ցողի կաթիլ:

Փետրվարի կեսին նամակ ուղարկեց՝ սարքել եմ: Ես նրան հրավիրեցի Արխանգելսկ: Եկավ: Գնացինք Մայմականսկի գործարանը՝ այնտեղ նավակներ են սարքում, լաստերի ձուլման մեջենաներ: Գործարանում մեզ բրոնզե ձուլվածքներ տվեցին՝ ծանրոցների համար: Նույն երեկոյան սարքեցին՝ հենց այնպես:

...Կորանը նիհար, արևայրված դեմքով ծերուկ է, կոշտուկուպիտ մեծ ձեռքերով, կորամեջք, սպիտակած, կարճ կտրած մազերով, խոշոր կորնթարդ քրով: Աղքատ է ապրում: Կարող էր մեծ փող ուզել, պիտի տայի... Բայց նա շահասեր չէ: Յիմա ինձ մոտ սարքավորումների ինժեներ է աշխատում: Յազիվ նրա համար հաստիք պոկեցի...

1964 (Տուապս՝ Ֆյոդորովի մոտ հանգստյան տանը)

...Այնուամենայնիվ, մենք Ալյոշկայի հետ եղանք Ֆյոդորովի մոտ: Սլավան ջլապին է դարձել: Բաց կապույտ աչքերը ավելի բացգույն են դարձել, և մազերի ոզնին էլ արևից բացգունել է: Գնացինք երեքով գրոսնելու: Յասանք հանգստյան տնից մի կիլոմետր հեռու լողափին: Այնտեղ փորք տախտակամածի վրա Ֆյոդորովը արագ հանվեց, պրոբեզն անջատեց, սուր քարերի վրայով ցատկելով հասավ նեղուց, մոտ քառասուն մետր ձեռքերի վրա քայլեց մինչև ջուրը, ու ցատկեց ծովը:

Քետո մենք լողում էինք, հետո՝ խոսում էինք: Ի՞նչ հասկացա ես, ինչում համոզվեցի:

Օռլովայի մեղադրանքը, որ Ֆյոդորովն օգտագործում է ուրիշի գաղափարը՝ առանց հղում անելու, ճիշտ չէ: Նա ոչինչ չի տպագրում առանց հղումների: Ես ևս մի անգամ համոզվեցի: Նա հաստատեց, որ ծիածանաթաղանքը սեղմելու գաղափարը իրեն Օռլովան է հուշել: Բայց մի նրբություն կա՝ դա նրա գաղափարը չէ: Դա հնարել է ինչ-որ անգլիացի, ուրեմն և

այդ դեպքում հղում անել Օռլովային անհերեթ է: Իսկ խանդը կարելի է հասկանալ՝ նրա մոտ տեսել է ու վերցրել ինչպես սեփական: ճիշտ է արել: «Պետք է ամեն նորին տեր լինել. «Ես ինը ամեն տեղ վերցնում եմ՝ որտեղ գտնում եմ»՝ ասել է ֆրանսիացի դասականներից մեկը (ինչ-որ տեղ գրել եմ՝ պետք է գտնել):

Իսկ հղում անել, անկասկած, պետք է մանրամասնորեն՝ այստեղ վիճելու բան չկա: Գիտական հոդվածում կամ կոնֆերանսում՝ այդ գաղափարը՝ առաջադրված այսինչ անգլիացու կողմից, ես քաղել եմ այսինչի լաբորատորիայում, ով առաջինը մեզ մոտ սկսեց այդ խնդրով զբաղվել...

Սվյատոսլավ Նիկոլաևիչ Ֆյոդորովը ինձ առավել ու առավել շատ է հմայում՝ նա անհատականություն է:

Վիճաբանության մեջ անհավասար ուժեր. «Գագաթները» Ֆյոդորովին դեմ են: Զարմանալի միասնական: Ուժերի շերտավորում է. «մայրաքաղաքն» ընդդեմ «գավառների»...

Լրագրողի տեսակետի բարդությունը.

Ճարց է ծագում՝ ինչո՞ւ եմ ես այնուամենայնիվ գրում նրա մասին: Եվ նորից հարցնում եմ ինձ՝ իսկ շուտ չի՞։ Ի՞նչն է շփոթեցնում: Առաջինը՝ հիվանդների հոսքը հոդվածից հետո: Երկրորդը՝ պատճառ չե՞մ դառնա Ֆյոդորովի դեմ անբարյացկամության նոր ալիքի, իսկ նա մոտ ապագայում ԲՈՀ-ում դոկտորական է պաշտպանելու: Վերջապես՝ վկայում եմ. նա խնդրել է իր մասին չգրել: Խնդրում եմ հոդվածի այս հատվածը համարել պաշտոնական տեղեկանք և այս պարբերությունը հավելել նրա «անձնական գործին»: Բայց մյուս կողմից, կլուս՝ չես գրի ու հետո երբեք քեզ չես ների:

Ֆյոդորով. Մի՞թե ես աշխատելու հնարավորություն կստանամ այն տարիքում, երբ արդեն չեմ կարողանա աշխատել: Մի՞թե իմ գաղափարները կարողանամ իրականություն դարձնել, երբ արդեն կինանան, իսկ նորերը չեմ ունենա: Մի՞թե ես ել այդպես ծուռ կնայեմ երիտասարդներին...

Գավառ... Գավառականության հիմքում մեղավորությունը չէ՝ մեղք ես գործել՝ տեղդ գավառն է: Գավառը ծակուր է: Եթե մայրաքաղաք չէ, ուրեմն ծայրամա՞ս է: Օժեգովի բառարանում. «Գավառական. գավառական հակումներով, հետամնաց, միամիտ, պարզունակ ու կոպիտ մարդ»: Մենք նախընտրում ենք այլ բառ՝ ոսօրծեանություն: Վատ է, երբ գիտության մի ամբողջ բաժին (կամ նույնիսկ պրոֆեսոր Արխանգելսկու բառերով «ակնաբուժության մի պարբերություն») դառնում է գավառական: Ինչ լավ բան կա, երբ դեղերը հարկադրված ես զնել արտասահմանում, երբ նոր մեթոդները ուրիշ երկրներից են գալիս, իսկ մենք մերժում ենք, դատափետում ենք «սենսացիաների» համար, իսկ հետո տենդագին յուրացնում ենք: Յազարավոր վիրահատություններ նրանց մոտ, իսկ մեզ մոտ՝ քննադատություն... Ի՞նչ կարդալ այդ մասին: Կարելի է կարդալ անգլերեն, ֆրանսերեն, հինդի լեզվով, իսպաներեն, ճապոներեն, լեհերեն, բայց ոչ ռուսերեն...

Գավառը և մայրաքաղաքը (թեմայի ևս մի անսպասելի կողմ): Ֆյորդորովի կողմնակիցները ապրում են ոչ մայրաքաղաքում՝ հիմնականում գավառաբնակներ են: Իսկ հակառակորդները՝ «գագաթները», հիմնականում Մոսկվայում են: Ինչո՞վ է դա բացատրվում:

Դասական գյուտարարներ, ցրված ու կյանքից կտրված ինաստուններ հիմա շատ քիչ կան: Գուցե նրանք մեծ թվով են աշխարհ գալիս, բայց ոչնչի չհասմելով կործանվում են. այդ պատճառով անհայտ են: Լավ-վատ, բայց մեզ հետաքրքրում են ու հայտնի են նրանք, ովքեր ինչ-որ բանի հասել են, իսկ հիմա ինչ-որ բանի հասմելու համար խելքն ու տաղանդը քիչ են: Խելքները հիմա շատ են: Նրանք հիմա, ինչպես «դասականները»՝ տարված են իրենց գաղափարով, նույնպես ձգտում են այն ժողովրդին «հանճնել»՝ այս ամենը մնում է ուժի մեջ: Բայց հավելվում է մարտիկների որակը, այն, ինչը նրանց դարձնում է հաղթող: Մարդը ընդունում է խաղի կանոնները: Քանի որ դա պետք է, նա սովորում է «հաղթահարել», երբեմն նաև դիվանագիտություն է սովորում: Լա՞վ է դա: Երևի ոչ այնքան: Բայց, ավաղ, առայժմ այլ կերպ չի ստացվում...

- Այն, որ նա անում է այնպիսի վիրահատություններ, որոնք բացի իրենից ոչ ոք չի անում, դա դեռ մեծ բան չէ,- ասաց Ֆյուրորովի մասին մի բժիշկ-գիտնական,- բայց այն, որ չորս հաստիք է կարողացել պոկել... Ուժեղ մարդ է...

«Ինտելիգենտներ»... ռուսական բառ է: Ռազմոչինցիներն են հնարել, հեղափոխական դեմոկրատները: Բելինսկին, Դորոյութովը, Պիսարևը: Ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն Չեխով թարգմանելիս այս բառի հետ թարգմանիչները չգիտեն ինչ անել՝ հոմանիշ չկա իրենց լեզուներում: Ե՞րբ է այն առաջ եկել:

Պուշկինն այդ բառը չգիտեր: Դալն արդեն գիտեր իր նախական իմաստով. «Բնակչների կրթյալ, մտավոր զարգացած մասը»: Այո, բնականաբար, լատինական արմատ ունի: Բայց ռուսերենում հասկացությունն ավելի ընդգրկուն է: Ինտելիգենտությունը վաղուց արդեն միայն կրթվածություն չէ: Դա (Չեխովից հետո) նաև խիզճ է, հասարակական ակտիվություն, գիտակցականություն, պարկեշտություն...

«Ինտելիգենտության ժամանակ չեր» ինչպես ասել է մի հայտնի դրամատուրգ՝ քննադատելով թերթի մի հոդված: Այսինքն՝ կարգին մարդու բան չէ, խորհի բան չէ, գիտակցության բան չէ... Հոդվածը նա քննադատում էր, որ մարդկանց կոչ էր անում ոչ թե դեպի «կուսակցականությունը, ժողովրդականությունը, այլ հենց ինտելիգենտությունը»՝ այ թե ինչ սարսափելի կոչ էր: Այսինքն՝ եթե դու ինտելիգենտ ես, ուրեմն արդեն կուսակցական չես, ժողովրդական չես: Իսկ նա, քննադատը, ժողովրդական է, կուսակցական է, և, հետևաբար, ինտելիգենտ չէ: Ի՞նչ տարօրինակ է: Ոուս գրականությունը շատ բան է տեսել, բայց որ գրողը ինքնակամ, բոլորին լսելի հրաժարվի ինտելիգենտի կոչումից, դեռ չի եղել:

Հետո ինչ... ինչպես ասում եմ՝ ինքը գիտի:

# ԴՈԿՏՈՐ ՖՅՈԴՈՐՈՎԻ ՀԱՅՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

«Ինտելիգենցիան» ռուսական բառ է: Ժամանակին Չեխովի անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն թարգմանիչները չփոխեին ինչ անել այդ բառի հետ: Ինքնին հասկանալի է, որ այդ լեզուներում կային «ինտելեկտուալներ», «մտավոր աշխատանքով գրադպող մարդիկ», «կոպֆարբայտերներ», բայց այս հասկացությունները չունեին բարոյա-էթիկական ու հասարակական իմաստ: Այդ ռուսաստանում էին ինտելիգենտները գնում դեպի ժողովուրդը, իետո ժողովորդի հետ էին, ապա սկսեցին ժողովրդից դուրս գալ, ժողովորդի ընդերքում ձևավորվել: Այդ ռուսերենում ինտելիգենտությունը վաղուց արդեն դադարել է միայն կրթվածություն լինել: Այդ պատճառով էլ մեզ մոտ հնարավոր են բառակապակցություններ, որ այլ լեզուներում անբնական են՝ «ինտելիգենտ բանվոր» կամ «նվազ ինտելիգենտ գրող»:

Չի կարելի այս մասին մոռանալ: Պետք չէ կարծել, որ ինտելիգենտությունը մարդուն տրվում է դիպլոմի հետ՝ մեկ և ընդմիշտ: Որ ինտելիգենտությունը, ինչպես բազմակողմանի կրծքանշան, կարելի է փակցնել կրօքին, կարելի է նաև առիթի դեպքում հանել: Ոչ, այս հասկացությունը բացի ընդհանուր կրթվածությունը, հոգեկան նրբությունը, ներառում է բարձր գիտակցություն և հասարակական ակտիվություն՝ որակներ, որ մարդը հաստատում է ամբողջ կյանքում և ամբողջ կյանքով:

Իսկ բուն բառը, կրկնում եմ, ռուսական է: Արմատը լատինական է, իսկ բառը, միևնույն է, ռուսական է: Ֆրանսիացիները մինչև հիմա չակերտների մեջ են առնում իրեն այլալեզու: Անգլիացիների մոտ ավելի հաստատում է, բայց եթե դուք նայեք «Վեբստեր» բառարանը, ապա 1291 էջում կկարդաք. «Ինտելիգենտսիա- ռուսերեն ինտելիգենցիա բառից...»: Մեր բառը այլ լեզուներում էլ է հայտնվել, ինչպես հին ժամանակներում «ինքնաեռը», «տափաստանը», ինչպես հեղափոխու-

թյունից հետո՝ «բոլշևիկը», «սովետը», ինչպես վերջին ժամանակերս՝ «արքանյակը»:

Այս հոդվածում ես ուզում եմ պատմել մի ռուս ինտելիգենտի իղձերի, որոնումների, հաջողությունների մասին: Նրա ճակատագիրը, իմ կարծիքով, ուսանելի է և զուրկ չէ հետաքրքրությունից: Պետք է գրել դոկտոր Ֆյոդորովի մասին: Ժամանակն է:

Ես նրա հետ ծանոթացա 1960 թվականին:

Երիտասարդը լայնաթիկունը էր, եռանդուն, անթերի հագնված, և, անմիջապես երևում էր, որ խելացի է: Նրա դեմքը կամք ու հանգիստ ինքնավստահություն էր արտահայտում: Նա ուներ ամուր այտոսկրեր, կարճ, մի քիչ վեր ձգված քիթ, լայն, հեգնոտ շուրթեր, մազերը՝ համառ ոզնու նման էին: Առաջին հանդիպումից ես մտապահեցի նաև նրա պահվածքը՝ ունկնդրելիս, հարցերին պատասխանելիս ուղիղ զրուցակցի աչքերին նայել:

Նա ինձ մոտ եկավ անսպասելի խնդրանքով: Նրան տեղեկանք էր պետք, որ ինքը՝ Ֆյոդորովը, չի խնդրել իր՝ Ֆյոդորովի մասին գրել թերում: (Հստակության համար նշեմ, որ ես առնչություն չունեի այն վաղուցվա հրապարակման հետ): Առանց այդ տեղեկանքի, գտնում էր նա, իր վերջը կգա: Ամբողջ աշխատանքի վերջը:

Ֆյոդորովն այդ ժամանակ աշխատում էր Չերոկսարդիում՝ Շելմիլցի անվան աչքի հիվանդությունների պետական ինստիտուտի մասնաճյուղում: Այնտեղ էլ նա եղակի վիրահատություն էր կատարել, որից էլ սկսվել էին բոլոր դժբախտությունները: Դավանաբար, դուք լսել եք արդեն մարդու աչքի մեջ արհեստական բյուրեղիկի «կենդանացման» մասին. շատ խոսակցություններ եղան: Վիրահատությունը հաջող էր անցել: Ֆյոդորովը մի տարուց ավելի նախապատրաստվել էր, ճագարների վրա փորձեր էր արել, գտել էր հմուտ վարպետներ և նրանցից մեկը՝ խառատ-փականագործը, օգնել էր պլաստնասայից բյուրեղիկ պատրաստել: Եվ ահա 19-ամյա Լենա Պետրովան, որ ի ծնե, կատարակտի պատճառով, երկու

տարեկանից աջ աչքով չեր տեսնում ոչինչ, սկսեց տեսնել. հաջողություն:

Իսկ հետո տեղական թերթում ակնարկ հայտնվեց. նորարար բժիշկը, հնուտ խառատը, չուվաշական գյուղի աղջնակը՝ ամեն ինչ ներկայացված էր լավագույն ձևով: Յետո կենտրոնական թերթերից մեկում հայտնվեց իրապարակում, որտեղ բժիշկ-նորարարին սխալմամբ անվանել էին մասնաճյուղի տնօրեն, ինչով ընդմիշտ նրան դարձրել էին իրական տնօրենի թշնամին: Դժբախտություն է, եթե ձեր մասին գրում են մամուլում: Յուրաքանչյուրին պարզ է վատ է, եթե քննադատում են, բայց դուք կզղաք և ձեզ կներեն: Իսկ եթե ձեզ գովեն, օ, կզտնվեն մարդիկ, որ երբեք չեն ների ձեզ:

Կարճ Ֆյոդորովին Զեբոկսարիում ուղղակի հոշոտեցին: Նա նետվեց Մոսկվա, բայց այնտեղ էլ նրան բարեկամաբար չփիմավորեցին: Յետագայում ես ծանոթացա երիտասարդ բժշկի հակառակորդների հետ: Ես կարծում էի հանդիպելու եմ բյուրոկրատների, իսկ տեսա գիտնականների: Զեզ դրեք նրանց տեղը, ընթերցող. ի՞նչ եք իմացել դուք: Տղեկ, առաջին, գուցե պատահական հաջողությունը, իսկ աղմուկը... Եվ նա առաջինն էլ չէ. նման վիրահատություններ արել են Անգլիայում, ԱՄՆ-ում, ԳԴՀ-ում, մեզ մոտ՝ Մոսկվայում էլ մի վիրահատություն եղել է մինչև չեբոկսարյանը (ապակե ցեյսովյան բյուրեղիկ են տեղադրել): Շատ ճարպիկ է այդ Ֆյոդորովը, ու այդ ամբողջ պատմությունը ինքնագովազդ է հիշեցնում:

Սրանք «խանգարիչ մանրանասներ» էին, որոնց հետ ժամանակ առ ժամանակ բախվում է յուրաքանչյուր բանասեր: Մանրանասներ, որ լավ կլիներ՝ չլինեին, որոնք լավ կլիներ չնկատել ու չիմանալ: Ես կարող էի, իհարկե, առարկել՝ ոչ թե տղեկ, այլ փորձված վիրաբույժ, գիտությունների թեկնածու: Ոչ թե մեկ, այլ չորս վիրահատություն՝ նա հասցրել է ևս երեքին վիրահատել: Եվ հետո՝ նա իսկապես չի խնդրել գրել իր մասին. փաստ է, որ լրագրողները վիրահատության մասին տեղեկացել են մասնաճյուղի տնօրենից:

Իսկ հետո՝ ասացին ինձ: Ի՞նչ կլինի հետո այդ աղջնակի հետ, աչքը կընդունի՞ օտար մարմինը, բարդություններ չե՞ն

առաջանա, ո՞վ իմանա՝ ի՞նչ կլինի: Չի կարելի թնքկահարել մամուլում, չի կարելի ուռճացնել սենսացիան՝ հազարավոր հիվանդ մարդկանց հույսեր ներշնչելով, քանի դեռ չկան հեռագնա արդյունքները:

- Ինչքա՞ն պիտի սպասել,- հարցոր ես:

- Չինգ տարի...

Չինգ տարին արդեն անցել է:

Չերոկսարին զրկվեց Ֆյոդորովից:

Ես, իհարկե, կարող էի ասել, որ Ֆյոդորովը զրկվեց Չերոկսարիում աշխատելու հնարավորությունից, բայց լիովին գիտակցաբար գործի այն, ինչ գործի: Վաղուցվա գործ է ու այդ ամենին հնարավոր է սրափ նայել:

Գիտե՞ք դուք, թե ի՞նչ է գավառը: Որտեղի՞ց է գալիս: Ո՞ր մեղքերի համար է գավառ անվանվում: Մինչև Չերոկսարի այսօր թռիչքն այնքան է տևում, ինչքանում առաջներում Կունցևո էին հասնում: Նորությունները իմանում են նույն պահին: Կարդում են նույն թերթերը, նայում են նույն հաղորդումները, շենքերն էլ կառուցում են՝ ինչպես Չերյոնուշկիում: Հավանաբար, ոչ նայրաքաղաքից հեռավորությունը, ոչ հարկերը, ոչ ասֆալտը արդեն չեն կարող գավառականության չափանիշ լինել՝ այնպես, ինչպես կրթությամբ չի որոշվում ինտելիգենտությունը: Ուրեմն ինչո՞ւ: Ես ինքնատիպ չեմ լինի. քարացած միտք՝ ահա չափանիշը: Ոչ ինքնուրույն մտածողությունը, հայացքը կենտրոնին:

Սոսկովյան ակնարույժները միայն կասկածներ էին հայտնել, չերոկսարյան նասնաճյուղի համար դա արդեն ցուցում էր: Այնտեղ կնճռոտվել են - այստեղ խոսում են, այնտեղ մի բառ են ասել, այստեղ շտապում են կազմակերպական եզրակացություններ ամել, այնտեղ փոշտացին - այստեղ այդ փոշտոցը ամպրոպի որոտ է: Եվ ահա արդեն վիրահատությունը, որով դեռ երեկ հպարտանում էին, որակվում է «մեխանիկական», «հակակենսաբանական» և նույնիսկ «հակապավլովյան»: Ֆյոդորովին հանկարծ ուղարկում են հեռավոր գործուղման, իսկ վերադարձին նա պարզում է, որ պլաստմասա-

յե աչքերով թանկարժեք ճագարները սատկել են՝ նրանց պարզապես չեն կերակրել: Մասնաճյուղի տնօրենն անձամբ է սկսում քննել Ֆյոդորովի վիրահատած հիվանդներին: Նա դա անում է առանց Ֆյոդորովի մասնակցության (որ ինքնին չլսված բան է), նա սկզբում մութ սենյակում ուսումնասիրում է աչքի հատակը, իսկ հետո, հիվանդներին վառ լույսի տակ բերելով այսուսակը կարդալ է տալիս: Տեսողությունը երկու անգամ ավելի թույլ է ստացվում, քան կա իրականում (հետագայում դա մի քանի անգամ ստորգվեց), բայց տնօրենը գիտի՝ կենտրոնում իր տվյալներից գոհ կլինեն... Հանուն դրա կարելի է արհամարհել բժշկական էթիկան: Ինչպես ասում են նման դեպքերում. «Ինտելիգենտության ժամանակը չի»:

Բանավեճի էռությունն արդեն մոռացված է, մնացել են ծայրամասային բանսարկությունները, նախանձը, մեծամտությունը, և Ֆյոդորովին ազատեցին աշխատանքից, միաձայն ասելով՝ մեզ մոտ չկան անփոխարինելիներ: Եվ դա ավելի քան տխմարություն էր:

Այն ժամանակ, չունենալավ հեռագնա արդյունքներ, ես չեի կարող գրել դոկտոր Ֆյոդորովի մասին: Բայց նրա ճակատագրին չխառնվել էլ չեի կարող, նախարարության հետ իմ բանակցություններից հետո նրան վերականգնեցին: Վերականգնեցին, բայց շուտով նա հեռացավ Չեբոկարիից, որովհետև այնտեղ, միևնույն է, հետազոտությունները թույլ չեն տա շարունակել: Ֆյոդորովը փաստաթոթերը հանձնեց Արխանգելսկի բժշկական ինստիտուտ, մրցույթով դարձավ աչքի հիվանդությունների բաժնի վարիչ ու մեկնեց Արխանգելսկ, ինձ էլ հրատապ գործեր պատահեցին... 1960 թվականին այդպես էլ պատմությունն ավարտվեց: Արխանգելսկը Ֆյոդորով ունեցավ:

Այո, իհարկե, գավառը ոչ այնքան աշխարհագրական, որքան սոցիալական, բարոյական հասկացություն է: Կարելի է մայրաքաղաքում էլ գտնել «ծայրագավառոցիներ», և կարելի է ամենախոլ գավառում էլ հանդիպել վառ, նկատելի անհատականությունների, որ իրենց նմանվելու զգտում են առաջացնում: Անգնահատելի է և դեռ շատ քիչ է գնահատված

նրանց դերը: Սահմանները ջնջվում են՝ բոլորը դա գիտեն: Քաղաքի ու գյուղի միջև, կենտրոնի ու ծայրամասերի միջև: Երբեմն մենք պատկերացնում ենք այդ գործընթացը իբրև ինչ-որ զուտ աստիճանական երևոյթ: Իրականում դա տեղի է ունենում թռչքներով, այստեղ էլ մենք հեղափոխական ճանապարհով ենք գնում: Օրինակ. մտածեք ակնաբույժ Վ.Պ. Ֆիլատովի սխրանքի մասին, որն իր քաղաքը դարձեց աշխարհի ակնաբուժական մայրաքաղաքներից մեկը: Դա վիթխարի ցնում էր գիտակցության մեջ, երբ կույրերը ապաքինման համար շարժվեցին դեպի Օդեսա՝ ուրիշ քաղաքներից, ուրիշ երկրներից:

Մի տարի առաջ ես Մոսկվայում հանդիպեցի ուրալցի ինժեներ Ռատչինին: Յյուսիս ուղևորվելու ճանապարհին նա հանգրվանել էր իր մայրաքաղաքացի ազգականի տանը, որը նրան երկար-բարակ խելք էր սովորեցրել. «Ի՞նչ գործ ունես Արխանգելսկում: Ապրիլի ինձ մոտ, այստեղ վիրահատվիր, բոլոր պրոֆեսորները Մոսկվայում են»: Բայց Ռատչինը չմնաց, վիրահատությունը նրան օգնեց կարծում եմ զարմիկի բացված աչքերը քեռու աչքերն էլ բացեցին: Նրա հայացքները «գավառի» ու «գավառացիների» մասին, ինչպես ակնաբույժներն են ասում, ենթարկվեցին անհրաժեշտ ուղղորդման:

Գիտական ծայրագավառ չկա և չի կարող լինել, որովհետև չկա երկրորդ կարգի գիտություն: Այն, ինչ խսկական գիտություն չէ, գիտություն չէ բնավ: Ես բավականությամբ կարող եմ նկատել, որ ակնաբուժությունը մեզ մոտ զարգանում է լայն ճակատով, որ այսօր հնարավոր չէ լրջորեն գնահատել նրա հաջողությունները, չիիշելով այնպիսի գիտնականների գործերը, ինչպիսիք են պրոֆեսորներ Տ. Բիրիչը (Մինսկ), Տ.Երոշևսկին (Կույբիշև), Մ.Պոպովը (Սմոլենսկ), Վ.Շևալյովը (Կիև), Ա. Նեստերովը (Կազան), Բ.Պոլտոպովովը (Գորկի) թվարկումը կարելի է շարունակել: Ու թեպետ դրցենտ Ս.Ֆյոդորովի (Արխանգելսկ) աշխատանքի արդյունքների մասին վաղ է դատել, արդեն հիմքեր կան մտածելու, որ այս քաղաքն էլ է դարնում աչքի հիվանդությունների կենտրոններից մեկը... Իսկ Չերոկսարի այլ տեղերից հիվանդներ չեն գնում: Ափսոս:

Ինչպե՞ս են արվում հայտնագործությունները:

Սկսվեց նրանից, որ Ֆյոդորովը գնաց ժամագործի արհեստանոց: Կամ չէ՝ մինչ այդ նա երկար մտածում էր իր աշխատանքի ու իր կյանքի մասին: Լուրջ մտահոգություն էր, Ֆյոդորովը չէր կարողանում քնել ու անընդհատ ծխում էր, շուրումուռ գալս անկողնում: Ինչո՞ւ է աշխարհ եկել: Ինչի՞ է հասել: Ո՞ւր է գնում: Ընդհանրապես՝ ո՞րն է մարդու կոչումը: Դա առաջին լուրջ անհաջողությունից հետո էր՝ Արխանգելսկում. վիրահատությունից հետո աչքը բորբոքվել էր, ստիպված էին արհեստական բյուրեղիկը հեռացնել: Ուրեմն, ոչ բոլորին է այդ մոդելը հարմարվում, պետք է նորը գտնել, պետք է ավելի լավը դարձնել, ճգործ, բայց որտե՞ղ: Ահագին դժվարությամբ հաջողվեց «պատվեր» անցկացնել բժշկական սարքեր պատրաստող ինստիտուտում, բայց պատվերը կատարել չէին շտապում... «Այդպես ամբողջ կյանքս կանցնի,- մտածում էր Ֆյոդորովը,- իսկ ես դոփում եմ տեղում»:

Առավոտյան նա գնաց ժամագործի մոտ: Ինչ-որ մեկը նրան պատմել էր, որ այնտեղ աշխատում է մի շնորհքով տղա. գտավ այդ տղային ու պատմեց իր մտադրությունը: Նոր բյուրեղիկը պետք էր բարակ ոտիկներով ամրացնել աչքին: Ժամագործ Վիկտոր Սմիռնովը երկու շաբաթ մինչև ուշ գիշեր գործ էր անում և պատկերացրեք, որ սարքեց փոքրիկ ծանրոց կապրոններ թելերը ծռելու համար: Դիմա պետք էր այդ ոտիկների համար միկրոնային անցքեր բացել պլաստմասայի վրա, և Ֆյոդորովը գտավ ևս մի «ձախլիկի»՝ նախկին թատերական նկարչի: Բորիս Միխայլովիչ Վենցենոսովը ամիս ու կես գայլիկոններ էր սարքում: Ցավոք, նրանք լավն էին միայն մետաղի համար, իսկ պլաստմասայի մեջ խրվում-մնում էին, բայց Ֆյոդորովը իիշում էր, թե ինչ անշահախնդիր պատրաստակամությամբ է ծերուկը սկսել իրեն օգնել: Նա գնաց Մայնակսանյան գործարան և ծուլողները նրա համար մամլիչների ծուլածոններ սարքեցին: Նա գնաց «Կարմիր դարբնոց» և վարպետ Պավել Լուկյանովիչ Տրետյակովը հիանալի վերադիր սարքեց վիրահատական սեղանի համար: Այս ամենը անվճար, հենց այնպես:

Ոչինչ, փաստորեն, դեռ պատրաստ չեր, բայց Ֆյոդորովն արդեն համակված էր հոգու այն երջանիկ տրամադրվածությամբ, երբ վճռականապես ամեն ինչ թվում է հնարավոր, և, տեսնում ես, ամեն ինչ ստացվում է:

Նա եկավ Լենինգրադի ժամացույցի գործարան, ընդմիջմանը հավաքեց բանվորներին ու ամեն ինչ նրանց ցույց տվեց՝ գծագրերը, հաշվարկները, լուսանկարները: Ահա աչքի խորհրդավոր շրջանակը, ահա նրա «քևեռները», ահա «հասարակածը»՝ բժիշկներն այդպես էլ կոչում են: Աչքը ամբողջ աշխարհ է, մարդու համար այնտեղ մի ամբողջ աշխարհ կա, չտեսնողների համար շատ վատ է, բայց մեկ էլ տեսնում ես՝ կարելի է նրանց օգնել, միայն «պահեստամասեր» լինեն: Վարպետները ձեռքից ձեռք էին փոխանցում փոքրիկ բյուրեղիկը, ուսումնասիրում էին խոշորացույցով, և երկար վեճից հետո բարձրագույն խորհուրդը սահմանեց՝ շաղափել հնարավոր է: Եզակի հաստոցը սարքեց մեխանիկ Նիկոլայ Վասիլևիչ Լեբենդը:

Մնում էր ամենադժվարը՝ բյուրեղիկների պատրաստնան ծանրոցները: Գործարանում ոչ ոք հանձն չէր առնում: Ասացին, այդ գործը կարող է անել միայն մի ծերուկ, եթե դեռ կենդանի է, որ ժամանակին աշխատել էր գործարանում: Ազգանունը՝ Կորան: Որտե՞ղ գտնել: Վասիլևսկի կղզու վրա էր ապրում կարծես, ինչ- որ նկուղում... Յասկանակի է, որ Ֆյոդորովը բոլոր նկուղներում եղավ, հետո կրահեց, որ պետք է տեղեկատու դիմել ու պարզեց, որ այդ ազգանունով Լենինգրադում չորս մարդ կար: Եվ ահա վերջապես անհրաժեշտ փողոցը, անհրաժեշտ շենքը, անհրաժեշտ մուտքը և պղնձե մակագրությունը դրան վրա՝ «Ալեքսանդր Սովորովիչ Կորան». այդ ժամանակի ընթացքում նա նոր բնակարան էր ստացել:

Ես եղել եմ նրա մոտ, տեսել եմ այդ լռակյաց, նիհար, ներս ընկած այտերով ծերուկին: Նոյնքան պարզ էլ նա դիմավորեց Ֆյոդորովին՝ կարծես վաղուց էր նրան սպասում և այդպես էլ լսում էր՝ առանց ընդհատելու: Եվ միայն երբ կինը տուն եկավ, բարձրաձայն հարցնում էր՝ ուրեմն ինչպես ինձ գտաք... գործարանում հուշեցին: Ասում եք՝ ոչ ոք հանձն չառավ: Ուրեմն՝ հիշում են Կորանին: Յետագայում ծերուկին ինչ որ կերպ

շնորհակալություն հայտնելու համար՝ Ֆյոդորովը նրան իրավիրեց Արխանգելսկ: Ալեքսանդր Մոդեստովիչը շատ հպարտ, սպիտակ խալաթով շրջում էր հիվանդանոցում, ձեռքով բարևում բռլորին, նայում էր հիվանդների աչքերին (որտեղ արդեն նստած էին նրա ոսպնյակները), բժիշկներին սովորեցնում էր դրանք դրոշմելը ու իրեն պահում էր ակադեմիկոսի նման՝ իր գործում նա հենց ակադեմիկոս էր: «Ես ինչ է, այ երբ ես Վավիլովի հետ էի աշխատում՝ Սերգեյ Իվանիչի...»: Կաղապարները նա պատրաստում էր հիանալի, վերջին փայլեցումն անում էր թավշով, բյուրեղիկները ստացվում էին մաքուր ինչպես ցողի կաթիլ:

Ի՞նչ պատմեմ հետո: Ֆյոդորովին պետք եկավ հիդրոֆիլային պլաստմասա, և լենինգրադցի քիմիկոս գիտնականներ Արբուզովան, Սերգեյիկան և մյուսները «հասարակական հիմունքներվ» հանձն առան սինթեզել: «118-րդ փորձը տվեց աշխատող պլաստմասա», պատմում էր ինձ Լիոյիա Իվանովնա Սերգեյիկան: Կարո՞՞ն եք պատկերացնել՝ 118-րդ: Քիմիկոսներից պահանջվեց իմանալ աչքի մեխանիկական հատկանիշները՝ առաջգականությունը, ձգողունակությունը, ամրությունը: Գրականության մեջ այդպիսի տվյալներ չգտնվեցին. հավանաբար առաջ պետք չէին եղել: Ֆյոդորովը գնաց ֆիզիկոս գիտնականների մոտ՝ Ե. Կուվշինսկու, Ս. Զախարովի և նրանք հատուկ սարքեր պատրաստեցին ու իրենք էին կատարում բռլոր չափումները: Դանկարծ իր մասին հիշեցրեց խառատ Միլմանը Չեբոկսարիից նա, ով առաջին բյուրեղիկներն էր սարքել՝ նոր մոդել ուղարկեց, շատ հեռանկարային... «Ժամանակ ու ներշնչանք կար»՝ գրում էր նա նամակում: Ոսպնյակները Ֆյոդորովին օգնեց ծևավորել օպտիկ գիտնական Ա. Նիժինը, իր նախագծած սարքը աչքի խորքը չափելու համար, Ֆյոդորովին նվիրեց գիտնական բժիշկ Ա. Գորբանը, սիլիկոնի հեղուկ պլաստմասա սինթեզեցին նրա համար մոսկվացի քիմիկոս գիտնականներ Տ. Կրասովսկայան և Լ. Սոբոլևսկայան, և այդպես շարունակ՝ մինչև անվերջություն...

Քիմա, երբ շատ բան ձեզ հայտնի է, ծիշտ ժամանակն է խոսքը տալ իմ հերոսի ընդդիմախոսներին: Ահա ինչ էր գրում, օրինակ, նրանցից մեկը՝ պրոֆեսոր, հայտնի ականաբույժ.

«Պղտոր բյուրեղիկի հատման վիրահատությունը հիմա տեսնիկապես լավ մշակված է: Բազմաթիվ մարդիկ կատարակտի (այդպես է կոչվում այդ հիվանդությունը) վիրահատությունից հետո ակնոցով լավ տեսնում են: Սակայն իբրև արտասահմանյան «սենսացիա» գովազդվում են աչքի ներսում արհեստական ռսապնյակներ տեղադրելու փորձերը, որոնք իրենց չեն արդարացրել: Պարզվեց, որ այդ վիրահատությունից վտանգն ավելի շատ է, քան օգուտը»:

Բանավեճը, ինչպես տեսնում եք, սպառված չէ:

Ֆյոդորովի աշխատանքը դեռ մնում է «սենսացիոն» այն իմաստով, որ ամենատարբեր լուրեր են պտտվում նրա մասին: Որոշ գիտնականներ հապաղում են վերջնական գնահատականներ տալ, ավելորդ շտապում են որոշ լրագրողներ: Ահա վերջերս էլ մանուլում հանկարծ հայտնվեց հոդված, որտեղ իբրև վերջին «նորություն՝ գովազդվում էր... հնգամյա վաղեմության չերոկսարյան վիրահատությունը: Եվ նորից խոժովեցին պատկառելի պրոֆեսորները, նորից մեղադրեցին Ֆյոդորովին ինքնագովագրի մեջ՝ առանց իմանալու, որ այդ հոդվածի հեղինակին Ֆյոդորովը իր օրում չի տեսել: Բայց մյուս կողմից, և նրանք՝ պրոֆեսորները, Արխանգելսկ չեն գնացել ու Ֆյոդորովի մասին նոր տվյալները չգիտեն ու նրա հիվանդներին չեն տեսել: Մինչդեռ «փորձերը», ուղիղն ասեն, շատ էին՝ դոկտոր Ֆյոդորովը 62 վիրահատություն է արել:

Դե ինչ, բանավեճը օգտակար է, կարծիքները գիտության մեջ կարող են տարբեր լինել, և ոչ մի վատ բան չկա, որ մի գիտնական քննադատում է մեկ այլ գիտնականի: Առավել ևս, որ Ֆյոդորովի դեմ հանդես եկած ակնաբույժը ականավոր գիտնական է, որ մեծ ծառայություններ ունի հայրենի գիտությանը: Արտասահմանում՝ անվերահսկելիության, գովազդի, շահույթի ետևից մրցավագքի պայմաններում, այդ վիրահատությունը նետվեցին անելու տասնյակ ցածր որակավորման ակնաբույժներ, և եղան բարդություններ, նույնիսկ վիրահատված աչքերի կորուստ, և այդ ժամանակ գրանցվեց «նահանջի միտում»... Այնպես որ վիճելու բան չկար: Դժբախտու-

թյունն այլ էր: Դժբախտություն էր, որ քննադատի կարծիքը այս պարագայում լիովին կիսում էր համամիութենական ակնաբուժական ընկերության նախագահը: Նույն դիրքերում էր ԽՍՀՄ առողջապահության նախարարության գլխավոր ակնաբույժը: Լիովին համաձայն էր ԽՍՀՄ բժշկական ակադեմիայի ակնաբուժության պրոբլեմային հանձնաժողովի նախագահը: Կարծ ասած՝ բոլոր այդ պատասխանատու պաշտոններում միևնույն մարդն էր՝ հարգարժան պրոֆեսոր, ում հոդվածից ես մեջբերում կատարեցի՝ ամենասկզբից նա դեմ էր դոկտոր Ֆյոդորովի աշխատանքներին:

Կծնվի՝ ճշմարտություն նման բանավեճում:

Ոչ, ես չեմ կարող ասել, որ Ֆյոդորովին անընդհատ խանգարել են: Այս բոլոր տարիներին ես նրան չեմ հանդիպել, բայց ժամանակ առ ժամանակ գրել եմ նրան, և նա ժամանակ է գտել ինձ պատասխանելու: Քինզ տարում հավաքվել է նամակների մի անբողջ տրցակ, և հիմնականում դրանք առույգ նամակներ էին:

«Մենք ջարդում ենք, շվեդները հանձնվում են,- գրում էր Ֆյոդորովը նամակներից մեկում,- մեր հաստիքները լրացված են: Եվ քիմիկոս ունենք, շատ շնորհքով, և մեխանիկ: Սեխանիկ Կորանին ենք ծևակերպել, Վերջերս նորից եկել էր՝ սեփական նախագծով հաստոց էր բերել: Իմ կարծիքով՝ հաջողված:

Ամբիոնի կողեւկտիվը ևս լավ է, լավ բժիշկներ կան, ուսանողներ-խմբակի անդամներ: Վիտալի Յակովլիկը Բերիլոն մեր վիրաբույժը, ոչ միայն յուրացրել է վիրահատության տեխնիկան, այլև օյուտարարությամբ է տարվել՝ մի քանի նոր գործիքներ է սարքել: Իսկ ուսանող Վալերի Զախարովը այնքան է ճարպկացել, որ միաժամանակ և զոդում է, և շաղափում, և դրոշմում, մենք նրան անվանում ենք խառատ-ակնաբույժ: Քիվանդներն ել են օգնում: Քիվանդանոց էր ընկել Վիկտոր Սմիռնովը (ժամագործին հիշում եք) ընդհանուր վիրաբուժություն, իսկ բոլոր երեկոները Վալերիի հետ է անցկացնում արհեստանոցում: Ուրալցի մի ինժեներ (միակողմանի կատարակտ) մեզ համար լուսանկարչական լաբորատորիա հավաքեց, Գորկիից մի ուսանող ֆիզիկոս (արդեն վիրահատ-

ված) մեզ համար օպտիկական հաշվարկներ է անում, լենինգրադցի ասպիրանտուիին անգերենից հոդվածներ է թարգմանում: Ամենաանամոր կերպով շահագործում ենք բոլորին...»:

Ին հերոսը վաղուց արդեն միայնակ գյուտարար չեր: Նա մակներից դատելով՝ Արխանգելսկում ինստիտուտի կոլեկտիվը, կուսակցության մարզկոմը, շրջգործկոմը նրան աջակցում էին, ԽՍՀՄ առողջապահության նախարարությունում նա արդեն կողմնակիցներ էր ձեռքբերել՝ մի խոսքով Ֆյոդորովին գետնելն արդեն դժվար էր: Բայց յուրաքանչյուր քայլը նրան տրվում էր նույնքան դժվար, նույնքան անհավանական լարումով, որ այսօր, նայելով այդ ճանապարհին՝ ես ապշում եմ, թե ինչպես է նա կարողացել մինչև վերջ հասնել:

Բայց հասել է:

Միայն այժմ եմ հասկանում վիթխարիությունը, համընդհանուր մարդկային բարեկամական անգնահատելի աջակցությունը, որ գտել է այդ մարդը իր «մարդագնացության» ընթացքում: Ես հիացած եմ և մտածում եմ, որ այս պատմության մեջ իրենց դրսնորել են մարդկանց միջև ստեղծված նոր հարաբերությունները: Ճետո մտածեցի, որ եթե այդ հարաբերությունները ծրագրային հունի մեջ լինեին, հարյուր անգան ավելի շատ բան կարվեր: Այնուամենայնիվ, դոմնաները մենք հասարակական հիմունքներով չենք կառուցում: Այնուամենայնիվ, արբանյակները աշխատանքից ազատ ժամանակ չենք տիեզերք արձակում:

Հիմա «օգուտի» ու «վնասի» մասին:

Լենա Պետրովան հիմա տասներորդ դասարանում է սովորում, իր արհեստական բյուրեղիկի մասին նույնիսկ մոռացել է: Վերջերս նորից Ֆյոդորովի մոտ էր, այս տարիներին նրա մյուս աչքի վրա էլ էր կատարակտ օարգացել, Ֆյոդորովը նորից վիրահատեց և երկրորդ բյուրեղիկը տեղադրեց, և հիմա, ինչպես ինձ գրել էր Լենան, «ինքը լրիվ արհեստականացել է»: Ես շատ հիվանդներից էի նամակներ ստանում: Մ.Չեռնունուսով (Արխանգելսկ). «Նորից տրակտորի վրա եմ աշխատում ու աչքս չի կարմրում, չի ցավում», Մ.Կուլիշենկո (Կիև) «Վի-

րահատությունից չորսուկես տարի է անցել: Տեսնում եմ ծառի գագարը, կտավի բոլոր թելիկները: Դուք գուցե դրանից չեք զարմանում, բայց նա, ով կորցրել է տեսողությունը, ինձ կհասկանա: Յավելեմ, որ ես նկարիչ եմ»: Վ.Գորբունովա (Թաթարստան) «Ամեն ինչ շատ թերև անցավ, ես նույնիսկ ցավ չգացի: Չորրորդ օրը բացեցին աչքերս, փոխեցին վիրակապս, ես ջանում էի տեսնել ու առաջին անգամ պարզ տեսա Ֆյոդորովին»: Վ.Բորիսով (Արխանգելսկ) «Երբ մուրճով խփում էի, բեկորը թռավ ու խրվեց ձախ աչքս: Մի տարի հետո ես տեսնում էի միայն լույսի օգացողությունը: Ընկեր Ֆյոդորովն ու ընկեր Բերիլոն ինձ վիրահատեցին, նոր բյուրեղիկ դրեցին: Յոր ամիս է անցել, 0,5 տեսողություն ունեմ, իսկ ակնոցով՝ ամբողջ 1: Պ. Լետանին (Չելյաբինսկ) «Ուրախությունից ամեն առավոտ ինքս ինձ ստուգում եմ, վերցնում եմ լուցկու տուփը ու կարդում եմ՝ ինչ գրված է, նույնիսկ ֆարրիկան: Մի կիլոմետր հեռավորության վրա տեսնում եմ: Սկզբում, իհարկե, ինձ շոգեքարշին մոտ չին թողնում, իսկ վերջին հանձնաժողովը թույլատրեց»:

Ինչպես կարելի է գրել, որ վիրահատությունն իրեն չի արդարացրել: Ո՞ի՞սկը: Անկասկած կա, ինչպես ամեն նոր գործում, Ֆյոդորովն անհաջողություններ էլ է ունեցել երկու դեպքերում (62-ից) վիրահատությունից հետո աչքը բորբոքվել է և հարկադրված են եղել բյուրեղիկները հեռացնել: Բայց կատարակտի սովորական վիրահատություններում էլ, որ արդեն 210 տարի կատարվում են, բարդություններ լինում են: «Նահանջի միտո՞ւմ»: Այո, որոշ երկրներում գրանցվել է: Բայց խոշոր ակնաբույյժները՝ Չոյսը (Անգլիա), Բինկիորստը (Շոլանդիա), Բարակվերը (Իսպանիա), որոնց հետ Ֆյոդորովը նամակագրական կապ ունի, աշխատանքները շարունակում են: Նրանք արդեն 2000-ից ավելի նման վիրահատություններ են արել: Ինչպես կարելի է այս ամենը մի կողմ նետել՝ ծրագրելով մեր ակնաբույյժության հետընթացը 5-10 տարով: Յանկարծ պարզվի, որ նրանք ճիշտ են: Գլուխ կոտրելով վազելու ենք նրանց ետևի՞ց:

Ավարտում են. վերջերս Մոսկվայում, ԽՍՀՄ առողջապահության նախարարությունում քննարկվում էր բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվյատոսլավ Ֆյոդորովի աշխատանքը: Ես ներկա էի նիստին և կարող եմ վկայել, որ խոսակցությունը լուրջ, բարյացկամ ու գործնական էր: Նշվեցին այդ աշխատանքի մի քանի թերությունները (օրինակ՝ հետազոտությունների գործնականության թուլությունը), միևնույն ժամանակ ասվում էր, որ անհրաժեշտ է ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի Ֆյոդորովը կարողանա այդ թերությունը վերացնել: Ընդհանուր առճամբ որոշվեց հետազոտությունների ուղղվածությունը խրախուսել, իսկ հետազոտությունները հնարավորինս զարգացնել:

Անցած ամռանը մենք Սև ծովի ափին հանդիպեցինք Ֆյոդորովին: Ես արձակուրդում էի, նա էլ. Ես մի օրով գնացի նրան հյուր՝ «Տուապսե» հանգստյան տուն: Մենք ծովափին նստած հանգիստ խոսում էինք կյանքի մասին, ես ուսումնասիրում էի նրան: Ոչ, հաղթանակները հենց այնպես չեն տրվում, ին իին ծանոթն ինչ-որ բան կորցրել է այս տարիներին՝ այտուցվել են կոպերը, խիստ գծեր են հայտնվել բերանի անկյուններում: Բայց այս մարդու կողքին առաջվա պես զգում էիր անկասելի ուժի հորձանքը: Ուռուցիկ մկաններ, քառակուսի ուսեր, հիանալի գծագրված իրան... Նա ցատկեց ձեռքերի վրա ու այդպես էլ հասավ ջրին: Նա չէր ցանկանում մի ոտքի վրա ցատկուել, իսկ երկրորդ ոտք նա չունի հատված է ծնկից մի քիչ ներքև: Ֆյոդորովը ոտքը կորցրել էր 17 տարեկանում ու այդ ժամանակ էլ որոշել էր բժիշկ դառնալ:

Ես գիտեմ, ինձ պատմել են ականատեսները, որ Կրասնյարսկում բժիշկների կոնֆերանսի ժամանակ նա բոլորի հետ մագլցել է նշանավոր գրանիտե «Սյուները» և առաջինն է հասել գագաթին: Նա ինքնասեր է, Ֆյոդորովը: Յյուսիսային Դվինայի վրայով դահուկ է քշում: Քաղաքից քաղաք է տանում իր երկու փրանոց պայուսակը, առաջին կարգ ունի շախմատից: «Բուժաշխատող» ընկերության լողի համամիութենական մրցումներում երկրորդ տեղն է գրավել: Իսկ Չերոկսարիում հարյուր մետր լողում առաջինն էր:

Որտեղից նրան այդ համառությունը, կամքի ուժը, ուզածին հասնելու ուժը... Թերևս նա ոչինչ չի կորցրել իին ռուս ինտելիգենցիայի ուժեղ կողմերից, նրա մեջ կա քնքշանք մարդու նկատմամբ, բարություն անելու ցանկություն, ներքին ազնվություն, ինքնուրույնություն կամ ինչպես ասում էր Տոլստոյը՝ մտքի հպարտություն: Բայց որպեսզի անցնես այն ճանապարհը, որ վիճակված էր նրան, այդ ամենը քիչ էր: Նրա բարությունը ուժով է լցված, նրա համար հեշտ է ժողովրդի հետ, և անվստահության զգացում չունի ժողովրդի առաջ, որովհետև նա ինքը ժողովուրդն է: Մուժիկի թոռ, կարմիր հեծյալի որդի, ինտելիգենտ:

Խոստացված էր դոկտոր Ֆյոդորովի հայտնագործության պատմությունը: Դե ինչ, դուք արդեն գիտեք, որ Արխանգելսկում նոր մոդելի բյուրեղիկներ են ստեղծվում՝ արտասահմանյանց տարբեր: Բայց չշտապենք. դրանք միայն առաջին քայլերն են: Յետաքրքիր փորձեր են կատարվում «կերատոպրոթեզով» (պղտոր ծիածանաթաղանթի պլաստմասայե փոխարինիչի), բայց այստեղ էլ եզրակացություններ անելը վաղ է: 16 վիրահատություններ են արվել հեղուկ սիլիկոնի օգտագործնամբ՝ դեպքերից մեկում, փրկելով անհույս աչքը, նրանք պլաստմասայով են փոխարինել ապակենման մարմնիկի 25 տոկոսը, և աչքը փրկվել է: Բայց այս մասին էլ թող դատեն գիտնականները՝ նրանք ավելի լավ գիտեն:

Դոկտոր Ֆյոդորովի գլխավոր հայտնագործությունը՝ նա կարողացել է իր նոր գիտության օգտին ծառայեցնել մեր նոր բարոյականության գործարար ուժը, հասկացել է, որ կարող է դիմել ցանկացած մարդու, և եթե նպատակը բարի է ու օգտակար Հայրենիքին, մարդն անպայման կօգնի: Դոկտոր Ֆյոդորովը իր համար բացահայտել է սովետական մարդու ապրելակերպը, սովետական բնափորությունը: Այդ պատճառով էլ հաղթել է: Շնորհակալություն նրան դրա համար:

## ԱՓՆԱՐՈՏԻԿ

Աշտարակի շրջանի Լեռնարոտ գյուղում տասնմեկ տարեկան մի տղա ուսին դրեց դահուկներն ու գնաց դեպի սարերը: Անասելի ցուրտ կիրակի էր: Գյուղի բոլոր վառարանների ծուխը դանդաղորեն սահում էր գյուղեզրի ձորով՝ քսվելով ջուներին: Ինչ կատու էլ տեսա, մեջքը խանձել էր վառարանի տակ: Ականջներն ու պոչը կտրված շունը կծկվել էր առավոտվա մոխրակույտի վրա՝ աչքերը գոց, իր բոլոր սարսափները կորցրած:

Տասնմեկ տարեկան տղան մի դույլ ջուր էր դրել վառարանին՝ ծանրած կովի համար: Յաշված օրեր էին մնացել, և նա գիտեր, որ կովն արդեն գոլ ջուր պիտի խմի: Տղան չէր մոռացել մի փունջ առվույտ կախել նորածին գառնուկների դնչիկների վերևում: Նա մորն ասաց. «Չթողնես ջուրը շատ տաքանա, երկու բուռ այսուր կխառնես ջրին», ու գնաց: «Վազն անցիր, մի փորձանք կրերես գլխիդ, շան ծիծ կերած», - ասաց մայրը: Տղան ետ եկավ, անկողնի ծալքի վրայից վերցրեց ձեռնոցներն ու նայեց մորը: «Յազար անգամ ասացի՝ սև բրդից ձեռնոց գործիր», - ասաց նա:

Կոլտնտեսության անասնագոմերի բակում երկու փրչութված ու դեն շարտված ձի նայեցին հեռացող տղայի ետևից: Յետո ձիերից մեկը, անկիրք ու անտեր, դունչը երկարեց դեպի գուռը՝ ուղիղ ծորակի տակ, հանգժնելով իր մեջ մրսող բոլոր կրակները: Մյուսը, հեռացող տղայի նկատմամբ հարազատություն զգալով, անշնորհք քայլքով մի քիչ տեղ գնաց նրա ետևից: Տղան շրջվեց, նայեց ձիուն, տեսավ ինձ, հետո ուսից ցած բերեց դահուկները, գցեց ոտքերի տակ ու սահող, տևական քայլքով գնաց՝ այլևս ետ չնայելու վճռականությամբ: Երկար ժամանակ տեսնում էի նրան հերոսի մեծությամբ, հետո՝ նահատակի, հետո՝ տղայիս: Աչքի մի թարթափ, երկու թարթափ, երեք, և տղան փաթիլի նման կորավ ձյուների մեջ:

Զիերի ոտների առջևից մինչև ամենավերջին սարը, ամենավերջին սարից էլ այն կողմ, այդ ամբողջ սպիտակ տարածքում կար, ապրում էր և շարժվում մի մարդ, տասնմեկ տարեկան մի անմահ մարդ: Նա իր շնչառությամբ, ուժով և սիրով լցրել էր սար ու ձոր: Ես նոր միայն հասկացա, որ տղան չի գնում սահելու: Իսկ այն բանը, որ տանում էր տղային դեպի ցուրտ սարերը, սկսեց մղկտալ իմ մեջ:

Յայրենիքը սար է, որի մի լանջին գարուն է, մյուսին՝ ամառ, երրորդին՝ աշուն, չորրորդին՝ ձմեռ: Մի՞թե ես մինչև հիմա ապրել եմ Յայրենիքի գարունքուտ լանջին, իսկ այս աննման տղան՝ հակառակ լանջին, ուր միայն բուք է ու բորան:

Տունը, ուր ես ծնվել եմ, և որի դրան վրա իմ վեց հորեղբայրները դանակի ծայրով գրել են իրենց անվանատառերը, ճիշտ և ճիշտ ճամփեզրին է, ինչպես բոլոր տները: Եվ քանի որ այդպես է, և մենք ծնվում ենք ճանապարհների վրա, նշանակուն է՝ ես, դու, բոլորս ճամփորդներ ենք ու պիտի քայլենք: Գոնե կզգանք մեր տան հետ մեզ կառանող բոլի երկայնքն ու ամրությունը, ինչպես մայսին ափնարոտիկում կապված մատաղառ խոյը:

ճանապարհին կարկուտի տակ էլ եմ ընկել, անձրևի էլ, ծալվել են ծնններս դեռ բլրին չհասած, մի ափ ջուր եմ տեսչացել ծարավից արթնացող հարբածից ավելի, բայց էլի քայլում եմ: Անշտապ ու անսայթաք խորանում են այս բարբառիկ եզերում, և հանդապահ կարգվելու ցանկությունն օրավուր ինձ խեղդում է: Այդպես, քամիների բերանն ընկնելով ու անձրւներից ծեծկվելով, իմ մեջ արդեն սկսել է ածել այս հողի եղեգներից մեկը և տատասկներից ամենակատաղին: Իսկ այդքանից հետո դժվար չէ հասկանալ, թե ինչպես է լինում, որ միջօրեի կիթից հետո, երբ անզուսպ ու խելակորույս գառները բռչում են դեպի հոգնած ու դատարկ մայրական հոտը, գառներից ամենապալբերանն էլ հազարանց հոտի մեջ գտնում է իր մի հատիկ մորը:

Ես խոսում եմ այն բաների մասին, ինչ տեսնում եմ: Իսկ ին տեսածը ուրիշ բան չէ: Խութեցի մեծ հայրս մինչև վերջ հովիվ էր, իմ հորեղբայրներից երկուսը հիմա էլ հովիվ են, և ինձ

թվում է, թե ես էլ վատ հովիվ չեմ լինի: Մեկ-մեկ, երբ հինգերորդ հարկի իմ պատշգամբից երևացող սարերը մքնում են, ինձ ու ինձ ասում եմ. «Եղբայրս, դու այնպիսի հովիվ կլինեիր, որ քո հոտը մինչև ուշ աշուն կկրվեր, և քո հոտի մեջ զույգ գառ ծնող մաքիները չափազանց շատ կլինեին»: Մեզնից ոչ մեկը հասակ այնպես չի նետել, որ իր հոր տուն մտնելիս ճակատը խփի դրնդիկի փայտին և իր խմորջուրը տաքացնի պատահական կրակի վրա: Մեզնից ոչ մեկը իրեն անչափ մոտիկ չի զգա անմահությանն ու երջանկությանը, եթե հանկարծ, մեկնիմեկեն իր ազգակցական կապը չզգա այս հողի կռատուկի ու աստղափշի հետ: Այս ելեջոտ հողի վրա ոչ մի սիրելի աստղանավորդ, ով ուզում է լինի, սիրելի չէ, եթե մինչև վերջ էլ նրան չի թվում, թե ճակատագրի դժբախտ բերումով է, որ ինքը հովիվ կամ այգեպան չի դարձել, եթե նրան չի թվում, որ ինքը խանգարված տրակտորիստ կամ փականագործ:

Լեռնարոտ գնալուց մի շաբաթ առաջ հովտի գյուղերից մեկում էի: Կտորներից մեկի վրա խոտի դեղ կար, որը վեց այծի էլ գարուն չէր հանի: Եվ այդ դեղը իր ետևում ծածկում էր Մասսիս սարը: Լինում է նաև այդպես: Չեմ ուզում ասել, որ կրակ տալու դեղ էր: Մի հիսուն ճնճղուկ պատսպարվել էին նրա մեջ: Պարզապես, այդ դեղի դիմաց մարդու շունչն էր կտրվում: Այդպես է, որովհետև լեռան սերը սովորեցրել է մեզ շնչել նաև աչքերով:

Լեռան այս գյուղում տասնմեկ տարեկան տղան գնաց, գնաց, գնաց ու մտավ սրտիս մեջ, ձուլվեց իր ձմռանը, իր եզերքին և չէր երևում, ինչպես մեզնից յուրաքանչյուրի չծնված եղբայրը: Եվ Րայաստանի կենտրոնում՝ ծյուների մեջ կանգնած, ես ինձ երջանիկ էի զգում, ընդունակ՝ զոհվելու մի հասկի համար, պատրաստ՝ համբուրելու բոլորի աչքերն ու ձեռքերը:

Տաքանալու համար մտա կովաբուծական ֆերմայի գոմը: Ցուրտը տերևների հետ ծառերից ու երկնքից թափված ճճղուկներին հավաքել էր տաք ու սմնդարար թոփի վրա: Ճճղուկներ կային մսուրների մեջ և կովերի մեջբներին: Այդ հրաշալի հաշտությունը թեքև զարհուրանք պատճառեց իր

ահեղ դատարկությամբ: Աղի կոշտերը մսուրների մեջ անդրաշխարհային, չպատկերվող ձևեր էին ստացել:

- Ո՞վ ես, ի՞նչ հողածին ես, - լսեցի ես: ճնճղուկները նետվեցին դեպի պատուհանները: Նրանցից մեկի կտուցից կախվել էին սարդոստայնի թելեր:

- Այստեղ եմ, ուշքը ինչ գնաց,- ասաց անտես մարդը: Ես նրան տեսա առաստաղի տակ, կովերի վերևուն կախված տախտակամածին:

- Ցուլու է,- ասացի ես:

- Ցրտից շատ մի վախեցիր: Երկիրը, որ տրվում է հողածնին, տրվում է տարին-տասներկու ամիս, տրվում է գիշեր-ցերեկ: Զյունահողմը հունիսի մարգագետնի վերևի նույն քամին է:

«Այս ինչ հրաշալի մարդու եմ հանդիպել», - մտածեցի ես: Եվ, ընդհանրապես, ում հանդիպել էի, ում չէի հանդիպել, վերջին երկու ժամուն բոլորն էլ հրաշալի էին թվում: Ես պատրաստ էի շատ բան անել այդ մարդկանց համար: Իսկ իմ ունեցած-չունեցածը մի կյանք էր, որ արդեն նվիրել էի տասնմեկ տարեկան տղային: Ստիպված էի նվիրել բոլորին, նորից ու նորից և անընդհատ նվիրել:

Նրա տախտակամածի տակ կապված էին իրենք իրենց մոռացած երեք ցուլեր: Մի կերպ, ոտքս ցուլերից մեկի մեջքին դնելով, բարձրացաւ: «Հողածնի» կողքին, ծալված տեղաշորի տակ, շախմատի տախտակ տեսաւ:

- Մեր գյուղում բոլորը շախմատ են խաղում, և բոլորն էլ կծու բիբար ուտողներ են: Շաղգամի արտը տրորելով՝ ծերացանք:

- Լավ է,- ասացի ես,- պառկում ես ճոճքիդ, նայում գլխավերևիդ սարդոստայնին ու մտածում առավոտից իրիկուն:

- Հողածինն այնպես չի ստեղծված, որ մի աչքով ծիծառի, մյուսով լաց լինի:

- Քեզ ի՞նչ է եղել:

- Ինչ պիտի լինի: Ասում եմ՝ իջնեմ, թկբերս քշտեմ, մսուրից բափված խոտի բազում շյուղերը քաջաբար հավաքեմ ու ետ լցնեմ մսուրի մեջ:

Ցուլերից սկը ծանրումեծ կանգնեց: Նրա վզի շղթան քսվեց մսուրին ու խշրտոցով զնգաց մի քանի տեղից: Ես առաջին անգամ ցուլի աչքի մեջ ինձ տեսել էի այն տարի, երբ ուխտավոր մորս հետ սեպտեմբերի վերջին շաբաթ օրը ուտքով զնացի էջմիածին և քննեցի ս. Շողակաթի գավթում:

- Դոդածինն ինքն իրեն շղթայել է ասեղի թելով և չի հասկանում այդ բանը: Գիտես, թե ինչու չի հասկանում: Չի հասկանում, որովհետև նրա կապը չի զնգում, ինչպես հիմա զնգաց այս ցուլի շղթան:

- Ցուլի շղթան ինչքան ուզում է զնգա՝ գոմը լի է երինջներով, և մսուրն էլ դատարկ չէ:

- Ողորմի քո անցավորաց:

- Յիշողաց: Բայց այդ ի՞նչ շաղգամի արտ եք տրորում,- ասացի ես:

- Շաղգամի անտեր արտ. թե չգիտես, իմացիր: Արտատեր Պառավն էլ չկա, որ մի ասպատակող անեօքից հետո Որսասարի տեղը ցույց տա:

- Քո կարծիքով խեղճ Դավիթն իր կյանքը պիտի անցկացնի միայն շաղգամ ուտելո՞վ:

- Չէ, ինչո՞ւ: Ինքնաշեն նետ ու աղեղով այդ որբուկը մեկ-մեկ էլ ծիս-միտ կիսվի շաղգամի արտում:

- «Դո՞ւ ես էն հոր տղան», - կրկնեցի ես Պառավի կասկածոտ ու վիրավորող հիշեցումը:

- «Եկել, իմ արտի վիա ես հերսոդ բափում, բամբդ դատարկվի»: Դավիթի աչքերն այս անեօքով է բացում Պառավը,- ասաց «հողածինը» և պատմեց մի դեպք, որի մասին, իր ասելով, մտածել է գիշեր-ցերեկ: Դա, իսկապես, լսելու պատմություն էր, և ես իմացա, որ նրա՝ այդ «հողածնի» անունը Արգար է: Յիմա էլ, ամեն անգամ, երբ կաչաղակ եմ տեսնում, հիշում եմ Արգարին ու նրա պատմությունը:

«Մի քանի պճեղ սխտոր, մի քանի բուռ լոբի ենք գցել հողի մեջ, մեր աչքի առաջ անջուր չորանում են,- սկսեց Արգարը:- Ասաց՝ զնամ, Առաքելին ու Արմենակին գտնեմ, ուղարկեն Ամբերդ, որ գոնե երկու-երեք բահ ջուր շուր տան դեպի գյուղ: Գիտեմ՝ այդ երկուսը, ինչ զնով ուզում է լինի, ջուր կհասցնեն

գյուղ: Խաթրով չեղավ՝ կռվով կրերեն, կռվով չեղավ՝ գողությամբ կրերեն, մի բան կանեն: Խոսրովի տունն անցա, հասնում էի Նալբանդի տանը, մեկ էլ Նալբանդի դարպասը բացվեց, ու տեսա Հովսեփիին: Հովսեփը Նալբանդի փոքր տղան է, Երևանում է սովորում: Թե՛ քեզի Աբգար, չբարևես, չհարցնես՝ թե երբ եմ եկել, ինչպես եմ: Հետո, հետո, եթե ողջ մնացի, ասաց ու հոգեփշման վազեց: Բայց վազում է ու ծիծաղում: Եթե վազում է, ուրեմն բան է պատահել, եթե բան է պատահել, ինչո՞ւ է ծիծաղում: Հովսեփի ետևից դուրս եկավ մեկը: Ողորմած Աստված... Զճանաչեցի: Ինչպէ՞ս ճանաչես՝ գլուխն արկոյի մեջ, արկոյ վզին, ինչպես ձիու խամուտ: Զգվեցի ոտնածայրերիս վրա: Տեսնեմ՝ Մանուկն է: Մանուկն ու Հովսեփը հորեղբոր տղաներ են:

- Ո՞ւր գնաց,- ասաց Մանուկն ու ընկավ Հովսեփի ետևից: Գոնե արկոյ հաներ վզից: Ուրեմն այդպես է, հա՞... Կրակ ուտեք դուք: Մտա Նալբանդի տուն: Այդ հալիվորն էլ ջահելմերի խելքին է: Կողքի վրա շուր է եկել թախտին ու ծիծաղում է: Նա մարդուն բա՞ն կհասկացնի: Ասում եմ Նալբանդ, ի՞նչ է եղել, նա ծիծաղում է, Նալբանդ, ինչ է եղել, ծիծաղում է: Դրանք խենթերի ցեղ են, բզի ծայրին բռունցքով են խփում: Գլուխտ ի՞նչ ցավացնեմ:

- Աբգար,- վերջապես խոսեց Նալբանդը,- դու տախտակ կունենաս, մի երկու տախտակի կտոր պիտի տաս ինձ:

ճիշտ որ սրանք խենթերի ցեղ են. Ես ինչ եմ հարցնում, սա ինչ է ասում:

- Կտամ, բայց ի՞նչ է եղել,- հարցնում եմ ես:
- Էրգից հետո այսքան չէի ծիծաղել,- ասում է Նալբանդը:
- Լավ ես արել, բայց ի՞նչ է եղել:
- Նայիր այստեղ:

Թախտն ուրիշ մեջտեղից ջարդված էր: Նալբանդի բոլոր երեխաներն այդ թախտի վրա են մեծացել՝ մեջք մեջքի, ծոց ծոցի: Բայց պարզվում է, որ ջարդված թախտի ու Մանուկի վզի արկոյի միջև վայրենի կապ կա:

Մանուկին ասում են, թե Հովսեփն է եկել: Մանուկը գալիս է, բարևում Հովսեփիին և, քանի որ շատ է կարոտել իր հորեղբոր

տղային, գրկում է նրան և, քանի որ շատ-շատ է կարոտել հորեղբոր տղային, բարձրացնում է նրան գլխից վեր և, քանի որ անասելի կարոտել է Յովսեփին, խփում է թախտին: Թախտը ջարդվում է, Յովսեփին բան չի լինում՝ ընկնում է թախտի տակ: Մի թերեւ սրտխառնուք է ունենում: Լվացվում է, աչքերը լուսավորվում են և սկսում են խոսել իրեաների և ամբողջ աշխարհի մասին: Ես քեզ ասացի, որ դրանք այդպիսին են. հեռադիտակն աչքներին՝ ընկնում են իրենց ոտքի տակի փոսը: Յանկարծ Յովսեփը հիշում է, որ հոր համար բերած գլխարկը մնացել է միջանցքում՝ պայուսակի մեջ: Դուրս է գալիս: Քիչ անց երեխաներից մեկը Մանուկին ծայն է տալիս, թե՝ ձեր մեղուն պարս տվեց: Մանուկի՝ ոտքը շեմքից դուրս դնելն ու արկղը գլխին հագնելը մեկ է լինում: Ի՞նչ գլխարկ, ի՞նչ պարս. Յովսեփը դուրս էր եկել, գտել խաղողի մի դատարկ արկղ ու կանգնել դրան ետևում»:

- Քե՞զ էլ է այս պատմությունը զվարճալի թվում,- ասաց Արգարը: Այդ պահին մի կաչաղակ սուր ծղրտաց պատուհանի տակ:

- Թու, այդ պիղծ հավքը որտեղից հայտնվեց,- դեպի պատուհանը ձգվեց Արգարը: Մինչև հինա էլ զարմանուն եմ, թե այդ պահին կաչաղակն ինչպես գրավեց նրա ուշադրությունը: Նա իր պատմությամբ, հիշողություններով ու խռովքներով այնպես հաստատուորեն էր հեռացել ընթացիկ պահից, որ վերադարձն աներևակայելի էր: Խևապես, հրաշալի քան է պահի զգացողությունը: Մտնում ենք անցյալի մեջ՝ ներկան ենք մոռանում, տրվում ենք ներկային՝ անցյալն ենք մոռանում: Իսկ այս Արգարը, կոլտնտեսության գոմում, ցուլերի վերևի տախտակամածին պարկած, աչքը սարդոստայնին, ապրում է բոլոր երեք ժամանակներում՝ անցյալի մեջ լվացվում է, ներկայի մեջ սրբվում, ապագայի մեջ նայում հայելուն ու սանրվում:

- Դու այնպես չպատմեցիր, որ այդ պատմությունն ինձ զվարճալի թվա,- ասացի ես:

- Մանուկը, որի ձեռքերի մեջ ցուլը թողնում է պողերն ու փախչում, և Յովսեփը, որն Աղամից երկու օր շուտ է ծնվել, մի-

այն ու միայն ծիտ են խփում շաղգամի արտում՝ Որսասարի տեղը մոռացած:

- Դու այդ երկուսին պիտի ուղարկեիր Ամբերդ:

- Ես ասում եմ արի, արջն այստեղ է, դու ասում ես՝ արի, արջի հետքը գտել եմ: Մանուկին ու Յովսեփին հանում ես շաղգամի արտից, ուղարկում ես կորեկի արտ: Ասենք թե՝ գնացին, մի հեղեղ ջուր բերեցին, և հարսիկս այնքան լորի շարեց, այնքան սխտոր կախեց, որ ձմռանը ուղարկեց Ամասիայում ամուսնացած ուսուցչուիի քրոջը: Մենք այստեղ կանաչ լորի կուշտ կերանք, նրանք ել՝ այնտեղ: Յետո՞... Լորին շան կծածին է լավ:

- Ուժեղ տղաներ են այդ երկուսը, իրենք իրենց մեջ չեն տեղավորվում:

- Արտատեր պառավի ցուցամատի ուղղությամբ չեն կարողանում գնալ և այդպես այլակերպվում են,- ասաց Աբգարը և պատմեց Յարութ անունով մի երիտասարդի մասին, որը շատ է սիրում մկների Վզից թել կապել և, մկներն առաջ արած, քայլել գյուղամիջով:

- Այնքան հոգնած տղաներ էլ կան, որոնց վրա օձի կուտակ էլ գցես, տեղից չեն շարժվի,- ասաց Աբգարը:

- Նոյն բանը մեկի մոտ այսպես է արտահայտվում, մյուսի մոտ՝ այնպես:

- Վազն անցիր: Մոտիկ սյունից կախված տոպրակը տեսնո՞ւմ ես: Տոպրակի մեջ լավաշ կա, լավաշի մեջ՝ դավուրմա: Զեռքդ մեկնես՝ կհասնի:

- Քո տարիքում մարդիկ սովորաբար խաղաղվում են և այլս չեն ծվատում իրենք իրենց,- ասացի ես, երբ Աբգարը բողոքեց ատամներից և ասաց, որ արդեն յոթանասուներեք տարեկան է:

- Երբ երիտասարդ էի ու իմ գարունքն էի ապրում, ծաղկունքի ու մարգագետնի միջով քայլում էի անհետք: Յիմա հասել եմ իմ ձմռանը, և ինչպես էլ փախս տամ, միևնույն է, մահը ձյան վրա հետքս բռնել ու մոտենում է:

Յետո նա իջավ և սկսեց մսուրների ետևում թափված խոտը հավաքել: Անընդիհատ թիկունքն էր իմ կողմն անում: Դոան

Ետևում գտավ ցախավելը, երկու-երեք կովի տակ մաքրեց, քերիչով շփեց նրանց ազդրերը և ասաց, որ այս տարվա խոտի կեսը կավելանա: «Այս մարդն ապրում է իր հայրենիքի մայրաքաղաքի կենտրոնում», - մտածում էի ես: Մի ճնճղուկ, քանի անելով, անցավ: Ես տեսա, որ նա պոչ չունի, և հանկարծ ամեն ինչ չափազանց խեղճ ու անօգնական թվաց: Ինձ հետ ինչ-որ բան սկսեց կատարվել: Ես քայլեցի դեպի գոմի ելքը:

- Գայլի վրա չհաջող շանը բրուտն էլ իր դռանը չի կապի, - իմ ետևից ասաց Աբգարը:

Դուռը դեպի ներսն էր բացվում, բայց ես հրում էի դեպի դուրս: Այն երկու ձիերը սեղնվել էին դռանը: Մի քանի քայլ հեռացան, որ անցնեմ: Աղբյուրի մոտ, իմ առջևից սուրալով, անցավ մի դահուկ, խվիթեց գյուղացու մեկի ցանկորմին ու շրջվեց:

«Տղայի ոտքի տակից է փախել», - մտածեցի ես:

Ճեռվում երևաց տղան: Գալիս էր կաղալով: Ես տեսա, թե ինչպես երկու ոտքով տեղափորվեց մի դահուկի վրա և խենթ արագությամբ եկավ: Չհասկացա, թե դահուկն ինչպես է փախել նրանից: Ինձ չհասած՝ ձեռնափայտը և ազատ ոտքը մեխեց ձյան մեջ ու կանգնեց:

- Իսկ քեզ ի՞նչ է եղել, - ասացի ես:

- Ի՞նչ պիտի լինի:

- Սարերում ի՞նչ կար:

- Սարերում ամեն ինչ էլ կար:

Տասնմեկ տարեկան տղան ուղիղ նայում էր աչքերիս մեջ: Նրա հայացքի տակ ինձ թվաց, թե մատներիս արանքում ու մազերիս վրա սարդուտայն կա: Գլուխս կախեցի և սկսեցի կոշիկներս մաքրել ձյան մեջ:

- Իսկ դո՞ւ ով ես, - ասաց տղան ու սպասում էր պատասխանի: Եթե ուրիշ մեկը հարցներ և միայն երկուսով չլինեինք, մի բան կասեի: Պատասխանը գտնելու համար հայացքս փախցրի նրանից և սկսեցի նայել հեռուները: Ազարակ և Կաքավածոր գյուղերից այն կողմ երևում էր մեր գյուղը՝ անանուն ու անկիրք: Ես տղային ցույց տվեցի մեր գյուղը, և նա ժպտաց: Բայց տղան մրսել էր անմոռանալիորեն, մրսել էր նախանձելիորեն: Մինչև շապիկը, մինչև ոսկորները վայելել իր ձմեռը և ապրում էր սարի գարունքոտ լանջին:

Այդ օրը, մինչև յոթ աստղ երևաց Լեռնարոտի երկնքում, Արագածի հարավային լանջից նայում էի Մասիսին: Եվ այդ կիրակի Մասիսը մոտիկ էր ինձ, ինչպես անձնագիրս իմ ծոցագոպանում:

Այդ տարվա գարնանը ես գնացի Ապարան և հովիվ Աշոտ Մարտիրոսյանին ասացի, որ Արագածի մյուս՝ մասսահայաց լանջին ապրում է տասնմեկ տարեկան մի աննման տղա:

Երբ մտա Ապարան, Արագածի ստվերն արդեն հասնում էր վերջին երկու տաճ պատուհաններին: Մի մարդ իր տունը կառուցել էր բլրակի վրա, և այդ բլրակն աշխարհաստեղծման օրենքով արդեն տրված էր նրան: Մայրանուտին կնոջ և հինգ երեխաների հետ նա նստել էր տաճ շեմին ու իր բլրակից նայում էր Արագածին, ինքն իրեն, մյուս բոլոր ապարանցիներին, փողոցում մնացած ուրիշի կովին ու երեք երինջին, մարդու ժակատագրին: Կինը փոքրիկ աղջկան առել էր ծնկների արանքն ու սանրում էր նրա մազերը ծայրեժայր, թել առ թել: Երկնքում դարձդարձիկ սլացքի հրճվանքով թևում էին ծիծառները: Այդ բոլորից հետո, որպեսզի ամեն ինչ չափազանց խաղաղ թվար, անմեր ու կատարյալ լիներ, մարդու ոտքերի մոտ արածում էին նրա գարները:

Նրագվառոցից առաջ, իրիկնացող Ապարանում, սեփական բլրակի վրա նստած մարդուն ոչինչ չէր խանգարում՝ մտածելու անմահության մասին, չնայած տասնհինգի փոխարեն նա տասնչորս գառ ուներ և սրտի ծակոցներից մի օր առաջ աչք չէր փակել:

Մարդը ջրել էր իր պարտեզը, և նրա մեջքի քրտինքը ցանքում էր Արագածի ստվերում: Նրա անդրանիկ որդին աշնանը պիտի զորացրվեր, և տուն ու տեղով դուրս էին թափվել ու նայում էին նրա ճանապարհին:

Ես անցա շուկայի միջով, ուր հովտից եկած մեն-մենակ մի կին թարխունի փնջերն էր դասավորում ու վերադասավորում դույլի մեջ դեռ առավոտից, և Քասախի ափով՝ սագերի խումբը խրտնեցնելով, գնացի դեպի գոմերը: Մոտիկ բակում մի ուրիշ կին կաթի դույլն էր ողողում կովի տակ նստելուց առաջ, և ես լսեցի նրա մատանու զնգոցը դույլի մեջ: Քասախը պոնկեպունկ լիքն էր: Մեկը ծմեռվա գոմաղբը թափում էր նրա

ջրերի մեջ, և Քասախը Ապարանում նորից մնում է աշտարակցու գետ:

Գոմը, ուր ձմեռել էր և մինչև սար բարձրանալը շարունակում էր գիշերները նստել Աշոտ Մարտիրոսյանի հոտը, Քասախի ափի առաջին գոմն էր: Աշոտը գառները նոր էր բաց թողել մայր հոտի մեջ, և գոմում սկսվել էր մի շտապ փնտրուք, մի հրաշալի իրարանցում, մի հուզիչ խլրտում, մի ծնկաչոք վազք: Մայր ոչխարը հարյուրավոր գառների մեջ պիտի գտներ իր մի հատիկ գառնուկին՝ ամենանախշունին ու ամենաչքնաղին: Գառը հոտի մեջ պիտի գտներ իր մի հատիկ մորը՝ մայրերից ամենատաքին ու ամենասիրառատին: Եվ ձայնում էին իրար ու կանչում էին իրար: Քիչ էր մնում գտնեին ու չէին գտնում: Քիչ էր մնում կորցնեին ու չէին կորցնում: Գառը ծունկ էր խփում մաքու տակ, բայց վերջին պահին երկուսն էլ ազնվագույն բնազդով հասկանում էին, որ իրենց փնտրածն ուրիշն է և նորից վազք տարբեր ուղղություններով: Գետնի մեջ խրված գոմը այդ աշխարհանցումից արդեն սկսում էր ցնցվել:

Աշոտը կանգնեց՝ անութատակերին մի-մի գառ: Յովվի աչքերը կապույտ էին, և դեմքի բոլոր կնճիռները, լուսի շողբերի նման, սկիզբ էին առնում աչքերից, փնջվում ու չէին հաճգուցվում կոպերի տակ, շարունակվելով՝ աչքերի խորքում հատվում էին:

Գրկի գառների փոխարեն ու նրանց համար դես ու դեմ էր խփում Աշոտը:

- Զույգ են ծնվել, մայրը չկա,- ասաց նա, ու այդ գառների մայունը դարձավ ավելի մորմոքուն: Գառներից մեկին ցած դրեց և բռնեց կողքից անցնող մաքու ետևի ոտքը: Գառը, որբուկին սազական ճարպկությամբ, մտավ մաքու տակ:

- Այս մաքին էլ գառ չունի, սատկեց,- ասաց Աշոտը և ոտքը թողեց, բռնեց մաքու վզից: Մարին ամեն կերպ ուզում էր դունչը հասցնել գառնուկին, հոտոտել նրան: Բայց նա մոռացել էր իր կողցրած գառնուկի հոտը, ձայնը, շունչը և հեզորեն կանգնեց ու սկսեց որոճալ՝ ստիճնքներում հորդացնելով կաթը: Գառը, առջևի ոտների վրա ծնկած, երանությամբ թափահարում

Եր փոքրիկ դմակը: Աշոտը երկրորդ գառնուկի համար էլ գտավ մի անգառ մաքի, որի հիշողության մեջ դեռ չեր խաթարվել իր աննման գառնուկի պատկերը: Աշոտը երկու ձեռքով՝ վզից ու մեջքից, պահեց մաքուն այնքան, ինչքան պետք էր:

Գոմում վազքը դադարեց, ծայները մարեցին: Սկսեց Քասախն աղմկել: Աշոտը մեջքն ուղղեց, գլխարկով սրբեց քրտինքը ու ծխախոտ կացրեց:

- Լավ հովվի հոտի մեջ անգառ ոչխարներ չեն լինում, ոչ էլ անմայր գառներ,- ասաց նա:

- Զո՞ հոտը երեք այդպիսին չի՞ եղել:

- 1947 թվականի մարտի 16-ից մինչև հինա անում է երեսունվեց տարի: Հովվական կյանքը դժվար թե այլս բան ունենա ինձնից թաքցնելու: Ինչ ասես՝ տեսել եմ:

- Ի՞նչ կասես, քո վաղվա օրը չե՞ս կիսի ինձ հետ:

- Հովվի համար այս գարունը շատ դժվար դուրս եկավ:

- Ոչինչ, ես քեզ չեմ խանգարի:

- Եթե մինչև ժամը վեցը միտք չփոխեցիր, ես դեռ այստեղ եմ: Այդ ժամին հոտը քշում եմ:

Հյուրանոցում ծանոթացա երեք երկրաբանների հետ: Նրանք ճանաչում էին Աշոտ Մարտիրոսյանին և ասացին, որ մի անձրևոտ օր մի տուփ չոր լուցկի է տվել իրենց: Քնելուց առաջ ես մտածեցի հացին հաց դարձնող մի պտղունց աղի, երկրաբանի գրպանում թրջված լուցկու և մյուս գանձերի մասին:

Առավոտ շուտ հոտը նոր էր դուրս եկել փարախից, երբ երկու մաքիներ սկսեցին խաղալ: Իրար առաջ կտրելով՝ թռնում էին վերև ու խփվում գետնին:

- Անձրև պիտի գա,- ասաց Աշոտը և ետ դարձավ: Նա միայն մի անձրևանոց բերեց: «Հովվիկն իր անելիքը պետք է որ ինձնից շատ լավ ինանա», - մտածեցի ես ու մտա ինձ համար չկարված անձրևանոցի մեջ:

Երկար ժամանակ քայլում էինք հոտի ետևից: Հոտի վերջում անշտապ արածում էր հալից ընկած մի սև մաքի: Կողերի բուրդը թափվել էր, և հոդերն սկսել էին փայտանալ:

- Վեց ծին է: Յետևիր դրան և կտեսնես, թե ինչ կենդանի է,- ասաց Աշոտը:

Սև մաքին միշտ արածում էր հոտի վերջից առանձնացած և երբեք դունչը չմոտեցրեց տրորված կանաչի: Ծաղիկներն էր պոկում և արածում միայն բարձր քարերի ու թփուտների արանքում՝ նորից ու նորից բրդի ծվեններ թողնելով մասրենու ճյուղերին ու փշերի վրա: Ճեղեղատներով ու վտանգավոր քարքարուտներով անցնելու ժամանակ սև մաքին հայտնվում էր Աշոտի աչքի առջև:

- Եթե անհարմար ծևով շրջվի մեջքի վրա կամ մնա երկու քարի արանքում, ու ես չտեսնեմ, այդպես էլ կմնա, հյուծված ոչխար է: Մյուսը օրը միայն մորթին կգտնեմ, այն էլ բանի պետք չէ,- ասաց Աշոտը:

Իսկ վերադարձին, երբ Աշոտն ու ես քայլում էինք հոտի առջևից, սև մաքուն տեսա կենտրոնում ամբողջ հոտով շրջապատված: Այդպիսի ժամանակ վտանգը ետևից է սպասվում, և փորձանքի մեջ ընկնելու են ետևի ոչխարները: Ես արդեն հարգում ու կարեկցում էի սև մաքուն: Բոլոր հովիվներն էլ սև մաքու նման հոգնատանց ու իմաստուն ոչխարներ պահում են իրենց հոտի մեջ: Երբ հոտը, մեծ տարածության վրա հատ - հատ ցրվելուց հետո, հավաքվում է, հովիվը որոնում է հենց նրան վերջից արածող մաքուն: Եթե նա կա, ուրեմն՝ բոլորն էլ կան:

Երբ կարգին արոտն սկսվեց, մեր ետևից եկող նախիրը կանգնեց, ծանրացավ տեղում ու սկսեց արածել հիմնովին՝ գետնանց պոկելով ինչ-որ հանդիպեր՝ խոտ, փուշ, ծաղիկ: Իսկ հոտը շարունակում էր գնալ ու գնալ՝ ընթացքի մեջ արածելով խոտերի ծայրերը, շտապելով լավից դեպի ամենալավը, հավանել-չիավանելով, այս ծաղկից այն ծաղիկը՝ որոնելով սրտի ուզելիքը:

- Նախրապանը կարող է ամբողջ օրը նստած մնալ միևնույն քարին,- ասաց Աշոտը:- Երբ արոտը հաղթում է ոչխարին, ոչխարը խրտնում է, դաշնում չմահավան:

Յանկարծ տեսա, որ Աշոտի հոտը բոլորովին էլ խառնի-խուռն մի բան չէ: Յոտի մեջ ոչխարներն ընդհանրապես չեն խառնվում, և չկային իրար հատող ներքին ուղղություններ: Յոտի ուղղությունը մեկն էր: Ոչխարներ կային, որ միշտ և

ամենուր առջևում էին, ոչխարներ կային, որ արածում էին մի-այն աջ թևում, միայն կենտրոնում արածողներ էլ կային, «ձախլիկներ»՝ նույնպես: Յոտի իմ կաղապարը մշակվել էր Թալինում, ուր հոտը մաքիների չորս-հինգ շոգած շարք է՝ քի-թը մի քանի այժերի ստվերում: Եվ ինչպես է վազում այդ ստ-վերի ետևից, ինչպես է սարսափում այդ ստվերը կորցնելու փորձանքից՝ արածելը առավոտվանից մոռացած: Ապարա-նում հովիվն ու հոտը չափազանց հաշտ էին, և այդ երկուսի ներքին ուղղությունները երբեք չհատվեցին: Ես չհասկացա- հովի՝ վն է գնում հոտի ետևից, թե հոտը՝ հովվի: Թալինում այդպես չէ: Թալինում հոտի համար կա միայն մի ուղղություն՝ հովվի գավազանի նշած ուղղությունը: Այնտեղ հովվն ու հո- տը առավոտից իրիկուն կռվի մեջ են: Այդ բանը նորից տեսա անցած աշնանամուտին, չնայած ցորենարտերը հնձված էին, և արտերում հասկն ու նորելուկ բաղեղը թիւ չէին: Յոտը Թա- լինի շրջանի Ներքին Բազմաբերդ գյուղի հոտն էր, հովիվը Ղազար Տոնոյանն էր: Ներքին Բազմաբերդն իմ առաջին քայ- լի գյուղն է, Ղազար Տոնոյանը՝ իմ վեց հորեղբայրներից կրտ- սերը: Նա հոտը խոզանների միջով ու բլրակների վրայով այն- քան հեռու քշեց, որ հայտնվեցինք անապատի կենտրոնում, և անասելի հարազատություն գգացի մրջնաբնի մոտ ընկած «Սալյուտի» դատարկ տուփի նկատմամբ: Այդ ընթացքի մեջ երկու խոյեր շուտ-շուտ ճակատ ճակատի էին տալիս՝ կրծքով բարձրացնելով մաքիների դմակները և ինձ փրկեցին անա- պատի կենտրոնում իմ մեջ շատացող սենտիմենտալությու- նից: Զպարտված անապատում ոչ նոնենի է աճում, ոչ փշա- տենի և ոչ էլ սենտիմենտալիզմ: Որպեսզի ես կարողանայի խոստովանել, որ հենց այդ անապատն է իմ հայրենիքը, իմ մեջ բարձրացավ մի բան, որը Ղազարի դանակի շեղքի նման մերկ էր ու արու:

Օշինդրի բույրը մինչև վերջ շնչելու համար պոկեցի մի քա- նի շյուղ և հենց օշինդրի արմատների մոտ տեսա նետիկ օձի մի շապիկ: Զգուշությամբ ու քնքշանքով բարձրացրի շապիկը և հիանում էի դրանով, երբ Ղազարը ձայն տվեց: Նա ինձ ցույց տվեց մի էպիկական բան, որպիսին տեսնելու համար պետք է

բախսու ունենալ: Արծիվը երկնքից մեծագույն արագությանք խփվել էր նապաստակի վրա, և խռնդատի անցյալ տարվա չոր ցողունը խրվել էր կրծքի մեջ: Արծիվն սպանվել էր սլացքի պահին, նապաստակը՝ շլիկավարի, սարսակից սատկել էր արծվի հզոր թերի տակ ու մագիլների մեջ:

Միջօրեին հոտը, դեպի ջուր գնալիս, անցավ մի հին գյուղատեղով: Ես գոհունակ նստեցի մի փլատակի քարի վրա և վերջապես հասկացա, թե արքայական ինչ ահեղ սիմվոլ է արծվի այդ անապատային, ձախողված որսը: Փլատակի մեջ շատ կապրենիներ կային: Աղվեսները հաճույքով են ուտում կապրենու ձմերուկանման պտուղները: Չեռքս մեկնեցի, որ մի կապար պոկեմ: Ցուցանատիս վրա ոսկորին հասնող ցավ զգացի: Մի ուրիշ անգամ ինձ կթվար, թե օձը կամ կարիճը խայթեց: Բայց կապրենու փուշն էր: Տատս աջ ձեռքի ցուցանատին ասում էր հրացանի մատ: Կապրենու փուշը ծակել էր հրացանի մատս:

Ղազարը չքողեց հոտը ջրի վրա նստի: Չորաբերանին, սալքարերի վրա, հոտն իր համար տեղ գտավ: Այժերը՝ դունչները քամուն, առջևի ոտները դրել էին բարձր քարերի վրա: Մաքիները՝ գլուխ գլխի, սեփական ստվերի մեջ տրորում էին նստածներին: Նստած հոտն անդադար խլոտում էր ու իր կերպը փոխում վերևի մի կտոր ամպին նմանակ: Ղազարը բեռն իշեցրեց ավանակից, հետո համետը մի կողմ նետեց ու հովվացուախ մի շոյող հարված հասցրեց արկայան սոխակի գավակին: Ավանակը, քիթը փոռացնելով, իջավ ձորը: Մենք նստեցինք հացի: Չեռվից տրակտորի ձայն էր գալիս: Մելիորատորներն էին շարունակում իրենց կրիվն անապատի դեմ: Այն թերթը, որի մեջ ձու էր փաթաթված, Ղազարը ծնկի վրա հարթեցրեց, մինչև ընդունեց իր նախկին չափերը, և փոեց լավաշի տակ: Աչքերս Ղազարի գյուտից փայլեցին: Ուրեմն, մելիորատորներն անում էին այն, ինչը հիմա Ղազարն արեց ճնորված թղթի հետ: Մելիորատորները, լեռնալանջերն ու կիրճերը «հարթեցնելով», հայտնաբերում են ներ աշխարհի թաքնված տարածքը, ընդարձակում մեր լեռնաստանը և դնում բերքի տակ:

Ես գիտեի, որ իմ վեց հորեղբայրներն արդարագնացիկ լուր մարդ են և ունեն անզուսապ երևակայություն: Նրանցից կրտսերը, առանց շուրջերը շարժելու, ինձ նոր տիրությների տեր դարձրեց և քննեց՝ գլուխը մի քարի շոգ ստվերում: Ես նայում էի նրա թիկունքի տակի քարին, ոտքերի արանքի երնջնակի փշին ու լեզվի ծայրով զգում ամենամեծ հաշտության հրճվանքն ու արյան եղբայրության գինին: Ինացության ծառը ինչքան անտեղի և ավելորդ էր դրախտում: Խաչելության փայտն այդ ծառից կտրեցին:

Ղազարն աչքերը բացեց և ասաց, որ հարևան գյուղերից մեկում մի խանգարված աղջիկ մազերը զարդարում է եղբոր գերեզմանի ծաղիկներով: Ես մնացի նստած, մինչև Ղազարը հոտը տեղից հանեց ու քշեց ջրի վրա:

- Թալինում հովվի գործը դժվար է: Այնտեղ հոտն արոտ է փնտրում,- ասաց Աշոտ Մարտիրոսյանը:

Աշոտի հոտը մտավ ափնարոտիկ: Ազ և ձախ կողմերում աշնանացանի, գարնանացանի ու կորնգանի արտեր էին: Աշոտը հոտի արագությունը կոտրելու համար անցավ առաջ և այնտեղից աչքը պահում էր ձախ թևի վրա: Ազ թևում հսկում էի ես: Դանդաղ ես ու առաջ էի անում աշնանացանի արտեզորով և չտեսավարի հետևում, թե ինչպես են ուռչում ոչխարների կողքերը, և ստիճները լցվում կաթով: Արոտը շատ լավ էր, և թալինյան հիշողություններից հետո ես ուրախ էի հոտի համար: Իմ մեջ հորդանում էր հովվի գոհության զգացումը:

- Օրվա մեջ հոտը գոնե մի ժամ պիտի չտրորված, խամ արոտ մտնի,- ասաց Աշոտը:

Նա հոտի առջևից անցավ ձախ թևը, ուր ոչխարները շուտ-շուտ իրենց գցում էին կորնգանի արտի մեջ: Առջևից նրանց զսպել չեր լինում: Ոչխարները ցույց էին տալիս, թե ինելոք արածում են կորնգանի արտեզորում, բայց երբ Աշոտը շրջվում էր, իրենց չեն կորցնում՝ նորից լցվում էին արտի մեջ: Յատկապես մի չափ խելքը թոցնում էր կորնգանի համար:

- Շաղը շատ է, եթե անձրևն ուշանա, ոչխարը կփնտուի,- ասաց Աշոտը:

Նա արգելեց ձախ թևը, և հոտը թեքվեց աջ, մտավ լուսանցքի չափ նեղ ափնարոտիկ: Երկու կողմերում կորնգանի ար-

տեր էին: Ոչինչ, որ մեր գործը դժվարացավ: Յոտն իրեն հիանալի էր զգում: Ավճարոտիկից հոտը դուրս եկավ կշտացած և տեղ էր փնտրում, որ նստի:

Երբ հոտը վերջապես նստեց, Աշոտը, ձեռքին մի ծվեն բուրդ, ասաց, որ ինքը մի ձեռնոցի բուրդ պարտք է հանդապահ Գևորգին և պատմեց, թե ինչպես է եղել:

Մի տարի, կեսօրին, քունը տանում է: Յոտը զգում է իրեն զսպող մահակի բացակայությունը և լցվում է աշնանացանի արտի մեջ: Յանդապահը տեղ է հասնում այն ժամանակ, երբ Աշոտն արդեն հոտը հանել էր արտից:

- Եղավ,- ասում է հանդապահը:
- Ի՞նչ է եղել:
- Յովիվը դրանից ավելի ուրիշ ի՞նչ կարող է անել:
- Ինչ եղել է, մնա մեր մեջ: Դրա համար կարելի է գրասենյակի ժամփան չբռնել,- ասում է Աշոտը:

Իրիկունը հանդապահն ուղիղ գնում է կոլվարչության գրասենյակ և նախագահին ու բրիգադավարին ասում, որ Կորտեր հանդամասում աշնանացանը ջրելու ժամանակն է: Աշոտը երդվելով որոշում է՝ խուզին հոտն իր ետևից տանող ոչխարի բրդից մի թաքնանցու տալ լուրումունջ հանդապահին: Սինչև Աշոտն ուշբի է գալիս, խուզն սկսվում ու ավարտվում է շատ կարծ ժամանակամիջոցում, և բրդի պարկերով բեռնաբարձ մեքենան, ետևից փոշի հանելով, հեռանում է: Մի ձեռնոցի բուրդը մնում է մյուս խուզին, հետո՝ մյուս խուզին, հետո մոռացվում է և հիշվում՝ որպես անկատար երդում: Յանդապահ Գևորգը իհմա չկա և այդպես էլ չիմացավ, որ մեռնում է ամենահարուստ պարտատիրոջ նման: Յովի համար մի ձեռնոցի բրդի եղածն ի՞նչ էր, չստացվեց:

- Յայրս հարյուր ինը տարի ապրեց առանց իիշոցների ու երդումների: Անընդիատ ասում էր. «Ինչ որ անելու ես, արա առանց երդվելու: Պարտքը կրակե շապիկ է», - ասաց Աշոտը:- Եթե սխալմամբ չմեռներ, քսանմեկ տարի էլ մի օրվա պես կապոեր:

Քամին մեղմացավ, մանրիկ անձրևն սկսեց հորդանալ, և հովվի օրը դարձավ շատ սովորական: Ամպերն Արագածի գա-

գարներից սահեցին դեպի հոտը: Աշոտը կոճկեց բաճկոնը: Ին մեջ ձիգ ձգվեց հայրենի տարածության անհրաժեշտ բնազդը: Հեռուները մշուշվել էին և մի հոգեմաշ լքվածություն էր իշել դաշտերին: Զնայլանք է, երբ գիտակցում ես, որ ուրիշները հինա նստել են իրենց ծածկի տակ, իսկ դու ծեծկվում ես անձրևի տակ, և շուրթերդ կապտում եմ: Ինձ թվում էր, թե պատուհանից անձրևին նայող բոլոր մարդիկ Աշոտին ու ինձ նախանձում են: Ես տեսել եմ, թե ինչպես Վարդենիսում մի տղա կուրացնող անձրևի տակ գնում էր սարերը՝ հովիվ հորն ընդառաջ: Նա, անկասկած, իր հոր անդրանիկ որդին էր: Ես Արագածի այս լանջից ժպտացի Արագածի մյուս լանջում ապրող լեռնարոտցի տասնմեկ տարեկան տղային:

Աշնանացանի արտից մի ագռավ թռավ և հոտի վերևով, քամուն հակառակ, թևեց դեպի բլուրը: Այդ բլոի վրա մի անգուգական քար կար՝ նստելու և եղբայրության մասին մտածելու համար: Նստած ոչխարները կանգնեցին: Շներն ավելի մոտեցան հոտին: Անձրևի տակ հաց ու պանիր կերանք և խմեցինք մի-մի թաս կաթ: Քամին կաթի փրփուրը լցուց աչքերս:

- Առաջ, մինչև կեսօր, պայուսակը դատարկում էի, իհմա ինչպես բերում, այնպես էլ ետ եմ տանում,- ասաց Աշոտը և հացի մախաղը ուսը գցեց: Կանգնած հոտը կամաց-կամաց քանդվեց և սկսեց նորից արածել: Երկնքում լույսի ճեղք չէր երևում, և հույս չկար, թե երբևէ անձրևը կրադարի: Աշոտը կանգնել էր մի սասանվող քարի և ճոճվելով՝ նայում էր հեռուն: Հետո գրպանից հանեց դանակը և սկսեց արծվամոշու թփից մի ճյուղ կտրել:

Մշուշվերի մեջ նշնարվեց Ապարանը: Յանկարծ այնտեղ մեկի հորդն այս ցեխին չմտնի հարևանի այգին ու ոտնատակ տա ինչ կա-չկա:

- Յայաստանը տեսել եմ մի անգամ: Բաքու էի գնում ինքնաթիռով: Երկնքից Յայաստանը հեշ ապրելու տեղ չէր,- ասաց Աշոտը:

Ես մոտեցա Աշոտին և նրա աչքերի մեջ չտեսա այդ երկնային դժգոհությունն իր ճակատագրից: Մի անգամ նա ուրիշ

տարածությունից նայել է Հայաստանին, որն այդ պահին իր մեջ տեղադրված չի եղել, և ճշգրտորեն հանգել է այդ սխալ մակաբերությանը:

Նրա ձեռքի արծվանոշու ճյուղը կարծ, չօգտագործվող մի քան էր, և չհասկացա, թե ինչու կտրեց: Բայց շատ լավ հասկացա, թե ինչու մեկեն խոսեց Հայաստանի մասին:

Այդ ցեխին ոչխարն ավելի շատ փշացնում էր արոտամարգերը, և մենք հոտը տարանք դեպի բլուրները:

Մի քաց ու խորունկ օր ապրեցի հովիվ Աշոտի հետ: Նրա հոտի մեջ շատ ոչխարներ ճանաչեցի, իսկ սև մաքուն, որի առջևի պճեղներից մեկի արանքում վերադարձին մնացել էր մի կապույտ առյուծածաղիկ, թվում է՝ երբեք չեմ մոռանալու:

Մի ամբողջ օր երկուսով մենակ մնացինք Հայաստանի հետ ու Հայաստանի դեմ-դիմաց: Ին ճակատագիրը վերջնականապես կապվեց Աշոտի ճակատագրին: Այդպես էի մտածում:

Վերադարձին հոտը գնում էր ծույլ, բնական ընթացքով, ինչպես առվից դուրս եկած ջուրը: Յոտի ընթացքը հայտնաբերում էր ճանապարհի քարը, բլրի կլորությունը, հեղեղատի խորությունը, ամեն-ամեն ինչ: Հայտնաբերում էր հարազատ եզերի կապույտ գույնն ու անանց իրծվանքը, ին մեղավոր ու ցավ դարձող սերը: Հայտնաբերում էր ին բոլոր պարտքերը՝ որպես մի ձեռնոցի բուրդ, որպես անկատար խոստում, որպես կրակե շապիկ:

## ԶԱԶԱՅԻՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻՑ

### ԴՅՈՒԿ ԷԼԻՆԳՏՈՆ

Կարծիք կա, որ տաղանդը ծայրահեղ հասկացություն է և բնորոշ է գերազանցապես անհամբեր ու բռնկուն մարդկանց: Ինչը բնավ էլ չես ասի Դյուկ Էլինգտոնի մասին՝ տաղանդավոր երաժիշտի, որ ապրել է հիրավի գեղեցիկ, հագեցած ու անկախ կյանք: Ընդ որում հարկ է ասել, հիանալի է ապրել... Նրա հազվագյուտ հագեցած և հարուստ երաժշտությունը կարելի է համեմատել ստորգետնյա գետակի հետ, որ ոռոգում է անպտուղ դաշտավայրը: Դասկանալի է, որ ջազի պատմության մեջ Էլինգտոնի ներդրումը հատուկ գնահատականի է արժանի:

Այսուամենայնիվ, եթե ազնիվ լինենք, ձեզ չի՝ թվում, որ նույնիսկ նման հսկայի համար այդքան էլ հեշտ չէր տևական ժամանակ բեմի վրա դիմանալը: Էլինգտոնն իրենից հետո քողել է բազում ցնցող մեղեղիներ և համերգային ձայնագրություններ: Ընդ որում, ամեն անգամ, ձայնագրությունների այդ ծովից լսելու համար ինչ-որ բան ընտրելիս, բախվում ես սեփական անզորության՝ ինչպես ռազմաշունչ բարբարոսները, որ առաջին անգամ տեսնում են չինական մեծ պարիսպը:

Չնայած դրան՝ ես, այդուամենայնիվ, կիանդգնեմ անձնական գնահատական տալ նրա ստեղծագործությանը:

1. Ընդհանուր առմանք՝ ինձ դուր է գալիս 1939 թվականի վերջի - 40-ականների սկզբի Էլինգտոնը: Ոչ այնքան բարդ, ոչ այնքան աղմկոտ, ինչ-որ տեղ նույնիսկ նրբագեղ: Դատկապես լավն է այն շրջանը, երբ նրա նվազախնբում էր Զիննի Բլենտոնը:

2. Այդ ժամանակվա ձայնագրություններից ես կառանձնացնեի «In a Mellotone» սկավառակը, որ թողարկվեց «Առսի-Էյ» խորագրով:

3. Ես նախընտրում եմ այդ սկավառակի երկրորդ կողմը: Ապշեցուցիչ է որքան էլ լսում ես, ամենահին չի ծանձրացնում: Յասկանալի է՝ կատարողները բարձրակարգ են՝ Յոջես, Ուեբստեր, Կուտի, Բիգարդ, Կարնի... Անկասկած, դա «ոսկե շրջան» էր Ելինգտոնի ստեղծագործության: Ուրեմն, էլ ի՞նչ է ձեզ պետք:

«In a Mellotone» ձայնասկավառակի վրա բացի լավ հայտնի կոմպոզիցիայից ինձ դուր են գալիս «All Too Soon»-ը և «Rocks in My Bed»-ը: Լավն են և Ելինգտոնի գրած հիբերը՝ «Solitude»-ը և «Satin Doll»-ը: Ասենք, սակավ հայտնի գործերի մեջ էլ քիչ չեն գլուխգործոցները, որ կարող են ունկնդրի հոգում արձագանքվել: Ինքո՞ քեզ համար բացահայտելով միմյանց չնմանվող քնքուշ մեղեղիները, բերկուանք ես ապրում՝ ընկղմվելով Ելինգտոնի անպարագիծ երաժշտական աշխարհը:

Ամեն անգամ ունկնդրելով «Rocks in My Bed»-ը Այվի Անդերսոնի կատարմամբ, զգում ես, ինչպես են նրա բառերը թափանցում հոգուդ խորքը: Այս նույն պահին, երբ այդ զարմանալի հստակ, ուժեղ բյուզային ձայնը միահյուսվում է կլարնետահար Բառնի Բիգարդի գեղեցկությամբ անկրկնելի մենավագի հետ, թվում է՝ աշխարհաստեղծման բոլոր հրաշքները հասնում են իրենց վերջնակետին: Երգչուիհու ձայնի մեջ ոչ մի կեղծ-սենտիմենտալ նոտա չկա: Խորագույն համակրանք և սեր՝ ահա ինչ ես զգում՝ տրվելով այդ հիրավի հրաշալի երաժշտության իշխանությանը:

## ԷԼԼԱ ՖԻՑՉԵՐԱԼԴ

Անձամբ ինձ համար Էլլա Ֆիցչերալդի վոկալը զուգորդվում է «Ella and Louis Again» ալբոմի «These Foolish Things» կոմպոզիցիայի հետ: Ինչպես անունից է հետևում՝ այդ ձայնասկավառակը իրենից ներկայացնում է հերթական սպանիչ սվինգ-սեյշնը Էլլա Ֆիցչերալդի և Լուի Արմստրոնգի համատեղ ստուդիական ծրագրերից: «These Foolish Things»-ը միակ կոմպոզիցիան է ալբոմում, որ երգչուին անձամբ է կա-

տարում: Միայն պատկերացրեք. Արմատրոնգը, ավարտելով երգը, ծափերի ներքո հեռանում է կուլիսներ: Եվ ահա բեմի կենտրոն է գալիս Ելլան: Դահլիճում դանդաղ մարում են լուսերը: Հարկ է արժանին հատուցել պրոդյուսեր Նորման Գրենցին՝ տպավորությունն անկրկնելի է:

Ընդհանուր տոնը հաղորդում է Օսկար Պիտերսոնի քառյակը՝ սովորական ջազային երյակ և Լուի Բելսոնը՝ հարվածային գործիքների վրա: Շատ արժանավոր կազմ: Երաժշտների կատարումը նման է առաջնակարգ մետաքսի, որով նրբորեն պարուրվում է մեղեդին: Մեղեդու և վոկալի գեղեցկություն: Դիանալի նվագակցություն: Եթք ուսանողական տարիներին առաջին անգամ լսեցի այդ ձայնապնակը, զարմանքով մտածեցի. «Մի՞թե ջազն ի զորու է այդպես բարձրացնել տրամադրությունը»: Ես իհմա էլ այդպես եմ մտածում: ճշգրիտ չեմ իիշում՝ որքան եմ լսել այդ սկավառակը: Նրա հնչողության մեջ ինչ-որ բնական ու համոզող բան կա: Զարմանալի է բնավ չի ձանձրացնում:

Ելլան և Պիտերսոնը բարձրակարգ երաժշտներ են: Թերևս այդ պատճառով է նրանց կատարումը իիշեցնում արվեստի ստեղծագործություն: Ամեն ինչ այնքան ճիշտ և կատարյալ է, որ ոչինչ չես կարող դեն գտել: Գուցե ինչ-որ մեկին իմ գնահատականները մակերեսային թվան, բայց իրոք ոչինչ չես ավելացնի: Միայն նկատեմ, որ «These Foolish Things»-ը երկու երաժշտներն էլ կատարում են սրտանց ու խղճի մտոք:

Պիտերսոնի քայլակը դեռ 1952 թվականին նվագակցում էր Բիլլի Ջոլիդեյին նույն այդ «These Foolish Things»-ը կատարելիս: Բիլլիի վոկալը, անկասկած, գլուխագործոց է: Երգչուիին ոչնչով չի զիջում Ելլա Ֆիցշերալդին: Բիլլիի ձայնից սիրտդ սեղմվում է այնքան հուզիչ է ու քնքուշ, իսկ Պիտերսոնի նվագը պատկերը փոքր ինչ փչացնում է: Կորստաքեր է, այսպես ասած՝ գործից չի բխում. Երիտասարդ երաժշտի դաշնամուրը ոչնչացնում է ինչ-որ անսովոր բան ստեղծելու Բիլլիի ձգտումը:

Համեմատելով Բիլլի Ջոլիդեյի «These Foolish Things»-ի հիգեկան ներդաշնակությունից զուրկ կատարումը Ելլա Ֆիցշերալդի հետ, նորից ու նորից համոզվում ես՝ որքան մեծ նշա-

նակություն ունի մարդկանց խառնվածքների համատեղելիությունը: Որքան ինձ հայտնի է այդ ժամանակներից Բիլլին ոչ մի անգամ այլևս Պիտերսոնի հետ հանդես չի եկել, ակներևաբար, հասկանալով, որ իրենք մինյանց չեն համապատասխանում: Մի քանի տարի անց Պիտերսոնի քայլակը նվազակցում էր Ֆիցջերալդին: Ակնհայտորեն՝ այդ ժամանակ Պիտերսոնն արդեն ձևավորվել էր իբրև երաժիշտ:

Ուշադիր լսելով «These Foolish Things»-ը Էլլայի ու Պիտերսոնի կատարմամբ, նկատում ես հանճարեղ հատվածներ այդ կոմպոզիցիայում: Օրինակ՝ դաշնամուրի խորապատկեր դարձող ակորդները «A tinkling piano in the next apartment» բառերից հետո: Լսում ես ու չես դադարում գարնանալ՝ ինչքան գեղեցիկ է կատարված: Ուղղակի գլուխգործոց է: Եթե դա վեալիներ, ես առանց մտածելու կշնորհեի Նաոկիի մրցանակը:

## ՔԱՌԻԹ ԲԵՅՍԻ

Եթե լավ ուսումնասիրես՝ նույնիսկ ամենաանօգուտ գրադունքի մեջ կարելի է ինաստ գտնել: Իր գրքերից մեկում Սոներսեթ Մոենը գրել է, որ սափրուելն անգամ իր փիլիսոփայությունն ունի:

Քառունք Բեյսիին լսելը նույնպես փիլիսոփայություն է: Ընդունված ծիշտը բարձր լսելն է, այնքան բարձր, որքան իրավիճակը թույլ է տալիս: Ահա և ամբողջ փիլիսոփայությունը, որը, ընդհանուր առնամբ, դժվար է վիճարկել: Ջյութեղ, եռանդուն ձայնը նրա երաժշտության գլխավոր տարրերակիչ հատկանիշն է: Եթե ձայնասփյուների առաջ նստած լսում ես Քառունք Բեյսիին ու ակամա գգում ես, որ տեղաշարժվեցիր (թեկուզ մի քանի սանտիմետրով), համարիր, որ ընթերանել ես նրա նվազախմբի հնչողության ամբողջ հաճույքը: Առավելագույնս բարձրացրեք ձայնը և կզգաք Քառունք Բեյսիի «Փիրմային սառնդը»:

Չնայած դա բոլորովին էլ չի նշանակում, որ Բեյսիի նվազախումբը առանձնահատուկ բարձր է հնչում: Թերևս կգտնվեն ոչ քիչ հայտնի նվազախմբեր, որ զուտ ֆիզիկապես ավե-

լի հզոր ձայներ են հնչեցնում: Առեղջված է, բայց ինձ թվուն է, որ Զառւնք Բեյսի նվազախմբի գլխավոր արժանիքը հենց ... հնչողության լրությունն է: Չեմ դադարում զարմանալ երաժշտների վարպետությունից, լսելով՝ ինչ քնքշությամբ, թրթիռով ու անկաշկանդ են նրանք հնչեցնում ցածր ձայները՝ դրանք վերածելով սպանիչ, մինչև ուղնուծուծը թափանցող սվինգի:

Եվ երբ լրությունը սկսում է շարժվել և օդը հանկարծ պատառություն է անսանձ, վայրի, մարդկային ճիշի նմանվող ձայնից՝ փողային գործիքների հնչումով, այդ դինամիկ հակադրությունից ներսունդ ամեն ինչ շուրջ է գալիս: Առանց չափազանցության՝ դուք ուղղակի տեղաշարժվում եք: Սվինգի կատարման այդ հանդուգն ոճը՝ անկախ հնչողության բարձրությունից, հասու չէ ոչ մի այլ մեծ նվազախմբի: Թերևս այդպես կարող էր նվազել միայն Ուիլյամ Բեյսին Կանգաս Սիթիից:

Այդ առումով ինձ ամենից շատ հմայում է «Basie In London» «համերգիկը»-ը, որ թողարկվել է «Վյորվ» խորագրով: Զառւնտք Բեյսին ունի արժանավոր «կենդանի ձայնագրությունների» ամբողջ շարք, սակայն «Basie In London»-ի համապատկերում նրանք բավականաչափ խամրած կարող են թվալ: Երդվյալ ջազմենների բառապաշարով՝ «Այնպիսի ցնցող սվինգ է, որ սրբերին անգամ տեղահան կանի»: Չեմ ուզում պարտադրել, բայց ևս մեկ անգամ հորդորում եմ՝ բարձրացրեք ձայնը: Դամերգն անօրինակ է: Դատկապես հրաշալի է եռանդուն ու սրբնթաց, ինչպես ցունամի, վեցերորդ կոմպոզիցիան առաջին կողմում: Ավարտվում է «Shiny Stockings»-ը և սկսվում է «How High The Moon»-ը: Գարեջրի շշով՝ բազմոցին պառկած, ես բարձրացնում եմ ձայնը և տրվելով երաժշտության ընթացքին՝ հասկանում եմ, որ դրախտ եմ ընկել:

## Աշխարհի լավագույն մասնագիտությունը

Դատված ելույթից

Կոլումբիայում գտնվող մի համալսարանի տնօրինությանը հարցրեցին, թե ընդունակությունների և մասնագիտական կարողությունների վերաբերյալ ինչ թեսքեր են առաջարկվում այն դիմորդներին, ովքեր ցանկանում են լրագրություն սովորել: Պատասխանը միանշանակ էր. «Լրագրողներն արտիստներ չեն»: Այս տեսակետն անշեղորեն ուղղորդվում է այն համոզմունքով, որ լրագրությունը գրական ժանր է:

Հիսուն տարի առաջ լրագրության դպրոցները մոդայիկ չեն: Այս արվեստը սովորում էին խմբագրությունների նորությունների բաժնում, տպարաններում, փողոցների անկյուններում գտնվող կիսախարիչուլ սրճարաններում և ամեն ուրբաթ կազմակերպվող երեկույթներում: Թերթերն արտադրվում էին համբարության սկզբունքով, երբ անհրաժեշտ ուսուցումը և տեղեկատվությունը տրամադրվում էին (և տեսակետներն առաջանում) համագործակցության մթնոլորտում, որտեղ պահպանվում էր շիտակությունը: Լրագրողները խստ համախմբված էին: Մենք նույն կյանքն էինք վարում և այնքան մոլեռանդորեն էինք կապված մեր մասնագիտությանը, որ ոչ մի այլ բանի մասին չէինք խոսում: Աշխատանքն ինքը նպաստում էր ընկերություն անելուն, ինչը շատ քիչ ժամանակ էր թողնում մասնավոր կյանքի համար: Չնայած այն ժամանակ գոյություն չունեին խմբագրական կոլեգիաներ՝ ներկայիս պաշտոնական իմաստով, սակայն երեկոյան ժամը հինգին ամբողջ անձնակազմն ինքնաբերաբար հավաքվում էր օրվա լարվածությունից առժամանակ կտրվելու և այնպիսի մի վայրուն սուրճ խմելու համար, որտեղ խմբագրական գործունեություն էր իրականացվում: Դա մի տեսակ ազատ հավաքույթ

էր, որտեղ յուրաքանչյուր բաժնի թեմաների շուրջ թեժ քննարկումներ էին ընթանում և որտեղ հաջորդ առավոտվա համարում լույս տեսնող հոդվածների վերջին ճշգրտումներն էին կատարվում: Այն մարդիկ, ովքեր չեին սովորում այս 24-ժամյա թեժ բանավեճերի քոչվոր դպրոցներում կամ նրանք, ուն ձանձրացնում էին այդտեղ ընթացող քննարկումները, նրանք էին, ովքեր հավատում էին կամ ուզում էին հավատալ, որ իրենք լրագրողներ են, սակայն իրականում այդպիսիք չէին:

Այն ժամանակ լրագրությունը բաժանվում էր երեք հիմնական դասերի՝ նորություններ, թեմատիկ հոդվածներ և խմբագրականներ: Ամենամեծ նորությունը պահանջող և ամենահեղինակավոր բաժինը խմբագրական բաժինն էր: Ուսուցույորի աշխատանքն ամենաքիչ արժեվորվողն էր, քանի որ ենթադրվում էր, որ նա սկսնակ է, ուն հանձնարարվել է սև աշխատանքը: Ինչպես ժամանակը, այնպես էլ մասնագիտությունը ցույց են տվել, որ լրագրության ներվային համակարգն աշխատում է ժամացույցի սլաքին հակառակ, այսինքն՝ 19 տարեկանում ես իրավագիտության դպրոցի ամենավատ աշակերտն էի և իմ կարիերան սկսեցի որպես խմբագրության անձնակազմի անդամ: Աստիճանաբար, ջանադրաբար աշխատելով, ես սկսեցի առաջ գնալ՝ աշխատելով տարբեր բաժիններում, մինչև որ դարձա սովորական հին լրագրող:

Այս մասնագիտությամբ աշխատելու համար լայն մշակութային հիմք էր անհրաժեշտ, որը տրամադրում էր անմիջապես աշխատանքային մթնոլորտը: Ընթերցանությունն աշխատանքի համար անհրաժեշտ հավելյալ պայման էր: Ինքնակրթվածները սովորաբար գիտելիքների ծարավ ունեցող և ընդունակ աշակերտներ են: Սա հատկապես ճիշտ է իմ դարաշրջանի մարդկանց վերաբերյալ, քանի որ մենք ցանկանում էինք ճանապարհ հարթել աշխարհի լավագույն մասնագիտության (ինչպես մենք էինք այն անվանում) առաջընթացի համար: Ալբերտո Լեռաս Կամարգոն, որը երկար տարիներ աշխատել է որպես լրագրող և երկու անգամ եղել է Կոլումբիայի նախագահը, նույնիսկ միջնակարգ դպրոց չէր ավարտել:

Հետագայուն լրագրության դպրոցների ստեղծումը գիտական շրջանների արձագանքն էր այն փաստին, որ այդ մասնագիտությունը կրթական հիմք չուներ: Տվյալ պահին խոսքը վերաբերում է ոչ միայն տպագիր լրատվամիջոցներին, այլ նաև լրատվամիջոցների բոլոր ոլորտներին, որոնք ստեղծվել են կամ դեռ ստեղծվելու են:

Սակայն նոր զարգացումները այս մասնագիտությունը նույնիսկ հեռացրել են 15-րդ դարում՝ իր ծննդյան օրվանից ստացած համեստ անվան ինաստից: Այն այլև չի կոչվում լրագրություն (ժուռնալիստիկա), այլ հաղորդակցման գիտություն կամ զանգվածային հաղորդակցություն: Ընդհանուր առնամբ, կարելի է ասել, արդյունքները գոհացուցիչ չեն: Կյանքի շեմին կանգնած ուսանողները, որոնք ինստիտուտներն ավարտում են անիրական մեծ սպասումներով, կարծես կորցրած լինեն իրականության և իրական աշխարհում կյանքի գլխավոր խնդիրների հետ կապը և սեփական առաջընթացին ավելի մեծ կարևորություն են տալիս, քան իրենց մասնագիտությանը և բնական ունակություններին: Սա հատկապես ճշմարիտ է երկու՝ ստեղծագործական ունակությունների և փորձի առումով:

Ուսանողների մեծամասնությունն այս մասնագիտություն մուտք է գործում ակնհայտ թերի պաշարով՝ նրանք լուրջ խնդիրներ ունեն կապված քերականության և ուղղագրության հետ և չեն կարողանում միանգամից ընկալել ընթերցված նյութը: Նրանցից ոնանք հպարտանում են, թե կարող են ընթերցել նախարարի գրասեղանին գլխիվայր դրված գաղտնի փաստաթուղթը, որ կարող են ձայնագրել սովորական գրույցն առանց խոսակցին տեղյակ պահելու կամ ընդունակ են հրապարակել այն խոսակցության բովանդակությունը, որն իրենք նախապես համաձայնել էին գաղտնի պահել: Ամենաշատ անհանգստություն պատճառում է այն, որ այս բարոյական խեղումները հիմնված են մեր մասնագիտության՝ գիտակցականորեն ընդունված և հպարտությանը շեշտվող այն «ռիսկային» տեսակետի վրա, թե ցանկացած գնով որևէ քանառաջինն իմանալու ամեն ինչից վեր է և կարևոր: Այն գաղա-

փարզ, որ լավագույն նորությունը միշտ չէ, որ առաջինը ստացվածն է, այլ շատ հաճախ այն, որը լավագույն կերպով է ներկայացված, նրանց համար ոչինչ չի նշանակում: Այս անձանցից ոնքնք, հասու դառնալով իրենց թերություններին, կարծում են, որ խարվել են համալսարաններում և արտահայտություններ չեն խնայում իրենց ուսուցիչներին մեղադրելու, թե վերջիններս չեն պատվաստել ներկայումս իրենցից պահանջվող արժանիքները, մասնավորապես՝ հենց կյանքի նկատմամբ հետաքրքրությունը:

Ակնհայտ է, որ սա քննադատություն է, որը կարող է ուղղվել կրթությանն ընդհանրապես, որն աղավաղվել է այնպիսի դպրոցների բազմաքանակության պատճառով, որոնք շարունակում են կիրառել ուսուցում տրամադրելու փոխարեն տեղեկատվություն տրամադրելու խեղաթյուրված գործելառը: Լրագրության մասնավոր դեպքում, սրա պատճառը կարծես թե առևտորի միջոցների զարգացման արագությամբ այս մասնագիտության զարգացման անընդունակությունն է, ինչպես նաև այն փաստը, որ լրագրողները մոլորվում են մեծ արագությամբ առաջ սլացող տեխնոլոգիաների կողմից ստեղծված լարիրիներում: Այլ կերպ ասած՝ ընկերությունների միջև կատաղի մրցակցություն գոյություն ունի ժամանակակից միջոցներ ձեռք բերելու խնդրում, սակայն նրանք հապաղում են, երբ գործը վերաբերում է իրենց անձնակազմը կրթելուն և այն մեխանիզմները կիրառելուն, որոնք նախկինում խթանում էին թիմային ոգին: Խմբագրությունների նորությունների բաժինները դարձել են ստերիլ լաբորատորիաներ, որտեղ մարդիկ լարված աշխատում են միայնության մեջ, վայրեր, որտեղ թվում է թե ավելի հեշտ է հաղորդակցվել կիբեռտարածության, քան թե ընթերցողների հոգին հուզելու միջոցով: Ապամարդկայնացումը տարածվում է վտանգավոր արագությամբ:

Հեշտ չէ հասկանալ, թե ինչպես են տեխնոլոգիաներն, իրենց ամբողջ փառքով հանդերձ, և հաղորդակցությունը, որը տեղի է ունենում կայծակնային արագությամբ (բաներ, որոնց մասին մենք ժամանակին երազում էինք), կարողացել արա-

գացնել և սաստկացնել աշխատանքի ավարտման ժամկետ-ների հետ կապված տագնապը: Սկսնակները բողոքում են, որ խմբագիրներն իրենց երեք ժամ են հատկացնում այնպիսի առաջադրանք կատարելու համար, որն իրականում հնարա-վոր չէ վեց ժամից պակաս ժամկետում ավարտել, որ նրանք խնդրում են երկու սյունակի չափով նյութ պատրաստել, իսկ հետո, վերջին պահին, իրենց տրամադրում են ընդամենը կես սյունակ, և որ աշխատանքի ավարտման ժամկետների քառ-սային իրավիճակում ոչ մեկը ժամանակ կամ ցանկություն չունի իրենց բացատրություն տալու, առավել ևս սփոփանքի խոսք ասելու: «Նրանք մեզ նույնիսկ չեն կշտամբում», - ասում էր մի սկսնակ լրագրող, որը ցանկանում էր իր վերադասներից պատասխան արձագանք ստանալ: Տիրում է լրություն՝ խմբա-գիրը, որը ժամանակին կարեկից իմաստուն էր, այժմ հազիվ եներգիա ու ժամանակ ունի տեխնոլոգիաների կողմից պար-տադրված ուժասպառ անող արագությանը դիմանալու:

Ին կարծիքով, շտապողականությունը և ծավալի վերաբեր-յալ սահմանափակումներն են, որ նվազեցրել են ռեպորտաժի վարկը, որը մենք միշտ համարել ենք ամենահեղինակավոր ժանրը, սակայն նաև ավելի շատ ժամանակ, հետազոտու-թյուններ, մտածվածություն և գրելու առաջնակարգ ունակու-թյուն պահանջողը: Ոեպորտաժն, իրականում, փաստերի մանրամասն և ճշգրիտ վերականգնումն է: Այլ կերպ ասած, դա իր ամբողջականությամբ նորություն է, եթե տեղի ունեցած իրադարձությունները ներկայացվում են այնպես, որ ընթեր-ցողը կարծի, թե ինքն անմիջապես ականատես է եղել այդ իրադարձություններին:

Մինչև հեռատիպերի և տելեքսների ներմուծումը, հեռահա-ղորդակցության ոլորտի ֆանատիկոսներից ինչ-որ մեկը ռա-դիոալիքների խառնաճայնության միջից արագորեն դրւս էր բերում համաշխարհային նորությունները, իսկ բազմագիտակ խմբագիրը այն ամբողջականացնում էր մանրամասներով և նախնական տեղեկատվությամբ. դա նաման էր մեկ ողնոսկրի հիման վրա դինոզավրի ամբողջ կմախքը կառուցելուն: Ար-գելվում էր միայն նորությունների մեկնաբանումը, քանի որ

դա համարվում էր գլխավոր խնբագրի սուրբ իրավունքը, որի խնբագրական հոդվածները, ենթադրվում էր, որ ինքն անձանք է գրում, չնայած գուցե այդպես չէր: Ի հավելումն, ծեռագիրը համարյա միշտ հայտնի էր իր ոլորագծերով: Հայտնի գլխավոր խնբագրիներն ունեին իրենց անձնական լինուտիպի օպերատորները, որոնց աշխատանքը նրանց ծեռագիրը վերժանելն էր:

Անցած 50 տարիների ընթացքում իրականացված մի կարևոր բարելավումն այն է, որ նորությունները և ռեպորտաժներն այժմ ուղեկցվում են մեկնաբանություններով և կարծիքներով, իսկ նախնական տեղեկատվությունն օգտագործվում է խնբագրական հոդվածները հարստացնելու համար: Սակայն կարծես թե սա լավագույն արդյունքների չի հանգեցնում, քանի որ այս մասնագիտությունը երբեք այսքան վտանգավոր չի թվացել, ինչքան այժմ: ճիշտ կամ սխալ հայտարարություններուն չակերտների չափից ավելի շատ օգտագործումը հնարավորություն է ստեղծում պատահական կամ մտածված սխալների, կանխամտածված և թունալի աղավաղումների համար, որոնք նորություններին մահացու գենքի ուժ են հաղորդում: Ամբողջապես վստահելի աղբյուրներից, իիմնականում քաջատեղյակ անձանցից, գաղտնիություն պահանջող բարձրաստիճան պաշտոնյաներից կամ ամեն ինչ իմացող, սակայն երբեք ոչ մեկի կողմից չնկատվող դիտորդներից մեջբերումները հնարավորություն են ընձեռում բոլոր տեսակի խախտումների համար անպատճելի մնալ: Խախտումներ կատարողն իր շուրջն ամրոց է կառուցում՝ մեջբերելով աղբյուրը չբացահայտելու իր իրավունքը, առանց ինքն իրեն հարց տալու, թե արդյոք ինքն իր աղբյուրին թո՞ւյլ չի տալիս հեշտությամբ շահագործել իրեն՝ այնպիսի տեղեկատվություն փոխանցելով, որը «փաթեթավորված» է աղբյուրի համար ամենաբարենպաստ ձևով: Իմ կարծիքով, վատ լրագրողը հավատացած է, որ իր բարեկեցության առումով ինքը կախում ունի իր աղբյուրից, հատկապես երբ աղբյուրը պաշտոնական է, և այս պատճառով այն համարում է սրբություն սրբոց, համաձայնում է նրա հետ, պաշտպանում է նրան և, վերջիվերջո, վտանգավոր համագործակցության փոխհա-

րաբերություններ է հաստատում նրա հետ, ինչը նույնիսկ հանգեցնում է այլ աղբյուրներին կասկածանքով վերաբերվելուն:

Հավանաբար սա կարող է բավականին անեկդոտային թվալ, սակայն ես կարծում եմ, որ այս գործնթացում գոյություն ունի մեկ այլ խոշոր մեղադրյալ՝ ձայնագրիչը: Մինչև դրա ներմուծումը, այս մասնագիտությունը բավականին լավ գործում էր աշխատանքի իր երեք միջոցներով (որոնք իրականում և փաստորեն համակցվում էին մեկի մեջ) ծոցատետր, անդրդպելի ազնվություն և մի զույգ ականջ, որ մենք, որպես լրագրողներ, դեռևս կիրառում ենք լսելու համար այն, ինչ մեզ ասում են: Զայնագրիչի մասնագիտական և բարոյական կիրառումը դեռևս գոյություն չուներ: Մարդիկ պետք է իրենց երիտասարդ գործընկերներին սովորեցնեն, որ ժապավենը ոչ թե իրենց հիշողության փոխարինողն է, այլ ավելի շուտ այս մասնագիտության նախկին տարիների ընթացքում բավականին վստահելի ծառայություններ մատուցած սովորական ծոցատետրի կատարելագործված տարրերակը: Զայնագրիչը լսում է, բայց չի ընկալում, և, էլեկտրոնային բութակի նման կրկնում է, բայց չի մտածում: Նրա վրա կարելի է հույս դնել, սակայն այն հոգի չունի և, վերջնական առումով, նրա բառացի փոխանցումն այնքան վստահելի չէ, ինչքան այն անձինը, որն ուշադրություն է դարձնում խոսողի կենդանի բառերին, կիրառում է իր մտավոր կարողությունները դրանք գնահատելու համար՝ իր բարոյական չափանիշների վրա հիմնվելով: Չնայած ձայնագրիչը, ռադիոյի նման, հսկայական առավելություն է տրամադրում բառերի անմիջապես և ճշգրիտ փոխանցումն ապահովելու առումով, սակայն այն կիրառելու դեպքում հարցագրույց անցկացնողներից շատերը չեն լսում ներկայացվող պատասխանները, քանի որ մտածում են հաջորդ հարցի մասին:

Զայնագրիչների պատճառով հարցագրույցներին չափազանց մեծ և թյուր նշանակություն է տրվում: Ռադիոն և հեռուստատեսությունը, ելնելով իրենց բնույթից, դրանք վերածել են գերագույն ժանրի: Տպագիր լրատվամիջոցները կարծես թե նույնպես կիսում են այն թյուր կարծիքը, թե ճշմարտու-

թյունը ոչ այնքան իրադարձության ականատես լրագրողի բառերում է, որքան հարցագրույց տվողի ներկայացրածի մեջ: Թերթերի շատ աշխատակիցների համար սղագրելը լուրջ փորձություն է: Նրանք շփորչում են բառերը, Վրիպուն իմաստաբանության, սայթաբում՝ ուղղագրության առումով և խճճվում շարահյուսության մեջ: Այս խնդրի լուծումը հավանաբար ծոցատետրերին վերադառնալն է, որպեսզի լրագրողները կիրառեն իրենց մտավոր ունակությունները՝ լսելու ընթացքում խմբագրելու համար և ձայնագրիչին թողնեն, որ կատարի արժեզուրկ վկայի իր դերը: Անեն դեպքում, միշխարական է, որ բազմաթիվ բարոյական և մի շարք այլ բացթողուններ, որոնք գցում են ժամանակակից լրագրության արժանապատվությունը և խայտառակլում այն, միշտ չէ, որ բխում են բարոյականության պակասից, այլ նաև՝ մասնագիտական ունակությունների պակասության հետևանք են:

Զանգվածային հաղորդակացության ուսումնական ծրագրերի թերությունը, հավանաբար, այն է, որ չնայած դրանք մասնագիտության համար կարևոր շատ բաներ են սովորեցնում, սակայն շատ քիչ բան են սովորեցնում անմիջապես մասնագիտության մասին: Անկասկած, հումանիտար ծրագրերը պետք է պահպանվեն, չնայած դրանք պետք է պակաս անորոշ և կարծր լինեն, որպեսզի ուսանողներին տրամադրեն այն նշակութային նախադրյալները, որոնք նրանք չեն ստանում միջնակարգ դպրոցում: Այսինքն՝ կրթության ցանկացած տեսակ պետք է իր ուշադրությունը քննոի երեք հիմնական ոլորտներին՝ ընդունակություններին և հակումներին նախապատվություն տալուն, հստակորեն սահմանելուն, որ հետագոտությունը մասնագիտության առանձնահատկությունը չէ, այլ ավելի շուտ բոլոր լրագրողները պետք է, ըստ սահմանման, հակում ունենան դեպի հետազոտությունները, և այն գիտակցության կառուցմանը, որ բարոյական չափանիշները չեն կարող պատահականության արդյունք լինել, դրանք մեղվի բզզոցի պես պետք է յուրաքանչյուր լրագրողի մշտական ուղեկիցը լինեն:

Գերագույն նպատակը պետք է լինի կրթության հիմնական մակարդակին վերադառնալը՝ փոքր խմբերով կազմակերպ-

ված սեմինարների միջոցով, որոնք տրամադրում են պատմական փորձի քննադատական գնահատականը հասարակական ծառայության բուն միջավայրում: Այլ կերպ ասած, երբ խոսքը ուսուցման մասին է, ապա պետք է վերակենդանացվի երեկոյան ժամը 5-ի հավաքույթների ոգին:

Ես պատկանում եմ Կարթագենա դե Ինդիասում գործող անկախ լրագրողների խմբին, որը ձգտում է դա անել անբողջ Լատինական Ամերիկայում փորձնական, շրջիկ սեմինարների միջոցով և բավականին վերաբրարձ հնչողություն ունեցող անվանում ունի՝ Լատինական Ամերիկայում լրագրության նոր մոտեցման հիմնադրամ (*Fundacion para un Nuevo Periodismo Iberoamericano*): Սա նախնական ծրագիր է այն լրագրողների համար, ովքեր դեռ նոր են սկսում իրենց կարիերան: Նրանք աշխատում են մի առանձին ոլորտում (ռեպորտաժներ, խմբագրում, ռադիո և հեռուստատեսային հարցազրույցներ, գործունեության այլ ոլորտներ)՝ մասնագիտության վետերանի դեկավարության ներքո:

Յիմնադրամի հայտարարությանն արձագանքելով՝ թեկնածուներին առաջարկում են այն լրատվական կազմակերպությունները, որտեղ նրանք աշխատում են, և այդ կազմակերպություններն էլ ծածկում են ճանապարհային, բնակարանային և գրանցման ծախսերը: Մասնակիցները պետք է ունենան 30-ից ցածր տարիք, երեք տարուց ոչ պակաս աշխատանքային փորձ և ցուցադրեն մասնագիտացման ոլորտում իրենց ընդունակությունները և ունակությունների մակարդակը՝ ըստ սեփական ընտրության ներկայացնելով՝ իրենց ամենալավ և ամենավատ աշխատանքները:

Յուրաքանչյուր սեմինարի տևողությունը կախված է հյուրներակալվող դասախոսների ժամանակի հնարավորությունից, որոնք մեծ մասամբ մեկ շաբաթից ավել ժամանակ չեն կարողանում տրամադրել: Սեմինարների ընթացքում դասախոսը չպետք է փորձի մասնակիցներին տեսական դոգմաներ և ուսումնական գիտելիքներ ներկայացնել, այլ՝ կլոր սեղանների շուրջ հղորացնել նրանց ունակությունները, օգտագործելով գործնական վարժություններ՝ նպատակ ունենալով նրանց

հետ կիսել իր փորձը: Նպատակը ոչ թե մարդկանց ուսուցանելն է, թե ինչպիսին աետք է լինի լրագրողը, այլ ավելի շուտ՝ գործնական վարժությունների միջոցով նրանց ունակությունները հղկելը: Չեն լինում վերջնական քննություններ կամ գնահատականներ, չեն տրվում որևէ տեսակի դիպլոմներ կամ սերտիֆիկատներ: Գնահատման գործընթացն ինքնին տեղի կունենա նրանց ունակությունների գործնական կիրառման ժամանակ:

Առայժմ հեշտ չէ այս գործընթացին գնահատական տալ կրթական տեսանկյունից: Սակայն, այսուհանդերձ, մեզ գոտեպնդում է սեմինարների մասնակիցների աճող խանդակառությունը, երևույթ, որն արդեն լրատվամիջոցներում այդ անձանց այլախոհության և ստեղծարար ըմբռստացման բերրի հող է նախապատրաստում, մի մոտեցում, որը բավականին հաճախ աջակցություն է գտնում նրանց տնօրենների խորհուրդների կողմից: Միայն այն փաստը, որ տարբեր երկրներից 20 լրագրողներ հանդիպել են, որպեսզի հինգ օր քննարկեն իրենց մասնագիտությունը, արդեն նրանց և լրագրության համար առաջընթաց է նշանակում: Ի վերջո, մենք լրագրության ուսուցման նոր ձև չենք առաջարկում, այլ ձգտում ենք վերակենդանացնել հին ձևերը:

Լավ կլիներ, որ լրատվամիջոցներն աջակցեին փրկության այս առաքելությանը կամ իրենց նորությունների բաժիններում, կամ էլ հասուլ այդ նպատակով ստեղծված սցենարների ստեղծմամբ, ինչպես դա արվում է թոհջքային տրենաժորների դեպքում, որոնք կարող են վերստեղծել թոհջքի ժամանակ հանդիպող բոլոր պատահարները, որպեսզի ուսանողները սովորեն խուսափել աղետներից մինչև նման պատահարներին իրական կյանքում հանդիպելը: Լրագրությունն անգուսապ կիրք է, որը կարող է բորբոքվել և մեղմվել միայն իրականության հետ հստակ հակամարտությամբ: Իր արյան մեջ սա չունեցող որևէ մեկը չի կարող ընկալել դրա ձգողական ուժը, որը լիցքավորվում է կյանքի անկանխատեսելիությամբ: Այս փորձը չունեցող ոչ մեկը չի կարող ընկալել նորություններից բորբոքվող արտասովոր հուզմունքը, բափկած ջանքերի

առաջին պտուղները վայելելու բացարձակ խանդավառությունը և անհաջողության պատճառով առաջացող բարոյական ամայացումը: Նա, ով սրա համար չի ծնվել և պատրաստ չէ ապրելու սրա և միայն սրա համար, չի կարող կառչել այս մասնագիտությանը, որն այդքան անըմբոնելի և կլանող է. Երբ աշխատանքն ավարտվում է նորությունների յուրաքանչյուր հրապարակումից հետո, երբ թվացյալ ավարտվածության զգացում կա՝ անմիջապես հաջորդ առավոտյան ամեն ինչ կրկին և ավելի մեծ լարվածությամբ սկսելու համար՝ առանց գեթ մի վայրկյան հանգստանալու:

Թարգմանությունը՝ Մանվել Բադայանի

**ՀԱՎԵԼՎԱԾ**

*Մտքեր նաեւ նախընթացի մասին*



Թող յուրաքանչյուր ամերիկացի ոտքի կանգնի իր իրավունքների պաշտպանության համար՝ թեկուզ նստելով (քաղաքացիական իրավունքների պաշտպանների նստացույցերի մասին):

**ԶՈՆ ՔԵՆԵԴԻ  
(1917-1963),  
ԱՄՆ ճախազահ**

Ես չեմ կիսում ձեր համոզմունքները, բայց պատրաստ եմ կյանքս տալ, որպեսզի դուք կարողանաք դրանք արտահայտել:

**ՎՈԼՏԵՐ  
(1694-1778),  
Ֆրանսիացի գրող,  
Վիլիստիա-լուսավորիչ**

Ազատ երկրում շատ հաճախ նշանակություն չունի՝ լավ թե վատ են մտածում մարդիկ, կարևոր է, որ նրանք ընդհանրապես մտածեն, քանի որ այդ դեպքում է ի հայտ գալիս ազատությունը, որն էլ ապահովում է պաշտպանությունը՝ այդ դատողությունների անցանկալի հետևանքներից:

**ԾԱՌԼ ՄՈՒՏԵՄԲՅԱՆ  
(1689-1755),  
Ֆրանսիացի վիլիստիա**

Այն մարդկանց խոսքի ազատությունը երաշխավորելու միակ միջոցը, ում հետ դուք հանաձայն եք, նրանց իրավունքների պաշտպանությունն է ենթադրում, ում հետ դուք հանաձայն չեք:

**ԷԼԻՆՈՐ ՋՈԼՍՍ ՆՈՐՑՈՆ  
(1938),  
ամերիկացի իրավաբան,  
քաղաքացիական  
իրավունքների պաշտպան**

Ազատությունը «երկու անգամ երկուսը հավասար է չորսի» ասելու հնարավորությունն է:

**ԶՈՐՅ ՕՐՈՒԵԼ  
(1903-1950),  
ամերիկացի գրող**

Վտանգավոր է միայն արգելված խոսքը:

**ԼՅՈՒԴՎԻԳ ԲԵՐՆԵ  
(1786-1837),  
գերմանացի  
իրապարակախոս**

Լուսավոր մատնված բոլոր ճշմարտությունները դառնում են թունավոր:

**ՖՐԻԴՐԻԽ ՆԻՑԵՑ  
(1844-1900),  
գերմանացի վիլիստիա**

Դնչկալ հագցված շունը...  
հետույքով է հաշում:

**ԴԱՅՆԻԿԻՆ ԴԱՅՆԵ**  
**(1797-1856),**  
**գերմանացի բանաստեղծ**

Եթե դուք չասեք այն, ինչ  
մտածում եք, թերևս, հար-  
կադրված լինեք ասել այն,  
ինչ չեք մտածում:

**ԹԵՌՈՂՈՐ ՊԱՐԿԵՐ**  
**(1810-1860), ամերիկացի**  
**աստվածաբան և**  
**հասարակական գործիչ**

Անվերջ հալածանքները  
խլել են հաղորդակցվելու՝ սե-  
փական մտքերը արտահայ-  
տելու և այլոց ունկնդրելու  
ձեր հնարավորությունը: Եվ  
ձայնի հետ մենք կկորցնեինք  
նաև մեր հիշողությունը, եթե  
մոռանալն էլ լիներ մեր իշխա-  
նության ներքո՝ ինչպես լոելը:

**ՏԱՑԻՏՈՒՄ**  
**(55-117. Ք.Ծ.ա.),**  
**ԽՈՀՄԵԱՑԻ պատմիչ**

Նրանք, ովքեր կրում են  
բերնակապ, թող հիշեն, որ  
դա լրացվում է սանձով ու  
մտրակով:

**ՍՏԱԼԻՆԱԿ ԵԺԻ ԼԵՑ**  
**ԼԵՀ գրող եւ երգիծաբան**  
**(1909 - 1966)**

Ազատ երկրներում ամեն  
ինչ հայտնի է դառնում ու  
տեղնուտեղը մոռացվում է,  
բռնատիրության ճնշման  
տակ ամեն ինչ թաքցվում է և  
ամեն ինչի մասին ստիպված  
ես լինում կռահել: Այդ պատ-  
ճառով նկատվում և հիշվում  
են չնչին մանրամասներն  
իսկ, գաղտնի հետաքրքրա-  
սիրությունը աշխուժացնում է  
զորույցը՝ հաղորդելով հա-  
տուկ սրություն: Չկան առա-  
վել դժբախտ բանաստեղծ-  
ներ, քան նրանք, ում վիճակ-  
ված է գրել հրապարակայ-  
նության պայմաններում,  
քանզի երբ ամեն ոք կարող է  
ասել՝ ինչ մտածում է, բանա-  
ստեղծին մնում է միայն լոելը:

**ԱԱՏՈՒՖ ԴԵ ԿՅՈՒՏԻՒՆ**  
**(1790-1857),**  
**ֆրանսիացի**  
**հրապարակախոս**

Դարեհ արքան ստեղծեց  
«արքայի աչքերն ու ականջ-  
ները», բայց ի հավելումն  
ստեղծեց և «արքայի ձեռքե-  
րը», որոնք փակում էին այդ  
աչքերն ու ականջները:

**ՎԵՍԼԱԿ ԲԲՈՒՋԻՆԱԿԻ**  
**(1920), ԼԵՀ գրող**

Եթե այդ գրքերում ասվում է այն, ինչ Ուլրանում, նրանք ավելորդ են, իսկ եթե այլ բան է ասվում ուրեմն վճասակար են:

*Այդպես է ասել խալիֆ Օմա-  
ռը (?-644)՝ հրամայելով այրել  
Ալեքսանդրիայի  
գրադարանը*

Ազատ մանուլը լինում է լավ կամ վատ՝ դա ճիշտ է: Բայց ավելի ճիշտ է, որ անազատ մամուլը միայն վատն է լինում:

*ԱԼԲԵՐ ՔԱՍՅՈՒ  
(1913-1960),  
Քրանսիացի գրող*

Գրաքննությունը նման է կույր աղիքի՝ պասիվ վիճակում անօգուտ է, ակտիվ վիճակում՝ վտանգավոր:

*ՄՈՐԻՍ ԷՌԵԼՍՍՆ  
(1911-1975),  
բրիտանացի քաղաքագետ*

Ես իմ հոդվածներում իրավունք չունեմ անդրադառնալու միայն իշխանությանը, կրոնին, քաղաքականությանը, բարոյականությանը, պաշտոնատար անձանց, հուսալի կորպորացիաներին, օպերային թատրոնին, ինչպես և մյուս թատրոններին, ինչպես նաև այն անձանց, որ

ինչ-որ բանի հետ կապ ունեն, մնացած ամեն ինչի մասին ես լիակատար ազատ կարող եմ գրել՝ երկու-երեք գրաքննիչի վերահսկողության տակ:

*ՊԻԵՌ ԲՈՍԱՐՃԵ  
(1732-1799),  
Քրանսիացի դրամատուրգ*

Նրանք, ովքեր կառավարությունից պահանջում են կանոնակարգել բանականության և ոգու գործողությունները, նման են նրանց, ովքեր ինքնասպան են լինում՝ սպանվելու վախից:

*ԴԱՐՐԻ ՏՐՈՒԵԼ  
(1884-1972),  
ԱՄՆ նախագահ*

Գրաքննությունը կրտսերն է երկու նողկալի քույրերից. ավագի անունը Ինկվիզիցիա է:  
*ՅՈՐԱՆ ՆԵՍՏՐՈՅ  
(1801-1862),  
ավստրիացի երգիծարան*

Գրաքննությունը, ինչպես բարեգործությունը, պետք է սկսվի ընտանիքում, բայց, իտարբերություն բարեգործության, ընտանիքում էլ պիտի ավարտվի:

*ԿԼԵՐ ԼՅՈՒ (1903-1987),  
ամերիկացի քաղաքագետ և  
գրականագետ*

Գրաքննիչ. մարդ, որն օժուված է եզակի ծիրջով շնչելու և արգելելու այն, ինչ մենք ուղղում էինք տեսնել, լսել կամ կարդալ:

**Է. ՍԱԿԿԵՆՁԻ**

**«14000 ասույթներ» գրքից**

Բոլոր կանոններն այն մասին, թե ինչ է պետք կարդալ և ինչ չպետք է կարդալ, ուղղակի անհերեթ են: Ժամանակակից մշակույթը ավելի քան իր կեսով հիմնվում է այն ամենի վրա, ինչ պետք չէ կարդալ:

**ՕՍԿԱՐ ՈՒՆՅԼԴ**

**(1854-1900),**

**անգլիացի գրող**

Ցանկացած գրքում կարելի է գտնել անվայել բաներ, բացի՝ հեռախոսագրքից:

**ՋՈՐՋ ԲԵՌՆԱՐԴ ՇՈՈՒ**

**(1856-1950),**

**անգլիացի դրամատուրգ**

Չեր ականջները չափանց պարկեշտ են, իսկ ձեր բարքերը չափազանց այլասերված:

**ՎՈԼՏԵՐ**

Գրաքննությունը այլասերում է ավելին, քան պոռնկագրությունը:

**ԹՈՆԻ ՍՍԻԹ (1938),  
բրիտանացի մարդու իրավունքների պաշտպան**

Արգելվի է արժանի այն երգիծանքը, որ գրաքննիչը ընդունակ է հասկանալու:

**ԿԱՐԼ ԿՐԱՌԻՍ  
(1847-1936),  
ավստրիացի գրող**

Գրաքննությունը՝ գովազդ է պետության հաշվին:

**ՖԵՂՇԻԿՈ ՖԵԼԻՆԻ  
(1920-1993),  
իտալացի կինոռեժիսոր**

ճշնարտությունը կարելի է ասել միայն այն հասարակության մեջ, որը նույն այդ ճշնարտությունը թաքցնում է:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՆԻՍ  
(1953), էստեագիր,  
մշակութաբան**

Խոսքի նկատմամբ կորած հավատը ինձ վերադարձրեց գրաքննությունը:

**ԱՍՍԻՍԻՍՎԿ ԵԺԻ ԼԵՑ**

Վատ ժամանակներում մտածողները դաշնում են այլախոհներ:

**ՎԵՐՆԵՐ ՄԻՉ (1936),  
գերմանացի գրականագետ**

Մտածիր և թույլ տուր մտածել մյուսներին:

**ԶՈՆ ՈՒԵՍԼԻ (1703-1791),  
անգլիացի աստվածաբան  
և Եկեղեցական  
քարենորդիչ**

Ազատությունը ոչինչ չար-  
են, եթե սխալվելու ազատու-  
թյունը չի ներառում:

**ՄԱՐԱԹՍԱ ԳԱՍԴԻ  
(1869-1948),  
հնդիկ քաղաքագետ**

Գալիլեյին դատող ինկվի-  
զիտորը երևի արգահատան-  
քով էր վերաբերվում Սոլյու-  
տի դատավորների բթամտու-  
թյանը:

**ԿԼՈԴ ԱՌԻՎԱ  
ՇԵԼՎԵՑԻՈՒ (1715-1771),  
ֆրանսիացի  
փիլիսոփիա-լուսավորիչ**

Ինձ խարույկ կիանեն,  
բայց դա միայն մի դրվագ է:  
Մենք կշարունակենք մեր բա-  
նավեճը հավերժության մեջ:

**ՄԻԳԵԼ ՍԵՐՎԵՏ  
(1511-1553), իսպանացի  
գիտնական, ում կալվինիստնե-  
րը մահապատժի են դատա-  
պարտել հերետիկոսության  
մեղադրանքով**

Այրված յուրաքանչյուր գիրք  
լուսավորում է աշխարհը:

**ՌԱԼՖ ԷՄԵՐՍՈՆ, ամերիկացի  
փիլիսոփիա, բանաստեղծ,  
լսնելսություն**  
(1803-1882)

Տեղեկատվությունը ժո-  
ղովրդավարության հիմնա-  
կան տարադրամն է:

**ՌԱԼՖ ՆԵՅՆԵՐ  
(1934), ամերիկացի  
իրավաբան,  
սպառողների իրավունքների  
պաշտպան**

Եթե տեղեկությունը մեզ  
դուր չի գալիս՝ ուրեմն քա-  
րոզչություն է: Եթե տեղեկու-  
թյունը մեզ դուր է գալիս՝ ու-  
րեմն տեղեկություն է:

**ՄԱՐՎԻՆ ԿԱԼԲ,  
ամերիկացի լրագրող**

Յուրաքանչյուրը ցանկա-  
նում է ստանալ ազնիվ, անա-  
շառ, ճշմարտացի և իր հա-  
յացքներին լիովին համապա-  
տասխան տեղեկատվություն:

**ԳԻԼԲԵՐՏ ՉԵՍՏԵՐԾՈՆ  
(1874-1936), անգլիացի գրող**

Եթե դու ամեն ինչ հասկա-  
նում ես, ուրեմն քեզ ամեն ինչ  
չեն ասում:

NN

Տեղեկատվությունը, որ մենք ունենք, այն չէ, որն ուզում ենք ստանալ: Տեղեկատվությունը, որ դուք ուզում եք ստանալ, այն չէ, որ իրականում ձեզ պետք է: Տեղեկատվությունը, որ ձեզ իրականում պետք է, ձեզ անհասանելի է: Տեղեկատվությունը, որ սկզբունքորեն ձեզ հասանելի է, շատ ավելին արժի, քան դուք կարող եք վճարել:

NN

Ինչքան քիչ գիտենք, այնքան շատ ենք կասկածում:

**ԴԵՆԻՐԻ ՈՒԽԵՐ ՇՈՈՒ  
(1818-1885),  
ԱՄԵՐԻԿԱԳԻ ԵՐԳԻԾԱՔԱՆ**

Զանգվածային լրատվամիջոցները պակաս վտանգավոր չեն զանգվածային ոչնչացման միջոցներից:

**ԹՅՈՒՐ ԿԱՄԻՔԱՆ  
(1894-1984), Փիզիկու**

Ժուռանալիստիկան այն է, երբ հաղորդում են, որ «Լորդ Չոնը վախճանվել է» այն մարդկանց, ովքեր չգիտեին, որ լորդ Չոնն ապրել է:

**ԳԻԼԲԵՐՏ ՉԵՍՏԵՐՏՈՆ**

Ժուռանալիստիկան ժամանակակից հասարակությունների կրոնն է, և դա առաջընթաց է: Հովհանները պարտավոր չեն հավատալ, իտոք՝ նույնպես:

**ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ  
(1844-1924),  
ՖՐԱՆՍԻԱԳԻ ԳՐՈՂ**

Ո՞րն է ժուռանալիստիկայի և գրականության տարբերությունը: Ժուռանալիստիկան չարժի կարդալ, իսկ գրականությունը չեն կարդում:

**ՕՍԿԱՐ ՊԻԱՅԼԴ**

Արձակը՝ լավագույնս դասավորված բառերի շարքն է, պոեզիան՝ լավագույն բառերը՝ լավագույն դասավորությամբ, իսկ ժուռանալիստիկան՝ վաղուց հայտնի ցանկացած բառերի շարքը՝ ցանկացած վաղուց հայտնի դասավորությամբ:

**«ԹԱՅՑՍՍ»**

Ժուռանալիստիկայի առաքելությունն է հանգստացնել անհանգստացածներին և անհանգստացնել հանգստացածներին:

**ԶԵՐՈՄ ԼՈՈՒՐԵՆՍ,  
ԱՄԵՐԻԿԱԳԻ ԳՐՈՂ**

Աներիկայում ժուռնալիստիկան դիտարկվում է իբրև պատմության շարունակություն, Անգլիայում՝ իբրև զրոյցի շարունակություն:

**ԷՆՏՈՆԻ ՍԱՄՊՈՆ  
(1926), անգլիացի գրող**

Ժուռնալիստիկան, ինչպես և պատմությունը, ճշգրիտ գիտություն չէ:

**ԶՈՆ ԳԱԼՏԵՐ (1901),  
աներիկացի լրագրող**

Ժուռնալիստիկան մնացյալին այն ամենը բացատրելու արվեստն է, ինչ ինքդ չես հասկանում:

**ԱԼՖՐԵԴ ՆՈՐՏԿՎԻՖ  
(1865-1922),  
բրիտանացի հրատարակիչ**

Ժուռնալիստիկան թշնամիներին դրամի վերածելու արվեստն է:

**ԿՐԵՅԳ ԲՐԱՈՒՆ (1947), անգլիացի լրագրող**

Մանուլը մի հայտնագործություն է, որը հնարավորություն է տալիս լրության մատնել որոշակի դեպքեր՝ բոլորովին այլ դեպքերի մասին խոսակցության օգնությամբ:

**ՈՈՒԴՈՒՖ ՈՈՒՖ  
(1920 -2004),  
գերմանացի գրող**

Մանուլն օգտակար է արդեն իսկ այն պատճառով, որ սովորեցնում է մանուլին չվստահել:

**ՍԵՍՅՈՒԵԼ ԲԱԹԼԵՐ  
(1835-1902),  
անգլիացի գրող**

Մեր օրերում վարկի վերականգնումը գերազանցապես թանաքի օգնությամբ է կատարվում:

**ԶՈՐԶ ԴԵՍԻՍՈՆ ՊՐԵՍԻՍ  
(1802-1870),  
ամերիկացի լրագրող**

Մեկնաբանությունները ազատ կարող են լինել, բայց փաստերը սրբազան են:

**ՍԿՈՏ ՉԱՐԼԶ ՊՐԵՍՈՒԻՉ  
«Մանչեստր Գարողիանի»  
հրատարակիչ**

Մեկ ունցիա հոլյաներն արժեն նի քանի տոննա փաստ:  
**ԶՈՆ ԶՈՒՆՈՐ (1919 - 1998),  
բրիտանացի լրագրող**

Մամուլի ազատությունը նշանակում է, որ մանուլից հնարավոր չէ ազատվել:

**ԳՐԵՅՍ ՔԵԼԼԻ (1928-1982),  
ամերիկացի  
կինոդերասանուիհի,  
Մոնակոյի իշխանուիհի**

Մանուլի ազատությունը երաշխավորում է այն անձը, ում ձեռքում է կնիքը:

*Ա. ԼԻԲԼԻՆԳ (1904-1963),  
ամերիկացի գրող*

Խնդրի էությունը «հրատարակիչների տպագրության ազատության» մեջ չէ, այլ՝ «տեղյակ լինելու քաղաքացիների իրավունքի»:

*ԱՐԹՈՒՐ ՍՈՒԼՑԵՐԳԵՐ  
(1891-1968),  
«Նյու Յորք Թայմսի»  
հրատարակիչ*

Պառլամենտի այն հատվածը, որտեղ նստած են լրագրողները, դարձել է մեր պետության չորրորդ խավը:

*ԹՈՂԱՍՍ ՄԱԿՈԼԵՅ  
(1800-1859),  
անգլիացի պատմաբան*

Մեզ իշխում են կառավարությունը և առավոտյան թերթերը:

*ՈՒԵՆԴԼ ՖԻԼԻՊՍ  
(1811-1884), ամերիկացի  
քաղաքագետ-արոլիցիոնիստ*

Ամերիկայում նախագահը կառավարում է չորս տարի, իսկ լրագրողները՝ անժամկետ:

*ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼ*

Եթե հարկադրված լինեի ընտրել՝ ունենալ կառավարություն առանց թերթերի կամ թերթեր առանց կառավարության՝ ես առանց մտածելու կը ընտրեի երկրորդը:

*ԹՈՂԱՍՍ ԶԵՖԵՐՍՈՆ (1743-1826), ԱՄՆ նախագահ*

Եթե ԱՄՆ-ի նախագահը վերահսկեր մամուլը, նրա աշխատանքը շատ ավելի հեշտ կլիներ:

*ԲԱՂՋԱԴՐՈՒՄ ԱՄՆ-ի  
ԴԵՍՎԱՆ Էյպրիլ  
ԳԼԱՍՎԻՆ՝  
ՍԱԴԱՄ ՇՈՒՏԵՐՋԻՆ*

Եթե ձեզ գրավում են ոխկային ներդրումները, ներդրումներ արեք այն պետությունում, որը վերահսկում է զանգվածային լրատվամիջոցները:

*ՈՍԼՖ ՊԻՏԵՐՍ (1952), ամերիկացի գնդապետ,  
ռազմական տեսարան*

Կոտրիդ ջերմաչափը և դրույդը չեն ունենա:

*ԼԵԽ ՎԱԼԵՆՍ (1943),  
Լեհաստանի նախագահ,  
«Դամերաշխություն» շարժման ղեկավար*

Քաղաքական գործիչը, որը  
բողոքում է մամուլից, հիշեց-  
նում է այն նավապետին, որը  
բողոքում է ալիքներից:

**ԷՆԻ ՊԱՌԻԵԼ,  
ԲՐԻՍՏՈՂԱՆԱԳԻ ՔԱՂԱՔԱԳԵՑ**

Նախարարը չպետք է բո-  
ղոքի թերթերից և ոչ էլ թեր-  
թեր կարդա: Նա պետք է գրի  
այդ թերթերը:

**ԾԱՌԼ ԴՐ ԳՈԼ  
(1890-1970),**

**ՖՐԱՆՍԻԱՋԻ ՆԱԽԱԳԱԿԻ**

Ծեր Ռոկֆելլերի համար  
հատուկ թերթ էին հրատարա-  
կում՝ մտացածին նորություն-  
ներով: Որոշ երկրներ ի վիճա-  
կի են նման թերթեր հրատա-  
րակել ոչ միայն ծեր միլիար-  
դատերերի համար, այլև ամ-  
բողջ բնակչության:

**ԱՏԱՍԻՍԼԱՎ ԵԺԻ ԼԵՅ**

Մեկ դոլար ներդրումը մա-  
նուլում շատ ավելի շահավետ  
է, քան տասը դոլար ներդրու-  
մը զենքի վաճառքում՝ զենքը  
հազիվ թե երթև խոսի, իսկ  
մանուլը առավոտից երեկո  
թերանը չի փակում:

**ՈՒՉԱՐՈՒ ՆԻՔՍՈՆ**

**(1913-1994),**

**ԱՄՆ ՆԱԽԱԳԱԿԻ**

Ինձ ընտրել է ժողովուրդը,  
ոչ թե մամուլը:

**ՈՒՒԼՅԱՍ ԴՈՎԱՐԴ ՏԱՅՏ  
(1857-1930), ԱՄՆ ՆԱԽԱԳԱԿԻ**

Երբեք չկորցնել համբե-  
րությունը մամուլի և հասա-  
րակության հետ հարաբերու-  
թյուններում՝ քաղաքական  
կյանքի գլխավոր օրենքն է:

**ՔՐԻՍՏԱԲԵԼ ՊԱՆԿԵՐՈՍ**

**(1880-1958),**

**ԱՆԳԼԻԱԳԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ**

**ԳՈՐԾԻՑ**

Մամուլը տեղեկություններ  
կստանա կամ ձեզնից, կամ  
ձեր ոխերիմ թշնամիներից:  
Դուք ոչինչ չեք շահում՝ պատ-  
ճեշվելով մամուլից:

**ԶՈՒ ՍԻՐՁ,  
ԱՄԵՐԻԿԱԳԻ ՔԱՂԱՔԱԳԵՑ**

Բարեբախտաբար, ապար-  
նայք լրագրողներ, ես կար-  
դում եմ ձեր թերթերը, որ  
ինանամ՝ ինչ եմ մտածում:

**ԾԱՌԼ ԴՐ ԳՈԼ**

Երբեք պետք չէ լավ խոսել  
սեփական անձի նասին:  
Պետք է դա տպագրել:

**ԺՅՈՒ ՎԱԼԵ**

**(1832-1885),**

**ՖՐԱՆՍԻԱՋԻ գրող**

Անգլիայում ասում են՝ ինչու ինքդ հաշես, եթե կա շունը:  
**ՕՍԻՆ ՉԵՄՔԵՈԼԵՆ,**  
**բրիտանացի քաղաքագետ**

Յուրաքանչյուր քաղաքական գործից ճանաչում է նվազագույնը մեկ լրագրողի, ուն գաղտնիքներ չպահպանելու ընդունակությունից կարող է լիովին օգտվել:

**ՈՈՐԵՐՏ ԼԵՄՔԵ**  
**(1913-1989), գերմանացի**  
**հեռուստալրագրող**

Առանձնապես մի զայրացիր, եթե ինչ-որ մեկը իմ մասին վատ է արտահայտվում. բավական է արդեն այն, որ ոչ ոք չի կարող մեզ վնասել:

**ՕԳՈՒՏՈՍ ԿԱՅՍՐԸ**  
**(Պ.Ծ.ա. 63-Պ.Ծ.ա. 14)**  
**իր հոգեզավակ**  
**Տիբերիոսին**

Հարձակվել լրագրողների վրա նույնբան անհնաստ է, որքան մարտնչել կանանց հետ: Եթե պարտվես, հիմար տեսք ես ունենալու, եթե հաղթես՝ կրկնակի հիմար:

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԵԲԵԴ**  
**(1950-2002),**  
**գեներալ, քաղաքագետ**

Միայն չնչին մարդիկ են վախենում չնչին հոդվածներից:

**ՊԻԵՌ ԲՈՍԱՐՃԵ**  
**(1732-1799),**  
**ֆրանսիացի դրամատուրգ**

Ես երեք թերթից ավելի են վախենում, քան հարյուր հազար սվինից:

**ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ**  
**(1769-1821),**  
**ֆրանսիայի կայսր**

Նստում են սվինների վրա՝ դրանք ծածկելով թերթերով:  
**ՎԱՍԻԼԻ ԿԼՅՈՒԶԵՎԱԿԻ**  
**(1841-1911), ռուս պատմաբան**

Դուք ինձ տեսնում եք որպես ֆրանսիայի տեր, բայց ես չեմ համարձակվի երեք ամիս ֆրանսիան ղեկավարել՝ մամուլի ազատության պայմաններում:

**ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ**

«Մի արթնացրու քնած շանը»: Ֆիշտ է: Եթե մեծ գրավ ես դոել, լրագրողներին հանգիստ թող:

**ՍԱՐԿ ՏՎԵՆ**  
**(1835-1910),**  
**ամերիկացի գրող**

Եթե ջերմությանը չես դիմանում, խոհանոցում անելիք չունես:

**ԱՍԽ Աախագահ Դարրի  
Տրումենի (1884-1972)  
սիրած ասուլը**

Այստեղ, ուր թերթերը չեն կարող տպագրել ամեն մի անհեթերություն, իշխանության դեկին կանգնած մարդիկ ազատ են ամեն մի անհեթերություն գործելու:

**ԼՈՒ ՏԵՐՆՈՒԱՐ,  
ֆրանսիացի քաղաքագետ,  
տեղեկատվության  
նախարար**

Մեքենայությունների ձիրքը շատ ավելի օգտակար է համոզելու ծիրքից՝ մեքենայություններին տրվում է յուրաքանչյուրը, իսկ որևէ մեկին համոզելը դժվար է:

**ԺԱՆ ՖՐԱՆՍՈՒԱ ՇԵ ՌԵՑ  
(1613-1679),  
ֆրանսիացի կարդինալ և  
քաղաքագետ**

Աշխատեք, որ ձեր հակառակորդների մասին տարածվեն նրանց բարքերին հանապատասխան ամոթալի ասեկուսներ՝ կամ հանցագործությունների, կամ զեխտության,

կամ մեքենայությունների մասին:

**ՑԻՑԵՐՈՆ (Ք.Ծ.Ա. 1-ին դար)**

Կա զրպարտությունից ավելի սարսափելի զենք՝ ճշմարտությունը:

**ՇԱՈՒ ՄՈՐԻՍ ԹԱԼԵՅՐԱՆ  
(1754-1838),  
ֆրանսիացի դիվանագետ**

Միայն ճշմարտությունն է վիրավորական:

**ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ**

Եթե լրագրողի գրածը որակում են «անտակտ», կարելի է համոզված լինել, որ դա ճշմարտացի է:

**ԵԿԱՏԵՐԻՆԱ ԴԵԳՈՏ,  
լրագրող**

Հաստակաշիներին նյարդայնացնում է ամենանուրբ ակնարկն իսկ:

**ԱՍԱՆԻՍԼԱՎ ԵԺԻ ԼԵՑ**

Եթե ավանակը քեզ քացի է տվել, նույն կերպ մի պատասխանիր նրան:

**ՊԼՈՒՏԱՐՔՈՆ  
(46-127),  
հույն պատմիչ**

Երբեք մի պաշտպանվիր ու մի արդարացիր՝ նախքան քեզ մեղադրելը:

**ԿԱՌԼՈՍ 1-ԻՆ  
(1600-1649),  
ԱՆԳԼԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐ**

Դա արքաների ճակատագիրն է՝ ծիշտն անել ու սխալ գնահատվել:

**ԱՆՏԻԹԵՆԵՍ  
(Ք.Ծ.ա.455-360)  
ԻՒԿՅԱ ՎԻԼԻՍՈՎԻԱ**

Եթե ուզում եք նկատված լինել, հարձակվեք ինչ-որ մեկի վրա:

**ԶԵՐԻԻ ՂԵԼՍ ՖԵՄԻՆ  
(1936), ԱՄԵՐԻԿԱԳԻ ՄԵՆԵԶԵՐ՝  
ԳՈՎԱԳՈՒ ԲՆԱԳԱՎՈՐՈՒՄ**

Քաղաքական գործչի անվայել ճառերը ավելի վնասում են իրեն, քան նրան, ունեմ ուղղված են:

**ՊԼՈՒՏԱՐՔՈՍ**

Վիրավորանքի աստիճանը մեծանում է վիրավորողի դիրքին համապատասխան:

**«ՅՈՒՍՏԻՄԻԱՆՈՍԻ  
ԱՍՈՎԵՐՆԵՐԸ» (6-րդ դար)**

Կուսակցությունը, որն անձնութ համարում է իր ծա-

ռայությունը, չպետք է զարմանա, եթե իրեն մեղադրեն երաշտի համար:

**ԴՈՒՅՅԱ ՄՈՐՐՈՈՒ  
(1873-1931),  
ԱՄԵՐԻԿԱԳԻ ԴԻՎԱՆԱԳԵՏ**

Ճակառակորդին մեղադրելով ժողովրդին ճարպկորեն մոլորեցնելու մեջ խելացի քաղաքագետը թաքցնում է նախանձի նոտաները ձայնի մեջ:

**ՄԱԿԵՆԶԻԻ  
«14000 ԱՍՈՎԵՐՆԵՐ» ԳՐԵՒ**

Ճերքիր այն, ինչի մեջ քեզ չեն մեղադրում և մեղադրիր ուրիշներին այն բաներում, ինչ նրանք չեն կարող հերքել:

**ՄԱՐՐԻ ՉՈՏԻՆԵՐ**

Նա, ով աղտեղություններ է սփռում շուրջբռնորը, կորցնում է ոտքի տակի հողը:

**ԷԴՎԱՅ ԱՏԻՎԵՆՍՈՆ  
(1900-1959),  
ԱՄԵՐԻԿԱԳԻ ՔԱՂԱՔԱԳԵՏ**

Անստորագիր հոդվածների հեղինակներին պետք է վերաբերվել այնպես, ինչպես անանուն նամակներ ուղարկողներին:

**ԷՌՈՒԱՐ ԷՐՐԻՈ  
(1872-1957),  
ՖՐԱՄԱՀԻԱՅԻ ՎԱՐՁԱՎԵՏ,  
ԳՐՈՂ**

Զրպարտությունների ճանապարհը փակելու լավագույն միջոցը մեղադրանքներին լայն ասպարեզ տալն է: Մարդկանց մեղադրում են դատարաններում, զրպարտում են փողոցներում ու իրապարակներում: Զրպարտանքները գերիշխում են այնտեղ, ուր մեղադրանքներին տեղ չի թողնվում:

**ՆԻԿՈԼՈ ՍԱՔԹԱՎԵԼԻ  
(1469-1527),  
իտալացի փիլիսոփա**

Փոքրիկ ճեղքը խորտակում է մեծ նավը:

**ԲԵՆԶԱՍԻՆ ՖՐԱՆԿԻՆ  
(1706-1790),  
ամերիկացի գիտնական և  
քաղաքագետ**

Վաշինգտոնում գոյություն ունեն երկու տեսակի քաղաքական գործիչներ. մի կեսը ջանում է սկսել ինչ-որ քաղաքական հետաքննություն, մյուս կեսը ջանում է կանխել ինչ-որ քաղաքական հետաքննություն սկսելը:

**ԷՌՈ ՈՒԻԼՍՈՆ (1907-1987),  
ամերիկացի լրագրող**

Եթե քսուքը տուփից դուրս է մղված, ծայրահեղ դժվար է այն ետ՝ ներս խցկելը:

**ԴԱՐՐԻ ԳՈԼԴՄԱՆ  
(1929-1993),**

**Սպիտակ տան  
աշխատակազմի՝**

**ղեկավարը՝**

**Ուորենգեյթի առիթով**

Աղտեղությունները քչփորողները անհրաժեշտ են հասարակության բարիքի համար՝ մի պայմանով, եթե նրանք հասկանում են՝ երբ պետք է դադարեցնեն քչփորելը:

**ԹԵՌՈՈՐ ՈՈՒՉՎԵԼՏ  
(1858-1919),**

**ԱՄՆ նախագահ**

Ես առաջինը չեմ աղտեղությունները մաքրողներից. Չին կտակարանի մարդարեներն ինձ կանխել են:

**ԼԻՆՔՈԼՆ ՍՏԵՖԱՆՍ**

**(1866-1936),  
ամերիկացի լրագրող և  
հասարակական գործիչ**

Սկանդալային ժամանակագրությունների լրագրողի խնդիրն է գրել այնպիսի բաների մասին, որոնք իրեն բոլորովին չեն առնչվում:

**ԼՈՒԻՍ ԿՐՈՆԵՆԲԵՐԳԵՐ,  
ամերիկացի քննադատ**

Առաջ հարկավոր էր նշանավոր լինել, որպեսզի քեզ կարողանայիր սկանդալային

պահվածք թույլ տալ, հինա պետք է սկանդալ, որպեսզի նշանավոր դաշնաս:

**ՍՈՐԻՍ ՇԵՎԱԼՅԵ  
(1888-1972),  
ֆրանսիացի շամսոնյե**

Քաղաքականության մեջ արձագանքը նախորդում է իրադարձություններին:

**ԳՐԻԳՈՐԻ ԼԱՍԴԱՄԻ  
(1877-1941),  
փիլիսոփա, քննադատ,  
հրապարակախոս**

Հերքումը՝ գրպարտությունը ստով փոխարինելու փորձ է:

**ՈՂՋԵ ՊԵՅՉԵՖԻՏ,  
ֆրանսիացի գրող**

Հերքումը՝ հաստատումն է մերժման միջոցով:

**ԱՆԴՐԵ ՖՐԱՆՍՈՒ-ՊՈՆՍԵ  
(1887-1978),  
ֆրանսիացի դիվանագետ**

Ոչնչի մի հավատա, քանի դեռ պաշտոնական հերքումը չես ստացել:

**ԿԼՈԴ ԿՈՈՒԲԵՌ  
(1904-1981),  
անգլիացի լրագրող**

Քաղաքականության մեջ 24 ժամվա ընթացքում չիերք-

ված սուտը դառնում է ճշմարտություն:

**ՈՒԻԼԼԻ ԲՐԱՌԻՆ,  
կալիֆորնիայի օրենսդիր  
ժողովի նախագահ**

Քաղաքականության մեջ «ճշմարտություն» բառը նշանակում է ցանկացած հաստատում, որի սուտ լինելը հնարավոր չէ ապացուցել:

**ԶՈՒԱԹԱՆ ԼԻՆ (1943) և  
ԷՆՏՈՆԻ ԶԵՅ (1930),  
անգլիացի սցենարիստներ**

Մեղավորության աստիճանը ուղիղ համենատական է հերթման աստիճանին:

**«ԱՏՈՐՐԻԻ ՕՐԵՆՔԸ»**

ՆԵՐՈՆ. Քրիստոնյաների հալածանքները նտացածին են: Մենք միայն մերժում ենք նրանց հայացքները:

**ԿԱՐԵԼ ԶԱՊԵԿ  
(1890-1938), չեխ գրող**

Այն, ինչ ես չեմ ասել, ես երբեք չեմ հերքում:

**ԲՐԱՅԱՆ ՄԱԼՐՈՒՆԻ  
(1939),  
Կանադայի վարչապետ**

Ես չասացի, որ դա չեմ ասել: Ես միայն ասացի, որ

Ես չեմ ասել, իբր դա ես եմ  
ասել: Ես ուզում եմ, որ դուք  
դա միանգամայն հստակ  
հասկանաք:

**ԶՈՐՁ ՈՈՍՄԻ (1907-1995),  
Միջիգանի նահանգապետ**

Մեր թերթն առաջինն է հա-  
ղորդել NN-ի նահիվան մասին  
և առաջինն է հերթել այդ հա-  
ղորդագրությունը: Մենք  
ամեն ինչ առաջինն ենք իմա-  
նում:

**Մ.ՄԻՐՁ և Զ.ԿԱՆԱՊԴ  
«5600 կատակ»**

Մամլո ասուլիսը քաղաքա-  
կան գործի համար միջոց է  
ոչինչ չասելով տեղեկություն-  
ներ հաղորդողի տպավորու-  
թյուն բողնել:

**ԿԱՐԵԼ ԿԵԼԵՆ,  
ամերիկացի լրագրող**

Լրագրողների հարցերից  
ես շատ ավելին էի տեղեկա-  
նում՝ ինչ են մտածում մար-  
դիկ, քան լրագրողներն են  
ինձնից տեղեկանում:

**ԴԱՐՈՒԻ ՏՈՂԻՄԵՆ**

Գաղտնապահության գա-  
գարնակետը՝ երբ դու մամլո  
ասուլիս ես հրավիրում և ոչ  
ոք չի գալիս:

**ՍԱՅԹԼ ԼԻԴԻՆ,  
ամերիկացի գրող և  
հետախուզական  
ծառայության  
աշխատակից**

Դուք երբեք տեսե՞լ եք «Զո-  
կոնդա» կտավը: Ես միշտ այդ  
կտավն եմ հիշում, երբ տես-  
նում եմ քաղաքական գործ-  
չին ունկնդրող լրագրողի:

**ՈՂԲԵՐԸ ՕՐԲԵՆ  
(1927),  
ամերիկացի երգիծաբան**

Ես երբեք տիաճություններ  
չեմ ունեցել ին չասածների  
պատճառով:

**ԿԱԼՎԻՆ ԿՈՒԼԻԶ  
(1872-1933),  
ԱՄՆ նախագահ**

Ճարկ է ազնվորեն և ան-  
կեղօրեն մամուլին հաղոր-  
դել այն, ինչ ինքը շատ հեշտ  
կարող է տեղեկանալ:

**ԶՈՆԱԹԱՍ ԼԻՆ (1943) և  
ԷՏՑՈՒԻ ԶԵՅ (1930)  
անգլիացի սցենարիստներ**

Ճեշտ է դժվար հարց տալ:  
**ՈՒԻՒՍԵՆ ՇՅՈՒ ՕԴԵՆ (1907-  
1973),  
անգլիացի բանաստեղծ**  
Հարցեր մի տուր և ես չեն  
ստի:

**ՕԼԻՎԵՐ ԳՈԼԴՍԻԹ**  
(1728-1774),  
անգլիացի գրող

Եթե քեզ հարցեր են տալիս, որոնց պիտի պատասխանես «այո» կամ «ոչ», փոխիր թեման:

NN

Իբրև նախկին դիվանագետ կասեմ՝ ես լիովին համաձայն եմ ձեր հարցին:

**ՎԼԱԴԻՄԻՐ ԼՈՒԿԻՆ**  
(1937),  
ռուս դիվանագետ,  
քաղաքական գործիչ

Դուք այնքան հրաշալի եք հարց տալիս, որ չեմ ուզում այն փշացնել իմ պատասխանով:

**ԵՎԳԵՆԻ ՅԱՍԻՆ**  
(1934),  
ռուս տնտեսագետ և  
քաղաքագետ

Պարոնայք, ես ասելիք չունեմ: Կա՞ն ինչ-որ հարցեր:

**Ամերիկացի հոկեյստ ՖԻԼ  
ՈՒՌՍՈՆԸ Մամլո  
ասուլիսում**

Մեկնաբանություններ չկան: Բայց խնդրում եմ ինձնից մեջքերումներ չանել:

**ԴԱՆ ԿՈՒԵՅԼ**  
(1947),  
ամերիկացի քաղաքագետ

Եթե լրագրողը ձեզ հավասարակշռությունից հանել է, նա կամ կհարստանա, կամ կփառաբանվի, կամ երկուսը միասին:

**ՆԱԽԱԳԱԻ ԴՈՒԱՅՄ Էյգեն-  
հառւերի մամլո քարտուղար  
ՋԵՅՍՍ ՐԱԳԵՐՏԻՆ  
(1909-1981),  
ում հունից հանել էր  
լրագրող Արտ Բուխվալդը**

Հավարտ նա պատասխանեց լրագրողների հոեստրական հարցերին:

**ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈԼԵՉԻՑԿԻ  
(1938),  
լրագրող, գրող**

Մենք ջանում ենք կրահել ձեր որոշ հարցեր, որպեսզի ես կարողանամ ասել «Ոչ մի մեկնաբանություն՝ առավել մեծ գործիմացությամբ:

**ՈՒԻԼՅԱՄ ԲԵՅՔԵՐ, ԿԸՆ-Ի  
մամլո քարտուղար**

Իրականությունը չի հասնում մեկնաբանությունների ետևից:

**ԱՏԱՆԻՍԼԱՎ ԵԺԻ ԼԵՑ**

Քաղաքական գործիչների խոսքի պաշտոնական մեկնաբանությունները երբեմն ավելի դժվար է հասկանալ, քան այդ խոսքերը:

### ՈՒԽԱՎԱՐԴ ԳԵՅԼԻՆ

(1925),  
ամերիկացի  
բժիշկ-հոգեբան

Մանլո քարտուղարները լրագրողների գործընկերները չեն, այլ տեղեկությունների բանկի պահապանները:

ԿԱՐՈԼ ԲԱԶՅԱԿ  
(Լեհաստան)

Թերթի համար էքսկլյուզիվ տեղեկատվություննը կաշառքի ամենաազնիվ տեսակն է:

ԿՈՆՐԱՇ ԱԼԵՐՍ  
(1922), գերմանացի  
հրապարակախոս և  
քաղաքագետ

Մեր որոշ տեղեկություններ հաղորդվում են «աղբյուրներ», որոնք չեն կարող անվանվել» հղումով: Ոչ ոք չի հավատում մանլո քարտուղարին, բայց բոլորը հավատում են անանուն աղբյուրներին:

ՌՈՒ ՆԵՍՍԵՆ  
(1934),  
Սպիտակ տան մամլո  
քարտուղար

Եթե ձեր զավակը ստում է օրական երեք անգամից քիչ, նրան սպասում է փայլուն ապագա՝ մամլո քարտուղարի պաշտոնում:

NN

Թերթերը պատմության վայրկյանների սլաքներն են:  
ԱՐԹՈՒՐ ՇՈՊԵՆ-ՅԱՍԻԵՐ  
(1788-1860),  
գերմանացի վիլհանիքա

Թերթը պատմության առաջին սկագրությունն է:  
ՖԻԼԻՊ ԳՐԵՍ  
(1914-1963),  
ամերիկացի հրատարակիչ

Թերթը ժամանակի պահանջն է:

ԿԱՐԼ ԿՐԱՍԻ

Ի՞նչ է թերթը: Տարակողմնորոշված ակունք: Թերթն իր բաժանորդների վրա ազդում է ինչպես հոետորը իր ունկնդիրների:

ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏ

Դեպի աշխարհ պատուհանը կարելի է թերթով փակել:  
ԱՍԱՆԻՍԼԱԿ ԵԺԻ ԼԵՑ

Ինձ հայտնի են Մեքսիկայի հեղափոխության պատճառները, բայց ես ոչինչ չգիտեմ մերձավոր հարևանիս

Վեծի մասին: Ժամանակակից մարդու այդ հատկությունը կոչվում է կոսմոպոլիտիզմ և մշակվում է թերթեր կարդալու պատճառով:

#### ԿԱՐԵԼ ԶԱՊԵԿ

Թերթերում արդեն կարելի է ամեն ինչ կարդալ, բայց դժվար է ինչ-որ բան իմանալ:

#### ՎԵՍԼԱԿ ՄԱԼԻՑԿԻ (1935),

լեհ բանաստեղծ

Զանացեք ինարավորինս ճշգրիտ լինել ամեն ինչում՝ ձևավորումներում, և տեքստում: Եշմարտությունը ոչ միայն շատ ավելի արտառոց է, այլև շատ ավելի հետաքրքիր է հնարովի բաներից:

#### ՈՒԽԼՅԱՍ ՈԱՍԴՈԼՖ ՇԵՐՍՏ (1863-1951), ամերիկացի հրատարակիչ-մագնատի՝ իր աշխատակիցներին ուղղված հրահանգներից

Հենց թերթը հպանցիկ անդրադառնում է ինչ-որ գործի, ճշմարտությունն անհետ կորչում է՝ նույնիսկ մասնակիցների համար:

#### ՆՈՐՍԱՆ ՄԵՅԼԵՐ (1923), ամերիկացի գրող

Այն, ինչ գրուն են թերթերում, բացարձակ ճշմարտություն է, բացառությամբ այն եզակի իրադարձությունների, որոնց անձանբ ներկա եք եղել:

#### ԷՐՎԻՆ ՆՈՈՒԼ (1931), ամերիկացի հրատարակիչ

Ազնվությունը թերթի համար նույնն է, ինչ առաջինությունը՝ կնոջ:

#### ԶՈԶԵՖ ՊՈՒԼԻՏՑԵՐ (1847-1911), ամերիկացի լրագրող և հրատարակիչ

Ազնվությունը թերթի համար նույնն է, ինչ առաջինությունը՝ կնոջ, բայց թերթը միշտ կարող է հերքում տպագրել:

#### ԷՌԱՅ ԱՏԻՎԵՆՍՈՆ (1900-1959), ամերիկացի քաղաքական գործիչ

Իրեն հարգող ոչ մի ձուկ թույլ չի տա, որ իրեն այդ թերթով փաթաթեն:

#### ՄԱՅԿ ՈԼՅԿՈ (1932), ամերիկացի լրագրող՝ Չիկագոյի «Սամ թայմսի» մասիմ, որ գնել էր հրատարակիչ-մագնատ Ուլւպերտ Սերդոկը

Թերթի որակի միակ չափանիշը տպաքանակն է:

### **ՈՒԽԵՅԱՍ ՈԱՍԴՈՒԹ ԴԵՐԱՏ**

Տպագիր խոսքը՝ խիղճն է թղթի վրա:

### **ՄԱԼԿՈԼՄ ՄԱԳԵՐԻԶ**

(1903-1990),

անգլիացի լրագրող

Թերթը գրքի բնական թշնամին է, ինչպես փողոցային կինը՝ առաքինի կոնց:

**ՃՅՈՒ (1830-1870) և**

**ԷՌՈՒՆ (1822-1896)**

գուսկուրսեր,

ֆրանսիացի գրողներ

Թերթը միշտ առաջացնում է հետաքրքրություն, բայց երեք այն չի արդարացնում:

**ՉԱՐԼԶ ԼԵՄ**

(1775-1834),

անգլիացի գրող

Քանի որ համարյա ոչ ոք թերթը չի կարդում, ազնիվ մարդը կարող է գրել թերթերի համար:

**ԿՐՈՋԵ**

Թերթի համար գրելը՝ նույնն է, թե մասնակցել հեղափոխական պատերազմին: Կոչի մեջ ես մտնում ոչ թե այն ժամանակ, երբ պատ-

րաստ ես, այլ այն ժամանակ, երբ կոհիվը սկսվել է:

### **ՆՈՐՍԱՆ ՄԵՅԼԵՐ**

Ամսաթիվը ծածկեք, և այսօրվա թերթը չեք տարբերի երեկվա թերթից:

### **ՄԱՐԾԱԼ ՄԱԿԼՅՈՒԵՆ**

(1911-1980),

կանադացի մշակութարան

Եթե լեզուն հնարվել է մտքերը թաքցնելու համար, ապա թերթերը այդ վատ հայտնագործության վիրխարի կատարելագործումն են:

**ՃԵՆՐԻ ԹԱՐՐՈ**

(1817-1862),

ամերիկացի գրող

Թերթերը պետք է ինչ-որ բանով լրացնեն գովագրների միջև ընկած տարածքը:

**ՈՒՉԱՐՈՂ ՖԱԼԿ,**

ամերիկացի

գովագրային գործակալ

Երեք մի հավատացեք հայելիներին և թերթերին:

**ԶՈՆ ՕՍՐՈՐՆ**

(1929-1994),

անգլիացի դրամատուրգ

Ուրախացեք ձեր մասին ցանկացած հրապարակման համար, եթե միայն դա սև շրջանակի մեջ չէ:

**ԲՐԵՆԴԱՆ ԲԻ ԱՆ  
(1923-1964),**

**իռլանդացի դրամատուրգ**

Հոլիվուդյան դերասանը դրամապանակի մեջ երկտող է կրում. «Եթե ինձ հետ ինչ-որ բան պատահի, անհապաղ զանգեք լրագրողներին»:

**ՄԱԿԵՆԶԻԻ  
«14000 ասույթ» գրքից**

Ես ոչ մի դեպքում չեմ համարձակվի մեռնել այն պահերին, երբ թերթերը գործադուլ են անուն:

**ԲԵԹԻ ԴԵՎԻՍ  
(1908-1989),**

**ամերիկացի գրող**

Եթե ուզում եք հարստանալ, դուք չպետք է թերթում աշխատեք, այլ պետք է թերթի տերը լինեք: Կարդալը բոլորովին պարտադիր չէ, եթե նույնիսկ կարդալ գիտեք:

**ԶԵՅՍՍ ԿԱՄԵՐՈՆ  
(1911-1985),**  
**անգլիացի լրագրող**

Լրագրային գործի իմաստն այն է, որ երկու ցենտով առաջ թուղթը վաճառեք 10 ցենտով:

**ԶԱՐԾ ԱՆԴԵՐՍՈՆ ԴԵՅՆԱ  
(1819-1897),**  
**«Սյու Յորք սան»**  
**թերթի հրատարակիչ**

Ազդեցություն գործեք նրանց վրա, ովքեր ազդեցութուն ունեն մյուսների վրա:

**ԱՄԵՐԻԿԱՑԻ հրատարակիչ  
ԶՈՒ ՖԵՐՉԱՅԼԻ  
Մշանարանը**

Ոչինչ չի կարելի նորություն անվանել, քանի դեռ չի տպագրվել «Թայմսուն»:

**ՌԱԼՖ ԴԻԿԻՆ  
(1888-1952),**  
**«Թայմսի» հրատարակիչ**

Թերթում երբեք մի տպագրիր այն, ինչ քո աղախինը չի կարող հասկանալ:

**ԶՈԶԵՖ ՊՈՒԼԻՏՑԵՐ**

Գուտենբերգը բոլորին ընթերցող դարձրեց: Քսերոքսը նրանց դարձրեց հրատարակչներ:

**ՍԱՐԾԱԼ ՄԱԿԼՅՈՒԵՆ  
(1911-1980),**  
**կանադացի մշակութարան**

Մենք հաճախ ափսոսանքով ենք իշխում այն դեպքը, երբ նապոլեոնը կրակեց ամ-

սագրի խմբագրի վրա, բայց վրիաեց և սպանեց հրատարակչին: Այնուհանդերձ, մենք գնահատում ենք նրա բարի մտադրությունը:

**ՍԱՐԿ ՏՎԵՆ  
(1835-1910),  
ամերիկացի գրող**

Փոքր քաղաքն այնպիսի բնակավայր է, որտեղ բոլորն ամեն ինչ գիտեն բոլորի մասին, բայց զնում են տեղական թերթերը, որպեսզի պարզեն՝ ինչի մասին է համարձակվել խմբագիրը գրել:

**ԴԵՆԻ ՔԵՅ  
(1913-1987),  
ամերիկացի երգիծաբան**

Խմբագիրն իրավունք չունի սկսնակ լինել:

**ՍԱՍՈՒԻԼ ՄԱՐԾԱԿ  
(1887-1964),  
բանաստեղծ**

Խմբագիր. թերթի աշխատակից, որ հատիկը զատում է որոնից և հենց այդ որոնն էլ ուղարկում է տպագրության:

**ԷԼԲԵՐՏ ՂԱԲԲԱՐԴ  
(1859-1915),  
ամերիկացի գրող**

Խմբագիրը մի մասնագետ է, որը վատ իմանալով, թե

ինչն է լավ, լավ գիտի, թե ինչն է վատ:

**ԵՎԳԵՆԻ ՍԱԶՈՆՈՎ,  
գրող-մարդագետ,  
որին ստեղծել են «Լիտերա-  
տուրնայա զագետա»-յի  
աշխատակիցները**

Այնպես մի գրեք, որ մտքերի համար խիստ նեղվածք լինի, տեղ թողեք խմբագրի միակ մտքի համար:

**ԵՎԳԵՆԻ ՍԱԶՈՆՈՎ**

ԽՄԲԱԳՐՈՒՄ. Հոգելեզվաբանները գտնում են, որ տեքստի վերամշակման հակումը հոգեկան հիվանդության նշան է:

**ՄԻԽԱՅԻԼ ԳԱՍՊԱՐՈՎ  
(1935), բանասեր**

Առաքինություն. բառ, որից պետք է խուսափել, որովհետև հարուցում է անվայել մտքեր:

**Ամերիկյան թերթերից  
մեկի խմբագիր**

Փորձված խմբագիրը նույնիսկ աֆորիզմները մինչև վերջ չի կարդում:

**ԿՈՆՍԱՍԱՏԻՆ ՄԵԼԻԽԱՆ  
(1952), գրող**

Քանի դեռ դու չես սովորել գրել այն մարդկանց համար,

**ՌԵԲԵԿԱ ՈՒԵՍ  
(1892-1983),  
անգլիացի գրող**

Ամեն մի լրագրողի ներսում վիպասան է նստած և դա հենց նրա ճիշտ տեղն է:

**ՈՍՍՍԵԼ ԼԱՅՆԶ (ԱՄՆ)**

Ովքեր ընթերցանության ժամանակ շարժում են շուրջերը և մատը չեն կտրում տողից, դու չես կարողանա հասկանալի լինել կորպորացիաների, համալսարանների և ԱՄՆ-ի նախագահների համար:

**ՁՈՆ ՍԱԿԿՐԱՐԻ,  
ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ**

Ոչ մի միտք չունենալով կարողանալ այն արտահայտել՝ այդպես են դաշնում լրագրող:

**ԿԱՌԼ ԿՐՍՈՒՄ**

Լրագրողի համար արագությունը խթանիչ է: Նա վատ է գրում, եթե ժամանակ ունի:

**ԿԱՌԼ ԿՐՍՈՒՄ**

Լրագրողները գրում են, որովհետև ասելիք չունեն: Նրանք ասելիք ունեն, որովհետև գրում են:

**ԿԱՌԼ ԿՐՍՈՒՄ**

Լրագրողները մի քիչ նման են դանայուիիներին, որոնց աստվածները դատապարտել են դատարկ տակառները ջրով լցնելու:

**ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ**

Լրագրողն այն մարդն է, ով ամեն օր դատարկությունը լցնելու ծիրք ունի:

Լուսավորությունն այնքան է տարածվել, որ հիմնահնարավոր է կարդալ, գրել, և հրապարակել՝ մնալով անգրագետ:

**ՅՈՒԳՈ ՇՏԵՅՆՇՎՈՒՄ  
(1887-1972),  
ԼԵՀ մաթեմատիկոս**

Եթե օձը Եվային գայթակեր ժամանակակից լրագրողների լեզվով, մենք հիմնաել դրախտում կապրեհնք:

**Դ. ՇԵՐՈՒԽ**

Մենք՝ լրագրողներս, ընթերցողին ասում ենք, թե ուր ցատկեց կատուն: Յետո կատվով գրաղվում է ընթերցողը:

**ԱՐԹՈՒՐ ՍՈՒԼՑԲԵՐԳԵՐ  
(1891-1968),  
«Լյու Յորք Թայմ»-ի  
հրատարակիչ**

Յենց դուք սկսում եք գրել այն, ինչ ձեզ դուր է գալիս, դուք դադարում եք լրագրող լինել. այդ պահից դուք աշ-

խատում եք շոու-քիզնեսում:  
**ՖՐԵՆԿ ՄԻԼԼԵՐ-ԿՐՏՍԵՐ**

Ուսպորտյորները հեռագրալարերի վրայի կեռնեխներ են: Մեկը օդ է բարձրանում, և բոլորը հետևում են նրան: Մեկը վերադառնում է, և բոլորը վերադառնում են:

**ՅՈՒԶԻՆ ՄԱԿՎԱՐՏԻ,  
ամերիկացի  
քաղաքական գործիչ**

Լրագրողն այն մարդն է, ով հետոն կանխավ գիտի:  
**ԿԱՌ ԿՐՍՈՒ**

Լրագրողները երկար թիթքացնում են թիկունքիդ որոնելով այն տեղը, ուր խրելու են դանակը:

**ՈՈԲԵՐՏ ԼԵՄՐԿԵ  
(1913-1989),  
գերմանացի  
հեռուստավրագրող**

Ներկա լրագրողները միշտ մարդուց դեմառին ներողություն են խնդրում այն ամենի համար, ինչ ասել են ի լուր բոլորի:

**ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ**

Ինչ վերաբերում է բոլորին, չի վերաբերում ոչ մեկին, բացի լրագրողներից:

**ԶՈԶԵՖ ՊՈՒԼԻՏՑԵՐ**

Լրագրողները մեր երկրում շատ ցածր են վարձատրվում, որպեսզի իմանան ինչ-որ բան, որն արժանի է տպագրության:

**ԶՈՐՁ ԲԵՇՆԱՐԴ ՇՈՈՒ  
(1856-1950),  
անգլիացի դրամատուրգ**

Լրագրողները, որ խայթում են, չպետք է թույլ տան, որ իրենց կերակրի ինչ-որ մեկի ձեռքը:

**ՄԻՆԿԼԵՐ ԼՅՈՒԻՍ  
(1885-1951), ամերիկացի  
լրագրող և գրող, որ հրաժարվել  
էր ԱՄՆ-ի կառավարության  
աջակցությամբ արտասահմանյան երկրներ մեկնել**

Անգրագիտության տարածման գործում առավել մեծ ծառայություններ մատուցում են դիլետանտորեն կազմված տեղեկատուները և պրոֆեսիոնալ լրագրողները:

**ՄԱՔՍԻՄ ԶՎՈՆԱՐՅՈՎ  
(1956), ռուս լրագրող**

Բարբարոսի ձեռքը կարելի է տալ դանակ, բրաւունինգ կամ թնդանոթ: Բայց նրա ձեռքը գրիչ չտաք, այլապես նա ձեզ բարբարոսի կվերածի:

**ՄԱՍԻՄԻԼԱՎ ԵԺԻ ԼԵՑ**

Հաջող պատերազմի էլությունը հրամանատարության ծրագրերի գաղտնիությունն է: Հաջող լրագրության էլությունը՝ հրապարակայնությունը:

**Բրիտանական  
«Ռազմական թղթակիցների  
վարքականոններից» (1958)**

Լրագրողների հետ խոսակցությունից հրաժարումը նշանակում է, որ զինվորականների տեսակետը հասարակությանը չի հասնի: Զանգվածային լրատվամիջոցների հետ անհրաժեշտ է համագործակցել. մենք չենք հաղթել, քանի դեռ CNN-ը չի ասել, որ մենք հաղթել ենք:

**ՅՅՈՒ ՇԵԼՏՈՆ  
(1942), ամերիկացի  
գեներալ**

Մի լրագրող մանրամասն պատմում է գեներալ Էյզենհաուերին երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ թույլ տրված սխալների մասին: «Իսկ ինձ թվում էր, որ միայն հնագույն մասնագիտության սկսնակներն են կարծում, թե իրենք պրոֆեսիոնալներից հաջողակ կարող են լինել», - ասաց Էյզենհաուերը:

Քանի դեռ իմ լուսանկարները տպագրում են ամսագրի շապիկին, ինձ չի մտահոգում, թե իմ մասին ինչ են գրում 96-րդ էջում:

**Միք ՋԱԳԵՐ  
(1943),  
բրիտանացի ռոկ-երաժիշտ**

Քարոզչությունը՝ սատանային առանց սմբակների ու կոտոշների լուսանկարելն է:

**ԴԱՍՍ ԿԱՍՊԵՐ  
(1916).  
ԼԵՒ ԳՐՈՂ և ՔՅՈՆԱԴՅԱՆ**

Մեր ժամանակներում ամեն ինչ գոյություն ունի այն բանի համար, որ ավարտվի լուսանկարով:

**ԱՅՈՒԹԵԼ ՉՈՆՏԱԳ**

Վերնագրերը կրկնապատկում են իրադարձությունների չափերը:

**ԶՈՒ ԳՈԼՍՈՒԻՐՍԻ  
(1867-1933),  
անգլիացի գրող**

Ցանկացած թերթում առավել մեծ ազդեցություն ունեն այն խմբագիրները, որ պատասխանատու են վերնագրերի ու առաջին պարբերությունների համար, այլ ոչ թե

առաջնորդողների խմբագիր-ները:

**«Եյու Յորք Թայմս»-ի  
Խմբագիրներից մեկը**

Երեկոյան հեռուստանորությունների 30 վայրկյանն ավելին արժե աշխարհի ամենակարևոր թերթի առաջնի էջի ամենակարևոր վերնագրից:

**ԷՌՈՒԱՐԴ ՂԱՏՄԱՆ (ԱՄՆ)**

Մեջբերումով վերնագիրը կամ պարզապես չակերտներում դրվածը՝ գրավում է ևս 28 տոկոս ընթերցողների:

**ԴԵՎԻԴ Օ'ԳԻԼՎԻ  
(1911),  
անգլիացի գովազդային  
գործակալ**

Եթե մի առավոտ ես Պոտոնմակ գետն անցնեի՝ հանց ցանքով, երեկոյան թերթերի վերնագրերը կլինեին «ՆԱԽԱԳԱՅԸ ՀՈՂԱԼ ԶԳԻՏԸ»:

**ԼԻՆԴՈՆ ՋՈՍՍՈՆ  
(1908-1973),  
ԱՄՆ-ի նախագահ**

Լավ խմբագրականը ընթերցողին հաղորդում է ոչ թե այն, ինչ մտածում է հեղինակը, այլ այն, ինչ մտածում է ընթերցողը:

**ԱՐԹՈՒՐ ԲՐԻՋԲԵՅՆ**

**(1864-1936),  
ամերիկացի լրագրող**

Այդ մասին «Թայմսը» ոչինչ չունի ասելու, բայց դրա համար նրան երեք սյունակ է պետք:

**ՈՒԻՆՍՏՈՆ ՉԵՐՉԻԼ  
(1874-1965),  
ՄԵԾ Բրիտանիայի  
վարչապետ**

Թերթերի հայտարարությունները երկրում կատարվող իրադարձությունների մասին ավելի շատ ճշմարտություն են հաղորդում, քան թերթերի առաջնորդողները:

**ՋԵՆԻՒ ՈՒՈՐԴ ԲԻՉԵՐ  
(1813-1887),  
ամերիկացի քարոզիչ և  
գրականագետ**

Մարդիկ ուզում են կարդալ թերթեր, այլ ոչ թե կոչեր:

**ԴԵՐԲԵՐԾ ՎԵՆԵՐ**

Անհամբերությամբ են սպասում առաջնորդողին, որը սկսվում է «Մեր լուսավոր ժամանակներում...» բառերով:

**ԳԱԲՐԻԵԼ ԼԱՈՒՐ  
(1928),  
չեխ-գերմանացի գրող**

Սկզբում առաջնորդողն էր, վերջում՝ մահախոսականը:

**ԱՏԱԽԻՍԼԱՎ ԵԺԻ ԼԵՑ**

Մարդկային լսողությունը  
ուրախանում է նորությամբ:  
**ՊԼԻՆԻՈՒՄ ԿՐՏՍԵՐ**  
**(61-114), հռոմեացի գրող**

Արև հանդիսատես չունի,  
քանի դեռ չի խավարել: Բնու-  
թյունից մեզ հատուկ է ավելի  
շատ զնայլվել նորությամբ,  
քան վեհությամբ:

**ՄԵՆԵԿԱ**  
(Ք.Ծ.ա. 4-Ք.Ծ.հ. 65)  
**հռոմեացի պետական**  
**գործիչ, ստոիկ փիլիսոփա**

Եթե շունը կօրում է մարդուն,  
դա նորություն չէ. նորություն  
է, երբ մարդն է կօրում շանը:

**ԶԱՐԼԱ ԱՍԴԵՐՍՈՆ ԴԵՅՆԱ**  
(1819-1897),  
**«Նյու Յորք սան» թերթի**  
**հրատարակիչ**

Աշխարհում ամեն օր տեղի  
ունեցող իրադարձություննե-  
րի թիվը միշտ ճշգրիտ համա-  
պատասխանում է թերթի ծա-  
վալին:

**ՁԵՐՐԻ ՍՏԵՅՆՖԵԼԴ**

Նորությունն այն է, ինչ լավ  
խնբագիրն ընտրել է տպագ-  
րության հանար:

**ԱՐԹՈՒՐ ՍԱԿՐՅՈՒԹԵՆ,**  
**ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ**

Տպագրության ենթակա ոչ  
բոլոր նորություններն են են-

թակա ընթերցման:  
**ՄԱԿԿԵՆԶԻՒ**  
**«14000 ասույթ» գրքից**

Նորություն է այն ամենը,  
ինչ կնոջը ստիպում է բացա-  
կանչել. «Օ, Աստված իմ...»:  
**ԷՂԳԱՐ ՇԱՈՒ**  
(1853-1937),  
ամերիկացի գրող

Նորությունն այն է, որն  
ինչ-որ մեկը չէր ցանկանա  
տպագրված տեսմել. մնացա-  
ծը գովազդ է:

**ԱՄԵՐԻԿԱՑԻ ԱՆԻԱՅՄ**  
**ԼՐԱԳՐՈՂ**

Բոլոր նորությունները,  
բացառությամբ հացի գնի,  
անիմաստ ու անտեղին են:

**ԶԱՐԼԱ ԼԵՄ**  
(1775-1834),  
**ԱՆԳԼԻԱՑԻ գրող**

Նորությունները վաղուց  
հայտնի իրողություններ են,  
որ ամեն օր տեղի են ունե-  
նում տարբեր մարդկանց  
հետ:

**ՄԱԿԿԵՆԶԻՒ**  
**«14000 ասույթ» գրքից**

Այսօրվա նորությունները,  
իբրև կանոն, չափազանց ճ-  
մարիտ են, որ լավը լինեն:

**ՄԱԿԿԵՆԶԻՒ**  
**«14000 ասույթ» գրքից**

Ընդհանրապես ասած՝  
մամուլին կերակրում են  
աղետները:

**ԿԼԵՍԵՆՏ ԷՍՏԼԻ**  
(1883-1967),  
**Մեծ Բրիտանիայի**  
**վարչապետ**

Վատ նորությունները շրջանառությունից հանում են  
լավ նորությունները:

**Լի Լեվինգեր**  
(1890-1966),  
**ամերիկացի ռարքի, գրող**

Թերթի համար տարբերություն չկա հեծանվային վթարի և քաղաքակրթության աղետի միջև:

**ԶՈՐԱ ԲԵՌՆԱՐԴ ՇՈՈՒ**

Յեքիաթները սարսափելի պատմություններ են, որ պետք է երեխաներին աստիճանաբար նախապատրաստեն թերթերի ընթերցանությանը:

NN

Ամբողջ շաբաթ՝ ոչ մի համաշխարհային աղետ: Եվ ինչո՞ւ եմ ես թերթեր գնում:

**ԿԱՐԵԼ ԶԱՊԵԿ**

Նորություններ չկան՝ լավ նորություն է: Չկան լրագրող-

ներ՝ ավելի լավ նորություն է:  
**ՆԻԿՈԼԱՍ ԲԵՆՏԼԻ**  
(1907-1978),  
**անգլիացի ծաղրանկարիչ և գրող**

Իսկական նորությունները  
վատ նորություններն են:  
**ՄԱՐՑԱԼ ՄԱԿԼՅՈՒԵՆ**

Վատ նորությունները երբեք սուտ չեն լինում:  
**Իսպանական ասույր**

Քեզ լավատես մի անվանիր. մարդիկ կմտածեն, որ կարդալ չգիտես:

**ՄԱԿԿԵՆԶԻԻ**  
**«14000 ասույր» գրքից**

Կարդալ պետք է միայն իին թերթերը: Տասը տարի անց բոլոր վատ նորությունները ուղղակի ծիծառելի են թվում:  
**ԺԱՆ ԱՆՈՒՅ**  
(1910-1987),  
**ֆրանսիացի դրամասուրդ**

Ավելի լավ է նորություններ ստեղծել, քան պատմել դրանց մասին:  
**ՈՒԻՆՍՏՈՆ ՉԵՐՉԻԼ**

Վաշինգտոնը միակ վայրն է աշխարհում, ուր ձայնը լույսից արագ է շարժվում:

**ՈՂՆԱԼԴ ՌԵՅԳԱՆ  
(1911-2004),  
ԱՄՆ նախագահը  
քաղաքական  
բամբասանքների մասին**

Կեղծ հաղորդագրությունը, որին երեք օր հավատում են, շատ օգտակար կարող է լինել պետության համար:

**ԵԿԱՏԵՐԻՆԱ ՄԵԴԻԶԻ  
(1519-1589),  
Ֆրանսիայի թագուհի,  
Դեմքիս 2-րդի կինը**

Հասարակությունը նախընտրում է հավատալ ավելի շուտ հիմար լուրերին, քան լավ:

**ՍՍՈՒ ԲԵՈՆԱՐ  
(1844-1923),  
Ֆրանսիացի դերասանուհի**

Մի հավատա խոսակցություններին, քանի դեռ ինքը չես կրկնել:

**ԳԵՆԱԴԻ ՍԱԼԿԻՆ,  
(1939), գրող**

Ին մահվան մասին լուրերը խիստ չափազանցված են:

**ՍԱՐԿ ՏՎԵՆ (1835-1910),  
ամերիկացի գրող**

Այն ամենը, ինչ խոսում են նրա մասին, հնարավոր է՝

բանբասանք է, բայց ոչ սուտ:  
**ՅԱՍԻՆԱ ԻՊՈԽՈՐՍԿԱՅԱ  
(1914-1981),  
լեհ գրող և նկարչուհի**

Մեր ժամանակներում թերթերը ջանում են հասարակությանը ստիպել քանդակագործի մասին դատել ոչ թե իր քանդակներով, այլ կնոջ նկատմամբ ունեցած վերաբերնունքով, նկարչի մասին՝ նրա եկամուտների չափով, բանաստեղծի մասին՝ փողկապի գույնով:

**ՕՍԿԱՐ ՈՒՍՅԼԴ**

Բամբասանքն այն է երբ դուք լսում եք այն, ինչ ձեզ դուր է գալիս, նրանց մասին, ովքեր ձեզ դուր չեն գալիս:

**ԷՆԼ ՈՒԻԼՍՈՆ  
(1907-1987).  
ամերիկացի լրագրող**

Հարցագրույցը գեղարվեստական ստեղծագործության տարատեսակ է՝ առանց երևակայության և կառուցվածքային վարպետության չես կարող:

**ՄԱՐԳԱՐԵՏ ԱՏՎՈՒԴ  
(1939), կանադացի գրող**

Ես վախենում եմ լրագրողներից: Ինձ թվում է նրանք

հարցազրույցը հանձնում են  
տպագրության ինձ հանդիպե-  
լուց առաջ. իրենք տախս են  
հարցերը, իրենք էլ պատաս-  
խանում են իրենց հարցերին:

**ԶԻՆԱ ԼՈՒՐՔԻԶԻԴԻԿԱ (1927),**  
**իտալացի**  
**կինոդերասանուհի**

Պետք չէ շփոթել հարցազ-  
րույցը խոստովանության հետ:  
**ԱԼԼԱ ՊՈՒԳԱՉՈՎԱ**

(1949),  
**Էստրադային երգչուհի**

Յուրաքանչյուր հարցազ-  
րույց պետք է սկսվի իշխեցու-  
մով՝ «Այն ամենը, ինչ դուք  
կասեք, կարող է օգտագործ-  
վել ձեր դեմ»:

**Մ.ՊՈՒՏԻՆԿՈՎՍԿԻ,**  
**լրագրող**

Հարցազրույցի դիմումը  
միշտ պետք է սկզբից մեր-  
ժել: Այդ դեպքում ձեր հար-  
ցազրույցը կհայտնվի առա-  
ջին էջում:

**ԿՈԼԵՏՏ**  
(1873-1954),  
**ֆրանսիացի գրող**

Նրանից հարցազրույց  
վերցնելը նույնն է, թե զրուցել  
հեռախոսային ինքնապա-  
տասխանիչի հետ:

**Անգլիացի լրագրողներից**

**մեկը Մարգարետ  
Թետչերի նասին**

Միշտ կա այն վտանգը, որ  
հարցազրույց վարող հեռուս-  
տալրագրողը իրեն ավելի  
կարևոր անձ հանարի նրա-  
նից, ումից վերցնում է հար-  
ցազրույցը:

**Ու. ՇԱՄԻԼՏՈՆ,**  
**ավստրալիացի**  
**հեռուստապրոդյուսեր**

Հիպոթետիկ հարցեր տա-  
լով՝ ստանում ես հիպոթետիկ  
պատասխաններ:

**ԶՈԱՆ ԲԱՅԵԶ**  
(1914),  
**ամերիկացի երգչուհի**

«Ո՞րն է եղել ձեզ տրված  
ամենաանհեթեթ հարցը»:  
«Չենց ձերը»:

**ԶԵՅՍՍ ԿԱՍԻ**  
(1939),  
**ամերիկացի դերասան**

Իրականում ես ոչինչ չեմ  
ասել այն ամենից, ինչ ասել եմ:  
**ՅՈԳԻ ԲԵՐՐԱ**

(1925),  
**ամերիկացի բեյսբոլիստ**

Ես երբեք չեմ ցանկացել  
տեսնել ինչ-որ մեկի նահը,  
բայց եղել են մի քանի նահա-  
խոսականներ, որոնք բավա-  
կանությամբ եմ կարդացել:

**ԿԼԱՐԵՆՍ ԴԱՐՐՈՌԻ  
(1857-1938),  
ամերիկացի  
իրավաբան և գրող**

Դուք իմ մասին խոսում եիք  
այնպիսի շողոքորթ տոնով,  
որ մի պահ ինձ թվաց, թե ար-  
դեն վախճանվել եմ:

**ԴԱՐՐԻ ՏՐՈՒՄԵՆՆ  
իրայելցի քաղաքական  
գործիչ Արքե Էքանին  
ուղղված նամակում**

Եվ Չինգիզխանի հուղար-  
կավորության ժամանակ ինչ-  
որ մեկն ասել է. «Նա նրբազ-  
գաց էր ու հոգատար»:

**ԹԻՄՈՒՐ ԶՈՒՖԻԿԱՐՈՎ**

Սուստ է, թե լրագրերը մեզ  
հետ են վարժեցրել մտածե-  
լուց: Մի՞թե նրանք խաչբառ-  
ներ չեն տպագրում:

**ԳԱԲՐԻԵԼ ԼԱՌԻՔ**

Մարդն այն է, ինչ կարդում է:  
«ՆՅՈՒ ՅՈՐՔ ԹԱՅՍՍ ԲՈՒԿ  
ՌԵՎՅՈՒ»-ի վերնագիր (1988)

Ոչինչ չկարդացող մարդու  
ավելի կիրք է միայն թերթեր  
կարդացող մարդուց:

**ԹՈՍԱՍ ԶԵՖԵՐՍՈՆ  
(1743-1826),  
ԱՄՆ նախագահ**

Ճարկ է կարդալ միայն մեկ  
թերթ՝ նի քանի թերթերի ըն-  
թերցանությունը շեղում է՝ ել  
չասած փողի կորստի մասին:  
**ԶՈՐԶ ԲԵՌՆԱՐԴ ՇՈՈՒ**

Թերթերում գրելու համար  
ոչ մի մակարդակ չի պահանջ-  
վում, բայց կարդալու համար  
պետք է կատարելապես տի-  
րապետել իրադարձություննե-  
րին, իմանալ աշխարհին ու  
մարդկանց:

**ՋՈՒԳՈ ՇՏԵՅՆՅԱՌԻ  
(1887-1972),  
լեհ մաթեմատիկոս**

Մանկության օրերին նա  
ուղեղի ցնցում էր տարել և  
այդ ժամանակից հավատում  
էր կիրակնօրյա թերթերին:

**ԶՈՐԶ ԷՅՆ  
(1866-1944),  
ամերիկացի գրող**

Թերթերում չկա ոչ մի ճշ-  
մարտություն: Այդ պատճա-  
ռով էլ մարդիկ կարդում են:

**ԲԵՆԶԱՄԵՆ ԴԻԶՐԱՅԵԼԻ  
(1804-1881),  
Բրիտանիայի  
վարչապետ, գրող**

Լավատեսն այն մարդն է,  
որ դեռ չի կարդացել առա-  
վոտյան թերթերը:

NN

Կարդալ իմացող 100-ից  
մեկն է ի վիճակի մտածել:

**ԶՈՒ ՌԵՍԿԻՆ**  
**(1819-1890), անգլիացի**  
**քննադատ-արվեստաբան,**  
**հրապարակախոս**

Թերթեր կարդալով՝ փորձել պատկերացում կազմել, թե ինչ է կատարվում աշխարհում, նույնն է, թե ժամը որոշել միայն վայկյանաչափ ունեցող ժամացույցով:

**ԲԵՆ ՐԵԼՏ**  
**(1894-1964),**  
**ամերիկացի սցենարիստ**

Հայտարարություն Տեխասի նահանգի մի քաղաքի թերթում. «Կարդացեք Աստվածաշունչը, որ իմանաք, ինչ պետք է մարդիկ անեն: Կարդացեք մեր թերթը, որ իմանաք, ինչ են նրանք իրականում անուն»:

**ՍԱԿԵՆՁԻԻ**  
**«14000 ասույթ» գրքից**

Մի վախեցեք վրիպունից, ընթերցողին դա նույնիսկ դուր է գալիս:

**ՈՒԻԼՅԱՄ ՈԱՍԴՈՒՖ ՇԵՐՈՍ**  
**(1863-1951), ամերիկացի**  
**հրատարակիչ-մագնատ**

Հեռուստատեսությունը ժողովրդավարությունն է՝ իր ողջ անհաճո՞ւ տեսքով:

**ՊԱՐԴԻ ԶԱԵՎԱԿԻ**  
**(1923-1981),**  
**ամերիկացի սցենարիստ**

Հեռուստատեսությունն ավելի հետաքրքիր է, քան մարդիկ: Այլապես մեր սենյակների անկյուններում ոչ թե հեռուստացույցներ, այլ մարդիկ կլինեին:

**ԱԼԱՆ ԿՈՐԵՆ**  
**(1938),**  
**անգլիացի երգիծարան**

Հեռուստատեսությունն աղքատների հարստությունն է, առանձնաշնորհիումներ չունեցողների առանձնաշնորհը, ամբոխի՝ էլիտար ակումբը:

**ԼԻ ԼԵՎԻՆԳԵՐ**  
**(1890-1966),**  
**ամերիկացի ռարրին, գրող**

Հեռուստատեսությունն աշխարհը մոտեցնում է մեզ՝ բաժանելով միայն հեռուստացույցով:

**ՋԵՍՐԻԿ ՅԱԳՈՂԻՆՍԿԻ**  
**(1928), լեհ գրականագետ**

Անքնությունն այն է, երբ չես կարողանում քնել՝ նույնիսկ հեռուստացույցը միացրած:

**«ԱԶԻՄՈՎԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է**  
**ԿԱՏԱԿԵԼ» գրքից**

Հեռուստատեսությունը հիմնալի միջոց է նայել այն ամենը, ինչ արժանի չէ գնալ-տեսնելու:

### «ՊՇԵԿՐՈՒՅ»

Հեռուստատեսությունն իր ներկա ձևով օպիտում է ամերիկացի ժողովորդի համար:

### ՈՒՉԱՐԴ ՆԻՔՍՈՆ (1913-1994), ԱՄՆ նախագահ

Հեռուստացույցը հեռուստադիտողի հեռակառավարման վահանակն է:

### ՎԻԿՏՈՐ ՊԵԼԵՎԻՆ (1962), գրող

Բարոյական խթանն առանց զվարճանքների՝ քարոզչություն է, իսկ զվարճանքներն առանց բարոյական խթանի՝ հեռուստատեսություն:

### ՈՒՏՍ ՄԵՅ ԲՐԱՄԻՆ (1944), ամերիկացի գրող

Գրքի արժանիքն այն է, որ ամենահետաքրքիր նասում չի ընդհատվում գովազդի համար:

### ՍԱԿԿԵՆԶԻԻ «14000 ասույթ» գրքից

Հեռուստատեսությունը բռնապետությունն անհնարդարձեց, իսկ ժողովրդավարությունն՝ անտանելի:

### ԾԻՍՈՆ ՊԵՐԵՍ (1923), ԽՍՐԱՅԵԼԻ ՎԱՐԺԱՎԵՏ

Մենք ունենք երկու կուսակցությունների և երեք հեռուստածրագրերի քաղաքական համակարգ:

### ԱՐՏ ԲՈՒԽՎԱԼԴ (1925), ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼՐԱԳՐՈՂ

Մենք խորհրդարանական ժողովրդավարությունից շարժվում ենք դեպի հեռուստատեսայինը:

### ՀԵԼՍՈՒՏ ԾՄԻԴՏ, ԳԴԴ Կանցլեր

SNN-ը Անվտանգության խորհրդի 16-րդ անդամն է:

### ՍԱՌԼԵՆ ՕԼԲՐԱՅԹ (1937), դիվանագետ, ԱՄՆ պետքարտուղար

Ըստ վիճակագրության հեռուստացույց ունեն ընտանիքների 94 տոկոսը. իսկ լողասենյակ՝ 91 տոկոսը: Այսինքն՝ ուղեղները լվացվուն են ավելի հաճախ, քան մյուս մարմնամասերը:

**ՈՂԲԵՐՏ ՕՐԲԵՆ  
(1927),  
ամերիկացի երգիծաբան**

Եթե դուք հրապարակային գործիչ եք, ձեր արածների որոշ մասը պետք է արվի հեռուստատեսությամբ:

**ԹԵԴ ԿՈՂՊԵԼ,  
ամերիկացի  
հեռուստալրագորող**

Որոշ հեռուստահաղորդավարներ նորությունները կարդալու համար վարձատրվում են ավելին, քան նախագահը՝ այդ նորություններն ստեղծելու համար:

**ՄԱԿԵՆԶԻԻ  
«14000 ասուլյ» գրքից**

Երկիրը վերջապես վերադառնում է իր բնական վիճակին՝ հեռուստացույցով նորից ավելի շատ ռեգեներատներին են ցույց տալիս, քան՝ քաղաքական գործիների:

**ՄԱԿԵՆԶԻԻ  
«14000 ասուլյ» գրքից**

Լոս Անջելեսում արդեն աղբը չեն թափում, այլ վերամշակում են հեռուստաշուներում:

**ՎՈՒԴԻ ԱԼԵՆ  
(1935), ամերիկացի կինոռեժիսոր, դերասան**

Հանուն ինչի մարդիկ պիտի ծախսեր կատարեն՝ տնից դուրս գալու ու վատ կինո նայելու համար, եթե կարող են մնալ տանը և անվճար նայել վատ հեռուստատեսություն:

**ՄԵՍՅՈՒԵԼ ԳՈԼԴՎԻՆ (1882-1974),**

**ամերիկացի  
կինոպրոդյուսեր**

«Օճառե օպերաները» չի կարելի չսիրել՝ հաճելի է նայել այն մարդկանց, ովքեր ավելի շատ հոգսեր ունեն, քան դու:

**ՄԱԿԵՆԶԻԻ  
«14000 ասուլյ» գրքից**

Խմբագիրը հեռուստասցենարի մասին. «Մեզ պետք չէ, որ դա լավ լինի, մեզ պետք է, որ հինգշաբթի օրը լինի»:

**ՌԵՆԻՍ ՆՈՐԴԵՆ  
(1922), անգլիացի  
երգիծաբան**

Հեռուստակատակներն այնքան դժվար չեն գրելը, որքան լսելը:

**ՄԱԿԵՆԶԻԻ  
«14000 ասուլյ» գրքից**

Հանարյա թե ամեն ինչ, որ երեկոները ցույց են տալիս հեռուստատեսությամբ, հօռմեացին կարող էր տեսնել Կո-

Լիզեռում Ներոնի ժամանակաշրջանում:

**ԴՅՈՐԴ ՖԱԼՈՒԴԻ,  
Խունգարացի գրող**

Նախքան որոշեք թոշակի անցնել, փորձեք մի շաբաթ անցկացնել տաճը և նայել ցերեկային հեռուստահաղորդումները:

**ՍԱԿԿԵՆԶԻԻ  
«14000 ասույթ» գրքից**

Լինում են երեկոներ, երբ ցանկացած էլեկտրասարք, ներառյալ փոշեկուլը, ավելի գրավիչ է, քան հեռուստացույցը:

**ԴԱՐԻԵՏ ՎԱՆ ԴՈՐՆ**

Հեռուստատեսային երկանանոց բալետից հետո հաճելի է դիտել խաչմերուկները կարգավորող ոստիկաններին: Այնքան են հանգստացնում շարժումները, որ թեկուզ ինչ-որ ինաստունեն:

**ԳԱԲՐԻԵԼ ԲԵՐՏԵԼ**

Կատարյալ հավասարակշռված հեռուստածրագիր՝ 50 տոկոս կին ֆիլմեր և 50 տոկոս նոր գովազդային հոլովակներ:

**ՍԱԿԿԵՆԶԻԻ  
«14000 ասույթ» գրքից**

Եթե հեռուստացույցը միացնելով, դուք տեսնում եք լավ ֆիլմ՝ հիանալի դերասաններով, գրավիչ գործողություններով, սրամիտ երկխոսություններով՝ դա գովազդ է:

**«ԿՈՆԴՐԱՇՈՎԱՅԻ 5-ՐԴ  
ԴԻՏԱՐԿՈՒՄԸ»**

Հեռուստատեսությամբ գովազդային դադարները ավելի շատ վեստերնների ժամանակ են, որպեսզի հերոսը հասցնի լիցքավորել իր կոլտը:

**ՈՂԲԵՐԸ ՄԻԼՎԵՍՐ  
(1907-1975),  
ամերիկացի գրող**

Ծնորհիվ հեռուստատեսության աշխարհը մեծ գյուղ է դարձել, իսկ հաղորդումների մեծ մասն էլ գյուղական բանբասանքներ է ծնում:

**ՄԱՐՇԱԼ ՄԱԿԼՅՈՒԻՆ**

Եթե դուք նայում եք հեռուստացույց, դուք պետք է նկատած լինեք, որ լավ տղաները վատ տղաներին միշտ հաղթում են, բացի ժամը 21-ի նորություններից:

**ԱԱԿԵՆՁԻՒ  
«14000 ասույթ» գրքից**

Եթե Աստծուն հաճո չլիներ,  
որ մենք 22.30-ին պառկեինք  
քնելու, նա չէր ստեղծի 22-ի  
հեռուստանորությունները:

**ՅԱՐԻՍՈՆ ԿԻԼԼՈՐ  
(1942),**

**ամերիկացի երգիծաբան**

Հեռուստատեսությունն  
այն է, երբ մարդիկ, որ անե-  
լիք չունեն, նայում են մարդ-  
կանց, որ ոչինչ անել չգիտեն:

**ՖՐԵԴ ԱԼԼԵՆ  
(1894-1956),**  
**ամերիկացի լրագրող**

Հեռուստատեսությունը  
գոյություն ունի, որպեսզի  
այնտեղ ելույթ ունենան, այլ  
ոչ թե, որ նայեն ելույթ ունե-  
ցողներին:

**ՆՈՈՒԵԼ ԿՈՎԱՐԴ  
(1898-1973),**  
**անգլիացի դրամատուրգ**

Հեռուստատեսությունը  
թույլ է տալիս հաճույք ստա-  
նալ այն նարդկանցից, ուն  
մեր դռնից ներս չինք թողնի:  
**ՌԵՎԻՆ ՖՐՈՒՏ**

**(1939), բրիտանացի  
հեռուստահաղորդավար**

Հեռուստատեսությունը  
փչացնում է բոլորին՝ էկրանի  
երկու կողմերում էլ:

**ԿՈՆՍԱՍԱՏԻՆ ՄԵԼԻՆԱՆ**

Ֆուտբոլային մեկնաբան.  
մարդ, որ պրոֆեսիոնալ կերպով  
խանգարում է ֆուտբոլ նայել:

**Մ. ՊՈՒՏԻՆԿՈՎԱԿԻ,  
լրագրող**

Մեր օրերում ընտանիքի  
գլուխը նա է, ով որոշում է որ  
հեռուստաալիքը նայել:

**ՊԻՏԵՐ ՄԵԼԼԵՐՈՒ  
(1925-1980),**  
**անգլիացի դերասան**

Հետուստածրագրերը  
ավելի վատ լինել չեն կարող,  
քան հեռուստադիտողները.  
որքան բութ են ծրագրերը,  
այնքան բութ են հեռուստա-  
դիտողները:

**ՔԼԱՅՎ ԶԵՅՍՍ  
(1939), անգլիացի գրող**

Երեխաները անվերջ հե-  
ռուստացույց են նայում ոչ այն  
պատճառով, որ ծովյլ ծնողնե-  
րը չեն արգելում, այլ այն, որ  
ծրագրերի մեջ մասը հենց  
նրանց մակարդակով է հաշ-  
վարկված:

**ՈՒՉԱՐԴ ԻՆԳՐԱՍՍ  
(1937), անգլիացի լրագրող**

Հանճարը՝ սեփական մտ-  
քերը միացնելու կարողու-

թյունն է՝ հեռուստացույցը մի-  
ացնելու փոխարեն:

NN

Սենտ Էքզյուպերին ասել է.  
սիրել չի նշանակում միմյանց  
նայել, սիրել նշանակում է միա-  
սին նայել նույն ուղղությամբ:  
Թերևա, բայց միայն այն դեպ-  
քում, եթե հեռուստացույց չեն  
նայում:

**ԺԻԼԲԵՐ ՄԵՍՔՐՈՆ**

(1913-1979),

**ֆրանսիացի գրող**

Ինչքան շատ է ազատ ժա-  
մանակը, այնքան շատ ժա-  
մանակ է կորչում: Առաջ աշ-  
խատանքից հետո բանվորը  
հասցնում էր հարբել և ծեծել  
կնոջը, իհմա նա հասցնում է  
հարբել, ծեծել կնոջը և հե-  
ռուստացույց նայել:

**ՌՈԲԵՐՏ ԱՏՉԻՆՉ**

(1899-1977),

**ամերիկացի գրող**

Հեռուստատեսությունը  
ստեղծված է ձեր կերպարով  
և նմանությամբ:

**ՊՅՈՒՏՐ ՇՈՒԼԿԻՆ,**  
**լեհ կինոռեժիսոր**

Հեռուստատեսությունը  
պատկանում է ժողովրդին:  
Տեղն է նրան:

**ՄԱՐԻԱ ԱՐԲԱՏՈՎԱ**  
(1957), լրագրող

Գիտության վերջին տվյալ-  
ներով՝ որքան բարձր է ինտե-  
լեկտի աստիճանը, այնքան  
քիչ է մարդը հեռուստացույց  
նայում: Իմ կարծիքով՝ լրիվ  
հակառակն է՝ որքան շատ ես  
հեռուստացույց նայում, այն-  
քան ցածր է ինտելեկտիդ աս-  
տիճանը:

**ՌՈԲԵՐՏ ՕՐԲԵՆ**

(1927),

**ամերիկացի երգիծաբան**

Թերթերը տպագիր խոսքի  
թերթիկներ են նախավերջին  
նորություններով: Վերջիննե-  
րը լսում ենք ռադիոյով:

**ԱՆԴՐԵ ՍՈՃԵ,**

**ֆրանսիացի**

**հրապարակախոս**

Ռադիոն զանգվածային  
լրատվամիջոց է, որն ունկնդ-  
րելիս դեռ ոչ ոք չի փշացրել  
տեսողությունը:

**ՈՒՈԼՏ ԱՏՐԻՏԻՖՖ**

Ռադիոն զանգվածային  
լրատվամիջոց է, որով երեք  
հին ֆիլմեր ցույց չեն տալիս:

**ԼԵՍԵՐ ԿԼԻՍԵԿ**

Ուաղիոն փեթակ է, ուր բգում է ամբողջ աշխարհը:

#### 4. ԵՎՈՆ

Ժողովուրդը ժողովրդին աշխարհի խոսքն է հասցնում:

*BBC ռադիոկայանի  
նշանաբանը (1927)*

Ուաղիոն երեք չի փոխարինի թերթերին, որովհետև նրանով ճանձ չես սպանի:

NN

Եթե ձեզ ունկնդրում է ձեր կինը, ուրեմն դուք ռադիոհաղորդավար եք:

*ԵՎԳԵՆԻ ՏԱՐԱՍՈՎ,  
ԲԺՇԿ-ՀՈԳԵՔՐԱՅ*

Նրա դեմքը շատ պատշաճ էր ռադիոելույթների համար:

*ԷՄԻԼ ԿՐՈՏՏԿԻ*

Եթե ասելիք չունես, ոչինչ մի ասա. միացրու ձայնակավառակը:

*ՊԻԵՌ ԲՐԻՎ,  
«Ռադիո Մոնտե Կառլո»-ի  
տնօրեն*

Ֆանտաստիկ վեպերում գլխավոր ռադիոն էր: Ուաղիոյի առկայությամբ էր պայմանավորվում մարդկության երջանկությունը: Ուաղիոն ահա կա, բայց երջանկությունը չկա:

*ԻԼՅԱ ԻԼՖ  
(1897-1937), գրող*

Հեռուստատեսությունը օպիում է ժողովրդի համար. խելոքների օպիումը ինտերնետն է:

*ԱՐՏԵՄԻ ՏՐՈՒՑԿԻ  
(1955), լրագրող*

Եթե ընտրությունները կատարվեին ինտերնետով, մենք ցանկացած ընտրություններում կհաղթեինք:

*ՍԵՐԳԵՅ ԿԻՐԻԵՆԿՈ  
(1962),  
ռուս քաղաքական գործիչ*

Ինտերնետը այսօրվա պատմության անհատակ խորդանոցն է՝ արխիվ չմշակված նյութերի: Դա արխիվ է առանց հիշողության:

*ՄԻԽԱՅԻԼ ՅԱՍՊՈԼՍԿԻ,  
մշակութարան*

Ինտերնետը հիշողություն է, որը նոռանալ չգիտի:

*ՎԼԱԴԻՄԵՐ ԳՈՒՐԱՅՅՈՎԱԿԻ,  
իրապարակախոս*

Մենք խեղդվում ենք տեղեկատվության մեջ և գիտելիքների պակասից:

*ԶՈՒ ՆԵՅՋԻՏԸ  
(1929), ամերիկացի  
մենեջմենտի մասնագետ*

«Տեղեկատվական մայրու-  
ղի» արտահայտությունը լսե-  
լիս ճանապարհի մասին մի  
մտածեք, այլ շուկայի կամ  
աճուրդի:

**ԲԻԼ ԳԵՅԹՍ**  
**(1955), ամերիկացի**  
**ծեռնարկատեր,**  
**«Սայկրոստֆու»**  
**ընկերության հիմնադիր**

ԱՅԴԻՆ ՄՈՐԻԿՅԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ  
ԻՆՉ  
ԻՆՉՊԵՍ  
ԻՆՉՈՒ  
ԲՆԱԳՐԵՐ

---

AYDIN MORIKIAN

JOURNALISM  
*WHAT*  
*HOW*  
*WHY*  
ORIGINAL TEXTS

Ծավալը՝ 26.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500

---

«ՎԵԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ  
Երևան 375012 Վաղարշյան 12  
Հեռ. +37410 27 38 10